

Հ Ի Մ Ե Լ Ա Գ Ի Բ Ե Կ Գ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Զ . « Ա Յ Ո Ւ Լ Յ Ա Յ Ա Շ Խ Ա Ր Դ » Ա Գ Ը

# Սյունյաց երկիր

ԵՐԵՎԱՔԹԻ  
1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.  
№32 (374)

ISSN 1829-3468  
1 5 0 3 2 >  
9 771829346006

100 ՏԱՐԻ ԱՌԱՅ՝ 1915Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ՄԵՎԵՅՍԵՐՈՒ ՄԵՐՈՒ ԽԱՆՉԱՊՈՅԱՆԸ

## 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նահապետը

...ես գիր տվի ձեզ, որ լույս ունենաք ձեր տանն ու հողում: Բայց կմարի լույսը, եթե դուք մոռանաք սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը՝ ձեզ պաշտպան:

Մարտիկ Մազոսյ՝ ըստ Անրո Ռուսկոսկոսկի



# Գորիս

Եթե նորից, Աստված չանի,  
արհավիրքնե՛ր գան ու գնան  
Քո դարավոր արմատները  
անե՛ն ինչի կդիմանան...

*ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ*



**Գ** ԵՐ ԱՅՍ ԼԵՌԱՆ ԼԱՍՏ ԱՆՈՒՆՆ ԱՈՆՉՎՈՒՄ Է ՆՈՅԻ ԼԱՍՏ-ՏԱՎԱՆԻ ԻԵՏ», -  
ասել է Րաֆֆին 1881 թվականին՝ գորիսեցիների իետ զրուցելիս: Այդ  
մասին վկայում է Սերո Խանգադյանը «Յախշի ապոր պատմածը»  
իուշագրության մեջ («Գրական թերթ», 21 մարտի 1986թ.): Գրողին 1932  
թվականին պատմել է Ուհանին Բարուն Յախշի ապերը, ով Գորիսում  
զրուցել է Րաֆֆու իետ եւ նրան հյուրասիրել մածնով ու  
ջաղարցքաղարճով: Սերո Խանգադյանի եւ Յախշի ապոր զրույցին ներկա է  
եղել Սիլդարին Աթանեսը: Լաստ սարի մասին նույն ավանդագրույցը Սերո  
Խանգադյանին պատմել է նաեւ բրուտ Թանգունց Գալուստ ապերը,  
ով նույնպես Գորիսում հանդիպել է Րաֆֆուն:



- 1** Գորիսի մուսքը խորհրդանշող հուշակոթող (1999-2001թթ.)
- 2** Գուսան Աշոտի կիսանդրին (2005թ.)
- 3** Չորավար Անդրանիկի կիսանդրին (1989թ.)
- 4** Գարեգին Նժդեհի տուֆակերտ հուշարձանը (1991թ.)
- 5** Հայրենական մեծ պատերազմում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարձան (1980թ.)
- 6** Արցախյան ազատամարտում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարար (2015թ.)
- 7** Ակսել Բակունցի հուշարձանը (1965թ.)
- 8** Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշարձանը (2010թ.)

# «Օրինյա՛լ եղիցի ժամ գալստյան քո»



**ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
Սյունիքի մարզպետ

**Յ**եռավոր 1935-ին Տաթև գյուղում ուսուցչություն էր անում Սերո Խանգադյանը: Հասցրել էր ճանաչելի դառնալ, երբ, օրերից մի

օր, նրա կիսամուկ սենյակ է մտնում գյուղի մեծ մասնեն՝ մի մեռոն-մասունք տատիկ, եւ խաչակնքելով ասում. «Օրինյա՛լ եղիցի ժամ գալստյան քո»: Ապա ավելացնում. «Գրով շենանա տունը Հայոց» եւ Սերո Խանգադյանին մեկնում մի ձեռագիր մատյան...

Տասի խոսքերը, կարծես, ողջ հայ ժողովրդի անունից էին հնչում եւ, ասես, ողջերթի խոսքեր էին սկսնակ գրողին:

Հարյուր տարի անց վերստին համոզվում ենք, որ Սերո Խանգադյանի հայտնությունը հայոց հոգեւոր-մշակութային անդաստանում նվիրագործված երեսույթ է եղել:

Եվ հարյուր տարի անց կրկնում ենք մեռոն-մասունք այդ տատի խոսքերը. «Օրինյա՛լ եղիցի ժամ գալստյան քո»:

Ես ուրախ եմ եւ հպարտ, որ կարողացել եմ (ճակատագրի կամոք) գրողի կյանքի վերջին շրջանում լինել նրա մտերիմների ու մերձավորների թվում, արժանանալ նրան ընկեր ու բարեկամ լինելու պատվին՝ չնայած մեր տարիքային մեծ տարբերությանը:

Բավարարված եմ, որ նրա մահվանից հետո վերջ դրեցինք գրողի մայրաքաղաքային ու գործիսյան առանձնատների շուրջ ծագած անորոշություններին, իսկ Գորիսի առանձնատունը դարձրինք տուն-թանգարան, որ ներկայումս հիմ-

նանորոգվում է:

*Ուրախ եւ հոյաւք եմ նաեւ, որ Գորիսում հավերժացրինք նրա հիշատակը՝ ֆաղափ փողոցներից մեկը եւ թիվ 6 հանրակրթական դպրոցը կոչելով գրողի անվամբ, որի բակում, մեր ժամանակի լավագույն ֆանդակագործներից մեկի՝ Պետիկ Բաղդասարյանի ձեռամբ, կանգնեցվեց հայ ժողովրդի նշանավոր գավակի կիսանդրին:*

Գիտակցում ենք, միաժամանակ, որ անելիք ունենք գրողի մայրաքաղաքային առանձնատան նպատակային օգտագործման, գրողի հիշատակի հավերժացումն ավարտին հասցնելու, անտիպները տպագրելու, իսկ լավագույն ստեղծագործությունները վերահրատարակելու, գրական ամբողջ ժառանգությունը վերագնահատելու եւ նորովի արժեւորելու ուղղությամբ:

Գրողի հորեյանը հետադարձ հայացքի առիթ է տալիս, եւ այսօր, մտովի թերթելով Ս.Խանգադյանի վաստակի լավագույն էջերը, դժվար է չհիանալ նրա մտքի ընդգրկումների լայնությամբ, չսքանչանալ նրա ստեղծած գրական

## ԽՈՍՔ ՀՈՒՆՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ



**ՎԱՉԱԳԱՆ ԱՂՈՒՏ**  
Գորիսի քաղաքապետ

**Կ**ան արվեստագետներ, որոնց ծնունդը նոր դարաշրջանի սկիզբ է դառնում մարդկության պատմության մեջ: Նրանք ծնվում են՝ դառնալու իրենց հողի, բնության թարգմանը, իրենց բնաշխարհի անկապտելի մասնիկը, խորհրդանիշը: Սյունյաց (եւ ընդհանրապես հայոց աշխարհի) համար այդպիսիք են Ակսել Բակունցը, Գուսան Աշոտը, Սերո Խանգադյանը... արվեստագետներ, ովքեր հայ բազմադարյան մշակույթի կրողներն ու ժամանակին փոխանցողներն են:

Մեկ դար է մեզ բաժանում Ս.Խանգադյանի ծննդյան օրինյալ օրից, բայց այսօր էլ շատ գորիսեցիներ հիշում են նրա խորհուրդները, պատեհ-անպատեհ առիթներով պատմում նրա սրամտություններից, իրենց ասածները հաստատում Սերոյի խոսքերով:

Խանգադյանը ստեղծեց բարու եւ զեղեցիկի, ցավի եւ կորուստների, դժվար անցյալի ու պայծառ տեսլականով ապագայի գրականություն, համարձակորեն ձեռք մեկնեց հեռու եւ մոտիկ անցյալն արտացոլող թեմաների՝ ամենահամարձակ լուծումներով եւ պատմությունից դասեր քաղելու համոզմունքով: Շոշափելով արդիական թեմաներ՝ նրա երկերը միշտ եղել են գրասեր հասարակության եւ գրականագիտու-

հերոսների պատկերասրահով:

Նրա պատկերացմամբ՝ գրականությունը մարդու համար է եւ կոչված է նրան բարձրացնելու, հավատները ճշգրտելու դեպի սեփական էությունը: Նման գիտակցումով էլ ստեղծագործեց մինչեւ կյանքի վերջը եւ մնաց հայ գրականության առաջին շարքում:

Սերո Խանգադայանը մեր հողի եւ ժողովրդի կենսագիրն էր ու համարձակություն ունեցավ միշտ էլ ձեռք զարկել իրականության շիկացած հարցերին:

Իրավացի էր Համո Սահյանը, երբ ասում էր՝ Սերո Խանգադայանը քայլող պատմություն է: Եվ նա ժողովրդի անցյալից վերցնում էր ոչ թե մոխիրը, այլ կրակը: Դրա լավագույն արտահայտություններից է «Մխիթար Սպարապետ»-ը՝ հայ պատմավիպասանության շքեղ փայլատակումներից մեկը:

Սերո Խանգադայանը, լինելով Ակսել Բակունցի արժանավոր գրական շառավիղը, շարունակեց զեղարվեստականացնել մեր լեռնաշխարհի ավանդույթներն ու պատմությունը: Հիշատակելի է հատկապես «Մատյան եղելությանց» վեպը, որի մեջ բակունցյան նրբագեղությամբ

մարմնավորված է պատերազմական եւ հետպատերազմյան շրջանի Գորիսը՝ իր մարդկանցով, ճակատագրերով ու անկրկնելի գույներով:

Նրա նվիրական երազն Արցախն ու Նախիջեւանն ազատագրված տեսնելն էր: Եվ իր ազգային, հասարակական-քաղաքական գործունեության հիմնական ուղղություններից մեկը հենց այդ էր:

Արցախյան հերոսամարտի օրերին հասցրեց ընթերցողին ներկայացնել «Անդրանիկ» (1989թ.), «Շուշի» (1991թ.), «Նժդեհ» (1993թ.) վեպերը՝ կրկին ոգեկոչելով ազգային ոգին ու կերտվածքը, վերստին քաջալերելով պատերազմ մեկնող հայ ազատամարտիկներին:

Նրա կոչը՝ ի զեն, հերոսամարտի օրերին շատերի համար դարձավ գործունեության ուղեցույց:

Սերո Խանգադայանն իր հավերժական հանգստարանը գտավ հայոց մեծերի պանթեոնում, սակայն նրա արմատներն ու հոգին մնացին մեր լեռնաշխարհում, բայց ոչ իբրեւ անցյալ, ոչ իբրեւ հուշ, այլ հայոց հողն ու ազգը գորացնող ներկայություն:



թյան ուշադրության ներքո:

Ս.Խանգադայանը նաեւ բանահավաք է՝ այս բառի տոհմիկ իմաստով: Նա գիտեր իր հայրենի բնաշխարհի յուրաքանչյուր շինության, սարի, բնակավայրի ծագման պատմությունը, ծնողական պատասխանատվությամբ, ջերմությամբ էր վերաբերվում բանահյուսական մասունքներին՝ խորին հավատով, որ սերունդներին պահ է տալիս ժանգազերծ ժառանգություն:

Ս.Խանգադայանն առանձնանում է նաեւ անվեհեր քաղաքացու եւ համարձակ արվեստագետի կերպարով: Երբ հայրենիքում դեռ տիրում էր անհատի պաշտամունքի գաղջ մթնոլորտը, նա, աչքի առաջ ունենալով

Բակունցի, Չարենցի, Խանջյանի եւ ուրիշների դառը օրինակը, ամենեւին չէրկնչեց՝ դառնալով ճշմարտության ու արդարության, ազգային արժեքները վառ պահող ազնիվ դրոշակակիր: Ս.Խանգադայանի հարուստ ժառանգությունը դեռ կարիք ունի մասնագիտական ուսումնասիրությունների, մենք էլ դեռ պարտք ունենք մեծ գորիսեցու առջեւ. պետք է ամենք առավելագույնը, որ եկող սերունդների համար էլ Սերո Խանգադայան անունը լինի նույնքան սիրելի, գրքերը՝ փնտրված:

Ս.Խանգադայանը ծնվել էր, որ իր հայտնի հերոսի նման աշխարհից ու մարդկանց հոգիներից մաքրի-ավլի կյանքի աղտ-աղարտը: ■



# Սերո Խանգադյանն իր մասին

**Ե**ս ծնվել եմ Ջանգեզուրում, այն-տեղ, ուր լեռները երկնքի մեջ են, որոնցից շատերի գագաթներից ամռանն անգամ ձյուն է լինում: Ծնվել եմ այնտեղ, ուր խորունկ ձորերի ու կիրճերի մեջ քաղցրամուն է նուռը, խաղողը, թուզը, իսկ լեռներում ալպյան արոտներն են, կապույտ լճեր:

Լեռների ծոցում, Վարարակն գետի ափին է Գորիս քաղաքը: Նրա դիմացը՝ ձորերի մեջ, կուտակված է հին Կյորես գյուղը՝ ժայռերի նախիրներով, հեթանոս Ջագ նահապետի կառուցած բերդի ավերակներով, գերեզմանոցներով, քարանձավներով ու կամարակապ աղբյուրներով: Գյուղում հնադարյան ձիթհաններ կան, բրուտանոցներ էլ, ձորում հազարամյա ջրաղացներ կան ու մատուռներ:

Հին, շատ հին է մեր Կյորեսը: Այստեղ, հսկա ժայռի տակ, այժմ էլ երեւում է կիսավեր մի քարանձավ ու մի փլված պատ: Հենց այդ քարանձավում էլ ծնվել եմ ես:

Հայրս, որ ինքն իրեն էր գրածանաչ դարձել, մեր տանը մինչեւ երեսնական թվականները պահպանվող մի հին երգարանի լուսանցքում ծուռունուռ տառերով գրել է. «Ինձ եղավ եւս մի որդի Սերոբը: Ծնվեց դեկտեմբերի 3-ին, մկրտեցինք 6-ին»: Խեղճ հայրս մոռացել է գրել իմ ծննդյան տարեթիվը:

Մայրս հիմա էլ ասում է.  
- Ես էլ եմ դեկտեմբերի 3-ին ծնվել: Քո ծնված օրը ես դարձել եմ ուղիղ տասնինը տարեկան: Իսկ եկեղեցու չափաբերական մատյանում գրված էր. «Վարդանուշ Արշակի Ջիլֆուղարյան-Մելիք-Օհանյան, ծնվեց 1896 թվականի դեկտեմբերի 3-ին»:

Այսպիսով, ես ծնվել եմ 1915 թվականի դեկտեմբերի 3-ին:

Հայրս երբեք դպրոց չի գնացել, այնինչ մայրս ավարտել է մեր գյուղի

օրիորդաց դպրոցի չորրորդ դասարանը: Նրա հայրը միջին կարողության տեր գյուղացի է եղել, որը սերուն է մեր կողմերին հայտնի Մելիք-Օհանյան տոհմից: Այժմ էլ մայրս հպարտանում է իր մելիքական-իշխանական ծագումով, այն բանով, որ իր նախապապ Մելիք-Օհանը եղել է Դավիթ-Բեկի զինակիցներից:

Հորս գծով իմ բոլոր ապուլապները հովիվներ են եղել: Դառը որբությանը է անցել հորս կյանքը: Ջրկանքներով է անցել նաեւ իմ կյանքը:

Իմ հիշողությունից երբեք չջնջվեցին մեր թաղի անձավաբնակ մարդիկ, խորունկ ձորերը, ձորերի մթին այգիները,



կապույտ սարերը, եւ հոգսից ընկճված հայրս՝ բարձրահասակ, ժամանակից շուտ ծերացած եւ նյարդային, գրգռված: Պատանի տարիներին հայրս բեռնակիր-մշակ է եղել Կրասնովոդսկ քաղաքում, ապա քսանմեկ թվականից մինչեւ երեսուներեք թվականը գյուղական փոստատար էր մեր շրջանում: Մեր գավառական քաղաքից փոստը նա շալակով տանում էր հեռավոր գյուղերը եւ շալակով էլ բերում:

Լավ հիշում եմ մորս տատին՝ Նանախանում զիզային, որը մեռավ մոտ հարյուր տարեկան հասակում, ոտի վրա, բաղուրոստանը մշակելիս: Նա ինձ մեծացրել է ծնկների վրա: Հին արխալուղով, արծաթ սուրմաներով, թզեհը ձեռքին այդ նահապետական պառավը լեզենդների, հեքիաթների, առասպելների, առածների ու հին-հին գրույցների մի անսպառ աղբյուր էր:

Հեքիաթային կին էր մեծ տատս: Նա գյուղական հեքիմ էր ու հռչակավոր տատմայր:՝ Նաեւ հեզ էր, ինչպես հիմա հեզ է մայրս, այդ նահապետական կնոջ թռը:

1921 թվականի սեպտեմբերին հայրս իմ մեծ եղբորը տարավ գյուղի դպրոցը: Նրանց ետեւից, լալով ու զռռալով, ես էլ էի ուզում գնալ «շկոլ»: Շատ էի փոքր, չընդունեցին: Բայց ես ամեն օր գնում էի դպրոց ու մնում նրա պատերի տակ: Հաջորդ տարին եւս ծանր գլխացավանք պատճառեցի հորս եւ մեր գյուղի դպրոցի ուսուցիչներին: Ստիպված սրանք ինձ նստեցրին 19-20 տարեկան առաջին դասարանցիների հետ, որոնցից շատերն այդ տարի ամուսնացան: Մի տարի ինձ բանի տեղ չորին դպրոցում եւ բան էլ չկարողացա սովորել: Երկրորդ տարին մնացի դասարանում: Աղքատ դպրոց էր, չորս-հինգ աշակերտի մի մատիտ ու մի տետր էր հասնում: Դրանք էլ դասի վերջին ուսուցիչները հավաքում, տանում էին, որ մյուս օրը նորից բերեն:

1925 թվականին հայրս Գորիս քաղաքի ծայրին՝ մի հեղեղատի մոտ, ցեխապատ մի սենյակ շինեց եւ մեզ գյուղի քարանձավներից տեղափոխեց այնտեղ:

Սովորում էի Լուկաշինի անվան յոթնամյա դպրոցում: Դասերից հետո անտառ էի գնում ձմռան համար փայտ բերելու: Ամբողջ ամռանն աշխատում էի դաշտում, մեր արտը հնձում, խոտ հարում, բոստանը մշակում: Երեսունմեկ թվականի գարնանը մենք մտանք կոլխոզ, նրան տալով մեր միակ էշն ու միակ կովը: Այդ տարվա աշնանը մեր կոլտնտեսության վարչությունն ինձ հարվածային կոլտնտեսականի կոչում տվեց: Որքա՞ն էի ուրախ...

Ես միշտ եղել եմ հորս աջ թելը, նրա օգնականը տանը, դաշտում, կոլխոզում: Շուտ բռնկվող մարդ էր հայրս: Երբեմն նաեւ ծեծում էր մեզ: Քանի անգամ է նա ինձ՝ տասը-տասներկու տարեկան անչափահասիս խփել... Ես չեմ մեղադրում նրան: Նա դառնությանը էր հաց վաստակում իր բազմանդամ ընտանիքի համար, անասելի տառապում էր, եւ նրա դաժանությունն էլ հենց դրանից էր: Ես տեսել եմ, թե ինչպես իմ քիթ-մուռը արյունոտելուց հետո նա ծածուկ լաց էր լինում, զղջում: Հակառակ հորս դաժանության, մայրս անսահման բարի

եր եւ ոչ ոքի մի «չոռ» անգամ չի ասել:

1934 թվականին ես ավարտեցի մեր քաղաքի մանկավարժական տեխնիկումն ու նշանակվեցի Տաթև գյուղի յոթնամյա դպրոցում մայրենի լեզվի եւ գրականության դասատու: Այդ տարի ես առաջին անգամ տրեխներին փոխարեն կոշիկ հագա: Անջնջելի տպավորություն են թողել ինձ վրա Տաթև գյուղը, վանքը, Որոտանի առեւելի կիրճը, Օվենի անտառը եւ մարդիկ՝ հազարամյա փորձով ու տառապանքով իմաստնացած լեռների մարդիկ:

1935 թվականին մեկնեցի Բաքու՝ բարձրագույն կրթության: Շրջանի ժողկրթբաժինը ինձ թույլ չտվեց ուսման գնալու, մի բան, որին ծարավ էի: Չէ՞ որ տեխնիկումը մենք ավարտեցինք, թող ներեն այն օրերի իմ ուսուցիչները, գրեթե կիսագրագետ: Ջարմանալի խղճով ուսուցում էր դա:

Հակառակ ժողկրթբաժնի արգելքին, ես գնացի Բաքու, հույս ունենալով, որ այնտեղ եղած իմ բարեկամները նյութապես կօգնեն ինձ: Հայրս էլ էր դրան դեմ:

- Ինչպե՞ս պահեմ քույրերիդ, - տրտնջում էր նա: - Քեզ ինչպե՞ս օգնեն:

Մեծ եղբայրս այդ ժամանակ բանակում էր՝ ծառայության մեջ: Բաքվում լավ քննություն տվի եւ ընդունվեցի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի պատմության ֆակուլտետը:

Հունվարին մեր դեկանը կանչեց ինձ ու քթիս դեմ արեց մի գրություն.

- Փախստական ես...  
Գորիսի ժողկրթբաժնից գրել էին, որ ես ինքնագլուխ եմ մեկնել սովորելու:  
- Քեզ կիռնացնեն ինստիտուտից, կպատժեն, - գոչեց դեկանը:

Ահ ընկավ սիրտս: Սոված էի, ցուրտ էր: Սովորելը թողի

եւ մեր մի բարի բարեկամից գնացքի տոմսի փող պարտք առնելով՝ ետ եկա տուն:

Բարձրագույն կրթություն ստանալ չէի էլ կարող երագել: Հայրս տխրեց: Չմեռվա պաշար արած ցորենից մի քանի փութ ծախեց, իմ պարտքն ուղարկեց Բաքու:

Ես նորից ուսուցիչ եմ Յայջի, Վերիշեն եւ ապա՝ Խնածախ գյուղերում...

Վաղ հասակից ես մեծ սեր եմ ունեցել դեպի բանախյուսությունը: Ուսուցիչ եղած ժամանակ գրի եմ առել հարյուրավոր առակներ, ասացվածքներ, հեքիաթներ, աշուղական ու ժողովրդական երգեր, զրույցներ, լեզենդներ, առասպելներ, հանելուկներ:

Ես գրել սկսել եմ պատանի հասակից: Երեսունմեկ թվականին գրել եմ վեպ՝ կոլխոզային շինարարության կյանքից: Վեպի տեսարկները կորել են: Հիշում եմ միայն նրա առաջին նախադասությունը. «Քարաշենում այդ երեկո ժողով կար»: Ապա հիշում եմ, որ վեպիս գլխավոր հերոսը քեռիս էր՝ մեր կոլխոզի հիմնադիր նախագահը:

Արձակով սկսելով, ես նաեւ բանաստեղծություններ գրեցի: Առաջին ոտանավորս լույս է տեսել մեր քաղաքի թերթում, կարծեմ 1933 թվականին: Վերնագիրը հիշում եմ՝ «Յայլաղում»: Ավելի շատ մանկական բանաստեղծություններ էի գրում, որոնք այդ տարիներին տպվեցին «Հոկտեմբերիկում»: 1933 թվականին մասնակցել եմ հանրապետական երիտգրողների հավաքին եւ ճառ եմ ասել: Այդ թվին էլ ավարտել եմ «Վահրամ Որոտենցի» պիեսը, որը լավ գնահատեց Արվեստի վարչությունը եւ 40-41 թատերաշրջանում բեմադրվեց Գորիսի թատրոնում:

Վրա է հասնում Հայրենական մեծ պատերազմը, եւ ես, տասը օրվա

### ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ ՍԵՐԻ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ



...Սերո Խանկաղայանի «Տողը» ուշագրավ է. անպայման արժե կարդալ:  
**Ավերիք Իսահակյան**



...Աբովյանն ու Բաֆֆին, որ մեռան, անոնց տեղ պարսպ մնաց: Ար տեղ գրավեց Սերո Խանկաղայան:  
**Վիլյամ Սարոյան**



Գլխավորը, որ այսօր մեզ ուրախացնում է, Սերո Խանկաղայանի բնական, անսեթեւեթ, անբռնադատ եւ կենդանի պարուն է, մեծ սերը դեպի իր հերոսները, անաղմուկ, հռեպորտյունից զուրկ հայրենասիրությունը: Խանկաղայանի լեզուն եւ ոճը պարզ են, հասարակ արտահայտչամիջոցներ ունեն, շնորհիվ իրենց բնականության: **Դերենիկ Դեմիրճյան**



Ես սոփի եմ ունեցել ասել, որ Սերո Խանկաղայանի գործը («Մեր գնդի մարդիկ») վկայում է հեղինակի անկասկածելի տաղանդը: Այսպեղ կան այն տարրերը, ինչը եւ համարում եմ ինքնուրույն գրողի հարկանիշներ՝ ինքնուրույն լեզու եւ ոճ, դիպրոդականություն եւ նկարագրելու ունակություն: Նա լավ նկարագրում է իր տեսածն ու ապրածը, առավելապես շատ պարկերտվոր, որոնք իրենց թարմությամբ տպավորվում են ձեր ուղեղում եւ չեն մոռացվում:

**Սպեփան Զորյան**



Մերձբարյան ստուշին ուզումս նակարտում հայագի քաջարի հրամանատար Սերո Խանկաղայանն ընդամենը ավագ լեյտենանտ էր, այժմ սպարապետ է գրականության մեջ: **Հովհաննես Բաղդամյան**

**ՀԱՅՈՑ  
ՄԵՃԵՐԸ ՍԵՐՈ  
ԽԱՆՁԱՂՅԱՆԻ  
ՄԱՍԻՆ**



*Սերո Խանզադյանը մեր արձակի այսօրվա օրինական նահապետն է. խոնարհում եմ գլուխս նրա ազնիվ կերպարի եւ մեծ վաստակի առաջ:*



**ՀԱՍՈ ՍԱՀՅԱԼ**



*Սերո Խանզադյանի կորստով մենք միայն անհարի չէ, որ կորցրինք: Մեծ գրողը չէր, որ կորցրինք, այլ կորցրինք ներկայացուցչին, գուցեն վերջին,*

*այն սերնդի, գրողական այն սերնդի, որն իր ամբողջ կյանքն անցկացրել է իր երկրի հետ միասին, իր վերածնված հայրենիքի հետ միասին, մասնակցել նրա համար միայն մարտերին ոչ միայն ռազմի դաշտում, այլև գրողների միության ամբիոնից, այլև մամուլից, այլև հեռուստատեսությամբ իր ողջ կեցվածքով, ժողովրդի հետ ունեցած իր խորը արմատներով:*

*Ահա գրողի այս տեսակն է, որը մենք կորցնում ենք, եւ շատ կուզեի, որ Սերոյի վարքի, գործի, կերպարի շարունակողներ լինեն մեր այժմյան կյանքում, այժմյան գրական կազմակերպության մեջ, որովհետեւ մեր երկիրը դեռ շատ կարիք ունի Սերո Խանզադյանների:*

**ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻՅԱՆ**



*Ափսոս, որ ավագները մեր գլխից պակասում են ...Բշխան*

*Սերոն ափսոս: ԴՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

# Սերո Խանզադյանն իր մասին

Եւ աճուսնացած, 1941 թվականի հունիսի 23-ին մեկնում եմ բանակ: Սկզբում մեզ պահում են Քաջարանում, որտեղ նոր-նոր սկսել էին հետախուզել մեր այդ լեռների պղնձի ու մոլիբդենի հարուստ հանքավայրերը: Մեզ ասում էին, թե շուտով գնալու ենք Երեւան: Մեր զորամասում մեծամասնությունը հայեր էին: Օգոստոսին գնացքով մեկնեցինք Ռուսաստան: Երկար ճանապարհորդելուց հետո հասանք Ղազախստանի Բախաշ քաղաքը: Մի ամիս այնտեղ մնալուց հետո, սոված, անապատով մեկնեցինք դեպի Կարագանդա: Ահռելի անապատն անցանք տասնչորս օրում՝ մեր մեքենաների մի մասը թողնելով նրա

ավազուտների մեջ: Կարագանդայում քիչ մնացինք: Մեզ տեղափոխեցին Չեչաբինսկ: Այստեղ հասնելուց մի քանի օր հետո ես եւ բազմաթիվ հայ տղաներ դիմեցինք զինկոմիսարիատ, խնդրելով մեզ ուղարկել ռազմաճակատ: Մեր խնդիրը հարգեցին եւ մեզ՝ մոտ 150 կամավորներիս, ուղարկեցին Կուրգան քաղաք, որտեղ մի դիվիզիա էր ձեւավորվում: Երբ մեզ ներկայացրին գնդի հրամանատարին, սա նայեց ինձ ու ասաց. - Այս մեռելներին ինչո՞ւ են ուղարկել: Ես սաստիկ վիրավորվեցի եւ ասացի, որ եկել եմ կամավոր ռազմաճակատ մեկնելու:

# Սերո Խանզադյան

Ըստ Հայկական սովետական հանրագիտարանի, հատոր 5

Խանզադյան Սերո Նիկոլայի (ծն. 3.12.1915, ք. Գորիս), հայ սովետական գրող: ԽՍՀՄ անդամ 1943-ից: ՀԽՍՀ կուլտուրայի վաստ. գործիչ (1972): Ավարտել է (1934) Գորիսի մանկավարժական տեխնիկումը, զբաղվել (1934-41) ուսուցչությամբ: Մասնակցել է (1941-45) Հայրենական մեծ պատերազմին: Առաջին պատմվածքը՝ «Չոր տափը», լույս է տեսել 1934-ին, Գորիսի «Կարմիր Ձանգեզուր» թերթում: 1938-ին գրել է X դ. Սյունիքի գյու-

ղացիության (ցուրաբերդցիների) ապստամբությունն արտացոլող «Վահրամ Ռոտոնեցի» պիեսը (բեմադրվել է 1940-ին): 1950-ին հրատարակել է «Սերո գնդի մարդիկ» վեպը, որը պատմում է Լենինգրադի համար մարտնչող ռազմ. միավորումներից մեկի եւ պարտիզանական ջոկատների գործողությունների մասին: Վեպին բնորոշ է սովետական հայրենասիրության եւ ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալ միասնականության գեղարվեստական նկարագիրը: Խանզադյանին ճանաչում է բերել «Հողը» (հ. 1-2, 1954-55) վեպը: Քարակերտը լքելով եւ Արարատյան դաշտ տեղափոխվելով չէ, որ պետք է լուծվի քարակերտցիների բարեկեցության խնդիրը, այլ ապառաժները փշրելով ու հողը ծաղկեցնելով: Սա է երկում բարձրացվող զլխավոր հարցը: Այնուհետեւ լույս են տեսել «Լալ Համազր» (1955), «Որոտանի կիրճում» (1956), «Քարանձավի բնակիչները» (1961) մանկական



Նա միայն արհամարհանքով ժպտաց: Այս խոսքերը եւ նրան հիշեցրի մի քանի ամիս հետո, երբ ռազմաճակատում ինքն իր ձեռքով իմ կրծքին ամրացրեց առաջին մարտական պարգևը եւ ինձ սերժանտի կոչում շնորհեց: Պա տեղի է ունեցել Լեւինգրադի մատույցներում, Վոլխով գետի ափին, Նովոգորոդ եւ Ջուդովո քաղաքների արանքում՝ 1942 թվականի սկզբներին:

1942թ. հունիսի 10-ին, Վոլխով գետի ափին, վիրավորվեցի ոտքիցս: Ապաքինվելով մերձազմաճակատային հոսպիտալներում, եւ նորից մեկնեցի ռազմաճակատ: Այստեղ ինձ շնորհեցին կրտսեր լեյտենանտի կոչում եւ նշանակեցին ականանետային մարտկոցի դասակի հրամանատար: Շատ բան սովորեցի եւ ծանր մարտերի մեջ, իսկ իմ սիբիրցի զինվորներն ինձ սովորեցրին դիմանալ ցրտին, պայքարել սովի ու սառնամանիքի դեմ:

Մի ճակատամարտում կոնտուզիա ստացա, որից եւ խլացավ ձախ ականջս: Մինչեւ այսօր էլ այն չի լսում: Հայրենական պատերազմն ինձ համար հանդիսացել է իմ կյանքի մեծ դպրո-

ցը: Անվերջ մղվող մարտեր, պաշտպանություն, հարձակում, վիրավորների տնքոց, փոքրոգիների խելագար ճիչեր, մահ, մանավանդ մահ՝ ամեն օր, ամեն ժամ:

Իմ՝ կնոջս գրած նամակից երկու տող եմ ուզում մեջքերել այստեղ: Քառասունհինգ թվականի մայիսի 2-ին գրում եմ. «Երեկ եւ մասնակցեցի մայիսնեկյան զինվորական շքերթին: Մեր ռազմաճակատի երթը ընդունեց գեներալ Բաղրամյանը՝ հայ ժողովրդի այդ նոր զորավարը: Բաղրամյանի երեւալը մեր շարքերի առջեւ իմ սիրտը լցրեց անհուն հպարտությամբ եւ ցնծության դողով: Ինձ թվում էր, թե նրա ասածները կարդացել եմ Րաֆֆու կամ Մուրացյանի պատմավեպերում»:

Կռիվն ավարտվեց: Ես արդեն ականանետային մարտկոցի հրամանատար էի, լեյտենանտ: Պարգևատրվել էի շքանշաններով, մեդալներով: Գերմանիայում եւ սկսեցի գրել «Մեր գնդի մարդիկ» վեպը (1945թ. մայիսից), որը լույս տեսավ 1950 թվականին՝ Երեւանում եւ 1956թ.՝ Մոսկվայում (ռուսերեն): Բանակից զորացրվել ու տուն

եմ եկել 1945 թվականի նոյեմբերի վերջերին:

Գործում չմնացի: Ընտանիքս թողի այնտեղ ու եկա Երեւան: Սկսեցի աշխատել Հայաստանի ժողովրդական ստեղծագործության տանը իբրեւ ժողովրդական բանահյուսության կոնսուլտանտ եւ ակադեմիայի գրականության ինստիտուտում՝ իբրեւ բանահավաք:

1954 թվականին լույս տեսավ «Յոդը» վեպիս առաջին գիրքը, ապա՝ երկրորդը (1955թ. սկզբներին): Այնուհետեւ տպագրեցի «Որոտանի կիրճում», «Լալ Համազը», «Քարանձավի բնակիչները» մանկական գործերս: Դրանք ռուսերեն լույս տեսան նաեւ Մոսկվայում: 1958 թվականին «Կարմիր շուշանները» տպագրվեց: Պատմվածքներիս այս ժողովածուն ռուսերեն լույս տեսավ 1959թ. (Մոսկվա): 1956 եւ 1957 թվականներին 2 անգամ հրատարակվեց «Յոդը»: 1961թ. տպագրվեց «Մխիթար Սպարապետը»: Ահա եւ իմ կյանքի համառոտ ուղին:

**ՍԵՐՈ  
ԽԱՆՁԱԴՅԱՆ  
03.10.1961**

ստեղծագործությունները, «Կարմիր շուշաններ» (1958), «Հարստությունը լեռներում» (1961) պատմվածքների ժողովածուները: Խանգաղյանին ժողովրդականություն է բերել «Մխիթար Սպարապետ» (1961) պատմավեպը: Շարունակելով հայ պատմավիպագրության ավանդները՝ գրողը արդիականության տեսանկյունից է դիտել հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից մեկը: XVIII դ. ժողովրդողը ոտքի է ելել սրով վերականգնելու իր կորսված ինքնուրույնությունը: Ժողովրդական այս հուժկու ընդվզումների ու պայքարի հենքի վրա վեպում բարձրանում են զորավարներ Ղափթ Բեկի եւ Մխիթար Սպարապետի կերպարները՝ իբրեւ ժողովրդի իղծերի արտահայտիչների: Վեպի առանցքային հարցերից մեկն էլ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունն է: Խանգաղյանը պատմվածքից պատմվածք, գրքից գիրք ամբողջացնում է մեր ժամանակակցի կերպարը, բացահայտում նրա ներաշխարհը: Այդպիսին են նրա «Կորած արահետներ» (1964), «Քաջարան» (1965), «Այրված տունը» (1965), «Մատյան եղելությանց» (1966), «Անձ-

րեւից հետո» (1969), «Ինչո՞ւ, ինչո՞ւ» (1970), «Երեք տարի, 291 օր» (1972), «Սեւանի լուսաբացը» (1974), «Խոսեք, Հայաստանի լեռներ» (1976) գործերի հերոսները: Սրանցից առանձնանում են «Քաջարան», «Մատյան եղելությանց», «Ծարավել եմ, ջուր բերեք» («Անձրեւից հետո» ժողովածուում) եւ «Խոսեք, Հայաստանի լեռներ» ստեղծագործությունները: Առաջինը պատկերում է Հայաստանի լեռնագործ բանվորի առօրյան, անհատի հոգեւոր ծնունդը կոլեկտիվում: Երկրորդը հողի աշխատավորի, աշխարհի ու մարդկանց մասին մտորումներ է: Երրորդը յուրահատուկ մի ասք է մարդ-աշխատավորի, մարդ-զինվորի եւ մարդ-հայրենասերի մասին: Վերջինը հայ ժողովրդի մոտիկ անցյալի ողբերգական ճակատագրի գեղարվեստական վերարտադրությունն է: Թուրքական իշխանությունները իրականացնում էին ցեղասպանության իրենց ծրագիրը՝ կոտորելով Արեւմտյան Հայաստանի բնիկ, խաղաղ ու անգեւ բնակչությանը: Այս մղձավանջի մեջ գրողի ասելիքը հստակ է, նպատակը՝ պարզ, ժողովրդի աննկուն ոգու վերա-

կենդանացումը: Վեպում արտացոլված է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը: Խանգաղյանի լավագույն գործերից է «Թագուհին հայոց» վեպը (1978), որի մեջ գրողը տվել է հայ ժողովրդի հեռավոր անցյալի ինքնատիպ նկարագիրը: Նա հեղինակ է նաեւ հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի կարեւորագույն խնդիրներին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունների: Նրա շատ երկեր թարգմանվել են ԽՍՀՄ եւ աշխարհի ժողովուրդների բազմաթիվ լեզուներով: «Այրված տունը» (1974, «Լքված հեքիաթների կիրճը» վերանվանումով) եւ «Մխիթար Սպարապետ»-ը (1978) էկրանավորել են «Հայֆիլմ» եւ «Մոսֆիլմ» կինոստուդիաները: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի, Կարմիր աստղի, Կարմիր դրոշի, Աշխատանքային կարմիր դրոշի եւ «Պատվո մշան» շքանշաններով: ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր է (1977):

Երկ. ժող., հ. 1-5, Ե., 1967-70: Գրկ. Հայրյան Գ., Սերո Խանգաղյան, Ե., 1975:  
**Պ. Հայրյան**

# 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նահապետը



## ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հարյուր տարի առաջ՝ 1915թ. դեկտեմբերի 3-ին, ծնվեց Սերո Խանգաղյանը:

**Ս**երո Խանգաղյանը, անտարակույս, պատկանում է ողջ հայ ժողովրդին, եւ, ինչպէս ինքն էր ասում, իր ծննդավայրն ամբողջ Հայաստանն է: Սակայն Սյունյաց աշխարհում եւ մասնավորապէս

Գորիսում նա ունեցել է եւ շարունակում է ունենալ առանձնահատուկ ընկալում, թեւէ Սերո Խանգաղյան երեւոյթի (ինչպէս եւ բոլոր գրողների ու հասարակական-քաղաքական գործիչների) գործունեությունը պետք է դիտարկել (ինչը եւ արվում է) իր ժամանակի մեջ:

Սերո Խանգաղյանն ինքը Գորիսն էր, Սյունիքն էր՝ ամբողջապէս, ոգեղենացած:

Գորիսի պատմության, Գորիսի բառ ու բանի, Գորիսի ավանդույթների կենդանի կրողն էր:

Իր փոքր հայրենիքի բնաշխարհի գույներն ու պատկերները, իր լեռնաշխարհի մարդկանց, նրանց սովորույթներն ու բարքերը գեղարվեստականացնողն ու գրականություն բերողն էր, ինչը մինչ այդ արել էր սքանչելագործ ու ոսկեբերան Բակունցը:

Ինքը Գորիսի ու գորիսեցու հպարտությունն էր ու շարունակում է լինել այդպիսին, ինչպէս Ակսել Բակունցն ու Գուսան Աշոտը, Գրիգոր Տաթևացին ու Հովհան Որոտանցին, Ստեփանոս Սյունեցին ու Մովսէս Տաթևացին (Խոտանանցին), Համո Սահյանը, ինչպէս Սյունյաց աշխարհի միջնադարյան քերթողները Շաղատի վարդապետարանից, Տաթևի համալսարանից ու Սյունյաց մեծ (Հարանց) անապատից:

Սերո Խանգաղյանը, ինչպէս Համո Սահյանն է ասում, 20-րդ դարի երկրորդ կեսի «մեր արձակի օրինական նահապետն է», իսկ նրա թողած գրական ժառանգությունը հայ գրականության «անկողոպտելի գանձերից» է:

Համո Սահյանն ասում է նաեւ՝ Սերո Խանգաղյանը յոթ հազար տարեկան էր եւ ուղեկիցն էր հայ ժո-

ղովրդի ամբողջ պատմության:

Ինքն էր, որ անհայտությունից հանեց եւ գեղարվեստական գրականություն բերեց մեր ժողովրդի ու մեր պետականության հեթանոսական շրջանի մի ամբողջ դարազուլուխ, ինչը պատմագիտության մեջ արել էր մեր մյուս մեծ հայրենակիցը՝ Նիկողայոս Ադոնցը (նկատի ունենք «Քննական պատմություն Հայոց» կոթողային աշխատությունը):

Ինքը, ինչպէս Հրանտ Մաթեոսյանն է ասում, «իր եւ բոլորիս նախնու տանուլ տված հաղթանակները ետ բերելու» ու «իր եւ մեր նախնու չապրած կյանքերն ապրելու» համար մարտնչողն էր:

Հովհաննէս Բաղրամյանի բնութագրմամբ՝ սպարապետ էր հայ գրականության մեջ:

Սեկ ուրիշի ձեւակերպմամբ՝ իր օրերի հայ գրականության Արամազդն է:

Խիզախ հայրորդի էր, մեր ազգային հիմնախնդիրների լուծման համար զոհաբերության պատրաստ գործիչ. դրա դրսեւորումներից մեկը 1975 եւ 1977 թվականներին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով Խորհրդային Սիւրբյան ղեկավարի սեղանին դրված նամակներն էին՝ հայոց պահանջատիրության հստակ եւ համարձակ շեշտադրումով:

Ոչ միայն Արցախի ազատագրական նորոյա պայքարի ակունքներում կանգնածներից էր, այլեւ այդ պայքարի զաղափարախոսներից, ոգեշնչողներից, կազմակերպիչներից, նաեւ մարտիկներից:

Տեսնել էր պետք, թէ ինչպէս է ոգեպնդում հայոց սահմանների ու հայոց արժանապատվության համար ոտքի ելած մերօրյա ֆիդայիներին, ճակատ մեկնող տղաներին: Նրա մեկ նախադասությունը բավական եղավ, որ ժամերի ընթացքում ասպարեզից դուրս մղվի Գորիսի տարածաշրջանի աղբբեջանաբնակ Որոտան գյուղը, որը Գորիս-Կապան ավտոմայրուղում անվերջ սադրանքների տեղիք էր տալիս՝ մարդկային կյանքեր խլելով:

Ինքը մեր երկրամասի նորագույն շրջանի պատմագիրն էր, դարերի ընթացքում Սյունիքում հյուսված, մանրագործված եւ սերնդեսերունդ փոխանցված ու մոռացության սպառնալիքի առջեւ հայտնված ասքերի, ավանդազրույցների, հեքիաթների, լեգենդների ու առասպելների հավաքողն ու գալիքին փոխանցողը:

Ոչ միայն խոսքի մեծ վարպետ էր, այլեւ գորիսյան ժողովրդախոսակցական լեզվի, համով-հոտով մեր բարբառի պահապանը:

Ի վերջո, նա Սյունյաց աշխարհի, նաեւ ամբողջ Հայաստանի քայլող հանրագիտարանն էր:

## Հայ ժողովրդի անվախճանության բանաձեւը

Գեղարվեստական իսկական արժեքներ ստեղծելու հետ մեկտեղ Սերո Խանգաղյանն արծարծել է արդիական խիստ հնչեղություն ունեցող հարցեր եւ

# Ամբողջ ժողովրդով, ազգովի

## ՀԱՍՏ ՍԱՀՅԱՆ



Սերո Խանգադյանը քայլող պատմություն է: Սեր ժողովրդի քայլող պատմությունը: Այդ պատմության թռիչքների ու գահավիժումների, ողբերգությունների ու հանդիսությունների, նրա աստեղային ժամերի եւ ասուպային վայրէջքների քաջահմուտ տարերքն ու վկան:

Այս խոսքիս մեջ Խանգադյանի հետ ապրած երեսունհինգ տարիներից հիշելու եւ հուշելու են միայն մի սովորական ժամ...

Մի քանի տարի առաջ էր: Սիսիանում էինք: Մի առավոտ Խանգադյանն արթնացավ եւ հրամայելու պես առաջարկեց.

- Այսօր գնում ենք Ցից քարեր:

Ցից քարերն այսօրվա Սիսիան քաղաքից երկու կիլոմետր հեռավորության վրա. հյուսիս-արեւելքում գտնվող անգիր ժամանակների բնակավայր է: Ամենայն հավանականությամբ, նախապատմական բերդաքաղաք՝ հարավից եւ հարավ-արեւելքից վիթխարի ժայռաբեկոր ցից քարերով, հյուսիսից՝ վիհավոր, մթին կիրճով, արեւմուտքից՝ բնական ժայռեղեն պարիսպներով պաշտպանված:

Գնացինք: Մոտեցանք հարավային սահմանին: Խանգադյանի մեջ արթնացավ հնագետը: Շոշափեց սահմանապահ ժայռաբեկորները, հայացքով չափեց սահմանը: Հայացքը կանգ առավ մի կետի վրա. «Մայր դարպասը պիտի եղած լինի»: Բաց դարպասից մտանք բնակավայրը. «Կանգնիր. - ասաց Խանգադյանը, - նայիր, հողի վրա պարզ երեւում է քաղաքի նախագիծը»: Քայլում ենք կենտրոնական փողոցով: «Տեսնում ես, - ասում է Խանգադյանը, - այստեղ էլ են հարուստ ու աղքատներ եղել, կարգադրող ու ենթականեր եղել, տառապողներ ու վայելողներ եղել, խորտակված ավերակների դիրքն ու տարածքը հուշում են այդ բոլորը»:

Իջնում ենք բնակավայրի հյուսիսային սահմանը, ձորաբերանը, որտեղ հազար մամուռ մաշած ու նորից մամռակալած դղմեններ են: Խանգադյանը նայում շոշափում է... Ափսոս, եղծված գրեր չկան, որ նա հագուրդ տա իր վերծանելու կրքին: Վերծանելու նրա մոլուցքը հայտնի է, խաչքարեր շատ է վերծանել եւ միշտ անսխալ:

Հետո նա սուլում է ձորաբերանից: Կիրճն արծագանք է տալիս: Կանչում է, կիրճն արծագանք է տալիս, երգում է, կիրճն արծագանք է տալիս:

Հետո տեսնում են, որ իմ ներկայությունը մոռացել է, ինձ տեսնում է, չի նկատում: Խոսում է ամերեւույթ էակների հետ, խոսում է ձեռքերով, աչքունքով, գլխով հաստատում եւ ժխտում է նրանցից լսածները, ինչ նախնական լեզվով է

Սեր Խանգադյանի լուսանկարների պլեթմից



խոսում, չգիտեմ: Ես թողնում եմ նրան իր «գրուցակիցների» հետ ու հեռանում: Նայում եմ իր երգից կախված եւ իր երգն ի վեր մագլցող արտույտին, սահմանապահ «ցից քար» ժայռին նստած շահեն բազեի անհանգիստ հայացքին, ձորաբերանին շորորող կաքավին, քարերի տակից կկոցած աչքերով ինձ նայող ամաչկոտ ծաղիկներին, նայում եմ, եւ մեջս բանաստեղծական տողեր են բողբոջում...

Մեկ էլ մոտենում է Խանգաղյանը. «Քնացի՞նք»: Հարցնում եմ. «Ու՞մ հետ էիր խոսում»:

- Ես քաղաքի բեղ-մորուքով, մագակալած մարդկանց հետ:  
- Ի՞նչ, նրանց ժամանակակիցը դարձա՞ր, - հարցնում եմ:  
- Դու էլ ես նրանց ժամանակակիցը, նրանք էլ են արտույտ սիրել, բազե սիրել, կաքավ սիրել, ծաղիկ սիրել ու սիրո տղեր են մրմնջացել:

Այսպես, Ցից քարերից վերադարձանք Սիսիան:  
- Բա չտեսա՞ր, - ասում է Սերոն, - որ նրանք մեզ հետ գալիս էին:

- Չէ, - ասում եմ, - ես մենակ նրանց ժամանակակից Սերո Խանգաղյանին տեսա:

- Գալիս էին: Եկան, - ասում է Սերոն: - Եկան, մտան այս հրաշալի նորաճ Սիսիանը կառուցող քարտաշների, որմնադիրների, ճարտարապետների կերպարի մեջ եւ դարձան մեր՝ իմ ու քո ժամանակակիցները:

Այսպիսին է մեր իմաստուն գրող, հնագետ, պատմաբան Սերո Խանգաղյանի էությունը, ապրելու կերպը, նաեւ աշխատելու եղանակը, լցվել կյանքով եւ դատարկվել թղթերի վրա:

Կես ժամ առաջ, երբ դուրս եկանք Ցից քարերից, նա ոչ թե յոթանասուն, այլ յոթ հազար տարեկան էր: Հիմա մեզ հյուրընկալողի առաջին դասարանցի երեխան եկել է դպրոցից, Խանգաղյանը նրա հետ միասին կարդում է այբուբենը, հարցեր է տալիս, պատասխանում է նրա հարցերին, դարձել է յոթ տարեկան: Չէ, մեծ գրողը տարիք չունի, նա հասակակիցն է իր ժողովրդի, նրա ապրած կյանքի, նաեւ նրա երազանքների:

«Գրական թերթ», 20 դեկտեմբերի 1985թ., N51

## Խոստովանանք պարտքի ու խղճի

### ՀԱՍՏ ՍԱՀՅԱՆ

**Ս**երո Խանգաղյանի գրական ուսուցիչները երկուսն են... մեր ժողովրդի պատմությունը (ներառյալ իր՝ Խանգաղյանի ապրած յոթանասուն տարիները) եւ իր վառ՝ ժողովրդով լցված անհատականությունը: Մյուս կարծիքներն արդյունք են դասավանդման մեջ տիրապետող այն իներցիայի, թե ամեն գրող պարտադիր կերպով ազդվում է իր նախորդներից: Իսկ Խանգաղյանի բանավոր խոստովանությունն ավելի շատ համեստության տուրք է, քան իրականություն: Խանգաղյանն ինքը մի քայլող պատմություն է, մեր ժողովրդի պատմության թռիչքների ու գահավիժումների, ողբերգությունների ու հանդիսությունների, նրա աստեղային ժամերի ու ասուպային վայրէջքների հմուտ գիտակը, դպիրն ու վկան:

Այս խոսքերիս մեջ ծանոթության հիսուն ու ընկերության

երեսունհինգ տարիներից միայն մի ժամ եմ հիշելու ու հուշելու՝ ցույց տալու համար գրող-քաղաքացու մտահոգությունների բնույթն ու չափը, իրավիճակների ազդեցությամբ փոխակերպվելու նրա բնական արտիստականությունը:

Խանգաղյանի հետ, իհարկե, իր նախածեռնությամբ ու առաջարկով, գնում ենք Սիսիանի Ցից քարեր բնակավայրը, անգիր ժամանակների մի բնակավայր: Հարավից պաշտպանվում է քարե զորքերի (դոշունդաղ) պահակախմբով: Նայում է ձախ, որոշում է մայր դարպասի տեղը:

- Մտնենք:  
Կանգնում է բլրի վրա ու միանգամից հայացքի մեջ է առնում բնակավայրի ամբողջ տարածքը:

- Տեսնու՞մ ես, հողի վրա պարզ երեսուն է բնակավայրի հատակագիծը: Բերդաքաղաք պիտի եղած լինի, բոլոր կողմերից պաշտպանված է կիրճով, բնական պատնեշներով, հարավից էլ՝ կիրճից վերեւ հանած ժայռաբեկորներով:

Իջնում ենք ձորաբերանը, որտեղ դումեններ կան:  
- Հա, սրանք Ցից քարերից էլ հին են:

Սուլում է, կիրճն արծագանք է տալիս, գոռում է՝ կիրճն արծագանք է տալիս: Հետո սկսում է խոսել ձեռքերով, աչքունքով, գլխի շարժումներով, հաստատում կամ առարկում: Իմ ներկայությունը չի նկատում: Ես հեռանում եմ, նայում իր երգից կախված եւ իր երգն ի վեր մագլցող արտույտին, ձորաբերանով շորորվող կաքավներին, քարերից մեկի գլխին նստած բազեի անհանգիստ հայացքին, քարերի արանքից կկոցած աչքերով ինձ նայող ծաղիկներին...

Խանգաղյանը ձայն է տալիս ու մոտենում է ինձ.

- Ձարմանալի մարդիկ են, մեզ նման, մենակ մագ-մորուքով են: Ես հիմա նրանց ժամանակակիցն եմ: Հիմա նրանք մեզ հետ կգան, կմտնեն մեր կառուցվող քաղաքների քարտաշների, որմնադիրների, ճարտարապետների կերպարների մեջ եւ կդառնան մեր ժամանակակիցները: Մենք նրանք ենք, նրանք մենք ենք: Այս է մարդկային երթի տիեզերական օրենքը, - ասում է ու լռում: Բայց լռո՞ւմ է, արդյոք, թե շարունակում է ինքն իր հետ խոսել տիեզերական այդ օրենքի մասին:

Դուրս ենք գալիս ճանապարհ: Սերոն նայում է աջ, ու իմաստուն աչքերը հանկարծ կայծեր են արծակում: Ճանապարհի աջ կողմը գարու փորձադաշտ է: Մարդահասակ գարի: Մեկը ձիուն նստած, ընկած երկու շան ետեւից, քշում է փորձադաշտի միջով: Քշում է միմչեւ շները հոգնում են: Հոգնած շներին բռնում, պարանով կապում իրարից, խուրջինի պես գցում ձիու վրա, նստում է ձի, ուզում է քշել, Սերոն ձայն է տալիս, եւ մոտենում ենք:

- Հո՞վիվ են, - ասում է, - Իշխանասարի յայլաղներում: Շներս ծուլացել են, գայլի վրա չեն հաչում, գայլերը օրը մի քանի ոչխար են տանում: Շները սովորել են, գալիս են այ, այս մոտիկ գերեզմանոցում ճաշի մնացորդներ են ուտում եւ քարերի սովերներում քնում, սովորել են հեշտ ու էժան կյանքի:

Սերոն զայրույթից պայթում է գետնահարված փորձադաշտի համար:

- Այս հովիվը արտին արժեք չի տալիս, իրենը չի, ոչ ոքինն է, - հովիվը պետք է, որ սիրտ ունենա, կանաչի համար դողա, սիրտ չունի, խիղճը կորցրել է: Շները ծուլացել, հեշտ ու ձրի

**Սերո  
Խանգաղյանի  
լուսանկարների  
այբոմից**

կյանքի են սովորել, մեղուները հեռու չեն թռչում, պատրաստ շաքարավազից են մեղր շինում, իսկ մարդի՞կ: Մարդկանց մի մասն էլ հեշտ կյանքով է ապրում, ուզում է, որ ամեն ինչ պատրաստ լինի... Իսկ մենք գրողներ ենք, պատասխանատու ենք այս բոլորի համար: Եթե այս հարցերի կողքով անցնենք, մեր գրածը ոչ ոքի պետք չի գա:

Այս էր իմ հիշած մեկ ժամը: Եվ Խանգաղյանի ամբողջ կյանքն այսպես է անցել: Ոչինչ չի վրիպում նրա աչքից եւ ոչնչի կողքով անտարբեր չի անցնում:

Եվ նրա ամբողջ ստեղծագործությունը կռիվ է խղճի համար, կռիվ է անարդարության դեմ եւ սպառողական հոգեբանության դեմ: Դրա համար էլ ամբողջ ժողովուրդը ճանաչում ու սիրում է նրան, ուրախանում ու հպարտանում նրա անունով, իր անկողոպտելի արժեքներն է համարում նրա գլուխգործոցները՝ «Վարք հարանց» պատմվածքների շարքը, «Մատյան եղելությանց» վիպակը, «Մխիթար Սպարապետ», «Թագուհին հայոց» պատմավեպերը եւ ուրիշ շատ ստեղծագործություններ:

Սերո Խանգաղյանը մեր արձակի այսօրվա օրինական նահապետն է, խոնարհում են գլուխս նրա ազնիվ կերպարի եւ մեծ վաստակի առաջ իր նշանակալից հոբելյանի օրը:

**«Սովետական Հայաստան», 25 դեկտեմբերի 1985 թ., N296**

**Հողի եւ հոգու դաշնությունը**

Սերո Խանգաղյանի ծննդյան 50-ամյակի առթիվ

**ՀԱՏՈՒ ՍԱՀՅԱՆ**

**Ա**յս տարվա սեպտեմբերին Խանգաղյանից նամակ ստացա. - «Փարիզ եմ: Ֆրանսահայերը դադար չեն տալիս: Չանձրանալու ժամանակ չունեն, բայց սրտունս կարոտ կա:

Երեկ «Աշխարհ»-ի խմբագրատանը խոսքս սկսեցի քո բանաստեղծությամբ՝ «Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնահացի»: Սերո հացի համը ոչ մի տեղ չկա...

Ինչ եղավ գյուղ գնալու: Գնա, Երեւանը չի փախչի, գնա: Հայրիկիդ մոտ երկար մնա, որ կարոտն առնի, մեղք է Սահակ դային: Երբ կարոտդ առնես պրծնես, գնա Գորիս: Յուրտ աղբյուրի քարը կհամբուրես, հետո կչոքես ու բռով մի կուշտ ջուր կխմես, «քարահունջ» էլ: Չափավոր: Ուխտ: Ինչպես քիրվա Շամիրը կասեր, լազա՞թ:

Գորիս գնալիս մեր տանը կմնաս, մայրիկը մենակ է, թող նա էլ իմ կարոտն առնի քեզանից: Առավոտներն առանց նախաճաշելու տանից դուրս չգաս, մայրիկը կանհանգստանա: Երեկոները չուշանաս, մայրիկի քունը չի տանի: Բաբուն Տիգրանին անպատճառ կտեսնես, կհետաքրքրվես, թոշակն ավելացրի՞ն, թե՞ չէ:

Քարահունջ մտնելիս Ալբերտի վիճակն իմացիր, տես՝ ինչ նոր բաներ է գրել: Կարդա, խորհուրդներ տուր: Կուքեր ամուն



ասա թող մի հորովել երգի, ականջ արա.

Ծարավել եմ ջուր բերեք,

Բալաջանի ձյուն բերեք...

Մեր հորովելը, թեևերը թափ տալով, եկել-մտել է Փարիզի դահլիճները: Ականջդ կանչի, Կուբեր ամի:

Իմ այս հանձնարարությունները կատարելուց հետո, միտդ կբերես ինքդ թեզ: Քեզ լավ պահիր մինչեւ գամ: «Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնահացի...»:

Փոքրիկ, մտերմական այս նամակում պարզ երեւում են ճշմարիտ գրողի մարդկային առաքինությունները: Գրող, որ կապված է իր բնաշխարհի հողին ու քարին, օժտված նրա խստաբարո ընթացություններով: Գրող, որ կիսում է իր ժողովրդի հոգսերը եւ ուրախությունները: Գրող, որ ապրում է մարդկանց կյանքը թեթևացնելու, նրանց բարություն անելու համար:

Էհ, այնքան էլ հաճելի բան չի հիսունին հասնելը, - ասում է Սերո Խանգաղյանը, - բայց երիտասարդության սահմանն ո՞վ է որոշել: Քանի մարդ կարող է մարդիկ ապրեցնել, հասնել նրանց նեղ օրին, ուրեմն դեռ երիտասարդ է: Տարիքն իրավունք չունի իր մատը խառնելու սրտի գործերին: Դեռ այնքան բան կա անելու: Պետք է շտապել...

Կյանքը Սերո Խանգաղյանին բան չի խնայել, նա տվել է տեսածը վերաստեղծելու կարողություն, փակ աչքերով տեսնելու ընդունակություն, մարդկային սրտի ձայները որսալու ձիրք, արդարն ու բարին փառաբանելու չկրկնված եւ անկրկնելի տաղանդ ու ոճ:

Սերո Խանգաղյանի կյանքը պատմելու համար կարելի է գրել պոեմ, վեպ, մենագրություն: Բայց այդ կյանքը պատմելու համար մարդկային երկու կյանք է պետք: Երկար կյանք, որովհետեւ նա ապրում է արագ, քայլում է արագ, խորիում եւ գրում է արագ: Ժամանակակից ոչ մի հայ գրող թերեւս այնքան ուշադիր չի ժամանակի նկատմամբ, որքան Սերո Խանգաղյանը:

Աշխատասիրության եւ ստեղծագործական կարգապահության նախանձելի օրինակ է Սերո Խանգաղյանի կյանքը:

«Մեր գնդի մարդիկը» գրելիս նա արդեն հատվածներ էր կարդում «Յոդ»-ից: Եվ այդ ժամանակ իրատարակեց «Լալ Զամազը» եւ «Որոտանի կիրճում» ժողովածուները: «Յոդ»-ը գրելիս հատվածներ էր կարդում «Մխիթար Սպարապետ»-ից: Եվ այդ ժամանակ իրատարակեց «Դեպքեր լեռներում», «Քարանձավի բնակիչները» եւ «Կարմիր շուշաններ» գրքերը: «Մխիթար Սպարապետ»-ը գրելիս գլուխներ էր պատմում «Քաջարան»-ից ու տպագրության էր պատրաստում «Կորած արահետները»: «Քաջարան»-ի մասին ընթերցողներն արդեն նպաստավոր տպավորություններ են փոխանակում, եւ տպագրության է հանձնված «Մաքուր պահիր այս հողը» վիպակը...

Մարդկային ճակատագրերի կենդանի պատմություններ են այս գրքերը, հայրենի հողի բնավորության նկարագրեր, հայրենի բնօրրանի անմոռաց պատկերներ, հատված-պատված մի Զայաստան աշխարհ՝ իր պատմությամբ, իր ներկայով, իր ապագայով:

Յոդի մարդ է Սերո Խանգաղյանը եւ հողի խանդավառ եր-

գիչ: Չկա Զայաստանում մի քառակուսի կիլոմետր, ուր չլինեն նրա ոտնահետքերը: Չկա մի գյուղ, ուր նա գիշերած չլինի: Չկա մի խաչքար, որի մամուռը մաքրած ու եղծված գրերը վերծանած չլինի Սերո Խանգաղյանը: Մեր ժողովրդական ստեղծագործության հմուտ գիտակ է նա: Գիտակ է նաեւ մեր պատմության... Ու դեռ շարունակում է սովորել ժողովրդից:

Վերջերս պատահմամբ ձեռքս ընկավ նրա գրառումների տետրը: Բացեցի պատահական մի էջ: «Յին ժամանակ մեր քաղաքի վաճառականները որ ուզում էին մատաղ անել, էլ մատաղացուի փողը բերում էին փոխում իմ փողի հետ, որ մատաղը ընդունելի լինի: Ես դարբին էի, իմ վաստակն արդար էր»: Գրառման հեղինակը՝ Սերո Խանգաղյանն, իր կողմից ավելացրել է. «Այս խոսքն ասող գետաշենցի Մուխի դայու հոգեբանությունը հասկանալի է, նա էլ ինձ պես արդար քրտինքով ապրող մարդ է: Իսկ վաճառականների հոգեբանությունը մինչեւ հիմա չէի հասկանում: Ուրեմն նրանք գիտակցում են, որ իրենց վաստակը մաքուր չի: Գիտակցում են, գիտեն արդար վաստակի գինը, բայց եւ շարունակում են հարամություն անել: Ո՞վ է ստիպում...»: «Ո՞վ է ստիպում, ինչու՞ է այսպես». ճշմարիտ արվեստագետի հարցեր են սրանք, որոնց նա հաճախ չի պատասխանում եւ ընթերցողին հասկացնում է, որ ինչ-որ բան պետք է փոխվի:

Մի աշուն գնացել էինք Գորիսի գյուղերից մեկը, ուր ուսուցչություն էր արել Սերո Խանգաղյանը: Գյուղում հարսանիք կար եւ մեզ կանչեցին:

Խանգաղյանի ներկայությունը կրկնակի ուրախություն էր պատճառել հարսանքավորներին՝ որ նրա նախկին սաներն էին, ծանոթները, բարեկամները:

Խմեցին Խանգաղյանի կենացը: Շնորհակալություն հայտնեցին լավ գրքերի համար, այն բանի համար, որ իրենց պարզերես է անում եւ մանավանդ, որ իրենց չի մոռանում:

- Յա՛, - շնորհակալական խոսքում ասաց Խանգաղյանը, - հաճոյախոսությունը լավ բան է, բայց վայ հավատացողին: Եթե ձեր այդ մեծ-մեծ խոսքերին հավատայի, շատ երես կառնեի, եւ ինձանից բան դուրս չէր գա: Իմ բոլոր գրքերի, իմ արած-դրածի համար ձեզ եմ պարտական եւ շնորհակալ եմ ձեզանից: Էն իշխանասարի գլխի ամպը տեսե՛լ էք, որ անձրեւ է թափում, թեթևանում, կամաց-կամաց գլորվելով գալիս, մտնում ձորը, գետից ջուր խնում, գնում: Գնում է, որտեղ մի ցամաք ածու է տեսնում, թեևերը թափահարում է, վրան ջուր շաղ տալիս ու շարունակում ճանապարհը: Եղպես էլ ես: Յենց որ դատարկվում եմ, գալիս եմ էս ձորերը, լցվում ձեր խոի ու խոսքով, ձեր ծիծաղով, ձեր լավ, լավ երազներով... Էն ամպի պես ես ձորերից ջուր եմ առնում, որտեղ մի ծարավ պապակ սիրտ եմ տեսնում, ջուր եմ տալիս, որ հովանա, զվարթանա: Մեր հողն ու իմ հոգին անբաժան են: Յոգին հողով է հարստանում, հողը՝ հոգով:

Յոդի եւ հոգու դաշնություն է Սերո Խանգաղյանի համով ու հոտով, կենդանի ու թրթռուն ստեղծագործությունը:

Ի՞նչ կցանկանանք մեր սիրելի հոբելյարին նրա կյանքի այս նշանակալից պահին, երբ երջանիկ լինելու համար ամեն ինչ առատորեն տրված է նրան:

Եղբայրաբար սեղմենք նրա կարող ու ազնիվ ձեռքը եւ

մաղթենք երկար կյանք ու քաջառողջություն՝ ի բարօրություն մեր մշակույթի, մեր հոգեւոր աշխարհի:  
 «Կոմունիստ», 3 դեկտեմբերի 1965թ., N285

## Հարուստ բեռ ու բարձով

### ՀԱՍՈՍԱՅԱՆ

Սիրելի Սերո, քո դռանը կանաչ-կարմիր լույսերի մեջ վեց սպիտակ ուղտ է չոքել: Քո ապրած կյանքի տասնամյակներն են: Հարուստ բեռ ու բարձով, զարդ ու զանգակներով, տառապանքի հոգնաշավիղ անապատներն անցած, աշխարհի չորս քամիները կուլ տված, երանելի հանգրվանի հասած ուղտեր են:

Ուրախ իրարանցում է քո շուրջքոլորը: Բոլորը գոհ են ու շնորհակալ քո երջանիկ ներկայությունից: Միայն քո աչքերի մեջ է, որ կա անվերծանելի մի թախիծ, եւ քո ժպիտների մեջ է, որ դժգոհության ստվերներ են երեւում...

Երեւի ձեռքբերումներիդ պատկառելի հանրագումարը եւ նրանց մեծ արժեքն ավելի են սաստկացնում բացթողմներիդ ավստսանքը եւ անդարձ կորուստներիդ ցավը...

Երեւի... Ի՞նչ երեւի, հիրավի, քեզ ճնշում է բացակայությունը յոթերորդ, ո՞վ գիտի, նաեւ ութերորդ ուղտի, որ գալիս են միանալու քո քարավանին եւ որոնց ավելի թանկ, ավելի փնտրված բեռները կապած են քո հարկի տակ, քո գլխի ու սրտի մեջ:

Այդպես են ճշմարիտ գրողները: Նրանց միշտ թվում է, թե իրենց արածը տակավին այն չէ, թե կարող էին ավելին անել, թե ամենալավն այն է, որ դեռ նոր է գրվելու:

Իսկ ես՝ կողքից նայողս, որ ազատ եմ այդ սրբազան ճնշումից, տեսնում եմ քո ստեղծագործությունն ամբողջացած եւ գտնում եմ, որ այն անկողոպտելի գանձերից է հայ գրականության:

Եվ շնորհավորելով քեզ, հարստացած քո վեց սպիտակ ուղտերի բեռ ու բարձով, վեց անգամ համբուրում եմ քո ճակատի իմաստության վեց կնճիռները, վեց անգամ գլուխս խոնարհում եմ քո մեծ վաստակի առաջ:

«Հայրենիքի ձայն». 24 դեկտեմբերի 1975թ., N52




## Սերո Խանգաղյան

### ՀՐԱՆՏ ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայ գրականությունը, համայն հայ մշակութային կյանքը, հայ հասարակական-քաղաքական միտքը ծանր կորուստ ունեցան՝ իր

բեղուն կյանքի 83-րդ տարում վախճանվեց Սերո Խանգա-



դյանը՝ գրողը, հրապարակախոսը, գործիչը:

Չանգվածների հրապարակներում այլևս չի լսվելու նրա խռատ, հանդուգն, տիրական ձայնը, հայոց երկրային ու ժամանակային տարածքները այլևս չեն դրոշմվելու այդ մարտիկի եւ գիտնականի, այդ հետախույզի եւ վավերագրողի, այդ աշխարհագրի եւ մատենագրի քայլերով, հայ գրականության, հայոց պատմության վաղվա առաջամարտիկը այլևս չի ակնկալվելու նրա խրախուսիչ կանչը իր թիկունքից: Վաստակած, հոգնած նրա կյանքը իր ժողովրդի հավերժական երթից ետ է ընկել այսօր՝ 1998-ի հունիսյան այս օրը:

Ծնվել է 1915-ին, Գորիսում: Ծանր մանկություն եւ պատանեկություն է տարել, ավելի քան ծանր երիտասարդություն, բայց դաժանության հարող այդ ծանրությունը կարծես հատկապես ստեղծված է եղել միայն հանուն այն բանի, որ տոկուն ու հաղթական մարտիկի կոփեն, նա պետք է փրկվեր եւ պայքարեր իր եւ մեր բոլորիս նախնու տանուլ տված հաղթանակները ետ բերելու եւ պետք է կռվեր իր եւ մեր նախնու չափարած կյանքերը ապրելու համար:

«Մեր գնդի մարդիկ», «Հողը», «Մխիթար Սպարապետ», «Մատյան եղելությանց», «Քաջարան», «Թագուհին հայոց», «Հորս հետ ու առանց հորս», ռազմաճակատային օրագրեր, «Անդրանիկ», «Նժդեհ» - 1949-ից վեր նրա գրական անդաստանի ոչ մի տարին գրական, հասարակական, քաղաքական բացակայությունն ու լռությունը չի տեսել:

Քաղցի եւ մտավոր անլուծության տարիների վկա՝ նա ծարավի էր իրենից մշակութային կոթող բարձրացնել, եւ բարձրացրեց այդ կոթողը, որի իրական չափերը, որի իրական կարեւորությունը մենք այսօր տեսնում ենք եւ վաղն ենք զգալու նրա ձայնից, նրա խենթությունից, նրա իմաստությունից, նրա քաջությունից ու խոհեմությունից այլևս պարպված մեր պարապ հրապարակներում: ■

## Գուրգեն Մահարու մի նամակը



# 1961

թվականի նոյեմբերին մի մեծ խումբ հայ գրողներ ու արտիստներ օդանավով գնացինք Ուզբեկստան՝ այնտեղ հայ գրականության ու արվեստի տասնօրյակ անցկացնելու: Մեր ժամանելուց մի քանի օր հետո Երեւանից եկած օդանավի սպասարկողներից մեկը ինձ մի նամակ

հանձնեց ու ասաց՝ Գուրգեն Մահարուց է: Նամակը գրված էր սեւ թանաքով, Մահարուն հատուկ մարգարտաշար ձեռագրով: Ահա դա.

Սիրելի Սերո

Ուղարկում եմ «K»-ի գրախոսականը Սպարապետիդ մասին: Գեշ չի:

Պատգամավորության մեկնումից հետո Երեւանում սկսեցին անձրեւային եղանակներ: Տխուր է երկինքը եւ գրողների տունը, տխուր եմ եւ ես, մի տեսակ որբացած: Էմինի հետ ոտք-ոտքի հիվանդ եմք...

Ջերմ բարեւներ բոլոր տղաներին, այլեւ Տաշքենդի մեքենաշինարարներին, Մարգելանի տեքստիլագործներին, Անդիժանի նավթագործներին, Բուխարայի գազագործներին եւ մանավանդ Ֆերգանի հովտի բամբակագործներին: Սալամ Ջուլֆիահին, Այբեկին, Գաֆուր Գուլյամին, Քամիլ Եաշենին:

Հատուկ ողջույն Սիլվա խաթունին եւ Գոհարիկ ու Մանուշակ խանումներին:

Երգիչ-երգչուհիներին ուզբեկական ազդեցիկ հավկիթներ, իսկ Համոյին, Հրաչին, Սեւակին՝ ուզբեկական չափածո փլավ:

40-ական թվականներին ծանոթ եղա մի ուզբեկի հետ, «Բայբայ» էին կանչում, երկու կին ուներ եւ ամեն ամիս ստանում էր երկու ծանրոց: Եթե հանդիպես՝ բարեւիր:

Շահենին տեսեք: Հասցեն Պարույրի մոտ է:

Սիրելի Պարույր, երեկ երեկոյան Նելլին եւ Արմենը մեզ մոտ էին: Անտոնինայի հետ նստեցին եւ մեծ գովասանքներով խոսեցին մեր մասին: Ըստ այդ գովասանքների, ես վերահասու եղա, որ ես ու դու բավականին անտանելի մարդիկ ենք եղել: Դրությունս բավականաչափ ծանր էր. մենակ բռնեցին ինձ, խեղդեցին: Անհամբեր սպասում եմ քո գալուն՝ միասնական ուժերով հակազորիի անցնելու համար, «Իմ չինարի հատը» մարտական մարշով:

Ձեր գնալուց հետո բազում պոետներ եւ արձակագիրներ թեւերը քշտեցին եւ նստած պոետների եւ վեպերի վրա՝ սոցիալիստական ռեալիզմի վերջին խոսքով եւ մեթոդով, կվերադառնաք եւ կտեսնեք, թե ինչ գրականություն է ծաղկել ձեր բացակայությամբ: Բա՛ս:

Թերթերն ու էֆիրը լեցված են Տաշքենդով եւ ձեր անուններով: Ուղարկում եմ մի կտրոն «խորհրդային Հայաստան»-ից:

... Վերջացնեմ: Մեծ բարեւներ բոլորիդ:

Ցանկանում եմ ամենայն հաջողություն, բարիք եւ հաճելի ու օգտակար օրեր, ժամեր, անգամ ընդհանրապես:

Սիրով ձեր՝ Գ.Մահարի

21 նոյ. 1961թ.  
Անձրեւոյ Երեւան



Ուզում եմ մի քանի ծանոթություն տալ, առանց թվահամար նշելու: Նամակը պահպանվում է իմ արխիվի 37-րդ թղթապանակում:

Ուզբեկստան գնացած գրողներին խումբը մեծ էր՝ Էդուարդ Թոփչյան, Պարույր Սեւակ, Համո Սահյան, Հրաչյա Հովհաննիսյան, Գրիգոր Տեր-Գրիգորյան ու էլի: Արտիստներից էին Թամարա Դեմուրյանը, Ջինա Պետրոսյանը, Գուրգեն Աղանյանը, Վարդուհի Խաչատրյանն ու այլք:

«K»-ն մեր հանրապետական «Կոմունիստ» թերթն է: Էմինն ասաց, թե, այդ, այդ օրերին ես ու Մահարին հիվանդ պառկած էինք «լեչկոմիսիայում»:

Գաֆուր Գուլյամը ուզբեկ գրող Ղաֆուր Ղուլամն է: Մա-



հարին նրան ծանոթ էր տակավին իրեն քսորելուց առաջ: 1951, թե 1952 թվականին Ղուլանը եկել էր Երեւան: Հաճախ էր հարցնում Մահարու մասին՝ ո՞րը է, ո՞ւր է:

Սիլվա խանունը Կապուտիկյանն է. Գոհարիկը՝ երգչուհի Գալաշյանը: Մանուշակը բանաստեղծուհի Մանյա Հակոբյանն է, ես եմ նրան «Մանուշակ» ասել ու ասում:

Այս ուզբեկ Բաբայի հետ Մահարին եղել է քսորավայրում: Հաճախ էր հարգանքով տալիս նրա անունը: - Այ տղա, ոսկի մարդ էր, անչափ բարի: - Հարցրի՝ ի՞նչ եղավ: - Վալլա՛հ, - ասաց, - չգիտեմ: - Պատերազմից առաջ նրան տեղափոխեցին ուրիշ «լագեր»:

## Սեր եւ պարասխանապփութիւն



### ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ

«Գրական թերթ»,  
20 դեկտեմբերի 1985թ.

**Ս**երո խանգաղյանի ստեղծագործության հիմքը ժողովրդական մտածողության տարերքն է, այդ տարերքի գեղարվեստական մարմնավորումը եւ իմաստավորումը: Դա ոչ թե նմանակում է,

այլ ստեղծագործական խառնվածքի բնական, օրգանական արտահայտություն: Նա այդպես է ապրում կյանքում, այդպես է ապրում իր լավագույն պատմվածքներում ու վեպերում: Խանգաղյան մարդը եւ գրողը մեկը մյուսի շարունակությունն են, իսկ երբ մարդը եւ գրողը համընկնում են իրար, ծնվում է գրականության գուցե ամենակարեւոր հատկանիշը՝ կենսական ճշմարտությունը: Խանգաղյանի ստեղծագործության ժողովրդայնությունը միայն համով-հոտով լեզուն չէ, միայն ժողովրդական բառ ու բանի հարուստ օգտագործումը չէ, այլ նախ եւ առաջ ժողովրդական հոգու եւ ոգու գերազանց իմացությունը, հայ ժողովրդի անցյալի ու ներկայի հոգեւոր կենսագրության բոլոր ծալքերի, բարդ ծալքերի խոր գիտականությունը:

Ճիշտ է, այս հատկությունն ի վերուստ է տրված նրան, բայց եւ միաժամանակ հարստացած է իր երկարատեւ կենսափորձով: Հայաստանում չկա մի թիզ հող, որտեղ եղած չլինի խանգաղյանը: Նա ունի մի ծոցատետր, որտեղ գրի է առնում իր տպավորությունները: Երբեմն գրի է առնում այնպիսի ժամանակ, երբ, թվում է, գրի առնելու որեւէ արժանի բան չկա: Բայց թվում է միայն: Եթե նա գրի առավ, ուրեմն, իմացեք, կարելու բան վրիպել է ձեր աչքից, իսկ նրա փորձառու աչքը տեսել է, հասկացել ու գնահատել: Բանը, իհարկե, ծոցատետրը չէ, այլ գրողի ներքին տեսողությունը, եթե կարելի է ասել՝ գրողական այն անտեմամ, որ օդից որսում է կենսական թրթռներ, կուտակում դրանք եւ այդ պաշարը շռայլորեն վերադարձնում մեզ, իր բազմահազար ընթերցողներին: Այո, Սերո խան-

գաղյանը երբեք չի դավաճանում, ավելի ճիշտ չի նահանջում ակտիվ կյանքով ապրելու իր սկզբունքից: Եվ, օրինաչափ է, որ նրա բոլոր ստեղծագործություններում նույնպիսի ակտիվ եւ ընդգծված վերաբերմունք կա կենսական նյութի հանդեպ, լինի դա ժամանակակից գործ, թե պատմական:

Արդիականությունը եւ պատմական թեման կշիռ եւ արժեք ունեն նրա ստեղծագործության մեջ: Երկու դեպքում էլ նա մնում է արդիական: Ո՞ւմ է պետք այն պատմավեպը, որ ունի սոսկ ճանաչողական նշանակություն եւ չի հարաբերակցվում ժողովրդի այսօրվա հարցերի ու խնդիրների հետ, այսինքն, ճանաչելի չէ նաեւ այսօր: Այդպիսիք են Խանգաղյանի թե՛ «Մխիթար Սպարապետ», թե՛ «Թագուհին հայոց», թե՛ «Խոսեք, Հայաստանի լեռներ» հայտնի պատմավեպերը: Իսկ զուտ արդիական ստեղծագործությունների շարքում, նրա մի փունջ պատմվածքների հետ մեկտեղ, ես կառաջնացնեմ հատկապես «Մատյան եղելությանց» վեպը, որ, չգիտես ինչու, հաճախ հանիրավի մոռացության է մատնվում: Մինչդեռ այդ վեպը մեզ ներկայացնում է հյութեղ կերպարների մի ամբողջ պատկերասրահ, ժողովրդական կյանքի խտացած պատկերներ եւ փիլիսոփայական հայացք ժողովրդի կեցության հիմքերի մասին:

Սերո խանգաղյանի գրականության ակունքները, ըստ իս, պետք է որոնել Ակսել Բակունցի ու առավել եւս՝ Րաֆֆու մեջ: Բակունցի պես, նա չի անջատում մարդուն բնության երեւույթներից: Գրողը հավաստում է, որ մարդը երջանիկ է միայն բնության հետ բազմազան կապերով: Րաֆֆու պես, նա պատմության դասերը ծառայեցնում է իր ժամանակին, խոսքային, ճարտասանական, գեղեցկախոս հայրենասիրությանը հակադրում է գործնական, ուրեմն եւ՝ իսկական հայրենասիրությունը, մարդկային բոլոր առաքինություններից այն համարելով առաջնայինը:

Սակայն խոսքը ազդեցության մասին չէ, այլ ստեղծագործական սկզբունքների շարունակության, ավանդների ժառանգության: Իսկ գրողի լավագույն ուսուցիչը եղել է մնում է կյանքը, նրա այսօրվա աշխարհագրությունը, այսօրվա այրող ու հրատապ խնդիրները: Այդպիսին է եղել Սերո խանգաղյանը 40 տարի առաջ, այդպիսին է նաեւ հիմա, իր յոթանասունամյա տարիքում: Ու թեւեւ այլեւս չունի ջահել օրերի գեղեցիկ խենթությունը, բայց փոխարենը ունի իմաստություն, իր գրողական պարտքի ավելի խոր գիտակցություն՝ ժամանակի ու ժողովրդի առջեւ:

## Անցած օրերից մի քանիսը

### ԷԴՎԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆ

«Գրական թերթ», 20 դեկտեմբերի 1985թ.

#### Սերո...

Իր լուսեղեն մայրը, Վարդանուշ մայրիկը, ծագումով Մելիք-Օհանյանների տոհմից, իրեն՝ Սերովք, հակառակ բոլոր մայրերի, որոնք արդեն տարիքն առած զավակներին շարունակում են փոքրացուցիչ անուններով կոչել: Եվ



ամենասովորական ընտանեկան հարցերի շուրջ խոսում էր ընդգծված լրջությամբ, խորին ակնածանքով, ծայրն անգամ փոխված եւ անպայման... կանգնած, հայացքն էլ դեպի Սերոյի դեմքը, բայց նայում էր գլխից վեր: Խոսում, դիմում էր, ինչպես կոհմեն տան մեծավորին, երբ տանը մեծ եղբայր կար, Սուրենը... Երեւի, այդպես էր դիմել նաեւ Սերոյի

հորը, Նիկոլային: Խանգաղյանների հսկայական տոհմի բուրդը հոգս ու պարտքերը վարդանուշ մայրիկի բերանով համարյա թե դառնում էին «կարգադրություն», եւ Սերոն լսում էր լուռ, գլուխը խոնարհած, ամեն ասածին հավանություն տալով գլխի շարժումով, որ պատրաստ է, համաձայն է առանց «հարցը քննարկելու» ի կատար ածել:

Որպես ճանաչված, սիրված գրողի, դեպուտատի, դուռը ծխնի վրա բաց է, այցելուները՝ ոչ միայն Ձանգեգուր երկրից, հանրապետության բոլոր՝ հեռու-մոտ շրջաններից, գյուղերից... Իսկ ժամանակը՝ շագրենի կաշի... Ե՞րբ է հասցնում գրել...

Գիշերվա ուշ ժամին զանգում են (ես էլ եմ անքուն) եւ լսում եմ իմ սիրելի Սերոյի հոգնած ձայնը.

- Հի՞նչ կա...

Եվ քիչ է մնում մի բան էլ ես խնդրեմ, ասեմ, թեկուզ, որ արվեստանոցիս տանիքը կաթում է:

Խնդրում եմ քո...

Բայց ասում եմ.

- Հե՛չ, ջանսաղություն:

- Հա, եղ լավ ասիր...

- Քաջառողջություն եմ ուզում քեզ, սիրելի Սերո, քեզ, նշանավոր գրողիդ, ազնիվ քաղաքացուդ, ուժ ու եռանդ, որ ծրագրածդ իրականացնես...

Ժամանակը կարող է եւ յոթնասուն տարեկան արվեստագետին չենթարկվել, բայց ժամանակը ուշ հավաքած բերքը այնքան է քաղցրացնում, որ նուռը, թուզը ճաքեր են տալիս... Ուշ գրածի, նկարածի, երգի մեջ լուսավոր թախիծ է լինում, կարոտ կուտակված, մոռացած սեր՝ նաեւ: Այդպես լինում է բոլոր ճշմարիտ արվեստագետների հետ. այդպես մի օր ստեղծվում է «Մլորյալ որդին», «Աշխարս մե փանջարա ե», «Երագունս մի մաքի», «Նավզիկե»...

... Ես հին խնդրեսկն եմ նկարում (երբ դեռ կանգուն էր), իսկ ինքը՝ Սերոն, պատվիրատուի իրավունքով կանգնած է կողքիս եւ պահանջում, որ հեռվում հագիվ նշմարվող «Պարոն տերի» դոյակի ավերակները, հատկապես կամարակապ մուտքը, «մի քիչ կարգի բերեն», այսինքն՝ «վերականգնեն»: Վերականգնում եմ, հաստատ արդեն համոզված, որ շուտով այդ էլ չի մնալու:

Ձորաբերանի պոնկին ենք կանգնած, գյուղի հենց կենտրոնում, եւ հրապարակ չկա: Խնձորեսկում «հրապարակ» չի կարող լինել, մեկի կտուրը մյուսի բակն է, իմ կանգնած տե-

ղը՝ կես պատշգամբաչափ տեղ է, եւ Սերոն զգուշացնում է, որ հետ զնալուց «զգոն» լինեն, մի ավելորդ քայլ եւ...

- Առաջներում եթե ընկնեի, ծառերը «կբռնեին», իսկ «Տերն ընդ քեզ» կլինես... Իսկ հներում ես ձորերը ծառ ու այգի էին եւ ոչ միայն խնձորեսկի. Գորիսի, Որոտանի կիրճում մի թիզ դատարկ հող չէիր գտնի... հեքիաթային այգիներով էին ծածկված՝ ընկույզը, թուզը, նուռը, հոնը, տանձ ու խնձորը, իսկ խաղողի վազերը բարձրանում էին ծառերի վրա եւ կարմիր, դեղին ողկույզները ճրագների նման կախվում էին աշնանը, ինչպես նոր տարվա զարդարված տոնածառ... Միրզը, պտուղը, ծով-անհաշիվ. քաղել չէին հասցնում, մնում, տումկում, թափվում էին ծառերի տակ՝ դառնում արջի բաժին...

Չկա հիմի. ով պիտի տնկի, շենացնի նորից - բոլորը զբաղված են: Զբաղվա՞ծ են...

Խոսում է տխուր, ինքն իրեն հետ, համարյա թե լացակուրմած, բայց հետո, շրջկոնում, ավելի քան կասի, կխնդրի (քանի՞երրորդ անգամ), որ չմոռանան իրենց տված խոստումը՝ ծառ տնկելու մասին:

Իսկ մինչեւ նրանց ծառ տնկելը, Սերոն կարարի իր սքանչելի պատմվածքները, այդ ձորերի թանձր մշուշի, կապտազմբուխ երկինքների մասին, այդ ձորերում, ծերպերում ապրող թուխ, ջլապինդ, խոժոռ մարդկանց մասին, որոնք սկիզբ կվերցնեն «Մթնածորից», կանցնեն «Կյորեսը» եւ կմտնեն «Մատյանի» տխուր, ժպտախառը էջերը, օժված Ակսելի լուսավոր ռոմանտիկայով եւ կաղնեծառի պիրկ արմատներով՝ կմխրճվեն հողի ու քարերի մեջ եւ կարմատավորվեն:

Սեր դարի վերջում վեպը, պատմավիպագրությունը, ինչպես եւ պատմակարչությունը, օպերային երաժշտությունը մազ մնաց, որ հոգիները տային... Համարվեցին ուշացած, դարձն ապրած զբաղմունք, անախրոնիզմ...

Կատարվել է արժեքների սովորական «նյութափոխանակում», վերաարժեքավորում, եվրոպական մեծ ու փոքր ազգերը այդ ժանրերից քանել էին, ինչ հնարավոր էր, եւ, «թեթեւացած» անցյալի բեռից, կարող էին իրենց խելքի փչածը գրել, նկարել ու երգել... Երաժշտությունը հասցնելով կակաֆոնիայի, նկարչությունը՝ արստրակտ արստրոֆի, պակասն էլ լրացրին գրողներն ու բանաստեղծները...

Դժվար ժամանակներ էին, դիմացողը դիմացավ: Երեւի պիտի պղտորվեր, որ զուլավվեր:

Եվ պարզվեց, սակայն, որ հարցը ժանրերի մեջ չէ, «ծերության» հարց չկար: Կար ընդամենը «լավ ու վատի» հարց, որ միշտ էլ եղել է եւ լինելու է:

Պարզվեց նաեւ, որ առանց այդ «ծանր հրետանու» այսօրվա ասելիքն էլ մնացել է «անթիկունք», անպաշտպան, ինչպես հիշողությունը կորցրած մարդը: Իսկ եթե կա աշխարհում մի ժողովուրդ, որ հիշողությունը կորցնելու իրավունք չունի, ապա դա մենք ենք:

Մենք՝ հայերս, որ նորից դարասկզբին ծնվեցինք, «թեթեւանալու» կարիք չունեինք: Մենք պիտի սկսեինք մի քանի սերունդների «չարածից», եւ երբ Հայրենականի տարիների ստեղծվեց «Վարդանանքը», Վարպետը՝ Իսահակյանը, մի հանդիպման ժամանակ մեզ՝ դեռ երիտասարդ նկարիչներին, ասաց.

- «Վարդանանքը» մեզ համար հարյուր տարվա կերակուր կծառայի, - հենց այդպես «կերակուր» էլ ասաց. հոգեւոր սնունդ չասաց:

Եվ պետք էր, որ ստեղծվեր նաև «Մխիթար Սպարապետը»: Իսկ ուրարտական «անբացատրելի առեղծվածին» ուղղամիտ բացատրություն տալու համար պիտի գիշերներ լուսացներ դեղնած մատյանների վրա, որ ստեղծվեր, կենդանություն առներ «Թագուհին հայոց»-ը... «Անբացատրելին» դառնար մեր պատմության շղթայի մեջ օղակ եւ ոչ փականք, կապան:

Գութանի մաճ, գերանդի բռնելու կարողություն քեզ, սիրելի՛ Սերո, պապիդ, չորան Առաքելի աջ բազկի գորություն, որ մենակ մի հոռի գավազանով կանգնում էր քոչվոր Թարաքյամայի դեմ, որ գարնան գուլից ծլարձակած արտը պճեղների տակ չտան, չտրորեն:

### Գրողը, քաղաքացին, գործիչը



#### ԳԵՎՈՐԳ ԶԱՅՐՅԱՆ

«Գրական թերթ»,  
20 դեկտեմբերի 1985թ.

**Տ**արիներ առաջ գրած ինքնակենսագրականում խանգաղյանն ասել է. «Ես ծնվել եմ Ջանգեզուրում, այնտեղ, ուր լեռները երկնքի մեջ են, որոնցից շատերի գագաթներին ամռանն անգամ ձյուն է լինում: ... Ուր

խորունկ ձորերի ու կիրճերի մեջ քաղցրանում է նուռը, խաղողը, թուզը, իսկ լեռներում՝ ալպյան արոտներն են, կապույտ լճեր»:

Ճշտենք. նրա ծննդավայրը Գորիս քաղաքն է:

Վաղ տարիքում կորցնելով հորը, խանգաղյանը ստիպված էր սեփական քրտինքով կերակրել մորն ու քույրերին: Գորիսի մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո, նա ուսուցչություն է անում Տաթև եւ Խնածախ գյուղերում: Զենց այդ տարիներին էլ փորձում է իր ուժերը գրականության մեջ, գրում է ակնարկներ ու պատմվածքներ, որոնցից մեկը («Մեղվանոցը՝ մկների բույն») տպագրվում է շրջանային թերթում: Ապա թատրոնը բեմադրում է նրա չափածո պիեսը՝ «Վահրամ Որոտնեցին»:

Խանգաղյանի գրական առաջին փորձերը, հատկապես պիեսը, ազդարարեցին գրողի ծնունդը, բայց դրանք, ռազմական լեզվով ասած, «տեղական նշանակություն ունեցող» մարտեր էին, որոնք չէին կարող հեղինակի անունն ու փառքը դուրս բերել հայրենի գավառի սահմաններից: Խանգաղյանը ծրագրում էր մոր, ավելի մասշտաբային գործեր ստեղծելու մասին, բայց այդ երազները մնացին անկատար: Անիծյալ պատերազմը ստիպեց վայր դնել գրիչը եւ զենք վերցնել՝ քշմանու դեմ կռվելու:

Եվ ահա, հրաժեշտ տալով հայրենի բարձրաբերձ լեռներին, մորը, երիտասարդ կնոջը, քույրերին ու ընկերներին, խանգաղյանը գնաց ռազմաճակատ՝ Սյունյաց աշխարհից հասնելով պատերազմի բոցերի մեջ այրվող Լեւինգրադ, շարքային զինվորից դարձավ հրամանատար, երկու անգամ վիրավորվեց եւ, արագ բուժվելով, նորից շարք վերադարձավ, պարգևատրվեց մարտական շքանշաններով, ճաշակեց անհաջողության դառնությունն ու հաղթանակի հաճույքը:

Հասկանալի է, որ նման պայմաններում նա չէր կարող զբաղվել իր նախասիրած աշխատանքով՝ գրականությամբ, այլ բավարարվեց միայն օրագրերի տեսող պահելով: Իսկ երբ նրա զորամասը 1945-ի մայիսին Գերմանիա մտավ, սկսեց գրել «Մեր գնդի մարդիկ» վեպը, որը եւ ավարտեց ռազմաճակատից տուն վերադառնալուց հետո: Այսպիսով, խանգաղյանի գրական ակտիվ գործունեությունը սկսվեց պատերազմից հետո, եւ նա, ինչպես ինքն է ասել տարբեր առիթներով, գրող դարձավ պատերազմի «մեղքով»:

Հիրավի, «Մեր գնդի մարդիկ» վեպը նշանավորեց խանգաղյանի մուտքը մեծ գրականություն, որը եւ նրան «մի գիշերում» հայտնի դարձրեց ընթերցողների լայն շրջաններին: Երիտասարդ արձակագրի ասպարեզ գալը ողջունեցին մեր գրականության կենդանի դասականները՝ Դ.Դեմիրճյանն ու Ստ.Զորյանը:

Սակայն պատերազմի թեման «Մեր գնդի մարդիկ»-ով չէր վերջանում: Խանգաղյանի օրագրերի մեջ եւ հոգում «հունքի» բավական մեծ պաշարներ էին կուտակված:

Գրողին հուզում էր նաև ռազմաճակատից տուն վերադարձած մարտիկների ճակատագիրը: Ի՞նչ եղան, ո՞ր գնացին, ինչո՞վ են զբաղվում իր մարտական օրերի ընկերները... Նրանցից շատերին հանդիպեց հայրենի Սյունիքում: Մոտիկից հետագուտեց նրանց խաղաղ կյանքը, նոր գործերը եւ հանգեց այն եզրակացության, որ դրանք եւս յուրօրինակ սխրանք են, որ ռազմի դաշտում հաղթողը չի կարող չհաղթել նաև ստեղծարար աշխատանքում, ավելի լավ կյանքի համար մղվող պայքարում: Այդ հետազոտությունների արդյունքը եղավ «Հողը» երկհատոր վեպը: Խանգաղյանը լեռնային գյուղի փոքր տարածքի վրա լուծեց մի շարք կարևոր խնդիրներ, որոնք այսօր էլ կենսական նշանակություն ունեն մեր կյանքի համար:

Հետագայում իր ռազմական տարիների ընկերների մյուս մասին խանգաղյանը գտավ արդյունաբերության մեջ: «Քաջարան» ծավալուն վեպը այդ որոնումների փայլուն արտահայտություններից էր:

Սակայն արձակագրին գրական մեծ փառք բերողը «Քաջարանից» առաջ գրված նրա մի այլ գործն էր՝ «Մխիթար Սպարապետը», նրա ողջ ստեղծագործության պսակը, որի ստեղծման գաղափարը, հեղինակի վկայությամբ, նույնպես ծնվել է խրամատներում: Զէ՛ որ ընդհանուր շատ բան կար այսօրվա ֆաշիզմի եւ երեկվա թուրք ջարդարարների միջև: Հետագայում նա գրել է. «Մխիթարյան ժամանակաշրջանը հոգեբանորեն խիստ համընկնում էր Հայրենական պատերազմի ժամանակաշրջանին: Ես հարության էի հրավիրում Դավիթ-Բեկին, Մխիթարին եւ էլի շատ ուրիշների, որպեսզի

նրանց տեսնեն մեր՝ ռազմիկներին կողքին կանգնած՝ Սուվորովի, Կուտուզովի, Բոգդանի համելնիցկու եւ այլ անցած-գնացած մեծերի հետ միասին, կռվի կոչելով հայրենիքի թշնամիների դեմ»:

Խանգաղյանի պատմավեպերի շարքում իրենց արժանի տեղն ունեն նաեւ «Խոսեք, Հայաստանի լեռներ» եւ «Թագուհին հայոց» երկերը:

Սովետական գրականության մեջ՝ թե՛ ձեւով, թե՛ բովանդակությամբ, նորություն է Խանգաղյանի եռահատոր «Հայրենապատումը»: Դժվար է միանգամից որոշել այդ ստեղծագործության ժանրային պատկանելությունը: Չենք սխալվի, եթե ասենք, որ այնտեղ կարելի է գտնել գրական բոլոր տեսակների առկայությունը: Սակայն գերակշռողը հրապարակախոսությունն է:

Ս.Խանգաղյանը, գրեթե իր բոլոր գործերում, կարողանում է կյանքը տեսնել «ներսից», թափանցել երեւոյթների խորքը: Նա բնավ չի փորձում զուգադարձել կյանքը, հրճվում, ուրախանում է նրա լույսերով եւ տխրում ու զայրանում՝ սովորները նկատելիս: Այդ իմաստով, «Մատյան եղելությանց» վեպը ոչ միայն հեղինակի, այլեւ սովետահայ գրականության մնացյալն արժեքներից է:

Խանգաղյանը հասցրել է լինել աշխարհի բոլոր հայաշատ վայրերում, այդ ուղեւորությունների արդյունք են նրա հուշագրությունները, որոնք ներծծված են քաղաքացիական պաթոսով, կրակոտ հայրենասիրությամբ եւ ինտերնացիոնալիզմով: Հատկապես մեծ է ռուս ժողովրդի նկատմամբ նրա ունեցած անկեղծ սերը:

Խանգաղյանը, գրող լինելուց առաջ, նաեւ հասարակական գործիչ է, սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, ակտիվ քաղաքացի, որի համար ժողովրդի շահերից ավելի թանկ բան չկա: Ահա թե ինչու նա իր ժամանակի մի զգալի մասը ծախսում է հասարակական թե մարդկային անարդարությունների դեմ պայքարելով, համարձակորեն ասում իր ժանրակչի խոսքը:

Մեծատաղանդ գրող, ազնիվ քաղաքացի եւ եռանդուն հասարակական գործիչ Սերո Խանգաղյանի ծննդյան տոնը միաժամանակ մեր ամբողջ գրականության տոնն է: ■

## Թաթախված է պատմության շնչով

### ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

«Գրական թերթ»,  
20 դեկտեմբերի 1985թ.

**Ս**երո Խանգաղյանը իր գրական նկարագրով այն գրողն է, որոնց մասին ասում են՝ «Թաթախված է պատմության շնչով»:

Ամեն մի արդիականություն, ըստ Ս.Խանգաղյանի դավանանքի, որ նա արտահայտել է բազմաթիվ անգամներ հրապարակախոսական նոթերում, հենվում է պատմական



հիշողության վրա: Մի ոտքով նա կանգնած է արդիական կյանքի ամենահրատապ, ամենագործնական խնդիրների խառնարանի մոտ, մյուսով՝ պատմական հեռավոր ու մերձավոր ժամանակների գաղափարական զինարանի մոտ:

Ինչպես ասում են, ծանրության մթարները հավասարակշռում են միմյանց:

Պատմական նյութին Ս.Խանգաղյանը դիմել է դեռ իր գրական մուտքից՝ պատերազմից անմիջապես առաջ, այնուհետեւ գրել է պատմվածքներ («Վարք հարանց»), վիպակներ («Արաքսը պղտորվում է»՝ Առաքել Դավրիժեցու Պատմության հիման վրա, «Մեռածները հիշում են») եւ երեք վեպ՝ «Մխիթար Սպարապետ», «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Թագուհին հայոց»: Պատմական վիպաշարը եւս շարունակում ու լրացնում է Ս.Խանգաղյանի ստեղծագործության առանցքային՝ Հողի թեման: Երեք վիպական կտավներում էլ, նկարագրվող պատմական ժամանակաշրջանների ընդհանուր գույնին համապատասխան, ոճային կոլորիտով արծարծվում է հայ ժողովրդի ազգային գոյության ու լինելության խնդիրը:

Ժամանակագրությամբ պատմության հնագույն, «ոչ պատմական» շերտերն է պեղում «Թագուհին հայոցը»՝ հայերի նախահայրենիքի՝ Հայաստանի (մեր թվագրությունից երկու հազար տարի առաջ) կազմավորման ուղղությամբ: Դա, իրապես, առասպելական վկայաբանություն է, թեւ «գործող անձանց» շարքում կան նաեւ պատմական դեմքեր: Վեպի ծանրության կենտրոնը, սակայն, Մարի-Լույսն է, որը, հաղթահարելով իր «կենսաբանական եսի» եւ պետական պարտքի մկրատը, միասնության է բերում ցեղային անջատ-անջատ խմբերը եւ միաստվածության՝ բազմաստվածության պաշտամունքը:

Եթե «Թագուհին հայոցը» ունի յուրօրինակ փիլիսոփայական, դիցաբանական-ֆանտաստիկական միտվածք, ապա «Մխիթար Սպարապետը» աչքի է ընկնում, նախ եւ առաջ, քաղաքական պաթոսով՝ ամբողջացնելով դավիթբեկյան ազատագրական շարժման պատկերը, այն շարժման, որն ուղղված էր օսմանյան ասպատակների դեմ եւ ընդառաջ էր զնուն ժողովրդի գիտակցության մեջ հասունացող ռուսամետ կողմնորոշմանը: Ս.Խանգաղյանը հմուտ պատմաբանի պես պեղել է XVIII դարին վերաբերող սկզբնաղբյուրները եւ հետագա ժամանակների պատմագիտական հետազոտությունները (Լեո, Աշոտ Հովհաննիսյան)՝ լայնքով ու խորությամբ ներկայացնելու դավիթբեկյան, մխիթարսպարապետյան շարժումների համաժողովրդական, համազգային բովանդակությունը: Սա այն դեպքերից մեկն է, երբ պատմական նյութից է ծնունդ առնում պատմական պորբլեմատիկան, ասել է թե՛ Ս.Խանգաղյանը պատմական կտավը ոչ թե դարձնում է ամենագարնազան մասունքների հնասերի խանութ, այլ արդիականությանը բավարարող ստեղծագործական նեցուկ:

«Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» պատմավեպը իր ոճային ուղղությամբ հերոսական շնչի ստեղծագործություն է՝ Ներսեսի Զավուչի, քաջ, հայրենասեր, ուղղադատ, կյանքի ազգային փրկության զոհասեղանին դրված այդ հերոսի կերպարով:

Վեպի նյութը 1915-1916թթ. եղեռնի անցքերն են՝ Երզնկայի գավառի գյուղերից մեկում: Չավուչը, դեմ գնալով հնագանդության ու համակերպման քարոզներին, դավանում է դիմադրության սեփական սկզբունքը: Այս կետում Ս.Խանգաղյանը յուրովի արձագանքում է «Մուսա լեռան քառասուն օրը» ասքին, որի ակներեւ ազդեցությամբ է գրված իր վիպասանությունը:

Ս.Խանգաղյանի ինքնամոռաց եւ հետեւողական հափշտակությունը պատմական հիշատակներով, պատմության «առեղծվածներին» բացատրությամբ, ունի իր «գաղտնիքը». եթե պատմությունը վկայում է փաստանյութը, ապա գրողը այդ փաստից բաղադրում է մարդկային բնավորությունը, կեցության հակասականությունները, հավերժական ճշմարտությունները: Այդպիսին է նաեւ Ս.Խանգաղյանի կեցվածքը:

Պատմությունը դիտելով, նա նայում է ոչ թե անցյալին, այլ ապագային, ազգային ճակատագրի արդիականությանը:

Արմատներից գալիս է դեպի սաղարթը: ■

## Սերո Խանգաղյանի գիրը

### ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱՔՅԱԼ

Հատված «XX դարի հայ գրականության զուգահեռականներում» գրքից, գիրք II

**Ս**եր օրերի մարդու կյանքում վաթսուև տարին այն սահմանագիծն է, ուր, ճանապարհը վերստին շարունակելու համար, ինչպես հեռու-հեռու տեղերից եկած ձիավորը, հարկ է լինում մի պահ դադար առնել, շունչ քաշել եւ ծանրութեթեւ անել անցած ուղիների բեռը:

Սերո Խանգաղյանը սահմանագիծ է եկել լիքը եւ արդար խուրջիններով, հարուստ բեռով, որը նրա հիմնավոր եւ ծանրակշիռ ավանդն է հայ սովետական գրականության մեջ: Դա այն բեռն է, որի հարուցած դժվարին հաճույքը իր՝ վաստակյալ ձիավորի համար, այլեւս «երկրորդ շնչառության» խթաններից մեկն է լինելու:

Եթե մի ամբողջական փնջի մեջ ի մի բերենք Սերո Խանգաղյանի անցած ճանապարհի կուտակումները, չենք կարող չնկատել դրա զույների պեսպիսությունը՝ սոցիալիստական հայ ազգի ձեւավորման գեղարվեստական իմաստավորումներ, հայոց բազմադարյան պատմության ակունքներից եւ ուղիներից քաղված դասեր, հայրենի հողի եռության, ժողովրդական փորձով ստուգված կյանքի բարոյախոսության առարկայացումներ, բնության եւ ազգային կենցաղի ներշնչանքներ, պատմական ավանդություններ, հայրենագիտական, պատմագիտական թափանցումներ, լեզվական ստուգաբանություններ եւ այլն, եւ այլն:

Իրապես գունագեղ եւ շքեղ մի փունջ, որը կարող էր հյուսել միայն շռայլ տվյալների տեր, բնությունից կոչված անհատականությունը:

տականությունը:

Սերո Խանգաղյանն այդպիսին է:

...1946 թվականին գրականության ինստիտուտում ելուժուտ էր անում թխադեմ, ծիգ կեցվածքով, սակավախոս, փոքր-ինչ «մռայլ» մի երիտասարդ: Ձիմվորական համագեւտով էր: Ասում էին՝ ինստիտուտի բանահավաքն է, իսկ մինչեւ այստեղ գալը աշխատել է ժողովրդական ստեղծագործության տան արշավախմբերում: Դատելով բանահյուսության հարուստ իմացություններից եւ ժրջան գրառումների թղթապանակներից, ինստիտուտում Սերո Խանգաղյանին գուշակում էին ֆուլկլորիստի ապագա, բնավ չկասկածելով, որ այդ գործը նրա համար լինելու է գրական թռիչքի նեցուկներից մեկը:

Թռիչքի նախնական հայտը եղավ «Սեր գնդի մարդիկ» վեպը, - որքան անվարժ, նույնքան էլ բնական, կյանքի թրթռներով հարուստ մի պատում, որի մասին շտապեցին իրենց խոսքն ասել հայ սովետական գրականության կենդանի դասականները՝ Դերենիկ Դեմիրճյանն ու Ստեփան Ջորյանը: Ավագանու ուղեգրով էլ Սերո Խանգաղյանի բնաշխարհիկ, անխառն գիրը բացեց իր ճանապարհը, այն ճանապարհը, ուր բարձրանում են այնպիսի նշանաձողեր, ինչպիսիք են հայ գյուղի նոր կեցության պատումը՝ «Հողը», 18-րդ դարի ազգային-ազատագրական կռիվների հերոսական մատյանը՝ «Մխիթար Սպարապետ» պատմավեպը, իր հայրենի Ձանգեզուրի մարդկանց եւ բնության վառվառն պատումները, որոնց մեջ է «Քաջարան» վեպը, ժամանակի դրաման բացահայտող «Մատյան եղելությանցը», արտասահմանյան ճանապարհորդությունների տետրակները, ռազմական տարիների ծոցատետրերից քաղված խրամատային հուշ-ակնարկները:

Վերին աստիճանի խորհրդանշական է, որ Սերո Խանգաղյանը գրականություն եկավ զինվորի թեմայով: Իր խառնվածքը նույնպես այդպիսին է՝ աներկյուղ, համարձակ, մարտերի լուծող քաշող զինվորի խառնվածք: Դա այն զինվորն է, որ միշտ ձգտում է դեպի կրակի առաջին գիծը եւ եթե ինչ-որ տեղ վրիպում է, ապա դա ոչ թե զենքին չտիրապետելու, այլ իր անհանգիստ տարերքի պատճառով:

Իսկ նրա շահած մարտերն այնքան շատ են, որ ծածկում են առանձին վրիպումները: Այսպես, պատմավեպերով հարուստ հայ գրականության մեջ այնքան էլ հեշտ բան չէր նոր խոսք ասելը: Սերո Խանգաղյանն ասաց այդ խոսքը «Մխիթար Սպարապետ» վեպի մի շարք ուժեղ, ամբողջական կերպարներով (Տեր-Ավետիս, Ջարմանդուխտ եւ այլն), այդ վեպի մի շարք անմոռաց տեսարաններով, իսկ Հալիծո-րի ճակատամարտի եւ Երեւանի պաշտպանության նկարագրությունները կարելի է դասել հայ գրականության մեջ երբեւէ եղած մարտագրության անթերի էջերի շարքում:

Ակսել Բակունցի գավառական քրոնիկոնի՝ «Կյորեւսի» կողքին Սերո Խանգաղյանն ստեղծեց եղելության մատյանը՝ ժողովրդական արդար բարոյախոսությանը, հավատն ու խիղճը մարմնավորող ճեղ Ավան ամու սքանչելի կերպարով, որն իր կայուն տեղն է ունենալու հայ արձակի ամենահետաքրքրական ու գունեղ կերպարների շարքում:

Մեր գրականության մեջ կայուն տեղով են երեւում նաեւ շատ նովելներ, կենցաղականներ ու մանրապատումներ, բոլորն էլ թաթախված բնաշխարհիկ զգացմունքներով եւ գույներով, բոլորն էլ դրոշմված իր վառ անհատականության կնիքով:

Սերո Խանգադյանը հանրաճանաչ գրող չէ միայն: Նրա երկրորդ կոչումը ՀԱՅՐԵՆԱԳԵՏԻ կոչումն է, ալիշանյան շնչի եւ լայն իմացությունների տեր հայրենագետի: Սերո Խանգադյանը կարող է անսխալ ներկայացնել Հայաստանի հողի ամեն մի պատառի, ամեն մի անկյունի պատմությունը, լեզուները, հեքիաթը: Նա կարող է պատմել հայոց ամեն մի օջախի ծննդաբանությունը՝ տոհմական նախնիներից մինչեւ նորդարյա շառավիղները: Պատմական-ճարտարապետական յուրաքանչյուր հուշարձանի հետ խաչքարերից մինչեւ նշանավոր տաճարներն ու ամրոցները, նա կարող է խոսք ու զրույց բացել ժամանակի իրազեկությամբ եւ ականատեսի վստահությամբ: Սերո Խանգադյանը խոսում է ժամանակների հետ: Բնավ պատահական չէ, որ իր գրական գործին առընթեր նա արդեն երկար տարիներ կառուցում է իր բազմահատոր հայրենագիտական աշխատությունը ներկայիս Հայաստանի գյուղերի, ավանների եւ շենքերի մասին, դրանց ծննդաբանական հինավուրց արմատներով եւ մերօրյա ճյուղերով:

Բարի ճանապարհ նրա այս մեծ գործին, որը, չենք կասկածում, լինելու է մեր հայրենագիտության հուշարձաններից մեկը, ինչպիսիք են նրա գեղարվեստական պատումները, ինչպիսին է ժամանակները կապող նրա գիրը: ■

## Գրողի նոր մատյանը

### ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

«Հողվածներ, դիմանկարներ, հուշեր»

Սերո Խանգադյանը տպագրել է մի նոր գիրք: Դա ոչ պատմվածքների հերթական հավաքածու է եւ ոչ պատմավեպի հերթական «անակնկալ»: Նոր գիրքը, որ խորագրված է «Հայրենապատում» (իրատարակիչն է «Հայաստան» իրատարակչությունը), նրա գրական կենսագրության մեջ առանձնանում է յուրահատուկ նկարագրով: Հայոց միջնադարյան գրիչների ոճաեղանակով շարահյուսված հիշատակարանում Սերո Խանգադյանը թեւ նոր մատյանն անվանում է «Ճանփորդական նոթեր», «Ուղեգրություններ», սակայն դա ավելին է, քան ճանապարհորդի ուղեգրական տպավորությունների գրառումը:

...1929 թվականից սկսած, դեռ տասնչորսամյա մի պատանի, Սերո Խանգադյանը սկսել է իր թափառումները հայոց ոստաններում: Ինչ գյուղ ու շեն, գյուղակ ու ավան որ մտել է՝ իր օրագրում գրանցել է այդ բնակավայրի հետ կապված պատմության փաստերը, ժողովրդական-բանասիրական ավանդությունները, աշխարհագրական-ժողովրդական վիճակագրական տեղեկությունները: Ամիջական իր գրառումները այնուհետեւ հարստացրել է մատենագիտության՝ պատմությունների, ուղեգրությունների, հիշատակարանների,

դատաստանագրքերի, կալվածագրերի, կոնդակների մեջ «ավագահատիկների մման ցրված» գրավոր վկայություններով, դրանց ավելացնելով նաեւ այս կամ այն բնակավայրում հետագա տարիներին (1929 թվականից այս կողմ)՝ կատարած օրագրային գրառումները:

Մի խոսքով, ճանապարհորդական թափառումների օրագիրը վերաճել է Սովետական Հայաստանի տարածքի վրա գտնվող գյուղերի պատմության՝ երեք հատորով, որի վրա ծախսված «տաժամակիր» ջանքերը հատուցվում են մատյանի հանրագիտարանային նշանակությամբ:

Իր ուսերին վերցրած ժամը լուծն է դրդել մերօրյա պատմիչին՝ գրելու «հմառճ» հիշատակարանը. «**Եվ այսպես, ես՝ Սերո (Սերովբե)՝ որդի Նիկողայի՝ որդվո Առաքելի, ի մեծ եւ լավահռչակ տոհմից Խնձատին, ի գեղջից Գորիս՝ երկիրն Սյունաց, պատանի տարիներիցս սկսած, ուր որ գնացի՝ թե քաղաք, թե գյուղ, գրեցի դրանց մասին: Ուստի կամք արեք եւ ողորմի հիշելով՝ բարեխոս եղեք, ով ընթերցողներ, հորս, որի անունը տվի, եւ մորս՝ Վարդանուշ Զիլֆուղարյանց Մելիք Օհանյանցին, եղբորս՝ Սամվելին, որ հանգավ ծաղիկ հասակում, մյուս եղբորս՝ Սուրենին, որ իմ բարեխնամ ոգեւորիչն էր մինչեւ հեռանալը կյանքից... Եվ եթե ինչ-ինչ սխալմունք կամ թերացում գտնեք իմ այս գործի մեջ, մի ուղղեք թեկուզ ողջախոհ կամքով, այլ ներող եղեք եւ ինձ ներումն շնորհեցեք, քանզի կար իմ այս էր...»:**

«Հայրենապատումի» տարեցուցային-օրացուցային հղումները (այսինչ թվականի այսինչ ամսվա այսօրը) կառուցվածքային այն հենարաններն են, որով հայ գյուղերի ժամանակագիր-պատմիչը սկսում է տվյալ տեղավայրի իր մեկնաբանությունը, առաջին, ամիջական, հուզական հաղորդագրությանը հավելելով մատենագրությունից պեղված պատմաավանդական տվյալները, ճարտարապետության (գլխավորապես եկեղեցիների եւ խաչքարերի) արձանագրությունները, ժողովրդական բանասիրության (հեքիաթների, երգերի, ավանդագրությունների) պատառիկները, վիճակագրության նյութերը, ինչպես նաեւ մեր ժամանակակիցների՝ հեղինակի ծանոթ-բարեկամների կենդանի պատումները անցյալից (գյուղի գլխով անցած դեպքերից եւ, մանավանդ, ապագայի հեռանկարներից):

Ամեն մի գյուղի (բնակավայրի) կենսագրությունը Ս.Խանգադյանը մատուցում է սպառիչ մանրակրկիտությամբ, աշխատելով բաց չթողնել այդ կենսագրության եւ ոչ մի օղակը, եւ ոչ մի կարեւոր դրվագը:

Սերո Խանգադյանի աշխատանքի բնույթի մասին պատկերացում տալու համար բերենք սոսկ երկու օրինակ «գյուղերի կենսագրությունից»:

Ահա Ստեփանավանի մոտ, Ձորագետի բարձր հրվանդանի վրա գտնվող Լոռի Բերդ գյուղի նկարագրությունը՝ համառոտած քաղվածքներով:

**«1936, օգոստոս: Ստեփանավանից մեն-մենակ դուրս եմ եկել եւ հռչակավոր քաղաքի անունով ոգեւորված, ոտքով քայլում եմ դեպի նա: «Շքեղ պայազատող, հաղթող» քաղաքի ավերակներից մի խղճուկ գյուղ է տխուր հայաց-**

քով նայում ինձ»:

«Լոռի Բերդը քարակույտ գյուղ է, միայն երկու ծուռ ու նեղ փողոց ունի՝ հիսունմեկ տներով, 360 շնչով: Գյուղը եղել է մեծ քաղաքի միջնաբերդի տեղում: 1831 թվին ունեցել է ընդամենը 20 բնակիչ: 1916 թվին սրանք դարձել են 371 հոգի...»:

«Դպրոցի զանգը դողանջեց: Այդ զանգը 1891թ. գտել են գյուղացիները, երբ քաղաքից եկել բնակվել են մեծ քաղաքի ավերակներում: Չանգի վրա ծուլման տարեթիվը կա՝ «Անի, 1106»»:

Երկու տասնամյակ անց՝ 1955թ. հուլիսին, ճանապարհորդական մատյանում «Լոռի Բերդ» գյուղը ներկայացվում է նոր գույներով: Իվանե սպասալարի անառիկ մայրաքաղաքի դերով, վրաց Գեորգի թագավորի անարժան վարքագծի մասին պատմիչի (Ստ.Օրբելյանի) հաղորդած տեղեկություններով, հին քաղաքի ճարտարապետական ավերակների եւ կառուցողական արվեստի բնութագրություններով, Լոռի միջնադարյան քաղաքի հռչակավոր ԼոռիսՄելիքյան հին տոհմի (1560-ական թթ.) քաղաքական դերի պատումով, նաեւ հետագա դարերում Գուգարաց աշխարհի մայրաքաղաքի հետ կատարված մեծաթիվ աղետների պատմագիտական հղումներով:

Ահա նաեւ Սիսիանի Շաղաթ գյուղի «անձնագրի» (1935 թվականի) տվյալները. «Շաղաթ գյուղը գետախառնուրդի հարթության վրա է՝ կողքին բարձր բլուր, որին Բերդակ են ասում: Յոթերորդ դարում գյուղաքաղաք էր ու Սյունիքի վարչական կենտրոնը: Այնուհետեւ. «Շաղաթում 210 ընտանիք են ապրում, 1180 շնչով: Օհանն ինձ պատմում է, որ իր ապուպապերը խոյից են եկել, մի քանի տուն էլ Սալմաստից ու Մարաղայից են: Յոթնամյա դպրոց ունեն մի շենքի մեջ»»:

Շաղաթի «պատմական կոլորիտը» (սա Սիսական տոհմի բնօրրանն է) ամենայն մանրամասնություններով ներկայացնելուն զուգահեռ, Ս.Խանգադյանը դառնում է նրա հետագա ճակատագրին՝ մինչեւ Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանը (1963թ.)՝ «Վարդան Ջորավար մատուռի ժայռախորշի մեջ լույս են տալիս 147 մոմ: Չոհվածներից մի պատանի մշուշի միջից ձեռքով է անում ինձ, նա այս գյուղացի էր, բանաստեղծ՝ ընդամենը քսան տարեկան: Նրա անունն էլ կա զոհվածների ցուցակում՝ Նորիկ Նազարյան: Եվ ես անցած մշուշների մեջ հիշում եմ նրա բարի ձայնը.

«Կտուրները կանաչել են,  
Ջարդարվել են տները,  
Թռչունները ճանաչել են  
Իրենց հերվա բները...»:

Մատյանի առաջին գրքի ճանապարհորդական երթուղիները («Ճանապարհ առաջինից» մինչեւ «Ճանապարհ տասներեքերորդը» պատմում են վաթսուհինգ գյուղի (բնակավայրի) կենսագրություն՝ գրեթե բոլորն էլ նույնչափ մանրամասն ու պատմական աղբյուրների հղումներով նույնքան առատ, ինչպես Շաղաթի եւ Լոռի Բերդի կենսագրություններն են:

Սերո Խանգադյանի Մատյանի բարձր արժեքը միայն հարուստ ինֆորմացիան չէ՝ եղելությունների մատուցումը, այլեւ հեղինակի մտորումներն են՝ ապագայագիտական կռահումներն ու թափանցումները, որոնք հուշում են տվյալ բնակավայրի զարգացման ու առաջադիմության հետագա ուղիները:

Մատյանի ամբողջ շարադրանքից երևում է, որ հեղինակը ոչ միայն ժողովրդի քաղաքական-տնտեսական պատմությանը եւ մշակութային հուշարձաններին քաջածանոթ մեկն է, այլեւ բազմափորձ, ժողովրդի էությունը խորապես ճանաչող ճանապարհորդ, որը պատմության խորքերից ասպարեզ է հանում ազգային գոյության կարեւորագույն դասերը:

Այստեղ էլ ցանկանում են ընդգծել Մատյանի մի կարեւոր, շատ կարեւոր առանձնահատկությունը: Սերո Խանգադյանը իր պատումներով ի մի է բերում, մի առանցքի շուրջն է համախմբում հայոց հայրենիքը՝ աշխարհագրությամբ, նյութական ու հոգեւոր հուշարձաններով, նրա ալեհեր պատմությանը եւ սոցիալիստական ներկայով:

Իմացական-ճանաչողական, պատմագիտական, աշխարհագրագիտական, լեզվաբանական (նկատի ունեն բազմաթիվ բառերի ստուգաբանությունները) եւ բանախոյունական (նկատի ունեն բազմաթիվ ավանդությունների վկայակոչումները) արժեքից բացի, «Հայրենապատումը» ընդգծվում է նաեւ զեղարվեստականության ամխառն շնչով:

Ճանապարհորդական վաթսուհինգ հանգրվաններից յուրաքանչյուրի նկարագրությունը մի իսկական նորավեպ է՝ սկզբնամասով, հանգույցներով, դրամատուրգիայով, կերպարներով, բնանկարներով, բառ ու բանով, հետաքրքրաշարժ ու արժանահավատ նորավեպ:

Մատյանի մեջ, իհարկե, կան առանձին փաստական վրիպումներ, որոնք անխուսափելի են նման աշխատատար գործի մեջ:

«Ներող եղեք...», - խնդրում է հիշատակարանի գրողը՝ առանձին վրիպումների համար:

Սերո Խանգադյանի յոթնաբանյա Մատյանը (չորս գիրք էլ նվիրված է Հայաստանից դուրս գտնվող հայկական բնակավայրերի կենսագրությանը), դատելով առաջին գրքից, լինելու է կոթողային աշխատություն:

## Մեծ կենսապատում



**ԽԻԿԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ**  
«Գրական թերթ», 20  
դեկտեմբերի 1985թ.

Սերո Խանգադյանի ստեղծագործական արգասավոր կյանքում ծանրակշիռ տեղ ունի «Հայրենապատում» վիպասը, որ հաճույքով խմբագրում են ես: Այն բաղ-

Սերո  
Խանգաղյանի  
լուսանկարների  
այբուրից

կացած է յոթ գրքից: Հրապարակի վրա են առաջին երեք գրքերը՝ հարյուր մամուլ ծավալով: Չորրորդը խմբագրվում է: Պատրաստ են եւ մյուս հատորները: Առաջին հատորը, որ լույս է տեսել 1980-ին, բացվում է 1929 թվականի մարտին Գորիսի շրջանի Սուղան ճյուղ գյուղը կատարած ճանապարհորդությամբ: Գրքում տեղ են գտել տասներեք ճանապարհ: Այդպես են վերնագրված գլուխները: Հաջորդ երկու գրքերում (1981, 1984) տպագրվել են եւս երեսունհինգ ճանապարհ: «Հայրենապատումը» սովորական գիրք չէ: Դա հայ ժողովրդի կենսապատումն է, ճամփորդական բացառիկ մի երկ՝ գրված Սերո Խանգաղյանի գրչին հատուկ փայլով ու տաղանդով: Դա աղբյուրագիտական, փաստական հարուստ նյութերի հիման վրա հյուսված տեղագրական, բանասիրական, հնագիտական, բնագիտական, ազգագրական բազմաճյուղ աննախադեպ պատումն է, գիտական արժեքավոր ուսումնասիրություն, որը զարմացնում է հեղինակի անսպառ գիտելիքների պաշարով, նյութի խոր իմացությամբ, սոցիալական, տնտեսական ու քաղաքական ազգօգուտ հարցադրումներով: Թեեւ «Հայրենապատումի» ասքերը ընդգրկում են 1929-1980 թվականների շրջանը, բայց իրականում պատմությունը նրանցում հյուսվում է հայ ժողովրդի ծագումնից մինչեւ մեր օրերը: Հատիկ-հատիկ նա հավաքել է գիտական-գրական շրջանառության մեջ է դրել հարյուրավոր վիճակագիր արձանագրություններ, մատենագիտական-արխիվային նյութեր, հերոսական դրվագներ, սոցիալիստական մեծ վերափոխությունները պատկերող վավերագրեր: Խանգաղյանն առաջնորդվում է այն ճշմարիտ համոզմունքով, թե գրողը պարտավոր է հասկանալ եւ իրեն, եւ իր դարաշրջանը: «Հայրենապատման» նշանաբանն էլ հենց այդ է՝ հայրենի երկրի, նրա մարդկանց պատմության ու գործերի ճշմարտացի արտացոլումը: «Հայրենապատումը» Սերո Խանգաղյան գրողի, պատմաբանի, բանասերի, ազգագրագետի, հրապարակախոսի եւ տաղանդավոր մտածողի ստեղծագործական վիթխարի ուժերի առիավատչյան է: ■





# Կյորեսի դարպասների նման



## ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

Սերո Խանգաղյանի պատունը իր Սյունիք աշխարհի նման ռելիեֆային է ու եպիկական: Նրա մինչեւ անգամ փոքրիկ պատմվածքներում ու մանրաքանդակներում վիպական տարերքի հրաշքն է զգացվում: Խանգաղյանական խոսքը Կյորեսի հնավանդ դարպասների պես ընդունում է անցյալի եւ ներկայի պատմականորեն կարելոր, մեզ համար սրբազան

անցուդարձերը: Այդ խոսքը թրծված է Պատերազմի ու Հաղթանակի, Ողբի ու Հարության հրերով, կարծրացած է իր եւ մարդկության բազմադարյան փորձի համաձուլվածքով:

Նրա գլխավոր թեման ինքը՝ մեծ ժամանակն է, կնճռապատ ու վերծանելու կարոտ:

Դա է ապացուցում նրա արձակի բազմապլան, զարմանալու չափ տարողունակ համապատկերը:

Նրա խոսքը Կյորեսի հնավանդ դարպասների նման կռած ու կոփած է ժողովրդական բառուբանի անխորտակելի ուժով:

Իսկ նրա սերն ու հավատը ներկա ու գալիք սերունդների (նամանավանդ երիտասարդ գրողների) հանդեպ անպայմանորեն ժառանգվել է նահապետաց դասից: Եվ ինչպես ինքը կասեր այսպիսի առիթով՝ ձեռքը դալար մնա, վարպետ դպիր:

**«Գրական թերթ»  
20 դեկտեմբերի 1985թ.**



Սերո Խանգաղյանի լուսանկարների պլանից



# ԹԱՆԿ ԹԵԼԵՐ



## ՄԻՆԱՅԻԼ ԴՈՂԻՆ

«Գրական թերթ», 20  
դեկտեմբերի 1985թ.

**Ս**երո Խանգադյանը, ում 70-ամյակն է լրացել, արդեն վաղուց ունի գրական բարի անուն: Այն սովետական բազմազգ գրականության առավել խոշոր անունների շարքում է:

Իր սերնդակիցներից շատերի նման Սերո Խանգադյանը որպես

գրող թրծվեց պատերազմի քուրայում. նրա առաջին պատմվածքները գրված են այդ տարիներին: Իսկ պատերազմից վերադառնալով Հայաստան՝ նա շուտով հրապարակեց «Մեր գնդի մարդիկ» վեպը՝ ասելով ճշմարտությունը կռվի մասին, իր ճակատային ընկերների մարտական սխրանքների մասին:

Սկիզբը բազմախոստում էր: Սերո Խանգադյանը ձեռք բերեց ժամանակի զգացողություն և վարպետություն: Հետո լույս տեսան նրա «Հողը», «Սխիթար Սպարապետ», «Քաջարան», «Սեւանի լուսաբացը», «Թագուհին հայոց» վեպերը, բազմաթիվ վիպակներ ու պատմվածքներ:

Ութ տարի առաջ ես կարդացի «Երեք տարի 291 օրը» եւ իմացա, որ Սերո Խանգադյանի հետ ոչ միայն ընդհանուր գրական գործի եղբայրներ ենք, այլ նաեւ համագնդեցիներ: Այո՛, նրա ակամանետային վաշտն իրոք լեզենդար գեներալ Նիկոլայ Պավլովիչ Սիմոնյակի դիվիզիայի կազմում էր, ու այդպիսով նա՝ Սերո Խանգադյանը, լենինգրադցի է, անիծյալ պաշարումից Լենինգրադի ազատագրման առումով:

Ցանկություն ունեի լինելու Սերո Խանգադյանի հայրենիքում: Եվ ես շատ շնորհակալ էի, երբ նա ինձ հրավիրեց իր Ջանգեզուր: Դա մի քանի տարի առաջ էր, բայց հիշողությամս մեջ տակավին թարմ է, ասես երեկ է եղել:

... Առավոտվա լույսի մեջ արթնացող Երեւանը մնում է թիկունքում: Չինարիների վրա դեռ կառչած են անցյալ տարվա չոր տերեւները, իսկ լացող ուռենիների կախ ընկած ճյուղերի մեջ արդեն ծվարում է բողբոջների դառնավուն հոտը: Գնում ենք Ջանգեզուր, եւ գարնանային քամին թարմությամբ խողտում է մեր

ռունգերը, եւ ֆլամինգոյի վարդագույն թևերի պես ցնորական Արարատն աջ կողմում ելնում է ամպերի սպիտակ փրփուրի միջից:

Մենք հիշում ենք դիվիզիայի մեր ընդհանուր ընկերներին: Ավելի՛ մեռածներին, պակաս՝ ապրողներին, քանզի շատ քիչ են ապրողները, իսկ այդ ժամանակամիջոցում ավտոմեքենան թեքվում է Արփա գետի հովիտը, լեռները եւ, արագությամբ վերցնելով, Արեւիկի կիրճի մոտով, լեռների բուն թագավորությունում, սուրում է դեպի Եղեգնաձոր:

Իմ բարեկամն այստեղ տանու մարդ է: Բոլորը նրան ճանաչում են ոչ միայն նիկոտինից դեղնած բեղերով, այլեւ նրա գրքերով: Նրան սիրում են եւ հպարտանում են նրանով՝ որպես իրենց հայրենակցի ու տարեգրի: Նա իրոք ժողովրդական գրող է:

Սեփական ժողովրդի տարեգիրն ու արարումների արտահայտիչը դառնալու համար միայն տաղանդը քիչ է, նաեւ հարկավոր է այդ տաղանդը կոփել ժողովրդի կենսափորձով, հայրենակիցների հաջողություններով ու անհաջողություններով՝ դեպի մարդկային եղբայրություն տանող ճանապարհին: Սերո Խանգադյան գրողն ունի եւ անուրանալի տաղանդ, եւ հարստագույն կենսափորձ, նա Հայաստանի իսկական զավակն է եւ մեր հայրենիքի ժողովուրդների եղբայրության հավատարիմ մարտիկ:

Մենք նստած ենք իմ համագնդեցու քրոջ ընդարձակ տան լի սեղանի մոտ, եւ զրույցը հոսում է ինչպես լեռնային քջքան գետակը՝ հոգի ողողելով իր ճշմարտության լույսով, եւ, ուշադրությամբ ունկնդրելով զրույցի հոսուն կարկաչը, ես խորհում եմ այն մասին, որ իմ բարեկամի գրքերը բնականորեն են անհրաժեշտ, ինչպես իրիկնային այս զրույցը հարազատների ու հայրենակիցների շրջապատում, ում առաջ չի կարելի ճշմարտությունը չասել: Ես խոսում եմ, լսում, եւ իմ հոգում խաղաղություն է ու լույս, ինչպես ծյունածածկ կիրճի այտին հաված այս հինավուրց Գորիս քաղաքում:

Առավոտյան, երբ ելանք տնից, մանր ծյունափոշու միջից մենք տեսանք չինարիների մագաղաթ տերեւները, որ ճյուղերին էին մնացել անցյալ տարվանից: Եվ ես խորհեցի ինչ-որ հրաշքով համառորեն կյանքի հավերժական բնի ճյուղերին նստած այդ տերեւների ու մեր հոգիների սմանության մասին. ճակատագիրը դրանց էլ չի ժպտացել. եւ կարկուտն է ծծել, եւ փոթորկահողմն է պոկոտել: Իսկ դրանք դիմացել են:

Իմ բարեկամ Սերո Խանգադյանն էլ է դիմացել:

Դիմացել է ու կյանքի տերեւի վրա թողել իր ճակատագրի ինքնագիրը՝ երկաթե անհրաժեշտության իմաստուն բառեր: Եվ դա, այդ տերեւը, նոր կանաչ տերեւին պետք է տա կյանքի համար ինչ-որ շատ կարեւոր բան, քանի որ առանց անցյալի չկա ապագա:



# Խոսք ընկերոջ մասին

## ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԻՆ

Նাঁձի Ծաի չափի «Օժե ֆի օն 291 օնի օն» (Օժի օն ֆի օն օն օն) գրքի առաջաբանը

Գրող, տարեգիր եւ ժողովրդի վսեմ խիզախունների արտահայտիչ դառնալու համար նախեւառաջ անհրաժեշտ է օժտված լինել նարդկային հազվագյուտ մի առանձնահատկությամբ՝ տաղանդով: Բայց միայն տաղանդն էլ չի է: Այդ տաղանդը նարդկային համակեցության ճանապարհին հարկավոր է նաեւ կոփել ժողովրդի կյանքի ճանաչողության, նրա ջանքերի ու ձգտումների, նրա հաջողությունների ու ձախուղումների փորձով:

Հայ գրող Սերո Խանգադյանը եւ արտասովոր տաղանդ ունի, եւ հարուստ կենսափորձ, նա իր ժողովրդի ճշմարիտ զավակն է եւ մեր հայրենիքի ժողովուրդների բարեկամության հավատարիմ նարտիկ:

Սերո Խանգադյանը ծնվել է Հայաստանի բարձր լեռնային շրջաններից մեկում, Ջանգեզուրում, Գորիս քաղաքում: Այնտեղ է նա ծնվել, անասուն պահել, մշակել անբերրի, քարքարոտ հողը, ուսում ստացել եւ տեսել իր ժողովրդի ծնունդ առած նոր կյանքը, խորամուխ եղել նրա մեջ եւ իրեն պատրաստել այդ կյանքի համար:

Հայրենական մեծ պատերազմը նրան «գտավ» գյուղական դպրոցում, որտեղ ուսուցիչ էր: Կամավոր նա մեկնեց ռազմաճակատ եւ մասնակցեց պատերազմին սկզբից մինչեւ վերջ, սկզբում Վոլխովյան ռազմաճակատում, այնուհետեւ մասնակցեց Լենինգրադի շրջափակման ճեղքմանը եւ այդ քաղաքի պատերի տակ ֆաշիստների վերջնական ջախջախման մարտերին:

Սերո Խանգադյանը նույն զորամասում էր ծառայում, ինչ ես, Լենինգրադյան ռազմաճակատի հերոս Նիկոլայ Պավլովիչ Սիմոնյակի գվարդիական կորպուսում, գեներալ Պուտիլովի դիվիզիայում, իսկ կռիվն ավարտել է Քյոնիքսբերգի մատույցներում որպես ականանետային վաշտի հրամանատար:

Լենինգրադի սրբազան հողում նրա արյան կաթիլը նույնպես կա, Լենինգրադի հաղթանակում նրա անձնվեր զինվորական արիության բաժինը կա:

Գրողը, ուն անունը դրվում է մեր բազմազգ խորհրդային գրականության առավել խոշոր խոսքի վարպետների շարքում, գրական ուղին սկսել է պատերազմի քուրայում. նրա առաջին պատմվածքները գրվել են այդ տարիներին: Իսկ պատերազմից վերադառնալով Հայաստան, նա շուտով գրեց «Մեր գնդի նարդիկ» վեպը, որում ասվեց ճշմարտությունը պատերազմի մասին, իր մարտական ընկերների ռազմական սխրանքների մասին:

Սկիզբը խոստումնալից էր: Սերո Խանգադյանը ձեռք բերեց ժամանակի զգացողություն եւ վարպետություն: Այնուհետեւ լույս տեսան «Հողը», «Մխիթար Սպարապետ», «Քաջարան», «Սեւանի լուսաբացը», «Մատյան եղելությանց» վեպերը, «Վեց գիշեր», «Ծարավել եմ, ջուր բերեք» վիպակները, հրաշալի պատվածքների ժողովածուները, մանուկների համար գրված գործերը՝ «Դեպք լեռներում», «Յոթ հովիտների երկիրը», «Հեքիաթները» եւ այլն:

Նա դարձավ սիրված գրող Հայաստանում, եւ նրա ստեղծագործությունները՝ յոթ գրքով, հրատարակված մայրենի լեզվով, վկայեցին եւ կարծես թե հանրագումարի բերեցին վսեմ, ժամանակի զգացողությունը տիրապետող արվեստագետի փառքը:

Սերո Խանգադյանի գրքերը թարգմանվել են ռուսերեն, խորհրդային երկրի եւ այլ ժողովուրդների լեզուներով:

«Երեք տարի 291 օրը» մի գիրք է, որում գրողը երեսուն տարի անց կրկին վերադարձել է իր ապրածին: Նա գրքին տվել է «Ռազմաճակատային օրագիր» ենթավերնագիրը: Նյութի հավաստիությամբ, շարադրանքի ճշգրտությամբ եւ արտահայտչականությամբ արձակագիրը պատմում է խորհրդային մարդու, խորհրդային զինվորի հայրենասիրության եւ դիմացկունության մասին:

Պատերազմը մեծ փորձություն է. արտակարգ իրավիճակներում բացահայտվում է անհատի իսկական բնավորությունը: Եվ Սերո Խանգադյանը ժամանակից շուտ հասունացած պատանիների սերնդի յուրօրինակ խոստովանությունների միջոցով նկարագրում է պատերազմը ինչպիսին այն կա. եւ մահը, եւ վախը, եւ հուսահատությունը, եւ այդ բոլորի հաղթահարումը, եւ անձնական ճշմարտացիության գիտակցությունը, եւ հավատը հաղթանակի հանդեպ, այդ ամենը ցույց է տալիս հերոսական առօրյայում, պատերազմական անուրախ կյանքում:

Ստեղծագործության պատանի հերոսի քաջությունը արիության է կոչում զաւիք սերունդներին: Ռազմաճակատային արձակագրի, կոմունիստ գրողի կյանքի եւ ստեղծագործական փորձը՝ ամբողջ սրտով կապված ժողովրդի հետ, իր ժամանակի եւ ապագայի հետ, այս գրքում միաձուլված է մեծ հերոսության հետ՝ արդիականության դիրքերից:



# Ասք հայրենիքի մասին

## Մ.ՎՈՍՏՐԻՇԵՎ

«Լիտերատուրնայա գազետա»,  
26 օգոստոսի 1981թ.

«**Ի**մ գիտակից կյանքի սկիզբը համընկավ մեծ եւ ահեղ պատերազմի առաջին օրերի հետ, - վերհիշում է Սերո Խանգադյանը: - Որպես մարդ եւ որպես գրող ես ծնվեցի պատերազմական թոհուրոհի մեջ: Հաղթանակի հիշարժան օրը ես գրեցի «Սեր գնդի մարդիկ» անդրանիկ վեպիս առաջին տողը: Այդ ժամանակից շատ տարիներ են անցել, բայց հիտլերյան վիթխարի բանակներին հաղթած եւ աշխարհը կործանումից փրկած սովետական ռազմիկների հերոսական սխրանքի թեմային անդրադառնում եմ նորից ու նորից...»:

Դաշտային պայուսակում տեղագրական քարտեզների եւ կրակակետերի սխեմաների հետ պահպանվել են գրողի ծոցատետրերը:

Սերո Խանգադյանը համարյա չորս տարի անց է կացրել Հայրենական մեծ պատերազմի մարտադաշտերում եւ այդ ամենը նորից է վերապրել իր ռազմաճակատային «երեք տարի եւ 291 օր» օրագրում: Այստեղ չկան մանրակրկիտորեն մշակված բնավորություններ, էժան հետաքրքրություն առաջացնող ֆաբուլա: Ստեղծագործությունը բանաստեղծական է ստացվել թե՛ աշխարհընկալման եւ թե՛ խոսքի կառուցվածքով: Զգում ես, որ հայկական «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր՝ խաղաղության եւ եղբայրության թեման մշտապես հնչում է պատերազմներից ամենասարսափելիի մասին գրած այս գրքում: Տասնյոթամյա պատանին, որն իր կյանքում տեսել է միայն լեռնային Գորիսը եւ ժայռերի ճեղքերում կուտակված մռայլաշուք վանքերը, որը միայն մարդկային գուր ու քնքշանք է տեսել, ուղեւորվում է դեպի իր առաջին, հեռավոր ճամփորդությունը, եւ դա պատերազմի դաշտն է:

Առաջին անգամ սափրվում է, առաջին անգամ սպանված մարդ տեսնում, առաջին անգամ «շփվում օտար արյան հետ», ստանում առաջին վերքը: Գրողը մեզ տանում է միշտ բարեփիրտ, միշտ փառապանծ զինվորի ուղիով, եւ մենք նրա հետ միասին տառապում ու առնականանում ենք: Ի՞նչն է հերոսին մղում ապրելու եւ դիմակայելու, ապրելու ոչ թե ֆիզիկապես, որ պատերազմի ժամանակ համարյա պատահականություն է, այլ բարոյապես: Նրան ապրեցնում է լեռներում

կորած իր հայրենիքի սերը, սերը հայկական «Կռունկ» երգի, հայրենի գյուղից ստացած վարդի մի քանի չոր թերթերի հանդեպ: Բայց հիմա նրա հայրենիքը լայնացել, ընդարձակվել է: Դա եւ «ռուսական բարի, փափուկ ծյունն» է, եւ այն կինը, որ զինվորին է նվիրում ռազմաճակատ մեկնած ամուսնու ածելին, եւ փոթորկվող կրակի մեջ տնքացող, մրսած հողը:

«Էստոնական այս ազատագրված հողի պատառիկի կենացը, - ասացի ես:

- Եվ ձեր Հայաստանի, - ավելացրեց կապիտանը: - Հեռո՞ւ է:

- Ո՛չ: Ահա՛ նա, - ես ձեռքով թփթփացրի գետինը»:

Կրակի շիկացած քարին կաթում է բազմաչարչար մայր հայրենիքի արտասուքը: Լացը թեթեւություն է բերում, բայց գրել ապրած վշտի մասին, մշանակում է երկրորդ անգամ վերապրել այդ վիշտը, նորից լսել բզկտված հողի ճիչը, մեռնող ընկերների տնքոցները: Սակայն գրողը գրիչ է առել ձեռքը, որովհետեւ չի կարող նորից ու նորից չկրկնել. Մարդը կտոկա-կապրի: Մարդը կհաղթի:

Սերո Խանգադյանը Հայաստանի որդին է: Սի երկրի որդին, որը «Տեսել է բոլոր վայելքասեր, բոլոր մահապատժանոլ տիրակալների»: Ի՞նչ ցեղեր ասես, որ չեն ներխուժել հնադարյան Հայաստան: Ասորեստանցիները, բաբելոնցիները եւ միդիացիները, պարսիկներն ու մակեդոնացիները, մոնղոլները եւ թուրքերը... Եվ թեւ 14-րդ դարի վերջից Կիլիկյան թագավորության անկումով Հայաստանի պետական ինքնուրույնությունը երկար ժամանակ կորուսվում է, սակայն ազատասեր ժողովուրդը չի դադարում նախնիների ավանդած իր լեզուն, մշակույթը, ինքնատիպությունը մինչեւ վերջ պաշտպանելուց: Նույնիսկ օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվելու դարերը չեն մթազնել հայերի ո՛չ ոգին, ո՛չ էլ ազգային ինքնագիտակցությունը: Հենց թուրք նվաճողների դեմ մղած պայքարի մի դրվագին է նվիրված Խանգադյանի «Մխիթար Սպարապետ» պատմավեպը:

18-րդ դարի առաջին քառորդն է: Օսմանյան սուլթանը «իր խալաթի փեշով ծածկել է աշխարհի համարյա կեսը»: Բայց Զանգեզուրի լեռներում ապրող ժողովուրդը չի կամենում ենթարկվել թուրքական տիրակալին:

Այդ ժողովրդի ուժը իր անսպառ արիության մեջ է, հայրենիքը պաշտպանելու համար միավորվելու մեջ, լեռներում բուսած, խոր կիրճերով գոտեւորված անառիկ վանք-ամրոցների մեջ:

Սերո Խանգադյանը մարդու մեջ առանձնացնում է այն գլխավորը, ինչը ամենից անհրաժեշտ է ծանր պահին՝ քաջությունը, ուժը, արիականությունը: Այդպիսիք են Մխիթար Սպարապետը եւ նրա մերձավոր զինակիցները: Նրանք նման են առասպելական հերոսների, որոնք մարմնացում են լույսի, բարության, սխրանքի, պատվի: Բարին ստեղծում է մեծամեծ քաղաքներ, չա-

րը դրանք վերածում է փլատակների, վանքի կամարների տակ բարին, նեցուկ դառնալով, պաշտպանում է ազատ ստեղծագործելու հուրը, չարը խարույկների վրա հրկիզում է արվեստագետներին եւ պատմիչներին, ջախջախում, քարակոծ անում նրանց: Բարին մահու եւ կենաց կռիվ է մղում ստրկության դեմ, չարը պատրաստ է դավելու ժողովրդին, միայն թե փրկի իր կաշին: Բայց անխուսափելի է չարի դեմ բարու հաղթանակը, բարին կհաղթի խավարին, հաստատում, հավաստիացնում է մեզ հեղինակը:

«Լուսաբացին զինավառ շինականները, երդման խոսքերը շուրթերին, սրտաբաց շիրմի մոտով գնում էին դեպի Արաքսի կիրճերը՝ երկրի սահմաններում երեւացած թշնամիների հետ զարկվելու, նրանց իրենց հողից վանելու համար:

Վերադառնում էին նոսրացած շարքերով, բայց հաղթանակած»:

«Ծարավել եմ, ջուր բերեք» վիպակը խաղաղ օրերի մասին է, մեր ժամանակակիցների մասին: Նրա սյուժեն հստակ է. գյուղը իր հին, 15 դար բնավորված տեղից փոխադրում են նոր ավան, եւ կողքին էլ կառուցվում է ջրատար թունել, որը պիտի ոռոգի չոր լեռնադաշտը: Բայց մարդիկ չեն ավստում իրենց լքած տները. չէ՞ որ իրականում է իրենց նախնիների երազանքը՝ ջուրը հասնելու է խանձված, պապակ խնկի տափը: Հողը տնջում է. «Ծարավել եմ, ջուր բերեք». եւ ահա գալիս է ցանկալի օրը... «Հիմա խմիր եւ ցնձա, հո՛ղ». մարդը քեզ նոր կյանք է պարգևել:

Սրա հետ միասին կենդանի է անցյալի հուշը, եւ կենդանի էլ կմնա: Այն ապրում է վիպակի էջերում սփռված բանաստեղծական լեզվերի մեջ, ժանտեկախոս խաչքարերի ու ժողովրդի պատմության մեջ, որի արյունոտ էջերը ժամանակակիցներին են հասցրել պատմիչները:

Այդ էջերից մեկի մասին է պատմում «Վեց գիշեր» վիպակը: Հայտնի է, որ դարեր ի վեր ժողովուրդները երկրպագել են արեւին, բայց հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է գլխավայր շրջվել աշխարհը, եւ լույսը դարձել է մարդու թշնամին, խավարը՝ բարեկամ, որովհետեւ այդ խավարը մարդկանց փրկում է մահաբեր թշնամու հետապնդումից:

Եփրատի ափերից դեպի փրկարար Արարատն են փախչում թշնամուց հալածված հայերը: Եվ նրանք, հազիվ փրկված այդ փախչողները ճանապարհը գտնում են անհամար դիակների հետքերով... Մարդիկ վախ չունեն ոչ զայլից, ոչ արջից, ոչ բորենուց, բայց ահա սարսափահար են իրենց հետապնդող մարդուց:

Վիպակի ապրեցնող լուսավոր խորհրդանիշն է դառնում մի նորածին մանուկ, որին մեռած մոր կրծքից վերցնում են երկու հայ զինվոր: Քաղցած ու տանջահար են նրանք, բայց մանկանը տանում են լեռներով ու ձորերով, թեւ ահեղ ահ կա, թե թուրք ասկյարները կլսեն մանկան լացը եւ վրա կհասնեն: Փոքրիկը, սա-

կայն, զինվորների համար դառնում է ոչ թե ծանրություն, այլ փրկության հույս ներշնչող ուժ, նրա բարուրի մեջ կարելի է թաքցնել դեմքը, որպեսզի չտեսնես տանջամահ արված կանանց ու երեխաներին:

Ասուրը, որ համարյա ողջ ճանապարհին ձեռքերի վրա տանում է երեխային, տուն չի հասնում, մի քայլ է մնում մինչեւ փրկությունը, երբ թշնամու գնդակը խոցում է նրան: Աչքը միակ որդու ճամփին պահած մայրը կրծքին է սեղմում նրա փրկած մասունք-բեռը՝ ուրիշ մի Ասուրի: Այո՛, կյանքը պիտի շարունակվի: Մարդը պիտի ապրի եւ հաղթի չարին:

Սերո Խանգադյանը անխոց ճանապարհորդ է Հայաստանում, հավանաբար, չկա մի գյուղ, ուր նա եղած չլինի: Գնապարհորդելու կիրքը նրա մեջ ծնվել է դեռեւս մանկության տարիներին, երբ իր փոստատար հոր հետ միասին շրջել է մոտակա գյուղերը: Նա բազմիցս եղել է զանգեզուրյան Քաջարան գյուղում:

Քաջարանցիք դարերով ապրել են իրենց ապուլապների ձեռքով փորված քարանձավներում: Կիսաքաղց մարդիկ հողի պատառիկներ են նվաճել քարից: Բայց դրանց վրա համարյա ոչինչ չի աճել: Լեռնային խստաշունչ սառնամանիքները գյուղացու թշնամին են: Լեռները մարդկանց փրկում են պատերազմի ժամանակ, բայց օգնել չեն կարողանում խաղաղ օրերին:

«Այստեղ 100-ամյակներով ձգվել է կյանքը՝ միատեսակ սովահար քարոտ կյանքը, - գրում է Խանգադյանը իր «Քաջարան» վեպում: - Հիմա աշխարհի հեռավոր տանիքի տակ ծնվել է նոր երգ, նոր կյանք՝ նոր իմաստով եւ վեհությամբ լի»:

Իր մի այլ վեպի մասին, որ դարձյալ նվիրված է հայոց հինավուրց հողում կատարվող վերափոխություններին, Սերո Խանգադյանն ասել է. «Ապագա գիրքս ես միշտ զգում եմ մոտեցող լուսաբացի պես, եւ վերջին՝ իր շինարարական մասշտաբներով եզակի, համամիութենական հարվածային կառույց հայտարարված Արփա-Սեւան ջրատարի շինարարների աշխատանքային հերոսկային նվիրված վեպս կոչել եմ «Սեւանի լուսաբացը»:

Այս խոսքերը ասվել են հինգ տարի առաջ: Իսկ դրանից երկու տարի անց հայ ընթերցողը սկսեց թերթել այդ խորագիրը կրող գիրքը: Եվ համարյա նույն ժամանակամիջոցում լույս տեսավ Խանգադյանի հաջորդ վեպը (հիրավի նախանձելի աշխատունակություն)՝ «Թագուհին հայոց», որը պատմում է «հինավուրց ավանդությունների», երեք ու կես հազարամյակի վաղեմություն ունեցող համարյա դիցարանական եղելությունների մասին:

Խանգադյանը մերթ նկարագրում է մեր ժամանակակիցներին, մերթ խորասուզվում է հեթանոսության, ապա ավերիչ պատերազմների դարաշրջանի խորքը: Բայց գրողը, պատմության ինչ ժամանակահատված էլ որ ընտրելիս լինի, գրում է մի բանի՝ հայ ժողովրդի

անընկճելի խիզախության մասին, նրա ազատության, խաղաղության, իր աշխատանքի հանդեպ ունեցած սիրո մասին:

Տասնհինգ տարեկան հասակում Սերո Խանգադյանը սկսել է գրել պատմվածքներ եւ այդ ժամը մինչեւ օրս էլ նա չի մոռացել: Գրողը շատ նամակներ է ստանում, որոնց հեղինակները հաստատում են, թե իրենց է պատկերել նա իր այս կամ այն ստեղծագործության մեջ:

«Երեւի հենց այդպես է, - համաձայնում է Խանգադյանը: - Չէ՞ որ մենք՝ բոլոր հայերս միմյանց կամ հարազատ ենք, կամ հարեւան... »:

«Սերոնք եւ մեր հարեւանները». այդպես է նա կոչել պատմվածքների իր ժողովածուներից մեկը: Խանգադյանի հերոսները՝ անդադրում վարպետ Ռուբենը, հարյուրամյա Մեհրաբ պապը, շատախոս ու փջան Քերոբը, դազադագործ Դանելը, լալ բատրակ Յամազը, պատկերված են ինքնատիպ ու հենց նրանց բնորոշ հոգեբանական զգեցող, որոնք որոշակի պահին, իրավիճակում գլխավոր դեր են կատարում:

Աբունց Առաքել ապերը տարօրինակ մարդ է: Նա սովոր է ամեն ինչ անել լրջորեն, հիմնավոր, մինչեւ կատարյալ դարձնելը: Հունձ անելիս մինչեւ ուշ երեկո նա մանգաղը ձեռքից ցած չի դնի, հարսանքատանը այնքան կուտի, մինչեւ որ միսը խցանվի կոկորդում, կեռասի ծառից չի իջնի, մինչեւ որ չպոկի վերջին հատիկ միրգը:

Պուղանը մոր ծիծ կտրող խորամանկ մարդ է: Առանց դժվարության, նա խաբելով հիմար վիճակի մեջ է դնում այն մարդուն, որի համար ինքն իր ընկերոջ հետ տուն է կառուցում:

Լողլող Ուհանը ողջ կյանքում իրեն գյուղում ամենաքաջարի մարդու տեղ է դրել: Ողջ կյանքում ճամարտակել է, իբր ինքը ամենից անվախն է, իսկ փորձության պահին դուրս է գալիս ամենաողորմելի վախկոտ:

Երբեմն պատմվածքը վերաճում է ակնարկի (կամ հակառակը), բայց դա չի նսեմացնում նրա արժեքը: Ինքը՝ գրողն է ասել, որ տաղանդավոր հրապարակախոսությունը համարում է գեղարվեստական լիարժեք ստեղծագործություն:

«1971, ամառ»-ը ակնարկ է: Բայց չինացող, այժմ էլ, առաջին հրատարակությունից շատ տարիներ անց, իր հրատարակությունը պահպանած ակնարկ:

«Նա՛ չէ շատ բան իմացողը, ով շատ է ապրում, այլ նա՛, ով շատ է ճամփորդում», ասում է հայկական առածը: Նրան ձայնակցում է ռուսականը. «Մի՛ հարցրու ծերին, հարցրու փորձվածին»: 1929 թվականից սկսած Սերո Խանգադյանը ճամփորդում է Հայաստանում, 1929 թվականից սկսած գրառումներ է անում իր տեսած գյուղերի, նրանց պատմության վերաբերյալ: Նա գրի է առնում լեգենդները, որ ժողովուրդն է հյուսել: Խաջարերին եղած արձանագրությունները եւ, որ

ամենագլխավորն է՝ այն մարդկանց մտքերն ու խոհերը, ուն հետ հանդիպել է երբեւէ:

1950 թվականին Արագած գյուղում նա ծանոթացել է 17-ամյա Մնացական Առաքելյանի հետ եւ այն ժամանակ էլ ակնարկ տպագրել նրա մասին: 1979-ին գրողը նորից է այցելում նույն գյուղը, նրա վաղեմի պատանի Մնացականը դարձել է սովխոզի առաջավոր բանվոր, սոցիալիստական աշխատանքի հերոս:

- Թե ինչպես է վերափոխվել իմ հայրենիքը վերջին հիսուն տարվա ընթացքում, պատմում է իմ նոր՝ «Հայրենապատում» գրքերի շարքը: Դա ասք է հայրենիքի մասին, - ասում է Սերո Խանգադյանը: - Ես նորից գնացի-տեսա բոլոր այն վայրերը, ուր եղել են կես դար առաջ, նոր տպավորություններս համեմատեցի այն օրերի գրառումներիս հետ եւ համոզվեցի, որ չեմ կարող չգրել, թե ինչպես է վերափոխվել: «Հայրենապատումի» երկու գրքերը, որոնց հիմքում ընկած են օրագրային գրառումներս, ստացվեցին հրապարակախոսական:

«Հայրենապատումի», ինչպես եւ գրողի ողջ ստեղծագործության մեջ ընթերցողի աչքի առաջ հառնում է հայրենիքի երկու կերպարը: Առաջինը տանջված, տառապած հայրենի հողն է: Այս դեպքում Խանգադյանը գրում է Հայաստանի հիմ, չսպիացող վերքերի մասին եւ գնում է Աբովյանի, Րաֆֆու, Բակունցի գցած ճանապարհով:

Հայրենիքի մյուս կերպարը Սովետական Հայաստանն է՝ վերածնված, արեւով ողողված, ազատության եւ խնդրության մեջ ապրող այսօրվա Հայաստանը:

Հայրենիք... բարձր, անամպ երկինք եւ հրահեղուկ, քարազանգված հող:

Հայաստան... երբեմնի մեծ քաղաքների փլատակներ եւ նոր քաղաքներ՝ աճած մանր գյուղակների տեղերում:

Երկիր Նաիրի... Շատ անգամ բռնությամբ նվաճված, կիսված, բայց մինչեւ օրս էլ հարատեւած ժողովրդի արտակարգ ապրեցնող էներգիայի շնորհիվ:

Հայաստան... Հին մեարոպատառ գիր եւ Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի, Թումանյանի լեզու...

Հովհաննես Թումանյանը իր «Լուսավորչի կանթեղը» բանաստեղծության մեջ վերապատմել է ժողովրդական ավանդությունը հայրենիքի լեռների վրա շողացող կանթեղի մասին: Բայց այն տեսնել կարող է միայն նա, «Ով անմեղ է լիքը սիրով ու հավատով անասան, Ով նայում է վառ հույսերով դեպի Հայոց ապագան... »:

Սերո Խանգադյանին, ինչպես եւ ամեն մի հայի, տեսանելի է Գրիգոր Լուսավորչի վառած կանթեղի լույսը: Նա գրում է ժողովրդյան անընկճելի, անչիջելի ոգու մասին, որը չի ընկրկում անգամ մահվան առաջ: Գրողը հավատում է. Մարդը կհաղթի պատերազմին, բռնությանը, սովին: Մարդը կստեղծի լույսի, բարության, երջանկության աշխարհը:

# Սերո Խանգադյանը Ժամանակի առջեւ



## ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

«Սյունյաց երկիր»  
թերթի հարցերին  
պատասխանում  
է բանասիրական  
գիտությունների դոկ-  
տոր, պրոֆեսոր, ՀՀ  
արվեստի վաստակա-  
վոր գործիչ, «Հայոց  
լեզու եւ գրականու-  
թյուն» գիտամեթոդական հանդեսի գլխավոր  
խմբագիր Դավիթ Գասպարյանը

**Պ**արո՞ն Գասպարյան, նախատեսում ենք թերթի  
հատուկ համար թողարկել Սերո Խանգադյա-  
նի ծննդյան 100-ամյակի առթիվ, ում գրական  
ժառանգությանը վերջին 15-20 տարում հազվադեպ են  
անդրադարձել: Ո՞վ պիտի աներ, որ չի արել, ի՞նչն է պատ-  
ճառը:

- Ամենեւին համաձայն չեմ Ձեր տեսակետին, թե Խանգա-  
դյանի «գրական ժառանգությանն այդքան շատ չեն անդրա-  
դարձել»: Այդպես չէ: Խանգադյանի ստեղծագործությունը  
մշտապես գտնվել է հայ քննադատության եւ հանրության ու-  
շադրության ոլորտում: Գրվել են գրախոսություններ, պաշտ-  
պանվել են ատենախոսություններ, անվանակոչվել է երկու  
դպրոց, փողոց...

Հարցնում եք՝ «Ո՞վ պիտի աներ, որ չի արել»: Պատաս-  
խանում եմ՝ ինքը պիտի աներ: Գրողը ինքը պիտի իր ներ-  
կայության անհրաժեշտությունը հիշեցնի: Եթե չի հիշեցնում,  
այլեւայլ պատճառներ մի՛ որոնեք: Այսօր ո՞վ է Չարենցիմ  
անընդհատ պահում գրական հետաքրքրությունների կենտրո-  
նում. Չարենցիմ Չարենցն է պահում, ոչ թե ես: Այնպես որ Ձեր  
հարցի պատասխանը ոչ թե ես պիտի տամ, այլ Սերո Խանգա-  
դյանն իր ստեղծագործությամբ:

Ինչ վերաբերում է նրա գրական կերպարին, ասեմ հե-  
տեւյալը: Սերո Խանգադյանի նման ստեղծագործողներ՝  
հորինելու ձիրք ունեցող անհատականություններ, եղել են  
ամբողջ միջնադարում: Այդպիսիք եղել են լավ ասացողներ,  
գյուղի, միջավայրի համուռոտը խտացնող հեղինակություն-  
ներ, խնջույքները կառավարող եւ միշտ էլ վերելում նստած  
սեղանապետեր (կարելի է ասել նաեւ սեղաներեց), այդպիսի  
խառնվածքի տեր անձինք դարձել են անգամ բանահավաք-  
ներ, աշուղներ, բանասացներ, որովհետեւ այդ նտայնությունն

է նրանց ծնել, սնել եւ կարեւորել միջավայրում:

Ես պատահական բան չեմ ասում: Սերո Խանգադյա-  
նը գրական ասպարեզ է մտել բանահավաքչությամբ.  
1940-ականների վերջին լույս է տեսել փոքրիկ մի գրքույկ,  
որի մեջ ի մի են բերված նորագույն շրջանի բանահյուսական  
նշմարներ: Այդ գրքույկը կա, եթե կարողանաք գտնել, լավ կլի-  
նի: Սերո Խանգադյանն այդտեղ հանդես է եկել որպես բանա-  
հավաք՝ իր ներկայությունն առկա է այդ գրքում:

Եղավ մի շրջան, երբ Սերո Խանգադյանի եւ խորհրդային  
երկրի լավագույն ժամանակներն էին՝ 1937 թվականն անցյա-  
լում էր: 1946-1953 թթ. անհատի պաշտամունքի, անկոնֆլիկ-  
տայնության, կյանքի գունազարդման շրջանն արդեն անցյա-  
լում էր: Կար համեմատական ազատություն, վերացվել էին  
ստեղծագործական սահմանափակումներն ու արգելանք-  
ները, դադարել էին գաղափարական ծանր հալածանքնե-  
րը: Ահա Սերո Խանգադյանն այդ շրջանում՝ 1950-ական թթ.  
սկզբներին, մտավ գրական աշխարհ եւ իրեն վերապահած  
չափով իր դերը կատարեց:

Այնքան կարեւոր է այս ընթացքի մեջ գրողի տեղը, դերն  
ու նշանակությունը բնորոշող բառերը ճիշտ ընտրելը եւ ճիշտ  
ներկայացնելը: Շրջանակը պետք է շատ ճիշտ ընտրել, որ-  
պեսզի նկարը միջից խոսի եւ ոչ թե լողա: Մինչդեռ սովոր  
ենք չափազանցության, որ կամ չափազանց գովերգն է, կամ՝



անհարկի թերազնահատությունը: Թեեւ կար գրական «կոլ-  
խոզ», կային գրական խմբավորումներ, բայց առաջվա նման  
սուր չէր պայքարը:

- **Որքանով գիտե՞ք, Սերո Խանգադյանը  
1940-ականներին նման գիրք՝ նորագույն շրջանի բա-  
նահյուսական նշմարներով, չի հրատարակել, եթե հիմք  
ընդունենք Թեւոս Պետրոսյանի մանրամասն մատենա-  
գիտությունը (1992): Խանգադյանի բանահավաքչական  
պրպտումներին կարելի է ծանոթանալ ժամանակի պար-  
բերական մամուլում, իսկ ամբողջապես դրանք ընդգրկվե-  
ցին «Ավանդատուն» ժողովածուում (1976, 1986): Ի դեպ,  
այդ ժողովածուից Սյունյաց աշխարհի հեքիաթների մի  
փունջ հետագայում մտավ հայկական ժողովրդական հե-  
քիաթների բազմահատորյակի ակադեմիական հրատա-**

**Ռակուքյան մեջ:**

- Իմ ասած գիրքը, ավելի ստույգ՝ գրքուկը, ժամանակին ձեռքբիս եղել է: Ձեր անտեղի տարակարծությունն ինձ ստիպում է վերստին բռնել գրադարանի ճանապարհը եւ չհավատալ նշված մատենագիտության «մանրամասն» կամ լիակատար լինելուն: Առաջին իսկ հնարավորության դեպքում գրադարանում կփորձեմ ճշտել այդ գրքի մատենագիտական տվյալներն ու կներկայացնեմ բովանդակությունը:

Եվ ահա, այն ընթացքում, երբ մենք սկսել էինք մեր հարցազրույցը (2014, հոկտեմբեր), եւ նյութն ամիսներ շարունակ գտնվում էր մշակման, լրամշակման, ամբողջացման, վերջնական խմբագրման փուլում, 2015 թ. ապրիլին գրադարանում կրկին ձեռքս առա հիշյալ գիրքը, որպեսզի Ձեզ ապացուցեմ իմ իրավացիությունը: Ահա այդ գիրքը. «Գուսանական եւ ժողովրդական երգեր», կազմեց բանահավաք Սերո Խանգադյանը, Երեւան, Հայպետհրատ, 1949, 132 էջ, պատասխանատու խմբագիր՝ Յուրիկ Մելիքյան, տպաքանակը՝ 3000: Գիրքը բացվում է «Կազմողի կողմից» կարճառոտ խոսքով. «Գուսանական եւ ժողովրդական երգեր» ժողովածուն իր մեջ ընդգրկում է հայ ժողովրդական եւ գուսանական ժամանակակից երգերի մի փոքր մասը միայն, որը գրի է առնվել վերջին տասնամյակում: Գիրքը կազմելիս օգտագործել ենք նաեւ Հայկական ՍՍՌ ժողովրդական ստեղծագործության տան բանահյուսության բաժնի նյութերը: Ս. Խ.»:

Հաջորդում են Լեհինին, Ստալինին, հայրենիքին, պատերազմին, սոցիալիստական շինարարությանը, կոլխոզային կյանքին ու սոցիալիստական առօրյային նվիրված «բանահյուսական գլուխգործոցներ»: Գիրքը փակվում է Սերո Խանգադյանի կազմած 56 աշուղ-բանասացի կենսագրական տեղեկություններով:

Կարծում եմ, առարկություններ այլևս չեն լինի: Միաժամանակ առաջարկում եմ նաեւ լրացնել Ձեր ակնարկած մատենագիտությունը:

**- Անձնական կյանքում ի՞նչ շփումներ եք ունեցել արձակագրի հետ:**

- Մտերիմ եմ եղել Սերո Խանգադյանի հետ: Շատերին էր այդպես դիմում, ինձ եւս՝ ախպոր տղա: Մի անգամ զանգահարեց, 1990-ականների սկիզբն էր, Բակունցի կենսագրության հետ կապված մանրամասներ հարցրեց: Հուշեր էր գրում:

Խանգադյանի հետ շրջագայել եմ: Թե ինչը եւ ինչպես կպահպանեք այս հարցազրույցի մեջ, չգիտեմ, բայց ես եղածը պիտի ասեմ, իրական պատմությունը պիտի ներկայացնեմ:

1994թ. սեպտեմբերի 20-ին պատահական հանդիպեցինք «Հայաստան» թերթի խմբագրությունում: Դիմեց ինձ, թե՛ ախպոր տղա, Գորիս ենք գնալու, այնտեղից էլ Շուշի, կգա՞ս: Պատասխանեցի՝ իհարկե, կգամ: Ասաց՝ ժամը երկուսին «մաշինը» սպասելու է հրատարակչության շենքի մոտ (այժմյան «Տիգրան Մեծ» հրատարակչության առջեւ): Կարճ ժամանակի ընթացքում որոշ հարցեր կարգավորեցի, Սերո Խանգադյանի խոսքին լսելով եւ օրինակին հետեւելով մի քանի կապ իմ գրքերից վերցրեցի, տմեցիներին տեղյակ պահեցի, եւ ժամը երկուսին շարժվեցինք: Մի «ժիզուկի» մեքենա էր, ինքն էր ու կինը՝ տիկին ժենյան: Իրենք նստեցին ետեւի սրահում: Ինձ

ասաց՝ նստի՛ր վարորդի կողքին:

Երեւանից նոր էինք դուրս եկել, երբ Սերո Խանգադյանն սկսեց իր պատմությունները: Դա հայոց պատմության դաս չէր, այլ կյանքի առանձին պատմություններ էին, գրական մարդկանց հետ կապված դեպքեր, իր ստեղծագործական առօրյային, կենցաղին, ընտանեկան կյանքին կապված առանձին դրվագներ: Այլ կերպ՝ ճանապարհը կարճող զրույցներ էին: Ինչ ասում էր, կողքից տիկին ժենյան միջամտում էր. «Սերո՛, սո՛ւտ ես ասում»: Բայց Սերոն բնավ չէր անդրադառնում կնոջ դիտողությանը, հե՛չ, իր խոսքը շարունակում էր:

Ճանապարհին մտանք նախկին Քյարքի, ներկայիս՝ Տիգրանաշեն գյուղը: Նոր էր պատերազմը սառեցվել, չեմ ասում ավարտվել: Բաքվից բռնագաղթածներ էին վերաբնակվել հայոց սահմանի մեջ խրված, բայց նախկինում թուրքաբնակ եւ Նախիջևանի Ինքնավարությանը պատկանող այդ բարեշեն ու հարուստ գյուղում: Սերո Խանգադյանը դեղնավուն թղթերով ինքնաշեն մի տետր էր սարքել, հարցեր էր տալիս, գրառումներ անում, ինձ էլ ասում էր՝ կիրի՛, կիրի՛: Պատասխանում էի՝ Սերո Նիկոլայեւիչ, ի՞նչ գրեմ, Դուք գրում եք, ես էլ լսում եմ: Հարցեր էր տալիս, պատասխանում էին, եւ Սերո Խանգադյանը համբերությամբ արձանագրում էր: Պահը տպավորիչ էր. գրողն իր հերոսներին էր որոնում:

Գնացինք Գորիս, գիշերեցինք քրոջ՝ Լորեսայի տանը: Ես այդ տանը Սերո Խանգադյանի առաջնորդությամբ եւ մի քանի գրողների ընկերակցությամբ Ակսել Բակունցի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ եղել էի նաեւ 1984թ. հուլիսին: Այն ժամանակ մեզ միացավ նաեւ Գուսան Աշոտը, ով ամբողջ գիշեր կնոջ՝ Արաքսյայի հետ երգում էր սրտի խորքից: Ինչպես այդ անգամ, այս անգամ եւս հավաքվեցին Խանգադյանի քույրերը, սիրեցին, փայփայեցին իրենց եղբորը եւ լի հպարտությամբ շրջապատեցին նրան: Ասացին. «Հինգ քույր ենք, եւ հինգս էլ մեր կյանքից տասը տարի նվիրում ենք մեր եղբորը: Արեց 50 տարի»: Հաջորդ օրը Խանգադյանի առաջնորդությամբ այցելեցինք Բղենո Նորավանք, երեկոյան Գորիսի հրապարակում մասնակցեցինք Բակունցի ծննդյան արարողություններին: Ամենուր՝ խոսքով, ներկայությամբ, պատմություններով Սերո Խանգադյանն էր: Հաջորդ օրը նախաճաշից հետո նա մեզ ուղեկցեց դեպի իր բարձրադիր նորակառույց ապարանքը, որ ամենայն հավանականությամբ կառուցված էր որպես ապագա տուն-թանգարան: Այցելեցինք նաեւ Բակունցի տուն-թանգարան, եւ տպավորիչ էին Խանգադյանի բակունցյան տարատեսակ անդրադարձները:

Հաջորդ օրը Սերո Խանգադյանի հետ մեկտեղ խնձորեսկում մասնակցեցինք Կուրբանթափայի (Մատաղասարի) ազատագրման տարեդարձին: Տոնը կրկնակի էր, որովհետեւ նաեւ Հայաստանի անկախության երեքամյակն էր: Խնձորեսկում հանրահավաք էր: Օրում վառողի հոտ էր, լեռնածերպերի մեջ խցված պատերազմի ձայներ էին, բայց ժողովուրդն ուրախանում էր, եկել էր մեծ հաղթանակի օրը: Խոսեցին շատերը: Խոսեց նաեւ Սերո Խանգադյանը... Թե ինչ ասաց, արձանագրված կլինի որեւէ տեղ, կարող եք գտնել:

**- Թույլ տվեք ընդհատել եւ մի փոքր լրացում կատարել ասվածին: ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի քարտուղար**



**Արկաղի ծատուրյանն իր գրքերից մեկում հիշում է այդ միջոցառումն ու Ձեր այցը: Ըստ նրա՝ Ձեզ հետ էր նաեւ (միգուցե ոչ ձեր մեքենայով) Սիլվա Կապուտիկյանը: Ե՛ւ Սերո Խանգաղյանը, ե՛ւ Սիլվա Կապուտիկյանը ելույթ ունեցան: Միջոցառումը վարող Արկաղի ծատուրյանը ելույթ ունենալու առաջարկ արեց նաեւ Ձեզ, բայց Դուք ասացիք. «Քանի որ մեծերն արդեն ելույթ են ունեցել, ապա իմ խոսքն ավելորդ կլինի»:**

- Ձե՛, Ձեր հիշած բանաստեղծուհին մեզ հետ չի եղել, առանձին, ուրիշների հետ էր եկել եւ մասնակցում էր արարողությանը: Նա ավելի շատ մտածում էր հավաքվածների վրա իր թողած հեղինակավոր ազդեցության մասին, իրադարձությունների ու ծափահարությունների կենտրոնում լինելու մասին, քան օրվա բուն խորհուրդի: Իսկ իսկական հերոսները չկային, իսկական հերոսներն առանց ծափահարությունների սպասելու եւ տպավորություն թողնելու ինքնասիրահարվածի գայթակղության նման էին հողի տակ:

Հրավիրեցին հերոսներից մեկի տուն, ժողովուրդ շատ կար, բանաստեղծուհին ուշադրություն գրավելու դանդաղությամբ քսան դոլար հանեց պայուսակից եւ այնպես տվեց հերոսի այրուն, որ անպայման բոլորը տեսնեն ու լուսանկարեն: Հապա ինչպե՞ս... Պատկերացրեք հայրենիքի հերոսին այդ վիճակում, ով սխրանք գործելուց կամ նահատակվելուց առաջ ձեւ տար իրեն՝ դիրք ընդունելու եւ սպասել, որ իրեն նկարեն:

Նման տեղերում, այսինքն՝ հանրահավաքներում, ցույցերում, երթերում եւ տոնահանդեսներում ես միշտ քաշվում եմ ելույթ ունենալուց, ամաչում եմ՝ ի՞նչ պիտի ասեմ, որ ժողովուրդը չգիտի: Իսկ օրը հերոսներին էր, նրանք պիտի փառաբանվեին, եւ ոչ թե մենք երեւայինք:

Անցնենք մեր բուն խոսակցությանը:

Առավոտյան մեկնեցինք Շուշի: Ասեմ, որ իմ առաջին այցն էր Արցախ: Առաջին բնակավայրը Լաչինի Ջաբուղ, հիմա եւ հավիտյանս հավիտենից՝ Աղավնո գյուղն էր: Սերո Խանգաղյանի հետ շրջեցինք գյուղում, զրուցեցինք վերաբնակների հետ: Եկել էին Ջերմուկից, Վայքից, Եղեգնաձորից, Երեւանից... Հասանք Լաչին՝ Բերձոր: Սերո Խանգաղյանն անկեղծ զրույցներ էր վարում տարածաշրջանի կառավարիչ Ալեքսան Զակոբյանի, ժողկրթության եւ մշակույթի պատասխանատու Ռուբեն Օհանջանյանի հետ: Ամեն ինչով հետաքրքրվում էր եւ գրառումները շարունակում:

Այդ ժամանակ գյուղերը բնակեցվում էին, մարդիկ կային, կենդանություն կար, դպրոցներ կային: Ինչպես Խանգաղյանը, այնպես եւ ես, հետներս վերցրած գրքերը բաժանելով, նվիրելով, զրուցելով գնում էինք: Դպրոցների համար խոստացանք նաեւ դասագրքեր, ձեռնարկներ, օժանդակ գրականություն, որ հետո ես հավաքեցի եւ ուղարկեցի:

Շարժվեցինք Շուշի: Օրվա երկրորդ կեսին Շուշիում էինք: Նայեցինք, հիացանք: Պատերազմի հետքերն ամենուր էին: Շուշին ասես քարե տապանի վրա լինել կամ քարե լաստի: Իսկը՝ «Նավը լեռան վրա»: Երեք կողմից անառիկ մի բերդաքաղաք:

Ընդառաջ եկավ քաղխորհրդի նախագահ Վլադիմիր Կասյանը: Հավաքվեցին մարդիկ: Ու պատմում-պատմում էին: Սե-

րո Խանգաղյանը լսում էր, ինքն էլ պատմում եւ հարմար պահի լրացնում էր գրառումները:

Շուշիի հանրահայտ բանտում հանդիպեցինք թուրք պատանդ Ջաիր Սաֆարովին: Տասնվեց տարեկան էր: Խոսում էր հայերեն: Սերո Խանգաղյանը նրա հետ խոսեց ադրբեջաներեն: Նայում ես՝ գերության մեջ ընկած եւ տառապանք տեսած պատանյակ է, քիչ է մնում շապիկդ հանես ու տաս: Բայց պատերազմն իր օրենքներն ունի:

Այդպիսի մեկին՝ խեղճության ու թշվառության մի մարմնացում, ավելի ուշ հանդիպեցի մարտակերտցի իմ ծանոթներից մեկի՝ նշանավոր Գիրոյի տանը: Շվի էր նվագում: Միանվագ ու թախտոտ լաց էր... Դարձել էր տան հովիվը եւ այնքան էր միամտացրել տանտերերին, որ հարմար մի պահի փախել եւ հանձնվել էր Կարմիր խաչի ներկայացուցիչներին:

Այո՛, պատերազմն իր օրենքներն ունի:

Օրիորդաց գիմնազիայում, որ վերածվել էր 170 ուսանող ունեցող տեխնիկումի, տնօրենուհին հյուրասիրություն կազմակերպեց, եւ, նայելով Սերո Խանգաղյանին ու մյուս հյուրերին, ասաց. «Ես նահապետական ընտանիքի աղջիկ եմ: Տանն ավելորդ խոսակցությունից խուսափելու համար պիտի ձեզ հետ սեղան չնստեմ»: Արտաքինով ժամանակակից կին էր, պատվով՝ ավանդական: Ահա թե ինչ են Արցախն ու արցախցին:

Շրջեցինք քաղաքում: Ամենուր պատերազմի դեմքն էր: Սպիտակ քարից կառուցված, հիմա հրդեհված ու ծխից սեւացած շենքերը դատարկ էին: Նրանց նախկին շուքը հիշեցնում էր ապահովությունը վտանգած արիստոկրատի: Ղազանչեցոցը երկրորդ անգամ էր նորոգվում: Շուշիից պարզ երևում էր Ստեփանակերտը: Կարծում էի՝ նաեւ պիտի Ստեփանակերտ գնայինք: Սերո Խանգաղյանը երկու ոտքը մի կոշիկի մեջ դրեց, ասաց՝ ո՛չ, Ստեփանակերտ չեմ մտնելու: Այդպես էլ ինձ անհայտ ու անորոշ մնաց, թե ինչու այդպես վարվեց: Գուցե պիտի դիմավորեին: Գուցե ինչ-որ մեկն ընդառաջ պիտի գար: Թերեւս դրանից նեղացավ: Սա ենթադրում եմ, որովհետեւ չխոսեց այդ մասին: Վերադարձանք Գորիս՝ այդպես էլ Ստեփանակերտ չմտնելով: Հաջորդ օրը վերադարձանք Երեւան:

Այսպես մանրամասն մտաբերեցի, որովհետեւ այս պատմությունը ոչ միայն հիմքեր ունի, այլեւ շարունակություն: Անցավ երկու-երեք շաբաթ, «Հայ զինվոր» թերթի խմբագիր Վրեժ Իսրայելյանը զանգահարեց՝ տեղեկացնելով, թե՛ Սերո Խանգաղյանի ակնարկաշարն ենք տպագրում, դու էլ գլխավոր հերոսն ես: Մտածեցի՝ էս ինչ լավ բան է մտածել, ինքը որպես ավագ գրող, ես էլ՝ երիտասարդ, ում ուղեկցում է իր իմացած տեղերով: Այդպես Վերգիլիոսն էր Դանտեին ուղեկցում «Դժոխք»-ի պարունակներով, եւ Դանտեն Չարենցին էր առաջնորդում հայոց պատմության մութ միջանցքներով («Մահվան տեսիլ» պոեմը): Հիմա հերթը Սերո Խանգաղյանին էր ու իմը: Թերթի հոկտեմբեր ամսվա այդ համարը գնեցի, բացեցի «Արցախյան կանչեր» ակնարկը, կարդացի. քրտինքը տվեց ճակատիս՝ Տիգրանաշեն գյուղը, կարծեմ, դարձել էր Վարդանամուն: Գյուղի ամունը փոխել էր. կամ վրիպել էր, կամ չգիտեմ ինչ: Մարդիկ իրենց իրական կյանքն էին պատմել ամունով, փաստերով, հիմա փոխված էին, խառնված էին,

շատ բան էլ չէր համապատասխանում իրականությանը: Իրադարձությունների նկարագրության մեջ հորինովին ու սարքովին շատ էր, խոսքը հավաստի ու վստահելի չէր: Այդ պահին հիշեցի տիկին ժենյայի խոսքը, որ ասում էր՝ Սերո՛, սո՛ւտ ես ասում: Ակնարկաշարը շարունակվելու էր, մեղքս ինչ թաքցնեմ. զանգահարեցի Սերո խանգաղյանին, ասացի՝ շատ շնորհակալ եմ, որ ինձ հիշել եք, բայց պիտի խնդրեմ մյուս համարներում՝ ակնարկաշարի շարունակության մեջ, գրեք՝ իմ երիտասարդ ընկերը, իմ բարեկամը, մի ընդհանուր բան, որովհետեւ փաստական վրիպումներ կան, Դուք գուցե բացատրություն գտնեք, բայց ինձ համար դժվար է:

Սա ուրիշ ոչ մեկի չէի պատմի, Ձեզ պատմեցի, հետեւյալ եզրակացության համար: Մենք շեշտը չպիտի դնենք այն սխալների ու վրիպումների վրա, որոնք Սերո խանգաղյանի վեպերում ու ընդհանուր հայրենապատումի մեջ կան: Նախիջեւանի ծնունդն էր նախիջեւանագետ (ինչ ծանր է հնչում՝ նախիջեւանագետ, ոնց որ ասես ցեղասպանագետ, երեւել այդ բառերը չլինեին, մարդիկ ապրեին իրենց բնակավայրում, եւ ոչ թե դրանք դառնային գիտական ուսումնասիրության առարկա) Արգամ Այվազյանը հողված գրեց այդ առթիվ: Որովհետեւ տեղանվան, փաստի, թվի բազում սխալներ կային, նաեւ մոտավոր, չստուգված բաներ կային: Այդպես կարող էր վարվել ասացողը, աշուղը, բայց ոչ գիտնականը, ոչ գրողը, ոչ Ղեւոնդ Ալիշանը, ում գրքերով ճշտումներ են անում նաեւ այսօր՝ Հայաստանում քանի բերդ ու ամրոց, տաճար ու մատուռ կա, ինչ կենդանիներ են ապրում եւ ինչ բույսեր են աճում: Մինչդեռ երբեք Հայաստանում չէր եղել:

Եզրակացությունս որն է. շեշտը չպիտի դնել խանգաղյանի գրքերում առկա վրիպումների, անճշտությունների վրա: Շեշտը պիտի դնել այն ոգեղեն ուժի վրա, այն նվիրումի վրա, որ գրողն ուզում էր անցյալի էջերով, պատմության էջերով, պատերազմի էջերով, իր բնաշխարհի էջերով արթնացնել ու ընթերցող դաստիարակել: Իսկ խանգաղյանն իր ընթերցողն ուներ:

Ուսուցիչ հորս քենակալ Սմբատ Ազատյանը մեր տնից տարավ «Մխիթար Սպարապետ»-ն ու չվերադարձրեց: Անընդհատ կարդում էր: Հայրս ասաց՝ թո՛ղ մնա քեզ, ես մեկն էլ ունեմ: Քենակալն արհեստավոր մարդ էր՝ ներկարար: Չմռան ամիսներին, որ գործ չէր լինում, տանը՝ բազմոցին պառկած, կարդում էր ու լաց լինում: Ուրեմն Սերո խանգաղյանի գիրքը պետք էր մի որոշակի շրջանակի ընթերցողի, իսկ դա քիչ չէ: Թող այսօրվա արհեստավորը ժամանակակից գրողի որեւէ գիրք կարդա ու հուզվի: Չկա՛ այդպիսի բան: Ասածս այն է, որ մեր գրականության գործնական նշանակությունը նաեւ ազգապահպանությունն է, հայի մեջ հայը փրկելը, պահելը, վերականգնելը: Սերո խանգաղյանի գրականությունը լիովին իր այդ կարեւոր առաքելությունը կատարել է: Այո՛, Սերո խանգաղյանն ուներ իր ընթերցողը: Այդ ընթերցողը կար:

Այդպիսի մի ընթերցող էր նաեւ կնքահայր, մասնագիտությամբ ատամնաբույժ Երվանդ Ղազարյանը, ով մեր տանը ձեռքն առավ Օմար Խայամի քառյակների մանուշակագույն կազմով ժողովածուն եւ սեղանի շուրջ սկսեց մեկ առ մեկ կարդալ ու մեկնաբանել: Վերջում այնքան համառեց, որ հայրս

ստիպված այդ գիրքն էլ նրան նվիրեց: Այս գրքից եւս երկրորդ օրինակ ուներ:

Ընթերցողը կար, այդ ընթերցողն ստեղծվել էր, այդ ընթերցողն ամբողջ ժողովուրդն էր, եւ այդ ժողովուրդն էլ ապահովեց Սերո խանգաղյանի ժողովրդականությունը:

**- Որքանով են Սերո խանգաղյանի ստեղծագործություններն ընդգրկված դպրոցական եւ բուհական դասագրքերում, Ձեր կարծիքով ո՞ր ստեղծագործությունները կարելի է ընդգրկել: Հարցն ինքնանպատակ չէ, քանի որ Դուք միջին դասարանների դասագրքերի հեղինակն եք եւ ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-12-րդ դասարանների հայ գրականության դասագրքի հեղինակակիցը:**

- Դասագիրքը բարդ հասկացություն է ընդհանրապես: Դասագրքերում այսօր, ցավոք, տեղ չունի այնպիսի հեղինակ, ինչպիսին Երվանդ Օտյանն է: Առանձին դիմանկարներով ներկայացված չեն Հովհաննես Հովհաննիսյանը, Պերժ Պռոշյանը, Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափազյանը, Ավետիս Ահարոնյանը, Վահան Թեքեյանը, Հակոբ Օշականը, Համաստեղը, Վահան Թոթովենցը, Հակոբ Մնձուրին, հայրենի եւ սփյուռքահայ բազմաթիվ այլ գրողներ: Շատ սեղմ է ներկայացված միջնադարը:

Խանգաղյանը ներկայացված է ավագ դպրոցի հումանիտար հոսքի 12-րդ դասարանի դասագրքի «Նորագույն շրջանի հայ գրականությունը» բաժնում: Ներկայացված է ակնարկային գլխում եւ ոչ թե առանձին դիմանկարով: Քանի որ դասագրքի ընդգրկումը շատ մեղ է, ուստի՝ թեկուզ ակնարկային մասում ներկայացված լինելն արդեն իսկ քիչ բան չէ: Դպրոցից հետո կա բուհ, որտեղ թե՛ խանգաղյանը, թե՛ դպրոցական ծրագրից դուրս մնացած շատ հեղինակներ պարտադիր պետք է ընդգրկված լինեն ուսումնական ծրագրերի մեջ: Այլ բան է, որ արտադասարանական ընթերցանության համար հանձնարարելի է «Մխիթար Սպարապետ»-ը, ինչը եւ որոշ ուսուցիչներ անում են:

**- Սերո խանգաղյանի գրական ժառանգությունից ո՞ր ստեղծագործությունը կառանձնացնեիք:**

- «Մատյան եղելությանց» վեպը:

Սերո խանգաղյանի գնահատությունը դյուրին չէ: 18-րդ դարից՝ «Մխիթար Սպարապետ»-ից հետո նա գնաց պատմության ամենախորքերը («Թագուհին հայոց»), եկավ 20-րդ դար՝ «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ», «Նժդեհ», «Շուշի», «Անդրանիկ»: Պատմության բոլոր շրջանները թափանցելու նախափորություն ուներ, ինչն էլ, ի վերջո, գրողի ստեղծագործական տարերքն է:

«Սերո՛, սո՛ւտ ես ասում» արտահայտությունը ես հիմա բացատրելու եւ արժեւորելու եմ: Մեծ գրող Գաբրիել Գարսիա Մարկեսն ասում էր՝ եթե երեխան մի բան է անում եւ դրա փոխարեն մի սուտ է հորինում, մի՛ խանգարեք նրան, նա ապագա ստեղծագործող է. նա ոչ թե ասում է՝ բաժակը ձեռքիցս ընկավ, կոտրվեց, այլ՝ քամին խուժեց սենյակ, պատուհանի փեղկն ուժգին բացվեց, կպավ պատուհանի գոգին դրված բաժակին, բաժակը գլորվեց եւ օրորվելով-շորորվելով ընկավ ու փշուր-փշուր եղավ... Այդպես էլ գրականության մեջ սուտ կա,

որ ոչ թե ստախոսության սուտն է, այլ երեւակայության հետ խառնված գեղարվեստական մի շաղախ, առանց որի, հատկապես պատմավեպերում, պարզապես անհնար է անցյալի միջավայր, ժամանակ ու տարածություն ստեղծել: Այդ «սուտը» հետո դառնում է ճշմարտություն՝ նայած թե ինչպես ես դա ներկայացնում: Դարձյալ դիմենք Մարկեսին: Ասում էր՝ պատերազմի նահատակ հերոսներին պիտի ներկայացնեի, որոնց թիվը 30 էր: 300-ը ինձ քիչ թվաց: Ազդեցիկ լինելու համար դիմեցի չափազանցության՝ 30-ը դարձրեցի 3000: Եվ ինչ, կարճ ժամանակ անց, այդ հարցին նվիրված իր ելույթի մեջ, խորհրդարանի նախագահն օգտագործեց ոչ թե 30, այլ 3000 թիվը: Սուտ էր, բայց ավելի ճշմարիտ էր, քան փաստը, որով հետեւ մտապատրանքի մեջ վերահաշվարկվել էլ հասել էր իր լրումին:

Սա մտաբերեցի՝ ասելու, որ գրականությունն ամենեւին էլ հեշտ բնագավառ չէ. փաստից, երեւակայությունից եւ անգամ գեղարվեստական սուտից գրողը հորինում է երկրորդ մի իրականություն՝ նայած ո՞վ է հորինողը, նայած ինչպե՞ս է հորինում: Դա կդառնա՞ արվեստի փաստ, ուրեմն կկոչվի Մարկես, գեղանկարչության մեջ՝ Պիկասո, Դալի, չի՞ դառնա, ուրեմն ընդհանրապես չի հիշվի...

Այսպես իր նյութի մեջ Սերո Խանգադյանն ի՞ր աշխարհին էր ստեղծում՝ իրական եւ երեւակայական, փաստով վկայված եւ հորինովի... Լա՞ւ է, թե՞ վատ է՝ իրենն է, ի՞նքն է: Սա իմիջիպալոց չեմ ասում: Պատմական ժամանակի մեջ միջավայր, հարաբերություններ, ներքին կենցաղ ստեղծելը շատ ավելի դժվար է, քան գործողությունների ու իրադարձությունների դիպաշարը: Այստեղից էլ՝ երեւակայության բացառիկ դերն ու հորինելու արվեստը:

Իսկ հորինելը հեշտ բան չէ: Կինը, ծաղիկը, միրգը, բնապատկերը մշտապես աչքի առջեւ են, բայց առանց բնորդի նկարիչները չեն նկարում, ոչ թե չեն կարող, այլ նրանց իրականությունը շատ ավելի տեսողական է, քան հիշողությամբ: Համամասնության, մանրամասների, նրբերանգների հարցեր կան, առանց որոնց անհնար է ստեղծագործել: Նույն կերպ գրականության մեջ կան ժամանակի, տարածության, մասշտաբի հարցեր, կենդանի միջավայր ստեղծելու պահանջ, բաներ, որոնք իրական բնորդներ չունեն, ինչ էլ կա, շատ չնչին է, ահա այստեղ է, որ թափ են առնում ստեղծագործական երեւակայությունը եւ հորինելու անհրաժեշտությունը: Խանգադյանի հորինելու արվեստը՝ այդ գեղարվեստական սուտը, նուրբ գրականագիտական ուսումնասիրության նյութ է: Ես առաջադրում եմ, խնդրեմ, թող զբաղվեն, թող այս տեսանկյունից արվեստագետի հայացք ուղղեն Խանգադյանի ստեղծագործությանը:

Ահա, նաեւ այս տեսակետից ես գնահատում եմ «Մատյան եղելությանց»-ը. ըստ իս, նրա լավագույն գործն է: Ունի նաեւ լավ պատմվածքներ: Ժամանակին չճարվող գիրք էր եւ ձեռքից ձեռք էր անցնում «Մխիթար Սպարապետ»-ը: Դասական, ավանդական պատմագրության ոգով, ոճով գրված գործ է:

Նորից եմ կրկնում, չպիտի ամտեսենք ընթերցողական շերտերը, ամեն մի շերտ ունի իր նախասիրած գրականությունը: Մի՞ մոռացեք. ի վերջո, Խանգադյանը խորհրդային

դարաշրջանի ու մտայնության գրող էր: Իսկ այդ մտայնության պահանջը գրականությունը ժողովրդականացնելն էր: Գործում էր «Արվեստը ժողովրդինն է» կարգախոսը եւ այսպես, թե այնպես լուսավորում ժողովրդական զանգվածներին: Խանգադյանն այդ գրողն էր եւ դրա համար էլ ստացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի ոսկեծույլ աստղ: Վեպերը թարգմանվում էին ռուսերեն եւ այլ լեզուներով ու վարձատրվում շատ բարձր հոնորարով:

**- Սերո Խանգադյանը, ինչպես արդեն նշեցինք, վեպեր է գրել, կուզեինք, որ Դուք արժեւորեիք դրանք, թեւ դրանց մի մասին մասնակիորեն անդրադարձաք:**

- Ես արդեն ինչ-որ չափով անդրադարձա Ձեր հարցին, ուստի շարունակեմ: Դուք պիտի հիշեք 1960-1980, անգամ 1990-ական թվականները, երբ յուրաքանչյուր պատմավեպի համար ժողովուրդը հերթ էր կանգնում, անգամ գրախանութի ցուցափեղկի ապակիներն էին կտրում: Եղել է այդպիսի դեպք: Հիշե՛ք խորհրդային ժամանակները, հիշե՛ք, թե դպրոցներում ինչքան ժամաքանակով էր դասավանդվում «Հայոց պատմություն»-ը, ավելի վաղ՝ դպրոցներում ազգային պատմություն ընդհանրապես չէր դասավանդվում, իբր «նացիոնալիզմ» էր. մեր պատմական անցյալի իմացության սով կար մարդկանց մեջ, բռնագաղթի ճանապարհներով անցած հայերն իրար հանդիպելիս ամեն մեկն իր հայոց պատմությունն էր պատմում, բակերում հավաքված ծերունիները հայոց պատմության դրվագներ էին իրար հիշեցնում, մեկը մյուսին լրացնելով՝ պարծենում, որ եղել են Անդրանիկի զինվորը: Ահա նաեւ այս տեսանկյունից պիտի գնահատել Խանգադյանի պատմավեպերը: Այո՛, այդ պատմավեպասանությունն ուներ իր ըն-թեր-ցո-ղը: Եվ դա անկախ նրանից՝ փաստերը ճիշտ էին, թե՞ մոտավոր, շատ էին, թե՞ քիչ, մեկնաբանությունները համոզիչ էին, թե՞ հարցեր հարուցող: Կրկնում եմ՝ անգամ որոշները, գեղարվեստական տեսակետից բարձրարժեք չլինելով, անհրաժեշտ դերակատարություն ունեին՝ ժողովուրդ էին պահում: Ասեմ նաեւ՝ 1988-ի պոթելումը նաեւ այսպիսի գործերով է պայմանավորված: Պիտի նաեւ «Մխիթար Սպարապետ»-ը կարդային, որ ոտքի ելնեին, «Թագուհին հայոց»-ը կարդային, ես այսպես եմ գնահատում նրա թե՛ վեպերը եւ թե՛ ամբողջ գրական վաստակը՝ հանրային կյանքում ունեցած արձագանքով ու անդրադարձով:

Այս կապակցությամբ եւս մի միջարկում անեմ: Անկախությունից առաջ էր, երեւանում գրուցում էի ուկրաինացի հայագետ, թարգմանիչ, հետազայում ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոյի հետ: Խոսում էինք պատմավեպերից, այդ թվում՝ նաեւ Խանգադյանի: Եվ Բոժկոն ասաց. «Ա՛յ, ձեզ թույլ են տալիս ձեր անցյալը ներկայացնող պատմավեպեր գրել, տպագրել ու տարածել: Իսկ մեզ թույլ չեն տալիս: Մեր պատմական անցյալը մեզ համար փակ է, բաց է սոսկ այնքանով, որքանով Ռուսաստանի հետ բարեկամության հարց կա: Այդ իսկ պատճառով մտադիր ենք ձեր բոլոր պատմավեպերը թարգմանել ուկրաիներեն: Դրանք մեզ պետք են»: Մտադիր էին թարգմանել նաեւ Խանգադյանի «Մխիթար Սպարապետ»-ը: Ուկրաինական վերջին դեպքերը, որ սկսվեցին 2013-ի փետրվարից եւ շարունակվում են առ այ-

սօր, եկան համոզելու, որ մեր՝ այդ թվում նաև Խանգաղյանի պատմավեպերը, իրոք, ոչ միայն մեզ, այլև նրանց էին պետք:

**- Պարոն Գասպարյան, ասես նրա վերջին պատմավեպերը՝ «Անդրանիկ», «Նժդեհ», «Շուշի», աննկատ մնացին, ի՞նչն է պատճառը:**

- Սերո Խանգաղյանն ուներ իր գեղարվեստական համակարգը: Դա պատմողական, նկարագրական, դիպաշարային արձակն է: Այդ համակարգում այս վեպերը կայացած են: Համենայնդեպս, շատ հեռու չեն «Մխիթար Սպարապետ»-ից, ինչը նրա հաջողված պատմավեպն է: Այնպես որ, մեղքը ոչ թե պատմավեպերինն է, այլ ժամանակինը: Հիշե՛ք այդ մութ ու ցուրտ տարիները, այդ ժամանակ եւ ընթերցողը փոխվեց, եւ ժամանակը փոխվեց... Խանգաղյանը, ինչպես նաև շատ գրողներ, կորցրեցին իրենց ընթերցողին: Դա նույնն է, ինչ թատրոնն առանց հանդիսականի, համերգասրահն առանց ունկնդրի... Իսկ գրական մամուլն այլևս կազմակերպված մոտեցում չուներ գեղարվեստական ժառանգության հանդեպ: Շատ բան փոխվեց: Ինչո՞ւ եք ասում՝ աննկատ անցավ, ի վերջո ընթերցողական մի շերտի հիշողության մեջ մնաց, չէ՞: Իսկ դա ես քիչ բան չեմ: Պետք չէ ամեն մի հարցում առավելապաշտ լինել: Միշտ պետք է հաշվի առնել առկա իրավիճակը: Այո՛, այդ վեպերը նախկինների մեծ չգրախոսվեցին, մրցանակների չարժանացան, բայց աննկատ էլ չմնացին: Ընդհանուր ստվերային ժամանակ էր, ստվերը ծածկել էր ամեն ինչ, այդ թվում՝ նաև գիր ու գրականություն: Եկեք նաև չմոռանանք ժողովրդի խորունկ հիասթափությունը. ինչի համար էր պայքարում եւ ինչի հասավ: Սա շատ լայն խոսակցություն է, իսկ ժամանակի հոգեւոր կյանքը՝ այդ թվում Խանգաղյանի վիպասանությունը, պետք է դիտենք այս տեսադաշտում, այս պատճառակցական կապերի մեջ: Եթե մարդու տանը լույս չկա, գիրքը տանի, ինչպե՞ս կարդա, եթե հաց չկա եւ ինքն էլ, երեխաներն էլ մրսում են՝ ո՞ւմ համար կարդա...

Որքան էլ ցավալի է, դա գրքերը փողոց թափելու ժամանակ էր, հերթը հասավ նաև դասականների հատորներին: Երեւանում այնքա՛ն են տեսել: Տեսել են նաև Սերո Խանգաղյանի գրքերը, հատորները: Սա ոչ թե մեր ժողովրդի, այլ մեզ պարտադրվող նոր՝ արդեն իսկ ազգուրաց ժամանակների ամոթն էր, ինքնուրուցման տարերքը տանում էր դեպի հիշողության կորուստ, դեպի հրահրվող արտագաղթ. այդ պայմաններում՝ էլ ի՞նչ գիրք, էլ ի՞նչ գրականություն: Ահա այս պահից, հոգեբանական այս շրջադարձից էլ սկսվեց մեր ժողովրդի, այս դեպքում՝ մեր ընթերցողի բարոյական այլասերումը: Իշխանությունների հետ մեկտեղ նաև մենք՝ մտավորականներս, համենայնդեպս՝ ազդեցիկ անունները, բազմամրցանակակիր ժողովրդականները ժողովրդին հասցրին այդ վիճակին եւ պետք է այդ պատասխանատվությունը կրեն: Իսկ մտավորական մի լավ շերտ այդ տարիներին դեռեւս կար: Հաղթանակած ժողովուրդը փախչում էր իր հայրենիքից, ասես ոտքերի տակ հողն այրվում էր: Գյուղերից ու քաղաքներից քոչն առած գնում էր մի ամբողջ ժողովուրդ, նաև մտավորականություն, նաև գրական մարդիկ: Խոսում էիր հետները, դիմացդ արդեն ոչ թե հայն էր, այլ հակահայր: Հիշում էին իրենց նախկին ու ներկա վիրավորանքները եւ դարձնում ճակատագիր:

Ժողովրդին սթափության կոչողները քիչ էին, քչերից մեկը Խանգաղյանն էր, որ անհողողո՞ղ մնաց իր հողին կապած եւ իր պատմական հերոսների ազգային բարոյականությանը հավատարիմ:

Հետո ժամանակային անցումները շատ արագ եղան: Դարաշրջան փոխվեց: Պատերազմը բացեց մարդկանց աչքերը: Նոր ժամանակն արդեն ուրիշ բան էր որոնում, իրական հերոսներն աչքի առաջ էին, եւ կյանքի ճշմարտությունը (դաժան բան է) փակում էր գեղարվեստական սուտի ու հորինվածքի ճանապարհը: Այս էլ կար: Եվ այդ տարիներից սկսած, չգտնելով իր նոր ասելիքը, իր տեղը հանրային գիտակցության մեջ՝ գրականությունը մղվեց ետնախորշ: Գրականությունը կորցրեց ժողովրդին առաջնորդող իր դերն ու նշանակությունը: Ժողովուրդը կտրվեց գրականությունից, որովհետեւ չստացավ իր հարցերի պատասխանը: Բացի դրանից՝ նաև ընդարձակվեց տեղեկատվական ցանցը՝ փակ աշխարհը բացվեց նրա առջև:

Խանգաղյանն արդեն ավարտում էր գրական ճանապարհը: Վերջին ծրագրերը համենայնդեպս հասցրեց իրականացնել: Ավելի երիտասարդները մատնվել էին շվարունի: Ի՞նչ գրել, ինչպե՞ս տպագրել, ո՞ւմ համար գրել: Ժամանակ էր պետք կողմնորոշվելու համար, բայց մինչ կկողմնորոշվեին՝ ժամանակը նրանց նոր խնդիրների առջև էր կանգնեցնում՝ ազգային, հանրային, սոցիալական, հոգեբանական, քաղաքական:

Անցումային այս ճգնաժամը Խանգաղյանը տեսավ եւ ապրեց, բայց ավանդույթ ունեցող նրա ստեղծագործական նկարագիրն իր ճանապարհն ուներ... Եվ պատահական չէ, որ արդեն մահվան մահիճում հրատարակեց «Աղբյուր Սերոբ» գրքույկը (Երեւան, 1998, 16 էջ), որ Անանուն հեղինակի համառոտված հուշագրություն է: Գրողը կյանքից հեռացավ վերջին պարտականությունը կատարած դիրքապահ գինվորի պես:

Իսկ ինչ վերաբերում է այդ ազգապահպան հերոսներին՝ Անդրանիկ, Նժդեհ, նրանք ինձ համար պատմության մեջ արդեն Վարդան ու Վահան Մամիկոնյանների կողքին են: Հասկանալի է, որ ինչպե՞ս գրքին եւ ժողովրդին ուղղված նրանց խոսքը ճակատագրական պատերազմներից առաջ: Նրանք ինձ համար նման են նաև մեր տարաբախտ Փոքր Սիերին: Անդրանիկն անժառանգ մնաց, հեռացավ ու փակվեց Ֆրեզոյում: Ազգային հերոսը, հայրենիքից հալածական, փայտե փոքրիկ աթոռներ՝ նստակներ էր պատրաստում եւ հինգ դուլարով վաճառում, որովհետեւ դեռ պետք է ապրեր: Եվ Ֆրեզոյի հայերը գնում էին, որովհետեւ Անդրանիկն էր պատրաստել իրենց աթոռ պետք չէր, իրենք դրանով իրենց հարգանքն էին բերում Ձորավարին:

Ձնդաններում փակվեց նաև Նժդեհը...

**- Ընդհանուր կարծիք կա, որ մեր օրերում վեպի, մասնավորապես, պատմավեպի ժանրը նահանջ է ապրում, այդպե՞ս է:**

- Գրականությունը, դժբախտաբար, հեռացավ իր հիմնական կոչումից, եւ դա զուգադիպեց մեր անկախության տարիներին: Գրականությունն ավելի ներանձնացավ, անհատականացավ, շատ կարելու ազգային, հանրային, պատմական,

քաղաքական խնդիրներ դուրս մնացին գրողների տեսադաշտից, դա չգիտեմ ինչով բացատրել: Իհարկե, գիտեմ, կբացատրեմ: Մենք ապրեցինք պատմական, քաղաքական վիթխարի տեղաշարժերի մի ժամանակաշրջան՝ ԽՍՀՄ-ի փլուզում, Արցախյան պատերազմ, մութ ու ցուրտ տարիներ, հետո արմատական փոփոխություններ՝ հիասթափություն ժողովրդավարության կոչերից, համաշխարհայնացում, ազգային արժեքների արեւմտականացում: Այս բոլորը մեզնից յուրաքանչյուրն զգաց իր մաշկի վրա:

Ես չեմ տեսնում այն վեպը, որի մեջ այս ամենն արտացոլված լինի: Իսկ մեր ժամանակի վեպը հենց նման բովանդակություն պիտի ունենա: Եթե այդ վեպը չկա, մնացածը կա՛մ հավելված է, կա՛մ կարող է հետաքրքրական լինել, ուշագրավ լինել, բայց ոչ գլխավոր, ճակատային նշանակություն ունենալ: Այլևս չես կարող պատմական հայրենիքի ոգեկոչումով առաջվա նման գրականություն ստեղծել, քեզանով հիացող ընթերցող ունենալ: Պատմական հայրենիքի ճանապարհները բաց են, որպես զբոսաշրջիկ գնա՛, շրջագայի՛ր եւ վերադարձի՛ր:

Նոր վեպի, նոր տարածաժամանակային ընդգրկումների, նոր բանարվեստի ժամանակն է: Ասելիքի բովանդակությունն ու ասելու ձեւը պիտի փոխվեն: Այնպես, ինչպես մեր պատմական հայրենիքը ոգեկոչում էին Բակունցը («Ծիրանի փողը»), Դաշտենցը («Ռանչպարների կանչը»), Գալշոյանը («Մարութա սարի ամպերը») եւ ուրիշներ, հիմա այլևս անհնարին էր: Այդ ամենը նոր իրականության առջեւ դառնում է բանահյուսություն:

Դարաշրջան փոխվեց, ուրեմն նաեւ գեղարվեստական նոր հայեցակարգ պիտի մշակվեր, մինչդեռ չթողեցին, որ մշակվի: Միտքս կիսատ չթողնելու համար ավելացնեմ. սկսվեց անցյալի վերագնահատության մի անհրաժեշտ գործընթաց, բայց դրա դեմ ընդվզեցին անցյալին կառչած ձեր այդ բոլոր տեսակի սիլվակապուտիկյանները, անահիտսահիմնյանները եւ նրանց պոչը բռնած համեմատաբար երիտասարդ ոչինչները: Մաքրագործումը, գտումը, ինչպես հարկն է, չկայացան: Նրանցը 1937-ի ջարդարարներ, հետո արդեն իրենց գրական հայրեր Նաիրի Զարյանն ու Հրաչյա Քոչարն էին: Նրանք էլ մնացին որպես սրբության սրբոց: Ի՛նչ Զարենցի անտիպներ, ի՛նչ Բակունցի հավատաքննություն, Թոթովենցի եւ շատերի գնդակահարություն, Մահարու, Լեռ Կամսարի եւ մյուսների արքոր: Ի՛նչ պատմական ճշմարտություն, երբ այդ «ճշմարտությունը» կամ իրենք էին գրել, կամ իրենց ուսուցիչները: Այս դիրքերից սկսեցին ինձ հալածել, զրպարտել, եւ նրանց այդ մտայնությունը շարունակողներ եղան:

Այս բախտորոշ պահին Խանգաղյանը պատմական ճշմարտության բացահայտման կողմնակից էր, պաշտպանում էր ինձ, ոգեւորում, խրախուսում: Իմ հողվածների կապակցությամբ անպայման զանգահարում եւ երկար գրուցում էր: Նրա այս ազնիվ քաղաքացիական պահվածքը ինձ ոգեւորում էր:

Այդուամենայնիվ, Ձեր ակնարկած վեպը նոր ձեւափոխություններով պահպանվեց: Խնդրեմ, հետեւեք այս անուններին՝ Լեւոն Խեչոյան, Վարդան Գրիգորյան, Վահագն Գրիգորյան, Հովիկ Վարդումյան, Բակուր, Պերձ Զեթունցյան, Մաքսիմ

Հովհաննիսյան, Նորայր Ադալյան, Արմեն Շեկոյան, Վարուժան Այվազյան, Ալեքսանդր Թովֆյան, Էդուարդ Խաչիկյան, Ռաֆայել Սահակյան: Օտարագիր հայ գրողներից՝ Վիկտոր Գարդոն (Վահրամ Կաքավյան), Վահե Քաչա, Մայքլ Արլեն Կրտսեր, Դավիթ Խրոյան, Սեւդա Սեւան, Վարուժան Ոսկանյան, Փիթեր Բալաքյան... Ավագներին՝ Սարոյան, Սյուրմեյան եւ ուրիշներ, էլ չեմ հիշում: Օտարագիր հայ գրողների ժառանգությունը միջազգային ճանաչում ունի: Լավ է, որ թարգմանվում է հայերեն եւ ընդգրկվում ժամանակակից հայ արձակի ընդհանուր տեսադաշտում:

Անունները թվարկեցի Ձեզ համար՝ Ձեր հարցն անպատասխան չթողնելու նպատակով:

Կա թե՛ պատմությունը՝ հիմնականում 1915 թվականի ցեղասպանություն եւ Արցախյան պատերազմ, թե՛ պատմության անդրադարձը հուշի, վերհուշի ձեւով: Պատմությունն այսպես թե այնպես կա, բայց չկա ժամանակակից ամբողջական մարդը՝ հերոսը, որ այդ ամենն իրականության համադրություններով կրի իր մեջ:

Այդ իսկ պատճառով ես բազմաթիվ հողվածներով, ելույթներով հանդես եմ եկել, խոսել այդ մասին, որ չկա ամբողջական մարդը, չկա բուն իրականությունը, մենք մի տեսակ խոյս ենք տալիս այդ դաժան, կոպիտ, անկիրթ իրականությունից, որտեղ միայն դժգոհ ու վիրավորված մարդիկ են, ովքեր իրար հանդիպելիս ոչ թե մեկը մյուսով են հետաքրքրվում, այլ երկրի պատմական ճակատագրով, որ ոչ թե անցյալի մեջ է, այլ իրենց ներկա օրն է: Մեր երկիրը քանդվում եւ ավերվում է, մեր ժողովրդի կեսը, գուցե եւ ավելին, արդեն դրսում է, ո՞ր է այս ամենը պատկերող, ներսն ու դուրսն ի մի բերող, հոգեբանորեն վերլուծող գրականությունը: Այո՛, եթե այդ գրականությունը լինի, նորից իր հետ կրթի պատմական փաստերի եւ այլևայլ իրողությունների հանդեպ ուշադրություն, հետաքրքրություն, ինչպես առաջ էր:

Ես եղած գրականությունը հիմնահատակ չեմ ժխտում, հանկարծ նման տպավորություն չստեղծվի: Թվարկեցի անուններ, ովքեր գրում են եւ Արցախյան պատերազմի մասին, եւ ժամանակակից կյանքի տարբեր դրսեւորումների մասին, բայց այն երեւոյթ գիրքը, այն գլխավոր գիրքը, որ մարդ ուզեցնար ունենալ եւ ասեր՝ ահա՛ ժամանակի գիրքը, դժբախտաբար, մեր սեղանին չէ: Կարծում էի՝ Լեւոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը» կլինի, բայց, չէ՛: Սպասումն ավելին էր: Անհարկի գերագնահատումներ չեմ ուզում անել:

**- Մերո Խանգաղյանն անդրադարձավ պատերազմական թեմատիկային («Մեր գնդի մարդիկ», «Երեք տարի 291 օր»), մի քանի պատմվածքներ): Գրողին հաջողվե՞լ է ներկայացնել պատերազմի իրական դեմքը, քանզի պատերազմը ոչ միայն մայիսի 9-ի հաղթանակն է, այլև ողբերգություն, մարդկային խեղված ճակատագրեր...**

- Վերստին հիշեմք՝ Խանգաղյանը խորհրդային գրող էր, խորհրդային գաղափարախոսության կրող էր, իրականության հետ հաշտ եւ ոչ ընդդիմադիր խորհրդային քաղաքացի ու մտավորական: Նա այդ շրջանակից դուրս չեկավ: Այդ շրջանակի ընձեռած հնարավորությունների սահմաններում էին նաեւ նրա ու մի շարք այլ մտավորականների ընդվզող նա-

մակները ԽՍՀՄ վերադաս մարմիններին՝ կապված ինչպես Արցախի, այնպես էլ տնտեսական բազմապիսի խնդիրների հետ:

Այդ ամենով հանդերձ Երկրորդ համաշխարհային կամ մեզ համար եւս Հայրենական մեծ պատերազմի պատկերման հարցում խորհրդային գաղափարախոսությունը պահանջում էր մի տեսակ լավատեսական, հաղթական ներշնչվածություն, ինչին ասում էին *հերոիկա*: Երբեք մի՛ մոռացեք՝ դրանք բրեժնեւյան “Малая земля”-ի ժամանակներն էին: Սրանք էին պատերազմը ներկայացնելու չափն ու չափանիշը, պահանջն ու օրինակը:

Պատերազմի մասնակից շատ գրողներ այդ ներշնչանքով ծավալուն վեպեր գրեցին, բայց ո՛չ պատերազմ կար, ո՛չ էլ երեսուն միլիոնից ավելի զոհերի հոգու տնքոցը: Ահա, խնդրեմ, բաց արեք Հրաչյա Քոչարի «Մեծ տան զավակները» ստվարավեպը: Ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության պահանջը, հաղթանակի անհրաժեշտ ու պարտադիր գաղափարը ծածկում են ամեն ինչ: Սա ոչ թե վեպ է, այլ կոմունիստական կուսակցության պատմության հավելված:

Առավելագույնը, ինչ էսանզոյանն արեց այս ասպարեզում, այն է, որ մարդկայնացրեց կերպարները: Գաղափարական կաղապարի վերածված զինվորի կերպարի մեջ երեւաց մարդը, զինվորական համազգեստի տակ՝ մարդկային ճակատագիրը, ինչ-որ չափով՝ նաեւ պատերազմի իրական դեմքը: Խանգաղյանը ոչ թե կոտրեց գաղափարական սխեման, այլ պահպանեց մարդկային կենդանի շունչը: Իսկ սա եւս քիչ բան չէր:

Հիշեք, թե ժամանակին կուսակցական քննարկումների եւ արգելանքների ինչ ծանր ճանապարհ անցավ «Բալլադ զինվորի մասին» շարժանկարը, մինչեւ թույլատրվեց ցուցադրությունը: Ինչո՞ւ: Որովհետեւ դրանում կար ճշմարտություն: Իսկ ճշմարտությանը դեմ էր կուսակցական կաղապարված գաղափարախոսությունը: Ճշմարտության էր ձգտում նաեւ Խանգաղյանը...

Ժամանակ պիտի անցներ, սերունդ պիտի փոխվեր, որպեսզի արդեն ուրիշ հայացքով նայեին պատերազմական անցքերին:

Պատերազմի մասնակից սերունդը հեռացավ կյանքից: Իմ հայրն էլ պատերազմի մասնակից էր, ռազմաճակատից մարմնի մեջ խրված արկի երկու բեկոր էր բերել, որ իր հետ էլ տարավ գերեզման: Հիմա հայրս հող է դարձել, իսկ այդ բեկորները կան: Ահա սա է պատերազմը: Հայրս վիրավորվել էր, իսկ նրա մահվան սեւ թուղթը մեր տուն էին բերել: Պապս ուշաթափվել էր, մայրս՝ նորահարս, լաց եղել: Բայց հույսը չէին կտրել, որովհետեւ սեւ թղթի մեջ անուն, ազգանունն իրենն էր, հայրանունը՝ ոչ: Մեկ տարի հետո հորիցս եկել է առաջին նամակը: Պապիս ուշքն այս անգամ անակնկալ ուրախությունից է զննացել: Մանկահասակ նամակաբերին նվերներ է տվել, հյուրասիրել, բարձրացրել, նստեցրել ուսերին եւ փողոցով տարել, որպեսզի մյուս նամակները բաժանի: Պատերազմից հետո հորս ամիջապես չեն զորացրել, այլոց հետ մեկտեղ ստիպել են Շախտինսկ քաղաքում ածխահատությանը զբաղվել, քանի որ ավերված տնտեսությունը պետք էր ոտքի կանգ-

նեցնել: Հորս մոտից մարդ է եկել մի նոր նամակով, պապս երկար հարցուփորձ է արել եւ որոշել՝ զնալ որդուն ընդառաջ: Պապս հորեղբորս հետ գնացել է որդուն տեսության: Եվ քանի որ հայրս բարձրագույն կրթությամբ մանկավարժ էր, դիմումներից հետո նրան ի վերջո զորացրել են, որ վերադառնա ու երեխաներ կրթի:

Մայրս պատմում էր. «Երբ հայրդ մեկնեց պատերազմ, անընդհատ նույն երազն էի տեսնում՝ թելի կծիկը քանդվելով գլորվում-գլորվում, մեր տնից գնում էր դեպի կենտրոնական հրապարակ: Հայրդ այդ ժամանակ պատերազմի ճանապարհն էր անցնում, իսկ հետո, երբ պիտի զորացրվեր ու գար, նույն երազն էի տեսնում, բայց հիմա թելը կծկում, հավաքում էի: Հայրդ եկավ: Եվ քանի որ վիրավորվել, գերի էր ընկել, աշխատանք չտվեցին: Բարձրագույն կրթության տեր, մինչեւ պատերազմը դպրոցի տնօրեն, հիմա աշխատանք չէին տալիս»: Հետո արդեն աքսորի մեծ աշխատանք են տալիս հեռավոր վայրերում՝ Լոռու Թեղուտ գյուղում, Ապարանի Արայի գյուղում: Ես արդեն բարձր դասարանների աշակերտ էի, երբ հայրս Երեւանում աշխատանք ունեցավ: Պատերազմը սա՛ էր, այլ ոչ թե այն, երբ, ըստ Սեւակի, «Հոգնած մեռա՛»-ն դառնում էր հուսահատ «ուռա՛»:

Չմոռանանք, դեռեւս ողջ են մի ամբողջ սերնդի ներկայացուցիչներ, ովքեր այդպես էլ իրենց հայրերին չտեսան, որովհետեւ ջահել-ջահել նրանք ընկան տարբեր ռազմաճակատներում:

Պատերազմի հիշողությունն աստիճանաբար թուլանում է, գաղափարական պարտադրանքներ վաղուց արդեն չկան: Պիտի ճիշտը գրել, իսկ ճշմարտությունն այսպես սերունդների հերթափոխի միջոցով է բացահայտվում: Խանգաղյանին հաջորդող սերունդը, ով մեծացել էր թիկունքում եւ թիկունքում էր զգացել պատերազմի դառնությունները, ավելի ազատ գրեց ու համեմատաբար ճիշտը գրեց: Կարող են անուններ տալ՝ Հրանտ Մաթեոսյան, Ռուբեն Հովսեփյան, Հովհաննես Մելքոնյան, Զորայր Խալափյան: Գրեցին, եւ նրանց գրքերը հոգեբանորեն ավելի մոտ էին պատերազմին, քան նրանցը, ովքեր... մասնակցել էին պատերազմին: Դաժան իրողություններ են սրանք: Այդպես է, որովհետեւ պատերազմի մասնակիցներինը փաստն էր ու խորհրդային գաղափարախոսությունը, պատերազմի փաստը՝ ռմբակոծություն, գրոհ, նահանջ: Սա՛ էր:

Բոլոր դեպքերում պատերազմական նյութով ստեղծագործող իր սերնդակիցների մեջ Խանգաղյանն առանձնանում է կերպարների մարդկայնացմամբ, որ նշանակում է ճանաբանության հաղթահարում:

Պատերազմի նյութով ռուս գրականությունը հասավ իրավ հաղթանակի՝ հանձին Վասիլի Գրոսմանի (1905-1964) վիպասանության՝ «Կյանք եւ ճակատագիր»: Ի դեպ, վեպի առաջին հատորը 2014-ին թարգմանվել է հայերեն եւ լույս է տեսել Ստեփանակերտում: Այստեղ պատերազմի իրական, դրանով իսկ շատ դաժան դեմքն է: Այստեղ պատերազմի ամբողջ ճշմարտությունն է, ոչ թե դրվագային, կիսատ, թերի, այլ ամբողջական: Պատահական չէ, որ ՊԱԿ-ի կողմից 1961-ին այն բռնագրավվեց եւ առաջին անգամ 1980-ին տպագրվեց Շվեյցարիայում: Ասես կրկնվում էր Բորիս Պաստերնակի

«Դոկտոր Ժվագո» վեպի հետ կատարված պատմությունը: Ավելացնենք՝ 1930-ականներին Գրոսմանը ենթարկվել է ստալինյան հալածանքների, իսկ 1941-45թթ. գործող ճակատում եղել է «Красная звезда» թերթի զինվորական թղթակիցը: Չմոռանանք նաև, որ նա երկու ամիս շրջագայել է Հայաստանում եւ հեղինակել «Բարին ընդ ձեզ» ուղեգրությունը, որ լույս տեսավ Ետնահու՝ 1967-ին (1969-ին թարգմանվել է տպագրվել է նաև հայերեն):

Վերադառնալով մեր հոբելյարին՝ ավելացնենք՝ Խանգառյանը հերոս էր՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս, ինչը շատ մեծ բան է եւ ամենեւին պետք է նրան ժամանակակից հերոսի կերպար վերագրել: Ենթակայական այսպիսի սխալ միջամտությունները, անհարկի արդիականացումները միշտ էլ խաթարում են գրողի իրական կերպարը, խարխլում գնահատման արժեհամակարգը, զրկում ժամանակային հիմքից, այսինքն՝ հեռացնում պատմականությունից:

**- Երկու կարծիք լինել չի կարող, որ Սերո Խանգառյանի ստեղծագործությունները հայրենագիտական արժեք ունեն, օրինակ, «Հայրենապատումը», մյուս երկերը:**

- Խանգառյանը գալիս էր հայ դասական վեպի ավանդույթներից՝ նկատի ունեն ԲաՖֆու, Պոռչյանի վեպերը, ամմիջապես իրենից առաջ՝ Դեմիրճյանի «Վարդանանք»-ը, Ստեփան Ջորյանի «Պապ թագավոր»-ը, մյուսները: Այս տեսակետից նրա վեպերն ունեն պատմագրական նշանակություն, պատմագիտական չեն ասում: Խանգառյանի վեպերը պատմության գեղարվեստական վերաշարադրանք են ընթերցողի համար: Ունեն նաև ազգագրական, կենցաղագրական, բանահյուսական նշանակություն, որ ամենեւին ժամանակակից գրականության նպատակը չէ, բայց դասական վեպերին, դասական մտածողությանը շատ հարի է: Սկզբում ասացի չէ՞, Խանգառյանն ուրիշ ստեղծագործողի տեսակ էր. միջնադարում կարող էր լինել գուսան, ասացող, աշուղ, հիմա էլ ժամանակակից իրականության մեջ, այսինքն՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, ստեղծեց իրեն վերապահված ստեղծագործական տարածքը եւ գրողի իր կերպարը:

Ամեն մի գրող ունի իրեն բնորոշող գլխավոր վերնագիր, որ բնորոշում է նաև նրա ստեղծագործությունն ընդհանրապես: Խանգառյանի համար այդ վերնագիրը, այդ բառ-բանալին «Հայրենապատում»-ն է: Սա իր տեսակի մեջ յուրահատուկ ազգագրություն-ազգաբանություն է, եւ այս վերնագրով կարելի է ի մի բերել գրողի ամբողջ ժառանգությունը: Փոքր պատմվածքներով, «Մատյան եղելությանց» վեպով եւ բազմաթիվ այլ վիպակներով ու ծավալուն վեպերով Խանգառյանը հյուսել է իր հայերգություն-հայրենապատումը: Այստեղ նրա ամեն ինչն է, եւ ամեն ինչն է՝ որպես պատմություն, բնաշխարհ, արվեստ, կենցաղ: Սերո Խանգառյանը յուրովի հարստացրեց ազգային հիշողությունը:

**- Եվս մի դրվագ պատմեք արձակագրի կյանքից, եթե հիշում եք:**

- Ինքն իրենով միջավայր ստեղծող, միջավայրում իշխող, միջավայրին համուռոտ տվող, շրջապատը կենդանացնող իմաստուն մարդ էր: Ես տեսել եմ նրան ժողովներում, հանդեսներում, սեղանների շուրջ, հետաքրքրական մարդ էր, կենտ-

րոնական դեմք:

Ահա հիշողության եւս մի դրվագ: 1984 թվականն էր, մարտի 27-ին Պարույր Սեւակի 60-ամյակը նշվում էր «Երագ» գործարանի մոտակայքում գտնվող մի շինարարական կազմակերպության դահլիճում: Սերո Խանգառյանն էր, Համո Սահյանը, Ազատ Գասպարյանը, Սիլվա Յուզբաշյանը եւ ես: Խորհրդային տարիներին նման հոբելյանական միջոցառումներ շատ էին անցկացվում: Ավագները հուշեր պատմեցին, մյուսներն ասումնքեցին, ես զեկուցեցի: Կառավարիչը մի ընտիր ու ճոխ սեղան էր գցել: Գրական երեկոյից հետո բոլորիս հրավիրեց սեղանի շուրջ: Հավաքվեցինք, արդեն տեղավորվում էինք, մեկ էլ Խանգառյանը թե՛ էս մարդը լավ մարդ չէ, էս սեղանն էլ լավը չէ: Սոված ու հոգնած մարդիկ, հրավիրողի պատրաստականությունը, բայց չհասկացանք, թե ինչ կատարվեց: Անորոշ իրար նայեցինք՝ ենթադրելով, որ հյուրընկալի ու Խանգառյանի հարաբերություններն ինչ-որ նախապատմություն ունեն:

Հիմա սեղանից հեռացել, շիվար կանգնել, ուզում էինք մի տեղ գնալ: Մեկը, թե՛ գնանք «Արմենիա» ռեստորան, մեկն՝ այս, մյուսն՝ այն, ես էլ ասացի՝ եկեք, գնանք մեր տուն: Միանգամից համաձայնվեցին: Հեռախոս չկար, որպեսզի տանը զգուշացնեի: Գնացինք շատ անակնկալ: Այդ ժամանակ իմ բնակարանն Ավանի Թումանյան թաղամասում էր: Սա մեծ բան էր ինձ համար, այն ժամանակվա մեծանուն գրողները, անվանի դեմքերն իմ տանն էին: Խնջույքը տեսեց գրեթե մինչեւ վաղ լուսաբաց: Սեղանի գլխին Սերո Խանգառյանն էր, կողքին՝ լուռ ու գլխահակ Համո Սահյանը:

Կան նաև այլ պատմություններ: Շրջիկ իմաստախոսություն է դարձել Ռոբերտ Ալեքսանյանին ասած «Է՛լ ինչով օգտակար լինեմ» արտահայտությունը, հաճախակի է հիշվում մի մե՛նե՛ծ տարա եւ մի փո՛քր տարա մեղրի պատմությունը: Հիմա դրանց ժամանակը չէ, թե չէ կպատմեի: Մարդը ոտքի վրա պատմություն էր դառնում, խոսք ու գրույցի առարկա էր դառնում: Շրջիկ այս գրական կերպարն ամեն մի ստեղծագործողի հատկանշական չէ. այդպիսին էին Չարենցը, Շիրազը, Սարոյանը, անգամ Հուսիկ Խանդամուրը: Բանավոր Չարենցին հիմա շատերը գիտեն: Այդպես պետք է պահպանենք բանավոր Խանգառյանին, Շիրազին, Սարոյանին, Խանդամուրին եւս, հավաքենք, գրի առնենք նրանց հետ կատարված պատմությունները, նրանց սրամտությունները, արարքները... Ասացի ու հիշեցի Սարոյանին 1978թ. Հայաստանի գրողների միությունում եւ Սերո Խանգառյանին՝ այլ հայ գրողների հետ բեմի կիսախորքում շրջանաձեւ նստած: Սարոյանն այս անգամ Հայաստան էր եկել Լեւոնգորաղով, Նեսեյի պողոտայով, Ակակի Ակակիեւիչի կերպարի հիշողություններով եւ, բեմում կանգնած, իր կյանքն էր պատմում: Սարոյանը խոսքի սկզբում դիմեց շուրջը բոլորված հայ գրողներին, նաև Սերո Խանգառյանին... Բայց սա քիչ երկար պատմություն է, սա եւս թող մնա մեկ ուրիշ առիթի:

**- Եթե հնարավորություն տրվեր Սերո Խանգառյանի երկհատորյակը կազմել, ո՞ր գործերը կընդգրկեիք:**

- Եթե նկատի ունեք գրողի ընտիր երկերը, արդեն նշածս «Մատյան եղելությանց» վեպը, «Մխիթար Սպարապետ» պատմավեպը, մի քանի պատմվածք: Գիտե՞ք, մենք մեր գրող-

ներին լիարժեք չենք ճանաչում: Խանգաղյանի վերջին վեպերը, ճիշտ է, ի վերջո չվրիպեցին գրական ուշադրությունից, ի վերջո հասան նաև ընթերցողին, բայց չեն կարճում, թե մեր գրականագիտությունը յուրացրեց. ոչ թե բարդության պատճառով (այդպիսի խնդիր չկա), այլ պարզապես չընթերցեց, իրենը չդարձրեց: Շատերը չեն էլ կարդացել: Բացի դրանից՝ Խանգաղյանը միշտ հանդես է եկել հողվածներով, ակնարկներով, ելույթներով, նամակագրությամբ: Այս ամբողջ ժառանգությունը պիտի հավաքել: Ձեր հարցին ի պատասխան՝ ես միշտ կողմնակից եմ մի բանի. նախ՝ գրողը պիտի ամբողջական ներկայացվի իր բոլոր էջերով: Այս դեպքում խոսքը թույլ ու ուժեղ գործերին չի վերաբերում, այլ ամբողջական ստեղծագործական վաստակին, ինչից հետո դրանից կարելի է ընտրովի առանձնացնել մեկ-երկու-երեք գործ՝ հատորով տպագրել, առանձին տպագրել, ընտիր երկեր հրատարակել ես այլն:

**- Սերո Խանգաղյանն ազգային գործիչ էր, կուզեինք՝ խոսքը այդ մասին: Նամակներ է գրել Խորհրդային Միության ղեկավարությանը Դարաբաղի հարցի առնչությամբ դեռևս տասնամյակներ առաջ, արժարժեք մեր պահանջատիրությանն առնչվող հարցեր...**

- Այո՛, Խանգաղյանը ոչ միայն պատմության մեջ էր, պատմական անցյալի խորքերում՝ իր հերոսների հետ, այլևս պատմություն կերտող անհատականություն էր: Հիշում եմ նրա ելույթները գրողների միության ժողովներում, նրա բանավոր ելույթները տարբեր հանդիպումների ժամանակ, գրավոր ելույթները մամուլում. միշտ էլ հայրենասիրական ոգին նրանից անպակաս է եղել, միշտ էլ հանդես է եկել որևէ մի առաջարկով: Եվ մեր հերոսները ոչ միայն պատերազմի դաշտում էին, այլև թիկունքում, հերոսները միշտ իրենց գործերով են հերոս: Այս տեսակետից Խանգաղյանը բարձր քաղաքացիություն դրսևորեց 1988-ից սկսված դարաբաղյան շարժման ժամանակ:

Ընտրվել էր ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի պատգամավոր: Գրում էր, ելույթներ ունենում, դիմում ԽՍՀՄ բարձր ղեկավարությանը: Երկրամբ այն անվանի հայրենասեր գործիչների հետ էր, ովքեր համուն Արցախի Մոսկվայում հացադուլ էին անում, պահանջներ ներկայացնում: Խանգաղյանը թե՛ որպես գրող, թե՛ որպես գործիչ միշտ էլ հայրենիքի ոգին վառ էր պահում: Ահա ձեռքիս է ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Անատոլի Լուկյանովին հասցեագրած շատ ազատամիտ եւ Արցախի պահանջատիրությամբ գրված «11 մարտ, 1991» թվակիր նամակը, որ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մի հրովարտակ ասես լինի:

Նորից եմ ասում, կա ընթերցողների մի շրջանակ, որ, ասենք, եթե կարողա բարդ գրականություն, գլուխը կցավի, կհոգնի, չի կարողանա: Չարենցի վերջին շրջանի գործերը, ասենք՝ «Եպիքական լուսաբաց»-ը կամ «Գիրք ճանապարհի»-ն չի կարող հաղթահարել, նրանը «Տաղարան»-ն է. դարձյալ առանց հասկանալու գոնե կդնդան՝ «Կուզեմ հիմի փչե գուռնեն...»:

Ի՞նչ է ասածս. Խանգաղյանի ընթերցողն ուրիշ էր: Երեւոյթն ուրիշ կերպ պետք է դիտել եւ գրականության տարածքի մեջ էլ իր համապատասխան գնահատումները տալ:

Սրանք շատ պատասխանատու բաներ են, չափազանց պատասխանատու է այս ամենի մասին խոսելը: Մինչդեռ ուրիշները խուսափում են, որովհետեւ կամ փաստերին չեն տիրապետում, կամ զգուշավոր են. ոչ թե գրական անկեղծությունն է նրանցը, այլ գրական դիվանագիտությունը: Իսկ դա արդեն թե՛ գեղարվեստական գրականության, թե՛ գրական քննադատության մասն է: Ասպարեզը լցված է այդպիսի մեռելածին գրականությամբ ու քննադատությամբ: Նայում ես՝ գրական պաշտոնյաներ են, մոտենում ես՝ գրական փերեզակներ...

**- Քանակ-որակ. այս հասկացությունը կիրառելի՞ է գրականության վերաբերյալ, թե՞ այլ ոլորտից է:**

- Քանակ-որակի խնդիր չկա, ով ինչ ձիրք ունի, ինչ գրիչ ունի՝ շատի մեջ էլ է նույնը, քչի մեջ էլ: Թույլ ստեղծագործողը, եթե տարեկան մեկ էջ գրի, էլի նույն թույլ էջն է գրելու, տաղանդավոր գրողը, օրական մեկ էջ գրի, էլի նույն տաղանդավոր էջն է գրելու: Մի ժամանակ երիտասարդ գրողների մեջ մի ցեց ընկավ, թե, իբր, քիչ գրելը տաղանդավոր լինելու նշան է. մեկ էլ տեսար այդ մտասելեռմամբ փստահարված հերթափ «հանճարն» ասում է՝ այսօր կես տող գրեցի: Այսպես բանը պիտի հասնի կես բառին՝ այսօր կես բառ գրեցի: Չէ՛, այդպես չէ: Գրական աշխատանքը բուն ստեղծագործողի համար 24-ժամյա աշխատանք է: Լուրջ ստեղծագործողը մշտապես գրասեղանի առջեւ է, անգամ՝ ճանապարհով քայլելիս, գիշերը՝ քնած ժամանակ. կիսատ թողած տողն է գալիս, գաղափարն է ամբողջանում, հանգն է զրնգում, պատկերն է խայտում, վրիպակն է խայթում, միտքն է շարունակվում...

Ձեր հարցը, անշուշտ, ենթաշերտ ունի եւ վերաբերում է Խանգաղյանին, ով գրիչը ձեռքից վայր չէր դնում: Այդ իսկ պատճառով ստեղծեց բավականին հարուստ, ծանրակշիռ վաստակ: Նա իր գրելու ոճն ուներ՝ նկարագրական-պատմողական-դիպաշարային արձակ: Ամեն տեղ նույնն է: Այլ բան է, որ ձեռքը գնար եւ որոշ սեղմումներ աներ: Բայց չէ՛, չէր անի, որովհետեւ իր արտահայտման ձեւն էր այդպիսին՝ ընդարձակ, տարածական, ծավալային...

Քանակ-որակ հասկացությունը, որ հնչեց Ձեր հարցի մեջ, արվեստի համար չէ: Եթե Հայաստանի գրողների միության մոտ 400 անդամը որպես քանակ միավորվեն՝ չեն կարող վերափոխվել որակի, ասենք՝ Չարենցի: Քանակը երբեք որակ չի դառնում, բայց որակը, եթե քանակի է վերածվում, դրվատելի է:

**- Հիմք ընդունելով տիկին Ժենյայի ռեպլիկը, Դուք Սերո Խանգաղյանի գրական ժառանգության մասին խոսելիս օգտագործում եք գրականագիտության մեջ հազվադեպ գործածվող «գեղարվեստական սուտ» եզրույթը: Ի՞նչ ասել է «գեղարվեստական սուտ», միգուցե գործածենք «երեւակայություն», «գեղարվեստական երեւակայություն» եզրույթները:**

- Դուք գործածեք, իսկ ինձ մի՛ ներքաշեք Ձեր անհարկ մտահոգությունների ոլորտը: Ինչ անհրաժեշտ էր եւ ինչպես անհրաժեշտ էր, ես արդեն ասացի ու բացատրեցի: Այդտեղ կար եւ գեղարվեստական սուտը, եւ ստեղծագործական երեւակայությունը, եւ հորինելու շնորհքը, որ հասնում է արվեստի աստիճանի:



- **Պարոն Գասպարյան, Սերո Խանգադյանը բազմաթիվ հոդվածներում, հարցազրույցներում, գրախոսականներում, դիմանկարներում քննարկում է գրականությանը, գրականագիտությանն ու գրաքննադատությանն առնչվող հարցեր: Եվ ուրեմն՝ կարող ենք Սերո Խանգադյանին ընկալել նաև իբրև գրականագետ, գրաքննադատ:**

- Այո՛, Խանգադյանը գրողի ամբողջական կերպար էր: Անշուշտ, նրա ժառանգության անբաժանելի էջերն են գրաքննադատական, բանավիճային հոդվածները, նաև ակնարկներն ու հրապարակագրությունը: Այդ ամենը լրացնում են նրա ստեղծագործական դիմանկարը: Դրանցում գրական այնպիսի հարցադրումներ են, որոնց պատասխանել է իր գեղարվեստական գրականությամբ: Այո՛, Խանգադյանը եւս երբեմն անհրաժեշտություն է ունեցել մամուլում հրապարակավ պաշտպանելու իր ստեղծածը, գրախոսությունների, հոդվածների ձեռով անդրադառնալու իր ժամանակակիցներին: Այս հարցում նա եղել է չափից ավելի շռայլ, երբեմն այն աստիճանի, որ նրա գնահատումները եղել են գրապատմական շավիղից դուրս ընկած գերագնահատումներ: Թերթեք մամուլը, առանձին առաջաբաններ ու վերջաբաններ եւ կհամոզվեք:

- **Ի՞նչ կասեք Սերո Խանգադյանի ստեղծագործությունների լեզվի ու ոճի առանձնահատկությունների մասին:**

- Այդքան ծավալուն գրականություն ստեղծած գրողն անպայման պիտի նաև լեզվի, ոճի խնդիրներ ունենար: Խանգադյանի գրականությունը բավականին ընդգրկում է՝ պատմական դեպքեր, ռազմական գործողություններ, քաղաքային եւ գյուղական կյանք, տնտեսություն, մարդկային փոխհարաբերություններ, կենցաղ եւ այլն: Բնական է, որ այդ ամենը վերարտադրելու համար անհրաժեշտ էր համապատասխան բառապաշար: Խանգադյանն իր երկերում կիրառել է բառապաշարային գրեթե բոլոր շերտերը՝ գրական հայերենը հարստացնելով նորաբանություններով, հնաբանություններով, լեզվական շարժի մեջ ղեկելով որոշ օտարաբանություններ, բարբառային բառեր: Նրա լեզվի ու ոճի ուսումնասիրությամբ զբաղվել եւ զբաղվում են առանձին լեզվաբաններ:

Ես հիշում եմ, որ նա կարելու էր բարբառներից օգտվելու անհրաժեշտությունը եւ նշում էր, որ բարբառներում շատ բառեր կան, որոնք մեր գրականությունը կարող է օգտագործել, օրինակ՝ «քարշակ» բառը: Այդ բառի կառուցվածքային նմանությամբ ես նրան առաջարկեցի օգտագործել «քայլակ» բառը՝ որպես ռուսերեն «խողունակ»-ի հայերեն թարգմանություն՝ «երեխայի քայլակ»: Իսկ ի պատասխան՝ ես նրան հիշեցրի խոյի բարբառում կիրառվող մաքուր գրաբար մի բառ: Խոսքի մեջ մենք ասում ենք՝ «Երեկ չէ, մյուս օրը հանդիպեցի այսինչին»: Իսկ խոյեցին ասում է. «Երեկ չէ, եռանդ հանդիպեցի այսինչին»: «Երեկ չէ, մյուս օրը» արտահայտության փոխարեն՝ «եռանդ», այսինքն՝ երեք օր այն կողմ (եռ+անդ): Այս «եռանդը» չպետք է շփոթել «ջանք ու եռանդի» հետ, որտեղ «եռանդ» նշանակում է ավյուն, ուժ, բուռն ձգտում: Լինելով հույժ հայեցի բառ՝ այն հանդիպում է միայն բարբառում, մինչդեռ նրա տեղը նաև գրական լեզվի մեջ է:

Շատ էր կիրառում հնաբանություններ՝ համապատասխան

միջավայր ստեղծելու համար: Բաֆֆին ասում էր պատմավեպ են գրում, բայց «մյուզեոններ» չունենք, որտեղ մի բան ցուցադրվի՝ գենք-գրահ, հագուկապ, որ կարողանամ նկարագրել պատմական ժամանակաշրջանը: Բայց նաև մխիթարում էր իրեն այնքանով, որ մեր կյանքը Պլուտարքոսից ու Չերոկոտոսից այս կողմ առանձնապես շատ չի փոխվել՝ նույն կաշվե նավակներով Եփրատի ու Տիգրիսի վրա նավարկում են, նույն խուղերում նույն կենցաղով ապրում, ուստի կարող է հենվել այսօրվա վրա եւ նկարագրել անցյալը:

- **Նա համարձակություն ունեցավ ստեղծագործել գրականության գրեթե բոլոր ժանրերով՝ վեպ, վիպակ, պատմվածք... Հատկապես ո՞ր ժանրում էր կատարյալ:**

- Բոլոր տեսակներով (Ձեր ասած ժանրերով) ստեղծագործելը համարձակության նշան չէ, գրական խառնվածքի արտահայտություն է, այն խառնվածքի, որի առանձնահատկությունները մշեցի մեր զրույցի սկզբում: Դա գրական նկարագրի տեսակ է, որ ունակ է ամեն ինչի: Դա ո՛չ լավ է, ո՛չ վատ, տեսակի հարց է: «Մատյան եղելությանց» վեպն իր ձևաչափի մեջ թերեւս Խանգադյանի ամենահաջող գործերից մեկն է, ինչպես արդեն ասել եմ: Ծավալուն գործերում նրա ուժը գործողություններին, իրադարձություններին հենված երեւակայությունն էր, ինչպես օրինակ «Մխիթար Սպարապետ»-ը: Այսօրվա հեռավորությունից ծավալի հարցում նրան քննադատելը ճիշտ չէ. մարդն այդպես է մարմնավորել իր պատկերացրածը: «1971, ամառ» գրքում շատ հետաքրքրական պատմվածքներ կան: Այդ գիրքը ժամանակին եւ գրախոսել են մամուլում: Կարելի է ատենախոսության մյուս հանձնարարել երիտասարդներից մեկին՝ «Գրական տեսակները Խանգադյանի ստեղծագործության մեջ: Գրական ավանդույթը եւ գրողի անհատականությունը»:

Կարելի է դիտարկել պատմավեպի ձևավորումն ու զարգացումը հայ եւ համաշխարհային գրականության մեջ եւ Խանգադյանի պատմավեպերի ստեղծման առանձնահատկությունները: Գրական տեսակներն ունենալով ձևաբովանդակային ընդհանրություններ՝ նաև շատ անհատական առանձնահատկություններ ունեն: Ահա՛ տիպականի եւ անհատականի բացահայտումն էլ կդառնա նշված ատենախոսության կամ հետազոտության բերած նորությունը:

- **Սերո Խանգադյանի ստեղծագործությունները ժամանակին դարձան նաև կինոսցենարի, բեմադրությունների սցենարների հիմք: Եթե մեզ մոտ դա երբեմն բացատրվում էր իշխող գաղափարախոսությամբ, ապա ինչո՞ւ էին դրանք (հենց այդ ոլորտներում) գրավիչ դառնում նաև սփյուռքում:**

- Խորհրդային ժամանակ գրականությունը վիթխարի դեր ուներ հանրային կյանքում: Խանգադյանը, բացառությամբ կյանքի վերջին տասը տարին, ապրեց այդ ժամանակաշրջանում. նրա պատմավեպերի համար գրախոսություններում հերթեր էին: Անկախ ստեղծագործության ուժեղ կամ թույլ լինելուց՝ մարդիկ կարդում էին դրանք, հաճույքով դիտում այդ գործերի բեմադրություն (Ձեր ասած սցենարն է) հիման վրա ստեղծված շարժանկարները: Այն, որ դրանք սփյուռքում անպայման նպաստել են հայապահպանման գործին, անժխտելի է, բայց

ժամանակն էր այդպիսին. ո՛չ սփյուռքն էր մեզանից խրտնած, ո՛չ էլ մենք էինք մեզմից հիասթափված, ինչպես հիմա, դա փոխադարձ սիրո մի շրջան էր: Այն ժամանակ 1915-ին բռնազաղթի հետևանքով Արևմտահայաստանից հեռացած հայությունն էր, որի մեջ շատ ամուր էին հայրենիքի գաղափարը, հայրենասիրությունը: Սա ուրիշ սփյուռք էր, որտեղ խանգարյանի ծայրը լսելի էր: Հիմա Հայաստանից հեռացածների սփյուռքն է, որոնց մեջ ո՛չ հայրենասիրություն կա, ո՛չ հայրենիքի կարոտ: Ընդհակառակը՝ միայն հայրենասիրություն էր: Սա է իրողությունը: Հայրենիքից փախչողը ոչ միայն խուսափում է հայրենիքի հիշատակներից, այլև ծաղրում է դրանք: Հիմա նորոգված, գործնական հայրենասիրության ժամանակն է, որ պահանջում է գործունեության հստակ ծրագիր: Գուցե թե միայն այդ ձևով հնարավոր լինի դեռևս միաբանել սփյուռքի հայությանը: Իսկ դրա համար արդիական վեպերի հիման վրա ստեղծված նոր բեմադրվածքներ են պետք: Այդպիսին կարող են ծառայել Մայքլ Արլեն Կրոստերի «Դեպի Արարատ», Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» վեպերը եւ համանման այլ գործեր, որոնց հիման վրա նկարահանվել են «Մայրիկ»-ը (Անրի Վերնոյ-Վշոտ Մալաքյան), «Արտույտների ագարակը»... Համեմայնդեպս, «Հուստ աստղ» եւ «Ձորի Միրո» շարժանկարների ժամանակը գեղարվեստորեն ավարտվել է, գործասերում դրանք դեռևս կարող են ունենալ դաստիարակչական նշանակություն:

**- Ի՞նչ կասեք Սերո Խանգաղյանի բակունցյան աղետների կամ նրա գրականության վրա Բակունցի ազդեցության մասին:**

- Երբ ծնվեց Սերոն, Բակունցը Լոր գյուղում ուսուցչություն էր անում: Խանգաղյանը հուշեր էր գրում Բակունցի մասին, այդ ժամանակ ես էլ Բակունցի կյանքի եւ գործունեության փակ էջերն էի հրապարակում, հաճախ էր զանգահարում տուն, փաստեր ճշտում, իսկ ես ինչ նոր բան կար, ասում էի: 1937-ին, երբ Բակունցին գնդակահարեցին, Խանգաղյանը 22 տարեկան երիտասարդ էր: Մինչ այդ եղած-չեղածի մասին ինքը գրել է: Հուշերում գրում է, որ Սուրեն Այվազյանի եւ մի երրորդ գրողի հետ Գորիսում ստեղծել են ԽԱՍ անունով գրական խմբակություն, ինչն, իբր, Բակունցն օրհնել է եւ նրանց հրավիրել երեւան՝ ընդունելու Հայաստանի գրողների միության շարքերը: Բայց քաղաքական բռնություններն ու Բակունցի գնդակահարությունն ի չիք են դարձրել այդ ծրագիրը:

Ինչ վերաբերում է նրանց ստեղծագործական աղետներին, այդ մասին այսքանը՝ Բակունցի «Կյորես» վիպակի եւ Խանգաղյանի «Մատյան եղելությանց» վեպի միջեւ առնչությունն ակնհայտ է: Դա նկատելի է նաեւ որոշ պատմվածքներում: Ընդհանուր են միջավայրը, հերոսների խոսվածքը, հոգեբանությունը: Լայն ընդգրկմամբ գրական առնչություններն առանձնապես շատ չեն, ինչը պայմանավորված է ստեղծագործական խառնվածքների տարբերությամբ:

Տեսե՛ք՝ Ակսել Բակունց-Համո Սահյան՝ արտակարգ նմանություն-ընդհանրություն կա, Ակսել Բակունց-Համո Մաթեոսյան՝ նմանություն գրեթե չկա: Գյուղն է, բայց տարբեր աշխարհներ են, տարբեր բանավեստ է, տարբեր լեզու է ու

ոճ: Համո Սահյան-Համո Մաթեոսյան՝ նմանություն շատ կա, եւ դա հատկապես աշխատանքի, աշխատավոր մարդու, բնության, բնաշխարհի հանդեպ վերաբերմունքի մեջ: Համո Սահյան-Սերո Խանգաղյան գրական ընդհանրություն դարձյալ չկա, թեւ եթե շատ ցանկանանք եւ լավ փնտրենք, հեռավոր կապեր կգտնենք. տեղային շունչն է, երանգը, որ այդպես էլ պիտի լիներ: Այս դեպքում աղետներն այնքանով են, որքանով որ նույն տարածաշրջանի հոգեկերտվածք ունեցող ստեղծագործողներ են: Տեղային հայացք կա, որ ընդհանուր է բառապաշարում, բնակարաններում, մարդկային փոխադարձ հարաբերությունների նկարագրություններում, բնաշխարհի հերոսների կերպարների մեջ: Ներսի աչքը չի զգա այդ նմանությունները, դրսից կզգա: Կարճ ասած՝ Բակունցի հետ գործիսյան միջավայրով ու Սյունիքի բնաշխարհով պիտի պայմանավորել ընդհանրությունը:

**- Արևմտահայության ճակատագրի քննարկումները, ինչ-որ չափով սկզբնավորված Ակսել Բակունցի «Ծիրանի փող»-ով, շարունակություն ունեցան: Արդյո՞ք դրա լավագույն դրսևորումներից մեկը Սերո Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպը չէ:**

- Ուղիղ գծով տանել կապել Բակունցի հայեցակարգին՝ ճիշտ չի լինի: Բակունցն իր կյանքով վճարեց «Ծիրանի փողը» պատմվածքի համար. նրան մեղադրեցին ազգայնամոլության մեջ եւ գնդակահարեցին: Բակունցը բացեց արևմտահայության ճակատագրով մտահոգությունների ճանապարհը, հաջորդեցին Դաշտենցը, Քոչարը, Գալշոյանը, ինչ-որ չափով Հովհաննես Մելքոնյանը եւ ուրիշներ: Մահարին գրեց «Այրվող այգեստաններ» հանճարեղագույն վեպը, որ, իմ կարծիքով, 20-րդ դարի մեր վեպերի վեպն է՝ Չարենցի «Երկիր Նաիրի»-ի հետ մեկտեղ: Ասել, թե Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպը «Ծիրանի փող»-ի անմիջական շարունակությունն է, ճիշտ չէ: Այդ վեպն արևմտահայության եւ Արևմտահայաստանի ցավով ու հիշողությամբ գրված վեպերից մեկն է: Նյութի ընդհանրությունը դեռևս նախադրյալ է, մինչդեռ շատ կարելու են գրության հայեցակարգը, բուն ասելիքը եւ, ի վերջո, ասելիքի ձևը: 1915 թվականն է՝ իր հերոսացման ճիգերով եւ ողբերգական հետեւանքներով, մարդկային ճակատագրեր են, որոնց կյանքն անցնում է հուզմունքի թանձր ալեբախության միջով: Ավելացնեմ՝ շատ կարելու է նաեւ թե տվյալ երկը գրապատմական ինչ ժամանակների ծնունդ է. Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպի գրության ժամանակն այլ էր, Բակունցի «Ծիրանի փող»-ինը՝ այլ:

**- Մենք արդեն խոսեցինք պատմական թեմայի մասին: Բայց արդյո՞ք պատմական թեմաներով գրական ստեղծագործություններն այլևս հրատապ չեն, մասնավորապես որ մեր ազգային հիմնախնդիրները ոչ միայն չեն լուծվել, այլև ավելի են սրվել: Արդյո՞ք պատմության դասերի կարիքն այլևս չունենք:**

- Գրողների, գրականագետների մի ուժեղ փաղանգ հեռացավ կյանքից, իսկ նրանցից հետո եկան սանքյուլոտները (այդպես ասում էին ֆրանսիական հեղափոխության ետեւից գնացողներին), որոնց ստեղծել էին այդ ուժեղներն ու մեծերը:

Նրանցից հետո եկան չնչին մարդիկ, ովքեր նրանց մոտ կան վարորդ էին աշխատում, կան նրանց ձեռնափայտն էին բռնում, կան նրանց գրքերն էին սրբագրում, զեկուցումները մեքենագրում եւ քօնաքերան ու քօնաշուրթ քօնելով քօնում էին անգամ այն դեպքում, երբ գոնե իրենց կանանց համար պիտի առնվազն խանդի զգացում ունենային: Գոնե այսքանը, որովհետեւ ո՛չ մասնագիտական, ո՛չ էլ մարդկային պատվախնդրությունն իրենց համար չէր: Ահա այդպիսիները հետագայում դարձան դոկտորներ ու պրոֆեսորներ, վարիչներ ու կառավարիչներ, օրենսներ ու տնօրեններ եւ էլ ավելի ապականցեցին կյանքը: Նույն պատկերն է գրականության մեջ. անվանի գրողներին չհաջողեցին այնպիսիները, ովքեր պետք է նրանցով շարունակվող արժեհամակարգը փոխանցեին սերունդներին:

Ինչ վերաբերում է պատմության դասերին, ապա դրանք գրողների՝ համար են. նրանք են գրքից գիրք դասեր առնում, այլ ոչ թե ժողովուրդը, որ այդ դասերը բնագործ գիտի եւ գրքերը կարդում է ոչ թե իր բնագործ ստուգելու, իր արյան մեջ եղած իրադարձությունների, թվերի ու փաստերի մեջ տեսնելու համար, այլ գրողին ստուգելու, նրա ճշտին ու սխալին արձագանքելու նպատակով: Մեծերից մեկին անգամ հարց են տվել, թե՛ այդքան գիրք գրելուց հետո աշխարհում ի՞նչ փոխվեց: Եվ նա պատասխանել է՝ աշխարհում ոչինչ չփոխվեց, գրքից գիրք միայն ես փոխվեցի:

Այստեղ մի պահ կանգ առնենք. ներգործությունը, որ մեր գրականությունն ունեցավ հանրային կյանքում, մինչեւ 1988 թվականն էր: 1988-ի շարժումը պայմանավորված էր նաեւ խորհրդային ժամանակաշրջանի՝ հայրենասիրական պոռթկումը ձեւավորած գրական ժառանգությամբ՝ Չարենցից, Բակունցի «Ծիրանի փող»-ից մինչեւ Շիրազ, Սահյան, Սեւակ ու Խանգաղյան: 1988-ից չէ, բայց 1990-ականների սկզբից գրականությունը մղվեց ետնախորք, կորցրեց իր ազգասնուցիչ, ազգակազմակերպիչ եւ ազգակերտիչ դերը: Սակայն բարձր գրականությունը շարունակում է մնալ պահանջված: Ուստի, այսօր էլ այդպիսի բարձր գրականությամբ պիտի ստեղծել այնպիսի հանրություն, որ գոնե ազգային շահի՝ դեմ դուրս չգա, ավանդույթի՝ առողջ գիծը շարունակի, ժողովրդի ժառանգությունը պահպանի: Այն, ինչ դժվարությամբ գրականությունն արեց խորհրդային շրջանում, անկախությունից հետո դեռեւս իր արտահայտության նոր ձեւը, ճիշտ ձեւը, անհրաժեշտ ձեւը, լիարժեք ձեւը չի գտել: Այդ իսկ պատճառով անկախության շրջանում գրականությունն այլեւս գերակշիռ դեր չունեցավ հանրային կյանքում: Տպաքանակներն առնվազն տասը անգամ նվազել են, ինչը նշանակում է տասը անգամ պակասած ընթերցող եւ հանրային ներգործության շրջանակ: Գրախանութները տասը անգամ պակասել են, ինչը նշանակում է միջավայրի կորուստ: Արդի գրականությունը մեր ազգային հոգեկերտվածքի ձեւավորման գործում հիմա ծանրակշիռ դեր չունի: Որակն այնքան է ընկել, ասելիքն այնքան անկարելու է, որ հիշեցնում է Չարեափի ձորում սովից ործկացող այն քոստ աղվեսին, որ մի բան գտնելու հույսով (գրականության դեպքում՝ ընթերցող) գերեզմանոցների շուրջը պտտվում է: Այս վիճակն ստեղծեցին մեր գրողները՝ իրենք հեռացան ստուգված արժեքներից եւ դրանով իսկ հեռացրին

ընթերցողին գրականությունից: Այն առաջատար դերը, որ ուներ գրականությունը համազգային ոգի ստեղծելու գործում, հիմա, ցավոք, այլեւս չունի: Հատուկեմտ դեմքեր կան, ուրեմն ամեն ինչ դեռեւս կորած չէ:

Սերո Խանգաղյանը մնաց արդեն իսկ ավարտված դարաշրջանի մեջ, որտեղ իր դերը գնահատելի է ու նշանակալի:

## **- Զրույցի ընթացքում գնահատականներ հնչեցին, բայց, այնուամենայնիվ, կխնդրեինք ամփոփել ասվածը:**

- Սերո Խանգաղյանն անպայման իր տեղն ունի 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության պատմության մեջ: Ուրեմն նաեւ իր վաստակի գնահատությունը պիտի ունենա: Արհեստավարժ գրականագետը պիտի գրական ժամանակն ամբողջական տեսնի եւ բոլորին իր բնութագրական գնահատականը տա: Գրական կյանքում կարող են լինել շատ անվանի անուններ, կարող են լինել պակաս անվանի անուններ: Բայց եթե նրանք գրապատմական ընթացքի մեջ են, պիտի իրենց տեղն ունենան գրականագիտության հարացույցի մեջ: Այդպիսի յուրաքանչյուր գրող իր առանձնահատկությունն ունի եւ չպետք է վրիպի գրականագետի կամ գրաքննադատի աչքից: Եթե գրականագետը վրիպեց կամ քնահաճություններ դրսեւորեց, դա կլինի ինքնագործունեություն: Այդ դեպքում անտեղի կլինի մտածել լիարժեք ու ճշմարիտ գրականության պատմության մասին:

Միով բանիվ, Խանգաղյանը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության մեջ իր սահմաններն ունեցող մի լայնածավալ տարածություն է, որ ունի եւ իր ապատներն ու անապատները, եւ իր արաններն ու ապարանները: Մուտքն այդ աշխարհ ազատ է, ներկայությունը՝ ցանկալի...

Հիշեցնեն՝ տասը տարի առաջ Խանգաղյանի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ ես առիթ եմ ունեցել լինելու Գորիսում, տեղի Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնում մասնակցելու հոբելյանական հանդիսությանը եւ խոսք ասելու անվանի գրողի մասին: Ես ասել եմ. Խանգաղյանն իր ստեղծագործություններով երկարեցրեց մեր ժողովրդի պատմական հիշողությունը: Հայ արձակում իր կարողությունների չափով նա փորձեց անել այն, ինչ Շիրազն ու Սահյանը՝ պոեզիայում: Նրանք մերթ պատմության, մերթ բնության ու բնաշխարհի արահետներով գնացին դեպի ժողովուրդը: Եվ գնացին անմնացողը նվիրումով:

Հիմա ես ես իմ խոսքը ցանկանում եմ ավարտել ճիշտ այն արտահայտություններով, ինչ տասը տարի առաջ:

Որպես գրականագետ, որպես մի հայ մարդ՝ ուզում եմ գնահատության խոսք ասել Սյունիքի ժողովրդին, Սյունիքի պետական այրերին, «Սյունյաց երկիր» թերթի զխավոր խմբագրին եւ ամբողջ աշխատակազմին, որ շարունակում են իրենց մեծերին այսօրինակ համաժողովրդական տոնախմբությամբ մեծարելու թանկ ավանդույթը: Այսպես ժողովուրդը ժողովուրդ է դառնում՝ միաբանվելով իր ազգային հոգեւոր եւ նյութական արժեքների շուրջ: Այսպես պահպանվում ու շարունակվում է Հայրենիքը:

**Հարցազրույցը՝  
ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

# Սերո Խանգադյանը մեծ անհատականություն է



**ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ**  
ՀՀ ԳԱՎ ակադեմիկոս

**Ս**երո Խանգադյանը հայ դասական գրականության ակադեմիկոսի դերերից է՝ իր գաղափարական հարցադրումներով, ստեղծագործության լայն ընդգրկումներով: Գիշտ է, նա ի սկզբանե գրել է բանաստեղծություններ՝ նույնիսկ

ժողովածու հրատարակելով, ուժերը փորձել է նաեւ թատերական գործեր գրելու մեջ, բայց իր տաղանդի ամբողջ ուժը դրսեւորեց գեղարվեստական արձակի բնագավառում: Գեղարվեստական արձակը, իհարկե, տարբեր ժանրեր է ընդգրկում, բայց Խանգադյանը ցույց տվեց իր վարպետությունը եւ պատմվածքում, եւ վիպակում, եւ վեպում:

Որպես դասական վեպերի հեղինակ՝ նա անդրադարձավ եւ հայ ժողովրդի պատմական անցյալին, եւ մարդկային տարբեր փոխհարաբերությունների:

Ստեղծելով պատմավեպերի մի ամբողջ շարք՝ «Մխիթար Սպարապետ», «Սեր գնդի մարդիկ», «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ», «Շուշի» եւ այլն, նա ապացուցեց, որ հայ պատմավեպի առաջատար դերերից է եւ պատմավիպագրության ասպարեզում գեղարվեստական նոր խոսք է ասում: Առանձնահատուկ ուզում եմ նշել, որ «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպը եղեմնի գեղարվեստական արտացոլումը ներկայացնող առաջին վեպերից է: Ինչ վերաբերում է «Թագուհին հայոց» վեպին, ապա այն իսկական մարգարիտ է, որ ոչ միայն արտացոլում է հայ ժողովրդի պատմական անցյալը, այլև ուրույն ներաշխարհով եւ հոգեբանական անցումներով հետաքրքիր կերպարներ է ստեղծում: Այն տարբերվում է Խանգադյանի մյուս վեպերից իր կառուցվածքով՝ շեշտը դնելով միաստվածության գաղափարի ճշմարտացիության վրա: Մարի-Լույս թագուհու, Կարաննի թագավորի կերպարները պարզապես հրաշք են:

«Շուշի» վեպում նա անդրադարձավ հայ ժողովրդի պատմության վերջին իրադարձություններին եւ նանրամասն ներկայացնելով Շուշիի կոլորիտը՝ ցույց տվեց, որ այն իսկական հայկական բերդ է:

Համեմատելով Բակունցի «Կյորես» վիպակը Խանգադյանի «Մատյան եղելությանց» վեպի հետ՝ կարելի է ասել, որ այն «Կյորես»-ի տրամաբանական շարունակությունն է, որտեղ հեղինակը, ներկայացնելով Գորիսի ժամանակակից կյանքը,

ցավ է ապրում, որ Կյորեսը դիմազրկվել է, ափսոսում, որ շատ արժեքներ կորչում են:

«Երեք տարի 291 օր» վեպը, որ կարելի է Հայրենական պատերազմի տարեգրություն համարել, ոչ միայն վավերագրական արժեք, այլև ճանաչողական նշանակություն ունի, իսկ «Հայրենապատում»-ով Խանգադյանը ներկայացրեց իր շրջագայությունները Հայաստան աշխարհով, երկրի սոցիալ-քաղաքական վիճակը: Ես կարող եմ մեկ առ մեկ նկարագրել վեպերը, բայց սահմանափակվեմք այսքանով:

Իսկ Խանգադյանական վիպակները հարստացնում են մեր գեղարվեստական արձակը՝ այն հասցնելով մի նոր մակարդակի, վերջապես Սերո Խանգադյանը պատմվածքի իսկական վարպետ է: «Որոտանի կիրճում», «Կորած արահետներ», «Լուսաբաց է լեռներում» եւ այլ ժողովածուներում ստեղծում է կերպարներ, որոնք շատ հրապուրիչ են, հոգեբանորեն համոզիչ ու տրամաբանված: Թերեւս դա պայմանավորված էր նրանով, որ Խանգադյանը շատ լավ էր ճանաչում իրականությունը, մարդկանց, կարողանում էր գեղարվեստորեն արծազանքել ժամանակի սոցիալ-քաղաքական տարբեր իրադարձություններին, մի խոսքով՝ կյանքի մարդ էր: Համարձակվում եմ ասել, որ գեղարվեստական այդ ընդհանրացումներին նա հասնում էր ոչ այնքան բնածին տաղանդի, որքան կյանքը ճանաչելու ներքին հակումի շնորհիվ:

Այդ բոլորով հանդերձ՝ կարող եմ ընդգծել, որ նա ազգային հայրենասիրական գիտակցություն ունեցող բացառիկ հեղինակ է: Չէր խուսափում խորհրդային իշխանության այն ժամանակվա նշանավոր ներկայացուցիչների հետ բանավիճել, մանավանդ երբ հարցը վերաբերում էր պատմական ճշմարտությունը վերականգնելուն: Նրա կարծիքով՝ եթե Հայաստանը մտնում էր ԽՍՀՄ պետությունների կազմի մեջ, ապա ԽՍՀՄ կառավարական բարձրագույն մարմիններն իրավունք չունեն անտեսելու հայ ժողովրդի պատմական անցյալը, այս դեպքում խոսքն ավելի շատ վերաբերում էր Արցախը Հայաստանի մաս կազմելուն:

Պետք է խոստովանենք, որ ժամանակին նրա ստեղծագործությանը գրականագետները քիչ են անդրադարձել, ըստ արժանավույն չի գնահատվել նրա վաստակը, որ պայմանավորված էր նրա արվեստը վերապահությամբ ընդունելով: Շատերի կարծիքով՝ նրա ստեղծագործությունը ժամանակին համահունչ չէր, իբր նոր ոճ էր ստեղծում, որ ընդունելի չէր: Բայց ժամանակին այս ճանապարհն են անցել շատ գրողներ, եւ ես համոզված եմ, որ ժամանակն այս հարցում բացը կլրացնի: Ես այն կարծիքին եմ, որ Խանգադյանական որոշ երկեր անպայման դասագրքային պիտի դառնան:

Ժամանակին «Թագուհին հայոց», «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպերի մասին գրել եմ հոդվածներ, որոնք մեծ արձագանք են գտել:

Հիշում եմ, ժամանակին որոշ հարցերի շուրջ տարածայնություններ ենք ունեցել, բայց դա ես օրինաչափ եմ համարել:

Մի խոսքով՝ Սերո Խանգադյանը մեծ անհատականություն է եւ հայ դասական գրականության ակադեմիկոս ներկայացուցիչներից մեկը: ■

# «Մխիթար Սպարապետ» պատմավեպի վավերականությունը



**ԱԵԼԻՏԱ  
ԴՈՒՈՒՄԱՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

**Ս**երո Խանգաղյանի «Մխիթար Սպարապետ» պատմավեպը Ռաֆֆու հռչակավոր «Դավիթ Բեկ» վեպի շարունակությունն է: Հայոց պատմությունից հայտնի է, որ Դավիթ Բեկի մահվանից հետո նրա ազատագրական

պատերազմի սրբազան գործը շարունակեց Մխիթար Սպարապետը՝ այն հասցնելով մինչև 1730 թվականը. վերջինս դավադրաբար սպանվեց յուրայինների ձեռքով: Այդ մասին Ռաֆֆին «Դավիթ Բեկ» վեպում գրում է. «Մխիթարի իշխանությունը երկար չտևեց, որովհետև 1730 թվին նույն իսկ հայերից հրացանագարկ լինելով մեռավ, երկու տարի միայն իշխելով: Սպարապետի գլուխն իր թշնամիքը կտրելով, որպես ընծա նվիրեցին օսմանցոց փաշային»(1):

Սերո Խանգաղյանը, որը մանուկ հասակից լսել էր Մխիթար Սպարապետի մասին եւ բնիկ Սյունիքից էր, իրականացրել է իր վաղեմի երազանքը՝ վեպ գրել մահատակ սպարապետի մասին: Այդ մտահղացումն առավել բորբոքուն է դարձել, երբ գրողը զենքը ձեռքին խորհրդային զորքերի հետ կռվում էր ֆաշիզմի դեմ, ընդդեմ նաև Թուրքիայի, որովհետև երկրորդ աշխարհամարտում էլ, ինչպես առաջինում, որի ընթացքում իրագործվեց հայերի ցեղասպանությունը, Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր. «Յեղիմակի խոստովանությամբ «Մխիթար Սպարապետի» մտահղացումը ծնվել էր դեռևս 40-ական թվականների սկզբներին, ֆաշիզմի դեմ կռվի բոցերում»(2):

Սա խիստ ուշագրավ վկայություն է. հայ զինվորներն անօրինակ խիզախություններ են գրանցել երկրորդ աշխարհամարտի ժամանակ. նրանք, անշուշտ, հիշում էին հայերի ցեղասպանությունը, եւ այդ արյունալի անցյալը կրկնակի ուժ էր տալիս նրանց նաև պատմական հիշողության շնորհիվ. նրանք պատերազմի դաշտում պաշտպանում էին այն փոքրիկ Հայաստանը, որի ապագայի նկատմամբ աներեր հավատ ունեին:

Ռաֆֆին պատմավեպի դրույթները, նախքան «Սամվել» վեպի առաջաբան գրելը, ձեւակերպել է «Դավիթ Բեկ» պատմավեպի առիթով:

1881-ի հունիսի 25-ին «Մշակում» Ռաֆֆին դադարեցնում է «Դավիթ Բեկ» վեպի տպագրությունը եւ հանդես գալիս «Իմ ընթերցողներին»(3) նամակով: Իր այս դիմումում վիպասը պատմավեպի այն տեսակն է հավանում, որը հենվում է պատմական փաստերի վրա եւ քիչ տեղ է թողնում գրողի երեւակայությանը: Այս առումով նախընտրելի օրինակ է համարում Գեորգ Էբերսի «Եգիպտական թագավորի աղջիկը» վեպը, որը հիմնված է Եգիպտոսի փարավոն Ռամզես Երկրորդի ժամանակաշրջանի խոր իմացության վրա: Մինչդեռ նա չի ընդունում հիմնականում երեւակայությամբ հյուսված Ալեքսանդր Դյումայի պատմական գործերը. «Դյումա հայրը... հայտնի է պատմական վեպերով եւ դրամաներով»(4): Հայտնի է, որ իր գործակից գրչակիցների հետ Դյուման կենդանության օրոք հրատարակեց 300 ժավալուն գործ(5): Պատմավիպասանն, ըստ Ռաֆֆու, պետք է Էբերսի նման «խղճմտավոր աշխատող» լինի եւ սեփական աչքով տեսնի այն վայրերը, որոնք նկարագրում է: Էբերսը, որ Եգիպտագետ էր, անձամբ գնաց Եգիպտոս՝ վեպը տեղում մշակելու համար: Ահա նույն ձեւով Ռաֆֆին մեկնում է Սյունիք ու Արցախ եւ անձամբ տեսնում բոլոր այն վայրերը, որոնցում տեղի են ունեցել Դավիթ Բեկի զլխավորած հայ ազատագրական կռիվները պարսիկների եւ թուրքերի դեմ: Ռաֆֆու զլխավոր նպատակն էր. «Որքան թանկագին է մեզ համար այդ ժամանակների հերոսների հիշատակը անմահացնելը, այնքան ցավալի կորուստ է, երբ նրանք կմոռացվին, կանհետանան մեր անհոգությունից»(6):

Այս նախաբանը Ռաֆֆու «Դավիթ Բեկ» վեպը գրելու համագամանքների մասին ասվում է, որպեսզի տեսանելի դառնա մի կարեւոր իրողություն. Սերո Խանգաղյանը մանկուց հաղորդ էր Դավիթ Բեկի եւ Մխիթար Սպարապետի հերոսական գործունեությանը եւ նրանց ազատագրական կռիվների թատերաբեմի նորօրյա ժառանգն էր:

Երկու կարեւոր հանգամանք. զինվոր հանուն հայրենիքի եւ վեպում նկարագրվող տեղանքի ակամատես, պայմանավորել են Սերո Խանգաղյանի «Մխիթար Սպարապետ» վեպի պատմական վավերականության անհրաժեշտ նախապայմանը:

Դավիթ Բեկի եւ Մխիթար Սպարապետի կատարած ազգային սխրանքն արձանագրվել է ոչ միայն հայկական վավերաթղթերում ու պատմական գործերում, այլև ֆրանսիացի հայագետների մի շարք աշխատություններում:

1917 թվականին Փարիզում լույս է տեսել Ֆրեդերիկ Մակլերի «Հայաստանի շուրջը» („Autour de l’Armenie”) կարեւոր աշխատությունը, որն իր 326 էջում ներկայացնում է Հայաստանի ազատաբաղձ ոգին եւ դատապարտում 1915-ի երիտթուրքերի կազմակերպած հայակործան ցեղասպանությունը: Գրքի VI գլուխը վերնագրված է «Հայկական հարցը եւ հայկական շարժումները XVIII դարում ու XIX դարի առաջին կեսին» (7):

Ֆրեդերիկ Մակլերը փաստում է, թե հայերը XVIII դարի սկզբից իրենց հայացքը ուղղում են դեպի Ռուսաստան եւ մեծ հույսեր են կապում Ռուսաստանը հզորացրած Պետրոս Առաջին ցարի հետ, որը նպատակ ուներ Վրաստանն ու Հա-

յաստանը՝ երկու քրիստոնյա երկրները, միացնել իր կայսրությանը: «Ցարի հրամանով կազմավորվում է 50.000 մարդուց բաղկացած բանակ, որի զինուժը բաղկացած էր հայերից ու վրացիներից, որոնք սպասում էին ցարական զորամասերի գալուստին՝ ապստամբելու համար»(8): Հայ-վրացական զինյալ ուժերի գլխավոր զորահրամանատարն էր Դավիթ Բեկը, որի զինակիցներն էին ձեռներեց ու քաջասիրտ Մելիք-Եգանն ու Ավան-Յուզբաշին(9):

Այնուհետև Ֆ.Մակլերն արձանագրում է, թե ցարը հասնում է Դերբենտ, սակայն զորքը Հայաստան բերելու փոխարեն շարժում է դեպի Աստրախան եւ հետ վերադառնում: Դեպքերի նման ընթացքը զարմացնում է հայերին, նաև վրացիներին: Հայերն ապավինելով սեփական ուժերին՝ որոշում են Սյունիքում սկսել ազգային-ազատագրական կռիվները Դավիթ Բեկի գլխավորությամբ: Ապստամբությունն սկսվում է 1722-ին Ղարաբաղում եւ Սյունիքում. «Այս պայքարն, իրոք, դառնում է հերոսական»(10): Ֆրանսիացի հայագետը հիացնունքով պատմում է Դավիթի եւ Հալիծորի հերոսամարտերի մասին, որոնց ընթացքում հայերը հաղթում են իրենց մահմեդական թշնամիներին՝ պարսիկներին, թաթարներին եւ թուրքերին:

Ֆ.Մակլերը նկարագրում է, թե ինչ արյունալի կռիվներ են մղում Դավիթ Բեկի զինվորականները սպարապետ Մխիթարի, իշխաններ Բայանդուրի, Թորոսի եւ Տեր-Ավետիքի աջակցությամբ, որոնց միացել էին ժողովրդական հերոսները(11):

Իսկ ֆրանսիական հայագիտության հիմնադիր Ա.-Ժ. Սեն-Մարտենը նշում է, թե «դեռ XIX դարի սկզբին կային փոքրիկ ինքնուրույն իշխանություններ, որոնց հայ տերերն իրենց կոչում էին մելիքներ. «Մելիք, արաբերենից փոխառված անուն է, Մելիք, որ նշանակում է թագավոր»(12):

Ինչպես տեսնում ենք, Դավիթ Բեկի եւ Մխիթար Սպարապետի՝ Հայաստանը մահմեդական լծից ազատագրելու մարտերը դեռ շատ տարիներ առաջ համարվել են շատ կարևոր ժամանակահատված հայ ժողովրդի կյանքում:

Բնականաբար, Սերո Խանգադյանն առաջին հերթին յուրացրել է Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպը, ինչպես նաև բոլոր այն աղբյուրները, որոնք օգտագործել է մեծ վիպասանը: Առաջին հերթին դա Ղուկաս Սեբաստացու «Դավիթ Բեկի պատմությունն» է, որը թելադրված է Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահունյանի կողմից(13): Պատմաբան Լեոն Ստեփանոս Շահունյանի կյանքի վերջին տարիները տեսնում է Վենետիկում, ուր մնացել են նրա հետքերը. նա իր ազգականների հետ Ս.Ղազար վանքում շինել տվեց մի խորան Լուսավորչի անունով եւ այդ սեղանի առաջ պատրաստեց դամբարան իր եւ իր ազգականների համար(14): Ահա թե ինչ հիացնունքով է բնութագրում Մխիթար Սպարապետին Լեոն. «Հայ ազատագրական շարժման զինվորների մեջ նա, անկասկած, ամենախոշոր դեմքն էր Դավիթ Բեկից հետո, որը փայլուն ընդունակությունները միացնում էր անբիծ բարքի հետ»(15):

Լեոն իր «Հայոց պատմության» մեջ մեջբերում է Մխիթար Սպարապետի հասարակ տապանաքարի վրա գրված հետևե-

յալ տողերը.

*Այս է տապան ի հանդիսեան  
Իջեալ մարմնով ի գերեզման,  
Մայ Մխիթար մեծ անուանեալ  
Սորա օնէր իշխանութիւն,  
Սա բեմորար գնաց ջիւլան,  
Որ է երկրէն սայ Կեանճով էր,  
Նահարակացեալ Ռ-ՃՁ(16):*

Պատմաբանն այս տապանագիրը համարում է «անգրագետ», որովհետև եւ բառերը, եւ Մխիթար Սպարապետի մահվան թվականը սխալաշատ են: Հենվելով Ե.Լալայանի «Ձանգեզուրի գավառ» աշխատության վրա (Թիֆլիս, 1899, Եր., 35)՝ ուղղում է մահվան թվականը. Ռ-ՃՁ (1179+551=1730)(17): Սակայն այս պարզունակ թվացող տապանագիրը շատ պերճախոս է. նրանում շեշտվում է Մխիթար Սպարապետի իշխանություն ունենալը, նպատակին չհասնելը, երիտասարդ նահատակ լինելը:

Սերո Խանգադյանը ծանոթ է նաև Միքայել Չամչյանցի «Հայոց պատմության» համապատասխան հատվածներին, եւ դրանք փոքր-ինչ փոփոխություններով հյուսվել են «Մխիթար Սպարապետ» վեպի շարադրանքին(18): Բաֆֆին Մխիթարի մահը ներկայացնում է ճիշտ այնպես, ինչպես հաղորդում է Ս.Չամչյանցը(19): Նա գրում է. «Սպարապետի գլուխը իր թշնամիքը կտրելով, որպես ընծա նվիրեցին օսմանցոց փաշային: Բայց փաշան՝ Մխիթարի ոխերիմը, ավելի մեծահոգի գտնվեցավ, քան թե այն վատ հայերը, որ թափեցին մի անմեղ արյուն: Նա հրամայեց կտրել բոլորի գլուխները...»(20):

1722-1730թթ. հայ ազատագրական կռիվներին հատուկ անդրադարձ ունի նշանավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը՝ «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմք եւ զաղափարախոսական արժեքը» հետազոտության մեջ: Ադոնցը նկատում է. «Ստեփանի ավանդած պատմությունը բավականին խառնակ է: Ինքը՝ անվարժ պատմող, Ղուկաս վարդապետը՝ վարժ գրող, միասին աշխատելով շատ բան շփոթել են, չափազանցրել եւ երբեմն գայլվահանյան գույն տվել՝ խախտելով ընթերցողի վստահությունը»(21):

Ադոնցն իր հետազոտությանը կցում է Դավիթ Բեկի եւ Մխիթար Սպարապետի ռազմական բախումների տեղանքի քարտեզը(22), որն, անշուշտ, ծանոթ է եղել Սերո Խանգադյանին: Կարևոր է Ադոնցի հաղորդած այն փաստը, թե վրաց Վախթանգ VI թագավորը իր իշխանությունը պահելու համար դարձել է մահմեդական: Պատմաբանն այս փաստը քաղել է Մարի Բրոսսեի «Պատմություն վրաց» ֆրանսերեն երկից. «Վախթանգ ընդունեց իսլամը եւ նշանակվեց թագավոր Վրաստանի 1716 թվին, ըստ վկայության ժամանակակից պատմագիրների՝ Ս.Չխեիծեի եւ Վախուշտի»(23):

Սա վրաց թագավոր այն Վախթանգն է, որի պալատում Նաղաշ Հովնաթանը եղել է պալատական աշուղ եւ նկարիչ: Վրաց Վախթանգ VI-ի պալատ հրավիրվելու մասին նա գրում է իր սիրո տաղերից մեկում.

*Գիր էի գրում քո անունան,  
Մխիթ էի անում քո սիրոյ բանն,*

*Երևես ուղարկեց Վահարանց Խանն.*

*Քեզ ո՞նց մոռանաւ, զայրո՞ւ,*

*Ես ո՞նց հեռանաւ, զայրո՞ւ (24):*

Օգտվելով ժամանակաշրջանի պատմական դեմքերի եւ դեպքերի շտեմարանից՝ Սերո Խանգադյանը «Մխիթար Սպարապետի» հետաքրքիր կերպարներից մեկն է դարձնում Նաղաշ Հովնաթանի որդուն՝ Նաղաշ Հակոբին, որը 1722-ին հոր մահվան առթիվ գրել է մի հուզիչ ողբ՝ հետեւյալ վերնագրով. «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովնաթանի Նաղաշ, զոր ի ՌՅՄ թուոջ (1171+551=1722) ամսեանն հոկտեմբերի ԻԸ (28) առ Տէր փոխեցաւ՝ ի իւրում գաւառի, ասացեալ յորդոյն իւրոյ Յակոբայ»(25):

Այս ողբից երեւում են Նաղաշ Հովնաթանի որդու՝ Հակոբի մարդկային առաքինի գծերը, եւ քանի որ Գողթան գավառը գտնվում էր Դավիթ Բեկի ու Մխիթարի ռազմական գործողությունների տարածքում, ապա «Մխիթար Սպարապետ» վեպում Սերո Խանգադյանը ստեղծել է Նաղաշ Հակոբի կերպարը, որը շարունակ շրջում է տեղից տեղ, լուրեր հասցնում մի վայրից մյուսը: Խանգադյանը աշուղի անձի մասնագիտական այդ հատկանիշը հիանալի գիտեր, դրա համար էլ Նաղաշ Հակոբին՝ դեպքերի ժամանակակցին, ներառել է վեպի գործողությունների մեջ: Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Սակլերը Ջիվանու «Աշուղը» երգը համարում է սպառնիչ մի բնութագիր բոլոր ազգերի աշուղների, գուսանների, տրուբադուրների համար: Նա իր „La chaire d’Armenien a ecole speciale des langues orientales vivantes” աշխատության մեջ բերում է Ջիվանու «Աշուղը» բանաստեղծությունը՝ Արշակ Չոպանյանի ֆրանսերեն թարգմանությամբ(26):

Ահա թե ինչ է ասում Ջիվանին աշուղի մասին.

*Մի տեսակ լուսաբերիկ է,*

*Լուր տարածող մունեպիկ է,*

*Նողմից հարածված ամպիկ է,*

*Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:*

*Զուր հույսերով խարխափում է,*

*Գեղեր, քաղաքներ չափում է,*

*Կայծակի նման խրփում է,*

*Այսօր այստեղ, վաղը այլ տեղ (27):*

Ջիվանու երգի ընդգծված տողերի համեմատ էլ Սերո Խանգադյանը կերտել է Նաղաշ Հակոբի բացառիկ հաջողված կերպարը, որը պատմական վավերականություն է հարդրում ողջ վեպին:

Պարզորոշ է Սերո Խանգադյանի օգտագործած մեկ այլ աղբյուրը՝ հայտնի միջնադարագետ Ասատուր Մնացականյանի կազմած եւ հարուստ փաստերով ծանոթագրած «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուն: Դրանից պատմավիպասանը քաղել է 17-18-րդ դարերում հայ իրականության մեջ տարածում գտած մի շարք երգեր, որոնցից մեկն էլ 17-րդ դարի առաջին քառորդի բանաստեղծ, փիլիսոփա Ներսես Մոկացուն վերագրվող երկնքի ու երկրի փոխաբանությունը ներկայացնող տաղն է:

*Գուսան Ներսեսը երգում է.*

*Իմ ցողը թե՛ քեզնից կտրելու,*

*Քո ծաղկունքն ինչո՞վ դաբարի(28):*

Այս նույն հատվածը Աս.Մնացականյանի ժողովածուի մեջ հետեւյալն է.

Երկինքն գետնին ասաց.

*- Բաւ ունիմ քսւն գրեզ աւելի.*

*Իմ ցողն ի քենէ կտրելու,*

*Քո ծաղկունքն որո՞վ զարդարի(29):*

Հեշտ նկատելի է, որ պատմավիպասանը փոխել է ընդամենը տաղի լեզուն՝ այն դարձնելով ժամանակակից հայերենով:

«Մխիթար Սպարապետ» պատմավեպի խիստ ուշագրավ եւ վավերական կերպարներից է Տեր-Ավետիսը՝ Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի խիզախ զինակիցը, որի անունը պսակված է բազում քաջագործություններով: Երբ ամենայն հայոց կաթողիկոսը իր զարմանքն է հայտնում, թե ինչպես է հոգեւորականը դարձել Դավիթ Բեկի հազարապետը եւ արդյոք չի՞ երկնչում մահմեդականների արյունը թափելիս, վերջինս տալիս է խիստ տրամաբանված ու իր արդարացի կռիվը հիմնավորող իմաստուն պատասխան.

- Երբեք, բնավ չեմ երկնչում, վեհափառ, - պատասխանեց նա, - եւ հավատացած եմ, որ Հիսուս Քրիստոսը հանդերձալ աշխարհում պատիվներով կպսակի ինձ, որովհետեւ ես արյուն եմ թափել արդարության համար: Ով ձեռք է բարձրացնում մեր երկրի վրա, նա աստծու թշնամին է: Այդ հիշելով՝ ես մոռանում եմ, որ հոգեւորական եմ...(30)

Տեր-Ավետիսը Խանգադյանի մոտ վավերական է: Հալիձորի պաշարման ժամանակ նրա ճակատագրական սխալը, որն առաջանում է հասարակ մարդկանց սրածությունից փրկելու որոշումից, Տեր-Ավետիսն ուղղում է անձնուրաց կրեժիմոսությամբ ու լիովին աշխարհաթող լինելով:

1937-ին Բրյուսելում ապրելու տարիներին Ս.Ադոնցը, որն իրեն համարում էր Տեր-Ավետիքի ժառանգներից, Բոստոնի «Հայրենիք» ամսագրին ուղարկում է «Դավիթ Բեկ եւ Տեր Ավետիքի սերունդը» հոդվածը(31): Այնտեղ կարդում ենք. «Դավիթ Բեկի զինակիցների մեջ Տեր Ավետիք քահանան կարեւոր տեղ ունի: Նրա քաջասրտության է պարտ Ձեւու բերդի առունը, Դավթի ամենեն նշանավոր հաղթությունը»(32):

Ադոնցը բացատրում է, որ Տեր-Ավետիքի բնավորության մեջ եղել են հանդուգն խենթություններ, ինչպիսիք կային «Սասնա Շռեր» էպոսի որոշ դյուցազունների վարքագծում. «Մի քահանա, որ խաչը թողած սուր է առնում ձեռքը, անպայման շեթ է...»(33):

Սերո Խանգադյանը հենց այդպես էլ պատկերում է Տեր-Ավետիսին:

«Մխիթար Սպարապետ» վեպում մեծ տեղ է տրված Դավիթ Բեկի ազատամարտերը գլխավորելու տարիներին, որոնց ընթացքում Մխիթարը Բեկի մշտական հեմարանն էր: Սակայն պատմությունը արձանագրել է նաեւ նրանց մեջ եղած որոշ տարածայնություններն ու անգամ գժտությունը, որը սակայն երկար չի տևում եւ չի վերաճում թշնամանքի:

Պատմավիպասանին խոր ցավ է պատճառել մահմեդականների կողմից հայ ժողովրդի ֆիզիկական ու նյութական բռնությունների ենթարկելը, որոնք արդարացվում էին նրանց կրոնից ելնող պատվիրաններով: Ահա թե վեպում ինչպես է

ենիչերիններին դիմում թուրք Աբդուլլահ փաշան՝ Երեւան քաղաքի վրա գրոհի ուղարկվելուց առաջ.

- Հարուստ է գյավուր էրմենիների Երեւանը, ո՛վ Մուհամեդի գավակներ: Մարգարեի անհաղթ ձեռքն է մեզ առաջնորդել՝ վայելելու այդ հարստությունը: Վերցրեք Երեւանը, եւ երեք օր ձերը կլինի նա... Ձերն է էրմենիների կայքը, ձերն են նրանց կանայք ու աղջիկները: Առեք եւ վայելեցեք (34):

Այս հրահանգը, ըստ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի, տրվել է նաեւ 1915 թվականի հայոց ցեղասպանության ժամանակ, որի հետեւանքը եղավ մեկ եւ կես միլիոն անմեղ հայերի նահատակումը:

Սերո Խանգադյանը մեծ հայրենասեր էր եւ մարգարեաբար անհանգստանում էր, թե թուրքերը կարող են կրկնել իրենց հայաջինջ քաղաքակառուցությունը եւ իր վեպով զգուշացնում է հայ հանրությանը՝ մշտական սթափության մեջ լինելու համար: Վեպի ողջ շարադրանքի մեջ գրողը շարունակ զգուշացնում է՝ չհավատալ թուրքերին ու չխաբվել նրանց կեղծ խոստումներին: Չէ՞ որ Տեր-Ավետիսը խաբվեց նրանց կեղծ խոստմանն ու ակամա դարձավ դավաճան:

Սերո Խանգադյանն իր պատմավեպը գրելուց առաջ ուսումնասիրել է ոչ միայն Հայաստանի պատմության 17 եւ 18-րդ դարերը, այլեւ հետազոտել է ոսկեդարի ու հետագա ժամանակների պատմիչների երկերը: Որոշակի է, որ նա շատ ուշադիր կարդացել է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը», որի մեջ կան Սյունյաց Անդոկ իշխանի՝ Պարսկաստանի դեմ մղած կռիվների ցնցող տեսարաններ: Գրողը կամենում է արձանագրել, թե Սյունիքն ու Արցախը եղել են ազատատենչ ու չեն հանդուրժել օտարի լուծը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունյաց տեր Անդոկը բոլոր սյունեցիներին հրաման տվեց փախչել, տներն ու համբարանոցները պաշարներով հանդերձ այրել: Եվ Սյունիքի բոլոր գավառների բնակչությունը ժողովեց եկեղեցիների պատվիրանագրքերը, կտակարանները, ոսկե ու արծաթե անթիվ սուրբ խաչերը, սրբերի, պատվական ու սուրբ նահատակների նշխարները: Բոլորը կենտրոնացրին Շաղատի քարակոփ գմբեթավոր եկեղեցուն(35):

Շապուհն իր զորքերով պարտվում է Անդոկ իշխանից: Այս փաստերը ներմուծելով իր վեպում՝ գրողը շեշտում է սյունեցիների ու արցախցիների անպարտելի ոգին ու քաջությունը:

Հայ ժողովրդի պատմությունից հայտնի է հայ կանանց կրթված լինելը: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող բազմաթիվ ձեռագրերի պատվիրատուները հայ ազնվական կանայք են:

Ս.Խանգադյանը մեծ տեղ է տվել հայ կնոջը, թե ազնվական եւ թե ռամիկ: Նա շեշտում է հայ ազնվական կնոջ կրթվածությունը, լեզուների իմացությունը: Վեպում Մխիթար Սպարապետի կինը՝ Սաթենիկը, որն ազնվական ծագում ուներ եւ գրում էր հայերի՝ իր ժամանակահատվածի պատմությունը, մտածում էր, որ հայոց աղջիկները պետք է գրել-կարդալ իմանան:

Սյունիքի որոշ բնակավայրերում քաղաքակրթությունը, չնայած մահմեդականների շարունակական հարձակումներին, գրանցում է իր առաջընթացը. «Ազայի տներն իրենցի

պես քարանձավներ չեն: Այգիների մեջ են, պատուհաններին մետաքսե վարագույրներ: Հարսներն այնտեղ երեսները բաց են ման գալիս ու ազատ ասում-խոսում են տղամարդկանց հետ»(36):

Պատմավիպասանը վերհիշում է Մեծ Հայքում եղած վերջին հայկական թագավորությունը. Տաթևի վանքում մագաղաթի մի ծվենի վրա Դավիթ Բեկը տեսնում է Բագրատունի Աբասի կնիքը(37), որը հաստատում էր, թե ինքն ինչ գյուղեր ու ավաններ է նվիրում Տաթևի նորակառույց վանքին: Վաղեմի փառքի փշրանքների մեջ վերակենդանանում է կորցրած հայոց թագավորության վերականգնման հույսը: Այդ հույսը հայերի մոտ երբեք չի մարել, եւ դա երեւում է Րաֆֆու «Խամսայի մեկիթությունները» պատմաքննական աշխատության մեջ. «Երկրամասի հայկական իշխանական տներից Րաֆֆին նախընտրել է Արցախ-Ղարաբաղի հինգ մեկիթությունները՝ Գյուլիստան (Թալիշ), Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ, որոնք կազմավորելով մի ուրույն հայկական պետություն՝ որոշակի էին ցուցադրում վերջին երկուհարյուրամյա հայոց պատմության օրինաչափությունը, նրա ուժն ու թուլությունը», - գրում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը(38):

«Մխիթար Սպարապետ» վեպում վավերական են այն հատվածները, որոնք հաստատում են, թե Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի ազատագրական նպատակների քննարկման հիմնական կենտրոններն էին Տաթևի ու Գանձասարի վանքերը՝ Սյունիքում ու Արցախում: Վեպում, 18-րդ դարին նախորդող ժամանակահատվածի մասին եղած ակնարկներում, վիպասանը քաջատեղյակ պատմաբանի նման անդրադարձ ունի 17-րդ դարասկզբին Շահ Աբասի կազմակերպած հայերի բռնի տեղահանությանը:

«Մխիթար Սպարապետ» վեպից երեւում է հայերի ռուսական դիրքորոշումը եւ քրիստոնյա մեծ կայսրության, ինչպիսին Ռուսաստանն էր, աջակցությամբ մահմեդական լծից ազատագրվելու բաղձանքը: Եվ սա այն դեպքում, երբ քրիստոնյա Եվրոպան բոլորովին անտարբեր էր աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրի՝ Հայաստանի ճակատագրի նկատմամբ:

Ինչ էլ որ լինի, վեպից երեւում է հայ ժողովրդի կամքի անսասանությունը, հանուն ազատության զրկանքների գնալու պատրաստակամությանը: Դավիթ Բեկի ժամանակ հայերը ռուսներին խոստանում են 10.000 զինվորից կազմված զորք կերակրել ու պահել Սյունիքում:

Սերո Խանգադյանի համար պատմական թեմայով վեպ գրելը եղել է գրողի ներքին պահանջը: Նա հավատացած էր, թե պայքարն ու հայ ազգի աննկուն ոգին է նրա գոյությունը պահպանել դարերի ընթացքում: Դրա համար էլ Վարդանանք, խութեցիները, Դավիթ Բեկն ու Մխիթար Սպարապետը, կոտրելով դարերի անջրպետները, միավորվում են ազգապահպանման սրբազան գաղափարի շուրջ:

Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» դյուցազնավեպն ավարտվում է Ավարայրի հերոսամարտը եզրափակող հետեյալ նախադասությամբ. «Քանի գնում, կոփվում էին մարտիկները, դառնում կատաղի, խոցող, հանդուգն:

Այսպես անցան օրեր, տարիներ, անցան դարեր...»(39):



Ձայնակցելով մեծ պատմավիպասանին՝ Ս.Խանգադյանն իր վեպն ավարտում է ճիշտ նույն ոգով. «Նոր թշնամիներ էին գալիս Հայոց աշխարհի վրա ու նոր քաջեր էին նրանց դուրս

մղում իրենց հինավուրց հողից:

Մի սերնդին փոխարինում էր մյուսը...

Այսպես ապրեցինք դարեր...»(40):

## Ծանոթագրություն

1. Րաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. VI, Երեւան, 1956, էջ 568:
2. Ս.Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք երրորդ, Երեւան, 1986, էջ 111:
3. Րաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. X, Երեւան, 1959, էջ 41-46, նաեւ էջ 646:
4. «Duma pere («father»)... is notable for historical novels and plays" (Տե՛ս „The Reader's Companion to World Literature, Second edition, Penguin Group (USA), 2002, p. 222).
5. Նույն տեղում:
6. Րաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. X, էջ 45:
7. «La question Armenienne et les mouvements Armeniens au XVIII siecle et dans la premiere moitie du XIX» (Տե՛ս F.Macler, Autour de l'Armenie, Paris, 1917, p. 204).
8. Նույն տեղում, p. 207.
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում, p. 207-208:
11. Նույն տեղում, էջ 204 („...du generalissime Mekhitar, de Bayandour, du prince Thoros, de Ter-Avetik, et de tant d'autres heros populaires").
12. «Melik, nom derive de l'arabe, Melik, qui signifie roi» (Տե՛ս Ա.Դոլուխանյան, Սեն-Սարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երեւան, 2014, էջ 43):
13. Դուկաս Սեբաստացու կյանքն ու գործունեությունը բավական հանգամանորեն ներկայացված են «Բազմավէպ» հայագիտական մատենաշարի 12-րդ գրքում «Դավիթ բեկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», Վենետիկ, Ս.Ղազար, 1978, էջ 189-194 (Տե՛ս Դավիթ Բեկի պատմությունը, Աշխարհաբար վերապատմեց Արշակ Մադոյանը, Երեւան, 1988, էջ 8):
14. Լեո, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 3, գիրք երկրորդ, Երեւան, 1973, էջ 209:
15. Նույն տեղում, էջ 208:
16. Նույն տեղում, էջ 209:
17. Նույն տեղում:
18. Տե՛ս Մ.Չամչյանց, Հայոց պատմություն, հ. 9, Երեւան, 1984, էջ 784-800:
19. Տե՛ս նույն տեղում, էջ 800:
20. Րաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. VI, էջ 568:
21. Ն.Աղոնց, Երկեր հինգ հատորով, Բ, Երեւան, 2006, էջ 511:
22. Նույն տեղում, էջ 512:
23. Նույն տեղում, էջ 513:
24. Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս.Մնացականյանի, Երեւան, 1983, էջ 18:
25. Նույն տեղում, էջ 225:
26. Տե՛ս Ա.Դոլուխանյան, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երեւան, 2011, էջ 71:
27. «Հայ գուսաններ», Երեւան, 1957, էջ 189:
28. Ս.Խանգադյան, Մխիթար Սպարապետ, Երեւան, 1961, էջ 38:
29. Աս.Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երեւան, 1956, էջ 386:
30. Ս.Խանգադյան, Մխիթար Սպարապետ, էջ 323:
31. Ն.Աղոնց, Երկեր հինգ հատորով, Ա, Երեւան, 2006, էջ 587:
32. Նույն տեղում, էջ 550:
33. Նույն տեղում, էջ 555: Շեք մշանակում է ծուռ:
34. Ս.Խանգադյան, Մխիթար Սպարապետ, էջ 386:
35. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա.Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 85:
36. Ս.Խանգադյան, Մխիթար Սպարապետ, էջ 198:
37. Նույն տեղում, էջ 249:
38. Ս.Սարիյան, Պատմության դասերը (Տե՛ս «Հայոց գրականության երկու դարը», գիրք չորրորդ, Երեւան, 2004, էջ 447):
39. Դ.Դեմիրճյան, Վարդանանք, գիրք Բ, Երեւան, 1968, էջ 557:
40. Ս.Խանգադյան, Մխիթար Սպարապետ, էջ 842:

# Մեսրոպ Մաշտոցի կերպարը Ս.Խանզադյանի «Վարք հարանց» շարքում



**ՎԱՀԱՆ ԱՐԱԲԱԲՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս

**Ս**կսած 1960-ական թվականների կեսերից՝ հայ գրողները պատմության փորձը լուսաբանում էին ոչ միայն զոյատեւան համար մղվող հե-

րոսական պայքարի, ողբերգական իրադարձությունների բացահայտման ու դրանցից դասեր քաղելու ուղղություններով, այլև հոգեւոր մաքառումների փիլիսոփայական իմաստավորումների տեսանկյունով:

Նախորդ տասնամյակների գաղափարական կաշկանդածությունը հաղթահարող գրականությունն արդեն ընդգծում էր այն միտքը, որ հատկապես փոքրաքանակ ժողովուրդների պատմությունը ոչ թե դասակարգային պայքարի (ինչպես ընդունված էր խորհրդային գաղափարախոսության կողմից), այլ ազատագրական ու հոգեւոր մաքառումների պատմություն է, զոյատեւան ու արարման, ստեղծագործ աշխատանքի պատմություն, որն էլ եղել ու մնում է նրա հավիտենության հիմնական երաշխիքը:

Այս միտքը բնորոշ էր ոչ միայն հայ, այլև նախկին Խորհրդային Միության մի շարք փոքրաքանակ ժողովուրդների գրականություններին: Այս տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում Ի. Աբաշիձեի «Պաղեստին, Պաղեստին», Յու. Մարցինկավիչյուսի «Մինդաուգաս», «Մաժվիդաս» պոեմները, Գ. Ամիրջեբեի «Դատա Թութաշխիա» եւ այլ ստեղծագործություններ, որտեղ բացահայտվում են խոր ու հիմնավոր կապեր նյութական ու հոգեւոր աշխարհների միջև:

Յու. Մարցինկավիչյուսի պոեմներում երկրի անկախության համար մղվող պայքարում նույն դերն է հատկացվում Լիտվայի Մեծ իշխան Մինդաուգասի ու մեծ մտածող, լուսավորիչ, լիտվական գրաիրատարակչության հիմնադիր Մարտինաս Մաժվիդասի առաքելությանն ու գործին: Մինդաուգաս արքան 13-րդ դարում վերականգնում է կորցրած պետականությունը, Մ. Մաժվիդասը 1547թ. հրատարակում է

լիտվական առաջին տպագիր գիրքը՝ նոր ճանապարհ բացելով ժողովրդի հոգեւոր վերածնության ու ինքնահաստատման ճանապարհին: Հետագա դարերում Լիտվան նորից կորցնում է իր անկախությունը, իսկ Մաժվիդասի գործը շարունակում է մնալ անմահ: Մեծերի «վարքի» գեղարվեստական արտացոլումը ձեռք է բերում մի կողմից պատմական հիշողությունը վերականգնելու, մյուս կողմից՝ նրանց առաքելությամբ հասարակական զարգացման ընթացքը հոգեւոր մաքառումների տեսանկյունով իմաստավորելու նպատակաուղղվածություն:

Հայ գրողների ուշադրության կենտրոնում նույնպես հայտնվեցին անցյալի մշակութային արժեքները:

Կողմնորոշման չափանիշները պոեզիայում Ե. Չարենցի հայրենասիրական գործերն էին, որոնք օգնում էին մշակելու պատմական տեսանկյունի սրություն, հաղորդում հայրենիքի գաղափարի ընկալման նոր ու հզոր լիցքեր:

Արձակում շարունակվում էին 19-րդ դարի պատմավիպասանության ավանդույթները, որոնք նոր մոտեցումներով հարստացան Դ. Դեմիրճյանի ստեղծագործություններում, հատկապես «Գիրք ծաղկանց» վիպակում, որտեղ առաջին անգամ նորագույն շրջանի հայ գրականության մեջ առաջնային տեղ հատկացվեց հոգեւոր մաքառումներին:

Առաջին անգամ Դ. Դեմիրճյանը «Գիրք ծաղկանց»-ով առաջադրում է պատմական թեմայի մշակման նոր մոտեցումներ ու սկզբունքներ: Վիպակի թեման վերցնելով հայկական վերածնության ժամանակաշրջանից, երբ բարձր զարգացման էին հասել գրչության, գրքի պատկերազարդման եւ այլ արվեստներ ու իր հերոսներին ընտրելով պատմության ամանուն ներկայացուցիչներից՝ անվանի գրողը բացահայտում է հայ ժողովրդի կենսունակության արմատները:

Դեմիրճյանական ավանդույթները նորովի արտահայտվեցին հետագա տասնամյակներում: Սկսած 1960-ականներից՝ հայ գրողների ստեղծագործություններում (Ջ. Դարյան, «Սայաթ-Նովա» (1960-1963), Դովի. Ղուկասյան, «Ոսկան Երեւանցի» (1962), Վ. Խեչումյան, «Գիրք լինելության» (1966), Գ. Դերիկյան, «Տրդատ ճարտարապետ» (1968) եւ այլն) արդեն հաստատականորեն շեշտվում էր այն միտքը, որ, ինչպես Պ. Սեւակն է գրում. «ժողովուրդների ու ազգերի գոյության միակ երաշխիքը հողը չէ կամ զորությունը... Ինչպես մարդիկ, այնպես էլ ժողովուրդները գոյատեւում են ոչ միայն «հացի», այլ նաեւ «բանի»»:

Մեծ բանաստեղծը մեր զորավարների տարած փառահեղ հաղթանակներից առավել կարեւորում է Մաշտոցի հաղթանակը, որի շնորհիվ մենք կարողացանք շտկել մեր ծոված ողնաշարը, վերականգնել մեր խախտված շնչառությունը, գոյատեւել, համախմբել մեր ֆիզիկական ու հոգեւոր ներուժը ու արժանապատիվ կեցվածքով անցնել Ավարայրից մինչեւ Սարդարապատ ու Շուշի ձգվող մեր պատմության մայրուղին:

Պ. Սեւակին շարունակում է Հ. Սահյանը՝ գրելով, որ ժողովուրդների մեծությունը կամ հզորությունը չափվում է ոչ թե «զենքի տակ պահվող զորքի քանակով», այլ հոգեւոր մաքառումների մասշտաբներով, Ս. Կապուտիկյանը նույնպես «թզաչափ երկրի հզորությունը» հոգեւոր մաքառումների խորությամբ չափելն է համարում իրավ:

Ժամանակի թելադրանքով գրականությանն առաջադրված ժողովրդի քաղաքական ճակատագրի, նրա գոյատևման առեղծվածի հայտնաբերման, հոգեւոր մաքառումների իմաստավորման, նորովի արժեւորման խնդիրները յուրատիպ մեկնաբանություններով դրսևորվեցին նաեւ Ս. Խանգադյանի պատմվածքներում ու վիպակներում, որոնց մեջ առանձնահատուկ նշվում է ժողովրդի՝ «զենք կռող դարբնոցի ու դպրատան ճանապարհը» չնոռանալու, խաղաղության կարճատեւ պահերին կառուցելու, արարելու դավանանքը՝ որպէս գոյապահպանության հզոր կռիւն:

Այս առումով ուշագրաւ է «Վարք հարանց» շարքը, որի պատմվածքների մեծ մասը նվիրված է Մ. Մաշտոցին, որի՝ սերունդներին ավանդած մարգարեությունը կարող է բանալի դառնալ ազգի հարատեւման առեղծվածի բացահայտման գաղափարական միտումի համար. «Ես գիր տվի ձեզ, որ լույս ունենաք ձեր տանն ու հոգուն: Բայց կմարի լույսը, եթէ դուք մոռանաք սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը ձեզ պաշտպան, հիշեցե՛ք»:

«Վարք հարանց» շարքում, պահպանելով պատմության բնորոշ ոգին ու կոլորիտը, Ս. Խանգադյանը հաճախ շեղվում է Մ. Մաշտոցի կենսագրության պատմական-փաստական կողմերից: Սակայն պատմվածքներում Մ. Մաշտոցին որպէս «մեր գոյության ու հիշողության», մեր մեծագույն քաղաքագետի (որի «շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից եւ ոչ մեկը») ներկայացնելու խանգադյանական միտումը ինչ-որ չափով արդարացնում է հեղինակին:

Մաշտոցի ամբողջ կյանքը կռիվ է եղել: Նա կռվել է մարերի դէմ, աչքի է ընկել որպէս հմուտ զորական, բայց բոլոր կռիվներից ամենանշանակալիցը եղել է կռիվը խավարի դէմ՝ հանուն լույսի, հանուն հայոց «այբ ու բենի»:

«Լույսը հնձանից» պատմվածքում Ս. Խանգադյանը Մաշտոցի առաքելությանն անդրադառնում է՝ հետադարձ հայացքով ընդգրկելով հայոց պատմության հեթանոսական շրջանը, որի բարքերն ու սովորությունները մարմնավորված են բրուտ Առաքելի կերպարում: Վերջինիս ու այգեգործ Առաքելին դարեր են բաժանում, եւ այդ դարերի համապատկերում է Ս. Խանգադյանը իմաստավորում Մաշտոցի առաքելությունը:

Գյուղի անունը Մեսրոպական է: Ծեր այգեպան Առաքելը նայում է գյուղի եկեղեցու քարե նստարաններին՝ «սրանց մոտ այբ, բեն են սովորել իր ապուպապերը, իր պապը, ինքը, որդին, հիմա էլ թռան ձայնն է լսվում, - Այբ, բեն...»:

Պատմվածքում հեռավոր անցյալի ու ներկայի համադրումը եւ «ժամանակների զարմանալի ներդաշնակությամբ մոտեցումն ու միաձուլումը, որոնք խորհրդանշական իմաստ ունեն, «ճշգրտվում ու ստուգվում են գոյատեւման կռվաններով»» (Ս. Աղաջանյան):

«Ժամանակների հանդիպարումը» տեղի է ունենում Մեսրոպի ու գինեգործ Առաքելի միջոցով: «Գինեգործ Առաքել ապերը այս հողից բուսած ժառանգն է այստեղ՝ հայապատկեր այս Գողթան գավառում, ու նրա գլխի մշուշոտ ծալքերում հնչում է հնամենի զրույցը՝ Մեսրոպի, նրա գրերի մասին»:

Գինեգործ Առաքել ապոր ապուպապը նույնպէս Առաքել

անունն է ունեցել, Մեսրոպի ընկերն է եղել, երկրպագել է կրակին ու թերահավատորեն է նայել Մեսրոպի գործին. «Եկել է: Ինչի՞ է եկել: Ինչո՞ւ հեռացաւ զորական կյանքից եւ կրեց ամենակեցույցի խաչը: Ասում է՝ դպրանոց եմ ուզում հիմնել այստեղ, մանկտիք սնել: Ասում է: Իսկ ի՞նչ լեզվով պիտի կրթի-սնի, ինչո՞վ»:

Մեսրոպը փրկել է Առաքելի կյանքը, երբ միասին զորական են եղել: Նա հիմա բրուտանոցում կալ է հունցում ու լսում է Մեսրոպին. «Ամենքը ձեւ ունեն, մենք՝ ոչ, բրուտ Առաքել: Հայոց արեւմուտքում հռոմով լեզուն է գիր մեզ համար, հարավում՝ ասորերենը, արեւելքում՝ պարսկերենը, հյուսիսում... հյուսիսը դատարկ է: Ո՞րն է քո հոգու պատկերը: Այդ կուլայի նախշերն ու լեզուն ամենքն էլ ունեն, իրենցը, սեփականը: Դու սեփականը չունես»:

Մաշտոցի համար պատմվածքում ամենադժվարինը ժողովրդին, որ մարմնավորված է հեթանոս բրուտ Առաքելի կերպարում, ճշմարիտ հավատի բերելն է. «Անկարգ ու անխնամ ժողովուրդ եք, - խոսեց Մեսրոպ Մաշտոցը... Գերի եք հին մուրություններին ու վայրենի»:

Ու հավատ է ներշնչում Մաշտոցը բրուտ Առաքելին, հավատ առ այն, որ «քո գրով քեզ չեն շփոթի ո՛չ մարերի հետ, ո՛չ ասորու, ո՛չ բյուզանդացու, ո՛չ էլ մեկ ուրիշի հետ: Գրով կմնա քո լեզուն քոնը, քո գինին՝ հայկական, եւ քո կուլայի նախշերը կխոսեն հայոց լեզվով»:

«Ես էլ եմ ուզում իմն ունենալ, ես ուզում եմ իմ կուլան իմ լեզվով խոսի: Կարո՞ղ ես, խոսեցրու...»:

Բրուտ Առաքելի թրծած կուլաներն ու կարասները, գինու զավերը նախշազարդված են խաղողի ողկույզներով ու նռներով, զեղանի աղջիկներով, զանազան թռչուններով ու ծաղիկներով. «Անշունչ կավից սիրամարգեր է կերտում, որ ուր որ է կոյալայլեն: Կանացի ոտքի ձեւով գինու գավաթներ է ստեղծում բրուտ Առաքելը, վրան դեռատի կնոջ ոտքի ջերմությունը, հրաշք նախշեր եւ անսպառ կենդանություն»:

Մաշտոցը փոխում է բրուտի պատկերացումներն արմատապէս, ու դրանից հետո կուլաներն ու կավերը երիզվում են մեսրոպյան գրերով եւ հայերեն շնչում, նոր իմաստ են տալիս ու նոր խորքեր բացում, նոր ձեւեր տալիս անշունչ կավին: Բրուտի ընկալումներն ավելի կոնկրետ ու առարկայական են դառնում: Հետո մեսրոպյան գրերը միանում են իրար, դառնում տուն, հայրենիք, առասպել ու միջ, ու նա, որպէս պատգամ գալիք դարերին ու սերունդներին, թրծում է կրակի բոցերի մեջ մեսրոպյան տառերով նախշազարդված գինու գավը՝ «գրով շենանա տունն Հայոց, Առաքել»...

Գրերի գյուտից հետո հատկապէս սահմանամերձ գյուղերում ու ավաններում հիմնվում են դպրոցներ, եւ հայ ուսուցիչներն ու աշակերտները դառնում են սահմանապահ զինվորներ, երկիր են պահում ու շենացնում:

Հայոց գիրն է հային հայ պահել, տարել բազմաթիվ փորձությունների միջով, ու հիմա բրուտ Առաքելի՝ հայտնի չէ, թէ որերորդ թռը՝ Այգեգործ Առաքելը, հնձանում խաղող է ծնլում, ու ականջներում հնչում է նոր-նոր դպրոց հաճախող փոքրիկ Առաքելի ձայնը՝ «Այբ, բեն...»:

Բրուտ Առաքելի՝ նույն անունով տարբեր ժամանակներ

րում ապրած նրա շառավիղների կերպարն անցնում է «Վարք հարանց» շարքի՝ Մաշտոցին նվիրված բոլոր պատմվածքների միջով՝ նորանոր բացահայտումներ անելով մի դեպքում Մաշտոցի կերպարում, մյուս կողմից՝ ամբողջացնելով պատմության հոլովություն շինական հայ մարդու հավաքական կերպարը:

Տարբեր սերունդների Առաքելների կերպարներում Ս. Խանգադյանը խորհրդանշում է հողի, հայրենի եզերքի պաշտամունքը՝ որպես մարդու կեցության ու իմաստնության ելակետային սկզբունք:

Հոգեւոր մաքառումներին ուղղություն են տալիս ժամանակի հրամայականով ասպարեզ իջած հզոր անհատներ, որոնք իմաստնության լույս են սփռում, առաջընթացի նոր ճանապարհներ են մատնանշում: Այդ լույսը հետո ճառագում է շինականի խրճիթներում, դառնում օրորոցային ու հորովել, օրհնանք ու մաղթանք: Շինականն է վառ պահում այդ լույսն ու փոխանցում սերնդեսերունդ:

«Լույս հնձանից» պատմվածքի յուրատեսակ շարունակությունն է «Կամուրջ» պատումը. «Անտառապահ Նավասարդը հասավ կամրջին, հմայիլ կտրած նայեց նրա կենտաղեղ կամարին: Ասում են, դե ո՞վ իմանա, ասում են ինքը՝ Մեսրոպ Մաշտոցն է կառուցել, որ հեռու հեռավոր այս օրերին լուսատու ճրագ էր իրենց գյուղում եւ հիմա էլ ճրագ է տանն համայն Հայոց»:

«Կամուրջ» պատմվածքում Ս. Խանգադյանը Մեսրոպ Մաշտոցին ներկայացնում է մարդկանց հետ ունեցած առօրյա հարաբերություններում՝ ընդգծելով նրա բարձր արժանիքները, հասարակ մարդկանց հետ շփվելու, հաղորդակցվելու պատրաստակամությունը:

«Կամուրջը» նույնպես գրված է հիշողությունների հիման վրա: Այստեղ նույնպես գրողը ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններ, որոնք արտացոլվում են տարբեր սերունդների ներկայացուցիչների կերպարներում: Գրական այս հնարքը հնարավորություն է տալիս իմաստավորելու ժամանակների կապը, անցյալ-ներկա-ապագա դիալեկտիկական միասնության մեջ հայտնաբերելու այն ընդհանուրը, որով իրար են կապվում ժամանակի շղթայի բոլոր օղակները:

Գրերի գյուտից հետո Մաշտոցն առաջին դպրանոցը բացում է սահմանամերձ գյուղերից մեկում՝ բրուտ Առաքելի հնձանում, ուր դասեր է առնում նաեւ դետ Նավասարդը: Ընդամենը հինգ տարի է սովորում դպրանոցում Նավասարդը ու ամուր թելերով կապվում է իր ուսուցչի հետ, նրան վստահում իր գաղտնիքները, կյանքի դասեր առնում նրանից:

Ս. Խանգադյանի Մաշտոցն այս պատմվածքում իր բնավորությամբ, մարդկային գծերով, բարոյական կերտվածքով ոչնչով չի տարբերվում հասարակ շինականներից: Նրանց հետ հացի է նստում, ուրախանում ու տխրում նրանց հետ, նրանց հետ կռվում թշնամիների դեմ, Նավասարդի համար խնամախոսության գնում՝ Սամիկ անունով ջրաղացպանի չքնաղ աղջկա ձեռքը խնդրելու:

Դետ Նավասարդը գեղեցկուհի Մանանին հարս բերելու համար Մաշտոցի խորհրդով եւ հարսնացուի հոր պահանջով կամուրջ է կառուցում Ձյունավան գետի վրա, Մաշտոցն օրհ-

նում է կամուրջը, որը դիմանում է դարերի փորձությանը, ինչպես մեսրոպյան «Այբն ու Բենը»:

Դարերի, անհիշելի ժամանակների հոլովություն միասնանում են հայի ստեղծագործ միտքը՝ մեսրոպյան «Այբն ու Բենը», ու շինարար ոգին՝ Նավասարդի կառուցած կամուրջը՝ որպես ժողովրդի գոյատևման խորհրդանիշներ:

Մաշտոցյան շարքը Ս. Խանգադյանը շարունակում է «Խոսում է մագաղաթի պատահիկը» եւ «Վարք Մաշտոցի» պատումներում, որտեղ նոր կողմերով է ներկայանում ու ամբողջանում Մաշտոցի կերպարը:

Գրերի գյուտն, իսկապես, հրաշք էր, որ փոխեց մեր պատմության ընթացքը, բայց այն նաեւ պահպանել էր պետք ու ժողովրդին հասանելի դարձնել, որին ձեռնամուխ է լինում Մաշտոցը՝ իր աշակերտներին ուսուցչության ուղարկելով «անկարգ ու անխնամ» տեղերը, որտեղ տեր եւ տնօրեն էին մոգերը, ովքեր վառում էին հայալեզու գրքերը, ոչնչացնում ձեռագիր մագաղաթները: Մոգերի դեմ զինված պայքար է մղում նաեւ շինականների գլուխն անցած Մաշտոցը՝ ցուցաբերելով խիզախություն ու քաջություն, իր օրինակով վարակելով շինականներին:

Շրջում է Մաշտոցը հեռավոր ու մոռացված բնակավայրերով, հայտնվում «Որդուվատ գյուղում, ուր նրա թուխմորուս աշակերտները զարմանում էին ժայռերի մեջ մտած ժայռակուտակ գյուղով, բացգլուխ, լեզվանի մանուկներով, որոնք նույնիսկ խաչակնքել չգիտեին: Եվ գուցե հենց այդ օրը Կորյունը մագաղաթի վրա գրեց. «Երանելի ուսուցիչը մեր իր աշակերտներին առավ, իջավ Գողթանի անկարգ ու անխնամ տեղերը»:

Ս. Մաշտոցը դպրության լույսը ժողովրդին է հասցնում նաեւ իր բանաստեղծություններով, որոնց առաջին ունկնդիրները հողագործ շինականներ էին լինում.

- Տուր մեզ, տե՛ր, գխաղաղություն,

Եվ փրկեա՛ ի նեղչաց մերոց...

Բանաստեղծում է Մաշտոցը («Արեգակն արդարության, // Ծագեա ի հոգիս մեր ըզլույս...»), դասեր տալիս իր աշակերտներին, որ թեւեր են առնում ու ինքնուրույն թռչում՝ Հայաստան երկրի հեռավոր անկյունները տանելով գրերի խորհուրդն ու հոգեւոր լույսը: Սերունդները երկրպագում են այդ լույսն արարողին, կանգնում նրա՝ Կապուտջիղի ծերպերում ծվարած ճգնարանների առջեւ, «նայում մամռած, բայց չմեռած, մամռոտ, բայց կենդանի գրերին ու շշմջում.

Որ անապական քոյով զորությամբ

Օգնեա՛ ի նեղություն մերում...

Եվ փրկեա՛ ի նեղչաց մերոց...»:

Ս. Խանգադյանի՝ պատմության թեմայով պատմվածքներում ու վիպակներում հաջողությամբ համադրվում են առասպելն ու միջը, իրականն ու երեւակայականը: Յուրահատուկ փաստարկումներով են ներկայացվում ժամանակաշրջանին բնորոշ իրողությունները, որոնք ծավալվում են անցյալ-ներկա-ապագա փոխկապակցության մեջ, որն ավելի ուշագրավ է դարձնում պատմության դասերի խանգաղյանական արժարժումները:



# Հայոց լինելիության խորհուրդը Սերո Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպում



## ԱՐՄԵՆՈՒՅԻ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

**Ա**րեւմտահայության ճակատագրի թեման միշտ եղել է հայ գրականության գլխավոր խնդիրներից մեկը:

Տարբեր ժամանակներում, տարբեր հասարակական-քաղաքական մտայնության պայմաններում այն ստացել է յուրօրինակ հնչեղություն: 20-րդ դարի 20-30-ական թվականների բարդ ու հակասական գաղափարներով, իրարամերժ գնահատումներով լեցուն գրական դաշտը մեծ պատնեշ էր այն հայրենավեր գրողների համար, ովքեր, հակադրվելով ստալինյան բռնատիրության գաղափարախոսությանը, փորձում էին մոտ կանգնել ազգային արժեքներին, ազգային մտածողությանն ու հոգեբանությանը: Գրականության մեջ արգելված թեմաների շարքում էր դարասկզբի ողբերգության թեման, անդրադարձը պատմական մոտ անցյալին, արեւմտահայության ճակատագրին: Սակայն պատմական ողբերգությանը մոտ կանգնած սերունդը իրավունք չունեւ լռելու, որովհետեւ եթե թուրքական յաթաղանի ոճրագործությունները տեսած ու այդ ցավը ցմրուր զգացած սերունդը լռեր, ապա եկող սերունդները պահանջատեր չէին դառնա, նրանց համար կաղարովեր պատմական անցյալի իրական ուղին, կվտանգվեր ժողովրդի պատմական հիշողությունը: Իսկ պատմական հիշողություն չունեցող ժողովուրդը չէր կարող իր ապագան կերտել՝ պահելով ազգային դիմագիծն ու ազգային նկարագիրը: Այս գիտակցումով էլ խորհրդահայ արձակուրդ ամառային Ռակունցն անդրադարձավ արեւմտահայության ճակատագրի թեմային՝ իր «Ծիրանի փող»-ով պատգամելով եկող սերունդներին միշտ տեր կանգնել պատմական հիշողությանն ու ազգային ցավին, այն լսելի դարձնել ողջ աշխարհին մինչեւ երանելի այն պահը, երբ իրականություն կդառնա հայի նվիրական

երագանքը՝ պատմական հայրենիքի վերադարձը: 30-ական թթ. բարդ ու դժվարին տարիներին Ա.Բակունցը ստեղծագործական խիզախումով բացեց արեւմտահայության ճակատագրի թեմայի այն արգասաբեր գրական ակունքը, որը պետք է հարստանար եւ նոր տարածքներ ներառեր իր տաղանդավոր հետնորդների գործերում, իր կենսական ու հոգեւոր անհրաժեշտությամբ դառնար նորագույն գրականության մի բեղմնավոր երակը:

Բակունցից սկիզբ առած գրական այս երակը ծավալվեց 60-80-ական թթ. գրականության մեջ: «Անծի պաշտամունքի» տարիների կաշկանդումների ու կաղապարված մտածողության վերացումով ասպարեզ բացվեց ստեղծագործական ինքնուրույն ու համարձակ նախաձեռնության, գրական ինքնատիպ մտքի հարստացման, մարդկային հարաբերությունների ավելի անկեղծ ու ճշմարտացի պատկերման համար: Արդիականության գլխավոր թեմայի հետ 60-ականների գրական սերունդը մշակում է պատմության, ազգի քաղաքական ճակատագրի թեման:

60-ականների գրական սերունդը նորովի հնչեցրեց բակունցյան «ծիրանի փողը»՝ հաստատելով հայոց լինելիության խորհուրդը՝ պայմանավորված ազգի պատմական հիշողության վերաարժեւորման անհրաժեշտությամբ: 30-ական թվականների մղձավանջային լռությունից հետո 60-ական թվականների գրական կյանքում նորովի, նոր հարցադրումներով ու զննհատումներով ամբողջացավ արեւմտահայության ճակատագրի թեման: Բակունցից սկզբնավորված այս գրական ալիքը ճյուղավորվեց շատերի մոտ. այն հարստացավ եւ ինքնատիպ հնչեղություն ունեցավ Հրաչյա Քոչարի, Խաչիկ Դաշտենցի, Մուշեղ Գալշոյանի, Ստեփան Ալաջաջյանի, Սերո Խանգաղյանի եւ այլոց գրական երկերում: «Անհատի պաշտամունքի» վերացումից հետո ժամանակաշրջանի քաղաքական պայմանները հնարավորություն տվեցին բացելու պատմության շատ գաղտնի եւ փակված էջեր, արթնացնելու ժողովրդի հիշողությունը, վերանայելու եւ վերաարժեւորելու պատմական անցյալը, ժողովրդի անցած ճանապարհը:

Յուրաքանչյուր ազգ ապրում, հարատեւում է իր պատմությամբ, ուստի ժողովրդի պատմական հիշողության կանչը միշտ պետք է հնչի գրականության մեջ՝ դառնալով նրա կենարար ակունքներից մեկը: Այդ էր պատճառը, որ գրական նոր սերունդն ավելի համարձակ թափանցեց ժողովրդի անցյալի տարեգրության հարուստ ծալքերը՝ յուրովի կատարելով զեղարվեստական ընդհանրացումներ: «Այդ նահատակման խոշոր, կարեւոր դրվագները պետք է ազատել մոռացության անդունդի մեջ կորչելու վտանգն: Սեր այժմյան նոր սերունդը եւ ապագա սերունդներու պատանհաններին պետք է, որ լիովին ծանոթ ըլլան թուրքիկ հայոց այդ դժոխք շրջանին կրած մարտիրոսության բոլոր մանրամասնությանց» (1):

Բակունցյան «ծիրանի փողի» յուրօրինակ շարունակողը դարձավ Սերո Խանգաղյանը: 1970-ական թթ. գրական կյանքում հետաքրքրություն արձագանքեց Ս.Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպը: Հետաքրքիր էր այն եւ թեմատիկ, եւ ժանրային, եւ ոճական առումներով: Վեպի հիմքում դնելով արեւմտահայության ճակատագրի թեման՝ Խան-

գաղյանը կերտել է յուրօրինակ ասքապատում, որը կառուցված է պատմական հիմքի եւ փաստերի վրա: Խանգաղյանի համար պատմավիպասանության դաշտը եղել է բազմախորհուրդ ու բազմաշերտ տարածք, որի խորաքննիչ ուսումնասիրությունը հեղինակին ժողովրդի քաղաքական ճակատագրի, պատմական անցյալի արժեւորումների եւ գնահատումների յուրովի մոտեցումների է հանգեցրել:

Յետաքրքիր գեղարվեստական, պատմական, խոհափիլիսոփայական շերտեր կան Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպում: Հեղինակը, կարծես շարունակելով դեմիրճյանական պատմահայեցողության սկզբունքները, ըստ որի՝ ժողովրդի դերը հզոր է ժողովրդի պատմության կերտման ճանապարհին, փորձում է ցույց տալ ժողովուրդ-պատմություն, ժողովուրդ-անհատ, անհատ-պատմություն հարաբերությունների խաչածեւումները ժողովրդի պատմական ճանապարհի հոլովոյթում:

Խանգաղյանը, վեպի հիմքում դնելով պատմական երգնկայի Կաթակն գյուղի 20-րդ դարասկզբին կրած ողբերգական դեպքերը, փորձել է ընդհանրացնել պատմական այն դաժան իրողությունը, որը կրեց ողջ արեւմտահայությունը: Խանգաղյանի վեպը մի յուրօրինակ ասքապատում է եղեմնազարկ ժողովրդի կրած դաժան օրերի ու տառապանքի, նրա հերոսական ուժի եւ ապրելու աներեր կամքի մասին: Խանգաղյանի խնդիրն է եղել ցույց տալ ժողովրդի աննկուն պայքարի ու մաքառման ուղին, անկտորում ոգին, նրա՝ հայրենյաց հողին անմնացորդ նվիրումը: Այս է պատճառը, որ Խանգաղյանը, հենվելով պատմական դեպքերի ու իրադարձությունների վրա, այնուամենայնիվ վեպի հերոսների շարքում պատմական անձանց կողքին ավելի շատ կերտել է երեւակայական կերպարներ, որոնք ժողովրդի ընդհանրական կերպարը խտացնող խորհրդանիշ հերոսներ են: Խանգաղյանի գեղարվեստական պատմահայեցությունը խարսխված է պատմականի եւ երեւակայականի մուրք շաղախումների վրա: Պատմական կերպարների կողքին կան շատ հեղինակային կերպարներ, որոնք, դառնալով խտացված եւ ընդհանրական կերպարներ, հոգեբանորեն եւ պատմական երեւույթների ամբողջության մեջ նույնքան համոզիչ են եւ տիպական: Այս հատկանիշներով հանդերձ՝ նրանք դառնում են ժողովրդական կերպարներ՝ պայմանավորելով վեպում ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական մթնոլորտը: Այսինքն՝ Խանգաղյանի՝ պատմական երեւույթների գնահատման ելակետը ժողովրդական տարերքի ուժն է. սրանով է պայմանավորված հայոց լինելիության խանգաղյանական խորհուրդը: «Գրողի պատմահայեցողությամբ ժամանակի գլխավոր հերոսը եղել է ժողովուրդը: Հենց ժողովուրդն էլ «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպի առանցքն է, կենտրոնը, դեպքերի ընթացքն ու քաղաքական-պատմական իրադարձությունների զարգացման հենակետային ուժը» (2):

Ազգային ցավը հեղինակը իմաստավորում է ժողովրդական տարերքի կենսափիլիսոփայությամբ: Այս է պատճառը, որ վեպում գերիշխում են ժողովրդական մասսայական տեսարանները, որտեղ երեւում են եւ ժողովրդի հավաքական ուժի խորհուրդը, եւ նրա կենսափնացության խտացումը, եւ

ժողովրդական իմաստության խորախորհուրդ շերտերը, եւ ազգային հոգեկերտվածքը: Ժողովրդական իմաստությունը, նրանով պայմանավորված գոյության ճանապարհի խորհուրդը դառնում են վիպական գործողությունների հենքը: Ժողովրդական իմաստությունը հեղինակը ամբողջացնում է՝ հենվելով ժողովրդական կյանքի, կենցաղային սովորույթների, մարդկային հարաբերությունների ճիշտ գնահատումների վրա: Իսկ սա պայմանավորված է հեղինակի՝ ժողովրդական կյանքի խորը ճանաչողությամբ, պատմական դեպքերի ու փաստերի խորաքննիչ վերլուծությամբ: Ժողովրդական կենցաղի, վարքուբարքի խանգաղյանական խորագույն իմացությունն է ամբողջացնում արեւմտահայության մաքառման ճանապարհի ոգեղեն ուժը եւ հայոց լինելիության խորհուրդը: «Ապրելով ավարառու եւ ավազակաբարո պետության մեջ, միշտ ենթակա նրա կեղեքմանն ու կողոպուտին, հայը դիմանալու մի ուրույն ձեւ է ստեղծել իր համար: Նա իր արտից հավաքած երկու բեռ ցորենից մեկն անպայման թաքցնում էր հողի մեջ, երկու կուժ ձեթից մեկը պահում սեւ օրվա համար, որ այնքան շատ էր: Նման թաքստոցներ կային գյուղի բոլոր տներում, պարտեզներում, գոմերում» (3):

Խանգաղյանի գեղարվեստական հայեցողության մեջ ժողովրդի կենսափիլիսոփայումը հյուսվում է ժամանակի պատմական-քաղաքական իրադարձությունների հենքի վրա: Իրադարձությունների զարգացմանը զուգահեռ խտանում են պատումի եւ ողբերգական, եւ հերոսական շերտերը, ժողովրդի գոյատեւումի խորհուրդը պայմանավորվում է նրա կենսափնաստությամբ: Երբ թուրքը պահանջում է հանձնել գյուղացիների մոտ թաքցրած գեները, գյուղացիները, ճանաչելով թուրքի մարդկային տեսակը /«Իսկ Քեմալ բեյի համար ինչ փույթ, թե արեւը որտեղից է ծագում. նրա արեւը դեղին ոսկին է՝ մի-մի փոքրիկ արեւներ»/, որոշում են «դեղին մետաղ լցնել թուրքի բուկը, որ խեղդվի»: Թշնամու դեմ պետք է կռվել թշնամու գեներով. «Խաբել պիտի սովորենք, խաբել...»/էջ 88/: Այս մտքին է հանգում ժողովուրդը, որովհետեւ հասկանում է թուրքի նենգ ու խաբեբա էությունը: Սա է հավաստում նահանգապետի հրահանգը. «Հայը միամիտ է: Հային խոստացիր վերադարձնել իր հողն ու տունը՝ դանակը փեշիդ տակ պահած, եւ նա դանակը մոռացած՝ քո պատրանքին կհնազանդվի: Հային խաբելը նոր չպիտի սովորենք: Խաբեցեք» /էջ 291/:

Հեղինակը ժողովրդական տարերքի ուժը խտացնող հերոսների, նրանց գործունեության ու երեւույթների գնահատումների միջոցով արտահայտել է պատմական դասերով հաստատված ժողովրդական կենսափիլիսոփայությունը. «Թուրքի կողքին դիվանագիտություն պիտի սովորենք»/ էջ 91/: Եվրոպական տերությունների նենգ դիվանագիտական քաղաքականությունը հանգեցնում է այդ ճշմարտությանը:

Խանգաղյանական պատմահայեցության մեջ ինքնատիպ խորհուրդ է ստանում ժողովուրդ-անհատ կապը: Ժողովրդի պատմության անիվի պտույտը կախված է ժողովուրդ-առաջնորդ ճիշտ հարաբերություններից: Պատմական ճանապարհին հաղթանակներ կլինեն, եթե ժողովրդական իմաստությունից է սնվում անհատ-առաջնորդի դիվանագիտական ճկուն կողմնորոշումը: Ժողովուրդ-անհատ կապը

## Մեր Խանգադյանը Արցախում

Ինտաքրքիր զուգորդումներ է ստանում խանգադյանական պատումում: Անհատի՝ որպես առաջնորդող ուժի խորհուրդը դարձյալ միաձույլ է ժողովրդական կենսափիլիսոփայությանը: Այսինքն՝ խանգադյանն իր հերոսին՝ որպես դեկավարող ուժի, զարգացնում է ժողովրդական տարերքի հորձանուտում. ժողովուրդն է նրան տալիս այն ոգեղեն ուժը, որով նա կարողանում է հավաքել բոլորին իր շուրջը, առաջնորդել նրան՝ հաղթահարելով լինելիության ճանապարհի խնչընդոտներն ու դժվարությունները: Վեպի սյուժետային գործողությունների ողջ ընթացքում ժողովուրդ-անհատ կապի խորհուրդն ընդհանրության մեջ չի խաթարվում, չնայած լինում են պահեր, երբ կյանքի բնականոն զգացողության ուժն ավելի հզոր է դառնում, քան սթափ բանականությունը. ժողովրդի մի մասը, հավատալով նահանգապետի կեղծ խոստումներին, չլսելով Ներսեհ Չավուշի հորդորները, նորից հայրենի հողին մոտ լինելու և արարումի երզը հյուսելու մարդկային հոգու ծայրին են հետևում: Նույնը տեսնում ենք նաև Ջիլ Ջաքարի մտորումներում. «Նաև մարած հույսն էր մխում՝ գուցե արդեն վերջացել է պատերազմը, և հաշտ ապրելու սկիզբն է: Երանի այդպես լիներ: Ինքը իր տանը թաքցրել է մի կուժ սերմացու: Յիմա իր արտի սեւահողը փլվել-ուռել է: Կգնա, թեկուզ գիշեր լինի, սերմը կհանձնի հողին և կսպասի ծլարձակմանը» /էջ 290 /: Սա էլ հայի լինելիության կերպն է. միշտ հոգում արթուն է հողին կյանք տալու և նրանից կյանք ստանալու զարմանալի ուժը: Սակայն դիպաշարում ժողովուրդ-անհատ կապի խաթարումը երկար չի տևում. դեպքերի ընթացքը դարձյալ ժողովուրդ-անհատ միաձույլ հարթության վրա է խարսխվում: Ներսեհ Չավուշն իր որոշումները կայացնում է ժողովրդական կերպարների՝ Խորեն աղայի, Ջիլ Ջաքարի, Բենիամինի և մյուսների կարծիքների հիման վրա: Անհատ-առաջնորդ կերպարը խանգադյանական պատումում, որքան էլ ենթարկված գեղարվեստական պայմանականությունների, հատկանշական է ռեալիստական հավաստիությամբ: Գրողը հաճախ է նրան զննում տարբեր կողմերից, մարդկային տարբեր հարաբերություններում՝ Ներսեհ-Աղավնի, Ներսեհ-Յեղիմե, Ներսեհ-յուրային, Ներսեհ-թշնամի, Ներսեհ-մարդ: Ներսեհ Չավուշի կերպարը մարմնավորվում է պատմական իրադարձությունների հորձանուտում՝ որպես ժողովրդի լինելիության, հայի պայքարի ու մաքառման խորհրդանիշ, հայոց ցավի հավերժող վկա... Այս է պատճառը, որ վեպի վերջում նա, մեծ դժվարությամբ փրկության փոխարեն հասցնելով յուրայիններին, ինքը դարձյալ հետ է վերադառնում, որպեսզի ծուլվի իր հողին, իր երկրանը...

Խանգադյանական պատումում Ինտաքր-



Ս. Խանգադյանը և Գեորգ Նայրիյանը (ձախից՝ չորրորդ) Ի. Ալավերդյանի ընթանիքի անդամների հետ, 1955թ.



Ս. Խանգադյանը Ղարաբաղի գրողների հետ (աջից՝ Բագրատ Ուլուբաբյան, Իսահակ Ալավերդյան, ձախից առաջինը՝ Ժան Անդրյան), 1961թ.



Ս. Խանգադյանը Սյրեփանակերտի մրավորականների հետ, 1961թ.

քիր ենթաշերտեր ունի նաև անհատ-պատմություն հարաբերությունը: Անհատի՝ որպես ազգային գործչի արժեհամակարգը, աշխարհընկալումն ամբողջանում է ժողովրդի պատմական անցյալի արժեւորմամբ. պատմությունն է նրան ուղղորդում, պատմական դասերն են նրան լինելիության ճանապարհի խորհուրդը հաստատում: Ժողովրդի պատմության ճանապարհին թույլ տրված սխալները նոր սերնդին ճիշտ քայլելու ուղիներ են նշում: Ներսես Զավուչի՝ պետականություն ստեղծելու երազանքները փշրվում են պատմական ճշմարտության առջև: Ռուսաց թագավորի օգնությամբ Հայաստանի անջատման եւ ինքնուրույն պետություն ստեղծելու հեռանկարն ի չիք է դառնում Ներսես Զավուչի խոհերի շղթայում, երբ պատմական անցյալը սթափեցնում է նրան. «Այս աշխարհում ապրում է միայն նա, ով զենք է վերցնում թշնամու դեմ: Միայն երկաթով կարելի է ապրել, Թաթուլ: Հիշում ես Խրիմյան Հայրիկի թղթ շերեփը: ...Նա մռայլ մայեց եփրատի հեռավոր հովիտներին: Թվաց՝ երկնքից երկաթյա շերեփ կախվեց մշուշի վրա» /էջ 175/: Երկնքից կախված թվացյալ երկաթե շերեփը դառնում է պատմությամբ հաստատված ճշմարտություն. հայն իր փրկությունը սեփական բազկին պիտի ապավինի, թշնամու կողքին որպես պաշտամունք զենքը պետք է ունենա:

Պատմությունն է կերտում անհատի՝ աշխարհաքաղաքականության մեջ ճիշտ կողմնորոշումը՝ ցույց տալով պատմության քառուղիներում մեզանում հաճախ բացակայող օտար տերությունների հետ հարաբերություններ ստեղծելու ճիշտ ուղիները: Պատմություն-անհատ կապի այս շեշտադրումը կատարվում է վիպական գործողությունների ընթացքում Ներսես Զավուչի հոգեկան աշխարհում կատարվող փոթորկումներին ու ընդվզումներին զուգահեռ: Իր ներսի աչքերով հեղինակը պատռում է պատմության կեղծ շղարշը եւ ցույց տալիս ճշմարտությունը: Ներսես Զավուչը, որն էնվեր փաշայի շքախմբի հայ սպա էր, շատերի նման հավատում էր, որ երիտթուրքերի կառավարությունը լույս կբերի թշվառության մեջ խարխափող ժողովուրդներին: Սակայն բացվում է նրանց կեղծ դիմակը, եւ պարզվում է, որ ազատություն եւ եղբայրություն կոչող իշխանությունը միություն է չարագործների ու մարդապանների: Անսահման ցատունով է լցվում Ներսես Զավուչի հոգին, եւ չի հանդուրժում իր գոյությունը «սեւ դաժանության»՝ էնվերի կողքին: Թուրքական բանակի նախկին սպան զենքն ուղղում է թուրք կառավարության դեմ, գիտակցում եվրոպական տերությունների նեղ քաղաքականության էությունը եւ հանգում մի համոզման. «Մեր փրկության ելքը ազգովի ֆիդայի դառնալն է, զենք առնելը, ազգովի դիմադրելը»: Վիպական գործողությունների հանգույցում փշրվում է հայի երազանքներով ապրելու տեսակը. «Մեր ազգի խելքները մեզ պետք է սովորեցնեին զենք շինել, պատգամեին թշնամուն խաբել սովորել, թշնամուն ասել սովորել. մեր ձեռքը Ավետարանի ու մազադաթե ծաղիկների կողքին զենք կրել պետք է սովորեր...»: Խանգաղյանն անհատ հերոսի խոհերում պատմական անցյալի ու ներկայի գնահատումների խաչաձեւումներում ընդգծում է հայոց լինելիության մյուս շեշտադրումը՝ սթափ բանականությամբ եւ սառը դատողությամբ

պետք է պատմական պահի կարեւոր որոշումները կայացնել: Ավելի շատ զգացմունքներով ու երազանքներով ենք առաջնորդվել, առողջ բանականությունը հաճախ է տեղի տվել զգացմունքներին ու հույզերին: Պատմական անցյալի այս դասերն են խանգաղյանական հերոսին թրծում՝ հաստատելով երեւոյթներն ավելի սթափ գնահատելու անհրաժեշտությունը, որը կոչված էր ժողովրդի անելանելի կացության մեջ խոհեմ լուծումներ գտնելու: Այն է՝ կրկին չխաբվել թշնամու կեղծ խոստումներին եւ դադարեցնել ինքնապաշտպանությունը. դա նշանակում էր հիմնովին կործանում: Բացվում է խանգաղյանական պատմահայեցողությամբ ամրակայված պատմություն-անհատ կապի մյուս շերտը. պատմական ճշմարտությամբ է անհատ-առաջնորդը կերտում ազգի վաղվա օրվա խորհուրդը: Դարձյալ ժողովրդի պատմական անցյալն է ապագայի խորհուրդը հնչեցնում Ներսես Զավուչին. քանի անգամ է թշնամին արմատախիլ արել հային, քանի անգամ է հայը զարմանալի ոգեղեն ուժով մոխիրներից վեր հառնել, քանի անգամ են փրկված բեկորները նորից հայի օջախի ծուխը վառ պահել... Հիմա էլ, երբ վտանգված է հայոց լինելիության ճանապարհը, պատմությունը բերում է իր պատգամն անհատին. «Ինչ տառապանք էլ լինի՝ պետք է դիմանալ, որ հետո, երբ գա ցանկալի օրը, հայության բեկորները հավաքվեն իրենց նախնավանդ հողում, վերակենդանացնեն Հայաստանը: Այս է Ներսեսի նպատակը: Ուրեմն պետք է նորից փրկել փրկվածներին, սերմը պահել վաղվա ցանքի համար» / էջ 297 / :

Լինելիության մույն խորհուրդն է հնչեցնում Խաչիկ Դաշտենցի «Ռանչաբների կանչը» վեպի հերոսը՝ Ալադին Միսակը: Նա, յուրաքանչյուր որբացած մանկան համար մեկ ոսկի վճարելով, թուրքերի ու քրդերի մոտից հավաքում է նրանց, որպեսզի «վաղվա օրվա համար շիթիլ անի»: Լինելիության ճանապարհի յուրօրինակ սկիզբն է սա, հայոց անկուտրում ոգու հավերժող խորհուրդը, որը շեշտվում է 60-ական թվականներին արեւմտահայության ճակատագրի թեմայով գրված գրեթե բոլոր գրական երկերում:

60-ականների գրական սերունդը, ժառանգելով 20-րդ դարասկզբին հնչած բակունցյան «ծիրանի փողի» խորհուրդը, յուրովի հնչեցրեց այն՝ փոխանցելով եկող սերունդներին: Այսօր անկախության ճանապարհ կերտող նոր սերունդը մեկ դարյա հեռավորությունից յուրօրինակ հնչեղություն է տալիս բակունցյան «ծիրանի փողին», հնչեցնում այն՝ ի լուր աշխարհի քարացած խղճին...

## Ծանոթագրություն

1. *Ա.Չոպանյան, Նամականի, Սովետական գրող, 1980թ., էջ 334:*
2. *Ս.Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք 3-րդ, Երեւան, 1986թ., էջ 138:*
3. *Սերո Խանգաղյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 178: /Այսուհետ բնագրային բոլոր մեջբերումները կկատարվեն նշված գրքից/:*



# Սերո Խանգադյանի պատմվածքները



## ՍՈՒՐԵՆ ԱՐԱՅԱՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նորագույն գրականության բաժնի վարիչ

**Ի** տարբերություն ավագ սերնդի այն գրողների, որոնք իրենց ստեղծագործական ճանապարհը սկսել են 1960-70-ական թվականներին, Խանգադյանը մի տեսակ ավանդականության ու նորի կապող օղակ է՝ «ինքն իր» եւ ընդհանրապես ժամանակակից հայ պատմվածքի (արձակի) քննության պարագայում:

Ստեղծագործության 50-60-ամյա ճանապարհի անցած հեղինակը հասունացման երկար գրական մայրուղի է անցել: Դա նման է «փլվածքներով» անհարթ ճանապարհի... որի անցած ուղենիշներում 60-70-ական թվականները «կուտակումների» գրական վերելքի ու հայտնագործման «էպիկենտրոն» տասնամյակներ են:

«Փլվածքների» գրական ընթացքում խորհրդանշուն է նաեւ գրողի ստեղծագործության բազմաժանրությունը, ինչ խոսք, նաեւ ասելիքի առատությունը:

Ժամանակաշրջանի խոր, դրամատիկ ապրումը, «ելքի» որոնումները գրողին մղել են վեպի, վիպակի, պատմվածքի, զրույցի, անգամ առակի եւ հեքիաթի ժանրային միջոցներով արտահայտելու կեցությունն ու նրա բազմաձևավալ շերտերը:

Գրականագիտությունն ու քննադատությունը բազմիցս անդրադարձել են այսօր արդեն մեր գրականության նահապետներից մեկի՝ Սերո Խանգադյանի վիպական աշխարհին: Սակայն մեծ կտավի երկերի կողքին քիչ է հիշվել գրողի փոքր տեսակի ժանրի՝ պատմվածքի «գոյությունը», որն ընդգրկած նյութով տեղ ունի ինչպես ժամանակակից արձակի, այնպես էլ գրողի բազմաժանրության համակարգում:

Պատմվածքը Սերո Խանգադյանի էպիկական աշխարհի մանրակերտն է, մի տեսակ, ասելիքի (լայն առումով) «տրոհված» մասը, որն իր բովանդակությամբ հակված է դեպի իրականության խիտ ծալքերը:

Ժամանակի գեղարվեստական արտացոլումը Խանգադյանի պատմվածքներում հավերժի բարոյական-փիլիսոփայական տեղադրումն է, որն ուղեկցվում է արդիական խնդիրների արծարծումով: Եվ եթե «գեղարվեստական ժամանակը» տարբեր չափումներ ունի, ծավալների իր լայնա-

խոհ չափանիշները՝ մարդու ճակատագրի, ոգու, կյանքի եւ մահվան, պատմության իր տարաբնույթ եզրերն ու հորիզոնները, այնուամենայնիվ, չտարորոշելով այդ բոլոր սկիզբներն ու սկզբունքները, բացառելով նաեւ բանավիճային որեւէ տարբերակի հայտնություն՝ կարելի է եզրակացնել, որ հավերժի խնդիրը «գեղարվեստական ժամանակի» այն ներկան է, որն իր մեջ ներառում է անցյալն ու ապագան: Ավելի իմաստուն պետք չէ լինել հասկանալու համար Մարկոս Ավրելիոսի այն միտքը, որն ասում է. «Ով տեսել է ներկան, նա տեսել է ամեն ինչ»: Արդիական այս սուր բեւեռումը, որն արտահայտում է վերոհիշյալ մտքում, Խանգադյանի պատմվածքի տեսանելի հայեցակետն է, որից շարունակվում է նրա բարոյական աշխարհի, իրերի եւ նյութի, կեցության «կորած արահետների» ցավագին ապրումներն ու մաքառման կամքի գալարումները: Ավանդականության իմաստով Խանգադյանի հրատարակած «Կորած արահետները» (1964 եւ 1989 թվականներին հրատարակվել է նույն վերնագրերով երկու ժողովածու), «Ամծրելից հետո» (1969), «Ավանդատուն» (1986) եւ դրան նախորդած այլ պատմվածքներ (գրված 50-ական թվերին) Բակունցի «Մթնածորի» փակված «արահետների» շարունակությունն է... «Քաղաքակրթության» այս կենտրոնը, սակայն, Խանգադյանի պատմվածքում ժամանակակից աշխարհի քարտեզի մի անկյունն է, գյուղաշխարհի նախնական «սկիզբը», որն իր բարոյական բեւեռներով ծնունդ է տալիս Մաթեոսյանի «Ծնակուտին», Հովսեփյանի «Հայոց թաղին», Այվազյանի «Թիֆլիսին», որոնք բավականին ուշ երեւան եկան Խանգադյանական աշխարհից: Մի խոսքով, Խանգադյանը գյուղաշխարհի էպիկ-քնարերգու է, առանց որի դժվար է պատկերացնել ժամանակակից պատմվածքի աշխարհագրությունը:

Ըստ էության, գյուղը Խանգադյանի պատմվածքում բարոյական հենակետ է, որով նա կապվում է իր մեծ հայրենակցի՝ Բակունցի ավանդներին ու նոր «եզրեր» փնտրում ժամանակակից արձակում:

«Կորած արահետները» խորագրի տակ Խանգադյանը ներկայացնում է աշխարհայացքային նույն ընդգրկվածության շարքեր («Կորած արահետներ», «Յոթերորդ աղբյուրը», «Սրտի ցավով», «Կարմիր շուշաններ», «Մերոնք եւ մեր հարեւանները», «Վարք հարանց», որոնք թեմատիկ բազմազանությամբ հանգում են նույն բեւեռին), պիտի ավելացնել նաեւ 1989 թվին հրատարակած «Քարերը լեզու ունեն» պատմվածքը, որ Գողթն գավառի «կորած արահետների» գեղարվեստական պատումն է, կորստի կսկիծն ու մաքառումը: Խանգադյանական աշխարհի այդ եզրերը մարդու եւ մարդկային հոգեւոր վեհությունն է, շիտակ ու պարզ, նախնական հայացքն է իրերին ու իրերի ընթացքին:

Էպիկական պատումը Խանգադյանի պատմվածքում հայտնաբերում է օբյեկտիվ աշխարհի անցուդարձը՝ ընդգրկելով մարդու ճակատագիրն ու ճակատագրի բռնության դեմ ըմբոստանալու հակումը: Սովորաբար, այս փոքրիկ աշխարհում բախումներն ավելի զորավոր են, եւ գրողի հերոսներն այնքան վեհ են, ինչպես ժամանակակից աշխարհում մարդն ու նրա կյանքը: Դժվար կյանքի, ցեղի, արյան կանչը «փոքր»

մարդկանց «աննշան թվացող» արարքներում դրամատիզմի մեծ լիցք է պարունակում, հետևաբար բախումի նշաններն ու հետագիծը «դաժանորեն» ճակատագրական է հանգադյանի պատմվածքներում: Ավելին, իրադրության բարդությունն ու խիստ հակադրությունը ստեղծում են ուժեղ մարդկանց մի պատկերասրահ, որոնք «Կորած արահետների», մարդու բարոյական աշխարհի, հոգեւոր մաքառման մարմնավորումներն են խորհրդանշում իրենց նախնական վեհության ու պարզության մեջ: Մի դեպքում գրողը «սրտի ցավով» է ըմբռնում ժամանակակից աշխարհի ակտերը, մի այլ դեպքում՝ «վարքի» համամարդկային կենսափիլիսոփայությամբ մղում դեպի լուսավոր արահետների ակունքը: Խանգադյանի պատմվածքներում, կարճ ասած, ակտաճանաչությունը յուրատեսակ հակադրվում է իր սկզբի նախնականությանը, որ գեղեցիկ կորստի եւ պայքարի ինքնագիտակցության «արահետն է» բացում գեղեցիկն ու մարդկայինը հաստատելու համար... Գեղարվեստական ժամանակը պայմանական է, ուստի նյութի հարաբերությունը ժամանակին (այն վերցված լինի ժամանակակից կյանքից, թե ավելի վաղ շրջանից) հակված է բացահայտելու արդիականության սուր պրոբլեմները՝ բարոյական-ազգային կեցության աշխարհայեցությամբ: Գրողական տեսադաշտը (լինի առաջին դեմքով պատմված կամ հերոսի «գործողության հոսքի» մեջ բովանդակված) փաստագրական նշաններ է հայտնաբերում պատմվածքում, որով ի հայտ է գալիս ոչ միայն միջավայրը, այլ նաեւ աշխարհագրական սահմանները: Սակայն Խանգադյանի հաջողված պատմվածքները «ներամփոփված» չեն: Նրանք իրենց թանձր «տեղայնության» սահմաններից աճում են, ընդարձակվում մինչեւ ազգային կյանքի հոգեւոր ոլորտները, որի ընդհանրացմամբ «ծնվում է» քերթողությունն ու արվեստը, հայտնաբերում տաղանդին, քանզի ասված է՝ «բազում են կոչեցեալք, սակավ՝ ընտրյալք»: Խանգադյանն «ընտրյալ է»:

Տաղանդավոր գրողի առանձին հաջողված պատմվածքներ են, օրինակ, «Օտար հավքը», «Արջի մորթին», «Այրված տունը», «Վերջին արցունքները», «Մարդը», «Թթենին», «Մարդը եւ իր մորթին», «Ճանապարհը», «Վերջին եզնարածը», «Յորովել», «Յիմա ես ի՞նչ անեն», «Քարերը լեզու ունեն» եւ այլն... Էպիկական պատումը Խանգադյանի պատմվածքներում իրապաշտորեն (ռեալիստորեն) է ներկայացնում միջավայրն ու նրա մեջ գործող մարդկային հարաբերությունները: Դրանով գրողն ուրվագծում է փաստագրական մերձեցումը կյանքի իրականությանը, բայց այն պատմվածքում, որտեղ գրողը չի մնում նյութի «նեղ» սահմաններում, այլ հասնում է ընդհանրացման, իրադրության բախումը ներքին թելերով շաղկապում է կյանքի փիլիսոփայական կեցությանը, նրա խոր դրամատիզմին: Խանգադյանի էպիկական աշխարհն «անդունդներն ու փլվածքները» սեւի եւ սպիտակի միատարր հակադրություն է, այլ կեցության օբյեկտիվ հարաբերությունների, գույների իրական «հակադրամիասնություն», որ խոր հետք է թողնում Խանգադյանի հերոսի հոգեւոր աշխարհում: «Վիպայնությունը» այս դեպքում իր դիպաշարային անցումների եւ հոգեբանական զարգացման սուր, հարաշարժ բովանդակային համակարգերում հերոսին «մղում է» վճռական

գործողության: Իրադրության դրամատիկ «աճը», հոգեբանության ամփոփվածությունը, ուժեղ մարդկանց բարոյական հայացքը կյանքի հանդեպ ու նրանց ամուր շաղկապվածությունը գեղեցիկի «հոգեւոր կեցությանը», Խանգադյանի պատմվածքներում իրական բախման շնորհիվ ստեղծում է «նովելային պատմվածքի» կառուցվածքային մի շերտ: Ժանրագոյացման արդի նմանօրինակ միտումը յուրօրինակ մի տեսադաշտ է ժանրերի մերձեցման, որ երեւում է նաեւ Գալչոյանի, Հովսեփյանի պատմվածքներում: Խանգադյանի «Արջի մորթին» պատմվածքում «փոքր» միջադեպը վերլուծվում է հոգու ողբերգական ապրումի, անդնդախոր ճեղքվածք բացում որսորդ Ներսեսի ճակատագրում: «Մթնածորը» (Բակունց) հիշեցնող այս նախնական, պարզ կեցության, սովորյալների մշտնջենական անփոփոխ «երկրում» մարդիկ ապրում են իրենց համայնքի օրենքներով: Լավ որսորդ էր Ներսեսը, բայց «խախտել է» համայնքի սովորյալն ու կարգը... Խանգադյանը միջադեպը տեղափոխում է մարդու բարոյական աշխարհի ոլորտը (Բակունցն այն քննում է սոցիալական-պատմական իրականության մեջ), որ Խանգադյանի վիպական միջավայրն, ասես, նույն Մթնածորն է, որ գարնան բացվող եւ ձմռան փակվող արահետների նման բացվում է ու փակվում:

«Գյուղն անտառի մեջ է: Անտառում արջեր կան, վարազներ էլ կան անտառում, շերտավոր բորենիներ էլ: Վրջերն այնքան շատ են, որ երբեմն նույնիսկ ցերեկները երեւում են գյուղում՝ ջրաղացի մոտ, բոստաններում»: («Կորած արահետներ», 1964, էջ 45):

Պատկերը բակունցյան նույն բնաշխարհն է, ուր միայն մարդկային հարաբերությունները Խանգադյանը քննում է հոգեւոր այլ շերտերում:

Ներսեսը բնաշխարհի զավակ է: Նա էլ սովորության համաձայն պիտի իր հարսնացուի «ուղքերի տակ փռի իր ձեռքով տապալած զազանի մորթին, հարսի վզովը գցի լուսանի կամ հովազի ժանիքների շարան, այլապես նրան աղջիկ չեն տա...» (էջ 46):

Ֆաբուլային այս պարզ իրականությունը զանազանում է հակադիր գործողության, պահի ողբերգականության, հոգեբանության լարումով: Ներսեսը սիրում է Թունասի աղջկան («հասակը շիփ-շիտակ», ճոճուն, երեսը թուխ-գունատ): Նշանվում է նրա հետ: Թվում է, թե գեղեցկության այս վեհությունն իր անաղարտությամբ պիտի զարգանա կոմպոզիցիայի տրամաբանական «աճման» ուղիով: Բայց... մոտենում է ձմեռը եւ պիտի Թունասի աղջկան տուն բերի, սակայն դեռ չի որսացել եւ չի նվիրել իր հարսնացուին «զազանի մորթին»: Ներսեսն իր անհաջողությունից «անհանգիստ»՝ հարսանիքին բերում է որսորդ Մանվելի թակարոն ընկած արջի մորթին: Այս միջադեպն էլ դառնում է վեհության «փլուզման», միֆաքայքայման այն տեսադաշտը, որ փոխում է Խանգադյանի հերոսի ճակատագրի ընթացքը: Միջադեպը պարզվում է կոմպոզիցիայի աստիճանական զարգացման մեջ: Ներսեսը հեռանում է հարսնացուից, մի տեսակ խռովում ինքն իր մեջ, միայնության, աններողամտության իր աշխարհում: Հետո նրա ամբողջ կյանքը վերածվում է քավության, ըմբոստ ող-

բեգրության, վեհության, «վերադարձի» մի շղթայի...

Միայնության, ըմբոստ կյանքի այս դրամատիկ ընթացքն ուրվագծվում է Խանգաղյանի համարյա բոլոր պատմվածքներում: Ընդդիմադիր գրության այս կեցվածքն ազգային-բարոյական կյանքի մի մասնիկն է, տեսնում ենք «Տունը», «Հարազատ ձեռքեր», «Քարերը լեզու ունեն», «Լալ Համազը» եւ այլ պատմվածքներում:

Բակունցյան ակունքից բխող պատմվածքներ են նաեւ «Օտար հավքը», «Այրված տունը» պատմվածքները, որոնք «Մթնածորի չարքը» պատմվածքի սոցիալական ենթաշերտերից վերածող մարդկային հոգեբանության դրսևորումներ են: Խանգաղյանն այս պատմվածքներում միջակայքում է ռեալիստական աշխարհը եւ «փլուզում» իրական հանգամանքների թելադրմամբ: Խորհրդանշանային իրականությունն իր թանձր գույներով պատումի ներքին կառուցվածքում հայտնաբերում է առասպելականը, որ մարդկային հոգեբանության մեջ, մարդու հոգեկան աշխարհին ավելացնում է նոր գույներ ու տառապանքներ: Արտաքին աշխարհի մուտքը համայնքի միջավայր գույնգույն է բարոյական տեղատվության եւ նրա մաքառման (հնչապես Բակունցի մոտ) կոնֆլիկտի սրումով: Մերի-Եղիշ-Վարսեն եւ Ազարյա-Արփեն-Երկրաբան հակադրամիասնությունը կերպարի խորհրդանշային այն համակարգն է, որն իր կառուցվածքային շերտերում ամփոփում է մարդու հոգեւոր-բարոյական էությունը:

Այս նույն գաղափարի վերահաստատումն է նաեւ «Ես եւ դու, դու եւ ես» պատմվածքը: Լայն առումով սա «գյուղական կենցաղի մեջ» ներթափանցված այն օտար քաղաքային շունչն է, որի ծավալումը քայքայում է մի վեհ, բարոյական, ամառապարտ աշխարհ: Խանգաղյանի պատմվածքները մայրն են խորքից, օբյեկտիվ հարաբերությունների եւ ընթացքի մեջ:

«Օտար հավքը» պատմվածքում արջի հետ մենամարտող Եղիշի կյանքում (հենց տվյալ պահին) հայտնվում է Մերին (Արփենի կյանքում՝ Երկրաբանը): Պատկերների ամբիջական հակադրությունը հոգեբանական աշխարհի մասնիկն է, որոնք զարգացման մեջ (Մերիի կոշիկները, համբույրի համը), խանգաղյանական ռեալիստական-միջի փլուզման հենակետերն են, որոնք վերաճում են սիմվոլի, հասկացության մակարդակի (Արփենի կյանքում այդ երեւույթը դրսևորվում է տանից հեռացումով): Պատմող-ասացողը միշտ այդ իրադրական կապերի, հանգույցների լարման եւ շիկացման մեկնակետում է: Ասես, նա «ուղեկցում է» ընթերցողին գործողության շղթայում, եւ ինքն էլ կշռում մարդու եւ մարդկային արժեքը: «Գրողի ես-ի» այս հավերժական «վերադարձը» մերթ ուղեկցվում է «բաց խոսքի», մերթ՝ իրականը գույնգույն հերոսների «միջադիտակցության հոսքին»: Այսպես՝ «Օտար հավքի» կառուցվածքային շերտերում երկխոսության վերածող գործողությունն էական գործառույթ ունի, որն, ասես, ավելի ուժգին է դարձնում ուժեղ կրթերի բախումը. «Արմանք բա՞ն էր», - ծանր խոսեց ծերունին: - Երեկ ճանաչում էիք մի թեւավոր տեսա: Հրաշք էր... Թեւերը ոսկի էին, կտուցը՝ մարջան... երգեց, երգեց... բայց մեր ծորի թեւավորներից ոչ մեկը չմտեցավ նրան... Օտար հավք էր, մեր ծորը չըմդունեց նրան... Ամեն հավք իր ծորն ունի» (էջ 25):

Կառուցվածքի այս շերտում, սակայն, ավելանում է մի նոր տեսադաշտ՝ իր էպիկական անսահմանությամբ տեսանելի. «Երբեմն Եղիշը մեն-մենակ բարձրանում է Խնձորուտի լանջը, գտնում Մերիի պատվաստած ծառը, նստում է նրա տակ, ծխում ու, երկար-բարակ նայելով ձորին, հիշում ճերմակ պարանոցով ու ճերմակ ձեռքերով այն աղջկան, որ օտար հավքի պես երեւաց այս կողմերում ու հեռացավ՝ մի գույգ ոսկե փետուր թողնելով ձորում ու մի չմարող կրակ Եղիշի սրտում» (27):

Նույն հոգեբանության «տեղաշարժն» է կատարվում եւ Արփենի կյանքում (նրա հիշողության տեսիլքը), ով իր փիլիսոփայական-բարոյական կերպավորումն է ստացել Խանգաղյանի մի այլ՝ «Երկու թռչուն» քնարական պատմվածքում:

«Կորած արահետների» հոգեւոր էությունը Խանգաղյանը որոնում է ոչ միայն իրադեպի, այլեւ ազգային կյանքի պատմության փիլիսոփայական ոլորտում: Իրադրության խոշորացումը, բնական կապերի արտացոլումը նրա առասպելական շերտերում, հերոսների «վարքի» էպիկական գույնգույնների, ինքնագիտակցման, ազգային գեների որոնման դարավոր ակունքն է, որի սկիզբը տեսնում ենք «Տունը» պատմվածքում, «Վարք հարանց» եւ «Քարերը լեզու ունեն» շարքերում: Էպիկականությունը, պատմականությամբ հանդերձ, իրականի արտացոլման սկզբունք է, որն արտահայտվում է գրողի աշխարհայացքում:

«Տունը» խորհրդանշական պատմվածքը պատմական անցքերի վերլուծությունն է՝ արտահայտված անհատի, հայրենիքի (տունը խորհրդանշում է հայրենիքը) ճակատագրի եւ կորստի, «վերադարձման տենչի» փոխաբերության միջոցով: Ավետիսի եւ նրա ընտանիքի ճակատագիրը յուրատեսակ մարմնավորումն է ազգային կյանքի: Նրա կորցրածը (Հայկավանի տունը, բերքաբեր այգին) ժողովրդի կենսական ակունքներից մեկի՝ Արեւմտահայաստանի (Հայկավանի) կորուստն է խորհրդանշում: Երկու՝ իրար հետ վիճող «ազգատոհմերը» խորհրդանշում են պատմվածքում մեր հզոր հարեւաններին՝ Թուրքիային եւ Ռուսաստանին: «Արանք իրար հետ չդադարող վեճ ու կռիվ ունեին, իսկ կռվախնձորը ջրվոր Ավետիսեց հնադարյան բարեշեն տունն էր, այգին, կալն ու մարագը» (91): Նրանք չէին էլ հարցնում տանտերերի կամքը եւ կռվում էին... Ավետիսի սերունդները կռվել էին, իսկ իրեն ճակատագիրը նետել է գետի մյուս ափը (Արեւելահայաստան): Ավետիսի մնացյալ կյանքը հոգեւոր մաքառում է՝ հոր պատգամը շարունակելու, հասնելու հայրենի եզերքին: Կոմպոզիցիան, ֆաբուլան զարգանում է պատմվածքում «աստիճանական»: Նորաշենում (Արեւելահայաստանի խորհրդանշանը պատմվածքում) Ավետիսը չի կարողանում իր տեղը գտնել: Հոգեբանական խոր ենթաշերտերում «մռնչում է» հայի տենչն ու վիրավորանքը:

Նոր տուն շինելու համար վեճն ընդգրկում է ժամանակաշրջանի ամենասուր պորբլեմներից մեկը՝ ազգային եզերքի վերադարձի խնդիրը, որն ավարտվում է Ավետիսի պատգամով. «Ինձ կթաղեք գետափին... երեսս դեպի մեր կորած Հայկավանը, որ այնտեղից տեսնեմ մեր տունը» (97):

Պատմվածքն, ըստ Խանգաղյանի թվագրության, գրվել է

1958-ին: Դա ազգային-ազատագրական արդիական շնչի արձագանքն է դեռ 20- 30 տարի առաջ: Ժամանակաշրջանի այդ սուր հարցադրումով «կեղծվում են» Խանգաղյանի «Հիմա ես ի՞նչ անեմ» (կոլտնտեսային ավերածությունների բարոյական սուր հարցադրմամբ), «Քարերը լեզու ունեն» շարքի հերոսները: «Այս արարողությանը վկա եմ» պատմվածքում Խանգաղյանը մի հարցադրում ունի, որ վերաբերում է հողի լքման, գյուղաշխարհի (լայն առումով նաեւ հայրենիքի) դատարկմանը: Ազգային ողբերգության այս եզրը (որն արժանի էր դեռ «Տունը» պատմվածքի մեջ՝ Ավետիսի սերունդների ցրվածության եւ նոռացության նկարագրությամբ) մարդու բարոյական աշխարհի մի ակունքն է, որի հրամայական պահանջը վերագում է հայրենիքի ճակատագիրը:

«Ծարավ տնկիներ», «Այս արարչությանը վկա եմ» պատմվածքներում, դրամատիկ-հոգեբանական միջավայրում, հողի եւ մարդու պայքարը լուծվում է հոգուտ մարդու, իսկ «Մեռած լիճը» երկի մեջ՝ դրա հակադիր բեւեռն է (քաղաքաբնակ գյուղացի-գիտնականը դատարկում է լիճը եւ փախչում՝ արժանալով հոր անեծքին): Սա քաղաքի եւ գյուղի բարոյական հակադրումն է նաեւ պատմվածքում, որ աղարտում է ամուր եւ կենսունակ հայրենի նշխարների (քարի, հողի, ծառի) եւ մարդու մաքառող ներդաշնակությունը...

«Քարերը լեզու ունեն» շարքում ազգային կեցությունը նկարագրվում է «գոյաբանական» խնդիրների տեսանկյունից: Միասնական դիպաշարային ընդհանրություն ունեցող այս պատմվածքներում, մերօրյա իրականությանը զուգահեռ պատմվում է այն «հոգեւոր ներկայության» մասին, որին դարձյալ տիրել է հարեւան «խաշնարած ցեղը»: Պատմվածքների թվագրություններն սկսվում են 50-ական թվականներից, որով գրողը վկայում է որոշ քաղաքական գործիչների այն անհեռատեսությունը, թե իբր հայ մշակույթը կտրված է եղել ազգային կեցության ճանապարհից: Գողթնի գավառի ողբերգությունը «Տունը» պատմվածքի նույն հոգեւոր մաքառման պատմության շարունակությունն է, որ դարձել է մեր ժողովրդի «կորած արահետներից» մեկը:

Այդ շարքի պատմվածքները գրվել են դրամատիկ ապրումով, անցյալի հարուստ կյանքի հոգեւոր լիցքերի կուտակումով («Դամբարանի ճիչը») եւ ազգային ընդդիմադիր, ըմբոստ կեցվածքի, մաքառման հոգեբանական մղումով («Վերջին շունչը», «Հայի տուն», «Քարերը լեզու ունեն» եւ այլն): Միայնակ կեցությունը, ներքին հզոր մաքառումը մինչեւ վերջին շունչը՝ ահա ազգային բարոյականության ճանապարհը

(«Վերջին շունչը» դրա լավագույն օրինակն է): Այս պատմվածքաշարում կրկնվող տուն, դամբարան, եկեղեցի, քար հասկացությունները հոգեւոր «գոյի» խորհրդանշաններն են, որոնց «ճիչը» կանչում է հային: Մինչ այդ գյուղը, նրա պատմությունը, եկեղեցին ու դպրությունը, Մարութա ծաղկողի եւ Թանկիկի սիրո պատմությունը մնացել են անտեր, իսկ ոչ-խարապահ թուրքը հսկում է գյուղը, դամբարանի ստվերը, որի մեջ թափառում է ծաղկողի սիրո հառաչը: Նույն պահին «Սուրբ գիրքը» պահպանող կարմիր մետաքսաշորը Վալադի երեխաների համար ծառայում է որպես վզկապ: Նույն անողոր ճակատագրի բերումով «երկրաշարժից ավերված» գյուղում (թուրքի կարծիքն է դա) որպես «հյուր է» ընդունում Վալադը հային, տանտիրոջ պես հյուրասիրում... («Դամբարանի ճիչը»):

Դիպաշարային այս նույն սկզբունքով է կառուցված նաեւ «Վարք հարանց» ենթավերնագիրը կրող շարքը: Յուրաքանչյուր պատմվածք սկսվում է մերօրյա մի դրվագով, որի հոգեւոր ակունքը բանահյուսական ենթաշերտերով կապվում է պատմական իրադրության հետ: Մերօրյա կերպարների (Առաքել, Հակոբ, Դետ Նավասարդ) նախահայրը նույն անուններով ապրել է Մաշտոցի ժամանակներում: Մաշտոցի կերպարը («Լույսը հնձանից», «Կամուրջը», «Վարք Մաշտոցի») պատմվածքներում մերօրյա այն հոգեւոր կռվանն է, որ կամուրջ է կապում ազգային կեցության «ծայրերի»՝ գալիքի եւ ներկայի միջեւ: Մաշտոցի կերպարն իրական զուգորդումներում ներկայացված է կենդանի, հյութեղ, ժողովրդի կյանքով ու ճակատագրով անմիջական մտահոգվող, հեռատես, պայծառ մի դեմք, որ տեսնում է վաղվա օրը: Ահա նրա հղած պատգամը, որն իր էպիկական բովանդակությամբ խանգաղյանական աշխարհի միասնականությունն է արտահայտում ամբողջության մեջ. «Ես գիր տվի ձեզ, որ լույս ունենաք ձեր տանն ու հոգուն: Բայց կմարի լույսը, եթե մոռանանք սուրն ու սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը ձեզ պաշտպան, հիշեցեք...» (355, «Վարք Մաշտոցի»): Եվ, իրոք, Խանգաղյանն ինքն է հետեւում «իր» պատգամին, քանզի, քանի գնում, «անտառի խորհուրդները թանձրանում են», դառնում լուսաշերտ ճանապարհ, որով ես պիտի վերադառնամ էությանը, - գրում է նա «Գայլականջում» պատմվածքի վերջում:

Սա մի հարվերժական «վերադարձ է» գրողի ներաշխարհում՝ էպիկական խորությամբ ապրելու եւ վերարտադրելու ժամանակն ու նրա մեծ խորհուրդը...

## Ծանոթություն

1. Հողվածն արտաստվել է Էդուարդ Ջոհրաբյանի «Լեռնային լեզենդ» գրքից (Երեւան-2007, «ՎՄՎ-Պրինտ» հրատարակչություն):
2. Էդուարդ Ջոհրաբյանի գրվածքից կարելի է ենթադրել, որ հողվածը Սուրեն Աբրահամյանի մեկ այլ աշխատությունից է՝ «Պատմվածքը Սերո Խանգաղյանի արձակի ժանրային համակարգում», բնագիր, էջ 77-88, 1992թ.:

# Եղեռնապարունի հերոսական էջերը



**ՄԱՐՏԻՆ ԳԻԼՎՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ե**ղեռնի թեմային Սերո Խանգադյանն անդրադարձել է տարբեր ժանրերի ստեղծագործություններում՝ պատմվածքներ («Վարք հարանց» շարքը), վիպակներ («Վեց գիշեր», «Մեռածները հիշում

են»), վեպեր («Խոսե՛ք, Հայաստանի լեռներ», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ»):

Բոլոր այս ստեղծագործությունները գրվել են պատմական անցյալի նկատմամբ հասարակական ուշադրության ու հետաքրքրության սրման, պատմության փիլիսոփայության նորովի ընկալման, նոր արժեհամակարգերի ձևավորման, պատմության ու արդիականության մերձեցման նոր մեթոդների ու եղանակների մշակման ժամանակներում, «ճնհալին» հաջորդած առաջին տարիներին, երբ քաղաքական մթնոլորտի բարեփոխումները գրողներին մղեցին համարձակ որոնումների, ինչի շնորհիվ լրացվեցին պատմության բազմաթիվ «սպիտակ էջեր», յուրացվեցին գեղարվեստական նոր տարածքներ, 20-րդ դարավերջին, երբ ազգային աննախադեպ զարթոնքի ոգեւորիչ ալիքները գրական-գեղարվեստական զարգացումները մղեցին առաջընթացի նոր հուն, եւ նորովի արժեւորվեցին նաեւ մեր ոչ այնքան հեռավոր անցյալի ինչպես ողբերգական, այնպես էլ հերոսական իրադարձությունները:

Որո՞նք են Ս.Խանգադյանի Մեծ եղեռնի թեմայով գրված ստեղծագործություններում 100-ամյա վաղեմության մեծ ողբերգության ու մերօրյա աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների մերձեցման եզրերը, ինչպե՞ս է անվանի գրողն ավանդում պատմության դասերը եւ ի՞նչ է պատգամում քաղել այդ դասերից այսօր եւ մեր առաջընթացի հետագա հանգրվաններում:

«Պատմավիպասանի խնդիրն է, - գրում է Վ.Բելինսկին, - հաշտեցնել երեւակայության ազատ հնարքը իրականության հետ, կապ ստեղծել ժամանակների միջեւ եւ գեղարվեստական ստեղծագործությունը ներկայացնել որպես ներկայի վկայություն եւ ապագայի մարգարեություն» (Ā.Āāēēī nēēē, Nī ād. nī +., d. 4, n. 392):

Ամենակարեւորն այն է, որ ներկայացնելով Մեծ եղեռնի ահասարսուռ դեպքերը, բացահայտելով Օս-

մանյան կայսրության իրական դեմքը, մեծ տերությունների դերակատարությունը Հայաստանն առանց հայերի տեսնելու գործում, Ս.Խանգադյանը մեծ տեղ է հատկացնում դարասկզբի ողբերգական իրադարձությունների հերոսական դրվագներին... Ճիշտ է՝ հայերը հավատացել են երիտթուրքերի կեղծ խոստումներին, եղբայրության, բարեկամության ու հավասարության վերաբերյալ նրանց խորամանկ ճամարտակություններին. ճիշտ է՝ ամենուր չէ, որ կարողացել են կազմակերպված դիմադրություն ցույց տալ թուրքական կանոնավոր զորագնդերին, բանտերից ազատ արձակված մարդասպան հանցագործներին ու արյան կարոտ ավարառու խուժանին, բայց եւ այնպես էլ չէ, որ համատարած ոչնչացվել են մատաղի գառան հնազանդությամբ:

«Վեց գիշեր», «Մեռածները հիշում են» վիպակներում եւ հատկապես «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպում Ս.Խանգադյանը կենտրոնանում է այն իրողության վրա, որ եղեռնական ժամանակներում լիակատար ոչնչացումից փրկվել են հայության այն հատվածները, որոնք կազմակերպված դիմադրություն են ցույց տվել թշնամուն: Այստեղից էլ հեղինակային եզրահանգումը՝ թուրք ջարդարարների դեմ ժողովրդական ընդվզումն ու պայքարն այդ հատվածներում կրել է կազմակերպված բնույթ, որին որդեգրված են եղել հասարակության բոլոր խավերը՝ անկախ իրենց հասարակական դիրքից ու կուսակցական պատկանելությունից: Կողք կողքի կռվել են մտավորականներն ու շինականները, դաշնակցականներն ու ռամկավարները, արմենականներն ու կուսակցությունների հետ ոչ մի կապ չունեցող մնացած բոլորը:

Մեր ժողովրդի պատմական փորձը ցույց է տալիս, որ գոյապայքարի ամենաօրհասական ժամանակներում, երբ թվում է, թե փրկության ոչ մի հույս ու հնար չկա, ժողովուրդը միշտ էլ մի հնար գտնում է. համախմբվելու, մի բռունցք դառնալու հնար, պատմական անհրաժեշտության թելադրանքով ասպարեզ են իջնում քաջամարտիկներ, ովքեր էլ ղեկավարում են համաժողովրդական ընդվզումն ու պայքարը: Դրանցից մեկն է «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպի գլխավոր հերոս Ներսես Չաուշը՝ Գերմանիայում ինժեներական բարձրագույն կրթություն ստացած, թուրքական բանակում ու ենվեր փաշայի թիկնազորում բարձր դիրք ունեցող մի անձնավորություն, որ ղեկավարում է Երզնկայի մահաճգի Կաթակն գյուղի ինքնապաշտպանությունը:

Վեպի հերոսների ճնշող մեծամասնությունը երեւակայական կերպարներ են, բայց այդպիսին լինելով հանդերձ՝ մեծապես նպաստում են հեղինակի գաղափարական ու գեղարվեստական ծրագրերի բացահայտմանն ու իրագործմանը: Երեւակայական կերպարներ են Խորեն աղան, Զիլ Զաքարը, Ծամոսկի Մարեն, Գուրբան Ալի Մանուկը, Ուլիկը, Հեղինեն, Մարգարիտը, ազատամարտիկներից շատերը: Նրանցից յուրաքանչյուրը հայրենի հողին, հայրենի եզերքին արմատներով կապված մարդիկ են ու մարմնավորում են հասարակական ամենատարբեր խավեր:

Մեծ նպատակների, անկոտրում կամքի, տոհմիկ հայ ազատամարտիկի մարմնացում է Ներսես Չաուշը, որ մտածում է ոչ միայն ինքնապաշտպանության մասին, այլեւ մտա-

հոգ է երկրի, հայրենի եզերքի ապագայի հանդեպ: Ինքնապաշտպանությունն ինքնապաշտպանություն, կկռվեն, շատերը կզոհվեն, բայց շատերն էլ կճեղքեն թուրքերի շրջափակման օղակն ու կանցնեն Արաքսի մյուս ափը: Բայց մի՞թե միայն ֆիզիկական գոյության խնդիր են լուծում լեռներում պաշտպանական դիրքեր գրաված հայկական ջոկատները:

Ամենամեծ մտահոգությունը, որ տանջում է Ներսեհ Չաուշին, երկրի խնդիրն է, որովհետև, եթե այն դատարկվի, այլևս չի կենդանանա: Թուրքերի ուզածն էլ հենց դա է, որ երկիրը հայաթափվի ցանկացած պարագայում, որ եթե չեն կարողանում գլխովին ջախջախել Երզնկայում, Խարբերդում, Սասունի լեռներում, Շապին Գարահիսարում, Վանա լճի ավազանում, Բիթլիսի բարձունքներում, Տրապիզոնի անտառներում ջարդերից խուսափած ու պայքարի ելած հայության բեկորները, ապա պետք է այնպես անել, որ նրանք հեռանան երկրից... Միայն այսպես կկործանվի հայոց երկիրը:

Այս ամենը քաջ գիտակցում է Ներսեհ Չաուշը, ով զինակիցներին ներշնչում է դիմանալ, ինչ գնով էլ լինի՝ դիմանալ, որ հետո, երբ գա ժամանակը, ցանկալի պահը, հայության բեկորները հավաքվեն իրենց հայրենի հողում, վերակենդանացնեն Հայոց աշխարհը: Ասել է թե՛ պետք է փրկել նաև կոտորածներից հրաշքով փրկվածներին: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Ակնովիտի լեռներում կենդանի մնացած հայրենակիցներին՝ հիմնականում կանանց, երեխաներին ու ծերերին, Արաքսի մյուս ափն անցկացնելուց հետո Ներսեհ Չաուշը հետ է վերադառնում՝ հավաքելու երկրում մնացած ազատամարտիկներին ու շարունակելու պայքարը, որ նախնիների ու զոհված ընկերների շիրմներն անտեր չմնան, որ նորից ծխան հայկական օջախները. «Երբ բոլորն անցել էին գետն ու դուրս եկել ափ, Ներսեհ Չաուշը շրջվեց ետ ու ջրի մեջ թաղվելով, ելնելով՝ փախավ դեպի մութը: Լսեց Հեղինեի ծղրտոցը.

- Ներսեհ...»

Քայլերն արագացրեց ու վազեց խավարի մեջ դեպի ետ, դեպի եկած ճանապարհը:

Նա վազքը դանդաղեցրեց միայն այն ժամանակ, երբ այլևս չէր լսվում Հեղինեի կանչը: Փլվող հոգոց հանեց: Դե, լավ է, Հեղինեն կկարծի, թե ինքը խեղդվել է գետում: Դե, լավ է, իր փրկած ժողովուրդը հասցրեց ապահով ձեռքերի... Փրկվածները կապրեն: Իսկ ի՞նքը» («Խոսե՛ք, Հայաստանի լեռներ», Եր., 1976, էջ 527):

Եղեռնի թեմայի արծարծումներում Ս.Խանգաղյանի նպատակն ամենեւին էլ ողբերգական դեպքերը, դրանց պատճառները ներկայացնելն ու բացահայտելը չէ: Ոչ միայն այս թեմայով, այլև պատմության տարբեր ժամանակահատվածները ներկայացնող իր վեպերում նա մերժեցնում է անցյալն ու ներկան եւ նաև ապագայի համար պատգամներ հղում իր ժամանակակիցներին ու ապագա սերունդներին, որ ապրելու են թուրքերի ու նրանց քոչվոր «եղբայրների» հարեւանությամբ: Անվանի գրողը պատգամում է երբեք չհավատալ թուրքին, որն ի ծնե ծարավ է հայի արյան ու առիթը բաց չի թողնելու հեղել այն: Այդպես են 18-րդ դարում թուրքերը գրավել Հալիձորն ու ոչնչացրել ողջ բնակչությանը, այդպես են նրանք ներշնչել

Մելիք Բարխուդարի դավաճան որդիներին գլխատել Մխիթար Սպարապետին, որը բազմաթիվ փառահեղ հաղթանակներ է տարել նրանց նկատմամբ մարտի դաշտերում, այդպես են նրանք կարողացել խաբեությամբ բացել մեր անառիկ բերդաքաղաքների դռներն ու դարձնել ավերակ:

Չհավատալ թուրքին ու կենդանի պահել պայքարի ոգին, նրա հետ աղերսակցվել ոչ թե մատաղի գառան խայտառակ հնազանդությամբ, այլ առաջնորդվել «ակն ընդ ական, ատամ ընդ ատաման» կարգախոսով: Այնպես, ինչպես վարվում էին «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպի հերոսներ Ներսեհ Չաուշը, Ջիլ Ջաքարը, Թաթուլ խմբապետը, անգամ մանկահասակ Ջյունիկը, Ուլիկը, հայ գեղջուկ կանայք, որոնք, իջնելով Ակնովիտի բարձունքներից, դաժան դատաստան էին տեսնում հայկական գյուղերում հայերին կոտորած, կանանց ու աղջիկներին լլկած ու նրանց հարմարավետ բնակարաններում բնավորված խուժանի նկատմամբ:

Ահա այս վրեժխնդրությամբ թուրքի գլխից կարելի է հանել մեզ համար խայտառակ այն մտայնությունը, թե հայն ընդունակ չէ զենք կրելու եւ մարդ սպանելու: Նրան պիտի բերել այն համոզմունքին, որ մարդ կարող է սպանել հայը, ու նաև՝ որ հայի համար մանուկներին սպանողն ու կենդանի մարդկանց այրողը մարդ չէ:

Թուրք բարբարոսներին նաև անհասկանալի էր այն, թե որտեղի՞ց ու ինչպե՞ս է ժայթքում վրիժառության ալիքը, ինչպե՞ս է եղել, որ գոյապայքարի ընթացքում յուրաքանչյուր հայ դառնում է ազատամարտիկ՝ լինի տղամարդ թե կին, ջահել թե ահել: Վրեժխնդրության պահանջն արյան հիշողության խորքերում է պահված, եւ այս առումով ուշագրավ է «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպի վերջաբանը, երբ Գուրբան Ալի անունով ծպտված հայորդի Մանուկը Բուխարայի ավազուտներում հանդիպում է նորից ենվերին:

Մանուկի հոր՝ Խորեն աղայի հոտաղին թուրքերը մորթեցին ջրաղացում: «Ինքը հասցրեց մտնել ջրափոսը: Ջրափոսից դուրս եկավ, երբ թուրքերը հեռացել էին: Ինքը տասը տարեկան էր: Հոր օրորոցի խաչը թաղված էր արյան մեջ: Մանուկը ջրաղացից դուրս պրծավ ու փախավ դեպի խավարի մեջ մրափած Եփրատը: Արքայադիր կամրջի մոտ երկու թուրք տղա բռնեցին նրան, շիկացած երկաթով վառեցին երեսը. «Քեզ մեռնում ենք, հայի լակոտ»: Դանակը դրին բլին: Հրաշք էր, ինքը խլեց թուրքի դանակը, խփեց նրա փորին ու իրեն զցեց Եփրատի երախը» (էջ 9):

Ահա այսպես են արյան մեջ սաղմնավորվում վրեժխնդրառության սաղմերը, որոնք մի օր ժայթքում են հրաբուխի պես: Մանուկը հետո երեսանց հավատափոխ է լինում, ծառայության է մտնում ոստիկանությունում, բայց երբեք չի մոռանում, որ ինքը հայ է: Հաճախ՝ համագյուղացիներին հանդիպելիս, «սիրտը քամվում է, ուզում է հարցնել՝ ինչպե՞ս է Ծամոսկի Մարեն, գյուղը... Ուզում է ընկնել Խորեն աղայի վզովը: «Ես Մանուկն եմ»... Բայց զսպում է պոռթկումը» (էջ 9):

Կոտորածների սարսափելի օրերին Մանուկը շատ է օգնում Ներսեհ Չաուշին՝ հաղորդելով կարևոր տեղեկություններ թուրքերի նախապատրաստվող հարձակումների, նրանց զորքերի թվաքանակի ու տեղաշարժերի վերաբերյալ:

Եվ հիմա՝ տարիներ հետո, Կարմիր բանակի հեծյալ ջոկատի հրամանատար Մանուկը Բուխարայի ավազուտներում ճակատագրի բերումով նորից հանդիպում է Էնվերին. «Բռնվածը պահանջեց, որ իրեն անհապաղ հանձնեն շտաբին: Գուրբան Ալին զգվանքով էր նայում նրան, մի՞թե հրաշք է, մի՞թե պատրանք է...»

- Ես հայ եմ, Էնվեր փաշա... Էնվերի չարացած բերանը դողաց:

- Կրկին չարի դեմ առա: Մի՞թե դեռ հողի երեսին հայ կա:

- Կա: - Մանուկը ծանր սեղմեց նրա կուրծքը: - Կա եւ Հայաստան աշխարհը: Այս էլ իմացիր, Էնվեր փաշա, ես՝ հայս, ես՝ երզնկայի քո ձեռքով ավերված Կաթակն գյուղացու որդիս, ահա Կարմիր բանակի հրամանատար եմ: Մեզ մոտ արգելված է գերուն մահացնելը: Սակայն ես գերու չէ, որ սպանում եմ, այլ սատկացնում եմ իմ ցեղի դահիճին:

- Մի սպանիր ինձ: Ես քեզ կհանձնեմ Բեռլինի բանկերում ունեցածս ողջ դրամը: Այն մեկուկես միլիոն դոլար է:

Մանուկը փամփուշտը մղեց ատրճանակի փողը.

- Բարի, սակայն ասացեք, Էնվեր փաշա, ես ինչ պատասխան տամ մեկուկես միլիոն հայերի անթաղ ոսկորներին, որ դու եւս քո ատամներով կրծոտելով կոտորեցիր: Ի՞նչ պատասխան տամ քո ձեռքով եւս խոշտանգված Հայաստան հայրենիքիս, պղծված Եփրատին: Եթե քո մեջ մարդ ասած մասունքից թեկուզ մի փշուր կա, ապա նման առաջարկ չպիտի անես ինձ: Հող զցիր բերանդ, Էնվեր փաշա: Դու պիտի սատկես» (էջ 534-535):

Այսպես է հայի մեջ ժայթքում վրեժխնդրության հրաբուխը, եւ սա է, որ պիտի այսուհետեւ հասկանալի լինի թուրքին...

Անկախության տարիներին Սերո Խանգադյանը հրատարակեց «Անդրանիկ» եւ «Գարեգին Նժդեհ» վեպերը, որոնց մեջ նույնպես պայքարի ոգին բարձր պահելու, կազմակերպվելու ու միասնական ուժ դառնալու անմոռանալի դասեր է տալիս սերունդներին:

# Սերո Խանգադյանի մանկապատանեկան արձակը



## ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սերո Խանգադյանի գրական հարուստ ժառանգության մեջ նշանակալի տեղ են գրավում ինչպես մանուկների ու պատանիների համար գրված, այնպես էլ նրանց ընթերցանության շրջանակները մտած պատմվածքներն ու վիպակները, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը, գեղարվեստական արժանիքները եւ կարեւոր դեր կարող են ունենալ մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման, անհատականության ձեւավորման, աշխարհայացքի ընդլայնման գործընթացներում:

Սերո Խանգադյանի ամբողջ ստեղծագործությունն ընդհանրապես նվիրված է մարդու հայ տեսակին, նրա ստեղծագործ աշխատանքին, հոգսերին ու մտահոգություններին,

հերոսական պայքարին, հոգեւոր մաքառումներին: Այդ ստեղծագործություններից շատերն ունեն կենսագրական հիմք եւ գեղարվեստական տարբեր միջոցներով ներկայացնում են կոլեկտիվացման շրջանի, Հայրենական մեծ պատերազմի, ստալինյան դժնդակ տարիների, 1960-ականներից սկսած «գիտատեխնիկական հեղափոխության», գյուղի «սոցիալիստական վերափոխման» ժամանակների հայ ժողովրդի կյանքի տարեգրությունը, հայ մարդու հոգեկան դրաման: Գրողի ուշադրության կենտրոնում այդ ստեղծագործությունների մեջ նաեւ մանուկներն են, բազմաթիվ փորձությունների միջով անցած, որբության դառնությունները ճաշակած, մանկություն չտեսած, միանգամից հասունացած մանուկ ու պատանի հերոսները, որոնցից շատերն այսօր իրենց բարոյականության որակներով, դժվարություններին դիմակայելու ունակություններով հիանալի օրինակ կարող են հանդիսանալ այսօրվա մեր երեխաների համար:

Հատկապես ուշագրավ են պատերազմի ու հետպատերազմյան տարիների կյանքը ներկայացնող պատմվածքների փոքրիկ հերոսները, ովքեր փոխարինում են ռազմաճակատ մեկնած իրենց հայրերին ու եղբայրներին: Անվանի գրողը հոգեբանական նուրբ դիտարկումներով է ներկայացնում իր փոքրիկ հերոսների ներաշխարհը, նրանց ծանր ապրումները, հոգեկան դրաման: Դժվարություններն օգնում են նրանց ճիշտ ապրել, ընտրել կյանքի օրինավոր ուղի, գնահատել աշխատանքը, սեփական քրտինքով օրվա հացը վաստակելու հաճույքն ու բերկրանքը:

Մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպման համար հույժ արդիական նշանակություն ունեն Ս.Խանգադյանի՝ պատմական թեմայով գրված ստեղծագործությունները («Վեց գիշեր», «Մեռածները հիշում են», «Արաքսը պղտորվում է» վիպակները ու «Վարք հարանց» շարքի պատմվածքները, բանասիրական թեմաների մշակումները):

Պատմական թեմայով գրված ստեղծագործություններն ունեն տարածաժամանակային ընդգրկումների բավականին լայն սահմաններ՝ հայոց պատմության վաղըջական ժամանակներ, 18-րդ դարի ազգային-ազատագրական պայքար, Հայոց մեծ եղեռն, Արցախյան ազատամարտ: Այդ ստեղծագործությունները հիանալի միջոց կարող են հանդիսանալ մանուկ ընթերցողների իմացությունների ընդլայնման, ազգային ոգու ամրապնդման, բարոյականային որակների մշակման համար:

«Վարք հարանց» շարքի պատմվածքների հիմնական մասը նվիրված է Մեսրոպ Մաշտոցին, նրա առաքելությանը, մեր պատմության մեջ նրա ունեցած դերին: Դրանք ուշագրավ են այն առումով, որ Մեսրոպ Մաշտոցը ներկայացվում է առաջին հերթին որպես մարդ՝ իր կենսագրության տարբեր հանգրվաններում, հասարակական տարբեր շերտերի հետ ունեցած հարաբերությունների համատեքստում:

Մանուկ ընթերցողների համար մեծ հետաքրքրություն կարող են առաջ բերել պատմվածքների այն դրվագները, որտեղ Մաշտոցն իր աշակերտներին ոչ թե բարոյախոսական խրատներ է տալիս, այլ նրանց համար պարզ, հասկանալի, մատչելի միջոցներով ներկայացնում է գրի ու գրականության, մտքի ու գիտության, հատկապես՝ դպրոցի դերն ու նշանակությունը: Պատահական չէ, որ գրերի գյուտից հետո Մաշտոցն առաջին դպրոցները բացեց սահմանեզերքին: Նրա խորին համոզմամբ այդ դպրոցները սահմանապահ բերդեր են, ուսուցիչներն ու աշակերտները՝ սահմանապահ զինվորներ: Մարգարեական մտքեր էին դրանք, հեռահար, ռազմավարական նշանակության մտքեր, որովհետև հետմաշտոցյան շրջանի մեր պատմությունը ցույց տվեց, որ այն բնակավայրերը, որտեղ փակվում են դպրոցները, ժամանակի ընթացքում ամայանում ու վերանում են աշխարհագրական քարտեզներից:

Ս.Խանգադյանը Մաշտոցին ներկայացնում է ոչ միայն որպես գիտնական ու մեծ ուսուցչապետ, այլև որպես զինվոր, որ իր աշակերտների հետ զենքը ձեռքին պաշտպանում է երկրի սահմանները, մշակութային արժեքները:

Պատմական թեմայով գրված ստեղծագործություններում Ս.Խանգադյանն օգտագործում է գեղարվեստական տարբեր հնարքներ, որոնք ավելի հետաքրքիր եւ ուշագրավ են դարձնում պատումի ընթացքը: Այդ ստեղծագործություններում շատ հաճախ հանդիպադրվում են պատմական անցյալն ու ներկան, միմյանց լրացնում են առասպելն ու միջը, իրականն ու երեւակայականը: Հաճախ, ճիշտ է, անվանի գրողը «հավատարիմ չի մնում» պատմական դեպքերի ճշմարտացիությանը, բայց դա չի խանգարում նրան մշակելու պատմության փիլիսոփայության արդիական ընկալումներ:

Հայրենասիրական դաստիարակության հիանալի դասեր կարող են տալ մանուկ ու պատանի ընթերցողներին «Արաքսը պղտորվում է», «Վեց գիշեր», «Մեռածները հիշում են» վիպակները, որտեղ հանդիպադրվում են անցյալը, ներկան ու ապագան:

«Արաքսը պղտորվում է» վիպակի հերոսը՝ Առաքելը, մեր մանկապատանեկան գրականության այն հերոսներից է, որոնք հիանալի օրինակ կարող են հանդիսանալ մեր մա-

նուկ ընթերցողների համար, որոնցից շատերը, ցավոք սրտի, աստիճանաբար կտրվում են արմատներից, մեծանում բոլորովին այլ հոգեբանությամբ, հետևում այլ արժեհամակարգերի:

Վիպակում Ս.Խանգադյանն իր հերոսների միջոցով ընթերցողի առջև բացում է պատմության խորհրդավոր դռները, նրան տանում տարբեր հանգրվաններ, թերթում անցյալի բազմաթիվ հերոսական ու ողբերգական էջեր: Մանուկ ընթերցողին նա հետաքրքիր միջոցներով հասու է դարձնում այն ճշմարտությունը, որ պատմության քառուղիներում սրի պես զորավոր են եղել մեր մագաղաթյա մատյանները, որոնք սերունդներին են ավանդել մաքառման ոգին, պատմության լույսն ու ստվերը:

Այդպիսի առաքելություն է Ս.Խանգադյանը վերագրում Առաքել Դավրիժեցու «Պատմությանը»: Նա դիմում է գրական հետաքրքիր հնարքի. կազմակերպում է երկու Առաքելների՝ Առաքել Դավրիժեցի պապի եւ Առաքել անունով նրա թոռան խորհրդանշական «հանդիպումը»: Պապը թոռանը տանում է պատմության ուղիներով: Այդ ճանապարհին պատանի Առաքելը հանդիպում է մեր հերոսական անցյալի շատ ու շատ նշանավոր դեմքերի, լուսն պատմություններ նրանց հերոսական կյանքի մասին: Վիպակում ուշագրավ է Թուխծամի՝ հայ գեղանի աղջկա կերպարը: Վերջինս Առաքելի հասակակիցն է եւ նրան զարմացնում է ոչ միայն իր ոչ երկրային գեղեցկությամբ, այլև զինվորին յուրահատուկ քաջությամբ, անկոտրում կամքով: Թուխծամի համար կարելու էր ազգային ներուժի համախմբումն է, պայքարի ոգու ամրապնդումը: «Մարդը պետք է ուժ ունենա», բայց մե՞ծ պետք է ի չարս չգործադրի: Ասել է՝ թե մարդը պիտի առաջին հերթին լինի բարի, իսկ «բարությունը անկարող ոչինչ բան է, եթե հզոր ուժ չունենա» (1):

Թուխծամը Առաքելին արիության դասեր է տալիս՝ «Արի եղիր: Արի, եղբայրս,- քրքջում էր երես ի վեր, իսկ ես բնավ չէի վիրավորվում: Նա շատ անկեղծ էր» (2):

Եղեռնի ահասարսուռ դեպքերին են նվիրված «Վեց գիշեր» եւ «Մեռածները հիշում են» վիպակները, որոնց միջոցով Ս.Խանգադյանի նպատակը ոչ թե մանուկ ընթերցողին կոտորածների, թուրքերի եղեռնագործների մասին պատմելն է, այլ պայքարի ոգու ամրապնդումը:

Յոթ տարի Ալիզոն լեռան անտառներում պատսպարված հայ ֆիդայիները անհավասար պայքար են մղում թուրքական կանոնավոր զորքերի դեմ: Նրանց մեջ է նաեւ պատանի Սերոբը՝ իր հասակակից ընկերներով: Սերոբը դաստիարակվել է այն ոգով (ի տարբերություն մեծահարուստ ընտանիքների իր հասակակիցների), որ երբեք չի կարելի վստահել թուրքին, հավատալ նրա շողոքորթ խոսքերին, որովհետև թուրքի համար մանկուց մշակվել է մի համոզմունք, որ հային թալանելը, բռնաբարելը, սպանելը հանցագործություն, մեղք չէ, այլ աստվածահաճո արարք, դրախտում տեղ գտնելու ուղիղ ճանապարհ:

Սերոբն իր ընկերների հետ մասնակցում է բազմաթիվ մարտերի, ակնատես է լինում բազմաթիվ ահասարսուռ դեպքերի՝ հիմնահատակ թալանված ու այրված բնակա-



վայրեր, լլկված, բռնաբարված դիակներ, անթաղ ծերեր ու մանուկներ ու զարմանում է, որ մեր զինվորներից շատերը երբեմն խղճահարությամբ են լցվում թուրք վիրավոր զինվորների նկատմամբ: «Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման. սա պիտի լինի մեր կարգախոսը», - իր հասակակիցներին բազմիցս ասում է Սերոբը՝ քաջ գիտակցելով, որ ուժին պետք է ուժ հակադրել, բարությանն ու մարդասիրությանը՝ համարժեք պատասխաններ:

«Պետք է ձեզ վարժեցնեն թշնամու արյուն թափելուն, տղաներ, իրենք են մեզ ստիպում այդպես վարվել»:

Սերոբը խոսում է հայ մարդու արժանապատվության գիտակցումով, այնպիսի ըմբռնումով, որ պետք է ջարդել այն կարծրատիպերը, թե հայերը չունեն դիմադրության ոգի:

Պատմության թեմայով գրված Ս.Խանգադյանի պատմվածքներն ու վիպակները արժարժուն են մատաղ սերնդի

հայրենասիրական դաստիարակության այնպիսի խնդիրներ, որոնք խիստ առօրեական են մեր օրերում, երբ համարյա ամեն օր մեր հարեւան ազերիները նորանոր սադրանքների են դիմում սահմանամերձ գոտիներում՝ ոչնչով չտարբերվելով իրենց բարբարոս նախնիներից:

Մեր մատաղ սերունդը պիտի դաստիարակվի մեր գրողների լավագույն ստեղծագործությունների ոգով, պիտի պատրաստ լինի Սերոբի, նրա մարտական պատանի զինակիցների օրինակով համարժեք պատասխան տալու յուրաքանչյուր սադրանքի ու ոտնձգության:


Դա է մեր մեծերի պատգամը:

### Ծանոթագրություն

1. «Արաքսը պղտորվում է», Երեւան, 1985, էջ 28:
2. Նույն տեղում, էջ 32:

## /// ՄԵԿ ԷՋ ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

### Գորիսի մանկավարժական տեխնիկումը (ներկայումս՝ Գորիսի պետական քոլեջ), որտեղ կրթություն է սպասել Սերո Խանգադյանը



Անհայտ հեղինակի գծանկարը տրամադրել է Գորիսի պետական քոլեջի փոխտնօրեն Անժելա Առաքելյանը:

# Կարդալով Սերո Խանգադյանի ստեղծագործությունները



## ՍՅՈՒՋԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սիսիանի N4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի

Երկրորդ դասարանցի էի, երբ հանդիպեցի քեզ: Մեր «Մայրենի»-ի (նույնիսկ էջն են հիշում՝ 159) դասագրքում քո՝ «Տատիս խրատն» էր՝ այնքա՛ն հետաքրքիր, այնքա՛ն սրտամոտ ու տպավորիչ... Հարազատ մի նմանություն այսօր էլ ծփում է շուրջս՝ բնությունը: Նույնն են մեր ծիգ սարերը, թավ անտառներ հասնող իրար փարված կածանները: Նրանք երբեք չեն շփոթում դեպի վաղ գարնամային խնջուղ, բոխի, շուշան, գառանդմակ, ավելուկ ու սխտորուկ, աշնանային հոն ու զկեռ, վայրի տանձ, մասուր, մոշ տանող արահետները: Ջանգեզուրն է, իմ եւ քո հայրենի եզերքը, մեր բնօրրանը: Դու իմ հայրենակիցն ես, դրկիցն ու հարազատը...

Ու այսպես ծնվեց մեր բարեկամությունը... Բաղդաբաստան մշակող, մեծ գերդաստան կուշտ ու կուռ պահող, հեքիաթ-առասպելների, հին-հին զրույցների անսպառ աղբյուր քո Նանախանում տատն է մշտապես իմ տեսադաշտում. ոլորապտույտ կածանով «հայավարի» տարազի մեջ շորորալով, թռռների գլուխն անցած՝ ահա անտառի փեշ է հասել, կարմիր մասուր, կարմիր սարսուռ է հավաքում... Երագում էի ունենալ նրա կապույտ կապան, թեքե-

րի ծալքերի տակից երեւացող կարմիր հալավը, գլխի ճերմակ շղարշը (չարդաթը), սեւ շալը, կլոր կումբով ու հաստ ճարմանդով նախշազարդ արծաթե գոտին, դեմքին առանձին հպարտություն տվող շքեղ, արծաթե ճակատնոցով գլխի պալտին... Մի օր էլ հագա այն: Մեր դպրոցի բեմահարթակին խաղացի պատմվածքի Ազիի դերը: Ի լուր աշխարհի՝ զրնգուն ձայնով հնչեցրի նրա պատգամ-խրատը, հորդոր-հրամանը... Այն մարդ-բնության անխախտ ու անխարդախ միասնության, աշխատանքի, արդար վաստակի գովքն է: Այս եւ կենդանական աշխարհ-մարդ հավատարմության շունչն է թեւածում «Ավանդատուն» գրքում, որտեղ շարան-շարան դասեր կան հավք ու թռչունի, գայլի ու շան, արջի ու քոթոթների, մրջյունի ու մկան մասին:

«Մայր շունը» հուզիչ պատմություն է կյանքի գնով ձագին փրկող, մինչեւ իր վերջին օրերը նրան պաշտպանող, խրախուսող մոր մասին: Ու այսպես դարձար հայրենի բնության իմ ուսուցիչը... Ձեռքդ բռնած՝ շրջեցի Սյունիք աշխարհում, պեղեցի Գորիսի ծերպերն ու քարանձավները: Լաստի խութը մագլցեցի նախ՝ Խաչին աղբյուրով, մի օր էլ՝ Խուռնակի ձորով: Իրար թիկնած ուղտածե սարերի փեշերին, սառնորակ աղբյուրի կարկաչ նվագակցությամբ վայելեցինք Գուսան Աշոտի «Օջախում»-ը, «Ծով աստղիկս», մեր հորովելները ու լուռ համաձայնեցինք Աշոտ Սաթյանի հետ. «Չարմանալի է, որքան կոպիտ ու առնական են մեր լեռները, այնքան քնքուշ ու մեղեդային են մեր լեռնեցիների երգերը...»:

Մեծ հայրենականը քո խոստովանությամբ կյանքի դպրոց էր քեզ համար: Այն ծնունդ տվեց «Երեք տարի 291 օր» ճակատային օրագրին, «Մեր գնդի մարդիկ» վեպին: Ընթերցելով վեպը՝ դարձա նրա գործողությունների մասնակիցը: Միասին անցանք պատերազմի դժվարությունները: Ես ճանաչում եմ ձեր

գնդի բոլոր մարտիկներին՝ Բայբեկին ու գնդի հրամանատար Սաֆոնովին, Իվան Կոմարովին ու Կարո Մինասյանին, Մամեդ Յակուբովին ու դասակի հրամանատար Դուդկոյին, բոլորին... Դու Աշոտն ես, Սյունեցյանը, որը դասակի ոգին էր, մեր՝ սյունեցիներին հպարտությունը... Գերեվարված Օրեխինո գյուղում դժվարությամբ մոր դիակից պոկեցինք 14-ամյա երկու տղեկների... Կինն ընկել էր ծանր գնդացրի մոտ, աջով ամուր բռնել նրա սեղմակը: Քիչ հեռու ընկած էր թշնամու 10-11 զինվոր: Գնդացիք տաք էր. թե՛ մարտ էր ընթացել... Մորը թաղեցինք գյուղի ծայրին, իսկ Պետյան ու Վիտյան կապավորներ դարձան: Այսօր էլ իմ ունկերում Պետյանի գրեթե մանկական կանչն է. «Դո՛ն, Դո՛ն, ես Վուզան եմ...»:

Պատերազմն ինձ մի չքնաղ բառ սովորեցրեց՝ ինտերմացիոնալ: Այսինքն՝ ազգերի բարեկամություն, միասնական գաղափար, պատ թշնամու դեմ, պայքար, հաղթանակ ու ազատություն... Ու հաղթեց այն... Անպի սիրով ես սիրում քո ժողովրդին, նրա պատմության հերոսական էջերը:

Մարտադաշտում հղացավ «Մխիթար Սպարապետը» գրելու միտքը: Անքուն գիշերների, թափառական ցերեկների, տքնաջան որոնումների արդյունքը դարձան «Սեւանի ափին»-ը, «Խոսեք, Հայաստանի լեռներ»-ը, «Թագուհին հայոց»-ը, «Քաջարան»-ը, «Մխիթար Սպարապետ»-ը, էլի շատ գործեր, որոնք որոնեցի, իրար հետեւից ձեռքս առա... Այդպես կեսօրվա տապին անտառի բացատում ծարավ անցորդն է հանդիպում սառնորակ աղբյուրին, ակնածանքով ծնկում նրա պռնկին...

Ու դարձար հայոց պատմության իմ ուսուցիչը... Այո՛, ինչպես մեր տաղանդաշատ Համո Սահյանն է ասում. «Դու մեր ժողովրդի քայլող պատմությունն ես, մեր արձակի օրինական նահապետը... »: Քո գործերը թարգմանվել են ռուսերեն, բուլղարերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն, արաբերեն...

«Ինչպես հիշում եմ» գիրքդ իմաստուն հանդիպումների մի երկար շարք է հայոց մեծերի, ռուս դասականների, արտասահմանյան հայտնիների հետ: Ստեփան Չոբյանն ու Նաիրի Չոբյանը,

# Կարդալով Սերո Խանգադյանի սպեղծագործությունները



## ՎԱՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կապանի N10 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի

**Ձ**որահովտից դեպի հեռավոր սարերն է փախչում մի ոսկեգույն հովատակ: Թռչում է մոտյզը սեւ կայծակի պես՝ դեպի իր սկիզբը՝ ինքն իրեն գտնելու:

Ավետիք Իսահակյանն ու Հրաչյա Քոչարը, գուսան Շերամն ու Արամ Խաչատրյանը, Գուրգեն Մահարին ու Պարույր Սեւակը քաղցր-քաղցր գրույցի են հրավիրում մեզ: Այստեղ են Իլյա Էրենբուրգն ու Միխայիլ Սվետլովը, Սերգեյ Բորոդինն ու Աննա Ջեգերսը, վրաց արծակի կաղնին՝ Գամսախուրդիան եւ Հայնրիխ Բյուլը, անգուգական Վիլյամ Սարոյանը... Իսկ երբ եկավ զարթոնքի ժամը, զանգեզուրցու քո խրոխտ ահեղագոչը հնչեցրիր. «Իմ ժողովուրդն իր կամքով պիտի որոշի իր ճակատագիրը...»: Դղրդացին լեռները այլունյաց, գունդ-գունդ Արցախի ճամփան բռնեցին քաջերը հայոց... Նրանց բազկի ուժից դողաց թշնամին ու չորեքթաթ իր որջը սողաց... Չէ՛, դու մեր փյունիկն ես, մշտարթուն նահապետը: Մեր ուսուցիչն ես, զինվորն անհաղթ... Իմ Սյունիք աշխարհի այլունն ես անսասան...

Նրա ետեւից վազում է մի տղա՝ ոտքերին գույնզգույն գուլպաներ ու տրեխ, արծաթե գինդերով պնդած ձիու սանձը ձեռքին: Հոյս ունի, որ կունենա իր բախտի մոտյզը:

Նստում էր տղան մեծ տատի ծնկներին ու ազահությամբ լսում նրա պատմած հեքիաթները: Իսկ Վարարակն գետը տանում էր տղային հեռավոր անցյալի մութ այրերը: Փակ կոպերը բացում էր մեկնեմ. ահա՛ հրաշքը. Կարմիր մատուռի քարաճեղքից եղինջը հանել է սեւավուն ցողունը եւ զարմացած նայում է աշխարհին: Տղան նայեց քարից ձգվող իր ստվերին: Հասկացավ, որ դեռ փոքր է: Ու ինքն իրեն հարցրեց. «Ինչո՞ւ չեմ շուտ մեծանում»: Իրենց տոհմի բոլոր տղաները զենք ունեին: Մեծ տատը պատմել էր, որ իրենց տոհմապետ Սարգսը մասնակցել է Երեւանի կռիվներին:

Ծեր քարայրը հիանալի արծագանքում է, թվում է, թե երկինքը ընկալում է


քարեղեն կյանքի աղոթքը: Ու ծնվում է տղայի հոգու երգն Անդրկն իշխանի մասին.

*Եվ դու՛  
Յոթ երկնքի երեսում  
Թաքնված աստված,  
Պիտի իջնես ծունկի  
Իմ քազուկի ստաջ...*

Տղան հիշում է հոր խրատը. «Հստակ հավատով նայի՛ր քո ճանապարհին»: Ու գիտի հաստատ, որ ճանապարհն այդ տանելու է դեպի հաղթանակ:

Կատարվեց տղայի երազանքը: Շուտով մեծացավ: Տուն շինեց բերդաթաղի մի բարձունքի: Դրա համար օգտագործեց հին տան պատերի քարերը, որոնք կրում էին դարերի հետքերը: Քարերը իմաստ ստացան, գտան իրենց վերջին հանգրվանը: Ծաղկեց կյանքը, վառվեց օջախը, որի վրա համեստորեն եփվում է թանապուրը: Քամին իր ուսերին հեռվից բերում է թարմ լավաշի աստվածային բույրը: Մեկն ասում է, որ պիտի վերաշինի աղբյուրը, փլատակների տակից հանի պապերի գերեզմանաքարերը:

Ու տղան բացեց աղբյուրի ակը, վրան քարե թաս ու խաչքար դրեց: Աղբյուրի քարին գրեց. «Բարի լույս...»:



## Հրատարակչական վիճակագրություն

Սերո Խանգաղյանի ստեղծագործություններն ընդհանուր առմամբ ունեցել են շուրջ 100 հրատարակություն: Հայերեն նրա երկերը առանձին գրքերով լույս են տեսել 5 տասնյակ անգամ, իսկ դրանց ընդհանուր տպաքանակը ընդհուպ մոտեցել է մեկ միլիոնի սահմանագծին: Անվանի գրողի գրքերի ռուսերեն 20-ից ավելի հրատարակություններն արդեն այդ թիվն էլ են գերազանցել, բնականաբար, ունենալով ավելի ընդարձակ ընթերցասրահ՝ թե՛ ռուս եւ թե՛ ռուսալեզու ընթերցողը (միայն «Ծարավել եմ, ջուր բերեք» ստեղծագործությունը 1974-ին «Ռոման-գազետան» հրատարակել է 1,5 միլիոն տպաքանակով):

Սերո Խանգաղյանի ստեղծագործություններն այսօր իրենց մայրենիով են ընթերցում մեր մեծ հայրենիքի բազմաթիվ ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ՝ ուկրաինացիներն ու վրացիները, բելոռուսներն ու մոլդավացիները, էստոնացիներն ու ադրբեջանցիները, տաջիկներն ու ուզբեկները...

Հայ ժողովրդի հերոսական անցյալի ու արարչագործ ներկայի, Սովետական Միության եղբայր ժողովուրդների՝ ֆաշիզմի դեմ մղած կենսաց-մահու գոտեմարտի, նրանց՝ բարեկամության ու միասնական ընտանիքի զգացողությամբ շողախմած կյանքի ու աշխատանքի տարեգրության խանգաղյանական բարձրարվեստ գեղարվեստական արտացոլումները թարգմանվել ու հրատարակվել են անգլերեն ու ֆրանսերեն, գերմաներեն ու բուլղարերեն, արաբերեն, մոնղոլերեն ու պարսկերեն... Ընթերցողների շրջանում հատկապես մեծ ժողովրդականություն է վայելում «Մխիթար Սպարապետ» պատմավեպը, որը հրատարակվել է 12 անգամ (2 անգամ՝ սփյուռքում, 6 անգամ՝ ռուսերեն)՝ գրեթե 600 հազար ընդհանուր տպաքանակով: «Երեք տարի 291 օր» զինվորական օրագրությունը հայերեն ու ռուսերեն լույս է տեսել 5 անգամ՝ 350 հազար ընդհանուր տպաքանակով: Հայ ընթերցողի սեղանին են Սերո Խանգաղյանի երկերի երկու ժողովածուները՝ 5 եւ 6 հատորով, իսկ ռուսերեն հրատարակվել է նրա ընտիր երկերի երկհատորյակը:

**«Գրական թերթ»  
20 դեկտեմբերի 1985թ.**

## Լրացումներ գրողի մատենագիտությանը

«Սերո Խանգաղյան. մատենագիտություն». այս գործը՝ հեղինակած բանասիրական գիտությունների թեկնածու Թեոս Պետրոսյանի կողմից, որ հրատարակվել է 1992 թվականին, բացառիկ հաջող եւ ամբողջական գործ է գրողի մատենագիտությունը ներկայացնելու առումով: Այդ աշխատությունից մի հատված տպագրվում է թերթի սույն համարում: Սակայն 1992 թվականից հետո որեւէ աշխատանք չի կատարվել գրողի ստեղծագործություններն ու հոգվածները, ինչպես եւ գրողին ամնչվող մյուս նյութերը համրագումարի բերելու ուղղությամբ: Մինչդեռ այդ ընթացքում (անցած 23 տարում) ինչ-որ քայլեր, թեեւ շատ քիչ, կատարվել են Սերո Խանգաղյանի ստեղծագործությունների հրատարակման (վերահրատարակման) ուղղությամբ: Կատարվել են գրականագիտական ուսումնասիրություններ, գրվել հոդվածներ:

Հրատարակված գրքերի մասին՝ ստորև:

1. Հուլիեր Աղբյուր Սերոբի մասին (ֆիդայի Հայր-Հայաստանի որդիներ Ազատ եւ Վալոդ Մխիթարյանների պատմածի հիման վրա), 1998թ., 500 տպաքանակ:
2. «Կորած արահետներ» պատմվածքաշար (2003թ.): Վերահրատարակվել է պետպատվերով:
3. «Թագուհին հայոց» («Օծածոն անի յի նեայ»), վերահրատարակվել է Մոսկվայում, ռուսերեն, 2000 տպաքանակ, 2005թ., Ёсәәծәәёնծәәі «Ի է նծծի է», 320 էջ:
4. «Ուրաբաղը կրակների մեջ», 2006թ., 500 տպաքանակ (տպագրվել է Հարություն Սաղոյանի հովանավորությամբ):
5. «Մխիթար Սպարապետ» («Ի ծեծծ Ուի ձծի ձծ»), պատմավեպի երկհատորյակը, ռուսերեն, 1500 տպաքանակ, 2006թ., Ёсәәծәәёնծәәі «Ի է նծծի է», 1-ին հատորը՝ 384 էջ, 2-րդ հատորը՝ 336 էջ:

1992թ.-ից հետո Սերո Խանգաղյանի գրական ժառանգության վերաբերյալ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Վահան Աղաբաբյանը («Սերո Խանգաղյանի պատմվածքները եւ վիպակները», Երեւան, 2013, 112 էջ):

Սերո Խանգաղյանի կյանքի եւ գրական ժառանգության նորովի իմաստավորման խնդիրն ինչ-որ չափով լուծվում են մենագրությունների միջոցով: Գրողի այս հոբելյանի շեմին ծնվեց եւս երկու մենագրություն: Առաջինի հեղինակը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանն է՝ «Սերո Խանգաղյանի կյանքը եւ գործը», որը դեռեւս չի հրատարակվել: Երկրորդի հեղինակը բանասիրական գիտությունների թեկնածու Վահան Աղաբաբյանն է (Սերո Խանգաղյանի պատմվածքներն ու վիպակները, Երեւան, 2015, «Տիր» հրատարակչություն, տպաքանակը՝ 100):

Վերջին քսան տարում հայ գրականագիտությունը շարունակել է անդրադառնալ Սերո Խանգաղյանի ստեղծագործական ժառանգությանը:

Ուշագրավ է հատկապես Սեւակ Արզումանյանի «Արդի հայ վեպը» շարքի 5-րդ հատորը (ՀԳՄ հրատարակչություն, Երեւան, 2004թ.)՝



նվիրված հայ վեպի զարգացմանը: Գրքի 5-րդ գլխում՝ «Պատմությունը դարասկզբի զուգահեռներում», հեղինակն անդրադարձ է կատարել Սերո Խանզադյանի «Անդրանիկ», «Շուշի», «Նժդեհ» վիպական կտավներին:

2014թ. ԳՅ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում լույս է տեսել Սերգեյ Աղաջանյանի «Հայկական պատմվածքը 1960-70-ական թվականներին» մենագրությունը: Գրքում կան անդրադարձներ Սերո Խանզադյանի պատմվածքներին:

2007թ. Երեւանի «ՎՄՎ-Պրինտ» հրատարակչությունում լույս է տեսել Էդուարդ Զիրարբյանի «Լեռնային լեզներ» գիրքը, որի մի պատկառելի մասը զբաղեցնում է հեղինակի «Սերո Սպարապետ» մենագրությունը:

2015թ. վերահրատարակվել է «Անդրանիկ» վեպը՝ ռուսերեն («Արմավ» հրատարակչություն, տպաքանակը՝ 400):

Վերջին տարիներին գրվել ու հրատարակվել են մի շարք հոդվածներ՝ նվիրված Սերո Խանզադյանի գրական ժառանգությանը:

Հիշարժան է, օրինակ, բանասիրական գիտությունների թեկնածու Սաթենիկ Ավետիսյանի «Ակսել Բակունց եւ Սերո Խանզադյան. ավանդներ եւ նորարարություն» հոդվածը (Երեւանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի գիտական հոդվածների ժողովածու-3, Երեւան-2009):

Ուշագրավ է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՅ ԳԱԱ Մ.Արեւյանի անվան գրականության ինստիտուտի հայ նորագույն գրականության բաժնի վարիչ Սուրեն Աբրահամյանի «Սերո Խանզադյանի պատմվածքները» հոդ-

վածը:

Վերելում արդեն նշեցինք ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս Վահան Աղաբաբյանի անունը: Երիտասարդ գրականագետը, բացի ատենախոսությունից եւ մենագրությունից, հեղինակ է Սերո Խանզադյանի գրական ժառանգությանը նվիրված մի շարք հոդվածների: Այսպես՝ «Եղեռնի արձագանքները Ս.Խանզադյանի «Սեռածները հիշում են» վիպակում», «Պատմության դասերի նորովի արժարժումները Ս.Խանզադյանի պատմվածքներում (1950-60-ական թթ.)» («Գարուն», 2012թ., N9, 10) եւ այլն:

«Հայ ընտանիք» ամսագիրը հատուկ թողարկում է նվիրել Ս.Խանզադյանին՝ ծննդյան 90-ամյակի կապակցությամբ (2005, 9/10, «Գրիգոր Տաթևացի» հրատարակչություն):

Պարբերական մամուլում նույնպես ժամանակ առ ժամանակ լույս են տեսել հոդվածներ՝ նվիրված Սերո Խանզադյանին, տպագրվել հատվածներ նրա ստեղծագործություններից: Այդ տեսակետից հատկապես ակտիվ է եղել «Սյունյաց երկիր» թերթը:

Անդրադարձներ են եղել նաեւ Սերո Խանզադյանի խոսքին: Օրինակ, Սվետլանա Մանուչարյան, «Բարբառային տարրերը Սերո Խանզադյանի պատմվածքներում», Հայագիտական հանդես, N2-3 (8-9), «Մանկավարժ», Երեւան, 2008, էջ 39-47: Նաեւ՝ Ինգա Մարգարյան, Սերո Խանզադյանի լեզվական արվեստը, Երեւան, 2010, տպաքանակը՝ 50, 5 տպագրական մամուլ:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# «Սերո Խանգադյան. մադենագիտություն»

Հատված Թելուս Պետրոսյանի համանուն գրքից

## Երկերի ժողովածու

**1967**

1. Երկերի ժողովածու: 5 հատորով. - Եր.: Հայաստան, 1967-1970. - Գրք. 1. Սեր գնդի մարդիկ /Առաջաբ. Գրվեստիյան Գ. 1967. - 379 էջ.

Գրք. 2. Գող: Վեպ: Գիրք 1. - 1967. - 363 էջ.

Գրք. 2. Գող: Վեպ: Գիրք 2. - 1967. - 407 էջ.

Գրք. 3. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ: Գիրք 1. - 1968. - 495 էջ.

Գրք. 3. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ: Գիրք 2. - 1968. - 440 էջ.

Գրք. 4. - 1968. - 524 էջ, 1 թ. դիմանկ.

Բովանդ.՝ Կարմիր շուշաններ: Լալ Համազը: Մարդը: Մարդը եւ իր մորթին: Ճանապարհը: Յոթերորդ աղբյուրը: Սպիտակ գառը: Յոթերորդ աղբյուրը: Օջախի ծուխը: Մշնառա ծորի գաղտնիքը: Հոնուտա սարի աղջիկը: Տունը: Վերջին արցունքները: Հովիվ Հասարթը: Հարազատ ձեռքեր: Ուստա Հեթումը: Բաղդասար նախագահը: Մերոնք ու մեր հարեւանները: Պորտաքար: Խղճի խայթ: Հորովելը: Դագաղ Դանելը: Շաքար ամին: Բախտավոր Աղավելը: Վերջին եզնարածը: Նա ուրիշ էր արդեն: Կանաչ դարպաս: Քեռիս: Կորած արահետներ: Օտար հավք: Այրված տունը: Արջի մորթին: Վարք հարանց: Լույսը հնձանից: Կամուրջը: Խոսում է մագաղաթի պատառիկը: Վարք Մաշտոցի: Ամիրդովլաթ՝ որդի Եղիայի:

Գրք. 5. Քաջարան: Վեպ. - 1970. - 532 էջ:

**1981**

2. ԵՐԿԵՐԻ ԺՊՈՎԱԾՈՒ: 6 հատորով. - Եր.: Սովետ. գրող. 1981-1983:

Գրք. 1. Սեր գնդի մարդիկ: Երեք տարի 291 օր: /Վեպեր/. - 1981. - 704 էջ.

Գրք. 2. Մխիթար Սպարապետ: /Պատմավեպ/. - 1981. - 778 էջ.

Գրք. 3. Քաջարան: /Վեպ/. - 1982. - 437 էջ.

Գրք. 4. Խոսենք, Հայաստանի լեռներ: /Վեպ/. - 1982. - 454 էջ.

Գրք. 5. - 1983. - 616 էջ.

Բովանդ.՝ Թագուհին հայոց: /Վեպ/: Վեց գիշեր: Ծարավել եմ, ջուր բերեք: Մատյան եղելությանց: /Վիպակներ/.

Գրք. 6. պատմվածքներ. - 1983. - 607 էջ:

Բովանդ.՝ Կարմիր շուշաններ: Լալ Համազը: Մարդը եւ

իր մորթին: Ճանապարհը: 1971, ամառ: Անամպ երկինք: Կապույտ ծի: Գտնված գարուն: Մենավոր ծառը: Աղբյուրի երգը չի մարել: Դաղձի բույրը: Յոթերորդ աղբյուր: Սպիտակ գառը: Յոթերորդ աղբյուրը: Մշնառա ծորի գաղտնիքը: Հոնուտա սարի աղջիկը: Տունը: Անիի խաչքարը: Աստվածամոր քրքիջը: Ես սպասում եմ նրան: Ջարմանալի պատմվածք: Ներիր ինձ: Քարտեզի պատառիկը: Սպանված աղջիկ: Ճերմակ վիրակապ: Կորած արահետները: Օտար հավքը: Այրված տունը: Արջի մորթին: Չորի ծաղիկը: Հույսը անթեղած: Թթխմորի մեռուցը: Քարե ծաղիկ: Բարի լույս, Նվարդ: Աշխարհը նոր է ստեղծվում: Կապույտ աչքեր: Ծավի ծորի հեքիաթը: Խրտնած գառներ: Ջրաղացը ձայն չունի: Ի սկզբանե: Ուրախ պատմվածք: Ի՞նչ է հիշում մոխրատան ձին: Մերոնք եւ մեր հարեւանները: Պորտաքար: Խղճի խայթ: Հորովելը: Դագաղ Դանելը: Քեռիս: Ընկեր Գերասիմը: Աստավ, պաժախտա: Մի հորթի պատմություն: Չկայացած այցելություն: Թթի գինը: Մարդ ու կին: Թե ինչպես ինքս ինձ ճանաչեցի: Իմ սխալը: Միսակի «Ձին»-ը: Չմեռային պատմվածքներ: Ուրախանալու դեղատոմս: Չէ, էլ չեմ մրսում: Փչող կափույր եմ որոնում: Գոմշի կաթ: Պրաստոյ Պետրոսը: Էշի բժիշկ: Ուստա Հեթումը: Բաղդասար նախագահը: Շաքար ամին: Բախտավոր Աղավելը: Վերջին եզնարածը: Նա ուրիշ էր արդեն: Կանաչ դարպաս: Վարք հարանց: Լույսը հնձանից: Կամուրջը: Խոսում է մագաղաթի պատառիկը: Վարք Մաշտոցի: Ամիրդովլաթ՝ որդի Եղիայի: Հայրենի կարգավ: Ծովի երգը: Փշի գրույց: Ուղեցույցը: Արեւը դամբարանին: Գրիգոր-Դերենիկ Ջվարճասեր: Հակոբ Արմեն: Մախին: Քարահերձի թզենին: Այ ծովակ, ծավի ծովակ: Ջրույց երեկվա հետ:

Գրախոս.՝ //Գրակ. թերթ. - 1983. - 23 սեպտ., Հայրյան Գ.// Գրքերի աշխարհ. -1983. - 25 սեպտ. - էջ 4. Մելքոնյան Մ. // Հայրենիքի ծայն. - 1983. - 12 հոկտ. - էջ 5:

## Ժողովածուներ

**1954**

3. Որոտանի կիրճում: Պատմվածքներ. - Եր.: Հայպետհրատ. 1954. - 27 էջ:

Բովանդ.՝ Թե ինչպես պապս գայլ բռնեց: Արջը: Մայր շունը:

Գրախոս.՝ Սարյան Ա., Մանկական հաճելի գրքույկ //Ավանգարդ. - 1955. - 10 սեպտ:

**1955**

4. Լալ Համազը. Պատմվածքներ. - Եր.: Հայպետհրատ. 1955. - 44 էջ: Բովանդ.՝ Լալ Համազը: Թալանը: Գրազը:

**1956**

5. Որոտանի կիրճում: /Պատմվածքներ/. - Եր.: Հայպետհրատ. 1956. - 55 էջ:

Բովանդ.՝ Թե ինչպես պապս գայլ բռնեց: Արջը: Մայր շունը: Լալ Համազը, Թալանը, Գրազը: Մեր շունը: Թաթոսը: Իմաստուն տղան:

**1958**

6. Կարմիր շուշաններ: /Պատմվածքն. եւ նովելն. ժողովածու/. - Եր.: Հայպետհրատ. 1958. - 828 էջ:

Բովանդ.՝ Կարմիր շուշաններ: Լալ Համազր: Գրազը: Թալանը: Յոթերորդ աղբյուրը: Յոթերորդ աղբյուրը: Հոնուտա սարի աղջիկը: Սպիտակ գառը: Բաղդասար նախագահը: Մշնառա ձորի գաղտնիքը: Ուստա Հեթունը: Օջախի ծուխը: Բլովին ասաքը: Հովիվ Հասրաքը: Հերիքնագ մայրիկը: Մերոնք եւ մեր հարեւանները: Պորտաքարը: Խղճի խայթ: Քեռիս: Աքունց Առաքել ապերը: Շաքար ամին: Թելուն Պուղանը: Դագաղ Դանելը:

Գրախոս.՝ Հովսեփյան Ա. //Բանվոր. - Լենինական. 1958. -15 հոկտ.: Մահարի Գ. // Սովետ. Հայաստան. - 1959.- նո. 4. - էջ 41-42: Մկրտչյան Հ. // Սովետ. գրակ. - 1959թ. - նո. 4. - էջ 135-139: Ջրբաշյան Էդ. // Սովետ. Հայաստան. - 1958. - 27 դեկտ. - /Դեպի Հայաստանի գրողների չորրորդ համագումարը:

**1962**

7. ԴեՊԵՐ Լեռներում: /Պատմվածքն. եւ հեքիաթներ/. - Եր.: Հայպետհրատ. 1962. - 67 էջ:

Բովանդ.՝ Դեպքեր Լեռներում: Մեր կարմիր աքաղաղը: Օձի լեզուն: Բողարն ու գայլի ձագերը: Սագն ու իր ճտերը: Մորեխն ու ծիտը: Հարբած էջը: Սուկը: Հեքիաթներ: Աշուղի վիշտը: Ագահ հարուստն ու իր բախտը: Ջրաղացպանն ու թագավորը: Պստիկ ախպերը: Կաքավը: Նախրչի Լալան: ժլատի վերջը: Թագավորի տղան ու բրուտի աղջիկը: Դողոշն ու սեւ կարիճը: Գորշուկ քոթոթի արկածները:

**1964**

8. ԿՈՐԱԾ արահետներ: /Պատմվածքն. եւ նովելն. ժողովածու/. - Եր.: Հայպետհրատ. 1964. - 367 էջ:

Բովանդ.՝ Կորած արահետներ: Օտար հավքը: Արջի մորթին: Այրված տունը: Յոթերորդ աղբյուրը: Հարագատ ձեռքեր: Տունը: Վերջին արցունքները: Եղբայրները: Սրտի ցավով: Հանդիպում: Նրա ահը: Իր խոսքի տերը: Ուստա Քերովը: Ուրիշ տեսակ մարդը: Երկար Ուհանը: Սրտի ցավը: Ես կամքի տեր եմ: Ծերունու արցունքները: Բախտավոր Աղավելը: Կարմիր շուշաններ: Մարդը: Թթեմին: Մարդը եւ իր մորթին: Ճանապարհը: Մերոնք եւ մեր հարեւանները: Նա ուրիշ էր արդեն: Վերջին եզնարածը: Ալեք ապոր գանգատը: Հորովելը: Համտես Բարեղամը: Մոր վիշտը: Բաղնիքի մայրիկը: Քաղաքը: Կանաչ դարբաս: Վարք հարանց: Լույսը հնձանից: Կամուրջը: Խոսում է մագաղաթի պատառիկը: Վարք Մաշտոցի: Ամիրդովլաթ՝ որդի Եղիայի:

Գրախոս.՝ Քասունի Ե. //Ձանասեր. - Բեյրութ. 1965. - նո. 15. - էջ 326: Գրքերով հետ //Սփյուռք. - Բեյրութ. 1965. - 21 հոկտիսի. - էջ 11:

Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. - Եր., 1980. - էջ. 348-351: Ածծովի Է. xâet ââe è ââéôâèôâéüí î òù â ðâññâçâð Ñâðî Ôâí çââyî â// Էծ. Ածի áí èy. - 1965. - N 12. - Ճ. 78-82.

**1969**

9. Անձրեւից հետո: / Վիպակներ եւ պատմվածքներ/. - Եր.: Հայաստան. 1969. - 468 էջ.

Բովանդ.՝ Վիպակներ: Ծարավել եմ, ջուր բերեք: Ճանաչեցեք ինձ, ես շուն եմ: Վեց գիշեր: Կորած արահետներ: Ձորի ծաղիկը: Ջուրն իր ճամփան գտավ: Փոստարկղը: Խցանը: Հույսը անթեղած: Մերոնք եւ մեր հարեւանները: Մորաքրոջս ծեման: Իմ բեղերի արկածները: Թե ինչու վշտացավ մեր Ավագը: Ընկեր Գերասիմը: Սեթ Սեդրակյանի պաշտոնը: Աստավ, պաժալուստա: Անհայտ ծաղիկ: Արջի ալկանջը: Խռովկան Գրիգորը: Ծափի վերջը: Սաչեր մայրիկը: Այս էլ մեր Ակեղը: Կոշիկներ՝ Մանուչի համար: Թե ինչպես հայրս այգի տնկեց: Լույսը՝ կապույտ պատշգամբում: Միսաքի ճառը: Կոշկակար Եփրեմը: Անձրեւից հետո: Կարմիր է գինու գույնը: Ուրախ սրտով: Խաչի Լեւոնը: ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ: Հայրենի կարգավ: Ծովի երգը: Փշե գրույց: Ուղեցույցը: Արեւը դամբարանին: Գրիգոր-Դերենիկ Ջվարճասեր: Հակոբ Արմեն: Մախին:

**1970**

10. Ինչո՞ւ, ինչո՞ւ: Պատմվածքներ: Հեքիաթներ: Ջրույցներ. - Եր.: Հայաստան. 1970. - 158 էջ:

Բովանդ.՝ Պատմվածքներ: Խիզախ ծիծեռնակը: Տատիկիս հնարագիտությունը: Բարության գինը: Ճուտիկը քնած: Մենք նրան այլեւս չտեսանք: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Մուղան-ճյուղ: Նրանց շունը գարեհաց չի ուտում: Վանեի կոշիկները: Չյունե հաց: Ողորմություն արեք: Ես Վուզան եմ: Եղանակը տաքացավ: Հեքիաթներ: Չղջիկը: Խելոք Սիանոսը: Թութակը: Աղվեսն ու ճուտիկը: Երգիչ Բարսեղը: Թագավորի ջորին: Մեծախոսը: Կատուն ու մուկը: Մուրազ եզն ու Արենը: Ջրույցներ: Շահաբասն ու հայը: Վարդապետն ու ծառան: Վելք վաճառողը: Ագահ տերտերն ու աղքատ կինը: Վաճառականն ու պառավը: Ավանդություն: Փոքրիկ խորամանկները: Բախտը: Սրամիտը: Հին գրույց: Սատանայի մատը: Մորին ու վարունգը: Երկու հարեւաններ: Հարուստն ու աղքատը: Խնամախոսության վարձը:

Գրախոս.՝ Թունմանյան Հենր., Կյանքի սիրով, կյանքին հավատարիմ //Գրակ. թերթ. - 1970. - 11 սեպտ:

**1976**

11. Ավանդատուն: Հեքիաթներ, Աղվեսագիրք, գրույցներ. - Եր. Հայաստան. 1976. - 138 էջ:

Բովանդ.՝ Հեքիաթներ: Իմաստուն տղան: Ագահ հարուստն ու իր բախտը: Նախրչի Լալան: Թագավորի տղան ու բրուտի աղջիկը: Մուրազ եզն ու Արենը: Անանիան ու քաջը: Ջրաղացպանն ու թագավորը: Թագավորի ջորին: Աղվեսագիրք: Աղվեսն ու ճուտիկը: Ագռավը, ընկուզեմին եւ ամպը: Պապի օրինակով: Աղվեսը, նապաստակը, աքաղաղը եւ հոպոպը: Գորտը, սոխակն ու արագիլը: Դողոշն ու սեւ կարիճը: Թե ինչպես աղվեսն երվեց: Գորշուկ քոթոթի արկածները: Չղջիկը: Կատուն ու մուկը: Երկու հարեւան: Ջրույցներ: Աշուղի վիշտը: Խելոք Սիանոսը: Կաքավը: ժլատի վերջը: Երկու հարեւաններ: Թաթոսը: Խնամախոսության վարձը: Հարուստն ու աղքատը: Մորին ու վարունգը: Բախտը: Սրամիտը: Հին գրույց: Սատանայի մատը: Փոքրիկ խորամանկները: Ավանդություն: Վաճա-

ռականն ու պառավը: Ազահ տերտերն ու աղքատ կինը: Վարդապետն ու ծառան: Շահաբասն ու հայը: Մեծախոսը:

Գրախոս.՝ Թ.Ա.Ս. Խորհրդային Հայաստանի մեծ գրողին՝ Սերո Խանգադյանին փոքր ու նոր գիրքը «Ավանդատուն»-ը //Արարատ.-Բեյրութ, 1979. – 6 փետր., Սարգսյան Ս. Ժողովրդական գոհարներ //Երեկոյան Երեւան. – 1976. – 15 նոյեմբ:

**1979**

12. 1971. ամառ: /Պատմվածքներ, վիպակ եւ պիես/. Եր.: Սովետ. գրող, 1979. – 453 էջ:

Բովանդ.՝ Պատմվածքներ: Կարմիր շուշաններ: 1971. ամառ: Քաթանի գույնը: Անամպ երկինք: Կապույտ ձի: Գտնված գարուն: Մենավոր ծառը: Կրակը չեն սպանի: Աղբյուրի երգը չի մարել: Դաղձի բույրը: Կորած արահետներ: Գոմշի կաթ: Թթխման մեղունը: Ի՞նչը գնաց: Քարե ծաղիկ: Մարիամի կովերը: Աղբյուրի ճանապարհը: Բարի լույս, Նվարդ: Աշխարհը նոր է ստեղծվում: Ամառային գրույց: Կապույտ աչքեր: Մշուշը ցրվել է: Ծավի ձորի հեքիաթը: Խրտնած գառներ: Ջրաղացը ձայն չունի: Ի սկզբանե: Ուրախ պատմվածք: Ի՞նչ է հիշում մոխրատան ձին: Վարք հարանց: Քարահերձի թզենին: Այ ծովակ, ծավի ծովակ: Ջրույց երեկվա հետ: Յոթերորդ աղբյուրը: Ներիր ինձ: Քարտեզի պատառիկը: Սպանված աղջիկ: Գերմակ վիրակապ: Անիի խաչքարը: Աստվածամոր քրքիջը: Ես սպասում եմ նրան: Ջարմանակի պատմվածք: Մերոնք եւ մեր հարեւանները: Պրաստոյ Պետրոսը: Էշի բժիշկ: Մի հորթի պատմություն: Մոր երազանքը: Չկայացած այցելություն: Թթի գինը: Մարդ ու կին: Թե ինչպես ինքս ինձ ճանաչեցի: Իմ սխալը: Միսակի «Ձիւնը»: Չմեռային պատմվածքներ: Ուրախանալու դեղատոմս: Չէ, էլ չեն մրսում: Փչող կափույր եմ որոնում: Մեռածները հիշում են: Վիպակ: Վահրամ Որոտանցի: Ողբերգություն:

Գրախոս.՝ Գասպարյան Դ., Պատմվածքի կենսական տարողությունը // Սովետ. Հայաստան. – 1980. – 14 օգոստ.:

**1986**

13. ԱՎԱՆԴԱՏՈՒՆ: Պատմվածքներ, գրույցներ, հեքիաթներ. - Եր.: Սովետ. գրող. 1986. -287 էջ:

Բովանդ.՝ Ինչո՞ւ, ինչո՞ւ: Լալ Համազը: Թալանը: Գրազը: Մորեխն ու ծիտը: Մենք նրան այլես չտեսանք: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Չյունե հաց: Ես Վոլգան եմ: Ողորմություն արեք: Եղանակը տաքացավ: Վանեի կոշիկները: Նրանց շունը գարեհաց չի ուտում: Չյունե հաց: Մեր տունը եւ մենք: Թե ինչպես պապս գայլ բռնեց: Տատիս հնարագիտությունը: Մեր շունը: Օձի լեզուն: Մեր կարմիր աքաղաղը: Հարբած էլը: Բարության գինը: Արջը: Մայր շունը: Բողարն ու գայլի ձագերը: Սագն ու իր ճտերը: Մուկը: Խիզախ ծիծեռնակը: Գուտիկը քնել է: Բարության գինը: Ջրույցներ: Թաթոսը: Հնարագետ գյուղացին: Շահաբասն ու հայը: Վարդապետն ու ծառան: Խելք վաճառողը: Ազահ տերտերն ու աղքատ կինը: Վաճառականն ու պառավը: Ավանդություն: Փոքրիկ խորամանկները: Բախտը: Սրամիտը: Հին գրույց: Ոսկե խոփը: Այս գրույցն էլ հիշեցի: Տղամարդու պատասխան: Ջրաղացպանն ու իր որդին: Սատանայի մատը: Մորին ու վարունգը: Երկու հարեւաններ: Հարուստն ու

աղքատը: Խնամախոսության վարձը: Աշուղի վիշտը: Խելք Սիանոսը: Կաքավը: Ժլատի վերջը: Մեծախոսը: Հողի բույրը: Աղվեսագիրք: Թագավորի «բարությունը»: Այս էլ մի այլ աղվես նախարարի մասին: Մեղավորը ձին է: Հաթերթի շուշանը: Աղվեսն ու ճուտիկը: Ազոավը, ընկուզենին եւ ամպը: Պապի օրինակով: Աղվեսը, Նապաստակը, Աքաղաղը եւ Հոպոպը: Գորտը, սոխակն ու արագիլը: Թե ինչպես աղվեսը երդվեց: Երկու հարեւան: Չղջիկը: Կատունն ու մուկը: Դողոշն ու սեւ կարիճը: Գորշուկ քոթոթի արկածները: Նատոյի արջը: Առյուծը, աղվեսը եւ մուկը: Թե ինչպես արջը փախավ: Այս է ծիծեռնակի բանը: Այս էլ օձի մասին: Հեթիվթեթ: Իմաստուն տղան: Թութակը: Երգիչ Բարսեղը: Թագավորի ջորին: Մուրազ եգն ու Արենը: Ազահ հարուստն ու իր բախտը: Նախրջի Լալան: Թագավորի տղան ու բրուտի աղջիկը: Անանիան ու քաջքը: Ջրաղացպանն ու թագավորը: Պստիկ ախպերը: Ճանաչեցեք ինձ, ես շուն եմ... /վիպակ/: Ո՞րն է աջը, ո՞րն է ձախը: Լավ անուն դրեք, էլի:

**ԱՌԱՆՁԻՆ ՍՏԵՂՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ա/ Գրքերով

**1949**

14. Ինչպես հայտնաբերել եւ գրի առնել սովետական բանասիրությունը: /Չեռնարկ/. Եր., 1949. – 13 էջ. - Ապակետիպ:

**1950**

15. Մեր գնդի մարդիկ: /Վեպ/. Եր.: Հայպետհրատ. 1950.-550 էջ. Գրախոս.՝ Կուրտիկյան Ս. //Ավանգարդ. – 1950. -27 դեկտ.: Ղազանչյան Վ. //Գրակ. թերթ. – 1950.-23 դեկտ.: Ղուկասյան Ջ. // Սովետ. Հայաստան. 1951. – 16 հունվ.: Մարգարյան Ալ. «Մեր գնդի մարդիկ» վեպի լեզուն. // Գրակ. թերթ. – 1951. – 23 փետր.: Մնացականյան Վ. Երիտասարդ հեղինակի առաջին գիրքը // Սովետ. գրակ. եւ արվեստ. – 1950. – նո. 12. - էջ 136-149: Յափունջյան Ս.: // Պայքար. – Ուղեթառուկ 1967. – 23 դեկտ.: Աձձայի Օ. //Է՛ի ի օ՛ի ե՞ծ. -1950. – 2 ձձե.: Աձի ըծ-յի Ա, Ի՛ անի՛ի ե-ձի ա՛ // Է՛ծ. ձձ. 1950. – 17 ձձ.

**1954**

16. ՀՈՂԸ: Վեպ: 2 գրքով. - Եր.: Հայպետհրատ. 1954-1955. Գիրք 1. – 1954. – 511 էջ.  
Գրախոս.՝ Աղաբաբյան Ս. Ռեալիզմի դիրքերում // Սովետ. գրակ., 1955. նո. 10. էջ 117-129: Բաբայան Ա. // Սովետ. Հայաստան. – 1954. – 1 սեպտ.: Էմիրզյան Մ. Կենսական ճշմարտության ուժը // Ավանգարդ. – 1954.- 27 մայիսի: Հարությունյան Տ. «Հողը» վեպի լեզվի մասին // Գրակ. թերթ. – 1954. – 9 հուլիսի: Նարյան Մ. Արժեքավոր գիրք // Բանվոր. Լեհի-նական. 1954. – 14 սեպ.: Ջրբաշյան Էդ. ճիշտ ուղու վրա // Գրակ. թերթ. – 1954. – 17 մայիսի: Սարգսյան Գր. //Սովետ. Հայաստան.- 1954. – նո. 12. - էջ 26-28: Լրաբեր. – Նյու-Յորք. 1955. – 24 փետր.: Կոլտնտեսային գյուղը եւ նրա մարդիկ // Պարտ. կյանք. – 1954. նո. 6. - էջ 58-62:  
Գիրք 2. – 1955. – 499 էջ.  
Գրախոս.՝ Մատինյան Ար. // Կայծ. – Կիրովական, 1955.



– 15 հունիսի: Սկրյան Մ. // Սովետ. Հայաստան. – 1955. – 6 օգոստ. Սկրյան Հ. Կոլտնտեսային գյուղը «Հողը» վեպում. // Սովետ. գրակ. – 1955. – նո. 8. – էջ 118-130: *Ààááááýí Ñ. Àõí ðàý éí èàà ðì ì áí à „Çàì èý„*, // *Èì ì ì óí èñò.* – 1955. – 1 èթéý: *Áí ðýí Æ. Ààðì ì òó.* æèçí áí í àý ì ðàáàà // *Àðòæáà í àðì áí à.* – 1955. – N 2. – Ñ. 177 – 181: *Èàðàñàà Ð. Ààðì é è éí èèáèðèà // Èèð. ààç.*, - 1956. 2 èթí ý.

**1957**

17. Հողը: Վեպ: / Գիրք 1-ին եւ 2-րդ/. Եր. Հայպետիրատ, 1957. – 764 էջ:

**1959**

18. Քարանձավի բնակիչները: /Վիպակ/. - Եր.: Հայպետիրատ, 1959. – 119 էջ:

**1961**

19. Մխիթար Սպարապետ: պատմավեպ. Եր.: Հայպետիրատ. 1961. -643 էջ. 1 թ. դիմանկ.:

Գրախոս.՝ Գեորգյան Գր. // Պղնձի համար. Ղափան. 1961. – 22 նոյեմբ.: Թամրազյան Հր. Պատմական թեմատիկան եւ «Մխիթար Սպարապետ»-ը //Գրակ. թերթ. – 1961. – 25 օգոստ.: Հովասափյան Ա. Ստեղծագործական հաջողություններ // Սովետ. Վրաստան. – 1962. – 22 փետր.: Հովհաննիսյան Ռ. Խոհեր պատմավիպագրության եւ «Մխիթար Սպարապետ»-ի մասին //Երեւան. – 1961. – 19 հոկտ.: Հովսեփյան Ա., Ստեղծագործական նվաճում //Բանվոր. - Լենինական. 1961. – 8 հուլիսի: Ղուկասյան Ջ. // Տեղեկագիր/ ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ. – 1965. – Նո. 6, - էջ 69-78. - Ամփոփումը ռուս. լեզ. Մնացականյան Ար. Հայ ժողովրդի պատմահերոսական ընդվզումների գեղարվեստական պատկերը// Սովետ. Հայաստան. – 1961. – 14 հոկտ.: Շաքարյան Պատվ. Ազատատենչ ժողովրդի հերոսապատմական էջերը// Պղնձի ֆրոնտում. - Ալավերդի, 1962. – 4 մարտի:

Սողոմոնյան Ս.// Սովետ. գրակ. – 1961. – նո. 11. - էջ 161-173 *Ààááááýí Æ. Ààðì è-àñèàý ýí ì ì àý àðì ýí ñèí áí í àðì àà// Èèð. Àðì áí èý.* – 1961. – N12. – С. 71-76: *Àààðýí Æ. Ñèáí çù áí àü ááà // Èèð. ààç.* – 1963.- 17 *àà.*: *Èì ðàáí í à È.* // *Èì ì ì óí èñò.* – 1961. – 21 *í ì ýá.*: *Òàì ðàçýí Æ. Ñ ì ì çèðèè èñòì ðè-àñèí é ì ðàà-àà// Àðòæáà í àðì áí à.* – 1963. – N9. – Ñ. 273-276.

**1952**

20. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ. – Հալեպ, 1962. – 604 էջ. / Մատչար «Արեւելք» օրաթերթի թիվ 40/:

21. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ. – Կահիրե, 1962 / տպ. Լուսաբեր/. – 710 էջ:

**1963**

22. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ. – Եր.: Հայպետիրատ. 1963. -743 էջ:

Գրախոս.՝ Միքայելյան Ս. //Բագին. - Բեյրութ. 1965. – նո. 9. - էջ 57-60: նո. 10. - էջ 55-60: Ֆրանկուլյան Ա. // Սիյունք. - Բեյրութ. 1964. – 11 հուլիսի. էջ 5-10: Саркисян С.

Повествование о героическом // Лит. Армения . – 1964. – N7. – С. 84-88: Тамразян Г.С. // Дружба народов. – 1963. – N9. – С. 273-276.

**1965**

23. Այրված տունը: /Պատմվածք/. - Եր.: Հայաստան. 1965. – 41 էջ. - / 20-րդ դար/:

Գրախոս.՝ Կանտոր Գ. //Գրակ. թերթ. – 1966. – 11 մարտի: 24. Քաջարան: Վեպ. - Եր.: Հայաստան, 1965, - 587 էջ. 1 թ. դիմանկ.:

Գրախոս.՝ Բատիկյան Լ. Ճշմարտություն՝ ճշմարտության մասին //Երեկոյան Երեւան. – 1965.- 30 նոյեմբ.: Գեորգյան Գ. //Պղնձի համար. – Ղափան, 1967. – 29 հունվ.: Ղուկասյան Ջ. Ժամանակը եւ հերոսները // Սովետ. Հայաստան. – 1966. – 13 հունվ.: Մահարի Գ. Ստորումներ «Քաջարան» վեպի մասին // Սովետ. գրակ. – 1966. – նո. 1. էջ 122-126: Սողոմոնյան Ս. //Գրակ. թերթ. – 1966. – 19 փետր.

**1966**

25. Մատյան եղելությանց: /Վեպ/. - Եր.: Հայաստան, 1966. -227 էջ:

Գրախոս.՝ Եղիշեյան Վ. //Աշխարհ. – Փարիզ. 1967. – 28 հունվ. էջ 2-3: Քալանթարյան Ա. Բյուրեղացուն //Գրակ. թերթ. – 1966. – 4 նոյեմբ.:

*Àðì áí ýí Ñ. Èí èàà í Áüèí ì // Èèð. Àðì áí èý.* – 1967. – N5. – h. 108-109.

**1970**

26. Լալ Համազը: /Պատմվածք/. - Եր.: Հայաստան, 1970. – 20 էջ:

**1972**

27. Երեք տարի 291 օր: Ռազմաճակատային օրագիր. Եր.: Հայաստան. 1972. - 400 էջ.

Գրախոս.՝ Բարսեղյան Խ. Մատյան եղելությանց եւ հաղթանակի // Գրակ. թերթ. – 1973.- 19 հունվ.: Դանիելյան Կ. Երիտասարդության զինը //Գրակ. թերթ. – 1977. – 9 սեպտ. - /ներկայացված է ՀՍՍՀ պետական մրցանակի: Ջաքարյան Մ. Պատերազմական հուշամատյան «Երեք տարի 291 օր» // Հայոց լեզուն եւ գրակ. դպրոցում. – 1986. – նո. 1. - էջ 29-32. - /Սերո Խանգաղյանի ծննդյան 70-ամյակը: Սկրյան Ռ. Հեղինակի պատասխանը պատմությանը //Գարուն. – 1973. – նո. 10. էջ 88-90:

**1974**

28. Սեւանի լուսաբացը: /Վեպ/. - Եր. Հայաստան, 1974. – 525 էջ:

**1976**

29. Խոսք, Հայաստանի լեռներ: /Վեպ/. Եր.: Սովետ. գրող. 1976. – 535 էջ:

Գրախոս.՝ Անտոնյան Վ. //Ջարթոնք. - Բեյրութ. 1977. – 19 մայիսի: Բարսեղյան Խ. Ասք անմահության // Գրակ. թերթ. –

1977. – 21 հունվ.: Թորոսյան Յ. //Զարթոնք. - Բեյրութ. 1978. -21, 22 դեկտ.: //Պայքար. – Ուրբեթաուն, 1979. – 1, 2 փետր.: Պետրոսյան Ե. Վեպ՝ ժողովրդի ճակատագրի մասին //Սովետ. Հայաստան. – 1977. – 25 մայիսի: Սարինյան Ս. Պատմության գեղարվեստական ընկալման ուղիներում //Սովետ. գրակ., 1977. – նո. 9. - էջ 141-149:

**1978**

30. Թագուհին հայոց: /Պատմավեպ/. Եր.: Սովետ. գրող. 1978. – 396 էջ:

Գրախոս.՝ Մելքոնյան Ս. Հայոց թագուհու հեռավոր լույսը //Սովետ. գրակ. – 1979. – նո. 6 - էջ 138-141: Պետրոսյան Թ. Գիրք ինքնաճանաչման //Սովետ. դպրոց. – 1980. – 16 հոկտ.: Սարինյան Ս. Պատմության առասպելի վիպականացումը// Գրակ. թերթ. – 1979.- 23 փետր. Ստեփանյան Վ. //Սեւան. – 1979. – 22 մարտի: 1 í aðæðai yí Æ. //Áðí áí èy. – 1980. – N5. – h. 104-109.

**1979**

31. Քարանձավի բնակիչները: /Վիպակ/. Եր.: Սովետ. գրող. 1979. – 101 էջ:

**1980**

32. Խոսեք, Հայաստանի լեռներ: /Վեպ/. - Եր.: Սովետ. գրող. 1980. – 519 էջ:

33. Հայրենապատում: /ճամփորդ. նոթեր Սովետ. Հայաստանի մասին/: 3 գրքով. - Եր.: Հայաստան. 1980-1984. –

Գիրք Ա. 1929-1979. – 1980. – 479 էջ:

Գրախոս.՝ Աղաբաբյան Ս., Գրողի այս մատյանը //Գրակ. թերթ. – 1980. – 10 հոկտ.: Գրողի նոր մատյանը //Աղաբաբյան Ս., Հողվածներ, դիմանկարներ, հուշեր. - Եր. – 1982. - էջ 352-356: Սարուխանյան Ն., Պատմական ժառանգության արդիական խորհուրդը //Սովետ. Հայաստան. – 1981. – 5 սեպտ.

Գիրք Բ. 1945-1979. – 1981.-608 էջ:

Գրախոս.՝ Հայրյան Գ., Երկրորդ գիրքը //Գրակ. թերթ. – 1981. -21 օգոստ.: Սուրադյան Ն.// Հայրենիքի ձայն. – 1982. – 24 փետրվ., էջ 5: Սարուխանյան Ն. Պատմական ժառանգության արդիական խորհուրդը // Սովետ. Հայաստան. – 1981. – 5 սեպտ.: Սեփեթյան Ա. //Շիրակ. - Բեյրութ. 1981. նո. 5-6. էջ 77-80:

Գիրք Գ. 1959-1981.-1984.-663 էջ.

Գրախոս.՝ Պետրոսյան Թ., Գիրք ժողովրդագիտական // Գրքերի աշխարհ. – 1985. – 17 փետր. - էջ 4:

**1985**

34. Արաքսը պղտորվում է: /Վեպ/. Եր.: Սովետ. գրող. 1985.-207 էջ:

34ա. Ծիտն ու մորեխը. – Թեհրան: Երազ. 1985. – 14 էջ:

**1986**

35. Հորս հետ եւ առանց հորս: /ինքնակենսագրական վիպակ/. Եր.: Սովետ. գրող. 1986. – 817 էջ:

Գրախոս.՝ Սարինյան Ս., Կյանքի առասպելը // Գրակ. թերթ. – 1986. – 21 նոյեմբ.

**ԲՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՈՒՄ ԵՎ ԺՈՂՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ**

**1938**

36. Խնդրության օրը: «Փառք քեզ երկիր մեր հզոր, դու ազգերով բազմազան.....»: «Ու տոնական թափորից երգերով տուն գնացին... »: /Զափածո//Ստալինյան դրոշով. - Գորիս, 1938. – 5 դեկտ.:

37. Սեր: /Սեր հասուն աղջիկներին/: /Բանաստեղծութ./ // Ստալինյան դրոշով. - Գորիս, 1938. – 29 նոյեմբ.:

**1940**

38. Գարուն: /Բանաստեղծութ./ / Թամազյան Ա. Մայիսմեկյան. - Եր. 1940. - էջ 70:

39. Ցուրաբերոցիք: /Հատված: Մի դեպք 10-րդ դարի Սյունյաց աշխարհում ծագած գյուղացիական ապստամբություններից/: Հայրենիքիս /Գագել/: Լճակի սերը /Սեւանի մոտ/: Աղբյուր /Զափածո/ //Հայրենի վտակներ: /Ժողովածու/. - Եր. 1940. - էջ 213-223:

**1942**

40. Գարուն: /Բանաստեղծութ./ //Լրաբեր. – Նյու-Յորք. 1942. 19 մայիսի:

**1949**

41. Հայրենի լեռներին: /Բանաստեղծութ./ //Սովետ. գրակ. եւ արվեստ. – 1949. – նո. 7 - էջ 43:

**1950**

42. Մեր գնդի մարդիկ: Վեպ: Առաջին մաս // Սովետ. գրակ. եւ արվեստ. – 1950. նո. 3. էջ 35-70: նո. 4 էջ 6-33: նո. 5. - էջ 3-42: նո. 6. - էջ 36-97: նո. 7. - էջ 39-86: նո. 8. - էջ 3-58:

43. Մեր գնդի մարդիկ: /Հատված վեպից/ //Սովետահայ գրականության անթոլոգիա. Եր., 1950. - էջ 699-704:

44. Շաքարալիճը: /Պատմվածք/ //Պիոներ. – 1950. – նո. 11. - էջ 12-14:

**1951**

45. Արջի խրատը: /Որսորդի հուշատետրից/ //Պիոներ. – 1951. – նո. 6. - էջ 22-25:

46. Ինչպես պապս գայլին բռնեց: /Պատմվածք/ //Պիոներ. – 1951. – նո. 12. - էջ 23-25:

47. Յոթերորդ աղբյուրը: /Պատմվածք/ //Սովետ. գրակ. եւ արվեստ. – 1951. – նո. 4. էջ 68-72:

**1952**

48. Պարծանքը: /Պատմվածք/ //Պիոներ. – 1952. – նո. 5. - էջ 2-3:

**1953**

49. Մայր շունը: /Պատմվածք/ //Պիոներ. – 1953. – նո. 2. – էջ 18-20:

**1954**

50. Լալ Յամազը: /Պատմվածք/ //Պիոներ. – 1954. նո. 5. էջ 18-23:

51. Կապիտանի որդին: /Յատվածներ վիպակից/ //Եղբայրություն. - Եր. 1954. էջ 225-251:

52. Սպիտակ գառը: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1954. – 19 նոյեմբ.:

**1955**

53. Թաթուր: /Յայ ժողովրդական գրույց/ //Պիոներ կանչ. – 1955. – 23 հունիսի:

54. Թալանը: /Պատմվածք/ //Պիոներ. – 1955. – նո. 5 - էջ 12-15:

55. Իմաստուն այգեպանը /Յայ ժողովրդական գրույց/ // Պիոներ. – 1955. – նո. 12. - էջ 12-13:

56. Հողը: /Յատված համանուն վեպից/ //Սշակույթ. - Բեյրութ. – 1955. – օգոստ. էջ 28-37:

57. Հովիվ Յարաթը /Պատմվածք/ //Սովետ. գրակ. – 1955. – նո. 6. – էջ 13-30:

58. Մեր զնդի մարդիկ /հատված Սերո Խանգադյանի համանուն վեպից/ //Սովետ.Յայաստան. – 1955. – 5 մայիսի. - / Յաղթանակի օրվա նախօրյակին:

**1956**

59. Ընկեր Գերասիմը: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1956. – 16 օգոստ.:

60. Հոնուտա սարի աղջիկը: Վիպակ // Սովետ. գրակ. – 1956. - նո. 4. - էջ 4-25:

61. Պատմվածքներ: Պորտաբար: Խղճի խայթը: Հորաբորոջս՝ հանգուցյալ պառավ Մանուշակի հիշատակին //Սովետ. գրակ. - 1956. – նո. 7. - էջ 82-94:

**1957**

Երիտասարդության երգը: /Բանաստեղծութ./ //Սարդաբյան Ե. Դպրոցական երգեր. - Եր., 1957. - էջ 30:

62. Կարմիր շուշաններ: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1957. – 1 նոյեմբ.:

64. Մշնառա ձորի գաղտնիքը...: /Վիպակ/ //Սովետ. գրակ. – 1957. – նո. 2. - էջ 8-26:

65. Ջրաղացպանն ու թագավորը: /Ըստ հայ ժողովրդական գրույցի/ //Պիոներ. – 1957. – նո. 10. - էջ 20-22:

**1958**

66. Լալ Յամազը: /Պատմվածք/ //Երկիր. – Յալեպ. 1958. – Յտ. Դ. - էջ 35-41. /Ձայն հայրենական/.

66ա. Ուստա Յեթուն: Բաղդասար նախագահը: /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. – 1958. – նո. 4. - էջ 44, 65:

**1959**

67. Յոթերորդ աղբյուրը: /Պատմվածք/ //Երիտ.Յայաս-

տան. – Նյու-Յորք, 1959. – 27 փետր. – 3 մարտի:  
68. Վերջին արցունքները: /Պատմվածք/ //Սովետ. գրակ. – 1959. – նո 9. - էջ 62-72. - /Մրցանակաբաշխության ներկայացված նյութեր/:

69. Քարանձավի բնակիչները: /Վիպակ պատանիների համար/ // Սովետ. գրակ. – 1959. – նո. 3. - էջ 3-59:

**1960**

70. Լալ Յամազը: Սպիտակ գառը: /Պատմվածքներ/ // Սովետահայ գրականության ընտիր էջեր. - Եր.: 1960. - էջ 529-535:

71. Հարազատ ձեռքեր: Պատմվածք //Սովետ.Յայաստան. – 1960. – 25, 26 մայիսի:

72. Նա երբեք այդքան ուրախ չի եղել: /Պատմվածք/ // Երեւան. – 1960. – 8, 9, 10, 11 դեկտ.:

**1961**

73. Եղբայրները: /Պատմվածք/ //Սովետ. գրակ. – 1961. – նո. 1. - էջ 3-13:

74. Թալանը: /Պատմվածք/ //Փունջ սովետահայ մանկական գրականության. - Եր. 1961. - էջ 215-222:

75. Կանաչ դարպաս: /Պատմվածք/ // Յայաստանի աշխատավորուհի. – 1961. – նո. 11. - էջ 11-14:

76. Կորած արահետներ: /Պատմվածք/ //Երեւան. – 1961. – 1, 2, 4, 5 դեկտ.:

77. Նրա ահը: /Պատմվածք/ //Երեւան. – 1961. – 10,11 հոկտ.:

78. Նրան էլ չպետք է մոռանալ: /Պատմվածք/ //Սովետ. Յայաստան.. – 1961. – 13 հունվ.:

**1962**

79. Ալեք ապր գանգատը: /Պատմվածք/ //Սովետ. Յայաստան. – 1962. – 18 ապր.:

80. Այստեղ ճերմակ ծաղիկներ կային...: «Իտալական նովելներ» շարքից //Պիոներ կանչ. – 1962. – 16 դեկտ.:

81. Արշակի պատմվածքները: //Պիոներ. – 1962. – նո. 8. - էջ 25-26:

82. Բախտավոր Աղավելը: /«Մերոնք եւ մեր հարեւանները» շարքից/ //Բանվոր. – Լենինական. 1962. – 26 հուլիսի:

83. Երեք պատմվածք: /«Մերոնք եւ մեր հարեւանները» շարքից/ Բախտավոր Աղավելը: Ուրիշ տեսակ մարդը: Իր խոսքի տերը //Սովետ. գրակ. – 1962. – նո. 6. - էջ 12-23:

84. Թթենին: /Պատմվածք/ //Սովետ. Յայաստան. 1962. – նո. 11. էջ 13-15:

85. Հին ձորի բնակիչը: /Յատված «Քաջարան» վեպից/ //Գրակ. թերթ. – 1962. – 7 նոյեմբ.:

86. Մխիթար Սպարապետ: /Պատմավեպ/ //Զարթոնք. - Բեյրութ. 1962. – 9 հունվ.: 28. սեպտ. - /Զարթոնքի թերթոն. - թիվ 44/:

86ա. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ //Աշխարհ. – Փարիզ. 1962. – 17 մարտի. - էջ 6: 24 մարտի. - էջ 6: 31 մարտի. - էջ 6: 7 ապր. - էջ 6: 14 ապր. - էջ 6: 21 ապր. - էջ 6: 28 ապր. - էջ 6: 19 մայիսի. - էջ 6: 26 մայիսի. - էջ 6: 9 հունիսի.

- էջ 6: 16 հունիսի: էջ 6: 23 հունիսի. էջ 6: 30 հունիսի. - էջ 6: 4 հունիսի. - էջ 6: 7 հունիսի. - էջ 6: 14 հունիսի. - էջ 6: 21 հունիսի. - էջ 6: 28 հունիսի. - էջ 6: 8 սեպտ. - էջ 6: 22 սեպտ. - էջ 6: 29 սեպտ. - էջ 6: 6 հոկտ.. - էջ 6: 13 հոկտ. - էջ 6: 20 հոկտ. - էջ 6: 27 հոկտ.. էջ 6: 3 նոյեմբ. էջ 6: 10 նոյեմբ. - էջ 6: 17 նոյեմբ. - էջ 6: 24 նոյեմբ. - էջ 6: 8 դեկտ. - էջ 6: 15 դեկտ. - էջ 6: 22 դեկտ. - էջ 6: 29 դեկտ. - էջ 6:

87. Սրտի ցավը: Ծերունու արցունքները: /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. - 1962. - նո. 11. - էջ 21-26:

88. Վերջին եզնարածը: /Պատմվածք/ //Ռայաստանի աշխատավորուհի. - 1962. նո. 8. - էջ 13-16:

89. Օտար հավքը: /Պատմվածք/ //Սովետ. գրակ. - 1962. - նո. 2. - էջ 7-17: Սփյուռք. - Բեյրութ. - 29 մարտի. էջ 6-9: Շիրակ. - Բեյրութ. - նո. 4. - էջ 156-167:

**1963**

90. Իտալական զրույցներ: Բարեւ, Բրատելլո: Եկ նորից խանձվենք: Մարիո Ջիմարա //Գրակ. թերթ. - 1963. - 7 նոյեմբ.:

90ա. Ծերունու արցունքները: /Պատմվածք/ //Արարատ. գրական. - Բեյրութ. 1963. - նո. 7-8. էջ 325-330.

91. Հորովելը: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. - 1962. - 18 հունվ.: Ապագա. - Մոնրեալ. 1983. - 5 փետ. - էջ 3:

92. Ճանապարհը: Մարդը: /«Կորած արահետներ» շարքից/ /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. - 1963. - նո. 4. - էջ 32-43:

93. Ճանապարհը: /«Կորած արահետներ» շարքից/ /Պատմվածք/ //Շիրակ. - Բեյրութ. 1963. - նո. 6. - էջ 260-264:

94. Մարդը /Պատմվածք/ //Շիրակ. - Բեյրութ. 1963. - նո. 7. - էջ 281-288:

94ա. Մխիթար Սպարապետ: Պատմավեպ: Հատված/ //Աշխարհ. - Փարիզ. 1968. - 5 հունվ. - էջ 6: 12 հունվ. էջ 6, 2 փետր. - էջ 6, 7 փետր. էջ 6: 23 փետր. էջ 6: 2 մարտի. էջ 6: 9 մարտի. - էջ 6: 16 մարտի. - էջ 6: 30 մարտի. - էջ 6: 6 ապր. - էջ 6: 13 ապր. - էջ 6: 20 ապր. էջ 6: 27 ապր. - էջ 6: 25 մայիսի. - էջ 10: 1 հունիսի. - էջ 4: 8 հունիսի. - էջ 6: 29 հունիսի. - էջ 6: 20 հունիսի. - էջ 6: 28 հունիսի. - էջ 6: 13 սեպտ. - էջ 6: 20 սեպտ. - էջ 6: 12 հոկտ. - էջ 6: 19 հոկտ. - էջ 6: 2 նոյեմբ.. - էջ 6: 9 նոյեմբ. - էջ 6: 16 նոյեմբ. - էջ 6: 23 նոյեմբ. - էջ 6: 7 դեկտ. էջ 6: 14 դեկտ. - էջ 6: 21 դեկտ. - էջ 6: 28 դեկտ. - էջ 6:

95. Նորից բարեկամներին հետ: Շաքարկենին: Խիզախ ծիծեռնակը: /Պատմվածքներ/. Մայրը: /Հայկական ավանդություն/ //Պիոներ. - 1963. - նո. 8. - էջ 3-5:

96. Նրա ճանապարհը: /Հատված «Քաջարան» վեպից/ //Երեւան. - 1963. - 9,10,11 հունվ.:

**1964**

97. Թե ինչո՞ւ վշտացավ մեր Ավագը: Երգիծական պատմվածք //Երեկոյան երեւան. - 1964. - 23 հունվ.: Սավառնակ. - Կահիրե. 1964. - 22 փետր. - էջ 2-3:

98. Լույսը հնձանից: Մագաղաթի մասունք: /«Վարք հարանց» շարքից/ /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. - 1964. - նո. 1. - էջ 51-62:

99. Կարմիր շուշաններ: /Պատմվածք/ //Արեւ. - Կահիրե, 1964. - 30 նոյեմբ.:

100. Հույսը անթեղած: /Պատմվածք/ //Սովետ. Հայաստան. - 1964. - նո. 12. - էջ 21-22: Գրակ. թերթ. - 17 հունիսի:

101. Չորն էլ էն ձորը չի...: /Պատմվածք/ //Հայաստանի աշխատավորուհի. - 1964. - նո. 1. - էջ 23-27:

102. Մեծ դաշտի աստղը: /Վիպակ/ //Սովետ. գրակ. - 1964. - նո. 11. - էջ 3-54:

102ա. Մխիթար Սպարապետ /Պատմավեպ/ // Աշխարհ. - Փարիզ. 1964. - 4 հունվ. - էջ 6: 11 հունվ. - էջ 6: 1 փետր. - էջ 6: 8 փետր. - էջ 6: 22. փետր. - էջ 6: 29 փետր. էջ 6: 7 մարտի. էջ 6: 14 մարտի. էջ 6: 21 մարտի. էջ 6: 28 մարտի. էջ 6: 11 ապր. էջ 6:

103. Պորտաքար: /Պատմվածք/ //Սփյուռք. - Բեյրութ. 1964. - 11 հունվ. - էջ 4-5, 8-9:

104. Սագեր մայրիկը: /Պատմվածք/ Սովետ. Հայաստան. - 1964. - 1 հունվ.:

**1965**

105. Այրված տունը: /Պատմվածք/ //Սփյուռք. - Բեյրութ. 1965. - 31 հունիսի. - էջ 6-7, 11: 28 հունիսի. - էջ 4-5, 8:

106. Երգը չի մեռնում: /Իմ օրագրից/ //Սովետ. Հայաստան. - 1965. - 3 հունիսի:

107. Թե ինչպես հայրս այգի տնկեց: Այս էլ մեր Ակեղը: Կոշիկներ Մանուչի համար: //«Մերոնք եւ մեր հարեւանները» շարքից/ /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. - 1965. - նո. 12. - էջ 24-33:

108. Ժողովրդական զրույցներ: Խեչոց Սիանոսը: Երգիչ Բարսեղը //Պիոներ. - 1965. - նո. 12. - էջ 15-17:

109 Լույսը՝ կապույտ պատշգամբում: Պատմվածք //Հայաստանի աշխատավորուհի. - 1965. - նո.. - էջ 1-3:

110. Հակոբ Արմեն: /Լեզներ/ //Սովետ. Հայաստան. - 1965. նո. 5. - էջ 16-17:

111. Մեծ դաշտի աստղը: /Վեպ/ // Սփյուռք. - Բեյրութ, 1965. - 3 փետր. - էջ 8-9: 10 փետր. - էջ 8-9: 17 փետր. - էջ 8-9: 24 փետր. էջ 8-9: 3 մարտ. - էջ 8-9: 10 մարտի. էջ 8-9: 17 մարտի. - էջ 8-9: 23 մարտի. - էջ 8-9: 31 մարտի. էջ 8-9, 12: Արեւ. - Կահիրե, 1965. - 2, 3, 4, 5, 8, 9, 10, 11, 12, 13, 15, 16, 17, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 26, 27, 29, 30 մարտի. - /«Արեւ»-ի թերթոնը:

112. Մոր վիշտը: /Պատմվածք/ //Չանասեր. - Բեյրութ. 1965. - նո. 15. - էջ 326-329:

113. Քաջարան: /Հատված մը համանուն վեպեն/ //Հառաջ. - Բեյրութ. 1965: - 7 նոյեմբ. - էջ 5-6:

**1966**

114. Այս էլ մեր Ակեղը: /Պատմվածք/ //Սփյուռք. - Բեյրութ. 1966. - 17 մարտի. էջ 8:

115. Երկու պատմվածք: /«Մերոնք եւ մեր հարեւանները»/ շարքից/ : Հորեղբորս ծեման: Իմ բեղերի արկածները //Գրակ. թերթ. - 1966. -25 մարտի:

116. Կանաչ ստվեր: /«Ծարավել եմ, ջուր բերեք» շարքից/ //Սովետ. Հայաստան. 1966. 30 սեպտ. -/ Դեպի Հայաստանի

գրողների 5-րդ համագումար/:

117. Հակոբ Արմեն: /Լեզուն/ //Ձահակիր. – Կահիրե, 1966. – 6 հոկտ.:

118. Հին գինին է, հին կրակը: Ծարավել են, ջուր բերեք...: Ծիծեռնավանք: /Ակնարկներ/ //Գրակ. թերթ. – 1966. – 1 հուլիսի:

119. Մախին: /Պատմվածք/ //Պիոներ. – 1966. – նո. 9. - էջ 23-24:

120. Մխիթար Սպարապետ: /Պատմվածք/ Գիրք առաջին //Արեւ. – Կահիրե. 1966. – 18, 19, 21, 27, 28, 29 ապր.: 2, 3, 4, 5, 6, 7, 11, 17, 18, 19, 20, 25, 26, 28, 30 մայիսի: 7, 8, 9, 10, 13, 16, 17, 21, 22, 23, 24, 27, 29, 30, հունիսի: 1, 4, 5, 8, 9, 11, 25, 26, 28, 29, 30 հուլիսի: 1, 2, 3, 4, 6, 8, 9, 10, 11, 13, 17, 26, 29, օգոստ.: 7, 8, 15, 16, 17, 19, 20, 21, 22, 30 սեպտ.: 1, 3, 4, 5, 6, 7, 10, 11, 14, 15, 17, 18, 19, 24, 25, 26, 27, հոկտ.: 1, 2, 3, 4, 7, 8, 9, 10, 14, 16 նոյեմբ.: 12, 15, 16, 17, 19, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 28, 29, 30, 31 դեկտ.:

121. Ներքին լանջը: Լորագետը չի պղտորվում: /«Ծարավել են, ջուր բերեք» ակնարկաշարից/ //Սովետ. դպրոց. – 1966. – 20 հուլիսի:

122. Շամբից հեռանում ենք՝ սպասելով...: «Ծարավել են, ջուր բերեք» շարքից //Սովետ. Հայաստան. – 1966. – 31 հուլիսի:

123. Սպիտակ ջուրը: «Ծարավել են, ջուր բերեք» շարքից //Սովետ. Հայաստան. – 1966. 30 օգոստ.:

**1967**

124. Երկնահայաց փողոց: /Հատված «Մատյան եղելությանց» վեպից/ //Շիրակ. Բեյրութ, 1967. – նո. 3-4. էջ 89-108.

125. Ծարավ ճանապարհներ: «Ծարավել են, ջուր բերեք» շարքից //Սովետ. Հայաստան. – 1967. – 31 մարտի: 1 ապր. - /Ներկայացված է «Սովետական Հայաստանի» հոբելյանական մրցանակաբաշխությանը/:

**1968**

126. Եղանակը: Խաչի Լեւոնը: /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. – 1968. – նո. 4. - էջ 44-57:

127. Էրեբունիի Տիգրան քեռին //Գրակ. թերթ. – 1969. – 15 մարտի:

128. Լույսը անտառում: /«Ծարավել են, ջուր բերեք» շարքից/ //Հայրենիքի ձայն. – 1969. 4 սեպտ. - էջ 4-5:

129. Ծովի երգը: /Պատմվածք/ //Սովետ. Հայաստան. – 1968. – նո. 5. - էջ 25-27:

130. Հայրենի կարգավ: /Պատմվածք/ //Սովետ. Հայաստան. – 1968. – նո. 7. - էջ 26-29:

131. Մենք այլևս նրան չտեսանք: /Պատմվածք/ //Պիոներ. – 1968. – նո. 9. - էջ 14-17:

131ա. Մոր վիշտը: /Պատմվածք/ //ԱՅԳ. Բեյրութ. 1968. – 13, 14, 15 փետր.:

132. Ուրախ սրտով: /Պատմվածք/ //Երեկոյան Երեւան. – 1968. – 20 հունիսի: Աշխարհ. – Փարիզ. 1968. – 13 հուլիսի:

133. Փոստարկը: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1968. –

11 հոկտ.:

**1969**

134. Անձրեւից հետո: /Պատմվածք/ //Հայրենիքի ձայն. – 1969. – 26 մարտի. - էջ 4-5: 2 ապր. էջ 4-6:

135. Ես սպասում եմ արեւածագին: /Ռազմաճակատային օրագրերից/ //Գրակ. թերթ. – 1969. - 9 մայիսի:

136. Ես տանիներ տարեկան էի...: Ռազմաճակատային օրագրերից: Տարի դեղին 1943: Տարի արնագույն - 1944 //Գարուն. – 1969. – նո. 8. - էջ 78-95.

137. Երեք տարի 291 օր: /Ռազմաճակատային օրագրից/ //Ավանգարդ. – 1969. – 26, 29, 31 հուլիսի.

138. Մատյան եղելությանց: Վեպ //Աշխարհ. – Փարիզ. 1969. – 20, 24 սեպտ.: 4, 8, 11, 15, 18, 22, 25, հոկտ.: 1, 5, 8, 12, 15, 19, 22, 26, 29 նոյեմբ.: 3, 6, 10, 13, 17, 20, 27, 31 դեկտ.:

139. Մուղան - ճյուղ: /Պատմվածք/ //Ավանգարդ. – 1969. – 3 փետր.:

140. Տասնհինգ տարեկան տղամարդիկ: Չյունե հաց: Եղանակը տաքացավ: Նրանց շունը գարեհաց չի ուտում: Անհայտ ծաղիկ: Վանեի կոշիկները: /Պատմվածքներ/ //Սովետ. գրակ. – 1969. – նո. 11. - էջ 9-25.

**1970**

141. Երեք տարի 291 օր: /Հատվածներ ռազմաճակատային օրագրից/ //Հայրենիքի ձայն. – 1970. – 1 հունվ. - էջ 4-5:

142. Մատյան եղելությանց: Վեպ //Աշխարհ. – Փարիզ, 1970. – 7, 10, 14, 17, 21, 24, 31, հունվ.: 4, 7, 11, 14, 18, 21, 25, 28 փետր.: 4, 7, 11 մարտի:

143. Մեր զինակիցները: /Պատառիկներ «Երեք տարի 291 օր» ռազմաճակատային օրագրից/ //Սովետ. Հայաստան. – 1970. – 26 ապր.:

**1971**

144. Եվս մի նշխար մայրաքաղաք: /«Մատյան հայսմավուրց» շարքից/ //Արեւ. – Կահիրե,

1971. – 17, 20, 22 նոյեմբ. - /Մասնավոր «Արեւ»-ին/:

145. Երեք տարի 291 օր: /Հատվածներ ռազմաճակատային օրագրերից/ //Սովետ. գրակ. – 1971. – նո. 12. - էջ 16-17:

**1972**

147. 1971, ամառ: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1972. – 21, 28 հունվ.:

148. Չմենային պատմվածքներ: Ուրախանալու դեղատոմս: Չէ, էլ չեն մրսում: Դեպուտատի օրագրից //Սովետ. գրակ. – 1972. – նո. 5 - էջ 66-76:

149. «Մեզ մոտ ջերմությունը անփոփոխ է»: /Հատված վեպից/ //Հայաստանի աշխատավորուհի. – 1972. – նո. 12. էջ 16:

150. Մենավոր ծառը: /Պատմվածք/ //Պայքար. – Ութորթաուն. 1972.- 10 մարտի:

151. Մուղան-ճյուղ: /Պատմվածք/ //Հայրենիքի ձայն. – 1972. 12 ապր. - էջ 2:

**1973**

- 152. Աշխարհը նոր է ստեղծվում: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1973. – 27 ապր. - էջ 4:
- 153. Բարի լույս, Նվարդ. /Պատմվածք/ //Սովետ. Հայաստան. – 1973. – 28 հունվ.: Երեւան – Սոֆիա. 1973. – 23 փետր.: Պայքար. – Ուրբաթառուն. – 25 մարտի:
- 154. Լույսը լեռներում: /Վեպ/ //Սովետ. գրակ. – 1973. – նո. 6. - էջ 3-36: նո. 7. - էջ 3-32. նո. 8. - էջ 3-29.
- Գրախոս.՝ Գրիգորյան Ե. Դեպքերի ընթացքի հետ //Գրքերի աշխարհ. – 1974. – 15 ապր. - էջ 4:
- 155. ճանաչեցեք ինձ, ես Արմենն եմ: /Ամենափոքրերի համար: /Պատմվածք/ //Ծիծեռնակ. – 1973. – նո. 6. էջ 3-5:

**1974**

- 156. Մարիամի կովերը: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1974. – 7 նոյեմբ.:
- 157. Աղբյուրի ճանապարհը: /Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1975. – 5 դեկտ. - /Սերո Խանգադյանի 60-ամյակը/:
- 158. Գտնված գարուն: /Պատմվածք/ //Հայրենիքի ծայն. – 1975. – 24 դեկտ. - էջ 4,6:
- 159. Ես սպասում եմ նրան: /Պատմվածք/ //Սովետ. Հայաստան. – 1975. նո. – 12. - էջ 27-28:
- 160. Խրամատները կանչում եմ: Սպանված աղջիկ: Լեյտենանտ Գուրգեն Ավետիսյան: Հետախույզը: Անիի խաչքարը: Իմ քույրն էր: /Պատմվածքներ/ //Գարուն. – 1975. – նո. 5. էջ 37-45.
- 161. Կապույտ ձի: Դադձի բույրը: /Պատմվածքներ/ //Գրակ. թերթ. – 1975. – 1 մայիսի:
- 162. Չմեռային պատմվածքներ: Քաթանի գույնը: Ի՞նչը գնաց... : Փուշը //Գարուն. – 1975. նո. 12. էջ 3-10:
- 163. Երեմակ վիրակապը: /Ռազմաճակատային պատմվածքներից/ //Սովետ. Հայաստան. – 1975. – 4 դեկտ.:
- 164. Մենք հզոր ենք: /Բանաստեղծություն./: /Գրողի առաջին ստեղծագործություններից/ //Ձանգեզուր. - Գորիս. – 1975. – 6 դեկտ. - /Լրացավ սովետահայ արձակի տաղանդավոր վարպետ Սերո Խանգադյանի ծննդյան 60-ամյակը/:
- 165. Սոր պատվիրանը: «Կարմիր շուշաններ» պատմվածաշարից //Սովետ. Հայաստան. – 1975. – 7 հունվ.: Երեւան. – Սոֆիա. – 9 մայիսի:
- 166. Պատմվածքներ «Կարմիր շուշաններ» շարքից: Այսպես մարում է լույսը: Աղի համար //Սովետ. գրակ. – 1975. – նո. 12. - էջ 8-17:
- 167. Քարե ծաղիկ: /Պատմվածք/ // Երեկոյան Երեւան. – 1975. – 6 դեկտ. - /Սերո Խանգադյանի 60-ամյակի առթիվ/:

**1976**

- 168. Աղբյուրի ճանապարհը: /Պատմվածք/ //Պայքար. – Ուրբաթառուն. 1976. -7 դեկտ. - էջ 2:
- 169. ԵՏ. 27: /Պատմվածք/ //Հայաստանի աշխատավորուհի. – 1976. – նո. 1. - էջ 20-22:
- 170. Գտնված գարուն: /Պատմվածք/ // Երեւան. – Սոֆիա. 1976. – 16 հունվ.:
- 171. Գտնված գարուն: /Հատվածներ/ /Պատմվածք/ //Նոր

- կյանք. – Ռումինիա. 1976. – 6 փետր.:
- 172. Թե ինչպես արջը փախավ: Այս էլ օձի մասին: /Պատմվածքներ/ //Պիոներ. – 1976. – նո. 3. - էջ 9-10:

**1977**

- 173. Արեգը: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. – 1977. – նո. 11. - էջ 9-11:
- 174. Կապույտ աչքեր: Ամառային գրույց: /Պատմվածքներ/ //Գրակ. թերթ. – 1977. – 29 հուլիսի:
- 175. Հայկիկի գյուղը: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. – 1977. – նո. 12. - էջ 4-5:
- 176. Մանրապատումներ: Ներիր ինձ...: Քարտեզի պատահիկը: Սպանված աղջիկ: Անիի խաչքարը: Աստվածամոր քրքիջը: Թթմորի մեռումը: Էջի բժիշկը: Անամպ երկինք: Մշուշը ցրվել է: //Սովետ. գրակ. – 1977. – նո. 4. էջ 12-30:
- 177. Մի հորթի պատմություն: Ծավի ձորի հեքիաթը: // «Մերոնք եւ մեր հարեւանները» շարքից: /Պատմվածքներ/ //Գրակ. թերթ. – 1977. – 11 փետր.»
- 178. Քաթանի գույնը: /Պատմվածք/ //Պայքար. – Ուրբաթառուն, 1977. – 26 փետր.:

**1978**

- 179. Այ ծովակ, ծավի ծովակ: Մենավոր ծառ: /Պատմվածքներ/ //Գրակ. թերթ. – 1978. – 16 հունիսի:
- 180. Նոր պատմվածքներ: «Կորած արահետներ» շարքից: Խրտնած գառներ: Ջարմանալի պատմվածք: Ջրաղացը ծայն չունի: Ի սկզբանե...: Ուրախ պատմվածք: Ի՞նչ է հիշում մոխրոտան ձին //Սովետ. գրակ. – 1978. – նո. 12. - էջ 4-27:
- 181. Քույր ու եղբայր: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. – 1978. – նո. 9. - էջ 7-8:

**1979**

- 182. Երկու պատմվածք: /«Կորած արահետներ» շարքից/ Աղբյուրի երգը չի մարել... Կրակը չեն սպանի //Հայաստանի աշխատավորուհի. – 1979. – նո. 7. - էջ 29-31:
- 183. Հայրանուն: Պատմվածք/ //Գրակ. թերթ. – 1979. – 12. հոկտ.:
- 184. Շնիկով շորը: Աքլորն ու Անոն: /Մանկական պատմվածքներ/ //Ծիծեռնակ. – 1979. – նո. 12. - էջ 6-7:

**1980**

- 185. Ժողովրդական գրույցներ: Թագավորի «բարություն» Այս էլ մի այլ աղվես նախարարի մասին: Մեղավորը ձին է //Պիոներ. – 1980. – նո. 2. - էջ 19-23:
- 186. Ինչ լավ է...: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. – 1980. – նո. 7. - էջ 3:
- 187. Լուիզան պապիկին շատ է սիրում: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. – 1980.- նո. 12. - էջ 3-4:
- 188. Հողի բույրը: /Զրույց/ //Ծիծեռնակ. – 1980. – նո. 1. - էջ 10. - /Սեր ավանդատունը/:
- 189. Շնիկով շորը: /Կարճ պատմվածք/ //Ջարթոնք. - Բեյրութ. 1980. – 3 օգոստ.:
- 190. Պատմվածքներ: «Կորած արահետներ: Մերոնք եւ

մեր հարեւանները» շարքից: Փշրված գրեր: Վերջին նշխարները: Խնոցին դատարկ է: Հին ընկերոջս՝ Ասատուր Չերքեզյանին: Հրաշալի այգի: Վիճակախաղ //Սովետ. գրակ. - 1980. - նո. 6. - էջ 10-24:

191. Վահագնիկը ինձ պատժում է: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. - 1980. - նո. 10. - էջ 9:

**1981**

192. Արաքսը պղտորվում է: Առաջին մասունք: /Վեպ/ //Սովետ. գրակ. - 1981. - նո. 7 - էջ 8-81:

Գրախոս.՝ Ջաքարյան Ա. //Գրակ.թերթ. - 1982. - 9 հուլիսի:

193. Արմավիրի մեծ գերդաստանը: /Հատված «Հայրենապատում» գրքից/ // Շիրակ. Բեյրութ, 1981. - նո. 5-6. - էջ 10-16:

194. Երեք սերունդ: Պատմվածք //Երեկոյան Երեւան. - 1981. - 11 ապր.:

195. Էնվեր փաշայի սպանությունը /Կանչ. - Բեյրութ. 1981. - 14 մարտի. - էջ 4,7:

«Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպի վերջին գլուխը:

196. Թագուհին հայոց: /Պատմվեպ/ //Հայրենիք. - Բոստոն. 1981. -24, 25, 26, 27 փետր.: 3, 4, 5, 6, 10, 11, 12, 13, 17, 18, 19, 20, 24, 25, 26, 27, 31 մարտի, 1, 2, 3, 7, 8, 9, 10, 14, 15, 16, 17, 21, 22, 28, 30 ապր., 1, 5, 6, 7, 8, 12, 13, 14, 15, 19, 20, 21, 22, 27 մայիսի, 2, 3, 4, 5, 9, 10, 11, 12, 16, 18, 19, 23, 24, 25, 26, 30 հունիսի, 2, 3, 7, 8, 9, 10, 11, 15, 16, 17, 21, 22, 23, 24, 28, 29, 30 հուլիսի:

197. Լուիզայի ուրախությունն էլ էր մեծ: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. - 1981. - նո. 8. - էջ 8:

198. «Հայրենապատում» գիրքն հատված մը: Արմավիրի մեծ գերդաստանը //Շիրակ. - Բեյրութ. 1981. - նո. 5-6. էջ 10-16, 80.

199. Ճանապարհի տասնվեցերորդ: Մամիկոնյան տան շառավիղը //Գրքերի աշխարհ. - 1981. - 15 ապր., էջ 2:

Հատված «Հայրենապատում»-ի երկրորդ գրքից.

200. Վահագնիկը բժիշկ: /Մանկական պատմվածք/ // Ծիծեռնակ. - 1981. - նո. 2. - էջ 10:

201. Վարք Սաշտոցի //Բագին. - Բեյրութ. 1981. - նո. 3. - էջ 4-9:

**1982**

202. Արաքսը պղտորվում է: /Մասունք երկրորդ/: /Վեպ/ //Սովետ. գրակ. - 1982. - նո. 10. - էջ 3-42:

203. Հատվածներ Սերո Խանգաղյանի «Հայրենապատում» գրքից:

Վերին Ղուկասյան գյուղում //Գարուն. - Ղուկասյան. 1982. - 31 հուլիսի:

204. Հույսը: /Պատմվածք/ //Պայքար. - Ուորթթաուն. 1982. - 6 մարտի. - էջ 3, 8:

**1983**

205. Գառնիկի պատմածը //Պիոներ. - 1983. - նո. 5. - էջ 12-13:

206. Հնարագետ գյուղացին: /Ղարաբաղյան գրույց/ //Պիոներ. - 1983. - նո. 1. էջ 18-19:

**1984**

207. Ղեպի մեր տուն: /Պատմվածք/ //Պիոներ. - 1984. - նո. 3. - էջ 10-11:

208. Հիմար կատու: /Մանկական պատմվածք/ //Ծիծեռնակ. - 1984. - նո. 7. - էջ 13:

209. Հին տետրակներից: Պատմվածքներ: Ծարավ տնկիներ: Երկու թռչուն: Ղուռը բաց մնաց: Գործի բերումով: Սկզբունքային մարդ: Գտնված ջահելություն //Սովետ. գրակ. - 1984. - նո. 9. էջ 3-19:

**1985**

210. Առաջին կամրջահայաց փողոց: /Հատված «Մատյան եղելությանց» վեպից/ // Ջանգեղուր. - Գորիս, 1985. - 26 դեկտ. - /Սովետահայ գրականության լուսաշող բարձունքների վրա/:

211. Արեւն Արաքսի կիրճում: /Հատված «Մխիթար Սպարապետ» վեպից/ //Գրակ. թերթ. - 1985. - 20 դեկտ. - /Սերո Խանգաղյան -70/:

212. Հատված «Մխիթար Սպարապետ» պատմվեպն: Արեւն Արաքսի կիրճում: /Կրճատումով/: Հատվածներ: «Երեք տարի 291 օր» գրքն: Հողի ծայրը: Անիի խաչը: Արդեն գարուն է, մարտիկ //Հայրենի ղողանջներ. - Եր. 1985. - էջ 284-302:

213. Հեղինակը իր հերոսի հետ: /Մի հատված «Պըլը-Պուրի» գրքից/ //Երեկոյան Երեւան. - 1985. - 24 դեկտ. - /Սերո Խանգաղյան -70/:

213ա. Ների ինձ...: Քարտեզի պատահիկը: Սպանված աղջիկ: Ճերմակ վիրակապ: Անիի խաչքարը: /Պատմվածքն./ //Սուր եւ աղավմի. - Եր. 1985. - էջ 130-143:

214. Պատմվածքներ: Ո՞րն է աջը, ո՞րն է ձախը: Լավ անուն դրեք էլի...: Ճաշակով մուկը: Վրիժառուն: Անպոչ շունը: Տղան զղջացել է //Պիոներ. - 1985. - նո. 7 - էջ 18-22:

**1986**

215. Գերեզմանափորի հիշատակարանը: /Վեպ/ //Սովետ. գրակ. - 1986. - նո. 3. էջ 11-56:

216. Ես ու դու, դու եւ ես...: /Հին տետրակներից/ //Հայաստանի աշխատավորուհի. - 1986. - նո. 9. - էջ 17-21:

217. Տատիս խրատը: /Պատմվածք/ //Պիոներ. - 1986. - նո. 11. - էջ 8-9:

**Թեոս Պերրոսյան,  
«Սերո Խանգաղյան. Մարենագիտություն»  
Երեւան, 1992**

# Ձոներգ

## Սերո Խանզադյանի 75-ամյակի առթիվ



### ՎԱՋԳԵՆ ՍՅՈՒՆԵՅՅԱՆ


Աշխարհում այս կա մի աշխարհի  
բարձրաբերձ,  
Երկնակարկառ կայարաններով ոսկեհուռ,  
Նողմերն այնպես պար են բռնում լեռներում,  
Ամպերն են մութ անդունդներում ձմեռում:  
Երկրում այդ կան խոսուն քարեր  
մամուսպար  
Եվ անկաճան ճգնարաններ գորշավեմ,  
Գիշերները աստղերի հեպ զրուցող  
Վսեմաշուք մարտուռ ու վանք կիսավեր:  
Կան լեռների քարավաններ ձյունաբաշ,  
Անձեռակերպ ժայռաայուններ արեւկեր,  
Ձորերի մեջ՝ բորբոսահուր մթություն,  
Խորհրդալուր հեթիաթասաց գեղակներ:  
Աշխարհում այդ դրյակներ կան ժայռափոր,-  
Ծալքարեղով, ննջարանով խլավեմ,  
Եվ բերդեր կան՝ թառած անասնոց վիհերին,  
Որոնց ոտի չի գրավել երբեւէ:  
Ննադարյա այգիներ կան ազագուն, -

Լերկ ժայռերի հարթ փեշերին ծվարած,  
Ննձաններ կան՝ կարասներով ընդգերնյա  
Եվ կամուրջներ՝ ողնաշարով կորացած:  
Որքան հեպքեր բարության ու տքնանքի,  
Դաջված կրծքին հազար ու մի քարափի:  
Այնպես մի այլ՝ հրաշք երկինք կա վերում  
Ու այլ կերպ են ժայրում աստղերն ու արփին:  
Աշխարհում այդ՝ բարձրագնա, վեհանիստ,  
Ոչ թե մարդիկ՝ հոգսամուրթ, վեհերուր, -  
- Արծվահայաց խիզախներ են ասրել հար,  
Որ առյուծ ու վագր են խեղդել ձեռքերով:  
Ասրել են եւ իմաստուններ լուսադեմք,  
Որ խուցերում մշուշամած վանքերի  
Խոկունների լուսամտագ ցուլերով  
Գանձ են հանել իմացության ծալքերից...  
Արդ, հեթիաթի աշխարհում այդ հնարույր,  
Նինք հախունն նորանում է նորովի,  
Ու նորը պերճ՝ հնի խորհուրդն ամփոփած  
Գալիքներում զարմնահարույց կարեւի:  
Աշխարհն այդ ունի եւ նոր գիտուններ, -  
Շնորհաշար, բազմահմուր մշակներ,  
Որոնք գիտեն առեղծվածներ վերձանել  
Եվ գալիքի շունչն ու ոգին գուշակել:  
Որոնք մրթի թոխքներով հեռահար  
Ընթացքի նոր ուղիներ են որոնում  
Ու դարձնում ուժերի խաղ հոգեթով  
Սրեղծագործ ամեն ջանք ու արարում:  
Կա դրանց մեջ մեկն ամենից բազմագով -  
Այր մի հմուր, աստղակիր ու իմաստուն.  
Գիրի ամեն գաղտնիք կյանքի, բնության  
Եվ երկնաչու հավքերի վարկն ու լեզուն:  
Պեղել է նա ընդերքը հին պարմության,  
Խոսքի ոսկով զօժել հիմնը մեր գոյի, -  
Լույս է ցողել թախծին «Նայոց թագուհու»  
Անգրայի մեջ զրել հունդեր ներկայի:  
Ելել է նա վիպերգության նոր զագաթ  
Ու աշխարհին պարզել վառը նաիրյան,  
Ոգորում է՝ ուսած հոգուերը ցեղի,  
Կանխում հեղունն ունայն խոսքի ու արյան...  
«Զանգեզուր», 22 հունվարի 1991թ.



# Դյուցազնի սիրանքը

Նվիրում եմ Սերո Խանգադյանի 70-ամյակին



## ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ

Փառքն եմ ասում քաջանց որդուն  
 ազարարենչ,  
 Արձանացալ, անճահացալ լեռների մեջ,  
 Ժայռերի մեջ դեմքը մնաց էն փրամոր,  
 Որ Նայկագուն հուրը պահեց փոհների մեջ:  
 Էն սեւասիրտ չարքերը եկան, որ սեւ կապեն  
 մեր լեռներին,  
 Յասնան թրով անդունդն ընկան, երգեմ-  
 երգեմ դյուցազներին,  
 Արթուն հավքեր Ուղտասարի՝ երգեք-երգեք  
 դյուցազներին:  
 Դյուցազնի սիրանքը,  
 Նոգու վառ կրակը,  
 Մարերը կպահեն,  
 Փառքը շար:

Լեռանց հսկան ցասնան հրով լեռնապարար,  
 Դավիթ Բեկի ավանդական էն թուրն առաւ,  
 Նայ սիրտիս ջերմ համբույրից նոր ուժ առաւ,  
 Սրբության դեմ ելնողներին անդունդ  
 փարաւ:  
 Էն սեւասիրտ չարքերը եկան, որ հավարն իմ  
 հոգուց ջնջեն,  
 Նավարալից մեր լեռների խառնարանի մեջ  
 կզքվեն,  
 Արթուն հավքեր Ուղտասարի՝ երգեք-երգեք  
 դյուցազներին:  
 Դյուցազնի կրակը,  
 Նադրության սրակը,  
 Լեռները կպահեն,  
 Փառքը շար:  
 Մուրք պարզեւ է քաջանց փոհնը իմ Սյունիքի,  
 Սերն ու սիրտն է, աստղադերն է էն  
 քարձունքի,  
 Քաջի սիրտն է սիրո կրակ, Գուսան Աշոտ,  
 Դուռն է ամուր, բերդն է կանգուն, խաղաղ  
 կյանքի:  
 Էն սեւասիրտ չարքերը եկան շեն աշխարհիս  
 րեր դառնան,  
 Նայրենապահ հրե թրով մոխրացան ու փոշի  
 դարձան,  
 Արթուն հավքեր Ուղտասարի՝ երգեք-երգեք  
 դյուցազներին:  
 Դյուցազնի զարունը,  
 Սրբացած անունը,  
 Դարերը կպահեն,  
 Փառքը շար:

«Զանգեզուր», 26 դեկտեմբերի 1985թ.

## ԶԱՆԳԵԶՈՒՐ



### ՀԱՍՈ ՍԱՅՅԱՆ

#### ՍԵՐՈ ԽԱՆՉԱԴՅԱՆԻՆ

*Ինձ կանչում է երկիրն այն անձրևոտը,  
Ուր մի գիշերվա մեջ՝ մարդաստասակ  
Մի եղեգ է աճում անձալի մոտ:*

*Ինձ կանչում է երկիրն այն արևոտը,  
Ուր քարակոյուղների հորն է ննջում  
Խոշոր եղջերավոր ժայռերի մոտ:*

*Ինձ կանչում է երկիրն այն քարձրաքերձ,  
Ուր որդրի պահին չես իմանում՝  
Ա՛նպ է ուրթերիդ փակ, թե՛ փլվող քերձ:*

*Ինձ կանչում է երկիրն այն խորախոր,  
Ուր, թե երեկ քար ես ներել անդունդ,  
Արձագանքը պիտի լսես այսօր:*

*Ինձ այն հողն է կանչում, ուր նույն պահին,  
Երբ որ ձորերի մեջ բայն է հասնում,  
Ձնձադիկն է բացվում ձորագլխին:*

*Ինձ կանչում է երկիրն այն խիստ ու մեղմ,  
Ուր կարող ես հանգիստ՝ ու փարվա չորս  
Եղանակը փեսնել մի ժամվա մեջ:*

*Ինձ կանչում է երկիրն այն գեղանի,  
Ուր մարդը մեղմ է, խիստ, քարձր է ու խոր՝  
Բնաշխարհի նման իր հայրենի:*

### Օրը մթնեց

#### ՍԵՐՈ ԽԱՆՉԱԴՅԱՆԻՆ

*Օրը մթնեց, ժամն է արդեն  
Իրիկնահացի,  
Տիրությունս կամաց-կամաց  
Փոխվում է լացի:  
Իջնում էին խոհուն, խոնարհ  
Դեզերի ուսին  
Մի կաթնահունց երկնակամար,  
Մի ծերապ լուսին...  
Մեկը մեկից ամաչելով,  
Եվ զուսպ, եւ հավաք,  
Նստում էին մերոնք կարգով՝  
Կրպուեր ու ավազ:  
Նստում էին եւ սպասում,  
Մինչեւ պապը գար,  
Մինչեւ բակում Ծաղիկ եզան  
Զանգը ծլնգար:  
Պապը գալիս, սուփրի գլխին  
Նստում էր շուքով,  
Եվ լցվում էր փունը դաշտի  
Բույր ու շշուկով...  
Ու երբ փարս ձեռքն էր առնում  
Շերեփը իր հին,  
Գդալները բնագոյաբար  
Աղմկում էին:  
Թանապուրի փաթ գոլորշին  
Գերանին առնում,  
Եվ սյունն ի վար գլոր-գլոր  
Ուլունք էր դառնում:  
Վայելում էր փաթ թանապուր,  
Լավաշ ու սամիթ  
Աշխատավոր մի գերդասարան՝  
Պարզ ու միամիտ:  
Տիմա այդ մեծ գերդասարանից  
Ոչ մեկը չկա...  
Ես եմ մնում լոկ իբրեւ հուշ  
Եվ իբրեւ վկա:  
Օրը մթնեց, ժամն է արդեն  
Իրիկնահացի,  
Տիրությունս կամաց-կամաց  
Փոխվում է լացի:*

1954թ.

# Ս.Խանգադյանի ստեղծագործությունների լեզվի քերականական առանձնահատկությունները

**Յ**ուրաքանչյուր գրող քերականական կառուցվածի հարցերում այս կամ այն չափով դրսևորում է ինքնուրույնություն: Դա նշանակում է, որ գրողը լեզվի կառուցվածքի պասիվ կրողը չէ, այլ նրա ակտիվ կիրառողն ու գործադրողը, որի ընթացքում էլ դրսևորվում է նրա անհատականությունը:

Ի՞նչ չափով կարող է գրողն ինքնուրույն լինել քերականության հարցերում, ո՞րն է այդպիսի ինքնուրույնության հնարավորությունը:

Լեզվի քերականական կառուցվածքի օրինաչափությունները քարացած չեն, գտնվում են փոփոխության ու զարգացման մեջ:

Գոյություն ունեցող օրինաչափությունների կողքին աստիճանաբար հանդես են գալիս նոր երեւոյթներ: Եվ գրողը, բնականաբար, այս կամ այն չափով, ըստ որում ակտիվ վերաբերմունքով, գործածում է այդ նոր երեւոյթները: Դրանք երբեմն կարող են հանդես գալ որպես շեղում, երբեմն էլ որպես նոր օրինաչափություն: Լեզվի զարգացման ուղղությունն ու միտումները հասկացող ու հաշվի առնող գրողը պատահական շեղումը տարբերում է անհրաժեշտորեն ծագող լեզվական երեւոյթից, իր ստեղծագործություններում տեղ է տալիս նոր իրողությունների եւ դրանով նպաստում համապատասխան երեւոյթների ծավալմանն ու զարգացմանը:

Գրական հայերենի քերականական օրինաչափությունների մեջ զուգահեռ ձևեր առաջացնող մյուս գործոնը արտաքինն է: Այս տեսակետից մեծ է հատկապես բարբառների դերը, որոնցից շատ երեւոյթներ անցնում են գրական լեզվով խոսողների բանավոր, իսկ հաճախ նույնիսկ գրավոր խոսքի մեջ:

Բարբառների ազդեցությունը գեղարվեստական գրականության լեզվի վրա ամենից առաջ հանդես է գալիս հերոսների խոսքում եւ օգտագործվում է մասնավորապես տիպականացման նպատակով: Սակայն որոշ երեւոյթներ թափանցում են նաեւ հեղինակային խոսքի մեջ, ինչ չափով որ դրանք առհասարակ կարող են տեղ գտնել գրական խոսքում: Հենց այստեղ էլ հանդես են գալիս տարբեր հեղինակների տարբեր դիրքավորումներն ու վերաբերմունքը: Այդ վերաբերմունքի հիմքում ընկած է այն հանգամանքը, թե ով ինչպես է պատկերացնում ժամանակակից գրական հայերենի եւ բարբառների փոխհարաբերությունը: Այս հարցի վերաբերյալ տարիներ առաջ բանավե՛ծ է ծավալվել «Սովետական գրականություն» ամսագրի էջերում (1): Որքան էլ գրական հայերենը զարգացած ու հարուստ լեզու է, այնուամենայնիվ, նա չի կարող բուրրովի՛ն հեռու մնալ ժամանակակից կենդանի բարբառների լեզվական հարուստ գանձարանից: Բայց մյուս կողմից էլ նա չի կարող իր դռները ազատորեն բացել բարբառների առջեւ եւ անխտիր վերցնել բարբառային բառական ու քերականա-

կան ձևերը: Այս հարցում կարելու է հեղինակի նպատակադրումը եւ ճաշակը: Հեղինակները պիտի կարողանան հմտությամբ օգտագործել բարբառների լեզվական հարստությունը, այնպես որ բարբառայինը մերվի գրականի մեջ, հարստացնի այն եւ ինքնանպատակ չլինի:

Գրողի լեզվի քերականական առանձնահատկությունների ուսումնասիրումը հետաքրքրական ու կարելու է երկու տեսակետից: Նախ՝ գրական հարուստ վաստակ ունեցող գրողի ստեղծագործություններում գրական լեզվի տվյալ ետապի քերականական իրողություններն ունեն իրենց տարբեր դրսևորումները, զարգացման միտումներն ու օրինաչափությունները: Ուրեմն՝ այսպիսի ուսումնասիրությունը հետաքրքրական է գրողի լեզվական կուլտուրայի եւ ոճական առանձնահատկությունների բնութագրման համար:

Այս առումով զգալի հետաքրքրություն են ներկայացնում ամվանի գրող Ս.Խանգադյանի ստեղծագործությունները:

## Խանգադյանի լեզվի քերականական առանձնահատկությունները քննում ենք ըստ ձևաբանական եւ շարահյուսական կառուցվածքների:

Ձևաբանական երեւոյթներից Ս.Խանգադյանի ստեղծագործության մեջ ուշադրության արժանի է Ի հոլովման ենթարկվող բառերի քանակի մեծացումն ի հաշիվ այլ հոլովման պատկանող բառերի, այլ կերպ՝ Ի հոլովման ազդեցության ուղրտի ընդլայնումը:

Ա հոլովման ենթարկվող շատ բառեր Ս.Խանգադյանի երկերում (2) ենթարկված են Ի հոլովման: Օրինակ՝ «Տատիս մագերը մման են նոր եկած ձյունի» (ԼՀ, էջ 15) (3): «Հետո քարով ծեծեց, ծալեց պատշգամբի այլունի վրայի ցցված մեխը» (Ազ, էջ 68):

Ավելի շատ են ՈՒ հոլովման պատկանող բառերը Ի հոլովիչով հոլովվելու դեպքերը: Օրինակ՝ «Գերանդիի կոթը շրխկոցով իջնում է նրա գոտկատեղին» (Խխ, էջ 341): «Հասարաթ ապերը շարունակ շուռումուռ էր գալիս անկողնի մեջ» (Հհ, էջ 252):

Ի հոլովման այդ ազդեցությունը տարածվում է նաեւ այլ հոլովումների պատկանող բառերի վրա: Օրինակ՝ «Խմենք քո բարի գալուստի կենացը, Գարեգին» (Հ, էջ 74): «Սկեսուրին իմաց տա իրենց գլխին եկած մեծ դժբախտությունը» (Օծ, էջ 100): «Բայց շատ տարիներ առաջ ծախել էր՝ Արշակին քաղաք ուղարկելու, ուսումի տալու համար» (Ազ, էջ 67):

Ս.Խանգադյանի երկերում հանդիպում են նաեւ այնպիսի հոլովածներ, որոնք գալիս են բարբառներից եւ չեն բխում գրական հայերենի հոլովական համակարգի զարգացման օրինաչափություններից: Այդպիսի ձևերը գերազանցապես գործածվում են հերոսների ուղղակի խոսքում, որպես տիպականացման միջոց. «Մարդ, որ թագավոր էլ է դառնում, էլի իրա ուրախությունը իրա տանն է գտնում, իրա երեխաների

ու կնկա հետ» (Յ, էջ 753): «Նստի՛ր, քվոր տղա» (Ք, էջ 403): «Չայ, հայ... Յոլունց տղորց գինուց մի փարչ լիներ» (Շա, էջ 358): «Անեցոնց համար» (ՉԳ, էջ 251): «Ես աշունքին քեզ պսակելու եմ» (Ս, էջ 36): «Ոտքերին միշտ գոմշու կաշվի տրեխներ էին» (ՉԳ, էջ 222):

Հոլովական զուգահեռ ձևերի գործածության մասին խոսելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև քննարկվող քերականական ձևի հնչյունափոխական տարբերակների վրա, ինչպիսիք առկա են Ս.Խանգադյանի ստեղծագործությունների լեզվում: Հայտնի է, որ հայերենի համար օրինաչափ է փակ վանկի ի, ու ձայնավորների սղումը կամ բառի աճման դեպքում ը-ի փոխարկվելը (ինչպես՝ կացին-կացնի): Սակայն այժմ նկատվում է այդ երեւույթը սահմանափակելու եւ նշված բնույթի բառերը առանց հնչյունափոխության գործածելու միտում, որը դրսևորվել է նաև Ս.Խանգադյանի երկերի լեզվում: Օրինակ՝ դահիճի (ՈԲ, էջ 274), անկողնոճ (Ա.տ., էջ 293), պռունկին (Ա.տ., էջ 321) եւ այլն: Նշված երեւույթը, սակայն, համատարած ու ընդհանրական չէ: Երբեմն գրողը միեւնույն բառը գործածում է հնչյունափոխված, մի այլ դեպքում՝ չհնչյունափոխված ձևով. ինչպես՝ կամուրջի (Յ, էջ 620) եւ կամրջի (Ա.տ., էջ 616):

Խանգադյանի ստեղծագործություններում կան նաև այլ կարգի հոլովական զուգահեռ ձևեր: Ինչպես՝ տանից եւ տնից (Յ, էջ 602), ինձանից եւ ինձնից (Ա.տ., էջ 605) եւ այլն: Նշենք, որ ժամանակակից գրական հայերենի համար նախընտրելի է զուգահեռ ձևերից կարճը (տնից, ինձնից), որը եւ ավելի շատ է գործածված Խանգադյանի երկերում:

Հնչյունափոխական որոշ երեւույթներ Սերո Խանգադյանի երկեր են մուտք գործել բարբառներից: Դա հատկապես նկատելի է ա-ով վերջացող գոյականների հոլովման ժամանակ, երբ, ի տարբերություն գրական հայերենի, հոլովական վերջավորությունից առաջ ա-ն սղվում է: Օրինակ՝ «Էն օրը տղիդ (փոխանակ տղայիդ) տեսա» (Ս, էջ 43): «Հարս ու փեսին տարան հացատուն» (Սձգ, էջ 145):

Հայտնի է, որ բայը քերականական առումով ամենահարուստ խոսքի մասն է, որն ունի ձեւաբանական կառուցվածքի ակնհայտ ճոխություն ու բազմազանություն: Բայական կատեգորիաների մեծ մասի դրսևորումը ժամանակակից հայերենում ունի իր քերականական միակ ձևը, որը տատանումների չի ենթարկվում ո՛չ ներքին զարգացման, ո՛չ էլ բարբառային կամ այլ ազդեցությունների հետեւանքով: Այսպիսի լեզվական երեւույթների չենք անդրադառնա, քանի որ դրանք ընդհանուր են, ինչպես գրական հայերենով բոլոր խոսողների, գրողների, այնպես էլ Սերո Խանգադյանի խոսքի համար:

Այստեղ մենք կանգ կառնենք բայի քերականական մի քանի այնպիսի երեւույթների վրա, որոնցում տատանումներ ու շեղումներ կան ժամանակակից հայերենում, եւ որոնք արտացոլվել են Սերո Խանգադյանի ստեղծագործությունների լեզվում:

Ամփօրինակության դրսևորումներ կան հատկապես հրամայական եղանակի կազմության մեջ: Ինչպես ժամանակակից գրական հայերենում, այնպես էլ մասնավորապես

Սերո Խանգադյանի երկերում է խոնարհման հրամայական եղանակի հոգնակի թիվը հանդես է գալիս ոչ միայն անցյալ կատարյալի հիմքով (գրեցե՛ք, խոսեցե՛ք), այլև ներկայի հիմքով (գրե՛ք, խոսե՛ք), ճիշտ է, այս վերջին ձևերը օրինաչափ չեն գրական հայերենի համար, բայց զգալիորեն տարածված են: Օրինակ՝ «Լսի՛ր, ընկեր Վարդանյան, դուք էլ լսե՛ք, Երեւանից եկած ընկերներ» (Յ, էջ 414): «Խփե՛ք թշնամուն, հե՛յ» (Ճ, էջ 61): «Հիմա ասեք տեսնենք, թե որտե՞ղ ցույց տանք» (Յ, էջ 444):

Այս շեղումները գործածվում են օրինաչափ ձևերի կողքին, որոնք առավել գերակշռում են Խանգադյանի ստեղծագործություններում: Այսպես՝ «Լսեցե՛ք, այ՛ մարդիկ» (Յ, էջ 706): «Է՛յ, նորաշենցիներ, հապա ասացե՛ք, ո՞ւմ չեմ օգնության հասել» (Տ, էջ 198): «Վարպետներ կանչեցե՛ք, էգուցվանից նոր տուն ենք շինում» (Ա.տ., էջ 199):

Խանգադյանի մոտ հրամայական եղանակի կազմության այլ շեղում եւս կա, որն արտահայտվում է Ե խոնարհման բայերի եզակի թվում: Այդ բայաձևերը Խանգադյանը երբեմն գործածում է առանց վերջին ը-ի: Օրինակ՝ «Մասուրով շորվա եմ եփել, Արեւ, բերեմ՝ խմի, տենդի դարման ե՛» (Յ, էջ 554): «Թե տեղդ ծովս է, դենը նստի՛» (Ա.տ., էջ 647): «Կով ու ոչխար առ, հետո պսակվելու հոգսը քաշի՛» (Սձգ, էջ 127):

Այդպիսի ձևերին զուգահեռ եւ ավելի հաճախ, իհարկե, Ս.Խանգադյանը գործածում է գրական հայերենի համար օրինաչափ ձևեր: Ինչպես՝ «Ասում եմ՝ Գարեգինին կանչի՛ր» (Յ, էջ 103): «Պահիր, Աշխեն ջան» (Սձգ, էջ 135): «Քունդ որ տանի, դուռը ներսից փակիր, քնիր» (Հի, էջ 228):

Երբեմն նույն պարբերության մեջ՝ կողք կողքի գործածվում է բայի հրամայական եղանակի նշված երկու ձևը: Ինչպես՝ «Կանգնիր ու պինդ բռնիր ինձ, է՛յ: Պինդ բռնի, մինչեւ հեղեղը կտրվի» (Յ, էջ 536): Միեւնույն հերոսի միեւնույն խոսքում նույն բայի տարբեր ձևեր գործածելը անշուշտ խրախուսելի չէ:

Որոշ զուգաձեւություններ կան նաև արգելական հրամայականի գործածության հարցում: Հրամայականի վերաբերյալ վերը նշված ձևեր (իր-ի, ը-ի անկումով) երբեմն հանդես է գալիս նաև արգելականի կազմության մեջ, քանի որ տվյալ դեպքում արգելական հրամայականը կազմվում է հաստատականից: Օրինակ՝ «Էլ մի՛ խոսի» (Սձգ, էջ 129): «Մի՛ նախատի ինձ» (Հսա, էջ 189): «Աղջիկս, մի՛ քաշվի, կե՛ր» (Յ, էջ 421): Այստեղ հատկապես պետք է նշել, որ արգելական հրամայականը ներկայի հիմքից կազմվելու փոխարեն երբեմն կազմվում է անցյալ կատարյալի հիմքով: Ինչպես՝ մի՛ տուր (մի՛ տա), մի՛ արի (մի՛ գա), մի՛ գնացեք (մի՛ գնաք) եւ այլն: Օրինակ. «Անունս մի՛ տուր» (Յ, էջ 373): «Հիմարություն մի՛ արա» (Ա.տ., էջ 438):

Չուգաձեւություններ կան նաև մի շարք բայերի անցյալ կատարյալի եւ նրա հիմքից կազմված ձևերի մեջ: Դա առավելապես հատուկ է անկանոն բայերին: Ս.Խանգադյանը դարձա (դարձար, դարձավ, դարձել), թողեցի (թողեցիր, թողեց), բերեցի (բերեցիր, բերեց), տվեցի (տվեցիր, տվեց), դրեցի (դրեցիր, դրեց) ձևերին զուգահեռ գործածում է դառա, թողի, բերի, դրի ձևերը: Օրինակ՝ «Հիմա կարգին տղամարդ

ես դառել» (հ, էջ 63): «Քրիստի տված թուղթը դրի մեջն ու կապեցի իմ ձեռքով կտրած մատիս» (Կշ, էջ 21): «Ի՞նչ արիք նրա տված թուղթը» (ն.տ., էջ 21):

Այս եւ նման բայերի երկրորդական ձեւերը խանգաղյանը գործածում է ոչ միայն անկախ կիրառության դեպքում, այլեւ հարադրական բազմությունների մեջ: Օրինակ՝ «Էս էլ եղավ ինձ տուն, որ վրան փակ դրինք» (Հսա, էջ 153): «Բայց ոտքիս ձեռք չտվիւն, հավատացին, որ կացինն է կտրել» (Կշ, էջ 22):

Բանավոր խոսքում հաճախ հանդիպող սխալ է Ե խոնարհման բայերի պատճառակաճը ացն ածանցով կազմելը, որը բարբառային ծագում ունի եւ խոտելի է գրական հայերենի համար: Այդպիսի որոշ կազմություններ գործածում է նաեւ Ս.Խանգաղյանը: Ինչպես՝ խմացնել (խմեցնել), նստացնել (նստեցնել) եւ այլն:

Հայտնի է, որ պատճառական ածանցի ձայնավորը ըստ էության համապատասխան պարզ բայի խոնարհիչն է, ուրեմն եթե բայը կազմությամբ պարզ է եւ պատկանում է Ե խոնարհման, ապա նրա պատճառական ձեւի մեջ, բնականաբար, պետք է լինի Ե ձայնավորը, ինչպես՝ վազել-վազեցնել, ուտել-ուտեցնել եւ այլն: Մինչդեռ երբեմն, հատկապես բարբառների, այլեւ ացն ածանցի ազդեցությամբ նշված կազմություններում հանդես է գալիս Ա ձայնավորը, որով եւ եցն ածանցի փոխարեն ունենում ենք ացն: Օրինակ՝ «Թաշկինակով աթոռը սրբում է, նոր նստացնում վրան» (Հ, էջ 287): «Մոռով համեմված թեյ կխմացնի նրան» (Ատ, էջ 466): «Այ պառավ, ինչի՞ ես ինձ գժվացնում» (Մ, էջ 37): «Լուսաբացին նա ցամաքացրեց աչքերն ու վեր կացավ» (Օժ, էջ 100):

Սակավ դեպքերում Ս.Խանգաղյանը գործածում է ավելի բարբառային բայաձեւեր: Օրինակ՝ «Չեմ գիտում ի՞նչ գնդակը կպավ էշին, թե՞ Սաքոյի» (Հ, էջ 657): «Դե՛, թողեք, տղերք, հանը հանեցիք, չեմ կարա» (ն.տ., էջ 653): «Գիտում չեմ» (Լհ, էջ 14):

Գլխավոր բաղադրյալ ժամանակների կազմության մեջ դերբայի եւ օժանդակ բայի շարադասության հարցում Ս.Խանգաղյանը երբեմն առաջնությունը տալիս է բարբառային օրինաչափությանը: Խոսքը մասնավորապես վերաբերում է ժխտական խոնարհմանը, որի ժխտական օժանդակ բայը գրականում դրվում է դերբայից առաջ, իսկ հեղինակը, հետեւելով մայրենի բարբառին, շարադասում է դերբայից հետո: Օրինակ՝ «Ախր, քյորփաս ուզում չէր գնար, ուզում չէր» (Հսա, էջ 173): «Տեսել չեմ» (Լհ, էջ 14): «Վրան նայելուց մարդու աչքը կշտանում չի» (Ագ, էջ 68): «Էդ մեկը լավ չի, որ ուտում չի» (Դդ, էջ 355):

Բարբառային կազմություն են նաեւ ըղծական եղանակի ժխտականը հաստատական ըղծականով ու ետադաս ոչ-ով կազմելը: Ինչպես՝ «Է... նեղանաս ոչ, որդի, էդ մեկը սրտովս չի» (Հսա, էջ 159):

Լեզվի շարահյուսական առանձնահատկությունները, բնականաբար, դրսևորվում են նախադասության կառուցվածքում: Ս.Խանգաղյանն ընդհանուր առմամբ հավատարիմ է մնում նախադասության կառուցվածքային հատկանիշներին եւ պահպանում է դրանց հիմնական օրինաչափությունները: Բայց նրա ստեղծագործություններում հանդես են գա-

լիս շարահյուսական առանձնահատկություններ, որոնց մի մասն ակնհայտ շեղում է, իսկ մյուսները համապատասխան օրինաչափությունների յուրահատուկ դրսևորումներ են՝ ոճական կամ այլ նկատառումներով:

Նախադասության կառուցվածքային օրինաչափություններից շեղումներ են նկատվում հատկապես համաձայնության ու մասնավորապես ենթակայի ու ստորոգյալի համաձայնության հարցում: Օրինակ՝ «Խուրջինում դեղեր ու շաքար կա, տվեք հիվանդ երեխաներին» (Կշ, էջ 28): «Շուտով մեքենայի մեջ դրվեցին մի մահճակալ՝ իր անկողինով» (Ուհ, էջ 293):

Ենթակայի ու ստորոգյալի անհամաձայնության մի տեսակը կոչվում է բակառություն, որի դեպքում քերականական անհամաձայնությունը պայմանավորված է ենթակայի իմաստային հատկանիշով: Ենթական թեւ ձեւով եզակի է լինում, բայց արտահայտում է առարկաների քանակական բազմություն: Այդպիսի անհամաձայնության արտահայտություններ կան Ս.Խանգաղյանի ստեղծագործություններում: Օրինակ՝ «Օրորվում էին դարմանի ամպ-մղեղը, նստում քարափի տներին» (Նուա, էջ 386):

Որոշակի յուրահատկություններ ու շեղումներ կան խնդրառության հարցում:

Ուղեւորման (տեղի) հայցականի փոխարեն Ս.Խանգաղյանը երբեմն գործածում է ներգոյական հոլովը: Այս բանը, իմիջիայլոց, որոշ չափով տարածված է նաեւ այլ հեղինակների ստեղծագործություններում: Օրինակ՝ «Նախագահը մի գլանակ վառեց, դրեց Ստեփանի բերանում» (Հձ, էջ 265): Երբեմն հայցական հոլովի փոխարեն խնդիրը դրվում է տրականով: Օրինակ՝ «Երեխաներիդ նպաստ եմ բերել, Մարիամ քույրիկ, այս թղթին ստորագրիր ու փողդ ստացիր» (Ուհ, էջ 276):

Այլ դեպքերում նա հայցականով պարագայի փոխարեն գործածում է տրականով պարագա: Օրինակ՝ «Եղիշը ծածկվեց աճարեճու բնի ետեւին» (Օհ, էջ 417): «Եղիշը նստեց կանաչներին: Դեմը ծեր այգեպանն էր, աջ կողմին (փոխանակ՝ կողմը կամ կողմում)՝ «Այդ Մերին» (Օհ, էջ 426): «Դպրոցը գյուղից մի քիչ հեռու է, ձորի այն կողմին» (Կա, էջ 430):

Ս.Խանգաղյանը, նկատի ունենալով նկարագրվող դեպքերի ու երույթների բնույթը, ընտրում է նախադասությունների համապատասխան կառուցվածք: Երբեմն նրա նախադասությունները երկար են, իրենց մեջ պահպանում են լրիվ նախադասության բոլոր բաղադրիչները կամ կառուցված են մասնակի գեղջումներով: Դա հատկապես նկատելի է, երբ հեղինակի պատմաոճը էպիկական է, դեպքերը նկարագրում է, այսպես ասած, հանգիստ՝ դրանք ներկայացնելով իրենց տրամաբանական պատճառաբանությամբ:

Ահա «Կարմիր շուշաններ» պատմվածքի հերոս Քրիստի պատանեկան կյանքի մի փոքրիկ նկարագրություն. «Սպիտակ աղավնիներ էր սիրում այն գանգրահեր տղան: Իսկ երբ պառկում էինք հոնի թանձր ստվերի տակ, նա մեզ համար գրքեր էր կարդում ու պատմում, թե ինչպես է Դավիթ-Բեկը կռվել Օսմանյան բանակների դեմ: Հետո միասին լողանում էինք գետում ու երբ մութը ժայռերի խոռոչներից դուրս էր սողում, նա վազում էր տուն՝ սպիտակ աղավնիներին կերակ-

րելու»: Բայց երբ լուր է հասնում, որ Քրիստին եւ նրա ընկերներին դաշնակցականները բռնել են, ու նրանց կախաղան է սպասվում, այս դեպքում փոխվում է հեղինակի ոճը: Հանդարտ պատմելաձեւը վերածվում է հանկարծակիի եկած ու անհանգստացած պոռթկումներով արտահայտված նախադասությունների: «Ո՞նց թե այդպես: Ո՞նց թե Քրիստին... Եվ որոշեցինք գեների դիմել» (էջ 22):

Թերի նախադասություններ, բնականաբար, ավելի շատ գործածվում են երկխոսություններում: Ընդ որում՝ երկխոսության ընդհանուր բնույթից բխող զեղչումներին հաճախ ավելանում են խոսողների հոգեբանական վիճակը ու սուբյեկտիվ այլ հանգամանքներից բխող զեղչումներ եւ դրանց հետեւանքով՝ համապատասխան թերի նախադասություններ: Օրինակ՝ «Ե... գնաց, է, գնաց...»

- Ի՞նչ...

- Հը՞, - ուստան այնպես մայեց միթեւանում, որ կարծես մինչ այդ նրան չէր տեսել: - Հա... Հեջ... Կռունկը» (Ուհ, էջ 277):

Այսպիսի կառուցվածքներ ավելի հաճախ են լինում թե՛ երկխոսություններում, թե՛ ուրիշի ուղղակի խոսքում: Սակայն հաճախ դրանք տեղ են գտնում հեղինակի խոսքի մեջ, որը իր կողմից պատմելով ներկայացնում է այս կամ այն հերոսի մտորումները: Այդպիսի կառուցվածքները մոտենում են, այսպես կոչված, ուրիշի անիսկական խոսքին: Օրինակ՝ « - Ուստա՛, գնում ենք, եկ:»

Սկզբում ոչինչ չհասկացավ: Ո՞վ է գնում: Ո՞ւր է գնում: Ինչի՞ է եկել ինքը: Ի՞նչ գործ ունի այստեղ» (Ուհ, էջ 285):

Նախադասությունների կառուցվածքի ընտրության հարցում որոշակի դեր ունեն ոչ միայն հերոսի հոգեկան ապրումները եւ նման ուրիշ հանգամանքներ, այլև զբաղմունքը, կրթական մակարդակը եւ այլն: Ս.Խանգադյանը, որ ճիշտ է գնահատել ժողովրդական խոսքի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունները, իր համապատասխան հերոսներին խոսեցնում է առավելապես պարզ նախադասություններով, շաղկապների նվազագույն գործածությամբ: Օրինակ. «Արմանք բաներ, - ծանր խոսեց ծերունին: - Երեկ Նոնուտի ձորում մի թեւավոր տեսա: Հրաշք էր: Այդքան էլ նախշուն հա՛վք կլինի: Թեւերը ոսկի էին, կտուցը՝ մարջան, ձայնը... Տեր աստված: Երգեց, երգեց... Բայց մեր ձորի թեւավորներից ոչ մեկը չմոտեցավ նրան: Օտար հավք էր: Երգեց, թրթռաց, հետո էլի երգեց եւ արեւմուտին թռավ, գնաց...»

Օտար հավք էր, մեր ձորը չընդունեց նրան: Ընդունեց, ի՞նչ աներ: Չէր մնա: Ամեն հավք իր ձորն ունի» (Օհ, էջ 27):

Իհարկե, խոսքն այն մասին չէ, թե բոլոր դեպքերում նախադասության ամեն մի կառուցվածք որոշակի հոգեկան արտահայտության միջոց է: Բայց անհերքելի է, որ տարբեր հոգեկան ապրումների արտահայտման տարբեր զբաղմունք

քի տեր հերոսների խոսքի համար նախադասության տարբեր կառուցվածքներ ունեն որոշակի ոճական արժեք, եւ այս հարցում գրողն ունի շարահյուսական այդ կառուցվածքների ընտրության հնարավորություն:

Ս.Խանգադյանը հաջողությամբ է իրացնում լեզվի ընձեռած այդ հնարավորությունները: Նրա ստեղծագործությունների լեզվի քերականական առանձնահատկությունների ըստ ձեւաբանական եւ շարահյուսական կառուցվածքի քննարկումը ցույց է տալիս, որ դրանք ելնում են ժամանակակից գրական հայերենի քերականական գործուն օրինաչափություններից: Գրողի առանձին քերականական շեղումները արդյունք են կամ բարբառի ազդեցության, կամ գրական հայերենի կառուցվածքի զարգացման հետեւանքով առաջացող զուգահեռ ձեւերի գործածության:

Ս.Խանգադյանը իր ստեղծագործություններում բարբառային ձեւերի հարուստ ֆոնդի օգտագործելու բնագավառում զգալի ավանդ ունի:

### Ծանոթագրություններ

1. *Տե՛ս Ստ Կուրտիկյան, Հայոց լեզվի զարգացման ու կերպարի լեզվի անհատականացման մի քանի հարցեր, 1962, N 9: Լ.Հախվերդյան, Ինչի՞ մասին է խոսքը, 1962, N 11: Վ.Խեչումյան, Հայոց լեզվի հարստացման եւ բարբառների կապակցությամբ, 1962, N8: Խ.Մետրոպոլիտան, Կերպարի լեզվի անհատականացման հարցի շուրջը, 1963 N1: Ստ. Ալաջաջյան, Լեզվի բարձր մշակույթի համար, 1963, N1: Ար.Մատինյան, Ստեղծագործական վեճերի հետքերով, 1963, N4: Էդ. Աղայան, Հայոց լեզվի մշակման ու հարստացման եւ բարբառների դերի մասին, 1963, N6: Գ. Վահանյան, Գրողը եւ լեզուն, 1963, N2: Բ.Հովսեփյան, Գրական լեզվի ուղին գրեկությունը չէ, 1963, N7:*
2. *Ս.Խանգադյանի պատմվածքներից մեջբերումները կատարում ենք ըստ նրա «Երկերի ժողովածուի» 4-րդ հատորի, Երեւան, 1968:*
3. *Հոդվածում օգտագործվում են հետեւյալ համառոտագրությունները. Հ-«Հողը», Երեւան, 1957, ԼՀ-«Լալ Համազը», Սգ-«Սպիտակ գառը», Խխ-«Խղճի խայթ», ՀՀ-«Հովիվ Հասրաթ», Օծ-«Օջախի ծուխը», Բ-«Բեռիս», ՇԱ-«Շաքար Ամին», Մ-«Մարդը», Ուհ-«Ուստա Հեթումը», ՉՍ-«Չճաքար Ամին», Սձ-«Սձնառա ձորի գաղտնիքը», Տ-«Տունը», Հս-«Հունուտա սարի աղջիկը», Կշ-«Կարմիր շուշաններ», Ատ-«Այրված տուն», ԴԴ-«Դագաղ Դանելը», Նու-«Նա ուրիշ էր արդեն», Հձ-«Հարազատ ձեռքեր», Օհ-«Օտար հավքը», Կա-«Կորած արահետ», Ծ-«Ծանապարհը»:*

**Ն.Գ.ՄԻՆԱՍՅԱՆ**  
**«Լրաբեր հասարակական գիտությունների»,**  
**1972, նո 9, էջ 82-89**

# Հայաստանի գուսանները

**Գ**ուսանական արվեստը հայ ժողովրդի ստեղծած բազմադարյան մշակույթի անբաժանելի մասն է: Գուսանը ժողովրդի ընդերքից ծնված, ժողովրդի հետ ապրող ստեղծագործող է: Անցյալի գուսանը, իր անբաժան քամանչան, սանթուրը, սազը կամ ջութակը ձեռքին, երբեմն ընկերներով, երբեմն մեն-մենակ, երեսուն էր հայոց լեռնաշխարհների հեռուներում, սիրով հյուրընկալվում հայ գեղջուկի ու արհեստավորի տանը եւ իր հուզիչ երգերով թեթևացնում աշխատավոր մարդու հոգսն ու վիշտը, երգում նրա համար, նրա հետ, դառնում նրա զգացմունքների ու հույզերի թարգմանը, նրա սիրելին ու մտերիմը:

Հայ գուսանները իրենց անպաճույճ, բայց սրտաբուխ երգերով փառաբանել են հայ գյուղացու վարուցանը, օրհներգել նրա այգին, գովել արդար ու ազնիվ աշխատանքը, ազնվությունն ու եղբայրությունը, նրանք ծառացել են անիրավությունների դեմ, ժողովրդի ճակատագրական պահերին եղել են նրա պայքարի ընկերը, գովերգել են նրա քաջությունն ու հայրենասիրությունը, ատելություն բորբոքել հայ աշխարհը խուժած ավարառու թշնամիների նկատմամբ:

Հայրենասիրության, բարոյախոսության, աշխատասիրության եւ այլ թեմաների հետ միասին, գուսանական երգի հիմնական առանցքը եղել է սերը... Այս դեպքում արդեն գուսանները չեն բավարարվել միայն երգեր հորինելով, այլ ստեղծել են ավելի մեծ կտավի գործեր՝ երգախառն հեքիաթներ, որոնց հիմքում ընկած է ժողովրդական այս կամ այն սիրավեպը՝ «Ամբատ եւ Սոնա», «Ալըղ դարիք», «Աղվան-Օսան» եւ ուրիշներ:

Բազմաթիվ են հայ գուսանները՝ Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Շիրին, Ջիվանի, Շերամ, Աշոտ, Հավասի, - ահա այն գուսանների անունները, որոնք իրենց ստեղծագործությամբ կազմում են հայ գուսանական արվեստի անթառամ փունջը:

Դրանցից վերջին երկուսը մեր ժամանակակիցներն են, ապրում ու ստեղծագործում են մեր օրերում, իրենց ժողովրդի ու հայրենիքի հետ: Մյուսներն անցյալ աստղերն են՝ հարատև ու պայծառ:

Մեծ է Սայաթ-Նովան, անհունորեն մեծ ու խոր: Նրա հանճարեղ ստեղծագործությունները հայ ժողովրդի հազարամյա պոեզիայի զարդերից են: Անկրկնելի Սայաթ-Նովան այժմ էլ կենսական աղբյուր է հայ գուսանական արվեստի համար: 164 տարի առաջ նա ընկավ պարսիկ անգութ զինվորների թրից, բայց ոչ մի վայրկյան նրա անունը չընկավ հայ ժողովրդի շուրթերից, ու քանի հեռանում է նրա ապրած ժամանակը,

այդքան քաղցրանում, վեհանում է նրա անմահ ստեղծագործությունը:

Մեծ են Նաղաշ Հովնաթանի, Ջիվանու, Շերամի եւ մյուս դասական գուսանների ստեղծագործության արժանիքները:

Ես ուզում եմ իմ ընթերցողին մի թեթև ծանոթացնել մեր օրերի գուսանների հետ:

Մոտ քառասուն տարի առաջ մեր ժողովուրդը բռնեց նոր կյանքի ուղին: Սկսվեց խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի դարաշրջանը: Սովետական Հայաստանը ծաղկեց, շենացավ հայ մշակույթը եւ դրա հետ միասին՝ հայ գուսանական արվեստը:

Ամեն տեղ ու ամենքին հայտնի է մեր օրերի նշանավոր գուսան Աշոտի անունը (Աշոտ Դադալյան):

Անուրախ ու դառն է եղել նրա մանկությունը: Ծնվել է 1907 թվականին: Հայրը՝ բնիկ զանգեզուրցի, խաշնարածի պարզությամբ, լեռնականի ջինջ հոգով մի մարդ, չի կարողացել շատ թե քիչ պատշաճ կրթություն ու դաստիարակություն տալ իր բազմաթիվ զավակներից թեկուզ մեկին: Վեց-յոթ տարեկան հասակում Աշոտը դարձել է զանաբարած: Նրա մանկությունն ու պատանեկությունն անցել են Ջանգեզուրի ալայյան արոտավայրերում, խորունկ ձորերում, հովիվների ու խաշնարածների հետ: Սրինգ է նվագել նա, կլանված լսել հայրենի գյուղ եկած թափառական գուսաններին:

Քսանական թվականների վերջերին նա երգեց իր հորինած առաջին երգը՝ «Ջանգեզուրի չոր չուլերը ծաղկել են»: Այդ երգն անմիջապես անցավ շուրթից շուրթ եւ շուտով դարձավ բոլորի սիրած երգերից մեկը:

Աշոտը ոգետրվեց խրախուսանքներից եւ սկսեց նոր երգեր հորինել: Նրա համբավը տարածվեց Հայաստանի գյուղերում եւ քաղաքներում: Աշոտին ճանաչեցին որպես տաղանդավոր գուսանի: Երեսուն տարի է անցել նրա առաջին երգի աշխարհ գալու օրից, եւ այդ երեսուն տարում Աշոտը մոտ երկու հարյուր երգ է ստեղծել:

Իրենց նրբությամբ ու եղանակների անմիջականությամբ Աշոտի երգերը թարմություն եւ մի նոր հմայք տվեցին մեր ժամանակի գուսանական արվեստին:

Բանաստեղծ-Գուսան Աշոտը համաժողովրդական ճանաչման ու սիրո արժանացավ ամենից առաջ իր ստեղծագործության թարմությամբ, երգերի լավատեսությամբ, կենսախնդությամբ, այն մեծ ու բուռն սիրով, որ նա ունի դեպի իր օրերի մարդը, նրա աշխատանքը, նրա չքնաղ լեռնաշխարհը:

Մեծ է Գուսան Աշոտի վաստակը: Նա միայն իր ժողովրդինը չէ, որ ըստ արժանվույն գնահատում ու սիրում է նրան: Աշոտին սիրում են նաեւ աղբյուրաբանները, վրացիները, քրդերը, որոնք իրենց մայրենի լեզուներով երգում են Աշոտի շատ երգերը:

Վերջերս Երեւանում լույս տեսավ նրա երգերի ժողովածուն, որի մեջ ամփոփված են գուսանի լավագույն ստեղծագործությունները՝ թե բնագիրը եւ թե երաժշտությունը: Դա մի չքնաղ հրատարակություն է՝ միանգամայն արժանի Աշոտի վաստակին ու փառքին:

Ժամանակակից հայ գուսաններից համաժողովրդական սեր ու հարգանք է վայելում Ախալքալաքի գուսան Հավա-

սին (Արմենակ Մարկոսյան): Բնությունը մի ձեռքով դժբախտացրել է նրան՝ մանուկ հասակում զրկելով տեսողությունից, իսկ մյուս ձեռքով պարզեցել գուսանական հիանալի շնորհք: Բարձր մշակույթի տեր է գուսան Յավասին: Չորս-հինգ տարի առաջ, երբ նշում էինք նրա ծննդյան վաթսուամյակը, նրա դեմքը լուսավորված էր ստեղծագործական նոր եռանդի, նոր մտահղացումների կրակով:

Յավասին մի տեսակ կամուրջ է հայ դասական ու ժամանակակից գուսանական արվեստների միջև: Նրա մոտ կան եւ հին գուսանական երգարվեստի մոտիվները, եւ նորը՝ ժամանակակից երգերի երանգներով համեմված:

Նրա «Ի՞նչ, ի՞նչ ասեմ անուշիկ յարիս», «Սարի ճամփով», «Ես էլ չգովեմ» եւ այլ բազմաթիվ երգերը դասվում են գուսանական այն երգերի շարքին, որոնք չեն հնանում, չեն մոռացվում երբեք:

*«Արեւ ասեմ, թե՛  
Լուսին ասեմ, թե՛  
Ի՞նչ, ի՞նչ ասեմ  
Գովական յարիս...»:*

Այս տողերը, որոնք երգում են հիանալի եղանակով, դուք կլսեք, կլսեք ամեն տեղ թե՛ Յայաստանում, թե՛ Վրաստանում, թե՛ Ադրբեջանում: Թվում է, թե Նաղաշ Յովնաթան մեծ բանաստեղծ-գուսանի մի կենսախիճը քառյակն են լսում: Այո, թվում է: Բայց իսկույն եւեթ զգում են մի նոր, կենդանի ու ջերմ զգացում, որով համեմված է այս երգը, սիրտդ ուրիշ կարոտով ու թրթիռով է լցվում:

Այժմ էլ ապրում եւ ստեղծագործում է գուսանը: Նոր երգեր է հորինում նա. նրան կարելի է տեսնել հանրապետության քաղաքներում ու գյուղերում՝ միշտ շրջապատված երգասեր ժողովրդի սիրով ու հարգանքով:

Աշոտի ու Յավասու մասին գրելով, ես չեմ կարող մոռանալ իմ հին բարեկամ, ասեմք ինչո՞ւ միայն իմ, այլ մեր ամբողջ ժողովրդի կողմից ճանաչված, տասնյակ հազարների բարեկամ գուսան Շահենին (Սարգսյան):

Բարձրահասակ, կապույտ աչքերով, զանգուր մազերով մարդ է նա եւ թեկուզ հիսուն տարեկան չկա, բայց արդեն մեծ ընտանիքի, բազմաթիվ թոռների տեր է: Ես նրան հիշում եմ երեսնական թվականների վերջերից, երբ նա առաջին անգամ էր իջել Ղուկասյանի սարերից: Այդ օրերին նա դեռ հայտնի չէր: Բայց նրա սքանչելի ձայնը, ժողովրդական երգի գարմանալի գիտակ լինելը, աշուղագուսանական բազմաթիվ երգախառն հեքիաթներ եւ հարյուրավոր երգեր իմանալը զարմացրեց շատերին: Ժողովրդի խոր ընդերքից եկած, մշեցու թոռ Շահենն ասես իր հետ բերել էր հայ ժողովրդի ամենաերգասեր հատվածներից մեկի ամբողջ երգարանը:

Երկու տասնամյակի ընթացքում Շահենը հայտնի դարձավ թե ժողովրդական երգերի հիանալի կատարմամբ եւ թե սակավ, բայց արժեքավոր սեփական ստեղծագործություն-

ներով: Նա ամենաշատ ման եկած գուսանն է: Եղել է Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Ուրալում եւ Ռուսաստանի այլ վայրերում: Թեեւ նա հայերեն է երգել մեր ժողովրդական անմահ երգերն ու իր սեփական «Սասնա ծռու», «Գյոզալս խոռվ է» եւ այլ երգեր, բայց ռուս մարդկանց էլ է հուզել հայ երգը՝ Շահենի գերազանց կատարման, ձայնի զարմանալի քաղցրության ու երգած երգերի հուզականության շնորհիվ:

Յայ ժողովուրդն ունի մի ուրիշ հայտնի գուսան էլ՝ Աշխուժը: Արդեն ութսուն տարեկան է նա: Հիմա նրան հազվադեպ ենք հանդիպում գյուղերում ու քաղաքներում՝ իր քամանջի հետ, իր սակավ, բայց հրապուրիչ ձայնով, իր խոհախրատական երգերով: Սակայն նա այդ տարիքում էլ ստեղծագործում է: Անցյալ տարի լույս տեսավ նրա երգերի լիակատար ժողովածուն՝ մի քանի հարյուր ստեղծագործություններով: Այդ երգերում ընթերցողը տեսնում է նախասովետական հայ գյուղի պատկերը, հայ գյուղացու խղճուկ վիճակը: Վիշտ ու տագնապ ենք նկատում Աշխուժի նախասովետական շրջանի երգերում: Հռչակավոր է նրա «Սուրմալու» երգը: Թուրք բարբարոսները մորթեցին Արեւմտյան Յայաստանի ողջ հայությանը, այդ թվում նաեւ Սուրմալու գավառի հայերին: Եղեմնի այդ տարում է Աշխուժն ստեղծել իր այս ողբը, որ գիտի ողջ հայությունը: «Օձ է նստել բախտիդ վրա, Սուրմալու»: Բայց նաեւ այն ստեղծագործություններում, որոնք գրված են վերջին քսան-երեսուն տարիներին, արդեն լսում ենք ուրախության, ցնծության ձայնը:

Յայ ժողովուրդը լսում ու սիրում է նաեւ իր մյուս գուսաններին, նրանցից են՝ Լենինականցի Իգիթը (Գեղամ Մարտիրոսյան), Իջեւանցի Ծովյանը, լռեցի Սարգիսը, դարաբաղցի Բագրատը, արարատցի Սմբատը, արտաշատցի Ռազմիկը եւ էլի ուրիշներ: Սրանք երիտասարդներ են: Սրանցից յուրաքանչյուրը իր մեկ-երկու երգով արդեն ճանաչվել է Յայաստանում: Բայց նրանք դեռ աճելու, դասական եւ ժամանակակից անվանի գուսաններից դասեր վերցնելու ժամանակ ունեն: Հուսով ենք, որ նրանք իրենց նոր երգերով կհարստացնեն սովետահայ գուսանական արվեստը: Եվ այդ նրանք անպայման կանեն, որովհետեւ դրա համար ստեղծված են բոլոր հնարավորությունները:

Սովետահայ գուսանները շրջապատված են ժողովրդի ու կառավարության հոգատարությամբ: Նրանք պարզեատրվում են շքանշաններով եւ մեդալներով, նրանց ընտրում են դեպուտատ, նրանք համերգներ են տալիս շքեղ ակունքներում եւ մշակույթի պալատներում, նրանց ստեղծագործությունները խնամքով հավաքվում, տպագրվում են տասնյակ հազարավոր օրինակներով:

Անսպառ է ժողովրդի սերը դեպի իր գուսանները: Անսպառ է եւ գուսանի սերը դեպի իր ժողովուրդը, հայրենիքը:

**Սերո Խանզադյան**  
**Յայաստանի ազգային արխիվ,**  
**Ֆոնդ-798, Ցուցակ-1, Գործ-940**



# «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին



## ՕՅԵԼՅԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Հայաստանի հանրային  
նաղիոյի մշակութային  
ծրագրի ղեկավար

Նախ, ուզում եմ ողջու-  
նել Ձեր նախաձեռնությու-  
նը եւ շնորհակալություն  
հայտնել, որ Դուք, պարոն  
Ալեքսանյան, եւ որպես  
«Սյունյաց երկիր» թերթի  
խմբագիր, եւ որպես հայ

մտավորական, որոշել եք անդրադառնալ Սերո Խանգաղյա-  
նին, որովհետեւ մեր դասականները հիմա չեն ներկայացվում,  
եւ երիտասարդ սերունդը մի տեսակ կտրվել է իր հողից, գրա-  
կանությունից, արմատներից, իսկ գրականության մեջ, բոլորս  
գիտենք, թաքնված են եւ հայրենասիրության ակունքները, եւ  
ճշմարիտ մտավորական լինելու ակունքները:

Անցած դարի 40-ական թվականներից սկսած Սերո Խան-  
գաղյանն ամենակարգավոր, ամենասիրելի հեղինակներից է  
եղել, նրա ստեղծագործություններից շատերը մտավորակա-  
նության, երիտասարդության սեղանի գիրքն են եղել, հատ-  
կապես այն գործերը, որոնք ներկայացնում են մեր պատմու-  
թյունը, հայրենասիրություն սերմանում:

Ծնվելով Գորիսում, իր մեջ կրելով մեր բնության  
ամենագողտրիկ անկյուններից մեկի ներշնչանքը՝ նա ապ-  
րել է շատ հետաքրքիր եւ բուռն կյանք: Սասնակցել է Հայրե-  
նական մեծ պատերազմին, ուսուցչություն է արել, եւ տարի-  
ներ հետո այդ ամենի մասին իր խոհերը, եզրահանգումները  
տեղ են գտել իր ստեղծագործություններում: Գիտենք, որ  
30-ական թվականներից է մտել գրական ասպարեզ:  
Առաջին գործն այնքան էլ ճանաչված չէր, բայց երբ հետա-  
գայում՝ 50-ականներին, լույս տեսավ «Հողը» վեպը, արդեն  
ճանաչեցին Սերո Խանգաղյանին: Նրա ստեղծագործության  
մասին երկար կարելի է խոսել, որովհետեւ եւ մանկական  
գրականություն է ստեղծել, եւ պատմվածքներ, եւ վեպեր ու-  
նի, եւ դրամաներ: Նրա ստեղծագործությունների հիման վրա  
նկարահանվել են կինոնկարներ. դրանցից է «Մխիթար Սպա-  
րապետ»-ի հիման վրա նկարահանված «Հուսո աստղը» հրա-  
շալի ֆիլմը, որի հետ շատ քիչ ֆիլմեր կարող են համեմատ-  
վել: Կարծում եմ, որ 1988թ. ազգային զարթոնքի սերմերն էլ  
մեր հոգու մեջ են դրել նման մարդիկ: Այդ հայրենասիրության  
սկիզբը դրվել է նաեւ նման գրական գործերի շնորհիվ, եւ

տարիների ընթացքում կուտակված ոգին 88-ին իր արդյուն-  
քը տվեց, կարողացանք ազատագրել մեր հողերը, կարողա-  
ցանք անկախ պետություն ունենալ եւ այսօր հպարտանալու  
առիթներ ունենք:

Սերո Խանգաղյանի գործերից որոշները նաեւ Հայաս-  
տանի հանրային նաղիոյում են ձայնագրվել, նաղիոբեմակա-  
նացումների հարուստ ֆոնդ ունենք, ուղղակի կթվարկեմ մի  
քանիսը՝ «Մատյան եղելությանցն» է բեմադրվել, «Սպիտակ  
գառը», «Այրված տուն», «Մերի», «Քեռիս եւ խղճի ծայրը»,  
«Կռազը» գործերը: Եվ նաղիոյի ֆոնդում ունենք պահպան-  
ված նաեւ ձայնագրություններ, որտեղ հնչում է նրա ձայնը. մե-  
կում Խանգաղյանը հուշեր է պատմում Դերենիկ Դեմիրճյանի  
մասին, մյուսը նրա ելույթն է Վ.Խեչումյանի 50-ամյակին:

Անպայման պիտի նշեմ, որ Սերո Նիկոլայիչն իր ապրած  
կյանքում համարձակ մարդ էր: Չեմ կարողանում հիշել, թե  
Հայաստանի գրողների միության որ համագումարում էր,  
նա շատ համարձակ խոսք ասաց Արցախի մասին: Ելույթը  
չթույլատրվեց եթեր հեռարձակել: Ես լրատվական ծրագ-  
րում էի աշխատում, եւ ձայնագրող մեքենայով գնացել էինք  
այդ համագումարին: Չայնագրող մեքենայի մի վարորդ ու-  
նեինք, շատ հայրենասեր մարդ էր, եւ այդ տարիներին նման  
պոռթկումները ձայնագրում ու պահում էր: Անչափ հետաքր-  
քիր արխիվ ուներ. ինքը ձայնագրեց նաեւ Սերո Նիկոլայի-  
չի խոսքը, բայց հետո անակնկալ մահացավ, եւ իր արխիվն  
անհետացավ, չհասկացանք՝ ինչ եղավ: Բնականաբար, այդ  
ձայնագրությունն էլ կորավ: Բայց մոտավոր հիշում եմ այդ  
համարձակ խոսքի էությունը, որից Կենտկոնը թույլ չտվեց  
նույնիսկ մեկ-երկու րոպե հեռարձակել: Գրողն այդ ժամանակ  
ներկայացրեց Արցախի իրական վիճակը, ասաց, որ պատմա-  
կանորեն հայ հողը չի կարող այդքան երկար տառապել օտա-  
րի լծի տակ, եւ որ Ադրբեջանի վայրագ կառավարությունը  
դատարկում է Ղարաբաղը հայերից, լցնում ադրբեջանցիներ-  
ով, մտավորականությանը թույլ չեն տալիս առաջ գնալ, հա-  
յոց լեզուն է ոտնահարվում. Խանգաղյանը խոսեց այդ ամենի  
մասին, եւ գրողների համագումարը ելույթն ընդունեց ոտքի  
ելած, ծափահարություններով:

Մարդը խիզախում է, եւ իր հետքը մնում է պատմության  
մեջ. այ, Սերո Նիկոլայիչն այդպիսի խիզախումներ ունեցավ:

Ցավոք, հարցազրույցների կամ հանդիպումների տեքս-  
տեր կամ ձայնագրություններ չեն պահպանվել մեզ մոտ,  
չնայած հաճախ է հյուրընկալվել նաղիոյում: Դրանք եղել են  
ընթացիկ հաղորդումներ, որոնք չեն պահպանվում, եթերից  
հետո ջնջվում են...

Ինքը մասնակցում էր նաղիոյում իր գործերի բեմակա-  
նացումներին՝ խորհուրդներով ու դիտողություններով, բայց  
ներկայումս այստեղ չկան ավագ սերնդի աշխատակիցներ,  
ովքեր հուշեր կունենան Սերո Խանգաղյանի մասին:

Ըստ Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնդի  
փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մաս-  
նաճյուղի վարիչ Անահիտ Գալստյանի՝ այդ մասնաճյուղում  
են պահվում Սերո Խանգաղյանի՝ Ղարաբաղյան շարժման  
տարիների ելույթները Հայաստանի գերագույն խորհրդի  
նստաշրջաններում:

# Տեսանյութեր Սերո Խանգադյանի մասին կամ նրա ստեղծագործություններին առնչվող

**հ**՞նչ ունենք Հայաստանի հանրային հեռուստաընկերության տեսադարանում Սերո Խանգադյանի մասին կամ նրան առնչվող:

Մեզ հետաքրքրող այդ հարցին պատասխանեց Հանրային հեռուստաընկերության PR մենեջեր Արուսյակ Զախարյանը:

- Հանրային հեռուստաընկերությունն ամենայն ուշադրությամբ է վերաբերում իր ունեցած ժառանգությանը՝ արխիվներ, տեսանյութեր, հաղորդումներ, - ասաց Արուսյակ Զախարյանը: - Հիմա՝ Սերո Խանգադյանին առնչվող տեսանյութերի մասին, որ թվային տարբերակով կա մեզ մոտ:

Մի քանի հաղորդումներում Սերո Խանգադյանը հյուր է եղել, բազմաթիվ հաղորդումներում կարծիքներ են հայտնվել նրա ստեղծագործությունների մասին, եղել են հարցազրույցներ նրա հետ կամ նրա մասին: 1990-ականներին Հանրային հեռուստաընկերության եթերում եղել է «Վարագույր» հաղորդաշար, եւ այդ հաղորդաշարի հերթական թողարկումներից մեկի հյուրը եղել է Սերո Խանգադյանը: Բացի դրանից՝ հերթական հոբեյանի առիթով հուշալրոն է նկարահանվել Հանրային հեռուստաընկերությունում: 1994թ. Սերո Խանգադյանի հետ հարցազրույց կա նկարահանված, թեման Ղարաբաղի հիմնախնդիրն է: Ունենք Սերո Խանգադյանի 70-ամյակի առիթով կազմակերպված հոբեյանական երեկոյի ամբողջ տեսագրությունը. նրան շնորհավորում են, ինքն է ելույթ ունենում... Ունեցել ենք «Տոհմածառ» հաղորդաշարը: Հաղորդումներից մեկում Սերո Խանգադյանը ներկայացնում է Սմբատյանների հայտնի գերդաստանը: Նկարահանումները հենց գրողի տանն են կատարվել. 1997-98թթ. մասին է խոսքը, նրա հետ ունեցած վերջին հարցազրույցն է դա:

Մենք ունենք նաեւ «Մատյան եղելությանցի» հիման վրա պատրաստված հեռուստաթատրոնը. մի քանի անգամ ցուցադրվել է այն:

Ինչպես արդեն ասվեց՝ մի շարք հաղորդումներում, միջոցառումներում հյուր է եղել: Օրինակ, մասնակցում էր Գուսան Աշոտի հոբեյանական երեկոյին, ելույթ է ունեցել, ինչը նույնպես պահպանվում է: Եվ նման բազում հաղորդումներ:

Զեմ կարող ասել, սակայն, որ թվարկածն ամբողջն է: Զի բացառվում, որ նրան առնչվող նյութեր, կարդեր լինեն նաեւ լրատվական թողարկումներում: Դրանք դժվար է նշել: Ավելի դյուրին է նշել մեծ հաղորդումները: Այդ կարգի հաղորդումներից, ինչպես նշեցի, ուշագրավ է «Վարագույր» հաղորդաշարը՝ հեղինակությամբ Մարատ Օրոյանի:

Որքանով գիտեմ՝ Սերո Խանգադյանին նվիրված վա-

վերագրական ֆիլմ չունենք, բայց դա պետք է ճշտել:

Սերո Խանգադյանին նվիրված բոլոր տեսանյութերն էլ ուշադրության արժանի են: Մեծ գրողի հոբեյանին, անշուշտ, արժեր դրանց մի մասը կրկին ցուցադրել: Արժեր ցուցադրել, օրինակ, 70-ամյակի առիթով կազմակերպված հոբեյանական երեկոյի տեսագրությունը կամ «Վարագույր» հաղորդաշարի թողարկումը, որտեղ ինքն առավել շատ է խոսում իր անցած ճանապարհի, գրական ժառանգության մասին:

Խնդրո առարկայի շուրջ գրուցեցինք նաեւ Հանրային հեռուստաընկերության ծրագրերի պատասխանատու Մարատ Օրոյանի հետ: Ըստ նրա՝ Սերո Խանգադյանի մասին տեսանյութեր կլինեն նաեւ տարբեր մարդկանց անձնական արխիվներում, ազգային կինոկենտրոնում, կինոգործիչների միությունում եւ տարբեր ստուդիաներում: 1990-ականներին արդեն կային մարդիկ, ովքեր պրոֆեսիոնալ կերպով զբաղվում էին տեսանկարահանումներով: Մարատ Օրոյանի կարծիքով՝ չի բացառվում, որ ժամանակին մյուս հեռուստաընկերությունները, կինոստուդիաները վավերագրական (փաստավավերագրական) կինոնկարներ եւ այլ հաղորդումներ պատրաստած լինեն Սերո Խանգադյանի մասին: Պարզապես հարկավոր է համապատասխան աշխատածեւ ընտրել եւ այդ նյութերը, ինչպես եւ լուսանկարները, հուշերը հավաքել ու 100-ամյակի առիթով դրանց հաղորդակցվելու հնարավորություն ստեղծել:

Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղում է պահվում Սերո Խանգադյանին նվիրված վավերագրական ֆիլմը՝ «Սերո Խանգադյան», նկարահանված է 1974թ. «Հայկինոստուդիայի» կողմից (սցենարի հեղինակ՝ Գեւորգ Հայրյան, ռեժիսոր՝ Զ.Ժամհարյան, օպերատորներ՝ Գ.Եղիազարյան, Գ.Կոսեմկո):

Այդ արխիվում է պահվում նաեւ «Լքված հեքիաթների կիրճը» զեղարվեստական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Առնոլդ Աղաբաբով, ռեժիսոր՝ Էդմոնդ Քյոսայան, 1974թ.)՝ նկարահանված «Այրված տունը» ստեղծագործության մոտիվներով, ինչպես եւ «Մխիթար Սպարապետ» պատմավեպի մոտիվներով նկարահանված «Հուսո աստղ» զեղարվեստական ֆիլմը՝ բաղկացած երկու մասից (սցենարի հեղինակ՝ Կոնստանտին Իսաեւ, ռեժիսոր՝ Էդմոնդ Քյոսայան):

Վերոնջյալ տեղեկությունները մեզ տրամադրեց Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղի վարիչ Անահիտ Գալստյանը:

**ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ**

# Սերո Խանզադյանը Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերում



## ՄԱՐԻՆԵ ՄԱՐ-ՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի  
ազգային արխի-  
վի բաժանմունքի  
վարիչ

**Ս**երո Խանզա-  
դյանը հայ  
գրականու-  
թյան ակադեմիայի  
դեմքերից է, որ լայն  
ճանաչման է արժա-

նացել ոչ միայն հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս, մի անհատ, որ իր ստեղծագործություններով զգալի դեր է խաղացել հայ արձակի մեջ: Նրա գրվածքներում մարմնավորվել են եւ գյուղացին, եւ պատերազմի մարտիկը, եւ ազգային-ազատագրական շարժման հերոսները, եւ պատմական հայտնի դեմքերն ու իրադարձությունները: Նրա ստեղծագործություններն առանձնանում են իրենց լեզվաոճական ու բարբառային խոսվածքի դիպուկ ու տեղին օգտագործման առանձնահատկություններով: Դրանք գրավում են ընթերցողին իրենց արտահայտչականությամբ ու ճշմարտացիությամբ, քանի որ հերոսները բնական են, վերցված իրական կյանքից: Նրա գրվածքները հայտնի են հասարակության լայն խավերին՝ ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանի հայաշատ վայրերում:

Ողջ կյանքի ընթացքում իրեն երբեք հեռու չի պահել հայ ժողովրդի համար դժվարին տարիների, մանավանդ օրհասական ու վճռորոշ տարիների հիմնախնդիրներից: Այդպես՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին մեկնել է ռազմաճակատ, որտեղից անջափ հուզիչ նամակներ է գրել հարազատներին: Դրանք ջերմ են ու լի անհուն կարոտով, դրանց մեջ զգացվում է խրոխտ սյունեցու՝ հաղթանակելու եւ հաղթանակած տուն դառնալու անկողորմ կամքը: Մասնակցել է Լեւոնիզորադի, Ռիզայի, Շյաուլյայի ազատագրմանը, Քենիսբերգի գրավմանը եւ պարգևատրվել բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով:

Այդպես եղավ եւ Ղարաբաղյան հարցի լուծման տարիներին: Դեռեւս 1975թ. ճշմարտության ու

արդարության ջատագովը նամակ էր հղել Լ.Բրեժնեւին՝ խնդրելով վերանայել Ղարաբաղի խնդիրը: Իսկ 1990-ականներին նա գրում է. «...Ղարաբաղում կռվող ամեն մի հայ մեզ համար դուրսագն է, ազգային ազատության հավատը իրականացնող հզորություն: Թշնամին ահուդողի մեջ է: Թշնամին աշխարհով մեկ ոռոնում է, թե հայերը գրավել են մեր հողը՝ Քելբաջարը: Եվրոպայում ու այլ տեղերում հավատում են նրան, եւ ոչ ոք չի հարցնում՝ իսկ չէ՞ որ դու, Ադրբեջան, զավթել ես Արցախի Գետաշենի ենթաշրջանը, Շահումյանի ու Մարտակերտի շրջանները: Ինչպես ասում են՝ սեղը բռնալու տեղ, սեղվորն է բռնում...»:

Բազմիցս հեղինակավոր ամբիոններից իր ձայնն է բարձրացրել ու բարձրաձայնել Ղարաբաղի խնդրահարույց հարցն արդարացիորեն լուծելու համար, իր պատգամավորական մանդատն օգտագործել է ու «կռիվ» տվել համամիութենական բարձրագույն ատյաններում՝ նորից ու նորից օրախնդիր դարձնելով Ղարաբաղի անկախության հարցը՝ հավատարիմ մնալով իր իսկ բնութագրմանը. «Ես, թերեւս, պատկանում եմ հայ գրողների այն սերունդին, ովքեր իրենց աշխատանքի եւ կյանքի բոլոր ժամանակներում ամենաբարձր նպատակը համարել են պայքարը հանուն ճշմարտության եւ արդարության»:

Հոգացավ էր իր հայրենի երկրի հնությունների ու արժեքների նկատմամբ: «Ջանգեզուր» թերթի խմբագրությանը հղած իր մի նամակում գրում էր, որ իր մորական պապը 1870-ական թվականներին՝ Երուսաղեմի ուխտագնացությունից հետո, վերադարձել է Գորիս եւ սրբավայրից երեք զանգ բերել Գորիս գյուղի եկեղեցու համար եւ երկու խոշոր, ոսկեճաղ, բյուրեղապակյա ջահ, որ կախվել է եկեղեցու տաճարում, ապա՝ Լուկաշինի (Սարգիս Սրապիոնյան) անվան դպրոցի վերահարկում գտնվող թատրոնի մեծ սրահում:

Նաեւ նշում էր, որ 1919թ. նոյեմբերին Ջանգեզուրի աշխարհագորը, հաղթական պատերազմ մղելով թուրք-ադրբեջանական կանոնավոր զորքերի դեմ, իր հետ ավար է բերել երկու թնդանոթ, որոնք դրվել են նախկին զինկոմիսարիատի շենքի առջեւ, եւ որոնցից տոն օրերին ողջույնի կրակ է տեղացել, ապա մասնավորապես հիշատակում է. «...Ես այդ զանգերը տեսել եմ, որ ղողանջում էին տակավին քսանական թվականներին: Հետո զանգերն անհետացել են: Երբ իմ «Վահրամ Որոտանցին» բեմադրվում էր (1940 դեկտեմբեր-1941 հունիս) այդ ջահերը կային... Պատերազմից հետո եկա ու տեսա, որ այդ պատմական արժեքավոր թնդանոթները չկան»: Իր նամակում թերթի խմբագրությանը խնդրում է շրջագործկոմի հետ ձեռնարկել միջոցներ ու գտնել նշված արժեքավոր հնությունները:

Հիանալի ու խորությամբ գիտեր իր բնօրրանի՝ հնամենի ու զարմանահրաշ Ջանգեզուրի բնակավայրերը, դրանց դեռ վաղնջական ժամանակների պատմությունը եւ կարող էր գյուղերի պատմության

ու տեղանունների ստուգաբանության իմացությամբ գարնացնել յուրաքանչյուր պատմաբանի ու մասնագետի: Ուսումնասիրել էր ու գիտեր նաեւ ինչպէս Գորիս գյուղի, այնպէս էլ իր տոհմի պատմությունը, որ հետագայում վարպետորեն համակցել ու օգտագործել է իր գրվածքներում. «...Մեր ծորերում միմչեւ հիմա էլ մնացել է պապիս մասին մի հետաքրքիր առասպել: Մեր տոհմը ապրել ու ապրում է մեր ծորերում՝ Սյունիքի Չագեծոր գավառի Գորիս գյուղում: Քարանձավները, որտեղ ապրել են իմ պապերն ու ապուպայերը մի քանի հազար տարվա պատմություն ունեն: Սյունիքը Հայաստանի այն փոքրաթիվ անկյուններից մեկն է, որը չենթարկվեց աշխարհաքանդման, կործանման: Սարքածը մնաց տեղում: Իմ պապ չորան Առաքելի մասին ասում են, որ երբեք ունեցած ոչխարները չէր հաշվում: Եթե հաշվեմ, ասում էր, գելը կտանի...»: Անսահման սիրով էր կապված իր հայրենի հողի հետ. «...Ինձ համար սուրբ է մեր մեծ հայրենիքը, ես անձնագոհ սիրում եմ մեր Հայաստան աշխարհը, բայց ես չեմ կարող չասել, որ նահատակվելու աստիճան սիրում եմ մեր Սյունիքը՝ Չանգեզուրը, իմ ծննդյան օրորոց Գորիսը...»:

Նրա ծննդավայրում դեռեւս պահպանվել են փոքրիկ քարանձավներ, 5-6 հազարամյակների հնամյա շիրմաքարեր, տավարած ու հողագործ, բրուտ ու քարտաշ նախնիների գերեզմաններ: Իրենց թոնիրներով ու քարե կահ-կարասիով պահպանվել եւ տակավին շնչում են շատ ժայռաքարայր տներ, որոնց մասին այդչափ ջերմորեն, սիրով ու ճշմարտացի իր ծննդավայրի՝ հայրենի բնաշխարհի նկարագիրն է տվել հայտնի գրողը. «...Չանգեզուրի սիրտը պատմական Գորիսն է, նրա ծննդավայրը, որը Սյունյաց աշխարհի գողտրիկ անկյուններից է՝ իր անդնդախոր ծորերով, երկինք մխրճված սրածայր ժայռերով ու քարանձավներով, անմատչելի լեռներով ու կուսական անտառներով: Բնությունը շոայլ է եղել մանկությունից այնքան հետաքրքրասեր պատանու հանդեպ եւ նրան է բաշխել իր հոգու անհուն զանձերը...»:

Առանձնակի սիրով է զբաղվել համշենահայերի պատմության ուսումնասիրությամբ, ինչը դեռեւս բավական քիչ է ուսումնասիրված ու առավել եւս՝ լուսաբանված: Մշտապես կապի մեջ է գտնվել համշենահայության ներկայացուցիչների հետ, ինչի մասին է խոսում նրա հարուստ նամակագրությունը համշենահայ նվիրյալ Բարունակ Թռչաքյանի (ազգագրության եւ բանահյուսության կամավոր նվիրյալ, ով տարիներ շարունակ հետամուտ է եղել ու գրի առել Համշենի եւ համշենցիների վերաբերյալ ինչպէս ազգագրական, այնպէս էլ բանահյուսական արժեքավոր նյութեր) հետ. «...Վերջերս ես եւս զբաղվում եմ մեր ժողովրդի այդ հատվածի պատմությամբ: Հրատարակում եմ «Չայն համշենական» ժողովածուն: Համշենահայության կյանքը քիչ, շատ քիչ է ուսումնասիրված, եւ Բ.Թռչաքյանը շատ շնորհակալ աշխատանք է կատարել, որ միայն գովասանքի եւ խրախուսանքի է արժանի: Լավ

գործի հիմք է դրվել...»:

Նորից ու նորից թերթելով բազմավաստակ ստեղծագործողի, իր հայրենիքի իսկական քաղաքացու ստեղծած ու նրա վերաբերյալ ՀԱՍ-ում պահվող բազմազան ու հետաքրքիր, միաժամանակ անչափ կարեւոր փաստաթղթերը՝ ակամա հասկանում ես, որ նա արդեն իր կենդանության օրոք լրացրեց այդ բազմավաստակ գրողների պատվավոր շարքը:

### Դրվագներ Մերո Խանզադյանի հուշերից ու հիշողություններից

Ուշագրավ ու հուզիչ են նրա հուշերն ու հիշողությունները հանրահայտ ու ճանաչված անձանց վերաբերյալ: Դրանք կարծես գողտրիկ պատմվածքներ լինեն, որ պակաս արժեքավոր չեն, քան նրա շատ ստեղծագործություններ, որոնցից առանձնացրել ենք մի քանիսը՝ ընթերցողին ներկայացնելու նպատակով: Նրա հուշերն այնքան անկեղծ են, այնքան հրաշալի ու ամեն մեկի համար յուրովի ներկայացված, որ ավելորդ մեկնաբանության կարիք չունեն, ինչպիսին որ տրամադրվում է ընթերցողին:

Հետաքրքրական են նրա հուշերը Եվգենի Եվգենիչ Լանսերեի վերաբերյալ, ով նրա մանկության տարիներին հանգրվանել էր իր հորական տանը՝ նկարելու համար Սյունիքի հպարտ ու գեղեցիկ մի կնոջ՝ զանգեզուրյան տարագով: Այդ ժամանակ նա դեռեւս չգիտեր, որ Ե.Լանսերեն ռուս հայտնի նկարիչ է, մեծանուն ճարտարապետ Ալ.Թամանյանի կնոջ զարմիկը, ով չափազանց զմայլված էր Հայաստանով, մանավանդ Չանգեզուրով: Սակայն արդեն հասուն տարիքում, երբ շարադրում էր իր հուշերը, շատ էր հպարտանում, որ հանդիպել ու առնչվել է այդ տաղանդավոր «խուղոժնիկի» հետ. «Լանսերեն սեւ, փոքրիկ բեղեր ուներ: Ինչպէս ինձ թվաց, նա շատ բարձրահասակ էր: Նա զրուցում էր հորս հետ, իսկ հայրս թարգմանում էր հայերեն՝ հավաքվածների համար:

- Ես մարդը «խուղոժնիկ»-պատկերիան է, - հպարտ ասում էր հայրս, - Լանսերե Եվգենի Եվգենիչն է: Եկել է Մոսկվայից, ասում է, որ ինքը շատ է հավանում Գորիսը, թե ես մեր կանանց շորերը Հիսուս Քրիստոսի ժամանակից էլ հին են, շատ լավն են ու շատ գեղեցիկ:

«Մենք՝ փոքրերս, շունչներս պահած, հետեւում էինք նրա յուրաքանչյուր շարժմանը: Ես իմ կյանքում նկարիչ չէի տեսել: Նա նկարում էր մեր Կուճի գիզուն, ով հագած էր կապույտ արխալուղ, կապույտ գոգնոց: Արխալուղի թեքերը ծալած էին, որոնց տակից երեւում էին կարմիր հալավի ծայրերը: Գեղեցիկ էր Կուճի գիզան, մանավանդ ճակատանոցով, գլխի սեւ շալով, որի տակից երեւում էր նաեւ սպիտակ չարդաթը (շղարշը): Շատ գեղեցիկ էր նրա արծաթե գոտին՝ կլոր կումբով ու հաստ ճարմանդով... Հետո «խուղոժնիկն» սկսեց խոսել ինձ հետ՝ առանց գործից կտրվելու: Ես միտքս լարեցի, որ հասկանամ նրա ռուսերենը: Հասկանում էի: Ես ընդամենը տասնմեկ տարեկան էի... Շատ տարի-

ներ հետո ես մեր Կուճի զիզու մկարը տեսա Երեւանի պատկերասրահներից մեկում եւ հիշեցի հեռավոր այդ օրերը...»:

Անչափ տպավորված էր ֆրանսիացի հռչակավոր գրող, փիլիսոփա Ժան Պոլ Սարտրի հետ հանդիպումից. «...Ժան Պոլ Սարտրը վաթսուհին մոտ, ոչ բարձրահասակ մարդ է, ակնոցներ է կրում: Մազերը նոսր են, ետ սանրած: Նրա դեմքին մշտական հարց կա: Դա հետաքրքիր է... Ասաց, որ մարդը պետք է զբաղվի ինքնաստեղծմամբ՝ իր պատմության օգնությամբ, իր պատմության մեջ եւ հանուն պատմության: Չեղագետը պետք է մասնակցի իր դարի բոլոր հոգսերին ու հարցերին... Ժան Պոլ Սարտրն ասաց, որ 1915թ. Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում բարձր ծայր հնչեց հայ գաղթականներին փրկելու: Դրան լծվեցին Անատոլ Ֆրանսը, Սարսել Կաշենը, Իվ Ֆարժը եւ շատ ուրիշներ: Արժանի պետք է հատուցել նրանց մարդասիրական խղճին ու կորովին: Մենք չենք մոռանա, - ասաց նա, - որ Ֆրանսիայի հյուրասեր հողում ապաստան գտած հայերը, հիտլերյան օկուպացիայի սեւ օրերին, իրենց ճակատագիրը կապեցին ֆրանսիացի ժողովրդի հետ եւ զենքը ձեռքներին կռվեցին Ֆրանսիայի համար: Եվ մենք եւս պարտավոր ենք միասնության մեջ նշել Հայոց եղեռնի հիսնամյակը...»:

Տպավորված էր ու շատ էր գնահատում սփյուռքահայ հայտնի բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, մշակութային եւ կրթական գործիչ Մուշեղ Իշխանի (Ճեմտերեծյան Մուշեղ Սրապիոնի) գրվածքները, որի մասին 1981թ. գրում է. «...Հռչակավոր է նրա «Մնաս բարով, մանկություն» արձակ գործը: Եզակի արժեք է մեր գրականության մեջ: Իշխանի ոգին բանաստեղծական է, ոչ գտնված, այլ բնական: Տակավին տարիներ առաջ Գարեգին Բ Վեհափառը բարձր է գնահատել Մուշեղ Իշխանի գրական գործը»:

Բարձր էր գնահատում սփյուռքահայ գրող, հասարակական գործիչ, մեծ հայրենասեր Շահան Նաթալիին, որի խմբի մարդիկ ժամանակին հաշվեհարդար են տեսել հայ ժողովրդի դահիճների հետ, որին 60-70-ականներին իր տանը հանգրվանելով, Ա.Խան-զադյանը գրում է. «...Մեր տանն էր, թեև մարմնով շատ փոքր էր, բայց խիզախության կուտակում: Ասաց. - Մենք ճակատագրված ենք, անկախ արտաքին բուլլոր դավերին: Հայ ժողովրդին ուղղակի հարվածին մենք պատրաստ ենք: Ոչ թե թուրք ժողովրդին, այլ թուրք անհատին հարվածելու: ...Դե ինչ, հայկական վրեժխնդրության-ահաբեկչության աստվածն էր, դրա սկսողը: Ինքը՝ հայկական տեռորիզմի-ահաբեկչության կնքահայրը»:

Սփյուռքահայ նշանավոր գրող Շահան Շահնուրի (Քերեսթեջյան Շահնուր Զաքարի) հետ հանդիպումից անչափ հուզված հիշում է. «...Նրա լայն ափի սեղմումի մեջ բողբոջ էլ կա, կարոտ էլ: Հողից կտրված ձեռք է, միայն ավեր տաճարներ ու սրտեր շոշափած: Քաշվում են նրանից: Ահռելի ուժի տեր գրող է եւ կարծես սառը,

անտարբեր, հաշտված աշխարհի մոտալուտ կործանման հետ հոգիների հմուտ գիտակն ու սրտեր նվաճողը»:

Հանրահայտ Վիլյամ Սարոյանի հայաստանյան այցելության ընթացքում՝ Ջանգեզուրում շրջագայելիս, գրում է. «...Շրջագայեցինք Վահանավանքի անտառներում: Նորից քարեր լցրեց գրպանը: Ասաց. - Այս անուշ քարեր հոգի ունեն, տոկուն են մեզի պես: Ես հիմա ավելի լավ հասկացա քարերի խորհուրդը: Կսիրեմ հատկապես Հայաստանի քարեր: Ես շատ եմ սիրում Հայաստանը, ասագին Հայաստանը: Քարը սուրբ բան մը է, Հայաստանի քարը, նաեւ ծառը, արեւը, մարդը...»:

Հայ արձակի «պոետ» ու բոլորից սիրված Ալեսի Բակունցի մասին 1969թ. գրում է. «...Բակունցի հրաշագործ գրիչը հայտնագործեց բոլորովին մի նոր աշխարհ, որ ապրել է աշխարհին անհայտ իր ուրույն կյանքով: Բակունցի էությունը խոր թափանցել է մարդուց մոռացված մարդկային ներաշխարհի անհայտ խորքերը: Արվեստը նրա հանապազօրյա հացն էր: Արվեստի դժվարամատչելի բարձունքին Բակունցը հասավ 1926-1927թթ., իրենց նմանը չունեցող «Ալպիական մանուշակ», «Սիրիավ», «Խոնարի աղջիկը» պատմվածքներով... Նրա գրական հացաբույր արտը խշշում է ոսկեհատիկ գույներով եւ հիացնելով պահում մեզ»:

Հայ մեծանուն դասական Դերենիկ Դեմիրճյանի մասին գրում է. «...Դեմիրճյանը կարծես թափանցում է մեր զգայարանների ու ապրումների ամենանուրբ-ամենագաղտնի ծալքերի մեջ ու մեզ՝ իր ընթերցողին մկրտում չիռուսահատվելու մեռոնով, ազնվության ու մարդկայնության ավագանու: Սիրել կյանքը ու կռվել հանուն կյանքի»:

Մեծատաղանդ ու ազատաշունչ Եղիշե Զարենցի մասին 1957թ. գրում է. «...Փոթորիկներից էր ծագել Զարենցի գրական տաղանդը, եւ նրա կյանքն էլ փոթորիկի պես էր ու փոթորկահույզ: ...Աշխարհի գրականությունների մեջ ես չգիտեմ Զարենցին հավասար մի ուրիշ պոետ, որն այնքան մեծ սիրով ու ջերմությամբ, այնպիսի որդիական երախտագիտությամբ երգած լինի իր ազգի ու առհասարակ մարդու ազատության զաղափարը...»:

Հայ պոեզիայի հայտնություն, ըմբոստ ու հանճարեղ Պարույր Սեւակի մասին իր հուշերում գրում է. «...Երբ նա խոսում էր, մենք լռում էինք: Նրա բերանով խոսում էր ինքը՝ ժամանակակից համաշխարհային պոեզիայի ոգին: Ինչ ասեր, իր էությունն էր: Շեշտերը կարճ էին, ասածը՝ կտրուկ, երբեմն ջղային: ...Հետզհետե ես համոզվում էի, որ Պարույր Սեւակի ներքին աշխարհը, էությունը, մտածելակերպը «անբնական» են, ոչ սովորական: Նրանով ես զգում էի, որ իմ շուրջն ինչ-որ դատարկություն կա, եւ այդ դատարկությունը իմաստով լցնելու է կոչված չամախչեցի այս գեղջուկ պատանին: Ինչ-որ կողմերով նա խիստ նման էր Սերգեյ Եսենինին: Կրթոս վիճող էր ու գրեթե անհաղթ: Նրա

միտքը գործում էր զարմանալի արագ, տրամաբանությունը շեշտակի էր, ու դրանից նրա խոսքը դառնում էր անառարկելի: Բացառիկ անձնավորություն էր, բացառիկ հմայքով:

...Նա մարտահրավեր էր նետում այն ամենին, ինչ դրզմա է ու հին, նույնիսկ թեկուզ սրբագործված: Համենայն դեպս դա ճակատամարտ էր արվեստի, մասնավորապես պոեզիայի ճահճուտի դեմ, մի ճակատամարտ, որ սկսեց Չարենցը, սակայն անավարտ մնաց...

...Շատ էինք խեղճ մենք, շատ էինք ձանձրացել պոեզիայի իլիկներից ու սագերից, միապաղաղ ու գորշ երկնքի մանր անձրեւից, որ միայն հողի երեսն էր թրջում, չհասնելով բույսերի արմատներին: Հարկավոր էր ամպրոպ ու որոտ, հեղեղաբեր անձրեւ: Այո, հեղեղ... Դա մեր պոեզիայի աշխարհը բերեց Պարույր Սեւակը: Թվում էր նա միջնադարում է, նորի՝ 20-րդի էությանը: Խիստ կարեկից էր: Մարդը նրա համար ամենից կարեւոր «նյութն» էր, ցանկանում էր առատ լույս գտնել մարդու հոգու մեջ ներարկելու...»:

Հուզառատ, անկեղծ ու անբռնազբոս նրա հուշերում զետեղված մտորումներն ու մեկնաբանություններն այսօր էլ կարծես առօրեական են, ուսանելի ու հետաքրքիր հայ ընթերցողի համար:

**ՍԵՐՈ ԽԱՆՁԱԳՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ**

Թերեւս քչերին է հայտնի, որ Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), հայ ժողովրդի արժանավոր այլ զավակների փաստաթղթային նյութերի հետ մեկտեղ, մեծ խնամքով ու սիրով պահվում են նաեւ բազմաշնորհ սյունեցու՝ Սերո Խանզադյանի ինչպես անձնական արխիվի նյութերը, այնպես էլ արխիվային տարբեր ֆոնդերում գտնվող նրա վերաբերյալ փաստաթղթերը, որոնք ի հայտ են բերում ոչ միայն հանրաճանաչ գրողին, այլեւ իր ազգի վեհանձն ու արժանավոր քաղաքացուն:

Արխիվային այդ փաստաթղթերը բազմաթիվ են ու բազմազան՝ կառավարական որոշումներ, ստեղծագործությունների ձեռագրեր ու հեղինակավոր աշխատանքներ, ինքնակենսագրականներ, պատվոգրեր, շնորհավորագրեր, ուղերձներ, պաշտոնական գրություններ, հողվածներ, հուշեր, հիշողություններ, նամակներ, դիմումներ, գրառումներ, ելույթների տեքստեր:

Հիշատակելի են Սերո Խանզադյանի հողվածները նշանավոր հոբելյանների ու տարելիցների առիթներով՝ Հայոց եղեռնի, Անդրամիկի, Եղ.Չարենցի, Հ.Թումանյանի, Թ.Ալթունյանի, Հ.Կոչոյանի, Ա.Բակունցի, Դ.Դեմիրճյանի, Սարմենի պոեզիայի, Արագու, Հ.Սահյանի ստեղծագործությունների մասին:

Նրա գրախոսականներն ու կարծիքներն այլ գրողների ու գրականագետների՝ Ավ.Իսահակյանի, Հ.Թամրազյանի, Ս.Թովչյանի, Մ.Թերզյանի, Հ.Հովհաննիսյանի

նի եւ այլոց ստեղծագործությունների մասին: Սերո Խանզադյանի հուշերը Պ.Սեւակի, Գ.Մահարու, Դ.Դեմիրճյանի, Ա.Խաչատրյանի, Մ.Սարյանի, Ա.Բակունցի, Մ.Շահինյանի, Շ.Շահնուրի, Վ.Սարոյանի, Մ.Իշխանի, Ա.Մռավյանի, Ա.Խանջյանի, Գ.Հարությունյանի, Գ.Նժդեհի, Դրոյի, Ա.Տերտերյանի, Ստ.Լիսիցյանի, Գ.Լեւոնյանի, Ե.Լանսերեի, Ժամ Պոլ Սարտրի, Ի.Էրենբուրգի, Ստ.Ջորյանի, Ն.Ջարյանի, Արագու, Հ.Քոչարի, Հ.Շիրազի եւ մյուսների մասին:

Նրա գրառումները ԱՄՆ, Ֆրանսիա, Լեհաստան, Ռումինիա, Լեռնային Ղարաբաղ եւ այլ վայրեր կատարած ուղեւորությունների վերաբերյալ:

Նամականիում տեղ են գտել Սերո Խանզադյանին հասցեագրված Արշարունու, Վ. եւ Ս.Բակունցների, Վ.Անանյանի, Ն.Բոգդանովի եւ Ա.Գենտի, Դեւի, Ն.Ջարյանի, Շ.Թաթևյանի, Յու.Կանեի, Գ.Հայրյանի, Վ.Կորկինի, Լ.Հուրունցի, Գ.Սեւունցի, Վ.Նորենցի, Ա.Մակարյանի, Լ.Մալիկինի, Շիգերովիչի, Սեմյուլի, Գ.Մահարու, Ա.Պատրիկի, Սեւդա Սեւանի, Ռ.Ֆայզի, սփյուռքահայ մտավորականների նամակները, ինչպես եւ իր գրած նամակները հարազատներին, ընկերներին, գրողներին, սփյուռքահայ մտավորականությանն ու բարերարներին (Գառզու, Ս.Կապուտիկյան, Հ.Սահյան, Վ.Դավթյան, Ե.Եվտուշենկո եւ այլք):

**Ժամանակակիցների ու ընկերներից մի քանիսի կարծիքները Ս.Խանզադյանի ու նրա ստեղծագործությունների մասին**

Բավական շատ են Ս.Խանզադյանին նվիրված ժամանակակիցների ուղերձները ու նրա ստեղծագործությունների վերաբերյալ գրախոսականներն ու կարծիքները, որոնցից մի քանիսը ստորև ներկայացնում ենք:

Նրա 60-ամյակի առիթով «Հայաստան» հրատարակչության ուղերձում մասնակիորեն ասվում է. «...Ձեր յուրաքանչյուր ձեռագիրը ուրախություն է պատճառում մեզ, քանզի մենք փորձով գիտենք, թե որքան է հայ ժողովուրդը սպասում Ձեր գրավոր խոսքին, այն կերպարների հայտնությանը, որոնք հենց այդ ժողովրդից վերցված նախատիպերն են՝ լինի դա մարտի դաշտից, գործարանից, թե հանդից: Այդ մարդկանց մեծ մասը Ձեր ծննդավայրից է՝ Ձանգեզուրից, այդ գեղատեսիլ, բազմահարկ աշխարհից, որոնց ավանդական հայրենասիրությունը, օրորոցից քաղաքակիրթ լինելը դրոշմված է այս լավ եւ բարի մարդկանց հոգիներում, Ձեր «Մատյան եղելությանց», «Մխիթար Սպարապետ», «Քաջարան», «Սեր գնդի մարդիկ», «Հողը» վեպերում:

Դուք Ձեր գրականությամբ Ձանգեզուրի մարդկանց եւ Հայաստան աշխարհի արդի նկարագիրը ներկայացրիք մեր մեծ հայրենիքի մյուս ժողովուրդներին՝ հայ գրողի դասական մտածողությամբ, մեր ժողովրդի էությանը հատուկ մարդասիրությամբ, զինվորի շիտակությամբ, նվիրվածությամբ ու արժանապատվությամբ...»:

Նույն առիթով Գրողների միության վարչության

քարտուղարության ուղերձում, որի տակ ստորագրել են Վարդգես Պետրոսյանը, Պերճ Զեյթունցյանը եւ Լեւոն Մկրտչյանը, ասվում է. «...Վերջին տարիներին ոչ միայն մեր, այլեւ ամբողջ սովետահայ գրականության նվաճումներից էր բանվորական դասակարգի կյանքը պատկերող լավագույն ստեղծագործություններից «Քաջարան» վեպը, որի համար համամիութենական գրական մրցանակաբաշխությունում մրցանակը Ձեզ շնորհվեց, որն էլ ավելի ընդարձակեց Ձեր համամիութենական ճանաչման սահմանները:

Այսօր կարելի է վստահորեն ասել, որ Դուք հայ ժողովրդի ամենասիրված գրողներից մեկն եք, սեր, որը գրչի մարդու վաստակի ամենաճշգրիտ գնահատականն է ու ամենաբարձր պարգևը՝ նրա ստեղծագործական կյանքի ճանապարհին»:

Հայաստանի կինեմատոգրաֆիստներն իրենց ուղերձում գրում են. «...Դուք խորհրդահայ արձակի այն փայլուն համաստեղության լուսատուներից եք, որոնք դարձել են մեր ժամանակի հույզերի ու մտածումների քարզանքը, գեղարվեստական խոսքի ուժով դաստիարակել ու դաստիարակելու եք ոչ մեկ սերունդ: ...Դուք՝ որպես մարդ-քաղաքացի, վաստակել եք մեր հասարակության ամենաջերմ վերաբերմունքը: ...Ձեր երկերի քարզանքությունը վաղուց ի վեր Ձեզ համել է համամիութենական եւ միջազգային ասպարեզներ: Արտասահմանում, սփյուռքահայության հետ միասին Ձեզ սիրով են ընթերցում նաեւ այլազգիները, Ձեր պատկերավոր խոսքի միջոցով տեսնում, գնահատում ու սիրում մեր հինավուրց հողը ու շինարար ժողովրդին...»:

1976թ. հունվարին Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հեղինակավոր պրոֆեսորներ Մկրտիչ Մկրյանն ու Հրանտ Թամրազյանը բազմաշնորհ գրողի մասին գրում են. «...Դուք Ձեր գրիչն ու տաղանդը ի սպաս եք դրել մաքառումներով, լինելիության տազնապներով, հերոսական պատերազմներով հարուստ նրա պատմությանը, լուսավոր ու գեղեցիկ ներկան գեղարվեստորեն իմաստավորելու գործին՝ բացահայտելով անցյալի ու ներկայի անխզելի կապերն ու աղերսները: Ահա թե ինչու Դուք մշտապես արդիական եք, արդիական ոչ միայն սովետական մարդկանց հերոսական ջանքերով Արփա-Սեւանի կառույցում աշխատողներին պատկերելիս, այլեւ Մխիթար Սպարապետի գլխավորած ժողովրդական շարժումը տարեգրելիս: Ահա թե ինչու Ձեր ստեղծագործությունները չեն իջնում ընթերցողների ձեռքից, դառնում են կինոնկարների սյուժե, տեղ են գրավում դպրոցական դասագրքերում, համարձակորեն ներկայացվում այլազգի ընթերցողին...»:

Հայտնի պետական գործիչ, պատմաբան Զոն Կիրակոսյանը, «Անդրանիկ» վեպի վերաբերյալ իր կարծիքը, դիտողությունները, շտկումներն ու կրճա-

տումները պատմական որոշ անցքերի ու անձերի կապակցությամբ կատարելով, միաժամանակ նշում է վեպի մեծ արժեքը՝ շեշտը դնելով վեպի պատմաքաղաքական խնդիրների վրա. «Սերո Խանգադյանի վեպը կառուցված է արեւմտահայության հերոսական, բայց եւ ողբալի պատմաիրական դեպքերի ու իրադարձությունների վրա: Վիպասանը իր առջեւ դրել ու լուծում է չափազանց բարդ խնդիրներ, փորձում է վերականգնել ժամանակի մթնոլորտը, շունչը, տրամադրությունը: Այս խնդիրը նրան հիմնականում հաջողվել է... Վեպը հաջողված է եւ կգտնի իր բազմաազգար ընթերցողին, նրանց կդաստիարակի հայրենասիրության ոգով...»:

Ս.Խանգադյանի «Երկու օվկիանոսների արանքում» ուղեգրությունների մասին 1984թ. Զ.Կիրակոսյանը գրում է. «...Այսօր սփյուռքահայությունն ապրում է կյանքի ու պատերազմի բարդ ժամանակներ: Գետեաբար, այնտեղ տեղի ունեցող պրոցեսների խոր իմացությունը այսօր չափազանց կարեւոր խնդիր է: Այն պետք է իրականացնել ոչ միայն գրական-գիտական հետազոտությունների, այլեւ կենդանի շփումների միջոցով: Այդ պրոցեսները ոչ միայն պետք է իմանալ, այլեւ դրանց պետք է ծանոթացնել հայրենական ընթերցողների հոծ խմբերին: Անտեղյակությունը միայն կարող է խանգարել քաղաքական աշխատանքի մեր խնդիրներին»:

Ս.Խանգադյանն ուղեգրությունների մեջ կենդանի խոսքով, պատմական էքսկուրսներով, քաղաքական դիպուկ բնութագրումներով ընթերցողին ներկայացնում է ամերիկահայության կյանքի պայմանները, դրվատում է ազնիվ, հայրենասեր մարդկանց, իսկական մոտեցումներով ընթերցողին պարզում ամերիկյան իրականության խոցելի կողմերը: Գեղինակը կատարել է դրվատանքի արժանի աշխատանք: Գրապարակախոսության այս ժանրը մատչելի է ընթերցողների լայն շրջաններին, ունի դաստիարակչական որոշակի ֆունկցիա:

Ս.Խանգադյանի ուղեգրություններով ընթերցողը պատկերացում կկազմի Սովետական Հայաստանին սփյուռքահայության նվիրվածության մասին, մանրամասներ կիմանա Կալիֆորնիայի հայ մտավորական գործիչներ՝ Ուիլյամ Սարոյանի, Ա.Սուրմեյանի, Ա.Սանջյանի, Ռ.Հովհաննիսյանի, Ալ.Կիրակոսյանի, Արամ Արաքսի, Ար.Ավագյանի կյանքի, հայրենասիրական գործունեության մասին...»:

## Օճանոթություն

Հայաստանի ազգային արխիվում են պահվում նաեւ բազմաթիվ նամակներ՝ Սերո Խանգադյանի կողմից գրված կամ նրան ուղարկված: Դրանցից մի քանիսը թերթի սույն համարում ներկայացնում ենք ընթերցողին:



# 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նահապետը

էջ 10

առաջարկել լուծումներ: Ավանդել է դասեր, ձեւակերպել սկզբունքներ, պատվիրաններ, որոնք ոչ միայն արդիական են, այլև, կարելի է ասել, մեր ազգային գաղափարախոսության, ազգային ճշմարիտ աշխարհայեցողության հիմնարար բաղադրիչներ կարող են համարվել այսօր եւ հավիտյան:

Նա ողջ կյանքում պարուրված էր ազգային ոգու եւ կերտվածքի ոգեկոչման մտահոգությամբ:

Նրա ստեղծագործություններն արտահայտում են պայծառասուքություն հայ ժողովրդի վաղվա օրվա հանդեպ, ամրագրում հայ ժողովրդի անվախճանության գաղափարը: Ըստ գրողի՝ ոչ մի դահճի կամ դահճապետի, ոչ մի յաթաղանավոր ոհմակի չի հաջողվի պատմության երթից հանել հայ ժողովրդին, կտրել նրա կամքն ու ոգին: Պատահական չէ, որ գրողի շատ-շատ հերոսներ ունեն գերագույն մտասեւեռում՝ *«Մահի իմացեալ անմահություն է»*:

Նա ունի հայրենասիրության անխոտորելի իր բանաձեւը՝ անմնացորդ տրվել հայրենիքի սիրույն, հայրենական ուխտին զոհաբերել ամեն ինչ՝ կյանք, կայք, հոգի, մարմին...

Նա ունի հայ մարդու անկտրում խառնվածքի իր ընկալումները՝ ամենաօրհասական պահին փրկության ելք գտնելու կամք ու հավատ:

Պատվիրանների պես են հնչում մեր ժողովրդին սթափության կոչող նրա նկատառումները:

*«Պետք չէ հավատալ եվրոպական դիվանագիտության փուչ խոստումներին, - ասվում է Անդրանիկ զորավարի շուրթերով, ապա պնդում, - տխմարություն է հուսալ, թե եվրոպան մեզ համար մեր Տեր Չիսուս Քրիստոսի հրաշքը պետք է գործի: Մեր ազգը նախ իր վրա անսահման հավատ պիտի ունենա»*:

Նա փրկություն հուսալն արտաքին ուժերից դժբախտություն էր համարում, հավատը եվրոպայի հանդեպ՝ կույր ձգտում, խոտոր ճանապարհ: *«Եվրոպայի հոգին խորթ է մեզ: Մեր ժողովրդի առաջնորդները մոլորությանը հաճախ են մեզ մղել քաղաքական մուրացկանության: Իմացեք, մուրացիկին օգնում են զգվանքից: Մուրացիկին ու հաշմանդամին անկելանոց են տալիս, ոչ թե հայրենիք:*

*Ինչքան էլ դաշնակցի բազուկն ուժեղ լինի, ու դաշնակիցն էլ հովանավորի դեր ստանձնի, միեւնույն*

*է՛ ազգը պետք է ինքը տնօրինի իր բախտը: Ռուսական զենքի ու զորքի հետ կապված մեր ազգային սպառնանքն ու երազները ոչ միայն հօդս են ցնդել, այլև անարգ ոտխի արյան խրախճանքի պատճառ են դարձել... »:*

*«Վայ էն ազգին, որ չի հավատում իր վաղվա արեւին»:*

*«Հույսը կորցնելը կորստաբեր է, ինչպես ճակատամարտում կորցնես սուրդ: Վիատությունը փութացնում է անկումը: Իմացեք, հուսահատությունը տառապալանների կործանման գրավականն է»:*

Սերո Խանգադյանը գրոց ուժի հետ միասին զորական ուժն է կարելու: *«Գրոց ուժը չէ միայն հեռաւոյն. ամենից առաջ զորական կերտվածք եւ ուժ տվեք ձեր զավակներին»:*

*«Հայրենիքի զինվոր եղեք, հայրենիքին մատաղ»:*

Սերոպ Մաշտոցի շուրթերով ասում է. *«Ես գիր տվի ձեզ, որ լույս ունենաք ձեր տանն ու հոգում: Բայց կմարի լույսը, եթե դուք մոռանաք սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը՝ ձեզ պաշտպան, հիշեցեք»:*

Սերո Խանգադյանը պատգամում է՝ չհավատալ թուրքի երդումներին..., պետք է թշնամու հետ գործել *«ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»* սկզբունքով:

*«Պետք է ձեզ վարժեցնեն թշնամու արյուն թափելուն, տղաներ»:*

Սերո Խանգադյանը հայոց առաջնորդների արժանապատվության հարցն է բարձրացնում. ամենահզոր տերությունների առաջնորդների մոտ հայ իշխանն իրեն պետք է պահի արժանապատվորեն, առանց նվաստացումի...

Իսկ ազգին համախմբելու հարցում հետեւյալ կարծիքն էր՝ պետք է հենվել ոչ թե անհատների վրա, թեկուզ նրանք ամենագոր լինեն, այլ՝ համախումբ բռունցքի վրա:

Գարեգին Նժդեհի շուրթերով ասում է. *«Մեր ապագան կախված է ներկայից: Վաղն ազգովի պիտի հնձենք այն, ինչ սերմանում ենք այսօր»:* Իսկ հայոց դատը, ըստ գրողի, արդար լուծում կունենա: Մովսես Կաղանկատվացու հայտնի խոսքն է մտաբերում. *«Ճշմարտությունը չի կարող ծածկված մնալ, եւ լույսը՝ փակի տակ լինել»:*

## Սյունիք-Ձանգեզուրը՝ գրողի ներշնչանքի աղբյուր

Սերո Խանգադյանի համար հայրենիքը պետական-աշխարհագրական նեղ հասկացություն չէ: Հայրենիքն ամբողջ Հայաստանն է՝ պատմական իր տարածքներով: Եվ պատահական չէ, որ առիթ լինելու դեպքում ասում էր. *«Իմ ծննդավայրն ամբողջ Հայաստանն է»:* Դրա ապացույցը նրա գրական ողջ ժառանգությունն է: Անգամ հայրենի լեռնաշխարհին կամ իր կենսագրությանն առնչվող եւ վավերական հիմքեր ունեցող գործերում գեղարվեստական ընդհանրացումներ է անում՝ համազգային, համամարդկային կտրվածքով: Իսկ որոշ գործեր ուղղակի հաստատում են, որ գրողի ծննդա-



վայրն իրոք ամբողջ Հայաստանն է: «Հայրենապատում» մատյանը դրա վառ ապացույցն է: Գրքի տարբեր հատորներում կարելի է հանդիպել մեր հանրապետության ամեն մի բնակավայրի կենսագրության: «Հայրենապատումը», ինչպես նշում է Սուրեն Աղաբաբյանը, «...իր պատումներով ի մի է բերում, մի առանցքի շուրջ է համախմբում հայոց հայրենիքը՝ աշխարհագրությամբ, նյութական ու հոգեւոր իրողություններով, նրա պլեհեր պատմությամբ...»:

Հեթանոսական Հայաստանի գրեթե բոլոր գավառների վերաբերյալ պատումների ենք հանդիպում «Թագուհին հայոց» վեպում:

Բազում են այդ օրինակները:

Այդ բոլորով հանդերձ՝ գրողի փոքր հայրենիքը՝ Գորիսը, ու Սյունիք-Ջանգեզուր լեռնաշխարհն իրենց առանձնահատուկ կնիքն են թողել նրա ստեղծագործական աշխարհի եւ ազգային գործչի նրա կերպարի վրա:

Առհասարակ աշխարհագրական միջավայրը մեծ նշանակություն ունի գրողի ներաշխարհի կայացման հարցում: Այն մեծ ազդեցություն է թողնում գրողի հոգեկերտվածքի, աշխարհընկալման կերպի, ինչպես նաեւ բնությունը ճանաչելու, նրա հետ հաղորդակցվելու եւ ներդաշնակվելու, գեղեցիկն ընկալելու մոտեցումների վրա:

Սերո Խանգաղյանի աշխարհաճանաչողության հիմնական փուլը կայացել է իր հայրենի ծննդավայրում:

Դրա լավագույն վկան է «Մատյան եղելությանց» վեպը, որտեղ նա, ներկայացնելով պատերազմական ու հետպատերազմյան տարիների բարոյահոգեբանական մթնոլորտը Գորիսում, կերտել է հավերժական քանդակներ հիշեցնող կերպարներ: Վեպը, ըստ էության, Ա.Բակունցի «Կյորես»-ի շարունակությունն է:

Սերո Խանգաղյանի բավականին մեծ թվով պատմվածքները հայրենի եզերքում անցկացրած օրերի հետ աղերսներ ունեն կամ էլ կառուցված են իր հայրենակիցներից լսած պատմությունների, զրույցների հիման վրա:

Սյունյաց աշխարհի պատմության առանձին հերոսական ու ողբերգական դրվագներ եւս նրա ստեղծագործությունների թեմաներն են դարձել: Դրանք «Մխիթար Սպարապետ», «Շուշի», «Անդրամիկ», «Նժդեհ» վեպերն ու մի քանի այլ ստեղծագործություններն են:

Երկրամասի սոցիալ-տնտեսական ընթացքի որոշակի ուղագրավ իրողություններ նրա գրական ստեղծագործությունների համար սյուժեներ դարձան: Այդ առումով հիշատակության արժանի է «Քաջարան» վեպը:

Նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում կարելի է հանդիպել սյունիքյան պատկերների, առնչությունների: Նույնիսկ «Թագուհին հայոց» վեպում, որի իրադարձությունները տեղի են ունենում Ք.ա. 2-րդ հազարամյակում, Հայասա երկրի թագավորը՝ Կարանին, եւ Հայոց թագուհին՝ Մարի Լույսը, առնչվում են Արցախ աշխարհի, Վարարակն գետի հովտում ապ-

րող ցեղախմբերի հետ, որոնք դեռեւս քարայրներում էին բնակվում: Վեպում տեսնում ենք նաեւ Սիսական աշխարհի ցեղապետերից մեկի՝ Գեղամի դստերը: Մարի Լույսն ապրում է Սիսական աշխարհից ստացած տպավորություններով:

Սերո Խանգաղյանը մինչեւ կյանքի վերջ կապված մնաց իր բնաշխարհին: Իսկ եթե որոշ ժամանակով բացակայում էր Հայաստանից եւ Ջանգեզուր գալու հնարավորություն չէր ունենում, ապա չէր կարողանում թաքցնել կարոտը:

Այդ առումով ուղագրավ տողերի ենք հանդիպում 1965թ. Փարիզից Համո Սահյանին հղած մտերմական նամակում. «Ի՞նչ եղավ գյուղ գնալիդ: Գնա, Երեւանը չի փախչի, գնա: Հայրիկիդ մոտ երկար մնա, որ կարոտն առնի, մեղք է Սահակ դային: Երբ կարոտդ առնես, պրծնես, գնա Գորիս: Ցուրտ աղբյուրի քարը կհամբուրես, հետո կչոքես ու բռով մի կուշտ ջուր կխմես, «քարահունջ» էլ: Չափավոր: Ուխախ...»

Գորիս գնալիս մեր տանը կմնաս, մայրիկը մենակ է, թող նա էլ իմ կարոտն առնի քեզանից: Առավոտներն առանց նախաճաշելու տանից դուրս չգաս, մայրիկը կանհանգստանա: Երեկոները չուշանաս, մայրիկի քու-նը չի տանի:

Բարուն Տիգրանին անպատճառ կտեսնես, կհետաքրքրվես՝ թոշակն ավելացրի՞ն, թե՞ չէ:

Քարահունջ մտնելիս Ալբերտի վիճակն իմացիր, տես ինչ նոր բան է գրել:

Կուբեր ամուն ասա՝ թող մի հորովել երգի, ականջ արա...

Սեր հորովելը, թեւերը թափ տալով, եկել-մտել է Փարիզի դահլիճները:

Ականջը կանչի, Կուբեր ամի»:

Առհասարակ Սյունիք-Ջանգեզուրը գրողի անսպասելի ներշնչարանն էր:

Համո Սահյանը հիշում է, թե ինչպես Գորիսի գյուղերից մեկում Սերո Խանգաղյանը, ի պատասխան իր կենացի, խոսք ասաց. «Էն Իշխանասարի գլխի ամպը տեսե՞լ եք, որ անձրեւ է թափում, թեթեւանում, կանաց-կանաց գլորվելով գալիս մտնում ձորը, գետից ջուր խմում, գնում: Գնում է, որտեղ մի ցամաք ածու է տեսնում, թեւերը թափահարում է, վրան ջուր շաղ տալիս ու շարունակում ճանապարհը: Եղպես էլ ես: Հենց որ դատարկվում եմ, գալիս եմ էս ձորերը, լցվում եմ ձեր խոհ ու խոսքով, ձեր ծիծաղով, ձեր լավ-լավ երազներով... Էն ամպի պես էս ձորերից ջուր եմ առնում, որտեղ մի ծարավ, պապակ սիրտ եմ տեսնում, ջուր եմ տալիս, որ հովանա, զվարթանա: Սեր հողն ու իմ հոգին անբաժան են»:

Այդ տեսակետից ուղագրավ են Սերո Խանգաղյանի բանահավաքական պոպուլյուսները, որ 1940-ականներին հրատարակեց առանձին գրքով: Հետագայում՝ 1976-ին, հավաքված հեքիաթներն ու զրույցները հրատարակվեցին «Ավանդատուն» ժողովածուում:

Սյունյաց աշխարհի հեքիաթների մի փունջ հետագայում ընդգրկվեց հայկական ժողովրդական հեքիաթ-

ների բազմահատորյակի ակադեմիական հրատարակության մեջ:

Գրողն ամեն առիթ օգտագործում էր իր երկրամասի ծիսական ավանդույթներն ու երաժշտությունը նույնպես համաշխարհային հանրությանը ներկայացնելու համար:

1967թ. Ավետիս Մետունենցը ծրագրել էր Փարիզում «Մխիթար Սպարապետ» վեպի հիման վրա ստեղծել օպերա: Մետունենցի նամակներից իմանում ենք, որ Ս.Խանգադյանը նրան է ուղարկել Խնձորեսկի եւ ընդհանրապես Գորիսի շրջանի ժողովրդական երգեր, որոնք պետք է օգտագործվեին՝ ա) Մելիք Բարխուդարի ամրոցում տեղի ունեցող հարսանեկան հանդեսի ժամանակ, բ) Հալիձորի բերդում՝ Մխիթարի կողմից այն վերագրավելուց հետո:

### Ս.Խանգադյանի հասարակական-քաղաքական եւ ազգային գործունեությունից մի դրվագ

Նկատի ունենք Խորհրդային Միության ղեկավար Լեոնիդ Բրեժնեւիին հղած նամակները, որոնք առնչվում էին Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրին:

Առաջին նամակը գրվեց 1975թ. մայիսի 13-ին: Նամակի համար պատճառ եղավ կուսակցության Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Կելոկովի զեկուցումը մարզկոմի պլենումում: Կելոկովը, ճացիոնալիզմի դեմ պայքարի խնդրով սքողված, երկպառակություն է սերմանում մարզում: Ջեկուցումը տպագրվել էր «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1975թ. մարտի 23-ի համարում: Դրան հաջորդել են մարզի շրջանային թերթերի հրապարակումները:

Կելոկովի վարքագծի մասին Ս.Խանգադյանը հեռագիր է հղում Հեյդար Ալիևին, ով այդ ժամանակ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարն էր: Ալիևը չի պատասխանում գրողին: Սերո Խանգադյանն էլ նամակ է հղում ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնեւիին:

Ս.Խանգադյանն իր ասելիքն այսպես է ամփոփում. «Թե՛ ազգային, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական նկատառումներով, Ղարաբաղի Հայկական Ինքնավար Մարզը պետք է մտնի Հայկական Հանրապետության կազմի մեջ»:

Երկրորդ նամակը գրվեց 1977թ. հուլիսին: Նամակը նորից ուղղված էր ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնեւիին:

Նոր նամակի պատճառը «Ի՞՞՞՞՞՞՞ ընդհանրապես անսագրի 1977թ. թիվ 6-ում հրապարակված մի հոդված էր, որում խոսվում է Ղարաբաղի մասին, աղավաղվում Ղարաբաղի պատմությունը:

32 լեզվով եւ աշխարհի 145 երկրում տարածվող պարբերականի հրապարակումը ստիպում է Սերո Խանգադյանին կրկին դիմել ԽՍՀՄ ղեկավարին՝ պա-

հանջելով. «Մեր միասնական հզոր պետության սահմաններում գտնվող զուտ հայկական մարզը, ավելի քան 80 տոկոս հայկական բնակչությամբ, հայկական դպրոցներով, պետական հայերեն լեզվով, պետք է գտնվի Խորհրդային Սոցիալիստական Հայաստանի կազմում»:

Եվ քանի որ «Ի՞՞՞՞՞՞ ընդհանրապես անսագրի տպագրվում էր Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրահայում, Ս.Խանգադյանը նամակ է հղում նաեւ այդ երկրի ղեկավար Գուստավ Հուսակին՝ գրելով. «...Համոզված եմ, որ շուտ թե ուշ, Ղարաբաղյան հարցը պետք է որոշվի: Հի կարելի հանդուրժել այն, որ Հայկական Ինքնավար Մարզն անջատված է իր մայր հայրենիքից»:

Նամակում Ս.Խանգադյանը ներկայացնում է նաեւ Նախիջեւանի վիճակը:

Ս.Խանգադյանը նամակ է գրում «Ի՞՞՞՞՞՞ ընդհանրապես անսագրի տպագրված հոդվածի հեղինակներին՝ Հնդկաստանի կոմկուսակցության ազգային խորհրդի անդամ Սարադա Միթրային եւ Իրաքի կոմկուսակցության անդամ Ադել Խաբային, ինչպես եւ անսագրի խմբագրական կոլեգիային, ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ Եվգենի Տյաժեւինկովին:

Ղարաբաղյան հիմնախնդրով Ս.Խանգադյանը 1985թ. նամակ է ուղարկում ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին: Նամակն ամփոփվում է այսպիսի նախադասությամբ. «Իբրեւ կոմունիստ, ով իր կուստոմը ստացել է ռազմաճակատում, թախանձագին խնդրում եմ Լեոնային Ղարաբաղի ու Նախիջեւանի հարցը դնել ԽՄԿԿ կենտկոմի քաղաքականության եւ Լեոնային Ղարաբաղն ու Նախիջեւանը վերադարձնել Հայաստանին»:

Թե ինչ ընթացք է արձագանք են ունեցել այդ նամակները, խոսակցության առանձին նյութ է: Ակնհայտ է մի բան՝ նամակներից յուրաքանչյուրը եւ հատկապես 1975 ու 1977թթ. նամակներն աննախադեպ երեւոյթ էին խորհրդային կարգերի պայմաններում եւ Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ տասնամյակներ շարունակ տեւող պայքարում:

Իսկ Ղարաբաղի խնդրի շուրջ Ս.Խանգադյանի գործունեության մասին ավելի հանգամանալից ծանոթանալու հնարավորություն ենք ստանում իր իսկ հեղինակած վերջին գրքից՝ «Ղարաբաղը կրակների մեջ»:

### Համարի ստեղծման նախապատմությունը

Սյունյաց աշխարհի մեծերին նվիրված հատուկ համարներ թողարկելիս, ամեն անգամ, ամենատարբեր լսարաններում միեւնույն հարցն էր ուղղվում մեզ՝ իսկ ե՞րբ է «Սյունյաց երկիրը» հատուկ համար նվիրելու Սերո Խանգադյանին:

...2014թ. ապրիլ ամիսն էր, Սուրեն Խաչատրյանի հետ (այդ ժամանակ Սյունիքի մարզպետ չէր) քննարկում էինք Համո Սահյանի 100-ամյակին նվիրված միջոցառումների ընթացքը: Անդրադառնալով կատար-

վածին ու անելիքներին՝ հիշեցինք նաեւ, որ մեկուկես տարի հետո էլ Սերո Խանգաղյանի 100-ամյակն է լրանում: Եվ որոշեցինք «Սյունյաց երկրի» հատուկ համար նվիրել նաեւ մեր արծակի 20-րդ դարի երկրորդ կեսի նահապետին:

Այդ ժամանակ էլ Սուրեն Խաչատրյանը ստանձնեց համարի նախապատրաստական աշխատանքների եւ հրատարակման ծախսերի ֆինանսավորումը:

Հունիսի 27-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական անձնակազմը (Սամվել Ալեքսանյան, Վահրամ Օրբելյան, Արմինե Հարությունյան, Նուբար Դավթյան) արդեն Երեւանում էր: Սերո Խանգաղյանի հարազատներին հանդիպելով, յուրաքանչյուրի անձնական արխիվին ծանոթանալով՝ սկսեցինք համարի նախապատրաստական աշխատանքը:

Իսկ Գորիսում, Յուրի Ջավահիրյանի, Ռեդիկ Հայրապետյանի եւ Յուրի Ալեքսանյանի ուղեկցությամբ, հանդիպումներ ունեցանք գրողի հարազատների, մերձավորների հետ:

Ավա՞ղ, Յուրի Ալեքսանյանը հիմա չկա, բայց առաջինը նրա հետ այցելեցինք Սերո Խանգաղյանի քրոջ՝ տիկին Արաքսյայի բնակարան, եւ օջախի հարսի՝ Անգին Տատինցյանի կամեցողությամբ եւ օգնությամբ ծանոթացանք ընտանիքի լուսանկարների ալբոմին, գրադարանին, Ս.Խանգաղյանի հետ կապված հիշողություններին:

Եվ նման բազում հանդիպումներ...

Համարի ծրագրման ու նախապատրաստական աշխատանքներին, ինչպես միշտ, աջակցում էր Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանը:

Մեկ-մեկուկես տարվա ընթացքում հսկայածավալ աշխատանք կատարվեց համարի նախապատրաստման ուղղությամբ: Սակայն, հասկանալի պատճառով, ոչ բոլոր նյութերը կարող ենք զետեղել համարում:

Որոնք են, ըստ մեզ, կատարված աշխատանքի հիմնական արդյունքները եւ ինչով ենք ներկայանում ընթերցողին:

Նախ՝ թերթի սույն համարով արտահայտում ենք սյունեցիների սերն ու հարգանքը հայ արծակի նշանավոր դեմքերից մեկի՝ Սյունյաց աշխարհի տաղանդավոր զավակ Սերո Խանգաղյանի հանդեպ:

Այնուհետեւ, հայ ընթերցողին եւ հատկապես նոր սերնդին յուրօրինակ հնարավորություն ենք ընձեռում մեկ անգամ եւս առնչվելու մեծ արծակագրի գրական ժառանգությանը, կյանքի ուղուն: Մարզի հանրակրթական դպրոցներում անցկացված շարադրությունների մրցույթն էլ առիթ էր, որ դպրոցականները նույնպես ծանոթանան գրողի մանկապատանեկան (եւ ոչ միայն) ստեղծագործություններին: Դա հնարավոր դարձավ Սյունիքի մարզպետարանի կրթության եւ մշակույթի վարչության (պետ՝ Հովիկ Ալեքսանյան) օգնությամբ:

Ամենազխավորը՝ հաջողվեց նոր հայացք ձգել Սերո Խանգաղյանի գրական ժառանգությանը եւ արդիականության, մեր ազգային արժեքային համակարգի դիրքերից վերագնահատել այն:

Ծնվեցին ուշագրավ նյութեր, որոնք տեղ են գտել համարում: Ահավասիկ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի հետ Վահրամ Օրբելյանի հարցազրույցը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի հոդվածը՝ «Սերո Խանգաղյանը մեծ անհատականություն է», ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի հոդվածը՝ ««Մխիթար Սպարապետ» պատմավեպի վավերականությունը», բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանի հոդվածը՝ «Եղեռնապատումի հերոսական էջերը», բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Ս.Աբելյանի անվան գրականության ինստիտուտի հայ նորագույն գրականության բաժնի վարիչ Սուրեն Աբրահամյանի հոդվածը՝ «Սերո Խանգաղյանի պատմվածքները», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայ գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Վահան Աղաբաբյանի հոդվածը՝ «Մ.Մաշտոցի կերպարը Ս.Խանգաղյանի «Վարք հարանց» շարքում», ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Արմենուհի Արզումանյանի հոդվածը՝ «Հայոց լինելիության խորհուրդը Սերո Խանգաղյանի «Խոսք, Հայաստանի լեռներ» վեպում» եւ այլն:

Կարեւորեցինք Ակսել Բակունց-Սերո Խանգաղյան գրական աղերսակցությունները: Եվ դա, կարծում ենք, հաջողվեց վերհանել բանասիրական գիտությունների թեկնածու Սաթենիկ Ավետիսյանի (Ակսել Բակունց եւ Սերո Խանգաղյան. ավանդներ եւ նորարարություն), Վահան Աղաբաբյանի (Ա.Բակունց-Ս.Խանգաղյան. գրական աղերսակցությունների փորձ) օգնությամբ:

Նորովի արժեւորման կարիք ունեին Սերո Խանգաղյանի վերջին շրջանի ստեղծագործությունները. նկատի ունենք «Անդրանիկ», «Նժդեհ», «Շուշի» վեպերը:

Իհարկե, ընթերցողի սեղանին էին Սեւակ Արզումանյանի կարծիքը, Ջոն Կիրակոսյանի խոսքը «Անդրանիկ» վեպի մասին եւ այլ գրախոսություններ: Բայց դրանց ավելացան ճանաչված գրականագետ Աբգար Ավինյանի եւ Հայկանուշ Դավթյանի հոդվածները:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մելինե Գիլավյանի աջակցությամբ էլ փորձեցինք ներկայացնել Սերո Խանգաղյանի մանկապատանեկան արձակը:

Վերը նշված հոդվածները, հարցազրույցը յուրովի լրացրին Սերո Խանգաղյանի եւ նրա գրական ժառանգության մասին նշանավոր հայորդիների, գրական հեղինակությունների, այլազգի գրողների խոսքերը՝ ասված տասնամյակներ առաջ. դրանց մի մասը նույնպես տեղ է գտել համարում:

Տարիների հեռվից բանավեճ ծավալեցինք գրողի կենսագրության մի խճճված հարցի շուրջ՝ «Սերո Խանգաղյանը եւ Հայ գրողների միավորման ստեղծումը»: Իրենց կարծիքներն արտահայտեցին Դավիթ Գասպարյանը, Երեւանի գրողների միության նախագահ Աբգար Ավինյանը, Հայաստանի գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը, Հայ գրողների միավորման

նախագահ Պայծառ Չանյանը:

Առաջին անգամ փորձեցինք ի մի բերել Սերո Խանգադյանի նամակները եւ մի փունջ ներկայացնում ենք ընթերցողին: Այդ գործում մեզ հատկապես աջակցեց Հայաստանի ազգային արխիվի բաժանմունքի վարիչ Մարինե Մարտիրոսյանը:

Վերջինիս օգնությամբ ծանոթացանք նաեւ Հայաստանի ազգային արխիվում Սերո Խանգադյանին առնչվող նյութերին:

Ի մի ենք բերել Սերո Խանգադյանին նվիրված բանաստեղծությունները, եւ դրանք նույնպես ներկայացնում ենք ընթերցողին:

Ծնվել է հուշագրությունների մի ամբողջ շարք, որի մի մասը ներկայացնում ենք ընթերցողին:

Համարի նախապատրաստության ընթացքում, ինչպես նշվեց, հանդիպեցինք գրողի հարազատների հետ եւ նրանց օգնությամբ ներկայացնում ենք Խնձատին տոհմը, որի զավակն է Սերո Խանգադյանը:

Սերո Խանգադյանը եւ կինոարվեստն ու թատրոնը այդ թեման նույնպես կարեւորել ենք եւ ընդգրկել համարում:

Տեղեկություններ ենք հավաքել Սերո Խանգադյանին առնչվող տեսանյութերի մասին:

Հայաստանի հանրային ռադիոյի մշակութային ծրագրերի ղեկավար Օֆելյա Ասատրյանն էլ ներկայացնում է այն նյութերի ցանկը, որ առկա է հանրային ռադիոյի պահոցներում:

Համարն ամբողջական չէր լինի, եթե չներկայացնեինք գրողի մատենագիտությունը. դրանում մեզ օգնեց Հայաստանի ազգային գրադարանը: Խոսքը բանասիրական գիտությունների թեկնածու Թելուս Պետրոսյանի ձեռնարկի մասին է՝ «Սերո Խանգադյան. մատենագիտություն» (Երեւան, 1992):

## Մի քանի խնդիրների մասին

Սերո Խանգադյանի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության հենց սկզբնական փուլում ակնհայտ դարձավ, որ գրողի հիշատակի հավերժացման, նրա գրական ժառանգության տարածման, այդ ժառանգության նորովի արժեւորման ուղղությամբ լուրջ անելիքներ ունենք:

Խնդիրները կարելի է բաժանել հետեւյալ խմբերի:

### **Առաջին՝ ամբողջացնել եւ ավարտին հասցնել գրողի հիշատակի հավերժացումը:**

Նկատի ունենք եւ գրողի առանձնատների հիմնանորոգումն ու դրանց նպատակային օգտագործումը, եւ գործիչի ու երեւանյան շենքերի վրա (որտեղ բնակվել է) հուշատախտակ փակցնելը, եւ մայրաքաղաքում նրա անվամբ փողոց կոչելը, եւ Երեւանում գրողի հու-

շարժան կանգնեցնելը, եւ Երեւանի N184 ավագ դպրոցի բակում Ս.Խանգադյանի կիսանդրու տեղադրումը:

Հիշատակի հավերժացման հարցը քննարկելիս արժեք վերադառնալ ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 29-ի N791 որոշմանը:

### **Երկրորդ՝ հրատարակչական անելիքներ:**

Նկատի ունենք, նախեւառաջ, Սերո Խանգադյանի «Հայրենապատում» վիպասքի վերջին երեք հատորի տպագրությունը (յոթ հատորից մինչեւ հիմա տպագրվել է չորսը) եւ մյուս անտիպ գործերն առհասարակ, որոնք հիմա ցաքուցրիվ վիճակում են եւ կարող են անհետանալ:

Նկատի ունենք գրողի հողվածները, հարցազրույցները, ելույթները, նամակները. նա միշտ էլ հանդես է եկել հողվածներով, հարցազրույցներով, ելույթներով, նամակագրությամբ, բայց երբեք դրանք ի մի չեն բերվել ու չեն հրատարակվել:

Նկատի ունենք գրողի վերջին՝ «Ղարաբաղը կրակների մեջ» գրքի վերահրատարակումը, որը լույս է տեսել 2006-ին 500 օրինակ տպաքանակով եւ չի հասել ընթերցողների լայն շրջանին:

Եվ, իհարկե, արժեք մտածել Ս.Խանգադյանի ստեղծագործությունների ընտրանու հատորյակների հրատարակման մասին՝ հատորյակներում ընդգրկելով, օրինակ, «Մխիթար Սպարապետ» պատմավեպը, «Թագուհին հայոց» եւ «Մատյան եղելությանց» վեպերը, նրա լավագույն պատմվածքները:

**Երրորդ՝ Սերո Խանգադյանի ստեղծագործական ժառանգության իրատեսական գնահատում եւ արժեւորում:** Դրա համար անհրաժեշտ կլինեն գիտական հողվածներ կամ գրականագիտական ուսումնասիրություններ: Գնահատման եւ արժեւորման կարիք ունեն հատկապես գրողի վերջին շրջանի գործերը՝ «Շուշի», «Անդրանիկ», «Նժդեհ» վեպերը, պատմվածքները, ինչպես եւ «Հայրենապատում» շարքը:

Գրականագիտական ուսումնասիրության առարկա կարող են դառնալ նաեւ այլ թեմաներ, որոնք մինչեւ հիմա ուշադրությունից դուրս են եղել կամ ուսումնասիրվել են չափազանց մակերեսային: Օրինակ, Ս.Խանգադյանի մանկապատանեկան արձակը, հրապարակախոսությունը, գրականության վերաբերյալ նրա պատկերացումները, Ղարաբաղյան շարժման հետ առնչությունները, բանահավաքչության ոլորտում կատարած աշխատանքները, գրողի լեզուն եւ ոճը, գրողի բանավիճային հողվածները, հասարակական-քաղաքական եւ ազգային գործունեությունը, Ակսել Բակունց-Սերո Խանգադյան տիպաբանական առնչությունները...

**Չորրորդ՝ ինչպես Սերգեյ Սարինյանն է գրում. «Ես այն կարծիքին եմ, որ Խանգադյանական որոշ երկեր անպայման դասազրքային պիտի դառնան»:**



# ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնեվին

Ղարաբաղի Մարզկոմի առաջին քարտուղար Կելորկովի զեկուցումից հետո, որը, նա-ցիոնալիզմի դեմ պայքարի անունով սքողված, երկպառակություն է սերմանում Ինքնավար Մարզում, ես վճռեցի հեռագրել ընկեր Ալիեվին, այն մասին, որ Կելորկովի զեկուցումը շատ տեղեր կրում է բացարձակ պրոպագանդա բնույթ, ոչնչով չի նպաստում հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամությանը: Այդ օրից անցել է արդեն ամիսուկես, ես պատասխան չեմ ստացել իմ հեռագրին, իսկ այդ զեկուցման հակահայ, վնասակար եւ վտանգավոր գործունեությունը համառորեն շարունակվում է տարածվել: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1975 թվականի 23-ին մարտի տպագրել է այդ զեկուցումը: Ապա նաեւ, դրանից հետո մարզի շրջանների բոլոր թերթերը ամիսուկես շարունակ նյութեր են տպագրում, որոնց մեջ բորբոքվում է նույն այդ վտանգավոր կրակը: Սա վկայում է այն մասին, որ խախտվում են կոմունիստական բարոյականության եւ լեւինյան ազգային քաղաքականության բոլոր սկզբունքները:

Պատահական չէ, որ օսմանյան իմպերիալիզմի ձեռքով կատարված հայերի ցեղասպանության հիշատակի օրը, աշխարհի հայկական թերթերից միակը «Խորհրդային Ղարաբաղն» էր, որը թեկուզ կես բերան, թեկուզ մեկ բառով բան չասաց այդ համաժողովրդական ողբերգության մասին: Եվ սա այն օրերին, երբ խորհրդային մամուլը, այդ թվում «Պրավդան», «Իզվեստիան», «ՏԱՍՍ»-ը իրենց հրապարակումներում հարգեցին մեծ ջարդի 60-ամյակի սգո օրը, դատապարտեցին թուրքական իմպերիալիզմը, իբրեւ ցեղասպանության,

իրբեւ մարդկության դեմ կատարված ու կատարվող այդ ոճրագործությունների գլխավոր հեղինակի: Ընդհակառակը, հենց այդ օրը, ապրիլի 24-ին, «Խորհրդային Ղարաբաղ» թերթն իր էջերում նյութ տպագրեց մարզի պրոֆմիության պլենումի մասին, որի մեջ, չես հասկանում ինչ իրավունքով, վիճարկվում է Ղարաբաղի հարցը, այն, որ, իբր, Ղարաբաղը Հայաստանին չի պատկանել: Անհասկանալի է նաեւ, թե ինչպես



Սերո Խանգաղյան  
13 մայիսի 1975թ., ք. Երևան

է շատ կարճ ժամանակվա ընթացքում անցկացվել մի հապշտապ կոմպանիա, որը այլ կերպ չես անվանի, քան կեղծ հանրաքվե, քանի որ զանազան կազմակերպությունների ապօրինի ու գաղտնի ժողովների արձանագրությունները եւ որոշումները հրապարակվել են մարզային ու շրջանային թերթերում, ապա հարց է առաջանում՝ այդ ամենը չի՞ արվել Ղարաբաղի տասնյակ հազարավոր բնակիչների կամքի դեմ, որոնք մի քանի տարի առաջ իրենց ստորագրություններն են ուղարկել Մոսկվա, խնդրելով Հայկական Ղարաբաղի մարզը վերադարձնել Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը: Արդյոք սա չի՞ նշանակում, որ մարզի ղեկավարությունը դրանով ձգտում է մերժել, սրբել, վերացնել ժողովրդի արդար կամքն ու պահանջը:

Թե՛ ազգային, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական նկատառումներով, Ղարաբաղի Հայկական Ինքնավար Մարզը պետք է մտնի Հայկական Հանրապետության կազմի մեջ: Հենց սրանից էլ զայրացուցիչ է այն փաստը, որ մարզկոմի առաջին քարտուղարը ինքնազ-

լուխ վճռել է իր կամեցողությամբ սահմանել Ղարաբաղի պատկանելության հարցը: Ո՞վ է նրան լիազորել նման բան: Եվ քանի որ նա կատարել է այդ ապօրինի քայլը, այն էլ պլենումում, մամուլում, ուստի անհրաժեշտ է նորից անդրադառնալ այդ հարցին:

Իբրեւ կոմունիստ, իբրեւ բազմաթիվ գրքերի հեղինակ, որոնց մեջ ես ներկայացնում եմ ժողովուրդների բարեկամությունը եւս, ես խորապես համոզված եմ, որ հենց խորհրդային պետության ստեղծման առաջին օրերից օրակարգի մեջ մտած Ղարաբաղի հարցը կլուծվի, այն կվերադարձվի Հայկ. ԽՍՀ-ին, դրանով ավելի կամրապնդվի հայ եւ ադրբեջանական ժողովուրդների միջեւ եղած բարեկամությունը, ինչ-որ չափով կբարձրացվի մեր սոցիալիստական կարգերի վարկաբեկված հեղինակությունը:

# ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնեվին

Թանկահին Լեոնիդ Իլյիչ Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական մարտյան պլենումում (1975թ.) ամեն ինչ արվեց, որպեսզի ցեխին հավասարեցվի Սոցիալիստական Հայաստանի անունն ու ազգային արժանապատվությունը: Բանը հասավ այնպիսի սրբապղծության, որ երիտասարդ Խորհրդային Ռուսաստանի կատաղի թշնամուն, միլիոնավոր հայերի, ռուսների, հույների, բուլղարացիների, ասորացիների ոչնչացնողին՝ Թալեսթ փաշային, մեր խորհրդային մամուլում («Խորհրդային Ղարաբաղ» 23 մարտի 1975թ.) անվանեցին ընդամենը «տիպիկ անձնավորություն»: Այդպիսի գնահատական տրվեց բազմաթիվ ժողովուրդների թշնամուն,

օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության կազմակերպողին ու ռզելերողին:

Այդ նույն ժամանակ, իրենց մարդկային ու ազգային զգացմունքները վիրավորված խորհրդային Չայաստանի բազմաթիվ ներկայացուցիչներ վրդովված դիմեցին անձամբ Ձեզ ու այլ ինստանցիաների, համառորեն խնդրելով դատապարտել Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարների գործողություններն ու պատժել մեղավորներին: Եվ, ինչպես հայտնի դարձավ մեզ, խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ընդամենը ի ցույց էր դրել ինքնավար մարզի կուսակցական կազմակերպությանը՝ թույլ տված սխալների համար:

Սակայն որքան մեծ եղավ համընդհանուր զարմանքը, երբ նորից, այսօր, «İ di âedâi ü i edâ è nî öedâeëçî â» աշխարհիս ամենամասսայական ամսագրում (1977թ., թիվ 6), որը համարվում է մոլորակի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների տեսական ու ինֆորմացիոն հրատարակչություն, լույս է տեսնում 32 լեզուներով ու տարածվում աշխարհի 145 երկրներում, խոսվում է Ղարաբաղի տեղի մասին... Ամսագրի միանգամայն բնական հարցին՝ «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղը գտնվում է Ադրբեջանի կազմի մեջ եւ ոչ թե խորհրդային Չայաստանի, որից այն բաժանված է միայն հողի նեղ շերտով», պատասխանում են, որ թեև հայկական ինքնավար մարզը մոտիկ է Չայկական Չանրապետությանը, սակայն նրանք, իբր, բաժանված են բարձր սարերով: Նման բնորոշումը, թույլ տվեք ասել, ոչ միայն անհեթեթ է տեխնիկայի մեր դարում, այլև անճիշտ:

Դարերի ընթացքում երբեք Ղարաբաղի հայկական պատմական մարզը մայր Չայաստանից բաժանված չի եղել: Այն հարցին, թե արդյոք բոլորն են գիտակցաբար ընդունել այն փաստը, որ պատմական հայկական մարզը կտրված է մայր Չայաստանից, եւ մտցված նոր գոյացած Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ, պատասխանում են հետեյալ կերպ. «Եղան մարդիկ, որոնք հայտարարեցին. «Թող ես վատ ապրեմ, բայց կապված լինեմ Չայաստանի

հետ»»:

Ինչ կա որ, եթե այդ արտահայտության մեջ «Չայաստան» բառը փոխարինենք «հայրենիք» բառով, ապա կարծում եմ, որ դա կասեր արժանապատվություն ունեցող յուրաքանչյուր մարդ, ով սիրում է իր հայրենիքը: Ամեն մարդ հպարտությամբ կարող է հայտարարել, որ նա իր հայրենիքը չի ընտրել եւ, որ նա համաձայն է ամեն վիճակի, միայն թե իր հայրենիքի հետ լինի: Այո՝ «թող ես վատ ապրեմ, բայց Չայաստանի հետ լինեմ»: Սա Ղարաբաղի կամքն է, ղարաբաղցի հայի իղձը:

Ես խորապես համոզված եմ, որ «İ di âedâi ü i edâ è nî öedâeëçî â» ամսագրի խմբագրական կոլեգիային, որի մեջ մտնում են 53 երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչներ, նաեւ այդտեղ հրապարակված «Մենք տեսանք ազգերի եղբայրությունը» հոդվածի հարգելի հեղինակներին մոլորության մեջ են գցել: Մի բան է միայն անհասկանալի, ո՞ւմ է ձեռնտու այդպես բացեիբաց պրոպագանդել մեր երկրին ու մեր հասարակարգին խորթ պանիսլամական գաղափարները:

Ինչպես կարելի էր այն օրերին, երբ քննարկվում էր ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագիծը, 32 լեզուներով գրել ու աշխարհի 145 երկրներում տարածել, թե «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը պետականություն է ձեռք բերել Ադրբեջանում ու այդ բախտը ընդունել է կամովին»: Դա պատմական իրականության կոպիտ աղավաղում է, կրկնապատիկ խեղաթյուրում:

Նախ՝ Լեռնային Ղարաբաղը միշտ էլ պատկանելիս է եղել Չայաստանին, նրա մի անբաժան մասն է, որտեղ դեռևս 280 տարի առաջ, առաջին անգամ սկիզբ դրվեց հայերի ռուսական օրինատացիային: Չայ ժողովուրդը հասկացությունը միասնական է, ամբողջական, ինչպես ռուս ժողովուրդը, ինչպես ուկրաինական ժողովուրդը:

Երկրորդ՝ Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչությունը (1920-ական թվականներին ողջ բնակչության 94 տոկոսն էր) երբեք կամովին չի ընդունել այսօրվա «բախտը», ըստ որի, իրականում կտրված է իր հայրենիքից: Նման

«բախտը» ինքնին անարդար է, որը պետք է լիկվիդացվի-վերացվի, որովհետեւ ինչպես Լեռնին է ասել. «Ոչինչ այնպես չի խաթարում պրոլետարական դասակարգային համերաշխության զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես ազգային անարդարությունը»:

Թանկագին Լեոնիդ Իլյիչ Ամբողջ հույսը Ձեզ վրա է, որ Դուք կվճռեք վերջապես մի հարց, որը ավելի քան կես դար անարդարություն է մարմնավորում:

Մեր միասնական հզոր պետության սահմաններում գտնվող զուտ հայկական մարզը, ավելի քան 80 տոկոս հայկական բնակչությամբ, հայկական դպրոցներով, պետական հայերեն լեզվով պետք է գտնվի խորհրդային Սոցիալիստական Չայաստանի կազմում:

Այս Չարցի արդարացի լուծումը կգնահատվի որպես ազգային քաղաքականության հաղթանակ:

**Սերո Խանզադյան**  
1977թ. հուլիս

## Չեխոսլովակիայի կոմկուսակցության Կենտրոնի առաջին քարտուղար ընկեր Գուստավ Յուսակին



**Ս**եծարգո ընկեր Գուստավ Յուսակ. Ձեզ են դիմում, քանի որ

«Մի ձեռքով չես կարող բռնել թռչունը»  
ամսագիրը, որի մի հոդվածի մասին է  
իմ խոսքը, հրատարակվում է Պրագա-  
յուն: Ձեզ եմ ուղարկում ԽՄԿԿ Կենտ-  
կոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ  
Գերագույն Խորհրդի նախագահության  
նախագահ ընկեր Բրեժնևեին հղած  
նամակիս մի օրինակը: Դա կարդալով,  
Դուք կըմբռնեք իմ անհանգստության  
դրդապատճառները:

Պրագայուն տպագրվող «Մի ձեռ-  
ով չես կարող բռնել թռչունը»  
(1977թ., N6) հրատարակել է «Մենք  
տեսանք ազգերի եղբայրությունը» ռե-  
պորտաժը... Գոյվածի մեջ, շատ բանե-  
րի հետ, ասվում է, թե հայկական Լեռ-  
նային Ղարաբաղի Ինքնավար Մարզը  
իր ճակատագիրը կապել է Ադրբեջանի  
հետ, նրան միավորվելը կամավոր է  
հանձն առել: Եվ ահա նման լրբություն-  
ը տպագրել է կոմունիստական ամսա-  
գիրը: Ինչպե՞ս կարող էր հայկական  
մարզի հայ բնակչությունը ընտրել իր  
բախտի ճանապարհը մի ձեռով, որ իրեն  
կտրեր իր հայրենիքից՝ Խորհրդային  
Չայաստանից, որ հենց իր կողքին էր:  
Ամսագրում խոսվում է նաև Նախի-  
ջևանի Ինքնավար Չանրապետության  
մասին, որ մտնում է Ադրբեջանի կազ-  
մի մեջ: Եվ ոչ ոք չի փորձում մտածել  
այն մասին, թե ինչու այդ ինքնավար  
հանրապետության բնակչության 1926  
թվականին 40 տոկոս բնիկ հայերից  
այժմ մեկուկես-երկու տոկոսն է մնացել:  
Նման տխուր ճակատագիրը սպասվում  
է նաև Չայկական Լեռնային Ղարա-  
բաղին՝ հնադարյան հայ հողին, որից  
է առաջինը ծագել հայերիս ռուսական  
կողմնորոշումը:

Իբրև կոմունիստ, որ կուսակցու-  
թյան մեջ է մտել 1942-ի մայիսին, Վոլ-  
խովի ռազմաճակատի խրամատնե-  
րում, հանդգնած եմ, որ շուտ թե ուշ,  
Ղարաբաղյան հարցը պետք է որոշվի:  
Չի կարելի հանդուրժել այն, որ Չայկա-  
կան Ինքնավար Մարզն անջատված է  
իր մայր հայրենիքից:

**Սերո Խանզադյան**  
1977թ. հունիս

### Չնդկաստանի

## Կոմկուսակցության Ազգային խորհրդի անդամ ընկեր Սարադա Միթրային

**Օ** անոթամալու համար Ձեզ եմ  
ուղարկում ԽՄԿԿ Կենտկոմի  
գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ  
Գերագույն Խորհրդի նախագահության  
նախագահ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժ-  
նևեին իմ գրած նամակը: Ես կարծում  
եմ Դուք եւ Ձեր կոլեգա՝ Իրաքի Կոմկու-  
սակցության Կենտկոմի անդամ ընկեր  
Ադել Խաբան, գրելով «Մենք տեսանք  
ազգերի եղբայրությունը» համատեղ  
հոդվածը եւ դա տպագրելով «Մի ձեռ-  
ով չես կարող բռնել թռչունը» հանդեսում,  
ընկել եք մոլորության մեջ՝ Լեռնային  
Ղարաբաղի այսօրվա դրության առն-  
չությամբ: Մի՞թե պարզ չէր Ղարաբաղի  
պրոբլեմի առկա վիճակը ձեզ համար:  
Մի՞թե պարզ չէ այն անհեթեթույն-  
ը, որ հայկական ինքնավար մարզը  
գտնվում է այլ հանրապետության կազ-  
մում, այն էլ այն դեպքում, երբ մարզի  
կողքին է Չայկական միութենական  
հանրապետությունը: Գիտե՞ք, հարգելի  
ընկեր Սարադա Միթրա, այն, որ Լեռ-  
նային Ղարաբաղի հայ բնակչությունը  
(80 տոկոս) զրկված է նույնիսկ դիտելու  
Խորհրդային Չայաստանի հեռուստա-  
հաղորդումները: Գիտե՞ք, որ Լեռնային  
Ղարաբաղի հայկական դպրոցները  
երեսնում հրատարակված հայկական  
գրքերը ստանում են անպայման Բաքվի  
միջոցով, որով եւս ստեղծվում են բազ-  
մաթիվ անհարմարություններ ու խոչըն-  
դոտներ: Իսկ չէ՞ որ Լեռնային Ղարաբա-  
ղում գործում են մոտ 200 հայկական  
դպրոցներ, այն դեպքում, երբ ադրբե-  
ջանական դպրոցները մարզում տասն  
են: Ինչպե՞ս կարելի է այս ու նման վի-  
ճակը տեսնելով, գրել, թե Լեռնային Ղա-  
րաբաղը իր ուղին ընտրել է կամովին:

Մենք Լեռնային Ղարաբաղի ու  
Խորհրդային Չայաստանի կոմունիստ-  
ներս, ձեր ռեպորտաժը համարում ենք

կեղծիք: Որպեսզի նման թյուրիմացու-  
թյուններ այլևս չկրկնվեն, մենք դրա  
միակ միջոցը գտնում ենք մի բանում՝  
Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մար-  
զը վերամիավորել Խորհրդային Չա-  
յաստանի հետ: Ուրիշ ոչինչ:

**Սերո Խանզադյան**  
1977թ. հունիս

## «Մի ձեռքով չես կարող բռնել թռչունը» ամսագրի խմբագրությանը

**Խ** մբագրական կոլեգայի  
հարգելի անդամներ  
Ինքներդ դատեցեք՝ մի՞թե  
անհեթեթություն չէ այն, որ հայկական  
ինքնավար մարզը չի մտել Չայկա-  
կան Չանրապետության կազմի մեջ...  
ամենքի համար կա մի պարզ ճշմար-  
տություն՝ որեւէ ժողովրդի զանգվածա-  
յին հատվածը պետք է այդ ժողովրդի  
հետ լինի, որեւէ ժողովրդի պատմական



հայրենիքի մասը նրա հայրենիքի կազ-  
մի մեջ պետք է լինի...

Ձեր ամսագրում գրում եք, թե հայ ժո-  
ղովրդի Ղարաբաղյան հատվածը կամ-  
վին է մտել Ադրբեջանի կազմի մեջ: Սա  
սուտ է, կեղծիք է: Լեռնային Ղարաբա-  
ղը Ադրբեջանին է հանձնվել ապօրինի,  
բռնությամբ, առանց ժողովրդի կամ-  
քը բանի տեղ դնելու: Դուք գիտե՞ք, որ



Լեռնային Ղարաբաղում տասը տարի առաջ հանրաքվե է կատարվել եւ մարզի ողջ տարեց բնակչությունը պահանջել է մարզը միավորել Հայաստանին:

Ձեր հրապարակած ռեպորտաժի շատ եզրակացություններ ու վկայություններ պարզապես հրեշավոր են: Դուք մի ամբողջ ժողովրդի ամենից սրբազան զգացմունքներն եք վիրավորել... Սրբապղծություն է, երբ դուք գրել եք, թե Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը կամավոր կերպով է ընտրել իր ինքնուրույնությունը Ադրբեջանի կազմի մեջ դնելը: Սա, նուրբ ասած, խաբեություն է:

Եվ քանի որ ամսագիրը դրել է «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի կազմում չէ» հարցը, ապա եկեք շարունակենք մեր գրույցը՝ ձեր ամսագրի էջերում: Եկեք խղճի մտոք պատասխանենք տրված հարցին, դրանով գուցե թե գանք ճիշտ եզրահանգման: Այսպես թե այնպես, երբ նման հարց է դրվել, իմ կարծիքով, դա չի կարելի անուշադրության մատնել, հարցն արդեն բորբոքված է: Մի մոռանաք, որ հիմա ողջ հայ ժողովուրդը՝ այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը, որ մարզի 80 տոկոսն է կազմում, խիստ վիրավորված է ձեր ռեպորտաժից»:

**Սերո Խանզադյան**  
1977թ. հուլիս

# ԽՄԿԿ Կենտրոնի բաժնի վարիչ Ե. Տյաժեւիկովին

## Հատված նամակից

Հարգելի՛ Եվգենի Միխայլովիչ  
Բանն այն է, որ «І ді́ а́е́аї Ñ ì èðà è ñì òèàèèçì à» ամսագրի 1977թ. 6-րդ համարում հրատարակված հոդվածից հետո, ես նամակներ եմ ստացել եւ ստանում եմ մեր քաղաքացիներից, ինչպես նաև արտասահմանից: Նամակների հեղինակները իրենց վրդովմունքն են արտահայտում այն



բանի համար, որ ասածս ամսագիրն անամոթաբար վիրավորում է հայ ժողովրդին:

Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը գոյություն ունի 1921-23 թվականներից, այսինքն՝ այն ժամանակից, երբ հայկական մարզը ապօրինի մտցրին Ադրբեջանի կազմի մեջ: Նույն անարդարությունը կատարվել է նաև Նախիջևեանի նկատմամբ: Սակայն, ինչպես երեւում է, Ադրբեջանի ղեկավար անձինք Նախիջևեանի պրոբլեմը համարում են ավարտված, քանի որ նրանք արդեն այնտեղ հայ գրեթե չեն թողել: Իհարկե, կգա ժամանակ, որ մեղավորները պատմության առջև ՊՍՍՍԽՄՍ պիտի տան, թե ինչու այդ Հայկական Ինքնավար Հանրապետությունում (իսկ նա ինքնավար է, քանի որ գտնվում է Հայաստանի սահմաններում) այժմ գրեթե հայ չի մնացել: Եվ ահա, հանդիմանալով, որ Լեռնային Ղարաբաղն ամուր ընկույզ է, Ադրբեջանի ղեկավարների ձեռքով այնտեղ պրովոկացիոն արարքներ են կատարվում: Այսպես 1975 թվականի մարտին, Լեռնային Ղարաբաղի մարզկոմի պլենումում, ինչ-որ նութ ուժերի թելադրանքով, զեկուցման մեջ հայտարարվեց, թե Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի անկապտելի մասն է կազմում:

Համոզված եմ, որ հասել է ժամանակը արդարամտությամբ եւ սկզբունքայնությամբ նայելու ճշմարտության աչքերին: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հորինելու եւ Հայկ. ԽՍՀ-ից անջատելու ժամանակ այնտեղ բնակչության 94 տոկոսը հայեր էին: 1970 թվականի մարդահամարի տեղեկությամբ այնտեղ հայերը 80 տոկոսն են:

Ինչպես կարելի է թույլ տալ, որ ստեղծվեն այնպիսի անտանելի պայմաններ, երբ տեղաբնակները թողնում-հեռանում են իրենց պապական հողերից: Կարծում եմ՝ ժամանակն է գործնականորեն զբաղվելու Հայաստանի կողքին գտնվող հայկական փոքրածավալ Լեռնային Ղարաբաղի Մարզի պրոբլեմով, ու դա վերադարձնել Հայկ. ԽՍՀ-ին:

**Սերո Խանզադյան**  
1977թ. հուլիս

# ԽՄԿԿ Կենտրոնի գլխավոր քարտուղար ընկեր Միխայիլ Գորբաչովին

Թանկագին Միխայիլ Սերգեևիչ:  
Ամբողջ սրտով շնորհավորում եմ Ձեզ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվելու կապակցությամբ:

Թանկագին Միխայիլ Սերգեևիչ. իբրեւ ավելի քան քառասուն տարվա ստաժով կոմունիստ, իբրեւ նախկին



ռազմաճակատային, իբրեւ գրող, թախանձագին խնդրում եմ Ձեզ՝ ուշադրության կենտրոնում պահել ազգամիջյան հարցը, մի հարց, որը, ափսոս, երկար տասնամյակներ մեզ մոտ մեկուսացվել է. իբրեւ դրա օրինակ՝ Ձեզ եմ ուղարկում կից նամակս՝ հույսով, որ նրա-

նում առաջ քաշածս հարցերը կքննվեն բարձր մակարդակով՝ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյում:

**Սերո Խանզադյան**  
18 մարտի 1985թ.

**Ծանոթություն**

1. Ահա մի քաղվածք այդ նամակից.

«Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարները մեզ արգելում են գրել հայկական ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի եւ ինքնավար հանրապետություն Նախիջևանի մասին...»

Ըստ ԽՍՀՄ Սահմանադրության, դրանք ինքնավար են սահմանվել, որովհետեւ այդ մարզերի նախաբնիկները ոչ թե կովկասյան թաթարներն էին (հետագայում անվանված ադրբեջանցիներ), այլ՝ հայերը...

Ադրբեջանի ղեկավարները վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում մշտական պրովոկացիոն ելույթներ են ունենում: Այսպես, օրինակ, Ադրբեջանական հանրապետության կուսակցական նախկին ղեկավար Յ.Ա.Ալիեւը բազմաթիվ անգամներ հրապարակավ ասել է, թե Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Ադրբեջանի անբաժանելի մասը: Հանուն ինչի՞ է նման բան արվել ու արվում: Որտե՞ղ ենք մենք լսել, որ Ռուսաստանյան Ֆեդերացիայի որեւէ ղեկավար հայտարարած լինի, թե, օրինակ, Էստոնիան կամ Լատվիան Ռուսաստանի անբաժանելի մասն են:

Իբրեւ կոմունիստ, որն իր կուստոմը ստացել է ռազմաճակատում, թա-

խանձագին խնդրում են Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի հարցը դնել ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյում եւ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը վերադարձնել Հայաստանին»:

**Մոսկվա, Կրեմլ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, Լուկյանովին**



**Ս**տացա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնարարությամբ ինձ առաքած ձեր հեռագիրը: Ես մերժում եմ Գերագույն խորհրդի խնդիրքը՝ կազմակերպել ժողովրդին մարտի 17-ին մասնակցելու ԽՍՀՄ պահպանությանը վերաբերող հանրաքվեին:

Ձեր այդ որոշումը հակասում է ազ-

գերի ազատ ինքնորոշման իրավունքին: Դուք փորձում եք պահպանել այն բռնակալ կայսրությունը, որն անչափ կորուստներ է պատճառել եւ հիմա էլ պատճառում է հայ ժողովրդին ու Հայաստանին:

Դուք մերժում եք ինքնավար մարզերի ինքնուրույնությունը: Դուք շարունակում եք մի ազգ թողնել մի այլ ազգի ենթակայության տակ: Դուք ինքնավարություններին զրկում եք, իրոք, ազատ եւ ինքնիշխան գոյության իրավունքից:

Պահանջս է՝ դադարեցնել հայկական Լեռնային Ղարաբաղի հայերի կոտորածները, վերականգնել մարզի օրինական իշխանությունը, Ձեր եւ Ադրբեջանի զորամասերն անհապաղ հեռացնել մարզից:

Եթե դուք ԼՂԻՄ-ը հանեիք Ադրբեջանի ստրկությունից՝ նրան վերամիավորելով Հայաստանին կամ գոնե ինքնավար հանրապետության կարգավիճակ տայիք, այդ դեպքում գուցեւ բարոյական իրավունք ձեռք բերած կլինեիք դիմելու ինձ նման խնդրանքով: Ձեր դիմումն ինձ՝ բարոյական չէ:

Հայ ժողովուրդն իր իսկ կամքով կորոշի իր ճակատագիրը՝ սեպտեմբերի 21-ին «Այո» պատասխանելով մեր հանրաքվեի հարցերին. «Համաձայն եք, որ Հայաստանը լինի անկախ ժողովրդական հանրապետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս»:

**Սերո Խանզադյան**  
**ԽՍՀՄ Ժողովրդական պարզամտ**  
11 մարտի 1991, Երևան

# Սերո Խանգադյանը եւ Կապանը



**1978**, հոկտեմբերի-  
եկեղ են Ղա-  
փան: Զետս են  
Գեւորգ Զայրյանն ու Սերգեյ Ունառյա-  
նը: Եկել ենք «Յակ-40» օդանավով:  
Յրաշք ճախրող է՝ հանգիստ, հաճելի:  
Երեսունհինգ թուփերում Երեւանից հա-  
սանք Ղափան:

Այսօր այստեղ բացվում է մեծ  
Ղափիթ-Բեկի արձանը: Տոնական օր է:  
Քաղաքն անճանաչելի է դարձել: Զնից  
ոչինչ չկա՝ ոչ մի տխրություն: Ռաֆիկ  
Մինասյանին հարցնում են՝ որքա՞ն է  
քաղաքի բնակչությունը:

- Մի քանի տասնյակ հազար...

Քսանմեկ միջնակարգ դպրոց,  
նաեւ երաժշտական դպրոց, բժշկա-  
կան ուսումնարան, պետական թատրոն  
(«Մխիթար սպարապետ» են բեմադրել),  
ակադեմիայի մի ինստիտուտ եւ այլն,  
եւ այլն: Մի խոսքով, քաղաք՝ ժամանա-  
կակից ոգով ու ոճով: Ողջի գետի ջրերը  
բավականին զուլավվել են: Ինչի՞ց է:

- Քաջարանի թափոնաջրերը այլեւս  
չենք թափում գետը, - բացատրում է Մի-  
նասյանը: - Այդ ջրերը թունելներով հե-

ռացրել ենք:

Գետի երկու ափերին պատնեշներ են  
դրել, երկու առափնյա փողոց ստեղծել:  
Վերելում Զունան Ավետիսյանի թաղա-  
մասն է ու հուշարձանը: Ղափանի Ծավ  
գյուղացի արծիվը հերոսացավ Նովոռո-  
սիյսկի մոտ՝ Վերխնի Բականսկ ավանի  
կողքին: Այդ լեռան անունը Դուգա էր:  
Զինա կոչվում է Զունան Ավետիսյան:  
Սեր հերոսի անունով են կոչվում մի ջեր-  
մանավ եւ սահմանային մի ուղեկալ:  
Ահա թե ի՞նչ իմաստ է ունենում հայրե-  
նիքի համար նահատակվելը:

Ղափանի պղնձի հանույթը, որ խա-  
փանվել էր մի քանի դար առաջ, վե-  
րականգնվեց 1845 թվականին: 1867  
թվին պղնձածուլական մի քանի փոքր  
գործարաններ կային՝ Ղաթարի (բուն  
անունը Կատար), Կավարտի, Զալիճո-  
րի, ապա ավելի ուշ՝ Սյունիքի: Ղափա-  
նը 1867-ից մինչեւ 1917 թիվը (խափան-  
վելը) արտադրել է 33 հազար տոննա  
մաքուր պղնձ: Իսկ թե ինչքան պղնձ  
է ստացել Սյունիքի թագավորությունն  
այստեղ ստեղծող Սմբատ Սյունեցին  
(982թ.), չգիտեն:

Տաք է Ղափանում, չէ՞ որ ծովից  
բարձր է ընդամենը ութ հարյուր մետր:  
Էներգիան առատ է: 1906 թվին ստեղծ-  
ված Զրախորի հիդրոկայանի կողքին  
1925-ին երկու հէկ էլ են ավելացրել: Այդ  
թվին էլ վերականգնվեց պղնձ հանելու  
գործը:

Ղափիթ-Բեկի արձանը հաջող է՝ ձիու  
վրա, սլացքի մեջ: Ես շնորհավորում  
եմ հեղինակին՝ քանդակագործ Սար-  
գիս Բաղդասարյանին: Մեծ ամբոխ է  
հավաքվել հուշարձանի բացմանը: Ես  
հուզվում եմ՝ ահա Ղափիթ-Բեկը նորից  
է կենդանացել, եկել իր տունը: Կարծում  
եմ, այստեղ կորվի նաեւ մեր Զագ նա-  
հապետի կոթողը, որի անունից է, ինչ-  
պես պնդում են մեր հներից ոմանք՝  
Ջանգեզուր անունը: Յոթերորդ դարում  
(մ.թ.ա) այս լեռներում երեւացին Սակ  
ցեղի մարդիկ (սկյութացիներ), որոնք  
ձուլվեցին մերոնց հետ: Դրանցից ծնվեց  
մեր Զագ նահապետը:

Անմամ, հարուստ, գեղեցիկ քա-  
ղաք է դարձել Ղափանը:

**ՍԵՐՈ ԽԱՆԳԱԴՅԱՆ**  
«Յայրենապատում», գիրք Ա, էջ 207-208

# Յայջի գյուղ

Միջն. դարոցի հարգելի ընկերներ  
 Լավ բան եք սկսել՝ ձեր դարոցի պատ-  
 մությունը գրելով: Ահա ես ուղարկում եմ  
 իմ մի լուսանկարը: Իսկ հուշեր գրել, ուղարկել  
 այնքան էլ հեշտ բան չէր եւ ժամանակ էր հար-  
 կավոր:

Ես երբեք չեմ մոռացել Յայջին՝ իր հին, քարե  
 անշուք բարաքներով, ծառազուրկ փողոց-  
 ներով, իր ծանր ձյունով, բուքով, բայց եւ իր  
 աննման մարդկանցով՝ պարզ, հյուրասեր եւ  
 մտերիմ:

Միշտ իմ մտապատկերի մեջ է ձեր խորունկ  
 ծորը՝ Որոտանի աղմուկով ու մի կախարդա-  
 կան գործքամբ, որն այնքան ոգեւորություն էր  
 պատճառել ... իմ ստեղծագործական պահերին:  
 Ես Յայջի եկել եմ 1936թ. օգոստոսին: Եղել  
 եմ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ:  
 Ապրում էի երկրաշարժից հետո հապճեպ կա-  
 ռուցված բարաքներից մեկում, որի հատակը  
 հողէ էր, ու առաստաղը կաթում էր եւ ցուրտ էր:  
 Որքան հիշում եմ, ինձ հետ էին ապրում ուսու-  
 ցիչներ Անդրանիկ Յուզբաշյանը (հնձորեսկից)  
 եւ Վազգեն Փարսյանը (Գորիսից): Հիշում եմ  
 մեր Վարդանին, Պապի, Հայրապետ Գրիգո-  
 րյանին, որ դիրեկտորն էր, Վարսիկ Աղայանին՝  
 լավ, բանիմաց ուսուցչուհի, հետո մի երեւանցի  
 տղայի, որի անունը մոռացել եմ (երեսուն տարի  
 է անցել) եւ տեխնիկական աշխատող մի կնոջ,  
 որ թաց փայտը հազիվ էր վառում՝ անվերջ  
 ասելով. «վա՛յ, քոռանամ, ցուրտը վարժաբեդի  
 մատները կտանի... »:

Երեսունյոթ թվականի մայիսին ինձ տարան Գո-



Հարժիս (Յայջի)



Շինուհայր



Տաթեւ

րիս՝ թերթի խմբագրությունում  
 աշխատելու: Հետո ծանր օրեր  
 եղան...

Հետո մի քանի անգամ եղել  
 եմ Յայջիում եւ ուրախացել,  
 որ Յայջին հոյակապ գյուղ էր  
 դարձել՝ ծառով, մրգով, բանջա-  
 րեղենով եւ բարեշեն տներով:  
 Ես շատ եմ սիրում Յայջին, նրա  
 հինավուրց, բարի ու ազնիվ  
 ժողովրդին:

Դե, ներեցեք, որ շատ բան չկա-  
 րողացա գրել՝

Մի լավ բարեկեցեք իմ սիրելի  
 յայջեցիներին՝ մեծին, փոքրին:  
 Ընդունեցեք հարգանքներս:

Ողջ եղեք:

Միշտ ձեր՝ Սերո Խանգադյան

10 փետրվարի 1966թ.  
 Երեւան



Տեղ



Խանաձախ

# Ս.Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպի էկրանավորումը



## Խորեն Աբրահամյան

ՀՍՍՀ ժողովրդական արտիստ (Տեր-Ավետիսի դերակատար)

Կինոյում ստեղծած իմ կերպարներից Տեր-Ավետիսն առանձնահատուկ նշանակություն ունեցավ ինձ համար: Իհարկե, ամեն մի նոր դերակատարում թանկ է արվեստագետի համար, եւ ես դեռեւս չեմ հասցրել սթափվել, բնորոշումս էլ, հավանաբար, կշաղախվի ֆիլմից եւ նկարահանման հրապարակից ստացած տպավորություններով:

Նախ՝ կերպարի մասին: Տեր-Ավետիս. պատմական անձնավորություն:

Բոլոր ժամանակներում էլ մարդ-անհատի գնահատման չափանիշները մնում են նույնը, եւ, որ ամենակարեւորն է, բոլոր ժամանակներում էլ մարդը պետք է նվիրված լինի իր գործին, իր ժողովրդին: Կերպարն ստեղծելն ինձ համար բարդ էր նոր տեսանկյունից. պետք է մարմնավորեի պատմական անձնավորության: Մինչ այդ ես միայն մեկ այդպիսի հնարավորություն եմ ունեցել: Դա մեծ հեղափոխական Ալեքսանդր Մյասնիկյանն էր Ֆ.Դոլլաթյանի «Երկունք» ֆիլմում:

«Հուստ աստղ» ֆիլմի Տեր-Ավետիսը չդարձավ «Մխիթար Սպարապետ» վեպի Տեր-Ավետիսի ճիշտ պատճենը: Սակայն կերպարի էությունը, ոգին մնացել

են նույնը:

Իսկ հիմա՝ ֆիլմի նկարահանումներից ստացած տպավորություններիս մասին: Մինչեւ հիմա էլ համակված եմ բերկրանքի այն զգացումով, որն ամեն անգամ առաջանում էր նկարահանման հրապարակում: Իսկ այդ զգացումն ինքնաբուխ չէր: Մենք բոլորս էլ (իսկ նկարահանման հրապարակում ներկա էին հարյուրավոր մարդիկ) վարակվում էինք մեկ մարդուց՝ բեմադրող ռեժիսոր Էդմոնդ Քյոսայանից: Արվեստագետ, որը հստակորեն պատկերացնում էր իր գործի նպատակը, կարեւորությունը, պատասխանատվությունը եւ կարողանում էր այդ նույն զգացումները ներշնչել մեզ՝ դերասաններին եւ ընդհանրապես բոլոր մասնակիցներին: Քյոսայան-ռեժիսորն ինձ համար հայտնություն էր: Հայտնություն էր նաեւ Ջիգարխանյան-դերասանը: Այս երկու արվեստագետներին, իհարկե, վաղուց էի ճանաչում: Սակայն բոլորովին այլ էր նրանց հետ աշխատելը: Իհարկե, համատեղ աշխատանքը նաեւ վեճերի տեղիք էր տալիս: Սակայն դրանց արդյունքը խիստ դրական էր: Ի վերջո, մենք ընդհանուր հայտարարի էինք գալիս:




## Էդգար Հովհաննիսյան

ՀՍՍՀ ժողովրդական արտիստ (Ֆիլմի կոմպոզիտոր)

Հպարտ եմ, որ ինձ բախտ վիճակվեց մասնակցելու «Հուստ աստղ» ֆիլմի ստեղծմանը:

Էդմոնդ Քյոսայանի տաղանդն ու վարպետությունը այս ֆիլմում դրսևորվում է նոր ուժով: Կինոնկարն արդեն ընդունվեց մեր ժողովրդի կողմից, եւ հուսով եմ, որ դեռ երկար ժամանակ կհամարվի նրա ամենասիրված ստեղծագործություններից մեկը: Ուստի ժապավենն արդեն ոչ միայն Քյոսայանի փայլուն հաղթանակն է, այլև մեր մշակույթի հաջողությունը:



## Սոս Սարգսյան

ՀՍՍՀ ժողովրդական արտիստ (Մովսեսի դերակատար)

Ի հերոսը՝ Մովսեսը, հետաքրքիր է, զարմանալի իր մեծ սրտով, հոգով, ներքին ուժով, իմաստությամբ:

Ես մի անբացատրելի ներքին կապ ունանություն եմ տեսնում Մովսեսի եւ Նախորդ հերոսի՝ Նահապետի միջեւ: Նրանք երկուսն էլ ունեն այնպիսի բարձր հասկացություններ, ինչպիսիք են հայրենիքը, ժողովուրդը, ազգը, ընտանիքը: Եթե կուզեք, ինչ-որ տեղ Մովսեսը ծնվել է Նահապետից: Հայ ժողովուրդն անցել է մեծ փորձությունների միջով: Երբ ինքը քեզ համար ուզում ես բացահայտել, թե որն է ժողովրդի հարատեւման ուժը, համոզվում ես, որ զորավարական կարողություններից բացի, հոգեւոր արժեքների պահպանման մեջ է: Ո՛վքեր ստեղծեցին մագաղաթյա մատյանները. Մովսեսի ու Նահապետի հավատն ու տրամաբանու-

թյունն ունեցող անհատները:

«Հուստ աստղ» ֆիլմում ես առաջին անգամ էի աշխատում բեմադրող ռեժիսոր Է. Քյոսայանի հետ: Դերասանին ոգեւորելու, կինոարտադրությունը կազմակերպելու, նկարահանող խմբի անդամներին քաջալերելու ներքին ուժով է օժտված նա:

Կարծում եմ, այդ հատկանիշների շնորհիվ է նաև, որ ֆիլմն ստացվել է...



**Ալլա Թումանյան**  
Գոհարի դերակատարուհի

Արդեն ութ տարի է, ինչ նկարահանվում են կինոյում: Իմ բոլոր հերոսուհիներն էլ մեր ժամանակակիցն են: Թերեւս, դրա սկիզբը դրեց ռեժիսոր Էդմոնդ Քյոսայանը, երբ ես նկարահանվեցի նրա «Տղամարդիկ» կինոկատակերգությունում: Իսկ վերջերս նույն ռեժիսորի մոտ ես նկարահանվեցի իմ բոլոր կինոհերոսուհիներից տարբերվող՝ Գոհարի դերում: Իհարկե, նման կերպարի մասին կարելի էր միայն երազել: Աշխատում էի մեծ ոգեւորությամբ. կերպարի իմ ներքին ընկալումն ու ռեժիսորի օգնությունը նպաստում էին դժվարությունների հաղթահարմանը:

Նկարահանումների ընթացքում երկար ժամանակ չէի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ իմ հերոսուհին մահանում է: Ասում եմ՝ նկարահանումների ընթացքում, որովհետև այն առաջին դրվագը, որում նկարահանվեցի, Գոհարի մահվան տեսարանն էր: Իսկ մինչ այդ, դերի վրա աշխատելիս, իմ հերոսուհին ինձ հարազատացել էր: Բնական է, որ հոգեբանորեն շատ ծանր էր հենց առաջին օրը «բաժանվել» այդքան սիրելի դար-

ձած հերոսուհուց:

Գոհարը մարմնացումն է բազում հայ կանանց ճակատագրերի: Կանայք, որոնք կարողացել են դարերի ընթացքում պահպանել օտարերկրյա զավթիչների դեմ պայքարելու արիությունը: Նա ոչ միայն սիրող, նվիրված կին է, այլև մեծ հայրենասեր, զորավարի ընկերն ու նրա համախոհը: Հենց այս գծերն են աշխատել ընդգծել հերոսուհուս մեջ: ■

**Սյրեփան Անդրանիկյան**  
ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ (Ֆիլմի բեմադրող նկարիչ)

«Հուստ աստղ» ֆիլմում աշխատելու առաջարկությունն ինձ համար անսպասելի էր, քանի որ նախապատրաստական շրջանին չէի մասնակցել: Դժվարությամբ



համաձայնվեցի, դեռևս չէի սթափվել նախորդ՝ «Երկունք» ֆիլմից: Բայց Քյոսայանի համառությունն ու ստեղծագործական ոգեւորությունն ինձ էլ փոխանցվեցին, եւ չզգացի էլ, թե ինչպես լծվեցի գործի:

Սկսվեց մի դժվարին ու լարված աշխատանք: Անհրաժեշտ էր կարճ ժամանակամիջոցում կատարել մի շարք աշխատանքներ՝ էսքիզներ, գծանկար-



Արմեն Ջիգարիսանյանը եւ Ալլա Թումանյանը: Դրվագ «Հուստ աստղ» պատմական ֆիլմից, 1978թ.: Ռեժիսոր՝ Էդմոնդ Քյոսայան

ներ, նկարահանման վայրերի ընտրություն: Ըստ մտահղացման, մենք պետք է «Մոսֆիլմում» նկարահանեինք 10-12 դեկորացիա: Այս բոլորը բավականին ծախսեր ու ժամանակ էր պահանջում:

Առաջարկվեց որոշ դրվագներ նկարահանել մեր պատմական հուշարձաններում, եկեղեցիներում: Դա, անկասկած, ունեցավ իր դրական արդյունքը: Ֆիլմն ստացավ պատմականորեն ճշմարտացի միջավայր, բացի այդ, ձեռք բերեց այն անհրաժեշտ հայկական ոգու մթնոլորտը, որն, իմ կարծիքով, կինոնկարի կերպարային լուծման միակ ու ճիշտ ուղին էր:

Ինչ խոսք, այս ամենի ոգեւորողն ու ղեկավարը ֆիլմի բեմադրող ռեժիսոր Էդմոնդ Քյոսայանն էր՝ ստեղծագործական անսպառ հնարավորությունների տեր Էդմոնդը, որը կարողացավ մինչև վերջ պահպանել նկարահանող խմբի մարտունակությունն ու եռանդը: ■

# Գրողը եւ կինոն



## ԳԵՎՈՐԳ ՅԱՅՐՅԱՆ

**Յ**ամարձակ կարելի է ասել, որ այսօր հայ կինոարվեստը չի կարելի պատկերացնել առանց Մերո խանգաղյանի: Ծիշտ է, դեռ ինքը՝ գրողը, ոչ մի սցենար չի ստեղծել, բայց սիրահոժար կինոաշխատողներին է տրամադրել իր ստեղծագործություններից երկուսը՝

«Այրված տունը» եւ «Մխիթար Սպարապետը»: Երկու ֆիլմերն էլ բեմադրել է երկրի նշանավոր ռեժիսորներից մեկը՝ Էդմոնդ Զյոսայանը: Առաջինի սցենարը գրել է Առնոլդ Աղաբաբովը, երկրորդինը՝ Կոնստանդին Իսախանյանը:

Կարծում ենք, հետաքրքիր կլինի, թեկուզ համառոտակի, ծանոթանալ այդ ֆիլմերի ստեղծման պատմությանը:

Սկսենք «Այրված տունից», որ ֆիլմ դառնալով կոչվեց «Լքված հեքիաթների կիրճը»: Այդ ֆիլմի նախապատրաստական աշխատանքն սկսվեց 1972 թվականի վերջերին: Հաջորդ տարվա սկզբին սցենարն արդեն պատրաստ էր: ՍՍՄՄ պետկինոյի գլխավոր սցենարային-խմբագրական կոլեգիան, քննելով սցենարը, հավանություն տվեց նրան եւ առաջարկեց սկսել նկարահանումները: Կոլեգիայի «երաշխավորագրի» մեջ ասված էր. «Սցենարը, որ ժանրային իմաստով մոտ է բարոյա-փիլիսոփայական առակի, գրավում է իր լակոնիկ դրամատիկական կառուցվածքով, մտքի պարզությամբ, եւ չնայած սյուժեն ինչ-որ չափով թուլացված է եւ բառի սովորական իմաստով զուրկ է ինտրիգից, այն ամուր հենված է հերոսների ապրումների վրա, ուր անձնականը շատ բնական ձևով վեր է ածվում հասարակականի: Ցույց տալով Ազարիայի եւ Արփենի սիրո հրաշալի պատմությունը, հեղինակները ցույց են տալիս, որ նոր կյանք կառուցողների համար հասարակությունից, մարդկանցից դուրս կյանք չկա»: Մեկ տարի անց՝ 1974-ի մարտի 15-ին, ֆիլմն արդեն պատրաստ էր:

Ինչ է շահել եւ ինչ կորցրել խանգաղյանի «Այրված տունը»: Շահել է նախ եւ առաջ նրանով, որ այն արվեստի մի տեսակից վեր է ածվել մի այլ տեսակի՝ գրական երկը դարձել է կինոերկ:

«Լքված հեքիաթների կիրճը» կինոնկարը (ինչպես նաեւ պատմվածքը) հարուստ չէ հերոսներով: Դրանք երեքն են՝ Ազարիան, Արփենը եւ Միհրանը: Մնացածները ֆիլմում վճռական դեր չեն կատարում: Ի պատիվ ռեժիսորի պետք է ասել, որ ճիշտ է ընտրված դերակատարների կազմը: Հատկապես հմայիչ է Ազարիայի դերակատար Արմեն Զիգարխանյանը: Նրա կեցվածքը, մտածելակերպը, երջանկությունն ու ողբերգությունը ոչ մի կասկած չեն հարուցում իրենց հավաստի դրսեւորումներով:

Հրաշալի է օպերատորի կատարած աշխատանքը: Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ զանգեզուրյան լեռները դեռ

երբեք այդքան հաջող ձեւով ցույց չեն տրվել: Ինչ վերաբերում է երաժշտությանը, ապա այն կարծես թե այդ լեռների, կիրճերի ու նրանցով հոսող գետերի արձագանքն է, որի մեջ եւ առնականություն կա, եւ քնքշանք:

Ի դեպ, Ազարիայի երգը կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի խնդրանքով գրել է տողերիս հեղինակը: Ըստ ռեժիսորի եւ կոմպոզիտորի մտահղացման այդ երգը պետք է արտահայտեր հաղթանակից տուն վերադարձող զինվորի ապրումները, նրա հայրենասիրությունը: Այդպիսին է այն, թե ոչ, չգիտեմ, թերեւս ավելորդ չէր լինի բերել նրա լրիվ տեքստը, որ ի միջի այլոց գրվել է երաժշտությունն հորինելուց հետո, նրան հարմարեցնելով: Կինոյում լինում են եւ այսպիսի բաներ, ինչ արած:

Երգը կոչվում է «Սյունիք»: Ահա այն.

*Իմ Սյունիքն ես, իմ ուսրանն ես,*

*Դու իմ կյանքն ես, իմ երազ:*

*Քո զինվորն եմ, նորից ցրանն եմ,*

*Դու իմ մայրն ես, իմ մուրազ:*

*Ես կռվել եմ, մաքառել եմ*

*Քո անունը շուրթերիս:*

*Ես պահել եմ, ես շահել եմ*

*Անանց փառքը պատերիս:*

*Խոսարուսի սարն ես,*

*իմ Տարթենն ես,*

*Դու իմ յարն ու բառն անուշ,*

*Իմ Գյազրեյնն ես, դու իմ թեւն ես,*

*Դու իմ երգն ու լարն անուշ:*

*Թող իշխեն քո արձիվները,*

*Տալածեն թող ցավ ու վիշտ:*

*Դու ծփա հար, որուրա զիլ*

*Որուրան իմ խելք ու գիժ:*

*Ես կռվել եմ, մաքառել եմ,*

*Քո անունը շուրթերիս:*

*Ես պահել եմ, ես շահել եմ*

*Անանց փառքը պատերիս:*

«Լքված հեքիաթների կիրճը» ֆիլմը լավ ընդունելություն գտավ հանդիսատեսի կողմից: Կենտրոնական ու տեղական թերթերն ու ամսագրերը հիմնականում դրական վերաբերմունք ցույց տվին: Սակայն եղան եւ քննադատական դիտողություններ, որոնք գլխավորապես վերաբերում էին ֆիլմի դրամատուրգիային: Մեզ թվում է, որ սցենարի հեղինակները պատմվածքը կինոլեզվի փոխադրելիս թույլ են տվել որոշ շեղումներ, որոնք ոչ բոլոր դեպքերում են արդարացնում իրենց: Դրանք գլխավորապես վերաբերում են Միհրանի ու Արփենի, ինչպես նաեւ Ազարիայի ու Արփենի փոխհարաբերությանը: Միհրանը պատմվածքում խաբում է Արփենին, կարծատեւ հրապուրանքը նրա մոտ սիրո չի վերածվում: Դրա համար էլ նա լքում է Արփենին, բնավ չմտածելով հետեւանքների մասին: Մինչդեռ Արփենը անկեղծորեն սիրում էր Միհրանին, եւ համեմատելով Ազարիայի հետ նրան ավելի բարձր էր դասում, ասելով. «Ես քո ոտքին մատաղ, Միհրան, տար, ազատիր ինձ այս գերեզման ձորից: Տար: Ես քոնն եմ»: Նա այլեւս չէր սիրում Ազարիային:

Պատահական չէ, որ Միհրանի հանկարծակի անհայտանալուց հետո ապրելն անիմաստ է դառնում Արփենի համար եւ նա

որոշում է իրեն անդունդ մետել: Իսկ Ազարիա՞ն: Սա շարունակում է սիրել իր կնոջը, նրա մոլորության պատճառը որոնելով նաև իր մեջ: Եվ դրա համար էլ նա ճակատագրական պահին ծեռք է մեկնում Արփենին, ոչ միայն ազատում է կործանումից, այլև ներում է նրան ու այրում տունը, այլ կերպ ասած, այն կամուրջը, որ կապում էր նրանց իրենց հին ապրելակերպի հետ: Ազարիան այդ քայլով ոչ միայն կնոջը, այլև իրեն է փրկում, արդեն հավատացած լինելով, որ մարդը մարդ է միայն հասարակության մեջ, նրանից դուրս նա ոչնչություն է:

Ֆիլմում Միհրանի արարքը վերջին հաշվով արդարացվում է: Նա լքում է Արփենին այն պատճառով, որ իբրև թե վերջինս շարունակում է սիրել Ազարիային: Ուրեմն դա իր գտած գանձը չէ, այլ պետք է ուրիշը որոնել: Դա չի համոզում, այդ «շեղումն» իրեն չի արդարացնում: Արփենի ինքնասպանությունը գործելու վճիռը եւ Ազարիայի նրան փրկելը, ապա նաև «գերեզման ձորից» դուրս գալը դառնում է այն սահմանը, որտեղից սկսվում է նրանց նոր կյանքը: Այս հանգամանքը, որ գլխավորն է խանգարող պատմվածքի համար, ֆիլմում անհրաժեշտ խորությամբ չի ընդգծվում:

Երեւի սա այն դեպքերից էր, որ կինոնկարը պետք է դառնար գրական երկի «պատճենը», այդ ճանապարհով թերևս ավելի դյուրին կլիներ ստեղծել խանգարողի հրաշալի ստեղծագործություններից մեկի՝ «Այրված տունը» պատմվածքի կինոհամարժեքը:

Այժմ դառնանք «Մխիթար Սպարապետին», որի հիմքի վրա կառուցվեցին «Հուսո աստղը» երկու ֆիլմերը:

«Հայֆիլմ» ստուդիայի տասնամյակների պատմության մեջ այս մասշտաբի կինոնկար ստեղծելու փորձ չի արվել: Բանը միայն այն չէ, որ այդ ստուդիան արտադրական-տեխնիկական տեսակետից չէր կարող հաղթահարել ֆիլմի ստեղծման ճանապարհին եղած դժվարությունները, այլև այն, թե ո՞ր ռեժիսորը կարող էր ստանձնել այդ բարդ ու դժվարին գործը: Դա կարող էր գլուխ բերել միայն Էդմոնդ Քյոսայանի նման ռեժիսորը, որը աշխարհին հայտնի էր արդեն իր «Անորսալիները» բազմասերիանոց ֆիլմով: Բացի դրանից, «Հայֆիլմ» ստուդիայում ստեղծված երկու ֆիլմերի վրա («Տղամարդիկ» եւ «Լքված հեքիաթների կիրճը») կատարած աշխատանքը լիակատար հույս էին ներշնչում նրա ստեղծագործական ու կազմակերպական հնարավորությունների նկատմամբ:

Հիշում եմ մեր մի զրույցը Տաթևի կիրճում, երբ նա զբաղված էր «Լքված հեքիաթների կիրճի» նկարահանումներով: Հարցրի նրան.

- Էդմոնդ Գարեգինովիչ, դուք Սերո Խանգարյանին ճանաչո՞ւմ եք:

- Դա ինչ հարց է: Ո՞վ չի ճանաչում նրան: Մի քանի օր առաջ վերջացրի «Մխիթար Սպարապետի» ընթերցանությունը: Նայում եմ այս լեռներին, կիրճերին, անտառներին եւ չեմ կարողանում ստույգ որոշել, սրանք այստե՞ր են ավելի զեղեցիկ, թե՞ նրա վեպում:

- Փորձեցի սրամտել.
- Չլինի՞ դուք կարծում եք, թե այս բնությունը խանգարյանի նկարագրածի պատճենն է:
- Քյոսայանը թեթև ժպտաց.
- Երկուսն էլ բնագրի ուժ ունեն:

Այնուհետև ասացի նրան, որ ես ես նույն բանն եմ զգացել, երբ առաջին անգամ տեսել եմ Փարիզի Աստվածամոր տաճարը: Հյուզյույի նկարագրությունը չէր զիջում նրան:

Այդ զրույցի ժամանակ էլ ծագեց «Մխիթար Սպարապետ» պատմավեպը կինոնկար դարձնելու գաղափարը:

Ո՞վ կարող է գրել սցենարը: Խանգարյա՞նը: Նա կտրակա-նապես հրաժարվեց: Քյոսայանը տվեց Կոնստանդին Իսաևի ազգանունը, որ հեղինակն է Կամոյի մասին արված երեք ֆիլմերից մեկի («Արտակարգ հանձնարարություն») եւ մի շարք ուրիշ ֆիլմերի:

Կոնստանդին Իսաևը սիրահոժար համաձայնեց կատարելու մեր խնդրանքը: Սցենարը մեկ տարի անց պատրաստ էր: Կարելորդն այն է, որ այն գրված էր այնպիսի մակարդակով, որ դուր եկավ բոլորին՝ «Հայֆիլմ» ստուդիայից մինչև ՍՍՀՄ պետկինո: Նույն ժամանակ պարզ դարձավ նաև մի այլ, ոչ պակաս կարևոր հարց: «Հայֆիլմ» կինոստուդիան իր արտադրական բազայով չէր կարող նման ֆիլմ ստեղծել: Ուրեմն պետք է դիմել ավելի հզոր ստուդիայի օգնությանը: Այդպիսին «Մոսֆիլմ» ստուդիան էր, որը սիրով ընդունեց համատեղ ֆիլմ նկարահանելու մասին Հայպետկինոյի առաջարկը: Սրան հաջորդեց ՍՍՀՄ պետկինոյի նախագահի հրամանը, որի մեջ ասված է.

«1. Թույլ տալ «Մոսֆիլմ» եւ «Հայֆիլմ» կինոստուդիաներին պետական պատվերի պայմաններով իրականացնել լիամետրաժ «Հուսո աստղը» ֆիլմի համատեղ բեմադրությունը, որը պատմում է օսմանյան լծի դեմ հայ ժողովրդի մղած պայքարի, Ռուսաստանի եղբայրական օգնության, այն անցքերի մասին, որոնք հասցրին Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտցնելուն. (սցենարի հեղինակ Կ. Իսաև, ռեժիսոր Է. Քյոսայան):

2. Լիամետրաժ գունավոր լայնֆորմատ «Հուսո աստղը» նկարը, որը բաղկացած է երկու ֆիլմերից, մտցնել «Մոսֆիլմ» եւ «Հայֆիլմ» կինոստուդիաների 1978թ. բեմաստիկ պլանի մեջ (յուրաքանչյուր ստուդիային՝ մեկական ֆիլմ): Աշխատանքը կատարել պետական պատվերով լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր ստեղծելու մասին եղած ժամանակավոր հրահանգի հիման վրա»:

Երբ գործը ռեալ հիմքի վրա դրվեց, պարզվեց, որ նման ֆիլմ ստեղծելը դժվար էր նույնիսկ երկու ստուդիաների համար: Ելնելով հարցի կարելիությունից, որոշում ընդունեց Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմը, որի հիման վրա հանրապետության մինիստրների սովետը հատուկ հրահանգով պարտավորեցրեց մինիստրություններին, գերատեսչություններին ու կազմակերպություններին ամեն կերպ օգնել «Հուսո աստղը» ֆիլմի նկարահանման աշխատանքներին:

Եվ իսկապես, ինչպես հայ կինոարվեստի առաջին հնչյունային նկարի՝ «Պետրոյի» ստեղծման օրերին, այնպես էլ այժմ հանրապետության պետական ու հասարակական կազմակերպությունները ոչինչ չխնայեցին «Հուսո աստղի» աշխատանքները անխափան ընթանալու գործում:

«Հուսո աստղը» դարձավ հայ եւ ռուս կինոաշխատողների փայլուն նվերը Արեւելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտցնելու 150-րդ տարեդարձին:

Ինքը՝ ֆիլմի իրականացումը երկու ստուդիաների ջանքերով նույնպես ռուս եւ հայ ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության վառ օրինակ էր:



Այժմ մի երկու խոսք ֆիլմի եւ վեպի «փոխհարաբերության» հարցի մասին:

Չհամեմատենք այդ երկու ստեղծագործությունները, քանի որ, ինչպես ասում են, բոլոր համեմատությունները կաղում են: Համեմայնդեպս, «Հուսո աստղը» մի ավելորդ անգամ ցույց տվեց, որ լավ կինոնկարի գլխավոր պայմանը լավ գրական հիմքն է:

Հիրավի, սցենարիստին հաջողվել է վերցնել վեպից այն ամենը, ինչ կարող է, կոպիտ ասած, կինո դառնալ: Նախ եւ առաջ պահպանված է վեպի մեջ ամենագլխավորը – հայրենասիրական պաթոսը: Բոլոր հերոսներին՝ Դավիթ-Բեկից ու Մխիթարից սկսած մինչեւ Առաքելը, իշխանուհի Սաթենիկից մինչեւ Ջարմանդը միայն մի հոգս ունեն՝ ինչպես անել, որ թշնամին չզավթի երկիրը, չստրկացնի իրենց, չկործանի արյան գնով ձեռք բերած ազատությունը: Եվ հանուն այդ վեպ գաղափարի մարդիկ նետում են իրենց կրակի բերանը, կռվում են ինչքան ուժ ունեն եւ մեռնում անվրդով:

Սակայն բոլորը գիտեն, որ թշնամին հզոր է, ու կռիվը անհավասար: Ուրեմն, հայերին անձնագոհությունից ու քաջությունից զատ, նաեւ օգնություն է պետք: Որտեղի՞ց վերցնել այդ օգնությունը: Ռուսաստանից... Այդպես էին ասել իրենցից ոչ շատ առաջ ապրողները, այդպես էին ասում Դավիթ-Բեկն ու Մխիթար Սպարապետը: Ուրախալին այն էր, որ ռուսական օգնության գաղափարը սկսում էր նյութական ուժ ստանալ:

Կասպիականի փերին հասած ռուս զորքերը ծրագրում էին առաջ շարժվել, հասնել հայոց լեռներին, օգնել մահու եւ կենսաց կռիվներ մղող հայ եղբայրներին: Ռուսաստանում, ռուսաց զենքին ապավինելու գաղափարը, որ վեպի մեջ շատ կարեւոր տեղ է գրավում, լրիվ չափով փոխանցվել է ֆիլմին:

Այդ օգնությունը, սակայն, ուշանում էր: Ինչո՞ւ: Ֆիլմում տրված է նաեւ այս հարցի պատասխանը: Պետրոս 1-ը չկարողացավ իրականացնել հայերին օգնելու իր խոստումը, որովհետեւ զբաղված էր հյուսիսում եղած թշնամիներով: Խանգարեց նաեւ նրա մահը: Նոր թագավորն էլ է ուշացնում օգնությունը, որովհետեւ սրա թշնամիներն էլ քիչ չեն, բացի դրանից, պալատում հաճախ եղանակ էին ստեղծում օտարերկրացի չինովնիկները:

Եվ չնայած դրան, հայ ժողովուրդը շարունակում էր արյուն թափել իր հայրենիքի համար, միշտ վառ պահելով հավատը ռուսների նկատմամբ:

Ֆիլմի գլխավոր հերոսները՝ Դավիթ-Բեկը, Մխիթար Սպարապետը, Տեր-Ավետիսը, Սաթենիկը, Մովսեսը, Ջարմանդը, Գոհարը, Գորգին, անջնջելի տպավորություն են գործում հանդիսատեսի վրա: Դրանք սովորական մարդիկ են, բայց նրանց արածներն անսովոր բաներ են: Հանդիսատեսը հետեւում է այդ մարդկանց յուրաքանչյուր քայլին, ուրախանում եւ տխրում նրանց հետ միասին:

Հրաշալի են ռազմական տեսարանները, հոգեբանորեն պատճառաբանված ու հավաստի են հերոսների փոխհարաբերությունները: Այդ հերոսները անտրտուն կատարում են իրենց պարտքը եւ հավատում հայրենիքի ապագային:



Սերո Խանգաղյանի մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ «կինո» են դարձել ոչ միայն նրա ստեղծագործությունները, այլեւ ինքը՝ գրողը:

Սեր խոսքը գրողի 60-ամյակի օրերին մեր սցենարով ստեղծված «Սերո Խանգաղյան» կարճամետրաժ ֆիլմի մասին է:

«Արեւոտ օր է, ուշ աշուն օր, բայց Սերո Խանգաղյանի Նորքի դրյակի բակում դեռ վարդեր կան, զանազան գույնի ու տեսակի ծաղիկներ: Խաղողի մի վազ փաթաթվել է պատշգամբից ոչ հեռու գտնվող ծառին ու կարծես ուզում է պատշգամբ բարձրանալ...»

Խանգաղյանը կրկ հագնված դուրս է գալիս տան ձախակողմյան դռներից եւ ծաղիկներով ու կանաչով շրջապատված աստիճաններով իջնում է ցած, թեքվում ձախ՝ դեպի դարպասը: Այդ պահին Խանգաղյանի երկու թոռնիկները պատշգամբից լացակունած կանչում են գրեթե միաժամանակ.

- Հայրիկ, մի գնա, մի գնա, մի գնա...

«Հայրիկը» քթի տակ ուրախ եւ ինքնագոհ ժպտում է եւ ապա երեսով շրջվում թոռնիկների կողմը:

- Մի տխրեք, բալիկներ, շուտ կգամ, շուտ կգամ:

Դարպասից դուրս գալով, կանգ է առնում իր վերջերս կառուցած աղբյուր-հուշարձանի առաջ, բռով ջուր է վերցնում, մոտեցնում բերանին, ապա թաշկինակով սրբում բեղերը, մի պահ կանգ առնում, հայացքով չափում քաղաքը եւ հետո նստում իրեն սպասող ավտոմեքենան:

«Վուզան» դանդաղ սահում է Նորքից իջնող կենաններով, ապա մտնում մայրուղի, անցնում կամրջի տակով, թեքվում ձախ եւ կանգ առնում Աբովյանի արձանի մոտ:

Խանգաղյանը իջնում է մեքենայից:

- Գնա, - ասում է վարորդին, ապա ավելացնում. – հոգնել եմ նստելուց, ուզում եմ մի քիչ քայլել:

Խանգաղյանը քայլում է «Պլանի» գլխից մինչեւ Լենինի հրապարակ: Մտնում է Մինիստրների սովետ՝ լեռնային գյուղերի վերաբացման կամ մի այլ ոչ պակաս հարցի մասին խորհրդակցելու հանրապետության կառավարության ղեկավարների հետ: Մինիստրների սովետից նա գնում է գյուղատնտեսության մինիստրություն, ջրային տնտեսություն, բարձրագույն կրթության եւ լուսավորության մինիստրություններ: Այս գերատեսչությունների ղեկավարների հետ խոսում է, հայտնում իր կարծիքը տնտեսության ու կուլտուրայի այս կամ այն հարցի շուրջը: Հասարակական աշխատանքն ավարտելով, նա գնում է «Հայաստան» հրատարակչություն, ուր հենց նոր լույս է տեսել նրա Արփա-Սեւանի թեմայով գրած վեպը: Խանգաղյանին են հանձնում վեպի սիգնալային օրինակը: Գրողը վերցնում է, ոտքի վրա թեթում, հագիվ զսպելով իր ներքին հրճվանքը: Փոքր բան չի պատահել, նոր գիրք է ծնվել, այն էլ ժամանակակից կյանքի թեմայով: Որոշ լռությունից հետո, որի ընթացքում Խանգաղյանը շարունակում է թերթել եւ շուռնուռ տալ գիրքը, մտախոգ տոնով ասում է.

- Տեսնենք ինչ կասի ընթերցողը...

Նորքի դրյակից դուրս գալուց հետո պետք է ցույց տալ ոչ միայն այն փողոցները, որոնցով անցնում է Խանգաղյանը, այլեւ ամբողջ Երեւանը (որքան դա պետք է եւ հնարավոր է): Խանգաղյանը քաղաքը «շրջելուց» հետո նորից տուն է գալիս: Նա աշխատանքային խիստ ռեժիմ ունի, այլապես չէր կարող այդքան բեղմնավոր լինել: Ցույց տալ գրողի մեկօրյա կյանքը (պայմանավորվել իր հետ: Որքան ինձ հայտնի է, նա արթնանում է շատ վաղ, սկսում է գրել, հետո զբաղվում է ֆիզիկական աշխատանքով – ջրում է այգին, ծառ է տնկում կամ ծաղիկներ քաղում

# Էդմոնդ Քյոսայան. «Կյանքիս ամենագեղեցիկ փարիները»



Երբ շարժանկարը հանձնված է պաստառին, այլևս չի պատկանում ստեղծողներից եւ ոչ մեկին, դառնում է ժողովրդի սեփականությունը:

**«Նկարահանումների երկու տարին... իմ ապրած 42 տարիներից ամենագեղեցիկն էր: Ցավում եմ, որ ավարտել եմ ֆիլմը: Այն այլևս ինձ չէ»,** – ասաց «Ղուտ աստղ» շարժանկարի բեմադրող ռեժիսոր Էդմոնդ Քյոսայանը:

Ընթերցողին ենք ներկայացնում մեր թղթակցի եւ ռեժիսորի գրույցը:

**– Անշուշտ, հեշտ գործ չէր Սերո Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» ծավալուն վեպի հիման վրա կարճ միջոցում ֆիլմ նկարահանելը:**

– Իհարկե, դժվար էր 700 էջանոց վեպի մանրամասներով եւ նկարագրու-

թյուններով լեցուն ժանյականման հյուսվածքը էկրանավորել մի շարժանկարի սահմաններում: Սակայն դա չէր գլխավոր դժվարությունը: Այն էր, որ հանդիսատեսը ծանոթ էր վեպին, ուներ Մխիթար Սպարապետի մտապատկերած իր պատրաստի տարբերակը: Նրա սպարապետը եւ բարձրահասակ է, եւ գեղեցիկ, եւ ազդու: Դահլիճում հանդիսատեսը տեսնում է իմ սպարապետին, որը ցածրահասակ է, ոչ գեղեցիկ: Ֆիլմի Մխիթարին չեն նկատի փողոցում, նա կլուծվի ամբոխի մեջ: Իսկ կուզիկին կնկատեն, Տեր Ավետիսին եւս: Սպարապետը հերոս է իր ներքինով, իր գործով: Նա չի պատկանում արտոնյալ դասին, նրան ծնել եւ ընտրել է ժողովուրդը, ընտրել է իր

հոգեկան արժանիքների համար: Մխիթար Սպարապետը չի երկմտի հայրենիք թե կյանք հարցում, առանց սակարկելու կընդառաջի մահվանը:

Կային նաեւ այլ կարգի դժվարություններ, որոնք կարելի է համարել արտադրական:

Սոս Երեք ամիս նկարահանումները կատարվում էին ամառի վայրում, 46 աստիճան շոգ ու տոթին: Աշխատում էինք օրական մոտ 20 ժամ: Դժվարությամբ էինք հեռանում նկարահանման հրապարակից, ափսոսում էինք քնելու համար ժամանակ վատնել: Շոգին մենք դիմանում էինք, իսկ ահա ձիերը՝ ոչ: Ստիպված էինք կենդանիների համար կարել տալ 600 գլխաշոր: Երբ նկարահանումների ժամանակ Ռուսաստանի հարթավայրում պայթեցում է կատարվում, հող է երկինք թռչում: Մեզ մոտ հսկա քարեր էին օդ բարձրանում: Ո՞ր մի դժվարությունը նշես:

**– Հանդիպումներից մեկի ժամանակ դուք շարժանկարի գլխավոր հերոսուհուն՝ Լաուրա Գեորգյանի կերտած Սաթենիկին անվանեցիք «հայոց խիղճ»:**

– Նման կերպար կերտելու համար պետք էր ոչ թե աղմկալի համոզվածություն, այլ լինել անկեղծ: Իմ Սաթենիկը գեղեցիկ է մեռնում: Այդպես մահանում էին բազում հայուհիներ: Թերեւս այդ

## Գրողը եւ կինոն

Եւ միայն օրվա երկրորդ մասը զբաղվում պաշտոնական գործերով ու այցերով): Իր օրվա ռեժիմի մասին համառոտ պատմում է ինքը եւ այդ ընթացքում միաժամանակ ցույց է տրվում պատմածը:

Այս ավարտելուց հետո, պետք է տալ գրողի կյանքի եւ ստեղծագործական աշխատանքի պատմությունը:

1. Ծննդավայր: Հին Գորիսը, քարայրը, ուր ծնվել է Ս. Խանզադյանը, դպրոցը, ուր սովորել է մեսրոպյան տառերը: Վաղ մանկությունը՝ փոստատար հոր հետ լուր ու լույս է տանում լեռնային գյուղերին:

2. Ցույց տալ Տաթևը, Շինուհայրը, Խանածախը, ուր նա ուսուցչություն է արել, ուր ծնվել է գրող դառնալու ցանկությունը: Առաջին պատմվածքը՝ «Չոր տափը», եւ «Վահրամ Որոտնեցի» դրաման, որ բեմադրեց տեղական թատրոնը: (Այս ամենի մասին պատմում է ինքը՝ գրողը, պատմում է կարճ, բայց ինչպես ինքը կարող է՝ պատկերավոր եւ համով ու հոտով):

3. Միջամտում է դիկտորը՝ «Սկսվեց Հայրենական պատերազմը, եւ Սերո Խանզադյանը դեռ չվարժեցրած իր գրիչը փոխեց զենքով, որ պաշտպանի հայրենիքի պատիվն ու ազատությունը:

Իսկ գրելը հետո, երբ աշխարհի ու հարազատ լեռներում նորից խաղաղություն լինի... »: Խանզադյանը կռվել է Լենինգրադի համար, վիրավորվել է, ապաքինվել եւ նորից շարք մտել: Ցույց տալ Վոլխովի եւ Լենինգրադի կռիվների մասին եղած կադրերից, նաեւ այն մոմենտը, երբ երկու ռազմաճակատները միանում են, ստորագրում են այն պատմական փաստաթուղթը: Ստորագրողների մեջ էր նաեւ Հայկ Մելքոնյանը: Այս փաստը գրողին հայտնի է դարձել «Մեր գնդի մարդիկը» լույս տեսնելուց հետո:

4. Պատերազմի «մեղքով» ծնվեց «Մեր գնդի մարդիկը»: Այդ վեպը ուղեգիր տվեց գրողին շքամուտքից մտնելու գրականություն: Նրան նկատեցին այնպիսի բարձրաստիճան գրողներ, ինչպիսիք են Դ.Դեմիրճյանն ու Ստ.Զորյանը: Գուցե ցույց տալ նրանց պորտրետները, կամ եթե կինոկադրեր կան՝ դրանք եւ շարադրել նրանց ասույթները Խանզադյանի մասին: «Մեր գնդի մարդկանց» մասին գրեցին «Պրավդան», տեղական թերթերը, ապա՝ տարիներ անց՝ նամակ ստացվեց գնդի մարդկանցից՝

պատճառով ողջ մնացին: Աշխարհի երեսից ի՞նչ հզոր քաղաքակրթությունների անհետացան, բայց մենք կանք ու կլինենք: Որովհետև մեր նախնիները գիտեին մարտնչել ու եթե հարկ էր՝ մեռնել արժանապատվությամբ: Մեծ հավատն է բերում մարդուն մեծ մահ:

**– Արվեստը ծնվում է մարդու ինքնարտահայտման պահանջից: Ո՞ր զգացմունքները, հուշերը ծնեցին «Հուսո աստղը» նկարահանելու գաղափարը:**

– Պապերս Կարսից են գաղթել, ծանր օրեր տեսած մարդիկ էին: Մայրս, որ այժմ 81 տարեկան է, հաճախ պատմում էր մեր տոհմի, կրած զոհերի, տեղահանության ու գաղթի մասին: Անհնար է մոռանալ հիշատակները: Ես պարտք ունեի մորս հանդեպ՝ վերադարձնել հիշատակներն իրեն եւ դրանք պատգամել որդիներին՝ Դավթին ու Տիգրանին, որոնք, ի դեպ, կողքիս էին նկարահանումների ընթացքում:

Ինձ համար նվիրական է ժողովուրդների, հայերի, ռուսների, վրացիների բարեկամության գաղափարը, եւ այն արտահայտել եմ ֆիլմում:

Ի վերջո, արվեստագետն արտահայտում է իր հավատարմությունը համամարդկայինին, հավիտենական գաղափարին՝ առնականությանն ու կանացիությանը, սիրուն եւ ատելությանը,

բարեկամությանն ու թշնամությանը: Կինոարվեստը մնայուն է, երբ համազգացումներ է առաջացնում հանդիսատեսի մեջ:

**– Հազվադեպ է պատահում, որ շարժանկարը, տակավին չավարտված՝ արդեն ժողովրդականություն է վայելում: Սակայն ձեր ֆիլմը...**

– Այդ բանը բացատրելու համար պետք է վերհիշել այն ջերմ աջակցությունը, նախանձախնդրությունը, որ ժողովուրդը ցուցաբերում էր ֆիլմի նկարահանումների ողջ ընթացքում:

Արարատի շրջանի Ավչար գյուղի մոտ չորս հոգով ավտոմոբիլային վթարի ենթարկվեցինք: Մեզ անմիջապես հիվանդանոց տեղափոխեցին: Մինչ բժիշկները զբաղված էին մեզնով, բազմությունը ժողովվեց բակում եւ անհամբեր սպասում էր, թե ինչ կասեն բժիշկները մեր մասին: Երկու ժեր մարդ ուղարկեցին մոտս՝ իմանալու ինչ վիճակում եմ: Երբ համոզվեցին, որ վերքը թեթեւ է, գոհունակությամբ դուրս եկան: Բարի լուրն իմանալուց հետո գյուղացիները ցրվեցին:

Այո, հայ ժողովուրդն ունի մեծ, գեղեցիկ հատկություններ:

**– Ձեր «Երբ գալիս է սեպտեմբերը» լավ ընդունելության է արժանացել ե՛լ մեզ մոտ, ե՛լ սփյուռքում: Դուք սփյուռքահայերից հազարավոր նա-**

**մակներ եք ստացել: Հավանական է, նրանք կտեսնեն նաեւ «Հուսո աստղը»: Իհարկե, համաձայն եք, որ հետաքրքիր կլինի իմանալ մեր հայրենակիցների կարծիքը:**

– Այժմ բավարարվում եմ Վիլյամ Սարոյանի կարծիքով, որին շատ դուր եկավ ֆիլմը: Այն դիտելուց հետո, երբ հավաքվել էինք, նա դիմեց ինձ. «Տղաս, բան մը չունի՞ս ինձ ըսելու: Ոչինչ չկարողացա ասել: Լուռ էի: Ուզում էի միայն լսել նրան: Հիանում էի մեծ գրողի զարմանալի անմիջականությամբ»:

**– «Հուսո աստղը» կամ «Մխիթար Սպարապետը» ձեր 13-րդ ֆիլմն էր: Ասում են պատրաստվում եք 14-րդ շարժանկարի նկարահանումներին:**

– Ծանր է կինոռեժիսորի մասնագիտությունը: Պետք է սիրես: Հետո, երբ ավարտեցիր ֆիլմը, պիտի դադարես այն սիրելուց, առաջ նայես եւ նոր աշխատանք սկսես: Պարտավոր ես թողնել, իսկ իմ աչքի առաջ Մխիթարն է: Ես դեռ «Հուսո աստղի» հետ եմ, անվերջ հիշում եմ, հիշում:

Նկարահանումների երկու տարիները իմ ապրած 42 տարիներից ամենագեղեցիկ տարիներն էին: Ցավում եմ, որ ավարտել եմ ֆիլմը: Այն այլեւս իմը չէ...

**Ա.ՍԵՅՐԱԲՅԱՆ**  
**«Հայրենիքի ձայն», 20 դեկտեմբերի 1978թ.**

**գրողի ընկերներից: Հաղորդավարը կարդում է հատվածներ այդ նամակից:**

«Մեր գնդի մարդկանցից» հետո կյանքի հետ սերտորեն կապված գրողը կարծես ուզում է ստուգել, թե ինչպես են իր մարտական ընկերները արդարացնում իրենց խաղաղ կյանքում: Նրանցից շատերը գյուղ են վերադարձել, իսկ գյուղում շատ բան կա անելու, դժվարություններն էլ շատ-շատ են: Ո՞վ կարող է դրանք հաղթահարել, եթե ոչ նրանք, ովքեր երեկ զենքը ձեռքին կռվում էին մարտի դաշտում, արյուն թափում, մեռնում, որ հավերժ ապրի իրենց հայրենիքը:

Խանգաղյանը գրեց իր երկհատորանոց «Հողը» վեպը, որը եկավ ու մեկընդմիջտ ամրապնդեց նրա տեղը սովետահայ գրականության մեջ եւ ամենաառաջավոր գրողների շարքերում: Այդ վեպին զուգընթաց Խանգաղյանը գրեց պատմվածքներ եւ ակնարկներ, որոնց թեման նորից գյուղն էր, պատերազմի ժամանակ թիկունքում մնացածների, կամ պատերազմից տուն դարձածների սխրանքներն էին եւ այլն:

Պատերազմում ռազմի գիտելիքներով ու մարտական փորձով հարստացած գրողը չէր կարող չհետաքրքրվել իր ժողովրդի պատմական անցյալով, հատկապես այն անցքերով եւ անձնա-

վորություններով, որոնք ճակատագրական դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում:

Խանգաղյանը գրեց «Մխիթար Սպարապետը», որով նա մտավ դասականների շարքը:

Այս վեպը նոր փառք բերեց ոչ միայն գրողին, այլեւ ողջ հայ գրականությանը:

«Մխիթարից» հետո Խանգաղյանը երեսով շրջվում է դեպի արդյունաբերական թեման, եւ ծնվում է «Քաջարանը»:

Պետք է ցույց տալ նախ՝ ինչպես են տպագրվում եւ վերահրատարակվում Հայաստանում նրա վեպերը, ապա՝ Մոսկվայում, նորից վերադառնալ ծննդավայրի թեմային, այստեղից դուրս եկող արահետին, որ դառնում է լայն մայրուղի ու տանում Երեւան եւ ապա՝ Մոսկվա: Տալ «Պրավդայի», «Իզվեստիայի», մի քանի նշանավոր գրողների եւ գրականագետների կարծիքները Ս. Խանգաղյանի մասին (օգտագործել դիկտորի կամ այդ մարդկանց ձայնը): Այդ լայն ճանապարհով տուն են դառնում նրա գրքերը, ապա թոռները, որդիները, ընտանիքի անդամները եւ նրանց հետ միասին ժողովրդի բազմությունը.. »: Ահա այն գրական հիմքը, որի հիման վրա ստեղծվել է վերոհիշյալ ֆիլմը:

# Սերո Խանգադյանը Հայ գրողների միության նախագահ

## ԱԲԳԱՐ ԱՓԻՆՅԱԼ

Երեւանի գրողների միության նախագահ,  
Հայաստանի գրողների միության առաջին  
քարտուղար 1996-2001թթ.



**1988** Եւ հե-  
տ ա -  
գ ա

տարիները բացառիկ եղան մեր հասարական կյանքում: Ծանր էր, բայց մարդկանց դեմքին ժպիտ կար ու վաղվա օրվա հավատ: Գործի էին լծվել մեր լավագույն ուժերը՝ Արցախյան հերոսամարտերում հաղթանակը պիտի կոփվեր, աղետի գոտին պիտի վերականգնվեր, տնտեսությունը պիտի վերակազմավորվեր, մշակույթը պիտի...

Հայաստանի գրողների միությունը մեղավիտեթակ էր

հիշեցնում՝ դարձել էր ռազմական շտաբ, Մետաքսեն գուլպաներ էր հավաքում ռազմաճակատ ուղարկելու համար, Վազգեն Սարգսյանն իր հավատակիցների հետ հիմքն էր դնում առաջին զորական միավորումների, աշխատանքը շատ էր: Հենց այդ տարիներին էլ հենց Գրողների տանը ծնվեց նոր՝ Հայ գրողների միությունը ստեղծելու գաղափարը: Մեծ Սփյուռք ունեինք, ամեն օր նամակներ էին գալիս տարբեր գաղթօջախներից, մեր գրչակիցները գործում մասնակցություն էին ցանկանում ունենալ իրենց նոր հայրենիքի կերտման մեջ... սակայն նրանցից շատերը ՀԳՄ անդամ չէին:

Եվ ծնվեց Հայ գրողների միությունը ստեղծելու գաղափարը, որ պիտի համախմբեր աշխարհի բոլոր հայ գրողներին, պիտի դառնար նորանկախ Հայաստանի մշակութային հզոր օջախ, եւ այդ աննախադեպ մտահղացման կենտրոնում մեր լավագույն գրողն էր՝ Սերո Խանգադյանը: Ովքեր ճանաչել են այդ մեծ մարդուն կամ գոնե լսել են նրա մասին, անշուշտ գիտեն, որ մեր գրողների մեջ ամենամանավանդ էր: Կարող էր բորբոքվել, քննադատել, բողոքել՝ բայց ընդդիմադիր չէր, այլ հայրենիքի իսկական տերը: Ղարաբաղյան շարժումից տարիներ առաջ Ղարաբաղի հարցն էր

բարձրացնում Կենտկոմի առաջ: Ինքն այդ իրավունքը վաստակել էր համամիութենական իր հեղինակությունով:

1984-ից Սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանգադյանը 1990-ին դարձավ Հայ գրողների միության առաջին նախագահը եւ ղեկավարեց իր իսկ ստեղծած միությունը մինչեւ 1994-ը:

Ձորի Բալայանը հիշում է. «Երկար տարիներ նա ղեկավարել է Հայաստանի գրողների միության սկզբնական կուսակազմակերպությունը, եւ կուսակցական գրեթե բոլոր ժողովները Սերո Նիկողաւեւիչը վեր էր ածում մի յուրօրինակ միտինգի, որը համարձակորեն կարելի է ասել, թե նախակարապետը դարձավ Ստեփանակերտի ու Երեւանի կենտրոնական հրապարակներում հետազայում տեղի ունեցող ապագա համաժողովրդական ցույցերի»:

Իսկապես Հայ գրողների նախագահն էր, երբ նամակ էր գրում Բրեժնեւի. «Թանկագին Լեոնիդ Իլյիչ, քսանական թվականներին «Պրավդան» եւ «Իզվեստիան» նույնպես գրում էին, թե Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում «տեսել են ազգերի եղբայրությունը»: Այսօր այնտեղ այլեւս հայ եղբայրներ չկան... »:

Բեյրութի «Ձարթօնք» օրաթերթում տպագրվում է Սերո Խանգադյանի բաց նամակը՝ ուղղված ԽՍՀՄ Կենտրոնական Կոմիտեի գլխավոր քարտուղարին, նամակի արձագանքները եւ մեկնաբանությունները հայ գրողներին էին հասնում ոչ միայն լրագրերի, այլեւ գրեթե ամեն օր՝ «Ամերիկայի ձայն» եւ «Ազատություն» ռադիոկայանների միջոցով:

Ահա այս մթնոլորտում էր կազմավորվում Հայ գրողների միությունը: Նորաստեղծ միությունը չէր հակադրվում մայր կառույցին՝ ՀԳՄ-ին, այլ լրացնում էր նրան, անում այն, ինչ ՀԳՄ-ն չէր կարող եւ չարեց: Բայց շատ շուտով գլուխ բարձրացրին հայկական չկամությունը, նախանձն ու քեմը: Կատարված հսկայական գրական եւ հասարակական աշխատանքը, Արցախի խնդրին ուղղված միջազգային ջանքերը, Սփյուռքի ուժերը համախմբելու աննախադեպ փորձերը գնահատելու փոխարեն հենց գրական մեր միջավայրում խուլ ատելություն ծնվեց նորաստեղծ կառույցի դեմ, որ ավելի նկատելի դարձավ 1994-ից հետո, երբ Հայ գրողների միության նախագահի պաշտոնում Սերո Խանգադյանին փոխարինելու եկավ նշանավոր հայ արձակագիր Հովհաննես Մելքոնյանը:

Ինձ վիճակվեց Գրողների միության անդամ դառնալ հենց այդ ժամանակ՝ 1990-ին՝ երկու միությունից էլ միաժամանակ անդամատոմսեր ստացա, որ ինձ համար մեծ պատիվ էր համարում: Իսկ մինչ այդ՝ 1989-ին արդեն հասցրել էի մասնակցել երիտասարդ գրողների 9-րդ համամիութենական կոնֆերանսին, որին հրավիրվել էին պատվիրակներ Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից: Մեր հայկական պատվիրակության մեջ միայն մեկ բացակա եղավ՝ Վազգեն Սարգսյանը: Եվ մենք հպարտանում էինք, որ մեր գրող

Խառան  
Հարությունյանի  
լուսանկարների  
ալբոմից



եղբայրն ամենակարելու գործն է անում սահմանում: Մեկ տարի հետո մեր՝ երիտասարդ գրողներիս առջև իր հյուրընկալ դռները բացեց անկրկնելի ու հրաշք Պիցունդան: Հավատացած էի, որ գրական վեճերի ժամանակը չէ, այլ գործի, որ պիտի ոգեւորեր բոլորիս, բայց...

Գրողների միությունում այլ կերպ էին դատում, ես իմ աչքերով եմ տեսել այն, ինչ միայն թյուրիմացություն կարելի է կոչել: 1996-ին ՀԳՄ համագումարում ընտրվեցի առաջին քարտուղար, եւ հենց առաջին օրից շրջապատվեցի գրական միջավայրին ոչ վայել ինտրիգներով: Թշնամանքը Հայ գրողների միության դեմ հրահրվում էր պետական մարմիններից, հենց նրանց կուպիտ հրահանգով էլ Հայ գրողների միության անդամները վտարվեցին Գրողների տնից, որ մեր ընդհանուր շենքը պիտի լիներ:

Հետո ծայր առան դատական քաջջուկներ տարածքի ու սենյակների համար, շատ դատական նիստերի մասնակցել եմ անձամբ՝ իբրեւ Հայաստանի գրողների միության ներկայացուցիչ: Բայց որեւէ բան փոխել չկարողացա: Կարողացա փրկել միայն իմ ու Հովհաննես Մելքոնյանի բարեկամությունը, որ իմ կյանքի հարստությունն է՝ Հովհաննես Մելքոնյանի տաղանդի երկրպագուն եմ եղել միշտ եւ եմ հիմա:

Այսպիսի վախճան ունեցավ մեր գրական մեծի՝ Սերո Խանգաղյանի հրաշալի նախաձեռնությունը, որ բազմակարծություն պիտի բերեր մեր գրական կյանք, սփյուռքահայ գրողները հյուրի կարգավիճակ պիտի չունենային մեր միությունում, այլ իսկական տեր եւ հիմնադիր, շատ ձեռքբերումներ պիտի ունենայինք, բայց չունեցանք, չստացվեց, չեղավ՝ Սերո Խանգաղյանի, Հովհաննես Մելքոնյանի դեմ անսասան կանգնած էր հայկական պահպանողականությունը, որի սեւ շնչի տակ շատ ծաղիկներ են չորացել եւ դեռ պիտի չորանան...

## Հայ գրողների միության սպեղծումը պայմանավորված էր ժամանակի հովերով

**Խ**որհրդային տարիներին Հայաստանի գրողների միության կազմում Սերո Խանգաղյանը մեծ դերակատարություն է ունեցել: Լինելով հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ եւ կուսակցական ժողովներում, եւ գրական համագումարներում Խանգաղյանն անընդհատ բարձրացրել է ազգային հարցեր, որոնք միտված են եղել ազգային ոգու պահպանմանը: Հայ գրական կյանքում, հատկապես արձակի զարգացմանը միտված մի շարք քայլեր է ձեռնարկել, փոր-

# Գրողների երկու կազմակերպություն՝ միեւնույն նպատակով

**Խ**որհրդային Միության փլուզումից հետո լուծարվեցին նաեւ բազմաթիվ մշակութային կազմակերպություններ: Եվ այդ օրերին ստեղծված իրավիճակից յուրաքանչյուրը դուրս էր գալիս յուրովի: Հայաստանի գրողների միության իրավահաջորդ ճանաչվեց Հայ գրողների միությունը, որի հիմնադիր նախագահը Սերո Խանգաղյանն էր: Չնայած այն հանգամանքին, որ շատ գրականագետներ ու գրողներ այն կարծիքին են, որ Սերո Խանգաղյանը հետագայում փոշնանեց առանձին միություն ստեղծելու համար, բայց Հայ գրողների միավորման նախագահ, գրող, թարգմանիչ **Պայծառ Զանյանը** վստահեցնում է, որ նա մինչեւ վերջ էլ պայքարել է այդ միության կայացման համար:



Պայծառ Զանյանի խոսքերով՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, ինչպես անկախացած բոլոր նախկին հանրապետություններում, Հայաստանում եւս «Հայաստանի խորհրդային գրողների միություն» կազմակերպության հիման վրա ստեղծվեցին իրավահաջորդ գրողական այլընտրանքային երկու միություններ՝ «Հայ գրողների միությունը» (գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 1991թ. հոկտեմբերի 25-ի թիվ 54/13 որոշմամբ, կանոնադրության փոփոխությունները գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության 1991թ. նոյեմբերի 12-ի թիվ 56/3 որոշմամբ, վերագրանցվել է «Հայ գրողների միավորում» անունով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2007թ., եւ «Հայաստանի գրողների միությունը» (գրանցվել է 1993թ. մարտի 13-ին):

Հայ գրողների միությունը հրատարակել է «Հայ գրող» պաշտոնաթերթը

ընդ եւ այլընտրանքային երկու թերթ՝ «Ավետաբեր» եւ «Շիրակ»: 1993թ. Վահագն Դավթյանի գլխավորությամբ 20 րոպեանոց ժողով եղավ, եւ ստեղծվեց Հայաստանի գրողների միությունը՝ Հրանտ Մաթեոսյանի նախագահությամբ: Մինչեւ 1996թ. Հայաստանի գրողների միության հետ նույն մասնաշենքում երկու գրական կազմակերպությունն աշխատել են, բայց 1996թ. ապրիլի վերջին անսպասելիորեն զինված մարդիկ են եկել եւ Հայ գրողների միության անդամներին ուժով վտարել գրողների միության շենքից՝ պատուհանից դուրս նետելով նրանց գույքը, վերցնելով փաստաթղթերը: Այդ օրվանից միավորման անդամները նստավայր չունեն: Սերո Խանգաղյանից հետո կազմակերպության նախագահ է դարձել Հայկ Հայրապետյանը, ով վատառողջ էր եւ չկարողացավ լրջորեն զբաղվել միավորման իրավունքների վերականգնմամբ: Վերջինիս հաջորդել է արձակագիր Հովհաննես Սելբոնյանը, որին էլ՝ Պայծառ Զանյանը:

Արդեն քանի տարի է՝ Հայ գրողների միավորումը՝ Պայծառ Զանյանի գլխավորությամբ, պայքարում է իր իրա-

վունքների վերականգնման համար: Դատական տարբեր ատյաններ են դիմել, շահել դատերը, բայց երբ հասել է վճիռն իրագործելու պահը, անհաջողության են մատնվել: Իսկ միավորման պահանջը մեկն է՝ իրենց տրամադրել Բաղրամյան 3 հասցեում՝ Հայաստանի գրողների միության շենքում, ըստ օրենքի իրենց պատկանող 21 սենյակը: Տիկին Զանյանի խոսքերով՝ ժամանակին իր անձնական միջոցներով սենյակ է վարձել միավորման գործունեությունը կազմակերպելու համար. չէ՞ որ միավորման անդամները պետք է հավաքատեղի ունենան: Նման պայմաններում նրանք գրքեր են խմբագրել, 5-6 անգամ «Հայ գրող» թերթը հրատարակել, տարբեր միջոցառումներ կազմակերպել: Ներկայումս նստավայր չունեն, որի համար դիմել են պետական բարձրագույն մարմիններին՝ ընդհուպ մինչեւ հանրապետության նախագահ եւ վարչապետ: Բայց շատ դեպքերում նրանց խոսքը նույնիսկ տեղ չի հասել:

«ՀՀ պետաբիտրաժը նախ 29.12.1991թ., ապա՝ 28.03.1996թ. վճիռներով Բաղրամյան 3 հասցեում գտնվող գրողների տունը, Ծաղկածորի գրողների հանգստյան տունը եւ գրական ֆոնդի միջոցները հավասարապես բաժանել է երկու միություններին, որի արդյունքում «Հայ գրողների միությունը»՝ իր աշխատակազմով, իր «Հայ գրող» ու «Ավետաբեր» թերթերի խմբագրակազմերով, 7 տարի զբաղեցրել է Պետաբիտրաժի տարբեր վճիռներով իրեն տրված Բաղրամյան 3 հասցեում գտնվող շենքի 21 սենյակ: Հայ գրողների միավորման Բաղրամյան 3 հասցեում գտնվող Գրողների տնից վտարման անօրինականության հարցը քննարկվել է ՀՀ դատարաններում, ՀՀ գլխավոր դատախազությունում, սակայն միշտ հետաձգվել ու թողնվել է առկախ», – նշված է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված մամուլում: Նշվում է նաեւ, որ այդ 21 սենյակը վարձակալության իրավունքով Հայաստանի գրողների միությունը տրամադրել է գրողների հետ կապ չունեցող զանազան ՄՊԸ-ների եւ պահանջում է դրանք վերատրամադրել օրինական պահանջատիրոջը՝ Հայ գրողների միա-

վորմանը:

Բոլոր փաստերը, որոնք ներկայացնում են դատարան, հիմնավորված են, բայց մշտապես վերջին պահին որոշումը կայացվում է Հայաստանի գրողների միության օգտին:

Հայ գրողների միավորումը ներկայումս ունի 525 գրող՝ ներառյալ երիտասարդ ստեղծագործողները: Ենթադրյալ, որ միավորման անդամ են նաև սփյուռքահայ գրողները: Միավորման նախագահի հավաստմամբ՝ իրենց միության անդամ դառնալու համար պետք է գրական վաստակ ունենալ, այսինքն՝ հրատարակված գրքեր, ինչպես նաև երեք գրողի երաշխավորագիր եւ այլ փաստաթղթեր: Նույնիսկ շենքային, գույքային հարցերի չլուծված պայմաններում շատ գրողներ են այժմ դիմում միավորման անդամ դառնալու համար: Հայաստանի գրողների միությունը նույնպես ունի 500-ից ավելի անդամ, եւ արդյունքում ստացվում է, որ մեր շրջապատում բոլորը գրողներ են: Մեր այս դիտարկմանը Պայծառ Զանյանը պատասխանեց. *«Եթե դուք գնաք Հայաստանի գրողների միությունը եւ պահանջեք նրանց անդամների ցանկը կամ առավել եւս նրանց գրական վաստակի մասին տեղեկություններ, ապա կտեսնեք, որ նրանցից շատերը գրականության հետ ընդհանրապես կապ չունեն. դրանք պարզապես թվաքանակ ապահովող անուններ են»:*

Տիկին Զանյանը նշեց նաև, որ Հայաստանի գրողների միությանն առաջարկել են միավորվել. չէ՞ որ այդ կազմակերպությունների նպատակը մեկն է՝ ապահովել հայ գրական կյանքի ընթացքը: Բայց համաձայնության չեն եկել, ենթադրում ենք, որ միավորվելու դեպքում նույնպես կառաջանան շատ խնդիրներ, հատկապես կառույցի ղեկավարման:

Ի վերջո, ո՞վ է այս հարցին լուծում տալու, եւ պետական այրերն այս իրողության վրա մինչեւ ե՞րբ են աչք փակելու: *«Ճիշտ է, միավորման գործունեությունը կարգավորելու ուղղությամբ կատարած աշխատանքներս դեռեւս ապարդյուն են, բայց միավորման անդամներս շարունակելու ենք պայքարել այս հարցի արդարացի լուծման համար»*, – խոսքը եզրափակեց Պայծառ Զանյանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Հայ գրողների միության ստեղծումը պայմանավորված էր ժամանակի հովերով



էջ 117 ▶ ձել աշխուժացնել եւ ավելի բարձր մակարդակի հասնել ազգային գրականությունը:

Հետանկախացման տարիներին Սերո Խանգադյանի, Հովհաննես Սելջոնյանի եւ մի շարք այլ գրողների նախաձեռնությամբ ձեւավորվեց Հայ գրողների միությունը, որ նպատակ ուներ միավորելու Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի գրողներին: Երկու տասնյակից ավելի գրողներ դուրս եկան Հայաստանի գրողների միության կազմից՝ անդամագրվելով նոր կազմակերպությանը: *«Ազատության ոգին, որ եկավ անկախությունից հետո, համակեց որոշ գրողների: Կարծում եմ՝ միանգամայն ազնիվ նպատակներով նրանք դա արեցին՝ մտածելով, որ գրական միջավայրում բազմազանություն կլինի: Այդ ժամանակ ոչ ոք չէր կարող խոչընդոտել առանձին գրական ընկերությունների, խմբակների ձեւավորմանը»*, – նշեց գրականագետ, Հայաստանի գրողների միության քարտուղար **Պետրոս Դեմիրճյանը**:

Խոսելով այդ հարցում Սերո Խանգադյանի դերակատարության մասին՝ վերջինս նշեց. *«Այդ տարիներին եւ Սերո Խանգադյանի հետ այդ պառակտման մասին բազմիցս խոսել եմ՝ շեշտը դնելով այն հանգամանքի վրա,*

*որ շատ փոքրոգի մարդիկ ստեղծված իրավիճակը կարող են օգտագործել Հայաստանի գրողների միության համախմբվածությունը խախտելու համար: Գուցե սրանք ժամանակի հովերով էին պայմանավորված եւ ազնիվ նպատակներով էին արվում, բայց փաստը մնում է փաստ, որ հետագայում 29 գրող, այդ թվում նաև Սերո Խանգադյանը, ովքեր կազմավորել էին Հայ գրողների միությունը, մեղայական խոսքերով, «վերադարձի» դիմումով նորից մտան Հայաստանի գրողների միության կազմ»:*

Սերո Խանգադյանը շուտ հասկացավ, որ այդ քայլը ոչ թե գրական կյանքում բազմազանություն, այլ պառակտում մտցրեց: Պետրոս Դեմիրճյանի կարծիքով՝ բնական էր առանձին միություն ստեղծելու գաղափարը. դրանք պատերազմական տարիներ էին, ստեղծվել էր նոր իրավիճակ, որին յուրաքանչյուրն արձագանքում էր յուրովի: Իհարկե, նորաստեղծ միությունը ժամանակին բարձրացրել է շենքի, գույքի հարցեր, որոնք անլուծելի են մնացել:

Այսօր Հայաստանում գործում են գրական տարբեր ընկերություններ, ինչպես օրինակ՝ Երեւանի գրողների միությունը (նախագահ՝ Աբգար Ափինյան): Սրանք առանձին իրավաբանական կառույցներ են եւ ունեն իրենց կանոնադրությունը: Ներկայիս Հայաստանի գրողների միությունն ունի 500-ից ավելի անդամ, որի կազմում ընդգրկվել են Հայաստանի, Արցախի, Սփյուռքի գրողները: Արդեն մեկ տարի է՝ Սփյուռքի հայազգի գրողները ծայրի իրավունքով մասնակցում են գրողների միության համագումարներին: Ե՛վ Արցախի, ե՛ւ Սփյուռքի գրական ընկերություններն են երաշխավորում Հայաստանի գրողների միության անդամ դառնալը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Հայաստանի գրողների միությունը ստեղծումից մինչև վերաստեղծման փորձերը

## ՂԱԿԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Հայոց լեզու և գրականություն» հանդեսի գլխավոր խմբագիր



Հին ու նոր հասարակարգերի ջրբաժանում՝ 1990-ականների սկզբին, Հայաստանի գրողների միությունը պառակտվեց: Ստեղծվեց գրողների մի երկրորդ միություն, որը գլխավորեց Սերո Խանգադյանը: Սերո Խանգադյանի ղեկավարած Հայ գրողների միությունն ավելորդություն էր... Ցավոտ հարց է, ուստի գամ ամենախտրքից:

## ՍԿԻՋԸ ԵՎ ԸՆԹԱՅԸ

ԽՍՀՄ գրողների միությունն ստեղծվել է 1934 թ., իսկ կազմակերպական աշխատանքներն սկսվել են ՀամԿ(Բ)Կ 1932 թվականի ապրիլի 23-ի որոշումից հետո: Այնպես, ինչպես այդ ժամանակաշրջանում Ստալինն անհատ գյուղացիական տնտեսությունները վերացրեց և հիմնադրեց կոլեկտիվ տնտեսություններ, արտադրական մանր ձեռնարկությունները միավորեց և ստեղծեց արդյունաբերական հզոր ձեռնարկություններ, ճիշտ այդպես էլ, միավորելով առանձին գրական խմբակցություններն ու միությունները, ստեղծեց ԽՍՀՄ գրողների միությունը: Խորհրդային տարիներին Հայաստանի գրողների միությունը ԽՍՀՄ գրողների միության գերակայության շրջանակներում անհամեմատ ավելի ինքնուրույն էր, քան Խորհրդային Հայաստանը՝ ԽՍՀՄ կազմում: Ընդհանուր էին մեծ միջոցառումները՝ համագումարներ, հոբելյաններ, գրականության օրեր, պատվիրակությունների այցելություններ, միութենական նշանակության գրական մրցանակներ... Այս ամենը շատ հրաշալի էր: Մնացածը՝ որպես առանձին գրական կազմակերպություն, ինչ ուզում ես արա:

Նշեմ, որ գրական խմբակցություններ մեզանում ավելի վաղ եւս եղել են. Թումանյանի գլխավորած «Վերնատուն»-ը՝ 1899-ից: 1912 թ. նույն Թումանյանի նախագահությամբ հիմնադրվեց Հայ գրողների կովկասյան ընկերությունը, որ գործեց մինչև 1921 թ.: 1919 թ. Նիկոլ Աղբալյանը Երեւանում

ստեղծեց Հայաստանի գրական ընկերությունը: 1922 թ. Չարենցը համախոհների հետ ստեղծեց «Երեքի» գրական խումբը, այնուհետև՝ 1925-ին՝ «Նոյեմբեր» գրական խմբակցությունը: Կային նաև Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան, Աշխատավորական գրողների միությունը՝ Դերենիկ Դեմիրճյանի ու Ստեփան Ջորյանի ղեկավարությամբ, և մանաստիպ այլ միություններ:

Ահա այս բոլոր խմբակցությունները գաղափարապես հեշտությամբ ղեկավարելու նպատակով 1932 թ. ապրիլի 23-ին Ստալինը հրապարակեց «Գրական ստեղծագործական կազմակերպությունների մասին» ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը, որի հիման վրա սկսեցին աշխատանքներ

տանել դրանք միավորելու ուղղությամբ:

Զմոռանա՞նք, այդ ժամանակ միայն Ռուսաստանում կար 85 գրական կազմակերպություն: Հայաստանում դրանք թիվը մինչև 10 էր:

Եվ քանի որ մինչև Սերո Խանգադյան Հայաստանի գրողների միությունն ունի պատմություն, ինչն ստեղծվել է նաև Խանգադյանի աչքի առաջ, շատ դեպքերում նրա իսկ մասնակցությամբ, ուստի ամեն ինչ քիչ ավելի մանրամասն ու հանգամանորեն, որպեսզի պատկերը լինի ամբողջական:

1932 թ. ապրիլի 23-ի ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը հանձնարարում էր՝ վերացնել պրոլետարական գրողների ասոցիացիաները և «խորհրդային իշխանության պլատֆորմը պաշտպանող ու սոցիալիստական շինարարությանը մասնակցել ձգտող բոլոր գրողներին միավորել խորհրդային գրողների միասնական միության մեջ՝ նրանում ունենալով կոմունիստական ֆրակցիա»:

Սրա հիմամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմը մայիսի 9-ին ընդունում է համանման որոշում՝ «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» և ստեղծում գրողների միության կազմակերպիչ հանձնաժողով՝ Եղիա Չուբարի նախագահությամբ: 1934-ի մայիսին, արդեն Դրաստամատ Տեր-Սիմոնյանի նախագահությամբ ընտրվում է ՀԿՄ անդամներ ընդունող հանձնաժողով: Հունիսի 10-ին միության անդամ է դառնում 55 գրող, այդ թվում՝ Շիրվանզադեն, Դեմիրճյանը, Չարենցը, Մահարին, Թոթովենցը և ուրիշներ: Ստեղծվում է ՀԿՄ կազմկոմիտե՝ նախագահ Դրաստամատ Տեր-Սիմոնյան, քարտուղարներ՝ Ալազան, Հարություն Սկրտչյան: Լույս են տեսնում գրական պարբերականները՝ «Գրական թերթ», «Վերելք», «Խորհրդային գրականություն»,



«Երիտ գրող», «Գրական սերունդ»:

1934թ. օգոստոսի 1-5-ը տեղի է ունենում Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարը:

Համագումարի աշխատանքը հեռագրով ողջունում են Շիրվանզադեն, Հակոբ Հակոբյանը: Ձեկուցում են Դրաստամատ Տեր-Սիմոնյանը («Հայաստանի խորհրդային գրականությունը»), Հայկ Գյուլիքեւիսյանը («Երկրորդ հնգամյակն ու մեր դրամատուրգիայի խնդիրները»), Հարություն Մկրտչյանը («Հայաստանի երիտասարդական գրականությունը»): Ընդարձակ ճառով հանդես է գալիս ԴԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը: Ելույթ են ունենում Չարենցը, Բակունցը, Թոթովենցը, Դեմիրճյանը, Ն.Ջարյանը, Արմենը եւ ուրիշներ:

Պատմական նշանակություն ունի ԽՍՀՄ գրողների առաջին համագումարը, որը հրավիրվեց 1934 թ. օգոստոսի 17-ին եւ ավարտվեց սեպտեմբերի 1-ին: Հայաստանի պատվիրակության կազմում 18 գրող էր, մեկն էլ ներգրավված էր Ադրբեջանի պատվիրակության մեջ: Ողջույնի խոսք են ասում Շիրվանզադեն եւ Ջապել Եսայանը, զեկուցում է Դրաստամատ Տեր-Սիմոնյանը: Ելույթներ են ունենում Դեմիրճյանը, Չարենցը, Բակունցը, Ն.Ջարյանը:

1946 թ. հրավիրվում է Հայաստանի գրողների երկրորդ համագումարը, որը տեւում է սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը:

Համագումարի աշխատանքներին մասնակցում են հյուրեր ինչպես ԽՍՀՄ-ից, այնպես էլ արտասահմանից: Հյուրերի մեջ էին նաեւ բազմաթիվ սփյուռքահայ գրողներ: Համագումարը բացում է Ավետիք Իսահակյանը եւ, նկատի ունենալով հայ ժողովրդի, նաեւ մշակույթի ու գրականության երկփեղկված վիճակը, հռչակում «մի գրականություն՝ մի ժողովուրդ» կարգախոսը: Նա ասում է. «Մեր համագումարի ամենաարժեքավոր արդյունքն այն կլինի, որ ավելի սերտանան եւ մտերմանան մեր փոխադարձ հարաբերությունները՝ մայր հայրենիքի եւ սփյուռքի գրականությունների միջեւ»: Համագումարում զեկուցումներով հանդես են գալիս Հրաչյա Գրիգորյանը («Սովետական հայ գրականությունը եւ նրա զարգացման ուղիները»), Մկրտիչ Մկրտչյանը («Սովետական հայ արձակը»), Ռոբերտ Վարդապարյանը («Սովետական հայ պոեզիան»), Դերենիկ Դեմիրճյանը («Հայ գրականությունը Հայրենական պատերազմի օրերին»), Տիգրան Հախումյանը («Սովետական հայ գրականության լեզուն»), Հովհաննես Մամիկոնյանը («Գրական քննադատության արդի վիճակն ու խնդիրները»), Էդվարդ Թոփչյանը («Արտասահմանյան ժամանակակից հայ գրականությունը»): Մտքերի փոխանակությանը մասնակցում են Դ.Դեմիրճյանը, Ն.Ջարյանը, Ա.Ջորյանը, Ա.Կապուտիկյանը, Գ.Էմինը, Մ.Արագին, Հ.Շիրազը, Հ.Քոչարը եւ ուրիշներ: Սփյուռքահայ գրողներից ելույթ են ունենում Լ.Մետրոպոլիտանը, Կ.Սիտալը, Հ.Գարագաշը, Վ.Վահյանը, Ջ.Ռոբունին, Ա.Չարըզը, Հ.Արքայանը, Ա.Երեմյանը, Հ.Ղուկասյանը, Ս.Տերունյանը: Համագումարը միության վարչության նախագահ է ընտրում Ա.Իսահակյանին: Այդ եւ հետագա տարիներին քարտուղարի պարտականությունը կատարում են Հ.Սիրասը, Հ.Գրիգորյանը, Վ.Համազասպյանը, Գ.Բորյանը, Հ.Քոչարը:

Հայաստանի գրողների երրորդ համագումարը հրավիր-

վել է 1954 թ. հուլիսի 21-27-ը: Բացման խոսք է ասել Ավետիք Իսահակյանը: Ձեկուցումներով հանդես են եկել Սուրեն Աղաբաբյանը («1946-1954 թթ. արձակը»), Հրանտ Թամրազյանը («1946-1954 թթ. պոեզիան»), Սուրեն Հարությունյանը («Ետպատերազմյան դրամատուրգիան»), Էդվարդ Թոփչյանը («Ժամանակակից քննադատությունը»):

Բացման խոսքում Իսահակյանը հայ գրականությունը բնութագրել է որպես «բռնության դեմ ազատաբաղձ մարտնչողների գրականություն, որը եղել է հայ ժողովրդի ինքնապաշտպանության՝ լեզվի, կուլտուրայի հատու զենքը: Հայ գրականությունը պայքարել է այլասերման դեմ, կոսմոպոլիտիզմի դեմ, նա պայքարել է ազատության, արդարության եւ լավագույն ապագայի համար եւ պիտի շարունակի այդ պայքարը»:

Համագումարում մտքերի փոխանակությանը մասնակցում են ինչպես հայ գրողները, այնպես էլ հյուրերը՝ Կ.Սիմոնովը, Մ.Լուկոնինը, Վ.Ջվազիցեւան, Ա.Չիքովանին, Ռ.Համգատովը, Մ.Սլուցկին, Գ.Մայորեսկուն (Ռումինիա), Լ.Ստեֆանովան (Բուլղարիա), Ռ.Դանեցկին (Լեհաստան):

Վարչության նախագահ է ընտրվում Ավետիք Իսահակյանը, առաջին քարտուղար՝ Էդվարդ Թոփչյանը, քարտուղար՝ Հակոբ Սալախյանը:

Չորրորդ համագումարը գումարվել է 1959 թ. հունվարի 6-8-ը: Ձեկուցել են Է.Թոփչյանը, Ա.Տարոնցին, Գ.Բեսը: Ելույթ են ունեցել Գ.Մահարին, Մ.Շահինյանը, Ա.Խանզադյանը, Ն.Ջարյանը, Հ.Քոչարը, Հ.Շիրազը եւ ուրիշներ: Նորընտիր վարչության պատասխանատու քարտուղար է ընտրվել Է.Թոփչյանը, քարտուղարներ՝ Գ.Սեւունցը եւ Հ.Հովհաննիսյանը:

Հինգերորդ համագումարում, հրավիրվել է 1966 թ. նոյեմբերի 7-9-ը, բացման խոսք է ասել Ա.Ջորյանը, զեկուցել են Է.Թոփչյանը, Ա.Աղաբաբյանը, Հ.Թամրազյանը: Ելույթ են ունեցել Պ.Սեւակը, Հ.Շիրազը, Ա.Չակովսկին, Կ.Գամսախուրդիան, Գ.Ադրարյանը (Լիբանան), Լ.Մոտալովան (Չեխոսլովակիա) եւ ուրիշներ: Նորընտիր վարչության առաջին քարտուղար է ընտրվել Է.Թոփչյանը, տեղակալ՝ Մ.Շաթիրյանը, քարտուղարներ՝ Պ.Սեւակը, Հ.Հովհաննիսյանը, Ա.Ալաջաջյանը:

Վեցերորդ համագումարը տեղի է ունեցել 1971 թ. հունիսի 1-3-ը, որը բացել է Գեղամ Սարյանը: Ձեկուցել են Է.Թոփչյանը, Վ.Մնացականյանը, Ա.Սարինյանը, Լ.Հախվերդյանը: Ելույթ են ունեցել Պ.Սեւակը, Ա.Կապուտիկյանը, Վ.Դավթյանը, Ա.Դարյանը (Լիբանան), Ա.Արարատը (Սիրիա) եւ ուրիշներ: Նորընտիր վարչությունը միության առաջին քարտուղար է ընտրել Էդվարդ Թոփչյանին, երկրորդ քարտուղար՝ Հրաչյա Հովհաննիսյանին, քարտուղարներ՝ Ստեփան Ալաջաջյանին եւ Լեւոն Կարապոյզյանին:

1975 թ. մայիսի 8-ին տեղի է ունեցել ՀԳՄ վարչության լիազումար նիստ. Էդվարդ Թոփչյանն ու մյուս քարտուղարներն ազատվել են պարտականություններից, առաջին քարտուղար է ընտրվել Վարդգես Պետրոսյանը, երկրորդ քարտուղար՝ Լեւոն Մկրտչյանը, քարտուղար՝ Պերճ Ջեթունցյանը:

Հայաստանի գրողների յոթերորդ համագումարը կայացել է 1976 թ. ապրիլի 27-29-ը: Բացման խոսք է ասել Գեղամ

Սարյանը: Միության վարչության հաշվետվությամբ հանդես է եկել Վարդգես Պետրոսյանը: Այնուհետև լսվել են հարակից զեկուցումներ՝ «Դասական ավանդները եւ ժամանակակից պոեզիան» (Վ.Դավթյան), «Գեղարվեստական թարգմանությունը ազգային գրականության անբաժանելի մաս» (Լ.Սկրտչյան), «Արդիականությունը որպես գրականության չափանիշ» (Պ.Ջեյթունցյան), «Արդի սովետահայ մանկական գրականությունը» (Ա.Սահինյան), «Սովետահայ արդի դրամատուրգիան եւ նրա մի քանի խնդիրները» (Լ.Սամվելյան), «Քննադատությունը եւ գրական պրոցեսը» (Ա.Գրիգորյան): Ելույթ են ունեցել Մ.Սարգսյանը, Ռ.Արամյանը, Յ.Շիրազը, Ն.Ֆեդորենկոն («Ինոստրանայա լիտերատուրա»-ի խմբագիր), Գ.Եմինը, Գ.Թամրազյանը, Ս.Աղաբաբյանը եւ ուրիշներ:

ՀԳՄ վարչության առաջին քարտուղար է ընտրվել Վարդգես Պետրոսյանը, երկրորդ քարտուղար՝ Լեւոն Սկրտչյանը, քարտուղարներ՝ Սկրտիչ Սարգսյանը, Պերճ Ջեյթունցյանը եւ Լեւոն Կարազյոզյանը:

Հայաստանի գրողների ութերորդ համագումարը տեղի է ունեցել 1981 թ. մայիսի 6-8-ը: Բացման խոսք է ասել Սարմենը: Միության վարչության հաշվետու զեկուցումով հանդես է եկել Վ.Պետրոսյանը: Այնուհետև զեկուցել են Մ.Սարգսյանը («Արդիականության պահանջների դիրքերից»), Ն.Աղաբաբյանը («Արդիականությունը ու պոեզիան»), Գ.Տեր-Գրիգորյանը («Ժամանակակից թատերգությունը»), Է.Ջրբաշյանը («Արդի սփյուռքահայ առաջադիմական գրականության միտումները»), Ս.Սարինյանը («Սովետահայ քննադատության արդի վիճակը»), Ս.Հարությունյանը («Սովետահայ մանկական գրականության խնդիրները»), Ա.Գրիգորյանը («Հայ գրականությունը համամիութենական գրական շարժման մեջ»):

Ստքերի փոխանակությանը մասնակցել են Ա.Խանգաղյանը, Ս.Կապուտիկյանը, Ա.Շաթիրյանը, Վ.Դավթյանը, Գ.Հարությունյանը, Ա.Անդրեասյանը (ԱՄՆ), Գ.Ցիցիշվիլին (Վրաստան), Լ.Հախվերդյանը, Գ.Մելքոնյանը, Օ.Սարգսյանը (Լիբանան), Ռ.Մելիքը (Ֆրանսիա):

ՀԳՄ վարչության նախագահ է ընտրվել Վարդգես Պետրոսյանը, վարչության քարտուղարներ՝ Արամ Գրիգորյանը, Պերճ Ջեյթունցյանը, Սաղաթել Հարությունյանը եւ Սկրտիչ Սարգսյանը:

Հայաստանի գրողների 9-րդ համագումարը հրավիրվել է 1986 թ. մայիսի 20-21-ին: Բացման խոսք է ասել Համո Սահյանը: Միության վարչության հաշվետու զեկուցմամբ հանդես է եկել Վ.Պետրոսյանը: Լսվել են հարակից զեկուցումներ՝ «Գրական պրոցեսը եւ արդիականությունը» (Ն.Աղաբաբյան), «Ժամանակակից գրական զարգացման տեսական պրոբլեմները» (Է.Ջրբաշյան): Ելույթ են ունեցել Ս.Խանգաղյանը, Ա.Սահինյանը, Շ.Թաթևիկյանը, Գ.Ղափլանյանը, Ս.Արզումանյանը, Գ.Սեւանը, Ռ.Դավիդյանը, Գ.Եմինը, Գ.Ադրայանը (Լիբանան), Յու.Վերջենկոն՝ ԽՍՀՄ ԳՄ վարչության քարտուղար:

Միության վարչության նախագահ է ընտրվել Վարդգես Պետրոսյանը, քարտուղարներ՝ Նորայր Աղաբաբյանը, Արամ Գրիգորյանը, Վահագն Գրիգորյանը եւ Սաղաթել Հարությունյանը:

1986թ. մարտի 31-ի տվյալներով ՀԳՄ շարքերում ընդգրկված էր 337 գրող: 1934-1986 թթ. ընթացքում ԽՍՀՄ

գրողների միության անդամ է եղել 651 հայ գրող:

1988 թ. հունվարի 27-ին ՀԳՄ վարչության լիազուսմար նիստը պարտականություններից ազատում է Վ. Պետրոսյանին եւ մյուս քարտուղարներին: Վարչության նախագահ է ընտրվում Հրաչյա Հովհաննիսյանը: Նույն թվականի փետրվարի 5-ի վարչության նիստում քարտուղարներ են ընտրվում Հովհաննես Մելքոնյանը եւ Ռուբեն Հովսեփյանը: 1989 թ. կրճատվում է քարտուղարի պաշտոնը, եւ Ռուբեն Հովսեփյանն անցնում է այլ աշխատանքի:

Այս ընթացքում առանձին զեկուցումներով հայ գրականությունը ներկայացվել է ԽՍՀՄ գրողների համագումարներում, որոնց հայ գրական ընտանիքը միշտ էլ ներկայացել է առանձին պատվիրակություններով:

Գրողների միության աշխատանքը գտնվել է պետական հսկողության ներքո: 1920-1930-ական թվականներին ընդունած որոշումներից հետո ընդունվել են նոր որոշումներ, կուսակցական համագումարներում միշտ էլ առանձին բաժիններ են հատկացվել գրական աշխատանքներին, գրողների համագումարներում միշտ էլ ելույթ են ունեցել կուսակցության առաջնորդները կամ հղել իրենց ողջույնի խոսքը, գրողները պարբերաբար հանդիպել են պետության ղեկավարների հետ: Մի խոսքով՝ գրականությունը դիտվել է որպես գաղափարական աշխատանքի կարեւորագույն բնագավառ: Այդ ընթացքում գրականությունը դարձել է երկրում տեղի ունեցող հանրային-քաղաքական, սոցիալ-քարոզական տեղաշարժերի հայելին:

Անցած տասնամյակներին ընդունվել են ՀամԿ(Բ)Կ եւ ԽՍԿԿ, ՀԿ(Բ)Կ եւ ՀԿԿ Կենտկոմների հետեւյալ հիմնական որոշումները՝

1. Հայաստանի Կոմկուսի քաղաքականությունը գեղարվեստական գրականության ասպարեզում (1926, 13 հունիս),
2. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» (1932, 23 ապրիլ),
3. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» (1932, 9 մայիս),
4. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը խմբակայնության դեմ (1933, 20 օգոստոս),
5. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Հայպետհրատի արտադրանքի իդեոլոգիական անկայունության մասին» (1933, 14 նոյեմբեր),
6. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Գրական քննադատության եւ մատենագիտության մասին» (1940, 2 դեկտեմբեր),
7. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Քննադատության եւ մատենագիտության մասին» (1941, 15 հունվար),
8. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը ««Ձվեզդա» եւ «Լեւնիճգրադ» ամսագրերի մասին» (1946, 14 օգոստոս),
9. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Դրամատիկական թատրոնների խաղացանկի եւ դրա բարելավման միջոցառումների մասին» (1946, 26 օգոստոս),
10. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Հայաստանի կուսակցական

- կազմակերպություններում գաղափարական աշխատանքն ուժեղացնելու մասին» (1947, 30 դեկտեմբեր),
11. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը ««Մեծ կյանք» կինոնկարի մասին» (1946, 4 սեպտեմբեր),
  12. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը Վ.Մուրադելու ««Մեծ բարեկամություն» օպերայի մասին» (1948, 10 փետրվար),
  13. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը ««Կրոկոդիլ» ամսագրի մասին» (1948, 11 փետրվար),
  14. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը ««Զնամյա» ամսագրի մասին» (1946, օգոստոսի 14-ի որոշման կատարման ստուգում) (1949, 11 հունվար),
  15. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումները «Խորհրդահայ մանկական գրականության մասին», «Դրամատուրգիայի ու թատրոնների խաղացանկի մասին» (1949, 10 փետրվար),
  16. «Անհատի պաշտամունքը եւ նրա հետեւանքը հաղթահարելու մասին» (1956, 2 հուլիս),
  17. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը ««Վոպրոսի տեորիի ի Խտորիի լիտերատուրի» ամսագրի հրատարակության մասին» (1956, 3 նոյեմբեր),
  18. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը ««Մեծ բարեկամություն», «Բոգդան Խմելնիցկի», «Ամբողջ սրտով» օպերաների գնահատության սխալների մասին» (1958, 28 մայիս),
  19. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը ««Նորը Մայակովսկու մասին» գրքի վերաբերյալ (1959, 31 մարտ),
  20. ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշումը ««Սովետական գրականություն» ամսագրի 1961 թ. 4-րդ համարում տպագրված Հ.Մաթեոսյանի «Անհիժոր» ակնարկի առթիվ «Սովետական գրականության ամսագրի թույլ տված քաղաքական կոպիտ սխալի մասին» (1961, 12 հուլիս),
  21. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը «Խորհրդային մանկական գրականության հետագա զարգացման միջոցառումների մասին» (1968, 11 ապրիլ),
  22. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը «Գրական-գեղարվեստական քննադատության մասին» (1972, 21 հունվար),
  23. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը «Ստեղծագործող երիտասարդության հետ տարվող աշխատանքի մասին» (1976, 11 հոկտեմբեր),
  24. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը «Գաղափարական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա կատարելագործման մասին» (1979, 26 ապրիլ),
  25. ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը «Կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ գրական-գեղարվեստական ամսագրերի ստեղծագործական կապերի մասին» (1982, 23 հուլիս):

Սա կուսակցական որոշումների ամենեւին էլ ամբողջական ցուցակը չէ:

Այս ընթացքում մամուլի էջերում տպագրվել են նաև առաջնորդող հոդվածներ, ծավալվել են բազմաթիվ բանավեճեր, համամիութենական եւ միջազգային շրջանակներում արծարծվել են խորհրդային գրականության տեսության, պատմության եւ գեղարվեստական զարգացման հետ կապված բազմապիսի հարցեր:

Տարիների ընթացքում ԽՍՀՄ գրողների միությունն

ամրապնդվել եւ դարձել է երկրի ամենահզոր հասարակական կազմակերպություններից մեկը: Ամրապնդվել է նաև Հայաստանի գրական կազմակերպությունը, որի կազմում գործել են պոեզիայի, արձակի, քննադատության, թատերգության, ինչպես նաև՝ թարգմանական, մանկական, ռազմա-հայրենասիրական, ռուսական, ադրբեջանական եւ քրդական գրականությունների բաժանմունքներ, եղել է հայ գրողների երկերի հրատարակությունը ԽՍՀՄ հանրապետություններում եւ արտասահմանում կազմակերպող բաժին: Գործել է ԽՍՀՄ գրական ֆոնդի հայկական բաժանմունքը՝ ՀԿՄ-ի ենթակայությամբ: Գործում էր գրականության պրոպագանդայի բյուրոն: 1930 թ. հունվարի 17-ից գործում է Գրողների տունը, որտեղ կազմակերպվում են գրական երեկոներ, քննարկումներ, ընթերցումներ:

Այդ տարիներին գրական միավորումներ են ստեղծվել Գյումրիում, Վանաձորում, Սյունիքում եւ հանրապետության մի քանի այլ շրջաններում:

Գրողների միությունը, ինչպես Հայաստանում, այնպես էլ Մոսկվայում եւ երկրի այլ քաղաքներում կազմակերպում էր դասական եւ ժամանակակից գրողների, գրական առանձին երկերի («Սասնա ծռեր») հրեյլանների նշումը: Մոսկվայում, Միության այլ հանրապետություններում եւ արտասահմանյան երկրներում անց են կացնում գրական տասնօրյակներ ու շաբաթներ, հանրապետական, համամիութենական եւ միջազգային գիտաժողովներ ու համդիպումներ: Գրողներն ընտրվում են հանրապետական եւ միութենական Գերագույն խորհուրդների պատգամավորներ, Գիտությունների ակադեմիայի անդամներ: Նրանցից շատերն արժանացել են շքանշանների, մեդալների, մրցանակների, ինչպես նաև դափնեկրի կոչման:

Այս ընթացքում ամրապնդվել են կապերը սփյուռքահայ գրողների եւ գրական կազմակերպությունների հետ, հաճախակի են դարձել փոխայցելությունները: Պետական եւ հասարակական մարմինները սահմանել են մի քանի մրցանակներ՝ սփյուռքահայ գրողների, հասարակական-մշակութային գործիչների համար: Երեւանում տպագրվող «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարով լույս են տեսել բազմաթիվ գրքեր: 1980 թվականից շնորհվում է նաև ՀԿՄ ամենամյա վեց մրցանակ՝ Հովհաննես Թումանյանի անվան (ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման ասպարեզում), Ավետիք Իսահակյանի անվան (պոեզիայի ասպարեզում), Դերենիկ Դեմիրճյանի անվան (արձակի ասպարեզում), Գաբրիել Սունդուկյանի անվան (թատերգության ասպարեզում), Միքայել Նալբանդյանի անվան (գրական քննադատության եւ հրապարակագրության ասպարեզում), Ստեփան Զորյանի անվան (մանկապատանեկան գրականության ասպարեզում), Եղիշե Չարենցի անվան (թարգմանական գրականության ասպարեզում): Հետագայում Միքայել Նալբանդյանի անվան մրցանակն առանձնացավ հրապարակագրության համար, իսկ գրական քննադատության ասպարեզում սահմանվեց Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակ:

1985 թվականից ՀԿՄ-ն երկու-երեք ընդմիջումով անց է կացրել «Թարգմանչաց տոն» համամիութենական միջոցառումը, որին մասնակցել են ինչպես հայ գրողներ, այնպես էլ

ԽՍՀՄ եւ արտասահմանյան բազմաթիվ ժողովուրդների գրական ներկայացուցիչներ: Այդ տոնը նշվում է նաեւ հիմա:

Թբիլիսիում շարունակվում է 1914 թվականից Հոկտեմբերի Թումանյանի հիմնադրած Սայաթ-Նուվյան Վարդատոմի ամենամյա նշումը, որին մասնակցում են Հայաստանի գրողները: Ավանդական են դարձել նաեւ պոեզիայի Տերյանական (Գանձա, 1967 թվականից), Սեւակյան (Սովետաշեն-Չանգակատուն, 1972 թվականից), Իսահակյանական (Գյումրի, 1975 թվականից) օրերը: 1984 թվականից Գորիսում նշվում է «Բակունցյան օր» համդիսությունը: Բոլոր այս գրական օրերին, գրողներից բացի, մասնակցում են ժողովրդի հոծ զանգվածներ: Տեղի են ունենում ելույթներ, արտասանություններ, ժողովրդական հանդիսություններ: Շուրջ երկու տասնամյակ ավանդական էին դարձել Թումանյանական եւ Չարենցյան ընթերցումները:

## ՊԱՌԱԿՏՈՒՄ

1980-ական թվականների կեսերից ամբողջ ԽՍՀՄ-ում բռնկված տնտեսական, քաղաքական վերակառուցման ճգնաժամն անդրադարձավ նաեւ գրական-մշակութային կյանքի, գործունեության վրա: Մի կողմից ուժեղանում էին ներքին կենտրոնախույս միտումները, մյուս կողմից՝ ջլատվում էր ԽՍՀՄ գրական կազմակերպությունը:

1989-ի սկզբներին հիմնադրվում է Ռուս արվեստագետների ընկերությունը, որի մեջ մտնում են գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, կինոգործիչներ, անզամ գիտնականներ (տե՛ս «Լիտերատուրնայա գազետա», 1989, N13, 29 մարտ):

Ստեղծվեցին տարբեր գրական կազմակերպություններ, ինչպես Մոսկվայի «Ապրիլ»-ը, Նովոսիբիրսկի (Սիբիրի) գրական ասոցիացիան (տե՛ս Յա. Սամոխին, «Խոսքից դեպի գործ», «Լիտերատուրնայա գազետա», 1989, թիվ 48, 29 նոյեմբեր): Գրական կազմակերպությունից անջատվելու եւ ինքնուրույնաբար գործելու միտումներ ի հայտ բերեցին կենտրոնական գրական պարբերականները («Լիտերատուրնայա գազետա» եւ այլն):

Այս պայմաններում՝ պետական անկախության եւ ինքնուրույնության հռչակման քաղաքական մթնոլորտում, անկախության ու ինքնուրույնության եւ ձգտում նաեւ հանրապետական գրական կազմակերպությունները եւ ինքնաբերաբար դուրս գալիս ԽՍՀՄ գրողների միության կազմից:

Անջատողական, նաեւ պառակտողական միտումներն ուժեղացան նաեւ Հայաստանի գրողների միությունում, մի կազմակերպություն, որ 1988-1990 թվականներին ըստ էության դադարել էր գործելուց, դադարել էր ոգեղեն կենտրոն լինելուց: Ասենք, ոգեղեն կենտրոն այն երբեք էլ չէր եղել, քանի որ դիտվել էր որպես անձնական փառքի դարբնոց. ով եկավ՝ պարտադրեց իրեն կամ յուրայիններին: Բայց 1988 թ. սկսած ազգային-ազատագրական պայքարի թեժ բովում Հայաստանի գրողների միությունը պարտավոր էր վերածվելու ոգեղեն միջնաբերդի, բայց... չվերածվեց:

Միության անգոյության եւ լռության ծայրը խզվեց 1990-ի փետրվարին անցկացված երկօրյա լիագումար մի նիստով՝ քննարկման նյութ ունենալով ազգային կյանքի հրատապ հարցերը: Միաժամանակ «Գրական թերթ»-ում (1990, թիվ 25,

15 հունիս) հրապարակվեց ՀԳՄ նախագահության ներկայացրած Հայ գրողների ընկերության կանոնադրության նախագիծը: Այն կոչված էր ոչ միայն վերանվանելու Հայաստանի գրական կազմակերպությունը, որը ղեկավարվում էր ԽՍՀՄ ԳՄ 1934 թ. ծրագրով ու կանոնադրությամբ, այլեւ, հասարակական կազմակերպությունների վերակառուցումների պայմաններում, դրան տալու «ավելի կենդանի եւ ավելի անկախ» բնույթ:

Բայցեւ դա էլ չօգնեց՝ վերականգնելու միության ընկած հեղինակությունը, եւ այդ պայմաններում գրողների միության վարչության նախագահը հրաժարական տվեց: Այդ հարցը քննարկվեց 1990 թ. հունիսի 21-ի ՀԳՄ վարչության նիստում եւ հարզվեց Հրաչյա Հովհաննիսյանի հրաժարականի դիմումը: Իսկ գրողների միության աշխատանքները վարելու եւ առաջիկա 10-րդ համագումարին նախապատրաստվելու պարտականություններն ստանձնեց գործող քարտուղարությունը՝ Հովհաննես Մելքոնյան, Վահագն Գրիգորյան, Սաղաթել Հարությունյան (տե՛ս «Գրական թերթ», 1990, թիվ 27, 29 հուլիս):

Հենց այդ պահից էլ սկսվեց պառակտումն ու ուժերի ջլատումը: 1990 թ. հունիսի 25-ի քարտուղարության նիստը, ըստ «Գրական թերթ»-ի «Հայտարարության» (1990, թիվ 28, 6 հուլիս)՝ «արհամարհելով վարչության նիստի որոշումը եւ Վահագն Գրիգորյանի անհամաձայնությունը (մյուս՝ երրորդ քարտուղարը չի մասնակցել՝ Ռ.Գ.), ընդունել է իր իրավասու-թյունից դուրս որոշում՝ Սերո Խանգադյանին ընտրելով պատվավոր նախագահ, Հովհաննես Մելքոնյանին՝ առաջին քարտուղար եւ կամայականորեն ընդլայնել է քարտուղարության կազմը՝ ի դեմս Շիրակ Մանուկյանի եւ Հրաչյա Սարուխանի: Նույն օրը Հովհաննես Մելքոնյանը բռնագրավել է ՀԳՄ կլոր կնիքը»:

ՀԳՄ վարչության նախագահության 13 անդամ այդ նիստի որոշումը համարել է «անօրինական եւ դատապարտելի»՝ հարցերի լուծումը վերապահելով համագումարին:

Գրողների միությունում տիրող վիճակի մասին հայտարարությամբ հանդես եկավ նաեւ ինը համեմատաբար երիտասարդ գրող՝ սկզբից եւեթ իրավացիորեն ասելով. «Վերջին տարիներին Հայաստանի գրողների միությունը դարձել է մարդկային մանր ու ճղճիմ կրքերի թատերաբեմ: <...>: Ծանր է ասելը, բայց վերջին երկու տարում, հակառակ միասնության ճիգերի, այնտեղ իշխել են պառակտման ոգին, անլությունը, անգործությունը» («Հայք», 1990, թիվ 22, 8 հուլիս):

Ասես 1920-1930-ականներին խմբակային պայքարի ոգով ծայր է առնում մի նոր գրապայքար: Տպագրվում են բանավիճային սուր լիցք ունեցող հոդվածներ՝ Աղվան Վարդանյան, «Ի՞նչ է սպասում ժողովուրդը, ինչ ենք անում մենք» («Հայք», 1990, թիվ 22, 8 հուլիս), Անահիտ Սահինյան, «Ի սեր Աստծո» («Գրական թերթ», 1990, թիվ 36, 31 օգոստոս), Հարություն Ֆելեքյան, «Պատեհապաշտությունը հիշողություն չունի» («Գրական թերթ», 1990, թիվ 40, 28 սեպտեմբեր): Հանդես են գալիս նաեւ Վ.Մնացականյանը, Ա.Թոփչյանը եւ ուրիշներ:

Վեճը ծավալվում էր ոչ թե սկզբունքների, տեսական-գեղագիտական հարցադրումների շուրջ, այլ իշխանության հասնելու ուղիների որոնման: Այս նպատակով բուն գրական

կազմակերպությունից անջատվող խումբն իր շարքերում տեղ է տալիս բազմաթիվ մերձգրական գրամուկների ու պատեհապաշտների: Նպատակը մեկն էր՝ թվական կազմի ուժեղացումով ճնշում գործադրել եւ հակակշռել գրողների միության օրինական կազմակերպությանը:

Դիրքերը պահպանելու համար ԶԳՄ վարչության քարտուղարությունը 1990 թ. հուլիսի 20-ին հրավիրում է ընդլայնված նիստ՝ քննարկելով ԶԳ 10-րդ համագումարի նախապատրաստման եւ անցկացման հարցը: Այդ նպատակով ստեղծվում է հանձնաժողով, որն իր առաջին նիստը գումարում է հուլիսի 26-ին եւ հավանություն տալիս ԶԳՄ կանոնադրության նախագծին: Սեպտեմբերի 23-24-ին հրավիրվելիք համագումարի զեկուցողներ են հաստատվում Զամո Սահյանն ու Վահագն Գրիգորյանը (տե՛ս «Գրական թերթ», 1990, թիվ 31, 27 հուլիս):

1990 թ. օգոստոսի 20-ին տեղի է ունենում ԶԳՄ վարչության քարտուղարության եւ 10-րդ համագումարը նախապատրաստող խմբի համատեղ նիստ: Ասվում է, որ «նոր գրական կազմակերպություն ստեղծելու անվան տակ» աստիճանաբար մթնոլորտն ավելի է լարվում. «Չայնեթի անհրաժեշտ քանակ ապահովելու նպատակով միանգամից շուրջ հարյուր մարդու միության մեջ ընդունելը, համոզելով եւ գայթակղիչ խոստումներ տալով ստորագրություններ հավաքելը, համագումարի նախօրյակին միջոցների մեջ խտրություն չդնելով բոլոր պաշտոններն ու դիրքերը գրավելու փորձերը վկայություն են այն բանի, որ նման քաղաքականություն վարողներին ոչ թե գրական-հասարակական, այլ անձնական շահերն են մտահոգում: Սկսվել է իսկական հաշվեհարդար ընդդիմախոսների նկատմամբ, որոնց կան «ազատում են» աշխատանքից, կան տեղափոխում՝ փոխարենը նոր՝ ձեռնտու նշանակումներ անելով: Ընդ որում՝ դա արվում է մի դեպքում օգտագործելով Զայաստանի գրողների միության բռնագրավված կլոր կնիքը, մյուս դեպքում՝ նորահայտ կնիք» («Գրական թերթ», 1990, թիվ 35, 24 օգոստոս): Թերթի նույն համարում 27 գրողի ստորագրությամբ տպագրվում է այս եւ համանման այլ արարքներ դատապարտող «Զայատարություն»-ը, ինչպես նաեւ Սաղաթել Զարությունյանի «Ապօրինություն» հոդվածը: «Զայատարություն»-ը հայտարարում է. «Զայաստանի գրողների միության ներկա կառուցվածքը սպառել է իրեն: Գրողների եւ գրականության շահերը պաշտպանելու փոխարեն այն վերածվել է պետական կուսակցական ապարատի կցորդի՝ նրա բոլոր բացասական հատկանիշներով, մշակույթի օջախը դարձել է պաշտոնամուլ եւ անձնապատասխան մանր կրքերի ասպարեզ»: Արձանագրվում է այն, ինչ ի սկզբանե մինչեւ այսօր բնորոշ է այդ անմիաբան «միությանը»: Այդ ճահիճը ձեռքից բաց չթողնելու պահանջով նրանք եւս դատապարտում են արդեն իսկ ճահճատիրոջ անունից հանդես եկողներին:

Հրապարակվում է ԶԳՄ նախագահության ընդլայնված նիստի հայտարարությունը՝ ուղղված ԶԳ խորհրդարանին, որը նորից նույն է բարբառում. «Զայաստանի գրողների միության կառուցվածքը արմատապես վերափոխելու անհրաժեշտությունը վաղուց է հասունացել: Նախկին «գրական մինիստրության փոխարեն ցանկանում ենք ունենալ իրոք ստեղծագործական մի կազմակերպություն...» («Գրական

թերթ», 1990, թիվ 37, 7 սեպտեմբեր):

Այնուհետեւ. «Զայ գրողների միության վարած քաղաքականությունը ցույց է տալիս, որ նրա ջատագովները առաջնորդվում են ոչ թե գրական-հասարակական շահերով, այլ հետապնդում են անձնական իշխանություն հաստատելու, ազդեցության ոլորտներ նվաճելու նպատակներ, ընդ որում՝ առանց միջոցների միջեւ խտրություն դնելու»: Զայտարարությամբ հանդես են գալիս նաեւ գրական պարբերականների («Գրական թերթ», «Նորք», «Լիտերատուրնայա Արմենիա», «Գարուն») խմբագրությունները՝ օրինական ճանաչելով միայն նախկին ԶԳՄ-ն ու նրա վարչությունը:

«Միանում ենք» կոչով իրենց ձայնն են հնչեցնում 32 գրող՝ միանալով օգոստոսի 24-ին «Գրական թերթ»-ում տպագրված հայտարարությանը: Լուրեր են տպագրում, թե Զայ գրողների միությունը բոլոր գրողների անունից մտադիր է համագումար հրավիրել: Այդ կապակցությամբ «Գրական թերթ»-ը տեղեկացնում է. «Զայաստանի գրողների միության այն անդամները, որոնք... կմասնակցեն վերոհիշյալ համագումարին, ինքնըստիմքյան իրենց դուրս կդնեն Զայաստանի գրողների միության կազմից» (թիվ 27, 7 սեպտեմբեր): Թերթի նույն այդ համարում Ս.Սարինյանը միաբանության կոչ է անում («Գրողի պարտավորեցնող կոչումը»), իսկ մի շարք հայտարարությունների տակ իր ստորագրությունը դրած Վազգեն Սարգսյանը՝ այդ ժամանակ ԶԳ ԳԽ պաշտպանության եւ ներքին գործերի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, երկրապահ ջոկատների կենտրոնական շտաբի գլխավոր հրամանատարը, նաեւ ԶԳՄ անդամը, «ի գիտություն գրողների» կոչով հայտնում է. «Մայրաքաղաքային տարածքում պարետային ժամի հսկողությունն իրականացնող ջոկատների աշխատանքը կանոնավորելու թելադրանքով Զայաստանի գրողների տունը մինչեւ սեպտեմբերի 20-21-ին կայանալիք ԶԳՄ համագումարը ժամանակավորապես ծառայելու է իբրեւ երկրապահ ջոկատների կենտրոնական շտաբ»: Սա մինչեւ համագումարը ԶԳՄ շենքը ոտնձգություններից պահպանելու ճիշտ մտածված քայլ էր: Երկրապահ ջոկատները հերթապահում են ԶԳՄ-ում եւ կասեցնում շենքի բռնագավթումը:

«Միանում ենք» կոչով Զայաստանի գրողների միությանն իր համերաշխությունն է հայտնում եւս 87 գրող: Առանձին հայտարարությամբ այս գիծը պաշտպանում է ԼԳԻՄ-ի 27 գրող. «Մենք՝ Լեռնային Ղարաբաղի գրողների միության ներքոստորագրյալ անդամներս, հայտնում ենք մեր ցանկությունը անհատական կարգով անդամագրվելու Զայաստանի գրողների միությանը եւ մասնակցելու նրա համագումարին» («Գրական թերթ», 1990, թիվ 39, 21 սեպտեմբեր):

Միաժամանակ Զայաստանի ԳՄ վարչության նախագահությունը 1990 թ. սեպտեմբերի 18-ի նիստում որոշում է 10-րդ համագումարը նախօրոք հայտարարված 20-21-ի փոխարեն, անցկացնել սեպտեմբերի 28-ին՝ մեկ անգամ եւս հիշեցնելով՝ «ԽՍՀՄ գրողների միության այն անդամները, որոնք անդամագրվել են Զայ գրողների միություն կազմակերպությանը, չեն կարող մասնակցել Զայաստանի գրողների միության 10-րդ համագումարին»:

Թերթի նույն համարում տպագրվում է նաեւ նորաստեղծ միության «անօրինական» մեքենայություններից սթափված

Հայաստանի գրողների միության անդամ յոթ համալսարանականների հայտարարությունը, որ այլ բան չէր, քան վերադարձի ցանկություն:

Վերջապես 1990 թ. սեպտեմբերի 28-ին Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հրավիրվում է Հայաստանի գրողների 10-րդ համագումարը: Բացման խոսք է ասում Վահագն Դավթյանը եւ խիստ քննադատում ՀԳՄ կրավորական գործունեությունն ազգային վերելքի տարիներին (1988-ից սկսած): Այսինքն՝ ինչպես ՀԳՄ-ն, այնպես եւ գրականությունը չի կարողացել համաքայլ ընթանալ ժամանակի հետ: Որոշվում է համագումարի աշխատանքներն անցկացնել երկու փուլով: Առաջին փուլը, այսինքն՝ հրավիրված համագումարը, նվիրվում է զուտ կազմակերպական հարցերի:

ՀԳՄ կանոնադրության հարցերի մասին զեկուցում է Վահագն Գրիգորյանը: Ելույթ են ունենում գրողներ: Թեեւ առաջարկվում է Հայաստանի «...գրական կազմակերպությունը հռչակել անկախ», բայց հանուն գրական-հանրային շահերի՝ շարունակվում է հին ավանդույթը. «...ավելի գործնական կապեր հաստատել ԽՍՀՄ գրողների միության եւ մյուս հանրապետությունների գրական կազմակերպությունների հետ...»: Սա մի վերջին ճիգ էր՝ փրկելու ՀԳՄ-ի խարխուլված, արատավորված, անվանարկված հեղինակությունը: Համագումարը գլխավորապես կրում է կազմակերպական բնույթ: Առաջարկվում է նախագահի երեք թեկնածու՝ Համո Սահյան, Վահագն Դավթյան, Հրանտ Մաթեոսյան: Համո Սահյանը հրաժարվում է՝ հայտարարելով՝ «Տարիքս առել եմ արդեն» եւ ավելացնելով՝ «Ես մի ընտանիք չեմ կարողանում ղեկավարել, ձե՞զ ինչպես պիտի ղեկավարեն»: Հրանտ Մաթեոսյանի օգտին քվեարկում են քչերը: Հայաստանի գրողների միության նախագահ է ընտրվում Վահագն Դավթյանը: Քարտուղարներ են ընտրվում Վահագն Գրիգորյանը եւ Վարդան Հակոբյանը («Գրական թերթ», 1990, թիվ 41, 5 հոկտեմբեր):

Հայաստանի գրողների սույն համագումարի առաջին փուլն աշխատանքները շարունակում է 1990 թ. հոկտեմբերի 17-ին եւ նոր քարտուղարներ ընտրում Սաղաթել Հարությունյանին ու Աղվան Վարդանյանին: Վերստին որոշվում է առաջիկայում հրավիրել համագումարի երկրորդ փուլ՝ քննարկելու ստեղծագործական հարցեր («Գրական թերթ», 1990, թիվ 43, 19 հոկտեմբեր):

### ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Հայ գրողների նորաստեղծ միությունն այս ընթացքում իր հերթին նորանոր քայլեր է անում: Սեպտեմբերի 20-ին Շահումյանի անվան պալատում հրավիրվում է Հայ գրողների միության ընդհանուր ժողով («Հայաստան», 1990, թիվ 214, 20 սեպտեմբեր): Այս «ժողովը» հաջորդ հրապարակման մեջ դառնում է «համագումար» եւ հռչակում. «Այժմ Հայաստանի գրողների միության հետ զուգահեռ գործում է նաեւ Հայ գրողների միությունը, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ սեպտեմբերի 20-ին...»: Սա հայտարարվում է ԽՍՀՄ ԳՄ-ից անկախ կազմակերպություն: Հայտարարողն ավագների խորհրդի նախագահ Վազգեն Մնացականյանն էր: Ասվում է նաեւ, որ միությունն արդեն հրատարակում է իր օրգանը՝ «Հայ գրող» շաբաթաթերթը, իսկ 1991-ից կտպագրվի

«Շիրակ» հանդեսը: Այնուհետեւ. «Հիմնադիր համագումարը Հայ գրողների միության պրեզիդենտ ընտրեց ականավոր գրող-հրապարակախոս Ջորի Բալայանին: Միության գրական-իրավական խորհրդի առաջին քարտուղար ընտրվեց արձակագիր Յուրիանցե Մելքոնյանը: Հայ գրողների միության համագումարը իր աշխատանքը կշարունակի նոյեմբերի վերջերին» («Հայաստան», 1990, թիվ 217, 23 սեպտեմբեր):

Ջորի Բալայանը հեղինակություն էր, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ով այդ միջոցին Արցախի հարցի արդար լուծման պահանջատիրությամբ Վիկտոր Համբարձումյանի հետ մեկտեղ հացադուլ էր հայտարարել Մոսկվայում:

Այս ընթացքում նորաստեղծ միությունը զովագրում է նաեւ իր գրականությունը՝ «Շտապեք ձեռք բերել Հովհաննես Մելքոնյանի «Քարոզարան» գիրքը... Վաճառքը միայն նախնական ցուցակագրմամբ՝ հիմնարկ-ձեռնարկություններում եւ «Նորք» գրատանը» («Հայաստան», 1990, թիվ 211, 16 սեպտեմբեր):

Հայաստանի գրողների համագումարից անմիջապես հետո «29.09.90» թվագրությամբ հանդես է գալիս Սերո Խանգադյանը: «Իմ սիրելի ընթերցողներ» վերնագրով նրա խոսքը տպագրվում է «Նամակներ խմբագրությանը» խորագրի ներքո: Նա պատմում է այն մասին, որ 1935-ին Սուրեն Այվազյանի եւ Խիկար Խուրշուդյանի հետ մեկտեղ Գորիսում ստեղծել են գրական խմբակ՝ ԽԱՍ անունով: «Ակսել Բակունցն այդ տարի օրինեց մեր ԽԱՍ-ը: 1936 թ. զարմանը Բակունցը, ինձ ու Սուրեն Այվազյանին հրավիրեց Երեւան՝ Խորհրդային Հայաստանի գրողների միության մեջ ընդունվելու նպատակով» («Հայաստան», 1990, թիվ 224, 2 հոկտեմբեր): Սակայն, ըստ Խանգադյանի, Բակունցի ձերբակալությունն ու գնդակահարությունը ձախողում են այդ ծրագիրը, իսկ իրենք հետապնդվում են որպես բակունցականներ:

Խանգադյանը շարունակում է, որ ինքը ՀԳՄ անդամ է դարձել 1950-ին եւ լծվել ստեղծագործական աշխատանքի: Այնուհետեւ ավելացնում է. «Դառը փորձը ցույց տվեց, որ ԽՍՀՄ գրողների միությունը եւ նրա վարչությունը ոչ միայն անմարդկային անտարբերության, այլեւ հանցավոր դիրք բռնեցին հայ ժողովրդի, նրա Արցախյան շարժման նկատմամբ՝ հլու-հնազանդ ենթարկվելով ԽՄԿԿ քաղբյուրոյին, կատարելով Ադրբեջանի հայաջինջ դիվերսիայի պատվիրանները: Այսքանից հետո ես հրաժարվում եմ ԽՍՀՄ գրողների միության անդամ լինելուց, հրաժարվում եմ նաեւ դրա վարչության կազմից:

Այսօրվանից ես ինձ դուրս եմ դնում Խորհրդային Միության գրողների միությանը ենթակա Հայաստանի գրողների միությունից ու մտնում վերջերս ստեղծված Հայ գրողների անկախ ու ինքնուրույն միության մեջ»:

Այս քայլից հետո Սերո Խանգադյանն ընտրվում է Հայ գրողների միության նախագահ:

Երկար սպասումներին հաջորդում են բաղձալի պահերը: Նախ՝ 1990 թ. հունիսի 7-ին Հայ գրողների միության «Կանոնադրություն»-ը գրանցում, կնիք, դրոշմ եւ հաշվարկային համար ունենալու որոշում է կայացնում Երեւանի 26 կոմիսարների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեն: Այնուհետեւ ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. փետրվարի 14-ի թիվ 111 որոշմամբ գրանցվում է Հայ գրողների միության «Կանոն-

նադրություն»-ը: Որոշումը ստորագրել են ՀՀ նախարարների խորհրդի նախագահ Վ.Մանուկյանը եւ գործերի կառավարիչի պաշտոնակատար Հ.Հակոբյանը («Հայ գրող», 1991, թիվ 5, 6, մարտ): Հայ գրողների «Կանոնադրություն»-ը 1991 թ. հոկտեմբերի 25-ին գրանցում է նաեւ Արդարադատության նախարարությունը («Հայ գրող», 1991, թիվ 18, 1 նոյեմբեր):

Սրանք դառնում են նորաստեղծ միության «ինքնուրույնության վկայականներ»:

Հայ գրողների միության հիմնադրման սկիզբ է համարվում 1990 թ. սեպտեմբերի 20-ը եւ հռչակվում է Հայաստանում առաջին անկախ ստեղծագործական կազմակերպությունը:

Հայ գրողների միության «Հայ գրող» «տեղեկաթերթի» առաջին համարը լույս է տեսնում 1990 թ. օգոստոսի 23-ին մեկ էջ ծավալով: Թերթի 1-3 համարներն ունեն խմբագիր (Բագրատ Ալեքյան), 4-րդ համարից ստորագրված է «խմբագրական խորհուրդ», իսկ 1991-ից գլխավոր խմբագիր է դառնում Հովհաննես Մելքոնյանը: Ձեռնդրված է Հայ գրողների միության «Հռչակագրի» նախագիծը: Նաեւ հայտարարվում է, որ այդ միությանն «անդամագրվել են ԽՍՀՄ գրողների միության 300 հայ անդամ», իսկ նոր ընդունվածների թիվը մոտ 100 է: «Հայ գրող»-ը բոլորտի է ենթարկում «Գրական թերթ»-ը:

Այդուհետեւ հերթական թողարկումների մեջ «Հայ գրող»-ը ներկայացնում է կազմակերպական հարցերի դրվածքը, հրապարակում այդ միության սիյուռքահայ անդամների ցուցակը, վիճում-բանավիճում Հայաստանի գրողների միության հայտարարությունների դեմ, ներկայացնում է իր առաջիկա ծրագրերն ու ձեռնարկումները, կոչեր, դիմումներ, ուղերձներ հղում վերադաս պետական կառույցներին եւ բոլոր հայ գրողներին ու արվեստագետներին:

Թերթը նշում է Սերո Խանգադյանի ծննդյան 75-ամյակը (1991, թիվ 1, 14 հունվար): Սերո Խանգադյանի առաջարկով իր միջոցների հաշվին հիմնվում է մրցանակ, «որ ամեն տարի պետք է շնորհվի Սյունյաց աշխարհում (Ձանգեզուր եւ Արցախ) ստեղծագործող երիտասարդ շնորհալի որեւէ արծակագրի»: Պարգեւը՝ 2000 ռուբլի (1991, թիվ 2, 24 հունվար): Թերթում Խանգադյանը հանդես է գալիս Ուրարտուն հայկական պետություն լինելու դրույթով եւ այդ կապակցությամբ հրապարակում իրեն հասցեագրված երկու նամակ (1991, թիվ 15, 6 սեպտեմբեր):

Հայ գրողների միությունը փորձում է նոր հունի մեջ դնել տարածաշրջանային կազմակերպությունների աշխատանքները Սյունիքում, Լոռիում, Կոտայքում եւ այլուր:

Միջանկյալ նշենք, որ այս միությանն անդամագրվել է նաեւ Սյունիքի բաժանմունքը՝ եղվարդ Ջոհրաբյանի գլխավորությամբ: Բաժանմունքը 1991 թ. հունվարի 1-ին դարձյալ Ջոհրաբյանի խմբագրությամբ լույս է ընծայում Հայ գրողների միության Սյունիքի բաժանմունքի «Սյունիք» միջշրջանային պաշտոնաթերթը:

Սյունիքի գրական հարցերի արժարժումով է.Ջոհրաբյանը հանդես է գալիս նաեւ «Հայ գրող»-ի էջերում (1990, թիվ 4, 27 սեպտեմբեր):

Ավելացնենք՝ Կոտայքի հայ գրողների միջշրջանային բաժանմունքը եւս լույս է ընծայում իր օրգանը՝ «Ավետաբեր» շաբաթաթերթը. հրատարակությունը ողջունողների մեջ է

նաեւ Սերո Խանգադյանը. «Քո հենց առաջին համարից ուզում եմ բարի ավետ բերես մեր տարաբախտ, բայց երբեւէ ազատագրական պայքարից չհոգնած Հայ ժողովրդին» (1991, թիվ 1, մայիս):

Թերթը շարունակում է իր բացահայտում-մերկացումները՝ ուղղված Հայաստանի գրողների միության դեմ եւ հաջորդաբար տպագրում Հովհաննես Մելքոնյանի «Սատանան ասում է՝ խոսիր» քննախոսությունների շարքը (1991, թիվ 8-20):

Գրական պատերազմը երկուստեք շարունակվում է:

Ինչպես սպասվում էր եւ շատ արագ ակնհայտ դարձավ՝ գրական ուժերի այս տեղաշարժ-գորավարժությունները շատ հեռու էին բուն ստեղծագործական հարցեր արծարծելուց: Կյանքն արդեն նոր դարաշրջանի մեջ էր, մտավոր առաջընթացը պահանջում էր արագ վերակառուցումներ ու վերագնահատումներ, ստեղծագործական ծրագրերի առաջադրումներ, մինչդեռ գրողները երկու մասի բաժանված... գույք էին կիսում եւ սեմյակներ էին նվաճում: Նույն շենքում հայտնվեցին երկու գրական կազմակերպություններ ու երկու նախագահներ՝ Վահագն Դավթյանը եւ Սերո Խանգադյանը: Հիմա արդեն գրական խնդիրը դարձել էր նյութական հիմնահարց, իսկ բանը հասել էր դիվանբաշիին՝ ՀՀ դատախազությանը:

Այս պայմաններում Հայաստանի գրողների միության քարտուղարությունը հանդես է գալիս հաղորդումով («Գրական թերթ», 1990, թիվ 52, 2 դեկտեմբեր), հաջորդում են բազմատեսակ այլ պարզաբանումներ ու բացատրություններ, որոնք, որքան հայտնի է, շարունակվում են առ այսօր՝ խլելով սերունդների ջանք ու եռանդ:

Այս է եղածը: Մինչդեռ եթե ամեն ինչ այլ կերպ ընթանար եւ առաջնային համարվեր նոր դարաշրջանին համահունչ նոր գրականություն ստեղծելու ստեղծագործական պահանջը, հիմա ամեն ինչ թերեւս այլ կլիներ: Գրողների միությունն առողջ դիրքերից վերակառուցման պահանջ ունի, բայց 1990-ականների փորձն անհաջող էր:

## ԵՎ ԱՅՍՊԵՍ...

Իրականում գրողների միությունը եւ առհասարակ ստեղծագործական միությունները, Ստալինից սկսած, իշխանությունների համար դարձան դազանակ, գաղափարական սանձափոկեր: Ընդ որում՝ գրողների միությունների ներսում, ինչպես նշեցինք, կային կուսակցական ֆրակցիաներ. այն գրողները, ովքեր կուսակցական էին, հավաքվում, որոշումներ էին ընդունում եւ իշխում էին մյուս անկուսակցական գրողների վրա: Թող կոպիտ չհնչի, բայց գրողների միության նախագահներ, մեկ-երկու բացառությամբ, դառնում էին երկրորդ, երրորդ կարգի գրողներ, որ իսկական խայտառակություն էր: Ասենք՝ Չարենցին, Բակունցին, Մահարուն եւ մյուսներին պետք է ղեկավարեին կուսակցական գործիչներ Եղիա Չուբարը եւ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, հետո պիտի գրական ղեկավար դիրքերում հայտնվեին Գեորգ Աբովն ու Հրաչյա Գրիգորյանը: Իսկ Շիրազին, Սահյանին, Սեւակին պիտի ղեկավարեին նախ՝ Նաիրի Ջարյանը, հետո՝ Էղվարդ Թոփչյանը, Հրանտ Մաթեոսյանին՝ Վարդգես Պետրոսյանը, Ռազմիկ Դավոյանին եւ Լեւոն Խեչոյանին՝ Լեւոն Անանյանը... Այս ամեն-

նը շահ տ ծիծաղելի կլիներ, եթե այսքան շահ լուրջ չլիներ: Էլ չեն խոսում հերթական փոխարտուղար-քարտուղարիկների մասին, ովքեր իրենց չափով էին նայում գրականությանը:

Այս գրողների միության ղեկավար կոչվածը սոսկ բարի տրամադրվածությունն է, դրական վերաբերմունքն է, անաչառ եւ ոչ ենթակայական կարծիքն է, մրցանակների ներկայացնելն է, հրատարակելն է, գրական միջոցառումների մեջ ընդգրկվելն է, հարվածներից պաշտպանելն է եւ ոչ թե ճանապարհը փակելը, մեկուսացնելն ու մոռացության մատնելը... Թե չէ, ոչ մեկը մյուսից գրել չի սովորում, այն էլ՝ ... գրական ղեկավարությունից:

Ղեկավարները, նշված երկու բացառությունից բացի, եղել են այնքան երկրորդական գրական դեմքեր, որ... մոռացվել են անգամ պաշտոնական փաստաթղթերում:

2013-ին հրատարակվեց այսպիսի գիրք. “Ēēðāðāðōðī ūē Ōāñōēāēū ī īēī āūō īēñāðāēāē ā Ñāñī óāēēēā Āðī āīēy, Āðāāāī -Ōāēōāāçī ð, 26 īīyāðy-1 āāēāðōy, 2013 ā.”: Բաց ես անում այս գրքի 30-րդ էջը եւ, ով զարմանք, Հայաստանի գրողների միության պատմությունն սկսվում է 1946-ից՝ Իսահակյանի գահակալումից: Ես այս մասին զգուշացրեցի փառատոնի կազմակերպիչներից մեկին, ով իր հերթին տեղյակ էր պահել ղեկավարությանը:

ՀԳՄ 80-ամյակի կապակցությամբ տպագրված «Գրական թերթ»-ի հոբելյանական համարում (2014, թիվ 23-24, 4 հուլիս) փորձեր էր արվել ուղղելու սխալը, բայց մասամբ միայն: Իսահակյանից առաջ հիշվել էին Դրաստամատ Տեր-Սիմոնյանն ու Նաիրի Ջարյանը: Տակը գրված է նրանց՝ միության ղեկավար եղած թվականները՝ առաջինը՝ 1934-1937 (պետք է լինի 1933-36), երկրորդը՝ 1944-46: Բայց մի՞թե տպագրողները չէին տեսնում, որ այս երկուսի միջև 8 տարվա ազատ գոտի կա, որ այդ 8 տարում ՀԳՄ-ն գործել է եւ ունեցել է իր ղեկավարները: Պարզ է մի բան՝ բացակա անունները չեն հիշվել, նրանց լուսանկարները չեն տպագրվել, որովհետեւ... նրանց տեղը չեն իմացել: Մինչդեռ պատմությունը բաց տարածություններ չի ունենում: Շարադրանքի մեջ ես այդ բացը լրացրել եմ:

Անկախությունը յուրաքանչյուր ոք ընդունեց յուրովի: Երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց, մենք պետք է այնքան խոհեմ լինեինք, որ այդ փլուզումից հետո վերանայեինք ստեղծագործական կազմակերպությունների դրվածքը: Ի վերջո, ի՞նչ է Հայաստանի գրողների միությունն ասածը: Ես արդեն շուրջ 40 տարի է՝ այդ կազմակերպության անդամ եմ եւ ոչ մեկի հետ միության մեջ չեմ, ես անհատականություն եմ, ինչպես յուրաքանչյուր գրող: Իսկ եթե անհատականություն չէ, ուրեմն նաեւ գրող չէ: Իսկ այդպիսիներ մշտապես լինում են, արագ միաբանվում եւ գրողների միությունը դարձնում խմբակային (թայֆայակյան) անառողջ պայքարի ասպարեզ: Միությունը գաղափարական, կուսակցական ղեկավարություն է պահանջում, որ կար ժամանակին, հիմա այն վերացել է, բայց սովորույթի ուժով պահպանվում են բոլոր ստեղծագործական միությունները: Նախ՝ դրանք հիմա ոչ թե միություններ են, այլ կազմակերպություններ: Եվ հետո, իմ կարծիքով, դրանք պիտի ժամանակին վերացնեինք ու ստեղծեինք համակիր գրողների ընկերակցություններ, միավորումներ կամ խմբակ-

ցություններ, որոնցում կմիավորվեին այն գրողները, ովքեր ունեն գեղագիտական ընդհանրություններ, միեւնույն նախասիրությունները, ճաշակն ու հետաքրքրությունները, ինչը գրական լուրջ առաջընթաց կապահովեր:

Եկավ ահա այն պահը, երբ օրենքը թույլատրում էր ստեղծել զուգահեռ առանձին գրողների միություն, եւ Հովհաննես Մելքոնյանը՝ մեր տաղանդավոր արձակագիրներից մեկը, նախածեռնեց Հայ գրողների միության ստեղծման աշխատանքները: Այն նպատակ ուներ միավորելու ոչ միայն հայաստանաբնակ, այլեւ Արցախի ու սփյուռքի գրողներին: Սկզբնական շրջանում որոշ մարդիկ հին միությունից տեղափոխվեցին նոր միություն, այդ թվում՝ նաեւ Սերո Խանգադյանը, ով երկար տարիներ եղել էր Հայաստանի գրողների միության կուսակցական կազմակերպության քարտուղարը, այսինքն՝ ղեկավարներից մեկը եւ հեղինակություն էր:

Սերո Խանգադյանին առաջարկեցին դառնալ նոր միության նախագահ, եւ նա համաձայնեց, ինչը, իմ կարծիքով, սխալ քայլ էր: Խանգադյանը Հայ գրողների միության նախագահ եղավ 1990-1994 թթ.:

Ինչպես ժամանակը ցույց տվեց, այդ միությունն ըստ էության չկայացավ. մի քանի համար «Հայ գրող» թերթը հրատարակվեց, իսկ մի քանի ամիս անց շատ գրողներ կրկին վերադարձան Հայաստանի գրողների միություն:

Նշեմ նաեւ, որ այդ ընթացքում Հայ գրողների միությունը մի քանի անգամ դատի տվեց Հայաստանի գրողների միությանը՝ պահանջելով տարածք, որոշակի գույք եւ այլն: Կարծում եմ, որ այդ միության չկայանալն ի նպաստ Հայաստանի գրողների միության էր, այլապես այն փշուր-փշուր կլիներ եւ շատ կթուլանար:

Ինչ վերաբերում է Սերո Խանգադյանի դերակատարությանն այդ հարցում, ապա այն միանշանակ բացասական էր, կարճ ժամանակ անց ինքն էլ հիասթափվեց իր արածից, որովհետեւ ինքն էլ վերադարձավ այնտեղ, որտեղից հեռացել էր... Հայ գրողների միությունը չկայացավ, որովհետեւ չունեց գեղագիտական հիմք: Ըստ էության գործող միության կրկնությունն էր՝ ոմանց փառասիրության ու հավակնությունների բացահայտումով:

Մեզ այդպիսի միություն պետք չէր: Կրկնում եմ՝ ինչպես այն ժամանակ, այնպես եւ հիմա մեզ անհրաժեշտ են համակիր գրողների խմբակցություններ, որոնք ունենան իրենց ստեղծագործական նախասիրությունները, գրական հանգանակները եւ մի նոր շարժում հաղորդեն մեռած, կամ կիսամեռ, կամ թվացյալ կենդանի գրական կյանքին: Այդ խմբակցությունները կունենան իրենց պարբերական մամուլը, հրատարակչությունները եւ բազմազանություն, ներքին ստեղծագործական մրցակցություն կհաղորդեն գրական ընթացքին:

Այնպես պետք է անենք, որ գրականությունը վերստին վերագտնի իր բարձր տեղը հանրային, համազգային, մշակութային գիտակցության մեջ: Իսկ Սերո Խանգադյանի ղեկավարած միությունը դա չարեց, դրա փոխարեն գույքի բաժանման հարցերով էին զբաղված: Այդ դատ ու դատաստանը, կարծեմ, հիմա էլ դեռ շարունակվում է այդ միության անունից հանդես եկող արդեն իսկ անհայտ մեկի կողմից:




**ԱՅԼԱԶԳԻ  
ԳՐՈՂՆԵՐԸ ՍԵՐՈ  
ԽԱՆՋԱԳՅԱՆԻ  
ՄԱՍԻՆ**




*Միրելի ու հարազատ են Ս. Խանզադյանի զինվորի կերպարները, ջերմացած արվեստի մեծ ուժով, մարդկային բարեմասնություններով: Եւ հպարտանում եմ իմ այդ մեծարարանդ ժամանակակցով: ԲՈՒԻՍ ՊՈԼԵՎՈՎ*

*Ամենից առավել ինձ դուր եկավ այն, ինչ Դուք գրել էք պարերագմի մասին, գրել էք անմոռուս պարանու, իսկ իմ աչքերի առջև հենց այդ անմոռուս պարանու իսանձված հայրենիքն է: ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԻՍՈՒՆՈՎ*



*Սերո Նիկոլայիչը բաց հայրնի էր եւ սիրված Ուկրաինայում, որտեղ նրա արեղծագործությունները բազմիցս հրատարակվել են ուկրաիներենով: Նրա վախճանը անկողնաբարիկ կորուսար է և ույնպես բոլոր նրանց համար, ովքեր հնարավորություն ունեին անձամբ ճանաչել նրա հարուստ անձնավորությունը: Այս տխուր լուրը ցավով արձագանքվեց նաև Նայսարանուր Ուկրաինայի դեսպանության աշխատակիցների սրտերում: Սերո Խանզադյանի պայծառ հիշարակը ընդմիջուր կմնա մեր հիշողության մեջ: Օ. Ի. ԲՈՒԿՈ*

# Ճակատագրի հարվածները եւ Սերոն



## ՀՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Դեռ երեխա՝ նրան բախտը պահել էր ծանր անակնկալներ: Հայրը՝ Նիկոլայ Խանգադյանը, գեղջուկ մի մարդ, կռվել էր Նժդեհի բանակում: Բնականաբար, խորհրդային իշխանությունը չէր մոռացել նախկին զինվորին, որը դարձել էր փոստատար եւ Գորիսից գյուղերն էր հասցնում նամակներն ու թերթերը:

1937-ի նոյեմբերին որոշ համագյուղացիների «եռանդուն աջակցությամբ» 49-ամյա այդ ազնիվ մարդուն բանտարկեցին եւ նույն ամսուն՝ գիշերը, գնդակահարեցին Երեւանի բանտի պատի տակ: Բազմանդամ ընտանիքի հոգսը մնաց երկու որդիների, հատկապես Սերոյի վրա: Մինչեւ հոր մահն էլ, երեխայության եւ պատանեկության տարիներին, նա օգնում էր հորը եւ մորը. մասնակցում էր վարուցանքին, անտառից փայտ էր բերում՝ վառելու եւ գրքեր ու տետրեր գնելու համար: Առանձին ջերմությամբ էր հիշում Աղասի Խանջյանին, ով 1934 թե՛ 1935 թվին եղել էր Գորիսում, մտել էր խեղճերի տները, օգնել նրանց: Եղել էր նաեւ Սերոյենց տանը: Եվ կարգադրել էր մի քանի փութ հացահատիկ տալ՝ ընտանիքը սովամահությունից փրկելու համար: «Լայնասիրտ, բարի եւ գեղեցիկ տղամարդ էր Աղասի Խանջյանը», - հաճախ էր ասում նա եւ տխրում: Պատմում էր մոր չարչարանքների, հոգսերի եւ հացի մասին, լավ գիտեր դրանց արժեքը:

Այսպես ընտանիքը մի կերպ կռվում էր գոյության համար, պահպանում երեխաներին: Սերոն Գորիսի մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո ուսուցչություն արեց Գորիսի շրջանի Տաթեւ եւ Խնածախ գյուղերում: Գրական փորձեր էր անում, գրում էր նաեւ բանաստեղծություններ: Ընդամենը տասը օր էր անցել ամուսնությունից, երբ սկսվեց պատերազմը: Նա անմիջապես մեկնեց ռազմաճակատ: Պատերազմի տարիներին «դասակարգային թշնամու որդիները»՝ Սերոն եւ Սուրենը, մինչեւ վերջ մնում են ռազմի դաշտում: Պատերազմի ողջ ընթացքում Սերոն ռազմաճակատում էր, պաշտպանում էր պաշարված Լե-

նինգրադը: Այդ մասին են խոսում տպագրված օրագրերը եւ «Մեր գնդի մարդիկ» առաջին վեպը (1950թ.):

Վերադարձավ եղբոր հետ: Երկուսն էլ սպաներ էին, կռվել էին սրտով, արժանացել շքանշանների, վիրավորվել: Սերոն կոնտուզիայի հետեւանքով վատ էր լսում՝ մի ականջով: Նրանք մոր-մոր էին Երեւանում տեղ անում իրենց համար, երբ հասավ երկրորդ աղետալի լուրը: Պարզվեց, որ Ջանգեզուրի ՆԳ բաժնի իրեշները Սերոյի մորը եւ քույրերին՝ Երջոյին եւ Ռոզային, աքսորել են Սիբիր: Նույնիսկ այդ անօրեն օրերին կար մի օրենք, որ արգելում էր աքսորել սպաների ընտանիքներին: Սուլեզմած եղբայրները դիմեցին մինիստրություն եւ կես ճանապարհին մորն ու քույրերին իջեցրին Ալթայի երկրամասի մի անհայտ կայարանում: Նրանք գրեթե ոչինչ չունեին հետները՝ ո՛չ փող, ո՛չ հագուստ: Ասելու բան չէ, թե Մոսկվայի եւ Բաքվի վրայով ինչպես են հասել Գորիս: Եվ մայրը արծվի պես թելերը տարածեց որդիների ընտանիքների վրա: Անվերջ Ջանգեզուր-Երեւան երթուղու վրա էր, անվերջ խանութների հերթերի մեջ՝ թոռներին պահելու համար: Հերոս կին էր: Սկսեցին բույն հյուսել: Այժմյան Կարապի լճի մոտ կային մի քանի փոքրիկ տնակներ: Սերոն, չգիտեմ ինչպես, տեղավորվեց այդ տնակներից մեկում: Ցածր առաստաղով մի սենյակ էր եւ նախասրահ: Հենց այդտեղ մենք գտանք Սերոյին, որն արդեն ուներ կին՝ հրաշալի եւ սրամիտ Ժենյան, երկու երեխա՝ Արարատն ու Նահիրին (հետո ծնվեցին եւս երկուսը՝ Անահիտն ու Արշակը), երկու քույր, երրորդն ամուսնացել էր Գորիսում: Սերոն արդեն «Մեր գնդի մարդիկ» վեպի հեղինակն էր, արժանացել էր Դ.Դեմիրճյանի եւ Ստ.Զորյանի բարձր գնահատանքին:

Չեղած տեղից այս բազմանդամ ընտանիքն ինչ-որ բան էր գտնում մեզ հյուրասիրելու համար: Մենք էլ՝ մոր-մոր գործի մտած լրագրողներ, մի փոքր դեսից-դենից բերում էինք՝ ուրախության համար:

Այս պարզ եւ հյուրընկալ հարկի տակ երկարում էին մեր զրույցները գրականության, պոեզիայի, կյանքի մասին: Սերոն հրաշալի պատմող էր: Սրտով էլ երգում էր, թեեւ, Ժենյայի կարծիքով, լսողություն չունեի: Եվ, իհարկե, աշխատավոր մարդ էր: Ովքե՞ր էին գալիս այստեղ. Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, Պարույր Սեւակը, Համո Սահյանը, Սուրեն Աղաբաբյանը, Էդ.Իսաբեկյանը, ես եւ Ռաֆիկ Աբալյանը: Կարելի է ցուցակը երկարացնել:

## Սերոյի բնավորությունից

Ուզում եմ հիշել մի քանի կենդանի գծեր Սերոյի բնավորությունից: Սիրում էր հյուրասիրել մարդկանց եւ խոսել: Սիրում էր մեծ սեղանների թամադայություն անել, որ տեսնում էր մինչեւ լույս: Հմտորեն փայտ էր ջարդում, մի քանի վայրկյանում մորթագերծ անում ոչխարը եւ կացնի հինգ-վեց հարվածով պատրաս-

տուն էր խորովածի միսը: Շատ էր սիրում պտտվել խորովածի կրակի շուրջը: Դա մի ամբողջ ներկայացում էր եւ երաժշտություն: Շատ էր լինում եւ ուրախության հավաքներին, եւ տխրության: Գնում էր թաղումներին: Բայց արի ու տես, որ այդ թաղումներին Սերոյի ներկայությունը «մի փորձանք էր դառնում»: Ասող-խոսող, համով-հոտով գրուցող այդ մարդը հանկարծ դառնում էր հուղարկավորների ուշադրության կենտրոն, եւ մարդիկ, թողած հանգուցյալին, հավաքվում էին Սերոյի շուրջը: Նա սկսում էր պատմել զանազան անցքեր, բացատրում գերեզմանաքարերի վրա գրված բառերը, թվերը:

**Գիրքը թափանցել էր մարդու հոգու խորքը**

Հիշում եմ մի այսպիսի դեպք: Սերոյուն կար մի շատ սրամիտ հողագործ մարդ, արդեն ծեր, որ սիրում էր գրքեր: Տիգրան Բալասանյանն էր: Մի օր իրենց այգու ծառի տակ ծերունին սկսեց շատ հանգիստ պատմել ինձ «Մխիթար Սպարապետը», որն իր համար կարդացել էր որդին (ինքն արդեն վատ էր տեսնում): Երեւի չհավատաց, երբ ասացի, որ այդ գիրքը ես գիտեմ, վաղուց եմ կարդացել: Շարունակեց պատմել, իսկ ինձ արդեն հետաքրքրում էին ծերունու շեշտադրումները եւ ընդգծումները: Ջարմանալի բան. ինչպե՞ս էր նա զգացել այդ գրքի շիկացած կետերը եւ գաղափարները, ինչպե՞ս էր կատարյալ արտիստի պես ներկայացնում դավաճանության եւ հերոսության դրվագները: Գիրքը թափանցել էր մարդու հոգու խորքը: Այդպես ընկալեց գրեթե ողջ հասարակությունը:



**Չարախոսները**

Սերոյ խանգաղյանը, իհարկե, ուներ նաեւ չկամներ, չարախոսներ, քանի որ եռանդուն գործուն էր եւ անվերջ գրում: Բազում բարեկամների մեջ կային նաեւ չարախոսներ, որոնք վարկաբեկում էին վեպերը, տարածում անհիմն բամբասանքներ: Այսպես օրինակ՝ դեռ 50-ական թվականների վերջերին փիլիսոփա եւ գրականագետ Արամայիս Կարապետյանը Մոսկվայից եկած հյուրերի մոտ Գրողների միության ժողովում ասաց, որ Սերոյ խանգաղյանի հայրը եղել է դաշնակցական Նժդեհի համհարզը: Իհարկե, դահլիճի մեծ մասը «մայր» հայիոյեց այդ զագրախոսին: Եվ

նա ասաց.

- Այստեղ, ընկեր Սուրկով, Հրանտ Թամրազյանը եւ Հրաչյա Հովհաննիսյանը ինձ «մայր» հայիոյեցին:
- Սուրկովը, փոքր-ինչ շփոթված այդ մթնոլորտից, ասաց.
- А́иäääò, áиäääò è òàè.

**Սերոյի անձնական կյանքի եւ թշնամիների մասին**

Մի քանի խոսք եմ ուզում ասել Սերոյի անձնական կյանքի, անհատական հետաքրքրությունների եւ թշնամիների մասին, որոնք չէին պակասում: Այստեղ այնտեղ չարախոսում էին Նորքուն կառուցած նրա տան առթիվ, թե իբրեւ շատ հոնորար է ստացել, կամ ինչ-որ մարդիկ լավություն են արել, քարը ձրի են տվել եւ այլն: Ասածների մեջ գուցե մի երկու կաթիլ ճշմարտություն լինի, գուցե պետական պաշտոնյա մարդիկ շինանյութով օգնել են նրան: Բայց ես գիտեմ, որ Սերոյն գիշեր-ցերեկ կանգնած էր այդ տան գլխին եւ կառուցում էր: Տալիս էր ամեն ինչ, ողջ հոնորարը, ուզում էր, որ այդտեղ՝ Երեւանի բարձունքներից մեկի վրա, տուն ունենա: Գուցե դրանով ուզում էր ազատագրվել երեկվա իր խեղճությունից, հեռավոր մանկության գրկանքներից, այժմյան Կարապի լճի մոտ գտնվող փոքրիկ, ողորմելի տան տարիների ճնշումից, գուցե ուզում էր բարձրից աշխարհին նայել չորբան Առաքելի թռռը, գուցե նրա հոգու մեջ ապրում էր հայրենի հպարտ լեռնաշխարհի մարդկանց կառուցելու բնազդը՝ գեղեցիկ եւ բարձր կամարների պաշտամունքը, գուցե եւ հուշարձան էր դնում դաժանորեն սպանված հոր արդար հոգու համար, ով գիտի...

Ես տեսել եմ, թե ինչպես էր Սերոյն աշխատում իր նոր տան այգում, ջրում, ձեւավորում վարդերը: Մի յուրօրինակ ձեւով, Սեւակի պես նա էլ ստեղծում էր իր հրաշք այգին եւ ուզում էր այնտեղ երգի «հազարան հավքը»: Այնինչ այդ բոլորը նրանց համար պետք է անեին պետական այրերը, ազգային ջոջերը: Իսկ փոխարենը՝ չոր ապերախտություն: Եվ, այնուամենայնիվ, գրողները հաղթում են: Նրանց հոգին թեւածում է իրենց փոքրիկ այգիներում եւ տներում եւ ողջ Հայաստանի վրա, քանի որ հենց նրանք են լեզու տվել Հայաստանի լեռներին:

5.7.02.2000թ., Դիլիջան  
Հրանտ Թամրազյան, «Հուշերիս հեք»

# Թանկագին հիշատակներ



## ՌԱԶՄԻԿ ԴՎՎՈՅԱՆ

**Թ**անկագին հիշատակների պահպանումն անհրաժեշտ է բոլոր այն ապրողներին, ովքեր ունեն դրանք՝ ոչ միայն նրանց հանդեպ, ովքեր ֆիզիկապես հեռացել են կյանքից, այլևս հենց իրենց ապրողների համար, քանի որ դրանք երբեմն ավելի կենսատու են, քան այն կյանքը, որով ապրում են իրենք:

Սերո Խանգադյանի ժամանակ նրա հետ ապրած, նրան ճանաչած մարդիկ պետք է, որ բացառիկ հիշողություններ ունենան նրանից, որովհետև ինքը բացառիկ էր իր նկարագրով, իր նիստուկացով, իր մարդկային հարաբերություններով... Բայց նրա մասին հիշողություններ պատմելն ինձ համար նշանակում է մի փոքր անդրադառնալ մոտ չորս տասնամյակ տեսած այն գրական կյանքին ու միջավայրին, որի մեջ իրեն հետ ապրեցիք մենք: Հայաստանի գրողների միության մեջ մի տեսակ առանձին միություն էր գրական այն ընկերակցությունը, որի մեջ մտնում էին Սերո Խանգադյանը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը..., եւ այդ ընկերակցությանը, չգիտեմ՝ իրենք, թե կողքից խանդելով, «Կոլխոզ» անունն էին տվել: Այդ գրական «Կոլխոզ» ուներ նաև իր կոլխոզնիկ բանաստեղծուհիները՝ Սիլվա Կապուտիկյան, Մարո Մարգարյան, եւ էլի մի քանի ուրիշներ: Որքան հիշում եմ, այդ ընկերակցության մեջ նախագահի կարգավիճակով էր Սերո Խանգադյանը, եւ նրանք ունեին նաև իրենց գրականագետ-քննադատները նույնպես, մասնավորապես այնտեղ էր փառավոր Սուրեն Աղաբաբյանը: Առանց ասելու էլ հասկանալի է, որ դրա մեջ ընդգրկված էր հիմնականում այն ժամանակվա գրական սերունդը, առանց աքսորից նոր վերադարձած Գուրգեն Մահարու եւ Հովհաննես Շիրազի: Մահարին հաճույքով համակրում էր նրանց, իսկ Շիրազի համաժողովրդական փառքը չէր հանդուրժում, որ նա ինչ-որ մի ընկերակցության մեջ լինի: Նրա աստվածատուր շնորհի չափանիշները բոլորովին տարբեր էին: Եթե կար մեկը, որ կարող էր հավանել այդ փառքի մրցույթին, դա, իհարկե, Սերո Խանգադյանն էր: Նրանց ճանաչում էին ամենուր Հայաստանում եւ Սփյուռքում: Շիրազին պաշտում էին կուռքի պես, Սերո Նիկողաեւիչին պարուրում էր ժողովրդական հարգանքն ու պատիվը, միայն թե այլ էին հարաբերություններն իշխանության

հետ: Իշխանությունը հաշվի էր նստում Սերո Խանգադյանի կարծիքի հետ, իսկ գրողների միության մասնավորապես ղեկավարությունից պահանջում-հորդորում էին, որ զսպեն Շիրազին, չափավորեն նրա ազգային-հայրենասիրական պոթեկունները: Հետագայում նրանց ընկերակցությանը միացան Մոսկվայից նոր վերադարձած Վիգեն Խեչումյանն ու Պարույր Սեւակը՝ այդ շրջանակի մեջ ներմուծելով մոսկովյան գրական հորիզոնների տեսադաշտի ընդարձակությունը:

Ահա, սրանք էին, որ ստեղծում էին գրական միջավայր, եւ Սերո Խանգադյանը, համակիրների հետ միասին, ճիպուտը ձեռքին շրջում էր այդ դաշտի մեջ, փորձելով թույլ չտալ, որ կրծողները կտրեն նոր բարձրացող ծիլերի արմատները: Ձանց առնելով մեր գրական առաջին քայլերի վրա իրենց գաղափարական քննադատ համարողների սուր հարձակումները, մասնավորապես նրա եւ ընկերակիցների նախաձեռնությամբ, առանց մեր կողմից դիմելու, 1964 թվականին Հրանտ Մաթեոսյանին եւ ինձ ընդունեցին Հայաստանի գրողների միության շարքերը՝ դրանով բավարարելով նաև միության մեջ երիտասարդներ ընդունելու կուսակցության պահանջը: Այդ ժամանակ արդեն լույս էին տեսել Հրանտի «Անհիժորը» եւ իմ առաջին «Իմ աշխարհը» բանաստեղծությունների ժողովածուն՝ Պարույր Սեւակի խմբագրությամբ: Դրանց վրա հարձակումների մասին չպատմեմ՝ Սերո Նիկողաեւիչի մասին հիշողություններից չչեղվելու համար: Դա մեր կյանքն էր, կամ դա էր մեր կյանքը:

Սերո Խանգադյանն ապրում էր լիարյուն, բուռն, երբեմն խելահեղ կյանքով, իր բազմադյուն ընտանիքի համար տներ էր կառուցում, միաժամանակ իրար ետեւից հրատարակվում էին նրա ծավալուն վեպերն ու պատմվածքների ժողովածուները, որոնցից մի քանիսը, մանավանդ «Մատյան եղելությանց» վեպը հիացմունք առաջացրեց թե՛ իր գրական ընկերների, թե՛ ընթերցողների շրջանում:

Գրական իմ առաջին քայլերից իմ կյանքի մեջ անուրանալի ներկայություն դարձավ Սերո Խանգադյանը: Դեռես վաթսուներկան թվականների սկզբում «Ավանգարդ» թերթում երիտասարդների մասին գրած իր մի հոդվածում նա հայտարարեց, թե «աշխարհ է եկել մի իսկական ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ»: Խոսքն իմ մասին էր, եւ այն ժամանակ ես չէի հասկանում, թե գլխատառով գրած նրա այդ բառն ինչ ազդեցություն կարող էր թողնել ոչ միայն իմ հասակակիցների, այլևս իրենց «մեծության» իրավատերեր համարողների վրա, եւ նրանք ինչ արգելափակոցներ կարող էին դնել իմ ճանապարհին, որոնք հաղթահարելու համար նժույզդ առնվազն Պեգասի թռիչք պետք է ունենար: Թեև իմնականում բարի մարդիկ էին, բայց մի երկու նույնիսկ միութենական բարձր մրցանակների արժանացած շքանշանակիրների Մոսկվա, կուսակցության կենտրոնական կոմիտե հղած ամբաստանագրերը

բավական էին, որ իմ «Ռեքվիեմ» պոեմի շարվածքը մոտ երկու տարի փակի տակ առնվի: Տառապանքի այդ երկու տարիներն անցնում էին գլավլիտ, 344 կենտկոմ, Մամուլի կոմիտեի և հրատարակչություն ճանապարհների, անվերջ քննարկումների, ճշումների և ամբաստանությունների մթնոլորտում, և քննարկողները ելք չէին գտնում, մինչև որ 344 ԿԿ-ի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը հանձնարարեց գաղափարական գծով քարտուղար Ռոբերտ Խաչատրյանին՝ ինձ հետ «անձնական աշխատանքով» վերջ դնել այդ քաշքշուկին, բայց այդ «անձնական աշխատանք» կոչվածն այնպիսի առաջադրանքներ էր ներկայացնում, որոնք անընդունելի էին ինձ համար, և դա էլ արդյունք չտվեց: Կարծելով այս պատմությունը և շեշտելով ի վերջո կուսակցության բարությունն ու գրչակիցների և հրատարակչության պաշտոնյաների անբարյացակամությունը, որոշում առան, որ գրական աշխարհի հեղինակություններից մեկը, գրող, կամ քննադատ, առաջաբան գրի հրատարակվելիք գրքին՝ հակազդելով Մոսկվա գնացած ամբաստանագրի «նացիոնալիստական, արատավոր գաղափարախոսության» մեղադրանքներին, և դա վերաբերում էր ոչ միայն հեղինակին, այլև առաջին հերթին կուսակցության գլխավոր գծին ոչ համապատասխան աշխատանքին: Ո՞վ էր լինելու այդ հեղինակությունը, եթե ՍԵՐՈ Խանգաղյանը, և նա գրեց մի առաջաբան, որ միայն ինքը կարող էր գրել, և որը մինչ այսօր էլ անգերազանցելի մնաց հայ և օտար բոլոր գնահատող-վերլուծողների արածների մեջ: Բանաստեղծության այն խորագույն ընկալումը, որ ուներ նա, անհասանելի է նույնիսկ բանաստեղծների շատ-շատերին: Ավելի պարզ ասած, բնատուրաստվածատուրն ու արհեստավարժությամբ բանաստեղծի համբավ ձեռք բերածներին նյարդերով էր զզույն ու տարբերում:

Անչափ հաճելի էր նրա հետ ճամփորդելը: Միասին եղել ենք և Մոսկվայում՝ միութենական գրողների համագումարներին, և Տաշքենդում՝ Ասիայի և Աֆրիկայի գրողների սիմպոզիումին, և, ինչ խոսք, 3այաստանի ամենատարբեր շրջաններում... Նախ ասեմ, որ իրենց ծննդավայր-հայրենիքի իսկական նվիրյալներն էին Սերո Խանգաղյանն ու 3ամո Սահյանը: Նրանք են ինձ նվիրել Ձանգեզուր աշխարհը՝ իր մարդկային-հոգեւոր բարիքներով: Եվ ոչ միայն ինձ: Ծննդավայրը կորցրած Վահագն Դավթյանին բառի բուն իմաստով նվիրեցին իրենց ծննդավայրը, և հարազատ եղբոր պես տոնեցին սքանչելի Վահագնի հոբելյանները մասնավորապես Միսիանում:

Ուղղակի եռում էր Սերո Նիկոլաեւիչն Ասիայի և Աֆրիկայի գրողների սիմպոզիումի ժամանակ Տաշքենդում: Ասաց. «Միասին գնանք հանրախանութ, սրանք արտասահմանյան ապրանքներ շատ են ստանում, գնանք, տիկին ժենյայի համար արտասահմանյան կոշիկներ գնենք»: Գնացինք նպատա-

կի ետեւից, մտանք հանրախանութ, բարձրացանք երկրորդ հարկ, որտեղ ցանկալի ապրանքներն էին և մի պահ շվարեցինք. երկարատ, բարձրասրունք, կարճափեշ ռուս երիտասարդուհիները, վաճառասեղաններին թեքված, իրենց ընտրությունն էին անում, ավելորդ է ասել, թե ինչ գայթակղիչ տեսարան էր... Սերո Նիկոլաեւիչը մի քանի անգամ փնջացրեց, արագ-արագ արավ իր գնումները, հարմար, թե ոչ, այլևս կարելու չէր, և թեւիցս քաշելով, ասաց. «Շուտ հեռանանք այստեղից, քանի ես հանցագործ չեմ դարձել»: Եղպես էլ արեցինք և Ալիշեր Նավոյիի պուրակով շարժվեցինք դեպի հյուրանոց: Ճանապարհին մի դրվագ ստիպեց, որ կանգ առնենք և հռռռանք. երկարահասակ, նիհար, միջին տարիքի մի ուզբեկի կողքից գնացող կարճահասակ ռուս մի տիկին հանկարծ ցատկեց վերեւ և ձեռքի պայուսակով հասցրեց ուզբեկի վզակոթին: «Տեսա՞ր, - ասաց Սերո Նիկոլաեւիչը, - որ ասում էի՞»... Ուզբեկն անտարբեր շարունակեց իր ճանապարհը:

Օտար լեզուների, նաեւ թուրքերենին տիրապետող Ստեփան Ալաջաջյանին, ով այդ ժամանակ գրողների միության քարտուղար էր և ղեկավարում էր մեր պատվիրակությունը, Սերո Նիկոլաեւիչն անընդհատ մղում էր, որ ընդմիջումներին հանդիպի թուրքիայի պատվիրակության անդամների հետ և փորձի տեղեկություններ կորզել նրանցից հայության հանդեպ նրանց մտայնությունների մասին: Որքանով էր դա իրատեսական, հայտնի չէր, բայց դա բոլորիս փափագն էր, որ այդպես էլ ոչ մի գոհացում չստացավ: Որքանով էր արդյունավետ՝ չգիտեմ, բայց որ ամեն առիթով ղեկավարությանն անհանգստացնում էր Ղարաբաղի ու Նախիջեւանի հարցերով, միանգամայն իրական էր: Ղեկավարությունն էլ մտովի և հոգեպես համամիտ էր այդ անհանգստությանը, համարյա անթաքույց պարզ էր, բայց իրականությունն այլ էր, և դա բոլորս գիտեցինք:

Սերո Խանգաղյանի հետ ճամփորդելը հաճելի անակնկալների շարան էր բերում իր հետ: 3իմա ո՞րը պատմես, որը՝ ոչ, այնքան շատ են դրանք, բայց մի դրվագ, կարծում եմ, ցայտուն ցույց է տալիս դրա իրողությունը: Մահացել էր 3ամո Սահյանի շատ սիրելի հայրը՝ Սահակ դային: Սերո Նիկոլաեւիչը նրան ընդունում էր որպես նաեւ իր հայր և ակտիվորեն ղեկավարում էր թաղման արարողությունը: Մինչև ուշ գիշեր ողորմաբաս էինք խմում հանգուցյալին հարեւան սենյակում, ինքը կարգադրություններ էր անում գյուղի ղեկավար անձնակազմին, որ հաջորդ օրը հուղարկավորությունը պատշաճ մակարդակով լինի: Ինչպես ընդունված է նման դեպքերում, հիշողություններ էին պատմում այդ աշխատավոր, բարեհամբավ մարդու մասին, իսկ երբ կեսգիշերն անց որոշեցին մի փոքր հանգստանալ մինչև լուսաբաց, նա իմ թելը բռնեց, ասաց. «Որտեղ էլ քնես, առավոտյան շուտ արի ես կողքի հարեւան տունը, ես էդտեղ եմ լինելու, - աչքով

արեց, ասաց, - չորաթան եմ պատվիրել, որ պատրաստեն, դա խաշից էլ լավ է... իրենք էլ լավ մարդիկ են, համ էլ Համոյին բարեկամ են»:

Առավոտն սկսվեց դարձյալ ողորմաթասով եւ չորաթանով, որին նախաճաշ ասելն էնքան էլ սազական չի: Դա իսկապես որ խաշին գերազանցող զուտ տեղական ազգային հագեցնող կերակուր է: Այնուհետեւ հանգուցյալին ուղեկցեցինք նախ եկեղեցու մոտ, հետո գերեզմանատուն, մասնակցեցինք հոգեհացին եւ երկու մեքենայով ճանապարհ ընկանք դեպի Երեւան: «Ուրուտում բխող տաք, համարյա եմման ջրով պիտի լվացվենք, առողջարար է», - կարգադրեց Սերո Նիկոլաեւիչը: Գյուղամիջին մարդիկ էին հավաքված. երինջը քարից ընկել, ոտքը կոտրել էր, գյուղացիներն անասունին մորթել եւ հարմար ճամփորդական խումբ նկատելով, ոչ թանկ գնով ցանկացան վաճառել: Մեքենաների բեռնախցիկներում բավական ուտելիք ու խմիչք կար, եւ Սերո Նիկոլաեւիչը «Ոչ» ասաց, ու մենք շարունակեցինք ճանապարհը, բայց քիչ հետո, երբ հասանք Որոտնավանք, միտքը փոխեց, ասաց. «Գնացեք, էն դանան բերեք»: Պայծառ, սքանչելի օր էր, վառքի կողքին քջքչում էր մաքուր, խմելու ջրի լեռնային ակունքներից կազմված Ջորգոր զովասուն գետակը, հասկացանք, որ խորոված անելն անխուսափելի է: Դանան բերողները գնացին մսի ետեւից, բոլորովին պասիվ, լողող արծակազրին ասաց. «Թռիր ես վերելի Աղուղի գյուղը, Մարիամ զիզիին ասա՝ Սերո խանգադյանը քո ճախաթուն է ուզում, չմոռանաս՝ աղ էլ բերես»: Ինձ հանձնարարեց ցախ հավաքել խարույկի համար, ինքը դանակը հանեց գրպանից եւ սկսեց շամփուրներ պատրաստել ուռեմու ճյուղերից: Այս ամենը շատ ուտելու, կամ անհագության հետ ոչ մի կապ չունեին, թեեւ ինքնին դրախտային ճաշկերույթ էր լինելու: Սերո խանգադյանն օրը սկզբից մինչեւ ավարտ պատմվածք էր դարձնում, պատմություն, հիշելու արժանի գեղարվեստական գործ: Գործող անձինք շարժվում էին իր ցանկություններին համապատասխան, եւ դրա հաջող ընթացքից նա հաճույք էր ստանում:

Այդտեղ անելիքն ավարտելուց հետո մենք

դարձյալ ճանապարհ ընկանք եւ հասնելով Եղեգնաձորի Արեւի գյուղի գյուղամուտին, Սերո Նիկոլաեւիչը մի փարթամ, մենավոր ծառի տակ կանգնեցրեց ընթացքը: «Մեզարը փռեք, - հրահանգեց, - բեռնախցիկներից հանեք ուտելիքը»: Գինին վերջացել էր, իսկ խորովածը վերջ չունեւ: Ինձ ասաց. «Էդ տասը լիտրանոց տակառիկը վերցրու, մտիր գյուղ, գինի բեր»: Արեւիի գինին ո՞ւմ հայտնի չէ: Ես տակառիկը վերցրի եւ գյուղ մտա: Հենց առաջին տան առջեւ նստած էր մի փոքրամարմին, չորուկ, դեպի ծերություն թեքված մի մարդ: Ասացի. «Հայրիկ, եկել եմ, գինի տանեմ, բայց շատ լավն եմ ուզում, խմողներն էդ գործից հասկանում են, դու էլ ինչ գին ասես՝ համաձայն եմ»: Ասաց. «Արի», - եւ առաջնորդեց դեպի մառանը: Իմ առջեւ, զով կիսամուտի մեջ յոթ-ութ հսկա կարասներ էին շարված իրար կողքի: Ասաց. «Ես գինին, ես՝ դու, եթե գինուց բան ես հասկանում, ինքդ համտես արա եւ ջոկիր: Եթե ճիշտ ջոկես, տակառիկդ կլցնեմ, կզնաս, անվճար, դե՛ տես»: Ես հերթով բոլոր կարասներից քիչ-քիչ խմեցի եւ վերջից վերադարձա միջին կարասին, ասացի. «Սրանից եմ ուզում»: Մարդը լցրեց տակառիկը, ասաց. «Ապրես, ես իմ խոսքի տերն եմ, տարեք անուշ արեք»: Ոնց համոզեցի, չհամոզվեց, փողից հրաժարվեց:

Լիքը տակառիկով վերադարձա, սուփրան պատրաստ էր: Սերո Նիկոլաեւիչը վերջին անակնկալն արեց. Ասաց. «Ռազմիկ, մի ես ծառը բարձրացիր, ենտեղ փչակ կա, ես փչակում անցած տարի աղ եմ պահել, մի բարձրացիր, աղն իջեցրու»: Բոլորս ապշեցինք, բայց խնամքով փաթեթավորված աղն իրոք այնտեղ էր:

Այդ օրվա պսակը մայրամուտն էր, որպիսին մեզանից ոչ ոք չէր տեսել ոչ դրանից առաջ, ոչ էլ հետագայում տեսավ: Անցնելով Ելփիմը, Սովետաշենը, Ջանգալատունը, բարձրացանք այն կետին, որտեղից Արարատը դիտվում էր ամբողջովին, ոտից գլուխ: Մեծ ու Փոքր Մասիսները հենց եղպես էլ ոտից գլուխ կարմիր-կարմիր էին, չգիտեմ ներսի՞ց էին զգեստափոխվել, թե՞ միայն մայրամուտն էր...

15.09.2014

## 1976-ի գարնանն էր...

### ՄԵՏԱՔԵՄԵ

**Ո**ւմինիայի գրողների հետ դուրս էինք գալիս «Արմենիա» հյուրանոցից, հանդիպեցինք Սերո խանգադյանին: Ծանոթացրի նրանց հայ նշանավոր արձակագրի հետ: Սերոյի քեֆը տնկոզ էր

եւ ծանոթանալով ռումին էսթետ Մարչել Պետրիչորի եւ բանաստեղծ Դիմիտրու Մ.Իոնի հետ, ուրախացավ եւ դառնալով ինձ, հրամայեց.

- Իրիկունս սրանց կպիրես մեր տոն, կպասես...

Ոսկեծղի, տաք մայրամուտ էր: Ոտքով բարձրանում էինք Նորք: Արեւի պղնձալուր ցուլքերի մեջ հեռվից հսկա խարույկի պես վարդավառվում էր խանգադյանի կարմիր տուֆից հոյակերտ տունը, որ առաջին պահից մեզ վրա բերդի տպավորություն թողեց: Դուռը բացեց խանգադյանն ու գրկեց երկուսին.



- Ապրեն, որ պիրեցիր, Յամոն էլ է մեզ մոտ...

Ասաց հայերենով ու մեզ առաջնորդեց աստիճաններով դեպի հյուրասենյակ: Յամեստ կահավորված հյուրասրահում կտավներ էին պատերին ու զանազան հնաոճ իրեր: Սրահի

կենտրոնում, առատ բարիքներով լի սեղանի մոտ, ճառագում էր Յամոն Սահյանի լուսամտի պես ճաղատ գլուխը:

- Մեր հրաշք բանաստեղծ Յամոն Սահյանն է, Ձանգեզուրից է, իմ հայրենակիցը..., - ձայնարկեց Սերոն, ձեռքով ցույց տալով Սահյանին: Սահյանը կողքանց նայեց եկվորներին, ոտքի ելավ եւ ձեռքերը սեղմելուց հետո, հրավիրեց նստելու:

- Ժենի, մի «Քարահունջը» պեր, «Քարահունջը»... Կանչեց Սերոն կնոջն ու սկսեց իր հյուսիս կողմից ներկայացնել, թե ի՞նչ բան է էդ «Քարահունջը»... Յամոն լրացնում էր Սերոյի բաց թողածը, մինչեւ օդին արծաթվեց գավաթների մեջ:

- Յամոն, կողքիդ նստող ռուսինը հայ ազգայնամուլ է... Կարդացել եմ նրա «Լինելություն» հոդվածը ռուսական «Նոր կյանք» թերթում, ուր գրում է, որ հայերն են եղել աշխարհի ամենաառաջին ժողովուրդը...

Հետո շարունակեց ռուսերենով.  
- Սիրելի բարեկամներ, բարո՛վ եք եկել Յայաստան, խմենք հայ եւ ռուսին ժողովուրդների կենացը... Մոսկվայում ծանոթացել եմ Ստանկուի հետ, կարդացել եմ Թուդոր Արգեզիի բանաստեղծությունները, ծանոթ եմ Սիրգա Չոբանուին եւ այլոց... Մեր ժողովուրդների բարեկամության կենացը...

Ասաց ու մի շնչով բաժակը դատարկեց.  
- Յաստատում եմ թամաղայի ասածը... Ձեզ մոտ մեր ազգակիցներն են ապրում, եկեղեցի ունեն, դպրոցներ ու գրադարաններ ունեն: Գիտե՞մ՝ Յայագիտական ամբիոն ունեք Բուխարեստի համալսարանում: Այս ամենը խոսում է ձեր մարդասիրության մասին, ձեր կենացը...

Նահապետի ծանրակշռությամբ ասաց Սահյանն ու դանդաղ պարպեց գավաթը:  
- Յայերն արարող ժողովուրդ են: Ինձ ապշեցրել է Մեծամորը, Գեղարդը... Ես պիտի շարունակեմ իմ հոդվածների շարքը: Ձեր «Գրական թերթը» մերժեց տպագրել իմ հոդվածը, բայց Ռուսինիայում տպեցին, - ասաց Մարչել Պետրիշորն ու համբուրվեց Սերոյի հետ:

- Յայ ոգու աստվածատուր զորությունը կա «Նռան գույնը» կինոնկարում: Սերգեյ Փարաջանովը մեծ արվեստագետ է: Երբ վերադառնան Ռուսի-

նիա, հողված են գրելու այդ հանճարեղ մարդու եւ իր ստեղծած ֆիլմի մասին..., - խոստացավ Դիմիտրոն Մ.Իոնն իր բաժակաճառում:

Այնուհետեւ իրար հետեւից դատարկվեցին բազում կենացներ:

- Խոխեք, էկեք խմենք մեր Մաշտոցի ու մեր հայոց սուրբ լեզվի կենացը... Յա՛, մի շաբաթ է ես ու Յամոն ըսենց հարբում ենք, որովհետեւ հայ ժողովուրդը մեծ փորձանքից է ազատվել:

Յյուրերը զգաստացած ինձ նայեցին.

- Բանը նրանում է, - շարունակեց Սերոն, - որ Լեոնիդ Իլյիչ Բրեժնեւի մտքով անցել էր մեր պետական լեզուն համարել ո՛չ թե հայերենը, ինչպես միշտ եղել է, այլ ռուսերենը: Նույնը լինելու է Վրաստանում: Երկու ժողովուրդներն էլ ըմբոստացան այդ անհեթեթ բռնության դեմ: Յայաստանում այդ դժգոհությունը գործարար ընդվզումների չտարավ, բայց հարեւան Վրաստանում հազարավոր սեւագետտ կանայք, երեխաների բարուրները գրկած, հավաքվել են Վրաստանի Կենտկոմի շենքի առջեւ եւ պահանջել են չկատարել Մոսկվայի ցանկությունը: Յայաստանում հարցին խելամտորեն մոտեցան: Գերագույն խորհրդի նիստում ելույթ ունեցող պատգամավորները՝ խոսելով Մոսկվայի որոշման դեմ, պարտադրեցին Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Բաբկեն Սարկիսովին, կապվել խՄԿԿ Կենտկոմի քարտուղար Կիրիլենկոյի հետ եւ խնդրել նրան համոզելու Բրեժնեւին՝ փոխել որոշումը: Կիրիլենկոն մի քանի անգամ մերժում ստանալուց հետո, Բրեժնեւի բարձր տրամադրության ժամանակ, փորձում է մի վերջին անգամ համոզել նրան եւ հաջողվում է: Իմաց է տալիս Սարկիսովին, շնորհավորում, որ Յայաստանում պետական լեզուն մնում է հայերենը: Բա հիմի չխմե՞նք, ախպերս, - շարունակեց Սերոն ու բաժակը խփեց Սահյանի բաժակին: Բոլորս ոտքի կանգնած խմեցինք այդ սուրբ կենացը: Տղամարդիկ արդեն հարբել էին:

- Պրանեն տհենց որոշումը..., - ոգելորված ձայնարկեց Սերոն: Մի քանի անգամ, որ կրկնեց, ժենյան շշնջաց.

- Այդա բոլ ա... Պրանեն. պրանեն... Նրանք չեն հասկանում, բայց մենք հո հասկանո՞ւն ենք... Կնանիք են նստած, ամո՞թ ա...

- Թող պրանի էլի՛, խի՞ ես նեղանում... Ես էլ եմ պրանում... Էդ պրանելը ե՞րբ է ամոթ ըլել, որ հըմի ըլի, - ասաց Սահյանն ու երբ մի քանի անգամ կրկնեց խոսքը, ժենյան ժպտաց:

- Յանի, որ էդքան ասում ես, մի բան կա՞...

- Որտեղի՞ց... Գցես կատվի առաջը, կխռովի՛...

Ես ու ժենյան կչկչացինք ու ոտքի հանեցինք այրերին: Սերոն զանգ տվեց մեքենա ունեցող իր բարեկամին, որը կեսգիշերին եկավ ու մեզ հերթով տարավ մեր տները:

# Վարպետը մի մարդ էր, որ ավելին արեց, քան Աստված իրեն փվել էր



## ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒՆԱՆՅԱՆ

Դերենիկ Դեմիրճյանի 100-ամյակին նվիրված տոնակատարությունների շարք էր մեկնարկել Ջավախքում: Այդ ժամանակ Յայաստանի գրողների միության նախագահը Վարդգես Պետրոսյանն էր, եւ հայ նշանավոր գրողները հավաքվել էին Ջավախքում: Երեք օր տեւեցին տոնակատարությունները, եր-

րորդ օրը Վարդգես Պետրոսյանին ասացի, որ հայրս հրավիրում է մեր տուն (մեր գյուղն Ախալքալաքից 11կմ հեռու է): Վարդգես Պետրոսյանը համաձայնեց, բայց բոլորը չէ, որ եկան: Մեր տունը փոսի մեջ էր, ճանապարհին ավելի բարձր էր, քան մեր տունը:

Գարուն էր, Ջավախքը ծաղիկների մեջ կորած մի աշխարհ էր. ամբողջ գյուղը հավաքվել էր, բոլորը սպասում էին հյուրերին: Վարդգես Պետրոսյանը նշանավոր մարդ էր, բայց գյուղացիներն ավելի շատ սպասում էին Սերո Խանգաղյանին, որովհետեւ նա «Մխիթար Սպարապետ»-ի հեղինակն էր, մի գիրք, որ գրեթե բոլորը կարդացել էին, իսկ նա, ով չէր կարդացել, մեր գյուղի սովորության համաձայն, լսել էր, երբ օդաներում հավաքվելով՝ մեկը մյուսին պատմում էր իր կարդացածի մասին:

Ժողովուրդը հավաքվել էւ համակ ուշադրությամբ դիտում էր, թե ինչ է կատարվում մեր տան պատուհաններից ներս: Մենք էլ նստած խմում ենք, հայրս էլ, մտածելով, որ քաղաքից եկած մարդիկ են, «քաղաքավարի» օղի էր դրել սեղանին: Սերո Խանգաղյանն ասաց. «Սարգիս եղբայր, տնական, հացի արաղ չունե՞ս, բեր, այս օղին մենք շատ ենք տեսել»: 65 աստիճան տնական օղին կես լիտրանոց բաժակը լցնելով՝ բարձրացրեց, թե Վահան Տերյանի, Ջավախքի եւ, գոմանցիներ, ձեր կենացը. ասաց եւ զլզլալեն քաշեց զլիսին:

Ժողովուրդը կանգնած ուշադիր նայում էր. Վարդգես Պետրոսյանը կենացներ էր ասում, իսկ Սերոն

վաղուց արդեն քնել էր:

Յրաշք մարդ էր, երիտասարդներին շատ էր սիրում, ոգի էր տալիս: Երբ իր վեպերը լույս էին տեսնում, ես ընդամենը աշակերտ էի, հեռվից անգամ Սերո Խանգաղյանին տեսնելը պատիվ էր, էլ ուր մնաց ձեռքը սեղմելը, հետը սեղան նստելը:

Յռետոր էր, փայլուն խոսք ուներ, չեն հիշում՝ որտեղ էր, նստել էինք, երբ Սոցիալիստական աշխատանքի հերոսի ոսկե աստղ մեղալը նոր էին շնորհել, կանգնեց ու ասաց. «Յլա բոլորդ նայեք, ինձ սագում է չէ՞ հերոսի կոչումը»: Երբեմն նաեւ կատակելու համար էր ասում այդ ամենը: Բարդույթներ չունեիր, ասում էւ անում էր այն, ինչ այդ պահին ցանկանում էր:

Գուսան Աշոտի 80-ամյակն էր, ես այդ ժամանակ «Գարուն» ամսագրի խմբագիրն էի: Սերո Խանգաղյանը, Յամո Սահյանը, Վազգեն Մնացականյանը եւ ես գնում ենք Գուսան Աշոտի հոբելյանին մասնակցելու: Գորիսի դրամատիկական թատրոնի ներկայիս շենքի դահլիճը լեփ-լեցուն էր, հիմնական բանախոսներից էր Սերո Խանգաղյանը: Մեծ բազկաթոռ էին դրել բեմին, Գուսան Աշոտը, մեջը նստած, համարյա չէր երեւում: Սերոն սկսեց խոսել, բայց բառ անգամ չասաց Գուսան Աշոտի մասին, այլ խոսեց պատերազմում ունեցած իր մասնակցությունից, զանազան պատմություններ պատմեց: Գորիսի ռայկոմի այն ժամանակվա քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանն անընդհատ ժամացույցն էր ցույց տալիս, իսկ Խանգաղյանը շարունակում էր իր մասին խոսել: Այդ ընթացքում Գուսան Աշոտը խորը քուն էր մտել: Մեկ էլ Սերոն նկատեց Ալեքսանյանի՝ ժամացույց ցույց տալը, մեկ էլ թե՛ հա, չմոռանա՞նք ինչի համար ենք հավաքվել. այսօր մեր մեծ Գուսանի հոբելյանն է, ծափահարելով ողջունենք: Ծափահարություններից Գուսան Աշոտը վախեցած արթնացավ ու տեղից վեր թռավ: Եվ Սերոն ասաց մի նախադասություն. «Գուսան Աշոտի «Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի»-ն ավելի լավն է, քան «Ինտերնացիոնալ»-ը»: Խորհրդային տարիներին միայն Սերո Խանգաղյանը կհամարձակվեր նման արտահայտություն անել:

Իմացա, որ Սերոն հիվանդ է, ես հիմնադրել էի «Ար» հեռուստաընկերությունը, զանգեցի Սերոյին, տիկին ժենիկը վերցրեց խոսափողը, հարցրի վարպետից, ասաց, որ լավ չէ, հաց չի ուտում: Որոշեցի հաղորդում պատրաստել նրա մասին: Գնացինք Նորքի դղյակ, ինչպես ինքն էր գրում նամակների վերջում: Իսկապես լավ չէր, խեղճացել էր, իմ ճանաչած Սերո Խանգաղյանը չէր, չէր ուտում, չէր խմում: Տիկին ժենիկին ասաց, որ օղի եւ լոբի բերի: Յետո շրջվեց, թե՛ Սերոժան, Գորիսի լոբին՝ ամեն մեկը մի կոտլետ, ու ձեռքով ցույց տվեց:

Սկսեցինք գրուցել, ասաց. «Մի բան ասեմ քեզ. մինչեւ հիմա մի հարցի շուրջ մտածում եմ, այդքան գրքեր են գրել, իմ ստեղծագործությունները թարգմանվել են, կարելի է ասել՝ ամբողջ ազգը ճանաչում է ինձ, հերոսի կոչում են ինձ շնորհել եւ այլն, բայց ինձ անկեղծ ասա՛՛ ո՞ր գիրքս ես ամենաշատը հա-



# Դավիթ Յովհաննեսի հուշերը



հ մ անկեղծ, ջերմ սերն հու վերաբերմունքն են ուզում արտահայտել մի մարդու հանդեպ, ով ե՛լ կենդանության օրոք, ե՛լ եղերական վախճանից հետո ինձ համար շատ թանկ է: Եղերական վախճան են ասում, որովհետեւ, ճիշտ է, մահացավ բնական մահով, որը նույնպես բախտավորություն է մեր օրերում, լեցուն էր բազում ծրագրերով, նոր գաղափարներով, եւ իսկապես աշխարհից նրա հեռանալը եւ համարում են անժամանակ: Նրա ներկայությունը շատ կարեւոր էր մեր գրական-հասարակական կյանքում, որտեղ տարիներ շարունակ ամենակենտրոնական դեմքերից է եղել:

Ինձ համար շատ թանկ անձնավորություն էր, ում հետ ջերմ փոխհարաբերություններ են ունեցել, երկար ճանապարհ անցել:

Այն ժամանակ երիտասարդ գրողներիս, որ հայտնվել էինք գրական վիճաբանությունների կիզակետում, միակ, գուցե նաեւ առաջին պաշտպանն էր,

գրական այն երիտասարդ բանաստեղծական սերնդի, որ 1960-ականներին ասպարեզ իջավ, եւ որն այսօր մեր պոեզիան է ներկայացնում աշխարհին: Այդ ժամանակահատվածում գրական ասպարեզ իջնող բանաստեղծներին համեմատում էին 19-րդ դարի ֆրանսիական պոեզիայի «անիծյալ» պոետների հետ (Պ.Վեռլեն, Ա.Ռեմբո եւ այլք): Սեզ համարում էին արտասահմանից եկած դեսանտայիններ, օտար երեւոյթ հայ պոեզիայում: Այս մերժողական եւ հալածական մթնոլորտի ֆոնին Սերո Խանգադյանն այն միակներից էր, ով պաշտպանեց մեզ իր հողվածներում (օրինակ՝ «Զրույց մերոնց հետ» հողվածը): Նա չի սահմանափակվել մեկ հողվածով, այլ պարբերաբար աջակցել է մեզ, բայց պիտի խոստովանեն, որ ամենաջերմ վերաբերմունքն իմ պոեզիայի հանդեպ է ունեցել (հսմբ. ի դեպ, դա են վկայում նաեւ Սերո Խանգադյանի՝ ազգային արխիվում պահպանվող անձնական ֆոնդի փաստաթղթերը):

1979թ. լույս տեսած «Անցյալ կորուսյալ» բանաստեղծական երկրորդ ժողովածուիս «Օրը լուսաբացով է սկսվում» նախաբանը Խանգադյանն է գրել, որ ավարտվում է ««Անցյալ կորուսյալ» ժողովածուն բանաստեղծական հաղթանակ է» տողով: Նա հրաշալի պոեզիա էր հասկանում, բազում քննադատներ



վանում: Նրան թվում էր, թե պիտի ասեի «Մխիթար Սպարապետը» կամ «Թագուհին հայոց», բայց ասացի «Մատյան եղելությանց» վեպը: Ասաց. «Արի՛ ճակատդ պագնեն, ամենալավ գիրքս դա է, դու ճիշտ ես, հրաշալի, սիրուն գիրք է, այնքան սեր կա մեջը»:

Սերո Խանգադյանը հուզվեց: Դե ես չասացի, որ ամենալավ գիրքը դա է, ուղղակի եթե բոլոր գրքերից մեկն ընտրեի, ապա դա կլիներ: Վարպետը շնորհակալություն հայտնեց անկեղծության համար:

Մի կին նամակ էր գրել Կենտկոմ, թե իբր Յանո Սահյանը գողացել է իր բանաստեղծությունները: Նա ոչե՛լ էր, թե իբր ինքը Սահյանին բանաստեղծություններով տեսր էր տվել, որ կարծիք հայտնի, նա էլ գողացել է: Հարցը հասել է Մոսկվա, եւ հանձնարարվել է, որ Յայաստանի գրողների միությունում հարցը քննարկվի: Վարդգես Պետրոսյանն էր նախագահը, անդամները կարծիք են հայտնում, լսում են, ոչ մեկը չի ասում՝ լուրջ չէ, Յանո Սահյանը չի կարող գողանալ, իրականում այդ քստմենելի կինն էր Սահյանի բանաստեղծությունները գողացել եւ աղավաղել: Սերո Խանգադյանը նստել է Վարդգես Պետրոսյանի կողքին, նախորդ օրը խմել էր եւ հիմա քնել էր: Քննարկումը շարունակվում է, Սահյանն էլ անկյունում նստած ամոթից ծխում է, որ իր հարցն են քննարկում, մեղադրում գրագողության մեջ: Բոլորը խոսեցին, Վարդգես Պետրոսյանը դիմեց Սերո Խանգադյանին, որ իր կարծիքը հայտնի: Սերոն քնից արթնացավ, թե. «Յա՛, Յանոն գող է. Յանոն կանի»: Յանո Սահյանի հույսն էլ Սերոն էր, եւ նա այն տոնով ասաց, որ բոլորը ծիծաղեցին, եւ հարցը փակվեց:

Ամենամտահոգիչ հարցը Ղարաբաղի հարցն էր. նա այդ հարցով հիվանդ էր: Ղարաբաղով եւ Նախիջևանով, որովհետեւ համարում էր, որ դա խորհրդային իշխանության՝ մեր ժողովրդի հասցեին կատարած ամենամեծ սխալն էր: Երեւի դա պայմանավորված էր նաեւ նրանով, որ Ղարաբաղը մոտ էր Սյունիքին: Խորհրդային շրջանում գրողների միության, կուսակցական ժողովներից մինչեւ հեռուստատեսություն նա համարձակորեն խոսում էր դրա մասին՝ ազատ, համապատասխան փաստեր ներկայացնելով:

Ամենալավ խորհուրդը, որ տվել է. «Հրաշալի պատմվածքներ ես գրում, հրաշալի գրիչ ունես, եւ խորհուրդ են տալիս՝ արձակ շարադրելիս անպայման սյուժե ստեղծիր»:

Իր մասին ասում էր. «Րաֆֆուց հետո ամենամեծ արձակագիրը ես եմ»:

Սերո Խանգադյան գրողով, գործիչով, անհատով եւ միշտ հիացել են. հրաշալի գրող, ազգային գործիչ, հրապարակախոս եւ հրապարակագիր: Խոսում էր բանավոր, փայլուն հայերենով, խուսափում էր մեջբերումներից: Մթնոլորտը, որ ինքը ստեղծում էր իր շուրջը, այնքան բնական ու մարդկային էր, որ ոչ մի թերություն չէիր նկատում:

Վարպետը մի մարդ էր, որ ավելին արեց, քան Աստված իրեն տվել էր:

**Գրի առավ ԱՐՄԻՆԵ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

Ռից ավելի լավ, թեպետ ի պատիվ իրեն պիտի ասեն, որ բանաստեղծություն չի գրել: Հիշում եմ՝ իմ ժողովածուն նախքան տպագրվելը տարա Նորքի դղյակ (այդպես էր անվանում իր տունը), որ կարծիք հայտնի, խորհուրդ տա: Ասաց՝ թող քինա: 2-3 օրից հետո զանգահարեց ինձ. «Ա՛ խոխա, արի՛ Նորք, զրից անենք, տու բանաստեղծ ես»: Երկար խոսեցինք գրականությունից, երիտասարդներիս նկատմամբ հավածական վերաբերմունքից, նա խորհուրդ տվեց չհուսահատվել եւ շարունակել ստեղծագործել: Նա խոստացավ լինել իմ գրքերի խմբագիրը, իհարկե հետագայում այդպես չեղավ, բայց նա եղավ իմ առաջին ընթերցողը:

Իմ եւ սերնդակիցներիս բարեկամն էր եւ սիրուն էր կրկնել՝ «մեր խոխեքն են»: Նույնիսկ մի բանաստեղծի ասաց. «Դու ավելի թույլից ես սկսել, իրենք քեզանից ուժեղ են սկսում, այսօր դու հայտնի բանաստեղծ ես, ինչո՞ւ պիտի նրանք ավելին չլինեն»:

...Հայրս՝ Հրաչյա Հովհաննիսյանը, եւ Սերո խանգաղյանը մտերիմ ընկերներ էին, եւ Տերյան փողոցում տասնյակ տարիներ հարեւանությամբ ենք ապրել: Ես, ինչպես իր զավակները, հայրիկ էի անվանում նրան: Մինչ այդ բնակվում էր Կարապի լճի դիմաց՝ մի քոնծախում, որտեղի հողաշեն տնակում հաճախ էին հավաքվում այն ժամանակվա երեւելի մշակութային գործիչները, իսկ ես՝ 4-5 տարեկան մանուկս, խաղում էի նրա ավագ որդու՝ Արարատ խանգաղյանի հետ:

Իմ հոր ընկերն էր՝ բարի ու իմաստուն խոսքը բերանին: Բանահյուսական մտածողության մարդ էր՝ շատ ուժեղ երեւակայությամբ: Հայոց պատմության ակունքները տանում հասցնում էր Ք.ա. 3-2 հազարամյակներ:

Քեֆ-ուրախություններին սիրում էր խմելուց հետո բաժակը խփել գետնին կամ առաստաղին եւ ասել. «Մաքուր Ղարաբաղ Նախիջեւանն էլ հետը»: Այդ այն տարիներն էին, երբ այդ մասին մտածել անգամ հնարավոր չէր: Հորս հետ մեկնում էր Ղարաբաղ, որտեղ հանդիպում էր գրողների, գրականագետների հետ: Պատմում են, որ ամեն իրենց այցելությունից հետո այդ մարդկանց կանչում էին հարցաքննության: Մի անգամ Բագրատ Ուլուբաբյանը պատմեց, որ հարցաքննության ժամանակ ռուս քննիչին հարցրեց, թե ինչու են իրենց հետապնդում, երբ Ս.խանգաղյանը, Հ.Հովհաննիսյանն այցելում են Ղարաբաղ: Ռուս քննիչը, ով Ադրբեջանի ներքին գործերի քննիչ էր, պատասխանեց, որ նրանք ուղղակի այցելումներ չեն, նրանք վտանգավոր մարդիկ են, որոնց այցելությունից հետո ներքին խլրտում է սկսվում, ազգային հարցեր են գլուխ բարձրանում:

1954 թվականից բնակվեցինք գրողների շենքում, եւ այդ մեծ մարդու կյանքն անցավ իմ աչքի առաջ, իմ պատանեկան կյանքը՝ նրա: Հանդիպել եմ բոլոր իրավիճակներում՝ ուրախ, տխուր, գայրացած, մտահոգ, բայց ամենից շատ իմ հիշողության մեջ մնացել է նրա գրամեքենայի կտկտոցը, որ սկսվում էր առավոտյան 4-5-ից՝ անկախ նրանից, թե որ ժամին էր գալիս տուն: Հաճախ էի լսում, որ հորս հետ զրուցելիս ասում էր, որ «Մխիթար»-ի այս մի դրվագն էլ վերջացրեց: Այդ սենյակում՝ իմ ականջի տակ, ստեղծվեցին նրա հրաշալի ստեղծագործությունները: Ինչ վերաբերում է «Մատյան ելելությանց» վեպին եւ «Հայրենապատում» բազմահատոր աշխատության

ընդ, ապա դրանց շատ դրվագների ստեղծման նախապատմության ակնատեսն եմ եղել: Հաճախ որպես երիտասարդ ստեղծագործող՝ ես էլ էի մեկնում նրա հետ տարբեր գրական հանդիպումների, որոնցից յուրաքանչյուրը պսակվում էր շքեղ սեղանով: Բայց սեղանը թողած՝ նախեւառաջ կհանդիպեր այդ վայրի ամենատարեց մարդուն: Մեր աչքի առաջ այդ մարդուն հարցուփորձ էր անում՝ եղելություններ, դեպքեր, անունների, տեղանունների ծագում ճշտում: Ես նրանից սովորեցի, թե ինչպես կարելի է կյանքի ընթացքից հետ չմնալ, կյանքը վայելել, եւ միաժամանակ աշխատել՝ աչքաթող չանելով այն առաքելությունը, որ կոչվում է գրականություն:

Գրական մեծ հեղինակություն ունենալով հանդերձ՝ նա ժողովրդի մարդ էր, անընդհատ ժողովրդի մեջ էր, եւ նույնիսկ կյանքի վերջին տարիներին հագուստը փոխեց. հագնում էր ոչխարենի, ծանր ձեռնափայտը ձեռքին, ինչպես մի նահապետ, մտնում էր «Արեւիկ» հրատարակչության շենք, եւ բոլորը դուրս էին թափվում՝ հանդիպելու այդ մեծ մարդուն, բազում հարցեր տալիս հայոց պատմությունից, հատկապես Ղարաբաղից, որ նա համարում էր Սյունյաց աշխարհի անբաժանելի մասը, ինչպես նաեւ Նախիջեւանից, ներկայիս ազատագրված տարածքներից, Տաճկահայաստանից, որոնց մասին երբեմն ոչ պաշտոնական տեղեկություններ էր տալիս:

Ժամանակին մի հետաքրքիր գործի մեջ ներքաշվեց: Միջին Ասիայի տարածքում բնակվում էին կրոնափոխ հայեր, որ ցանկություն հայտնեցին տեղափոխվել խորհրդային Հայաստան: Սերո խանգաղյանը նույնպես Կենտկոմի այդ քննարկումների մասնակիցը դարձավ: Բայց նրանց տեղափոխման հետ հարցեր առաջացան. նախ՝ նրանք մուսուլման էին, եւ, բնակվելով մեր երկրում, կարող էր իսլամը բույն դնել այստեղ, եւ երկրորդ՝ մենք նրանց մեծաքանակ անասունների համար այդքան արոտավայր չունեինք: Հնարավոր էր առաջանային ժողովրդագրական խնդիրներ: Հիշում եմ՝ խոսում էր այդ մասին, անընդհատ վիճում, մինչեւ որ այդ հարցը լուծվեց: Այնտեղի հայերի մի խումբ, տեղում ուսումնասիրելով իրավիճակը, հասկացավ, որ հնարավոր չէ Հայաստանի տարածքում բնակություն հաստատել: Այդ քննարկումների մասնակից լինելը խոսում էր Սերո խանգաղյանի բարձր հեղինակության մասին:

Դիմեց գիտությունների ակադեմիայի անդամ դառնալու համար, բայց որովհետեւ կտրուկ մտքեր արտահայտող էր, երեւի այդ պատճառով չընդունեցին: Մի անգամ ինձ ասաց. «Ա՛ խոխա, բա հմանչում չեն դրանք, բա գրողը ակադեմիկոս կլինի՞, արդեն անկապ բան է. գրողը գրող կլինի, գիտնականն էլ գիտնական»:

Հիշում եմ՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի ոսկե աստղը կրծքին ցուցադրական ամրացնում էր: Մի անգամ էլ Միխայիլ Դուդինին, ով նույնպես արժանացել էր ոսկե աստղի, թյուրիմացության մեջ գցեց: Սերոն՝ պերճախոս, Դուդինը՝ պերճախոս. ասացի. «Սերո՛, քեզ խեղդում է, չի թողնում խոսես»: Ասաց՝ ա՛ խոխա, համբերի: Քիչ հետո Սերոն կանգնեց, ձեռքը խփեց Դուդինի աստղին, ասաց. «İ î ý çââçää éó÷øâ áéâñðè»: Դուդինը խառնվեց իրար. «Èàè ýòì, Ì ððòäì ì çà-ðäâí ðàè», բայց ասաց՝ իմն ավելի լավ է: Այս մարդը չիմացավ, թե ինչ ասի եւ նայեց նրան: Սերոն շոքվեց, աչքով արեց ինձ՝ տեսա՞ր:

Ամեն խոսքը, շարժումը մի տեսարան էր, անշուք, գորշ

մարդու մասին ոչինչ չէր պատմում, հայտնի գողերի, ավազակների կամ էլ շատ հայտնի մարդկանց մասին էր սիրում պատմել: Նրա բոլոր պատմությունները ժողովրդական երեսակայության արդյունք են, մտածողությունն ամբողջովին էպոսային էր, մասշտաբներ չէր ճանաչում:

Հայտնի պատմություն է. 1795թ. Աղա Մուհամեդ խանն արշավեց Թիֆլիս: Մի անգամ Սերոն ելույթ էր ունենում, համեմատություն էր անում, նշեց 1700 թվականը, տեղից մեկն ուղղեց, թե 1795 է, Սերոն անմիջապես պատասխանեց. «Դա էլ թող Սերոյի մի պուճուր սխալը լինի»:

Կոլորիտային ընտանիք ուներ, որի սյունը Սերո խանգաղյանն էր, ով նաեւ 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի սյունն ու նահապետն էր:

Իմ կարծիքով՝ միայն գրողը նույնպես կարող է նահապետ լինել: Նա, ով իր թեւերի տակ է առնում զավակներին, մեծացնում նրանց, ինչպես եւ Սերոն վերաբերվում էր իմ սերնդակիցներին: Նահապետն ազգը պահողն է, ապագան նախանշողը, երկրին տեր կանգնողը: Այդ առումով Սերո խանգաղյանն իսկապես եւ՛ հայ գրականության, եւ՛ հայ ազգի նահապետն էր:

Նա շատ համարձակ էր, այն տարիներին արգելված թեմաներից էր խոսում, ազգային հարցեր բարձրացնում, հնարավորության սահմաններում բազմաթիվ հարցերի լուծում տալիս:

Սերո խանգաղյանի նման մարդիկ անկրկնելի էին, նրանց գալն ու գնալը բարեբախտություն էր ազգի, իրենց ընտանիքի, շրջապատի, ընկերության, գրականության, պատմության համար: Ինչքան աղքատ կլինե՞ր մեր կյանքը, եթե չլինե՞ր Սերո խանգաղյան գրողը, հասարակական, քաղաքական, ազգային գործիչը:

Իմ՝ բանաստեղծիս կերպարի կերտման մեջ շատ մեծ է Սերո խանգաղյանի լույսն, նայել եմ, սովորել, ընդօրինակել ակամա, առանց հատուկ ջանքերի, որովհետեւ ինքը հատուկ չէր ուսուցանում, պարզապես ապրում էր, իսկ ես նայում եւ ընդօրինակում էի:

Տարիների հեռավորությունից կարող եմ ասել, որ Դավիթ Հովհաննես բանաստեղծի ձեւավորման համար երեք հոգի է վճռական դեր ունեցել՝ պապս՝ դուրգար ուստա Կարապետը, հայրս՝ բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը եւ հորս մտերիմ ընկերը, իմ հորեղբայրը՝ գրող, արձակագիր Սերո խանգաղյանը:

**ԳՐԻ ԱՌԱՎ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

# Նա իր երկրի ու ժողովրդի ճշմարիտ զավակն էր



## ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Իմ հայրենի Հարժիս գյուղում հաճախ եմ հիշում հայոց մեծերին ու նշանավորներին, ովքեր երբեւէ առնչություն են ունեցել գյուղի հետ: Այդ շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Սերո խանգաղյանը, ով 1936թ. օգոստոսից մինչեւ 37թ. մայիս ուսուցչություն է արել գյուղի դպրոցում:

Սերո դպրոցի նախկին ուսուցիչ Սերո խանգաղյանի մասին գիտեինք պատանեկան տարիներից: Գիտեինք նաեւ, որ ամեն շաբաթ գործընկերներ Վազգեն Փարսյանի, Գուրգեն Լալայանի, Անդրանիկ Յուզբաշյանի հետ ոտքով գալիս էր Գորիսից, չորս-հինգ օր մնում գյուղում, հետո երկու-երեք օրով նորից վերադառնում տուն... Գիտեինք, որ նա գյուղում ապրել է Վարդան Աղաջանյանի տանը (այն գտնվում էր ալրաղացի մոտ՝ Աղասի Մաթեոսյանի ներկայիս տան տեղում):

Սերո խանգաղյանի հետ անձնական ծանոթությունս տեղի ունեցավ 1979թ., երբ կոմերիտմիության Գորիսի շրջկոմի քարտուղարն էի /1979-83թթ./: Գորիսի շրջանի մշակույթի բաժնի վարիչ աշխատելու տարի-

ներին նրա հետ առնչվելու, շփվելու ավելի շատ հնարավորություններ եղան, իսկ «Ձանգեզուր» թերթը խմբագրելու տարիներին մենք իսկական բարեկամներ դարձանք:

Հանդիպումներից, առնչություններից ամեն մեկն ուշագրավ էր յուրովի: Դրանցից մի քանիսն ուզում եմ ստորեւ ներկայացնել:



1988թ. նոյեմբերին նշանակվել էի «Ձանգեզուր» թերթի խմբագիր: Օրերից մի օր խմբագրություն այցելեց Սերո խանգաղյանը: Եկել էր շնորհավորելու նորանշանակ խմբագրիս. շնորհավորեց, խորհուրդներ տվեց, հաջողություններ մաղթեց եւ «թույլատրեց» հարկ եղած դեպքում, առանց վարանելու, դիմել իր օգնությանը: Սերո խանգաղյանը 1934թ. հիմնադրված «Ձանգեզուր» թերթի ակունքում կանգնածներից էր: Այդ եղելությունն ինքը հպարտությամբ էր հիշում. «Աշխարհի շատ թերթերում եմ տպագրվել, բայց, հավատացե՛ք, ամենից շատ մեծ սեր ու պատկառանք ունեն «Ձանգեզուր»-ի նկատմամբ, որովհետեւ այդ թերթի խմբագրությունում եմ աշխատել եւ նրա էջերում տպագրել իմ առաջին գործերը» («Ձանգեզուր», 15 դեկտեմբերի 1995թ.): Նրա առաջին պատմվածքը՝ «Չոր տափը», դեռեւս հեռավոր 1934-ին, թերթի հիմնադրման պահին էր տպագրվել «Կարմիր Ձանգեզուր»-ում:

Նրա այցելության այդ օրը կյանքիս բացառիկ օրերից մեկն եմ համարում: Ես ուրախությամբ ու հպարտությամբ էի պարուրվել... Սերո խանգաղյանի այցից հետո պատասխանատվության ու պարտավորվածության մի նոր՝ ավելի լուրջ զգացողություն վերապրեցի:

«Ձանգեզուր» թերթը խմբագրեցի մինչեւ 1996թ. մարտի 14-ը: Այդ տարիների ընթացքում նա շատ է այցելել թերթի խմբագրություն: Իսկ երբ երեսնում էր, զանգահարում էր, հետաքրքրվում թերթի գործերով... Երբեմն էլ թերթին նյութեր էր ուղարկում..



1985թ. հուլիսի առաջին 

օրերին Գորիսում ընթանում էր «Բակունցյան օրեր» միջոցառումը. Գորիսը կրկին մեծարման իր տուրքն էր մատուցում Ակսել Բակունցին: Այդ առիթով Գորիս էին ժամանել Սերո Խանգադյանը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Մկրտիչ Սարգսյանը, ասմունքող Սիլվա Յուզբաշյանը, երգչուհի Մանի Գրիգորյանը եւ այլ հյուրեր:

Սերո Խանգադյանին առանձնահատուկ դերակատարություն էր վերապահվել այդ միջոցառման մեջ: Նա եւ կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը միասին առաջինը ծաղկեպսակ դրեցին Ակսել Բակունցի հուշարձանին, Բակունցին նվիրված գրական-երաժշտական երեկոն էլ Սերո Խանգադյանը բացեց ...

Տարիներ շարունակ Գորիսում կազմակերպվող «Բակունցյան օրեր»-ն այս անգամ պիտի մեկնարկեին Գորիս գյուղից: Նախատեսված էր այցելություն Սերո Խանգադյանի հայրական տուն, որտեղ լույս աշխարհ էր եկել Սերո Խանգադյանը: Դա էլ իր շարժառիթն ուներ. լրանում էր Սերո Խանգադյանի ծննդյան 70-ամյակը:

«Բակունցյան օրեր»-ի այդ դրվագի կազմակերպման պատասխանատվությունը նույնպես դրված էր շրջանային մշակույթի բաժնի վրա: Մենք պետք է Գորիս գյուղում 20-րդ դարակազմի ոգով կահավորեինք Սերո Խանգադյանի հայրական տունը: Հանձնարարվել էր երկրագիտական թանգարանին ցուցանմուշներով, կենցաղային իրերով կահավորել այդ տունը: Բայց ամենից առաջ պետք է ճշտեինք՝ ո՞րն է Սերո Խանգադյանի հայրական տունը: Այդ հարցում մեզ պետք է օգնեին Անդրանիկ Շալունցը, ով գրողի քրոջ՝ Արաքսյայի ամուսինն էր, գրողի մանկական ընկերը, գյուղի հարեամը: Անդրանիկ Շալունցի հետ գնացինք Գորիս գյուղ, բայց պարզվեց, որ... Սերո Խանգադյանի հայրական տունը, որտեղից տեղափոխվել էին 1925թ., քանդվել է ամբողջապես, եւ դժվար էր անգամ պատկերացնել, որ այնտեղ բնակարան է եղել ժամանակին: Մենք էլ, ճարահատյալ, կահավորեցինք Անդրանիկ Շալունցի հայրական բնակարանը:

Դա միջոցառումից մեկ օր առաջ էր:

Այդ մասին Սերո Խանգադյանին չէինք հասցրել ասել: Շատ անհանգիստ էինք. ենթադրում էինք, որ Սերո Խանգադյանը հյուրերին պիտի պատմի իրենց տան մասին, մանկության օրերի մասին, բայց...

Երբ արդեն մոտենում էինք Սերո Խանգադյանի «հայրական» տանը, Գորիս գյուղի մատույցներում այդ ամենին իրազեկ դարձրի Ռոբերտ Ալեքսանյանին: Նա հրաժարվեց Սերո Նիկոլայիչին անձամբ ներկայացնել ստեղծված իրավիճակն ու ասաց՝ այդ մասին Սերո Նիկոլայիչին ինքը հաղորդի: Մոտեցա ու նրա ականջին շնչացի, որ իրենց նախկին տունը հիմնահատակ ավերված է, եւ նրանց տան փոխարեն մտնելու ենք Շալունց Անդրանիկի հայրական տունը, ու, որ նա պիտի կարողանա ձեւացնել, իբրեւ իրենց տունն ենք մտել եւ ասի այն, ինչ որ իրենց տանը պիտի ասեր:

Սերո Խանգադյանը չխառնվեց, չչփոթվեց, ըմբռնումով զլխով արեց: Քիչ անց արդեն Համո Սահյանին պատմում էր, թե ինչպես է հենց այդ տան բակում առաջին անգամ տեսել Ակսել Բակունցին՝ ավելացնելով. «Իսկ հայրս նստած էր այս պատի տակ»:



1989թ. հունվարի 28-ին, 82 տարեկան հասակում, երկարատև հիվանդությունից հետո վախճանվեց Գուսան Աշոտը:

Մենք պետք է պատրաստեինք «Ջանգեզուր» թերթի երկու էջ՝ նվիրված Գուսանին: Եվ ես՝ որպես խմբագիր, զանգահարեցի գրականության եւ մշակույթի նշանավոր մի քանի ներկայացուցիչների՝ գրառելու նրանց խոսքը Գուսանի մահվան կապակցությամբ: Մասնավորապես, խոսեցի ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանի, բանաստեղծ ու երգահան Գուրգեն Գաբրիելյանի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի (նրանց խոսքը տեղ գտավ «Ջանգեզուր» թերթի 1989թ. փետրվարի 2-ի համարում) եւ, իհարկե, Սերո Խանգադյանի հետ, ով դեռ երեսնում էր:

Սերո Խանգադյանն ասաց, որ արդեն խոսք է գրել «Սովետական Հայաստան» թերթի համար, բայց «Ջանգեզուր»-ում էլ կուզենար իր վիշտն արտահայտել: Ահա հեռախոսով նրա փոխանցած խոսքը. «Գուսան Աշոտի ստեղծագործության ամենաեղանակյա կողմը պայծառ լավատեսությունն է կյանքի, մարդու ապագայի, երկրի այսօրվա ու գալիքի նկատմամբ: Նրա երգերի մեջ արտահայտված է անսահման սեր դեպի մարդն ու հայրենիքը, դեպի եղբայրական ժողովուրդները, քնքշություն դեպի մերձավորն ու հարազատը: Երբեմն նրա երգերի մեջ զգացվում են նաեւ թախծի շերտեր, բայց այդ թախծի թեթև երանգները ծնվում են իր հայրենի աշխարհի նկատմամբ տածած բացառիկ սիրուց: Գուսան Աշոտի մահով մեր ձորերը որբացան, սակայն նրա ձայնը, նրա երգը միշտ մեզ հետ կլինեն»:

Սերո Խանգադյանը ելույթ ունեցավ նաեւ հուղարկավորության ժամանակ ու ասաց. «Գուսանը ծնվել է երկնքից, որովհետեւ մեծերը ծնվում են աստվածների կաճառներից եւ կրկին վերադառնում այնտեղ: Այսօր, երբ հայ ժողովուրդն օրհաս է ապրում, մեծ Գուսանի մահով մենք չենք թողնում նաեւ մեր հույսը, մենք այն ուղարկում ենք երկինք՝ արմատները թողնելով սրբերի այս ձորում»:



Լեռնային Ղարաբաղի պատվիրակությանը, Գուսան Աշոտի հուղարկավորության ժամանակ, ես էի ուղեկցում: 1989թ. փետրվարի 1-ն էր: Հուղարկավորությունից հետո՝ օրվա վերջին, Լեռնային Ղարաբաղից ժամանած հյուրերին, Գուրգեն Գաբրիելյանի եւ Լեւոն Մկրտչյանի զխավորությամբ, հրավիրեցի մեր տուն: Մի փոքր ուշացումով մեզ միացավ Սերո Խանգադյանը, ավելի ուշ միացան Ռոբերտ Ալեքսանյանն ու Գագիկ Հայրունյանը:

Հուղարկավորության պահի՝ Գուրգեն Գաբրիելյանի ելույթից բոլորս տպավորված էինք: Գուրգեն Գաբրիելյանը Գուսանին գերեզման իջեցնելիս խոսք էր խնդրել եւ հետևյալն ասել. «1981թ. մայիսի 21-ին՝ Սուրեն Այվազյանի հուղարկավորության ժամանակ, երգեցի «Ղարաբաղի հորովելը»: Գուսանի կողքին էի կանգնած: Երբ ավարտեցի երգը, Գուսանը բռնեց ձեռքս եւ ասաց. «Խնդրում եմ՝ իմ թաղման ժամանակ էլ կերգես «Ղարաբաղի հորովելը»»: Եվ, ուրեմն, թույլ տվեք կատարել Գուսան Աշոտի պատվիրանն ու երգել «Ղարաբաղի հորովելը»»: Ղարաբաղյան շարժման ամենաթեթ օրերն էին, այդ երգի մեղեդիները մեծ հուզմունք էին պատճառել ներ-

կաներին, առանց չափազանցության կարելի է ասել՝ բոլորը հուզվել ու արտասվում էին՝ սգալով եւ Գուսանի կորուստը, եւ կարեկցելով Ղարաբաղին, որն այդ օրերին գտնվում էր ծանրագույն վիճակում:

Գուսանի հուղարկավորության այդ դրվագը ցնցել էր նաեւ Սերո Խանգաղյանին: Նա խնդրեց Գուրգեն Գաբրիելյանին մեկ անգամ եւս կատարել «Ղարաբաղի հորովելը»: Թեեւ դժվարությամբ, բայց Գուրգեն Գաբրիելյանը համաձայնեց: Եվ մեր տան կամարների ներքո հնչեց «Ղարաբաղի հորովելը»...

*Իրիքնակը րուս ա եկա,  
Տանս յիրս լուս ա եկալ:  
Սօր մին կորն վեր վար անին,  
Գիդա սրբես լուս ա եկալ:*

*Տո աբա, հո,  
Ապան մարադ,  
Ապուն դարուն կունիդ հուրադ:  
Տո աբա, հո, հո, հո...*

Ներկա գտնվողներս կրկին վերապրեցինք Գուսան Աշոտին հրաժեշտ տալու վսեմաշուք պահը:

Նստեցինք շատ երկար, նորից խոսեցինք Գուսան Աշոտի մասին. հուշեր էինք պատմում, նրա երգերն ու բանաստեղծությունները վերհիշում, քննարկում:

...Գագիկ Չայրունյանը հյուրերին հաջորդ օրվա առավոտվա համար վերհիշեցում՝ իր հայրական տանը, «Քան ուտելու» առաջարկ արեց: Հրավերն ընդունվեց:



Սերո Խանգաղյանը «Հայրենապատում»-ի մեջ պատմում է «Հարժիսի լեգենդ»-ի մասին. «Առասպելը վկայում է, թե շատ հին ժամանակներում Որոտան գետի մյուս երեսին ծվարած Լծեն գյուղից մի տղա գետն ի վար գնում է Հալիձոր գյուղ՝ աղ բերելու: Մթին անտառի մեջ հանկարծ հանդիպում է մի վայրենի աղջկա: Տղան ընկնում է աղջկա հետեւից եւ բռնում յոթ օր հետապնդելուց հետո: Աղջկա անունը Հարժիս է լինում: Տղան անունանում է նրա հետ: Այդ տղայի ու աղջկա անունից էլ առաջացել է Հարժիս գյուղի անվանումը»:

...Սերո Խանգաղյանի հարժիսյան հերոսներից է Քոլիկ անունով աղջնակը: Ինչպես գրված է «Հայրենապատում»-ի մեջ, 1951թ. ամռանից հիշում է Քոլիկ Սահակյանին, որ «թմբիկ աղջիկ էր». «Գիշեր է: Մնացինք Վաղարշակ Ղազարյանի տանը: Քունս չի տանում, հիշում եմ առասպելի Հարժիսին՝ ձորի հարսին, զեղեցիկ Քոլիկին»: Վարպետը Քոլիկին հիշում է նաեւ 1953թ. հունիսին. «Գյուղում ինձ ասում են, թե Քոլիկը տանը չէ: Իսկ ես Յայջի եմ եկել հենց նրան տեսնելու: Հրաշք է Քոլիկը: Յայջու Քրդիկ տաճարի ավերակների հարս Մարդնան է նա. նույն կրակ աչքերը, փարթամ մազերը, միայն դեմքն է մի քիչ այրված...»:

Տարիներ էին անցել...

Մեր հանդիպումներից մեկի ժամանակ, ասացի, որ Քոլիկը կնոջս՝ Մանուշակի մորաքույրն է, Վարպետն աշխուժացավ եւ սկսեց հարցուփորձ անել Քոլիկից:

Իսկ տիկին Քոլիկն իսկապես հրաշալի կին էր: Մեր հանդիպումներին, «անձնական գաղտնիքներ բացահայտելու», տի-

կին Քոլիկի հոգու հետ խաղալու ենթատեքստով, քանիցս հիշեցրել եմ Սերո Խանգաղյանի «Հայրենապատում»-ի եւ մեծ գրողի ակնարկների մասին: Նա երանության ժպիտը դեմքին կարոտով էր հիշում երիտասարդության օրերը, փաստելով միայն այն, որ այդ տարիներին ինքն ընկերների հետ դաշտում էր աշխատում, եւ Գորիսից գալիս էին «թղթակիցներ», երբեմն գալիս էր Սերո Խանգաղյանը. գալիս էին՝ գյուղի աշխատավորների մասին հողվածներ գրելու...



1990թ. հուլիսի 24-ին «Զանգեզուր» թերթում լույս տեսավ Սուսաննա Բաբաջանյանի «Ռինգում ծեծվածները» պատմվածքը: Պատմվածքի հերոսները՝ Նուարդն ու Ռուբենը, այցելում են ինչ-որ մի գրողի գմբեթածեւ ապարանք, որ քաղաքից դուրս ժայռապարիսպ հովտում էր: Վարպետի հայացքը կանգ է առնում Նուարդի վրա, որի բարակ շրի տակից բարեձեւ մարմինը մեղմ կանչում էր... Ռուբենը փորձում է իր նոր պատմվածքները ներկայացնել գրողին, բայց... Մի խոսքով՝ Վարպետը Ռուբենին դուրս է քշում տնից, հետո ապարանքից մի կերպ դուրս է պրծնում Վարպետի կողմից հետապնդվող Նուարդը...

Այդ հրապարակումից հետո Գորիսում խոսակցություններ չըզանառվեցին, թե իբր պատմվածքի հերոսներից մեկը՝ Վարպետը, Սերո Խանգաղյանն է, իբր այդ գմբեթածեւ ապարանքը նրա գորիսյան առանձնատունն է, որտեղ եւ տեղի են ունենում պատմվածքում նկարագրված իրադարձությունները:

Սերո Խանգաղյանն ուշադրություն չդարձրեց այդ խոսակցություններին, իսկ տիկին ժենյան ու գրողի քույրերն ինձ հետ դառն խոսակցություններ ունեցան՝ ասելով, որ պատմվածքի տան նկարագրությունն ուղղակիորեն հիշեցնում է Սերո Խանգաղյանի նոր կառուցած տունը: Ի վերջո ինձ հաջողվեց հանոգել, որ պատմվածքի տպագրությամբ որեւէ միտում չենք ունեցել եւ չենք էլ մտածել, թե դա կնույնացվի գրողի «Ըղջիագու» տան հետ:

Այդ բոլորով հանդերձ՝ ինձ շատ վատ էի զգում: Երեւի պիտի կանխատեսեի, որ պատմվածքը կարող էր նաեւ այդպիսի ընկալում ունենալ...



1990թ. դեկտեմբերի 11-ին «Զանգեզուր» թերթում լույս տեսավ իմ հեղինակած մի հողված՝ Հարժիս գյուղը գրավոր աղբյուրներում հիշատակվելու 1150-ամյակի առթիվ (վերնագիրը՝ «Գյուղը՝ որպես հնագույն բնակատեղի. տեղանվան ծագման մասին»): Հողվածը նախապես քննարկել էի նշանավոր լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանի հետ: Հարժիս տեղանվան ծագման լեզվական բացատրությունն արժանացել էր Ալեքսանդր Մարգարյանի հավանությանը: Նա նույնիսկ ասաց. «Ես մեծ հաճությամբ իմ ստորագրությունը կդնեի այս հողվածի տակ»: Հողվածին ծանոթացավ (տպագրվելուց հետո) նաեւ Սերո Խանգաղյանը: Հողվածում անհամաձայնություն էի հայտնել «Հայրենապատում»-ի մեջ առաջ քաշած վարկածին (Ա գիրք, Եր., 1980, էջ 343-344), թե Հարժիս տեղանունը ծագում է առասպելական աղջկա անունից՝ վկայակոչելով մի քանի փաստարկ: Սերո Խանգաղյանին դուր չէր եկել իմ հողվածը... Այդ մասին ասաց մեր հանդիպումներ-

րից մեկի ժամանակ՝ խոստանալով հարցի հանգամանակից քննարկում՝ ժամանակ ունենալու դեպքում:

Օրերից մի օր՝ առավոտյան, նա զանգահարեց խմբագրություն եւ հրավիրեց իրենց տուն՝ «խաշիլ ուտելու»:

Անմոռանալի հանդիպում էր... Մենք քննարկեցինք ոչ միայն այդ հոդվածը, այլև ուրիշ հոդվածներ եւս (մեր թերթի մշտական ընթերցողն էր):

Սերո Խանգաղյանը պատմեց, որ այդ առասպելն ավանդազրույց է. ինքն այն լսել է տարեց հարժխեցիներից 1930-ականներին: Նաեւ խորհուրդ տվեց լրջորեն ու հարգանքով վերաբերվել ժողովրդական հիշողությանը, որն իր մեջ շատ հարցերի ու առեղծվածների պատասխաններ է պարունակում:



1994թ. սեպտեմբերի վերջին օրերն էին: Սյունիքի հարցերով ՀՀ պետնախարարի Գորիսի աշխատակազմում տեղի ունեցավ Սյունիքի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրի նախագծի քննարկում: Մասնակցում էին Սյունիքի շրջանների, քաղաքների ղեկավարներ, ՀՀ կառավարության եւ մի քանի նախարարությունների ներկայացուցիչներ:

Սյունիք-Ջանգեզուրի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրի մշակումն առաջադրվել էր ՀՀ կառավարության 1993թ. թիվ 205 որոշման համաձայն:

Անմիջական հարեւանությունը ԼՂՀ-ին, սահմանամերձ լիճաները Ադրբեյջանին եւ Իրանի Իսլամական Հանրապետությանը բարձրացրել էին տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը: Այդ հանգամանքը Սյունիքի զարգացումը դարձրել էր հանրապետության տարածքային քաղաքականության գերակայություններից մեկը:

Ծրագրի նախագծի մասին գորիսյան խորհրդակցությունում զեկուցեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ Սիիրան Գեւորգյանը: Ծավալվեց մտքերի ակտիվ փոխանակություն: Գրեթե բոլոր ելույթ ունեցողները շոշափում էին մեկ հարց՝ ո՞րն է ապագա մարզկենտրոնի համար ամենահարմար վայրը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն արտահայտեցին Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու շրջանային, Կապանի, Գորիսի քաղաքային խորհուրդների նախագահներ Սլավիկ Հայրապետյանը, Ռոբերտ Ալեքսանյանը, Քոչար Դավթյանը, Ավետիք Արիստակեսյանը, Ռադիկ Սարուխանյանը, Սեյրան Դուրյանը, Գորիսի փոխքաղաքապետ Սուրեն Խաչատրյանը: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր առաջարկությունը մարզկենտրոնի վերաբերյալ:

Խորհրդակցությանը մասնակցում էր նաեւ Սերո Խանգաղյանը: Ամբողջ խորհրդակցության ընթացքում նա լուռ եւ ուշադիր լսում էր արտահայտվողներին: Երբ ավարտվեցին ելույթները, նա ձայն խնդրեց եւ հանդես եկավ ընդարձակ խոսքով: Հիրավի, պատմական ելույթ էր... Բացառիկ հաջող եւ փաստարկված ներկայացրեց Սյունիքի շրջաններից յուրաքանչյուրի սոցիալ-տնտեսական վիճակը, առանձնահատկությունները, կարելորեց Սյունիքում տարբերակված տարածքային քաղաքականություն վարելու մտադրությունը: Ելույթի երկրորդ մասը նվիրեց մարզկենտրոնի ընտրության հարցին՝ անդրադառնալով եւ Մեղրուն ու Կապանին, եւ Գորիսին ու Սիսիանին: Կարելորեց այդ քաղաք-

ներից յուրաքանչյուրի առավելությունները, հնարավորությունները: Ըստ Սերո Խանգաղյանի՝ սկզբունքային սխալ թույլ տված չենք լինի, եթե մարզկենտրոնը դարձնենք նշված քաղաքներից որեւէ մեկը՝ Մեղրի, Կապան, Գորիս, Սիսիան: Սակայն, ըստ նրա, Ղարաբաղյան խնդրի չկարգավորվածության պայմաններում ողջամիտը Գորիս քաղաքի տարբերակն է: Գորիսը մարզկենտրոն դարձնելը, Սերո Խանգաղյանի կարծիքով, կարելոր է նաեւ այն տեսակետից, որ Սյունիքի ապագա մարզն անպայման իր մեջ պետք է ներառի նաեւ Եղեգնաձորի ու Վայքի շրջանները: Նա երազում էր ապագա մարզը տեսնել պատմական Սյունիքի սահմաններում:



Հանուն ճշմարտության բանավեճն էլ Սերո Խանգաղյանի տարերքն էր: Դրանում համոզվեցինք հատկապես մեծանուն լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանի հետ նրա բանավեճերից մեկում: Այս անգամ թեման Խանածախ գյուղանվան ստուգաբանությունն էր:

1991թ. հուլիսի 26-ին Սերո Խանգաղյանը նամակ գրեց տողերիս հեղինակին (նամակը տպագրվել է «Ջանգեզուր» թերթի 1991թ. օգոստոսի 17-ի համարում): Կոչ էր անում օգտագործել տեղանվան «բնիկ հայկականը». «չէ՞ որ այդ գյուղին ժողովուրդը եւս Խնածախ է ասում»:

Նամակին արձագանքեց Ալեքսանդր Մարգարյանը: Պրոֆեսորը դեմ էր Սերո Խանգաղյանի ստուգաբանմանը եւ հիմնավորեց տեղանվան մյուս ձեռի ճիշտ լինելը՝ Խանածախ:

Պրոֆեսորը, սակայն, իր հոդվածն ավարտեց խիստ դիտողությամբ. «Կարծում ենք... պրն. Ս.Խանգաղյանը հեռու կմնա առիտասարակ ստուգաբանական գայթակղությունից եւ չի էլ խանգարի, որ բարբառային Խնածախ ձեռի փոխարեն գյուղը կոչվի իր ավելի հին ու բնիկ հայկական Խանածախ ձեռով» (հոդվածը տպագրեցինք «Ջանգեզուր» թերթի 1991թ. հոկտեմբերի 19-ի համարում):

Սերո Խանգաղյանը լավ չընդունեց «Ջանգեզուր»-ի խմբագրակազմի պահվածքը: Եվ այդ մասին արտահայտվեց մեր հեռախոսագրույցում, երբ քննարկում էինք Ալեքսանդր Մարգարյանի պատասխան հոդվածը: Դրա համար էլ իր արձագանքն ուղարկեց ոչ թե մեզ, այլ «Երեկոյան Երեւան» թերթին, որտեղից էլ այն արտատպեցինք (23 նոյեմբերի 1991թ.):

Սերո Նիկոլայիչը շատ խիստ էր արտահայտվել. «Այ՛ Մարգարյան, ինչո՞ւ ես սուտ խոսում...»: Եվ մեզ հորդոր հղեց՝ «Սիրելի՛ «Ջանգեզուր», տպագրել ես Մարգարյանի այդ ծավալուն խրատը՝ քո գործն է, սակայն երբեք չլսես նրան»:

Այս անգամ էլ պրոֆեսորը նեղացավ խմբագրությունից եւ մի նոր հոդված առաջարկեց:

Մենք ծանր էինք տանում այդ բանավեճը, քանի որ երկուսի խոսքերն այլեւս ու ավելի շատ անձնական վիրավորանքներ էին պարունակում: Եվ համարձակվեցինք չվերցնել Ալեքսանդր Մարգարյանի նոր հոդվածն ու կոչ անել երկու հսկաներին՝ դադարեցնել բանավեճը, որն արդեն բանավեճ չէր հիշեցնում:

...Շնորհակալություն հայտնեցինք եւ Սերո Խանգաղյանին, եւ Ալեքսանդր Մարգարյանին, որ հարգանքով վերաբերվեցին մեր առաջարկությանն ու դադարեցրին բանակռիվը:

# Հուշի պատարառիկներ



## ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մեծանուն գրող Սերո Խանգադյանին առաջին անգամ հանդիպել են հեռավոր 1958 թվականին, հայրենի Խանածախ գյուղում: Երրորդ դասարանի աշակերտ էի, գյուղ էին եկել Ս.Խանգադյանը, Ս.Այվազյանը եւ մի ուրիշ գրող, որին չէի

ճանաչում: Ռադիոն նոր էր մուտք գործել գյուղ: Գյուղերից շատերն ունեին իրենց ռադիոհանգույցները, որոնցով համայնքների համար հայտարարություններ, նաեւ առանձին հաղորդումներ էին տրվում:

Այդպիսի ռադիոհանգույց ուներ նաեւ մեր գյուղը, որը տեղավորված էր Սելիք Հայկազնի հյուրատան (բալախանա) երկրորդ հարկում: Այնտեղ մտնելու համար պետք է անցնեիր մեր բակով: Հենց այդ օրը բակում ցախ ջարդելիս բակ են մտնում երեք գրողները՝ ռադիոհանգույց հասնելու եւ գյուղի իրենց ընթերցողներին դիմելու համար: Սերո Խանգադյանն իր թավ ձայնով բարեւեց ինձ եւ հարցրեց՝ ինչպես ես սովորում: Պատասխանեցի: Հետո մանկական հպարտությամբ հասակակիցներիս պատմում էի, որ Ս.Խանգադյանը «գրուցել է» ինձ հետ:

Հայտարարությունից կես ժամ անց ամբողջ գյուղը կարծես քնից զարթոնեց: Գյուղի նորակառույց ակումբի 350 տեղանոց դահլիճը չկարողացավ տեղավորել բոլոր ցանկացողներին: Հիշում եմ, դպրոցականներից հանդիպմանը թույլատրեցին մասնակցել միայն 9-րդ եւ 10-րդ դասարանցիներին:

Սիրելի հայրենակիցների նման ընդունելությունը պայմանավորված էր ոչ միայն նրանց գրող լինելու հանգամանքով, այլ նաեւ նրանով, որ եւ Ս.Խանգադյանը, եւ Ս.Այվազյանն իրենց աշխատանքային գործունեությունը սկսել էին Խանածախում որպես ուսուցիչներ: Դահլիճում գտնվողներից շատերը նրանց նախկին աշակերտներն էին:



Նոր էր լույս տեսել «Մխիթար Սպարապետ»ը: Կարելի է ասել, որ այն հայրենասիրության 9-րդ ալիք էր առաջացրել հատկապես Սյունիքում, մասնավորապես Գորիսում: Սյունեցի ընթերցողը վեպն ընթերցելիս իր շրջապատում, անտառում, բարձր լեռների ծեղկերում, խոնարհված բերդերի ու ամրոցների քարերի վրա ոչ հեռավոր անցյալի իր հերոսական նախնիների ոտնահետքերն էր փնտրում:

Գյուղում երկու գրադարան կար, որոնք մեկական «Մխիթար Սպարապետ» էին ստացել: Վեպը առաջինն ընթերցելու համար իսկական «կռիվ» էր: Ի վերջո գյուղի այսպես կոչված գրասերների խորհուրդը գրականության ուսուցիչ Արմենակ

Հետադարձ հայացք ձգելով այդ բանակրվին՝ տեսնում ենք նաեւ, թե երկուստեք որքան լուրջ եւ գիտական փաստարկներով էին ելել բանավեճի: Այո՛, արժե այդ բանավեճը վերհիշել Սերո Խանգադյանի հոբելյանի առիթով, քանի որ վեճն իրոք հանուն ճշմարտության էր:



1998թ. հունիսի 24-ի ուշ երեկոյան Կապանում ինձ զանգահարեց Սյունիքի մարզպետ Ռոման Նավասարդյանը եւ ասաց, որ վախճանվել է Սերո Խանգադյանը: Ասաց նաեւ, որ կազմվել է կառավարական հանձնաժողով՝ Սյունիքի նախկին մարզպետ, Երեւանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանի զլխավորությամբ: Ռոման Շնավոնիչն ասաց, որ զանգահարեմ Սուրեն Աբրահամյանին՝ սպասում է:

Ձանգահարեցի, ինքն էլ ասաց, որ իր զլխավորությամբ կառավարական հանձնաժողով է կազմվել, եւ պատրաստվում են հուղարկավորությանը, որը տեղի կունենա հունիսի 29-ին, թաղումն էլ կկատարվի Կոմիտասի անվան զբոսայգում: Սուրեն Աբրահամյանը ցանկություն հայտնեց, որ ես էլ մասնակցեմ եւ մահախոսականի, եւ հուղարկավորության կառավարական հանձնաժողովի նախագահի ելույթի պատրաստմանը:

Սուրեն Աբրահամյանի ելույթը, կարծում եմ, ստացվեց: Թաղման արարողությունից հետո այդ կարծիքն արտահայտեցին նաեւ Հրանտ Մաթեոսյանը, Սիլվա Կապուտիկյանն ու Զորի Բալայանը:

Սերո Խանգադյանի մահվան գույժը լսելուց հետո Երեւան էր ժամանել Գորիսի պատվիրակությունը՝ քաղաքապետ Սուրեն Խաչատրյանի զլխավորությամբ: Վերջինս զբաղված էր հուղարկավորության հետ կապված հարցերով: Բայց եւ նպատակահարմար գտանք, որ գորիսեցիների անունից թաղման ժամանակ խոսք ասվի: Այդ խոսքի վրա աշխատեցինք Սուրեն Խաչատրյանի եւ Արկադի Ծատուրյանի հետ: Խոսքը, որ ներկայացրեց Սուրեն Խաչատրյանը, նույնպես ստացվել էր եւ ներկաների կողմից պատշաճ գնահատականի արժանացավ:

Թաղման հանձնաժողովի նախագահի ելույթի վերջին երկու պարբերությունը, այնուամենայնիվ, արժե հիշել. *«Թեեւ նրան ամփոփում ենք այստեղ՝ մայրաքաղաքում՝ հայոց մեծերի կողքին, սակայն նրա արմատներն ու հոգին մնում են Սյունյաց քաջաց աշխարհում, որտեղից սերում է մեծ արձակագիրը:*

*Լինելով Ստեփանոս Սյունեցու, Հովհան Ռոտունեցու, Գրիգոր Տաթևացու, Ակսել Բակունցի եւ Սյունյաց մյուս մեծերի երախտավոր շառավիղը՝ նա իր ապրած կյանքով գորացրեց ու դեռ կգորացնի հայոց աշխարհն ու հայ ազգին»:*

Սերո Խանգադյանի մահվանից տասնյոթ տարի անց շարունակում ենք մնալ այդ կարծիքին:



Դեռևս կենդանության օրոք լեզբնդ դարձած Սերո Խանգադյանի հետ իմ բարեկամությունը տարիների հեռվից ավելի է քաղցրացել ու արժեւորվել: Հպարտանում եմ այդ բարեկամությամբ, համարում այն իմ կյանքի ամենալուսավոր իրողություններից մեկը:



Հակոբյանի գլխավորությամբ որոշեց առավելությունը տալ գյուղի ամենատարեց ընթերցողին՝ Կուրունց Գեորգին: Դրանից հետո սահմանվեց՝ ոչ ոք իրավունք չունի չորս օրից ավելի գիրքն իր մոտ պահել: 85-ամյա Գեորգ պապն այդքան օրում էր վեպը կարդացել:



Սերո Խանգադյանի յուրաքանչյուր այցելությունն ծննդավայր մի հիշարժան երեւոյթ էր, որովհետեւ նա երբեք մեծակ չէր գալիս: Նրա հետ էին լինում գրականության, կինոյի, երաժշտության եւ արվեստի այլ ճյուղերի ճանաչված շատ գործիչներ: Հիմա շատ հեշտ է պատեհ-անպատեհ փնովել, պախարակել կոմունիստներին իրենց գործած ու չգործած չարիքների համար, բայց ցանկանում եմ հուշել եւ հիշեցնել, որ Գորիսի տարածաշրջանի հոգեւոր վերելքը երբեք այնպիսին չի եղել, ինչպիսին էր 20-րդ դարի 80-ական թվականներին: Այդ տարիներին է Գորիսում առաջին անգամ բեմադրվել «Ամուշ» օպերան, գորիսեցիներ առաջին անգամ իր օջախում ունկնդրել աշխարհահռչակ Զեքիայանի ղեկավարած երգչախմբի համերգը: Այդ տարիներին է սկիզբ առել Գորիսյան տոնը, որը շարունակվում է նաեւ այսօր:

Այդպիսի մի հանդիսություն, որ անմիջականորեն կապված էր Ս.Խանգադյանի հետ, ամնոռաց տպավորություն է թողել հավանաբար ոչ միայն ինձ վրա: Կուսակցության շրջանային կոմիտեի եւ գրողների միության նախաձեռնությամբ Գորիսում նշվեց մեծ գրողի ծննդյան 70-ամյակը: Առանց չափազանցության Գորիսում էր հանրապետության մտավորականության ծաղիկը: Պաշտոնական արարողությունից հետո հյուրերի համար հյուրասիրություն էր կազմակերպվել պիոներ պալատում: Սեղանը ղեկավարում էր, կամ ինչպես ասում են, սեղանի թամադան էր գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանը:

Հայ ժողովուրդը Հ.Թումանյանին տվել է «Ամենայն հայոց բանաստեղծ» եւ «Ամենայն հայոց թամադա» պատվանունները: Ասում են՝ երկու տիտղոսներն էլ հավասարապես թանկ էին մեծ մտածողի համար:

Ըստ իս՝ թամադա չի նշանակում մի մարդ, ով ղեկավարում է ուտել-խմելու սեղանը: Դա մի մարդ է, ով ասելիք ունի իր սեղանակիցներին, թամադայությունը բանավոր բանախոսություն է, դա արվեստի ինքնատիպ ձեւ է, որին, ինչպես արվեստի այլ ճյուղերում, տիրապետում են շատ քջերը: Այդ քջերից մեկն էլ Վ.Պետրոսյանն էր: «Լավ խոսել, նշանակում է պարզապես լավ մտածել բարձրաձայն» (Է.Ռեման): Եվ Վ.Պետրոսյանը մտածում էր բարձրաձայն. «Սեր ժողովուրդը արհավիրքներ շատ է տեսել, որոնցից մի քանիսը արտացոլվել են Ս.Խանգադյանի ստեղծագործություններում: Աստված մի արասցե, եթե հանկարծ մի արհավիրք էլ գա մեր ժողովրդի գլխին, ու վերանան մեր ժողովրդի գիրն ու գրականությունը, հազարավոր տարիների ընթացքում նրա ստեղծածը, ու հրաշքով փրկվի Ս.Խանգադյանի «Հայրենապատում» մեծագործության միայն մեկ օրինակ, այն բավարար կլինի, որպեսզի ապագայի գիտնականները վերականգնեն մեր ժողովրդի ամբողջ պատմությունը»:



Հայտնի բան է, որ անեկդոտներ ստեղծում, պատմում են

տաղանդավոր ժողովուրդների, անհատների մասին: Հիշենք հրեաների, հայերիս մասին աշխարհում շրջող հարյուր հազարավոր անեկդոտները: «Հայկական ռադիոյի անեկդոտները» վերտառությամբ վեցհատորյակ է լույս տեսել Ֆինլանդիայում: Նման բազմաթիվ անեկդոտներ, եղածին մոտիկ պատմություններ են ստեղծվել նաեւ մեր մեծ հայրենակցի մասին: Դրանցից մեկի հեղինակն էլ, թող անհամեստ չլինի, ես եմ: Կարծում եմ, որ Սերո Նիկոլայիչի ժառանգները կներեն ինձ: Ժամանակին նա ներել է: Որպեսզի խոսքս երկար չստացվի, նախ պատմեմ անեկդոտը:

Ես եւ կուսընկերների կրկնորդ քարտուղարն առաջինի առանձնասենյակում ենք: Ներս է մտնում Ս.Խանգադյանը, բարեւում եւ, դիմելով առաջին քարտուղարին, ասում՝ ինչ լավ է, երեխաներն էլ այստեղ են (երեխաները ես եւ շրջկոմի երկրորդ քարտուղարն ենք): Գրպանից մի թղթի կտոր հանելով՝ շարունակում է.

- Ռոբերտ Արմենակի, որոշել եմ տան մուտքի մոտ մի փոքր սենյակ կառուցել: Ամեն ինչ կա, մի քանի բան-ման է պակասում: Ուրեմն մի 70-80 անկյունաքար, մեր լեզվով՝ ռոք: Խասանին կասեք կողքերը կտրի, որ վարպետները չհարչարվեն, Սիսիանի ավազ՝ մի երկու մեծ մեքենա, վեց հատ ֆիննական պատուհան (մոսկովյանը լավ չի, առանց ապակու է), մի «Ձիլ» մեքենա ցեմենտ, էդքան էլ գաջ, եթե ավելանա, վնաս չկա, հարեւաններին լավություն կանեն:

Ավելի ցածր ձայնով, հայացքը ձեռքի թղթի կտորին, կարծես ինքն իրեն խոսելով՝ սա լուծված է, սա պետք չի, բանվորների հացի հարցն էլ է լուծված, ով աշխատանքը կատարի, նա էլ հացը կտա, ու նորից ձայնը բարձրացնելով, կարծես նոր նկատեց, հա, մի բիդոն էլ ճապոնական ներկ, 40կգ, 12մ էլ պարկետ:

Վերջացնելով կարդալը, նորից դիմում է առաջին քարտուղարին՝ Ռոբերտ Արմենակի, ո՞ւմ տամ: Ու չսպասելով պատասխանի, թղթի կտորը մեկնում է շրջկոմի երկրորդ քարտուղարին: Պատրաստվելով հրաժեշտ տալ, իրեն հատուկ բարձր ձայնով հարցնում է.

- Էլ ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

Մեղքս ինչ թաքցնեմ, մի քանի տող, մի քանի բառ, մի քիչ ավել, մի քիչ պակաս մի քանի տեղ պատմում եմ: Մի օր էլ առավոտյան շուտ, իմ առանձնասենյակում հնչում է սեւ հեռախոսի զանգը: Առաջին քարտուղարն է: Ոչ բարեւ, ոչ բարի լույս՝ արի այստեղ: Վատ բան եմ գուշակում: Ընդունարանը դատարկ է, նույնիսկ քարտուղարուհին էլ դեռ չի եկել: Մտնում եմ առաջինի առանձնասենյակ, ինքն է ու Սերո Խանգադյանը:

- Ռեդի՞կ, դու ուրիշ բանուգործ չունե՞ս, անեկդոտներ ես պատմում, տպագրում Սերո Նիկոլայիչի մասին, - խոսքի հետ ինձ է մեկնում «Ոզնի» ամսագրի հերթական համարը: Ամեն ինչ հասկանում եմ, միմյան ականջիս ծայրը կարմրում: Ոչինչ չեմ կարողանում ասել: Օգնության է հասնում Սերո Նիկոլայիչը:

- Բան չկա, դա էլ ստեղծագործության մի ձեւ է:

Ի՞նչ էր եղել, ինչպե՞ս էր պատմածս հայտնվել «Ոզնու» էջերում: Այն խմբագրություն էր ուղարկել թիվ 2 շինվարչության գլխավոր ինժեներ Ս.Հայրապետյանը: Անեկդոտի տակ ստորագրել էր այսպես՝ պատմեց Ռեդիկ Հայրապետյանը, գրի առավ Սեւադա Հայրապետյանը:



# Հարցազրույց Արարապ Խանգադյանի հետ

«Սյունյաց երկիրը» Սերո Խանգադյանի 100-ամյակին նվիրված համարի նախապատրաստության ընթացքում ի սկզբանե կարեւորեց գրողի զավակների եւ մերձավորների հետ հանդիպումը: Եվ առաջինը հանդիպեցինք ավագ որդու՝ Արարատի հետ: Հանդիպումը տեղի ունեցավ 2014թ. հունիսի 23-ին՝ Երեւանի Ավետ Ավետիսյանի փողոցի 8/37 բնակարանում: Նա ողջուցեց խմբագրության որոշումը՝ գրողի հոբելյանի առթիվ պարբերականի հատուկ համար թողարկելու մասին: Մենք պայմանավորվեցինք հանդիպել նաեւ նրա

պատմվածքաշարը (2003թ.): Այդ մեկը՝ պետպատվերով:

2005թ. Մոսկվայում ռուսերենով 2000 տպաքանակով վերահրատարակվեց «Թագուհին հայոց» (Օծածօծ ձծի ջի) պատմավեպը:


2006թ. Մոսկվայում ռուսերենով (1500 տպաքանակով) հրատարակվեց «Մխիթար Սպարապետ» (Ռ ծծծծ Ռի ձծձի ձծ) պատմավեպի երկու հատորը:

Երկու պատմավեպի թարգմանությունը նախկին ժամանակներից կար: Վերահրատարակել էին առանց մեզ տեղյակ պահելու: Որքանով տեղյակ են՝ վերահրատարակված այդ պատմավեպերն այնքան արագ սպառվեցին, որ կրկին տպագրվեցին:

– Ո՞վ է Սերո Խանգադյանի մահվանից հետո զբաղվել (զբաղվում) նրա գրական ժառանգության հրատարակման, վերահրատարակման, տարածման հարցերով:

– Ոչ ոք չի զբաղվել եւ չի զբաղվում: Մինչդեռ այդ գործերով պետք է զբաղվեին գրողների միությունը, մշակույթի նախարարությունը, ինչ-որ առումով՝ կրթության եւ գիտության նախարարությունը...

Ինքս նման հարցերով զբաղվելու, այդ գործերը



*Արարատ Սերոյի Խանգադյան. ծնվել է 1946թ. մայիսի 20-ին Գորիս քաղաքում: Նույն տարում ընտանիքը տեղափոխվել է Երեւան: 1962թ. ավարտել է Երեւանի Կրուպկայայի անվան (ներկայումս՝ Նիկոլ Աղբալյանի անվան) միջնակարգ դպրոցը: 1967թ. ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղարվեստի ֆակուլտետը: 1971-ից մինչեւ հիմա աշխատում է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի (ներկայումս՝*

*համալսարան) գեղանկարչության ամբիոնում: 1976-ից ՀՀ նկարիչների միության անդամ է, 1978-ից՝ նկարիչների միության վարչության անդամ եւ միության գեղանկարչական սեկցիայի նախագահ: Մասնակցել է մի շարք միջազգային, միութենական ցուցահանդեսների, ինչպես եւ 1970-ականներից մինչեւ հիմա Հայաստանում կազմակերպված գրեթե բոլոր ցուցահանդեսներին: Ունի երկու որդի՝ Արեգ եւ Վահագն, երեք թոռ:*

ՍՅՅԵՍՏ

արվեստանոցում, իսկ մինչ այդ պատասխանեց մեր հարցերին: Զրույցի տեքստը՝ ստորեւ:

– Սերո Խանգադյանի մահվանից՝ 1998թ. հունիսի 24-ից, անցել է տասնվեց տարի: Հետաքրքիր է՝ ի՞նչ է արվել այդ ընթացքում նրա գրական ժառանգության գիտական արժեւորման, ինչպես եւ ստեղծագործությունների վերահրատարակման ու անտիպների տպագրության ուղղությամբ:

– Անտիպ գործերից մեկը՝ «Ղարաբաղը կրակների մեջ» մատյանը, հրատարակվեց 2006 թվականին՝ դրկտոր Հարություն Սաղյանի հովանավորությամբ, 500 տպաքանակով:

1998-ին էլ հրատարակվեցին Աղբյուր Սերոբի մասին հուշերը, որ 1980 թվականին հորս պատմել էին Ազատ եւ Վալոդ Մխիթարյանները՝ ֆիդայի Հայո-Հայաստանի որդիները:

Վերահրատարակվել է «Կորած արահետներ»

կազմակերպելու հնարավորություն չունեն:

Հայրս ազգային մեծ գործիչ էր ու գրող... Հայ ժողովուրդն իր պատմության վերջին շրջանում նշանավոր շատ գրողներ է տվել, սակայն նրանցից քչերն են եղել ազգային գործիչ-գրող: Սերո Խանգադյանն այդ քչերից մեկն է ու բացառիկը:

Նա Ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնածներից էր, շատերը նրա մոտ էին գալիս, նա էր առանձին դեպքերում ուղղորդում պայքարը:

Մեր ժողովուրդը պետք է ընդմիշտ հիշի այդ ամենը: Երիտասարդությունը, նաեւ եկող սերունդները պետք է իմանան այդ մասին:

Սերո Խանգադյանի ամենամիլիարական երազանքներից մեկը Ղարաբաղն ու Նախիջեւանն ազատագրված տեսնելն էր:

Հիշում եմ՝ մահվանից մի քանի օր առաջ նա արդեն հաց չէր ուտում: Մայրս անհանգստացած զանգահարեց. «Հայրդ հաց չի ուտում»: Գնացի տուն, ասաց՝

քեզ հետ կուտեն: Մայրս Գորիսի բողբաշ էր սարքել, դրեց սեղանին: Հայրս դիտողություն արեց՝ ինչպե՞ս կարելի է առանց արաղի հաց ուտել: Մայրս արաղ բերեց, բաժակ բերեց: Ինքն էլ թե՛ բա էս մարդը մենա՞կ է խմելու: Ինքն էլ խմեց, եւ գրուցեցինք: Այդ վիճակում անգամ Ղարաբաղով էր հետաքրքվում: Ոգեւորված էր, որ Ղարաբաղն ազատագրված է:

**– Արարա՛տ, բա Նախիջեւա՞նը, – հարցրեց:**

– Նախիջեւանն էլ ենք ազատագրելու, հայրիկ, – ասացի, ինչը նրան ավելի ոգեւորեց:

Պետպատվերով գրքեր են հրատարակում: Լավ են անում, որ երիտասարդներին, սկսնակներին տեղ են տալիս: Բայց Սերո Խանգաղյանի գրական ժառանգությունը (մեկ բացառությամբ) 1990-ականներից սկսած պետպատվերում տեղ չի ունեցել...

**– Հատ անգամ ենք լսել, որ Սերո Խանգաղյանը մեծ թվով անտիպներ է թողել, բայց չենք կարողանում այդ հարցում վերջնականապես պարզություն մտցնել: Ունե՞ք տեղեկություններ գրողի անտիպների մասին:**

– Իսկապես, շատ անտիպներ է թողել: Ես էլ որոշ գործեր ունեմ՝ արվեստանոցում են պահում: Դրանց թվում՝ մի եզակի հուշատետր-օրագիր՝ կյանքի վերջին տարիներին առնչվող:

Արշակի մոտ էլ անտիպներ պետք է լինեն, Ազգային արխիվում՝ նույնպես: Բայց ամբողջական տեղեկատվության չեմ տիրապետում:

**– Գրողի գորիսյան առանձնատունը տուն-թանգարան են դարձնում, բայց գործը, կարծեք, դանդաղ է առաջ գնում:**

– Երբ Գորիսի Ըղջիյազի թաղամասի մեր տունը թանգարան դարձնելու միտք ծագեց, Սուրեն Խաչատրյանն ինձ առաջարկեց թանգարանի տնօրեն աշխատել եւ գլխավորել տուն-թանգարանի կազմակերպումը: Չհամաձայնեցի, չէի

կարող: Բայց տուն-թանգարանի ներկայիս վիճակը սազական չէ ո՛չ Գորիսին, ո՛չ էլ Սերո Խանգաղյանի անվանը:

Եթե թանգարանը նորմալ վիճակում լիներ, ինքս էլ գեղանկարներ եւ այլ նյութեր կտայի:

Կողքի փոքրիկ տունն էլ հայրս ինձ էր կտակել, բայց առանց նոտարական վավերացման: Այդ կտակն ի կատար ածելու դեպքում միգուցե եւ իմ բոլոր նկարներն այնտեղ տեղափոխեմ:

**– Ե՛վ Գորիսի առանձնատան, ե՛ւ Նորքի առանձնատան շուրջ տարաբնույթ ասեկոսներն էին շրջանառվում, իբր առուվաճառքի առարկա էին դարձրել այդ տները:**

– Տեղյակ չեմ եղել տների առուվաճառքի մասին, հետո են իմացել...

Նորքի տունը գրավ էր դրված, բայց ոչ հորս կողմից: Հորս մահվանից որոշ ժամանակ անց Վազգեն Սարգսյանն ու Սերժ Սարգսյանն այդ տունը հանեցին գրավից: Շենքը երկրորդ անգամ էլ առուվաճառքի առարկա դարձավ, դատական վեճեր եղան...


Հիմա եղբայրս՝ Արշակն է այնտեղ բնակվում, բայց ոչ որպես սեփականատեր:

Այդ շենքը, որքանով տեղյակ եմ, ներկայումս Երեւան քաղաքի սեփականություն է համարվում: Թե ինչ կլինի հետո, չեմ կարող ասել:

**– Ըստ էության մեր հարցերը որոշ դեպքերում խիստ անձնական բնույթ են կրում, ինչի համար Ձեր ներողամտությունն ենք հայցում: Բայց նման հարցերը, որքան էլ Ձեզ տհաճություն պատճառեն, պարզաբանման կարիք ունեն, քանզի խոսքը մեր մեծ արձակագրի մասին է: Ըստ շրջանառվող խոսակցությունների՝ գրողի մեղալները, գրքերի, գեղանկարների մի մասը նույնպես վաճառվել են: Արդյո՞ք այդ խոսակցությունները համապատասխանում**



*Սերո Խանգաղյանի հայրը՝ Նիկոլայ Խանգաղյանը եւ մայրը՝ Վարդանուշ Ջիլֆուղարյան-Մելիք-Օհանյանը*



**ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ:**

– Մեղալները (հորս կյանքի վերջին շրջանում, երբ ինքն այլևս հիվանդ էր եւ երեւում գիտակցություն ուներ) վաճառեցին գործիսեցի ոմն Սենիկի (Ուղուզի Սենիկին): Նույն Սենիկն էր, ով գնել էր Ըղջիյագու մեր տունը: Այդ տունը հետագայում Սուրեն Խաչատրյանը հետ վերցրեց ու դարձրեց Գորիս համայնքի սեփականություն: Իսկ երբ փորձեցինք հետ բերել նաեւ մեղալները, արդեն ուշ էր: Սենիկ Փարսյանը դրանք վաճառել էր մեկ ուրիշի, վերջինս էլ՝ այլ գնորդի: Վարդանուշ տատիս գործած խալին էլ վաճառեցին: Անձնական գրադարան ուներ հայրս՝ 18 հազար կտոր գրքից բաղկացած, բացառիկ գրքեր կային այդ հավաքածուում: Դրանք էլ վաճառվեցին, երեւի չվաճառվեցին միայն այն գրքերը, որոնք գնորդներ չունեցան: Հայրս իր հոնորարների ուղիղ կեսը հատկացնում էր գրքեր ձեռք բերելուն:

**– Ըստ Ձեզ՝ ո՞րն է Սերո Խանգադյանի ամենամեծ ու արժեքավոր գործը նրա գրական ժառանգության մեջ:**

– Այդ հարցն ինքս եմ ժամանակին ուղղել հայրիկին: Ասել է՝ «Կարմիր շուշաններ» պատմվածքների ժողովածուն: Ասել է նաեւ՝ չգիտի, թե իր ստեղծագործություններից որոնք կմնան սերունդներին, բայց այդ մեկն անպայման կմնա:

**– Ի՞նչ մնաց Սերո Խանգադյանի մահվանից հետո. ընկերությունը, բարեկամությունը, գաղափարակիցներն ու համակիրները, գրչակից ընկերները դիմացա՞ն ժամանակի քննությանը, թե՞...**

– Սուրեն հորեղբայրը հորիցս շուտ էր մահացել: Հորիցս հետո չորս քույրերը մահացան՝ Ռոզան, Արաքսյան, Լիդան, Լորեստան: Մնացել է Վերժինե հորաքույրը, շատ լավն է: Մայրս մահացավ 2007-ին, թաղված է Նորքի գերեզմանատանը: Խնձորեսկի Ակունց տոհմից էր՝ Ժենյա Հայկի Մարտիրոսյան: Հորս մահվանից հետո ինը տարի հատուկ թոշակ էր ստանում: Քույրս՝ Անահիտն ԱՄՆ-ում է՝ Բոստոնում, եւ ահա՝ 22 տարի:

Հորս ընկերներից գրեթե ոչ ոք չի մնացել, ոմանք էլ լավ օրերի ընկեր էին...

Ծանր ժամանակներ էին, յուրաքանչյուր ոք իր գործով էր զբաղված:

Ես վատ չէի, առողջական վիճակս է, որ անհանգստացնում է:

**– Սերո Խանգադյանը ե՞րբ դադարեցրեց ակտիվ գործունեությունը, ավելի ծիշտ՝ ե՞րբ առողջական վիճակն այլևս թույլ**



*Վարդանուշ մայրիկը (կենտրոնում) դստրերի հետ. ձախից՝ Ռոզա, Արաքսյա, աջից՝ Լորեստա եւ Վերժինե:*



*Սերո Խանգադյանը կնոջ՝ Ժենյայի հետ:*

**չուվեց ակտիվ գործունեություն ծավալել:**

– 1995-96թթ. հայրիկի առողջությունը վատացավ, շատ ընկճվեց: Մի անգամ ասաց՝ արի մի քանի օր միասին մնանք, որովհետեւ կյանքին հրաժեշտ տալու ժամանակը, կարծես, եկել է:

Մեր համերկրացի Սուրեն Յոլյանի ղեկավարությամբ սրտաբանների կոնսիլիում կազմակերպվեց՝ որոշելու (ախտորոշելու) հիվանդությունը: Ես էլ էի ներկա կոնսիլիումին: Պարզվեց, որ սրտի վիճակը վատ չէ: Ուղղակի ինքը պետք է գոնե դրանից հետո իրեն հետեւեր՝ չխմեր, չծխեր: Դե չծխել էր կարող, բայց խմելը թողեց: Վիճակը, ըստ երեւույթին, որոշ չա-

փով կարգավորվեց: Մոտ մեկ, մեկուկես տարի նորմալ վիճակում էր, թեեւ շատ թույլ էր, ժամանակ առ ժամանակ պառկում էր «լեչկոմիսիայում»: Այնպես որ բժիշկների հսկողության տակ էր: Այդ շրջանում արդեն ակտիվ չէր, եւ խոսք չէր կարող լինել ստեղծագործելու մասին: Ծերունական հիվանդություն էր տանում:

Ամբողջ կյանքում պայքարի մեջ էր, ամբողջ կյանքում մտահոգված էր ժողովրդի ճակատագրով, ողջ կյանքում ստեղծագործական ակտիվ աշխատանքի մեջ էր, հոգնել էր, նյարդային համակարգն էլ փխրում էր դարձել...

**– «Ղարաբաղը կրակների մեջ» գրքի նախաբանը Սերո Խան-**

**զաղյանն այսպես է սկսում. «Այսօր յոթերորդ թռռնիկս՝ Անդրանիկը, դարձավ հինգ տարեկան...»: Երեւում է, որ մեծ գորղը, ինչպես ամեն մի ողջամիտ մարդ, ուրախացել ու հպարտացել է թռռնիկներով:**

– Իսկապես, ապշելու չափ լավ վերաբերմունք ուներ թռռնիկների հանդեպ:

Երկու տղա են ունեն, չորս տղա՝ միջնեկ եղբայրս՝ Նաիրին (երկուսը՝ Ալլայից, երկուսը՝ Գայանեից), երկու տղա էլ Արշակն ունի: Քույրս՝ Անահիտը, ունի տղա եւ աղջիկ:

Նաիրիի փոքրը մահացավ քսանհինգ տարեկանում (Գայանեից ծնվածն էր): Այդ դժբախտությունը տեղի ունեցավ երեք տարի առաջ, ծանր կորուստ էր:

Երեք թռռնիկ են ունեն, քույրս ու եղբայրներս դեռեւս թռռչում են:

**– Գրելու, ստեղծագործելու, ազգի հոգսերով ապրելու խանգաղանական որակները գոնե մասամբ շարունակություն ունեցե՞լ են իր որդիներից, թռռներից որեւէ մեկի մեջ:**

– Ե՛հ շտապ ասած շատ էր ուզում, որ են շարունակվում իր գործը: Բայց կյանքն այլ կերպ դասավորվեց: Միջնակարգն ավարտեցի տասնվեց տարեկանում: Մեր բակը գորղների, նկարիչների շենքերի բակ էր. մեր շենքում գորղներ էին բնակվում, կողքի շենքում՝ նկարիչներ: Ինձ ավելի լավ էի զգում նկարիչների շրջապատում: Դպրոցում լավ էի սովորում, գրում էի, շարադրություններս տանում էին ուրիշ դասարաններում ընթերցում: Մեր դասարանում երեք տղա էին, երկուսը գրող դարձան՝ Դավիթ Դովհաննեսը, Արտեմ Զարությունյանը: Զակառակ հորս կամքի՝ ընդունվեցի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Նրան չէի խառնել ընդունելության գործին: Ինքը մի քիչ տխրեց, բայց հետո հաշտվեց իմ ընտրության հետ: Եվ երբ տեսավ, որ գեղանկարչության բնագավառում հաջողություններ ունեն, շատ ուրախացավ:

Նաիրին թատերական ընդունվեց, Արշակի նախասիրությունը պատմությունն էր, իրավաբանությունը:

Իմիջիայլոց, են որոշ բաներ ունեն գրած, միգուցե մի օր տպագրեն:

Քույրս էլ բանասեր է, գրողների միությունում էր աշխատում:

**– Զետաքրքիր է, մեր գեղանկարիչներից ովքե՞ր են անդրադարձել Սերո Խանգաղյանին, ստեղծել նրա դիմապատկերը, եւ որտե՞ղ են այդ նկարները:**

– Մեր մեծանուն, երջանկահիշատակ Էդուարդ Իսաբեկյանն ունի հորս դիմանկարը, նա ձեւավորել է նաեւ «Մխիթար Սպարապետ» պատմավեպի երկու հատորը:

Ընտիր գեղանկարիչ էր նրա կինը՝ Արփենիկ Նալբանդյանը, նա էլ ունի հորս դիմանկարը, որը, եթե չեն սխալվում, պետք է լինի Նորքի առանձնատանը: Արփենիկի վերջին գործն էր, շուտ մահացավ, հայտնի նկարիչ Դմիտրի Նալբանդյանի քույրն էր:

Սիմոն Գալստյանն էլ հորս դիմանկարն ունի ու, եթե չեն սխալվում, «Մխիթար Սպարապետի» հիման վրա երկու-երեք կոմպոզիցիա ստեղծեց: Նրա որդու՝ Զայկի միջոցով պետք է ճշտել, թե որտեղ են այդ գործերը:

Եվ Պարուհի Թեփեղիկյանն էր կերտել հորս դիմանկարը,

որ պիտի Նորքի տանը լինի:

Ինձ պատվիրեց ստեղծել իր պապի եւ հոր պապի նկարները: Ասաց՝ կարո՞ղ ես նկարել, ինչքա՞ն ես ուզում: Ասացի՝ իմ պապի ու քո պապի նկարները ձրի կանեն, իսկ մնացածները՝ փողով: Եվ հասցրել եմ երկու նկար անել՝ իր պապի՝ Առաքելի եւ մեր տոհմի նահապետի՝ Դավիթի նկարը: Երեւակայությամբ եմ արել, լուսանկարներ, բնականաբար, չուներին: Դրանք նույնպես Նորքում են գտնվում:

Գորիսի դպրոցի բակի քանդակն արել է Գեոկի Բաղդասարյանը՝ իմ հրաշալի ընկերը, մեր ժամանակների լավագույն քանդակագործներից մեկը: Իմ կարծիքով՝ շատ հաջողված քանդակ է:

Պանթեոնի քանդակն արել է Սամվել Ղազարյանը, ես եմ նրան առաջարկել: Զաջողված գործ է:

Սարգիս Բաղդասարյանն ունի հորս բյուստը: Զինա ինքը չկա, որդին կա՝ Աշոտ Բաղդասարյանը, հավանաբար նրա արվեստանոցում է գտնվում:

Մի քանդակ էլ ինձ մոտ կա, որ բավականին անհաջող գործ է: Ղուկաս Զուբարյանի արվեստանոցից են բերել: Բայց հեղինակն ինքը չէ, երեւի նրա աշակերտներից մեկի գործն է:

Ես որոշել էի հորս գործերի հիման վրա գեղանկարների մի շարք ստեղծել, բայց...

Նրա ութ-ինը գիրք են եմ ձեւավորել: Պատմվածքներն են՝ «Անձրեկից հետո», «Ինչու, ինչու...» Զեւավորել եմ նաեւ «Թագուհին հայոց» պատմավեպի մի հրատարակություն, «Շուշի» պատմավեպը եւ այլն:

Այնպես որ Սերո Խանգաղյանի հետ նաեւ գործընկեր ենք եղել, եւ ինքն այդ առումով ինձ գնահատում էր:

**– Ասում են՝ Սերո Խանգաղյանը շատ լավ երգում էր նաեւ...**

– Չէ, լավ չէր երգում, բայց շատ էր սիրում երգ: Զատկապես սիրում էր Սայաթ-Նովայի երգերը:

Մի բան պատմեն: Ապարանի նախկին Ջովունի գյուղը լճի տեղն էր: Զայրս զբաղվում էր այդ գյուղի վերաբնակեցմամբ: Վերաբնակեցումն ավարտելուց հետո կազմակերպեց հին գյուղին հրաժեշտ տալու հանդիսություն. գյուղը մնում էր ջրի տակ, կային 4-րդ դարի տաճար, հին գերեզմանատուն: Միասին գնացինք, 15-16 տարեկան էի: Մեծ սեղան էին բացել, 200-ից ավելի մարդ էր նստած՝ ամեն տնից մի հոգի: Զայրս թամադան էր: Առաջարկություն եղավ, որ ներկաներից յուրաքանչյուրը որեւէ երգի կամ որեւէ բանաստեղծության մի քառյակ ներկայացնի: Զայրս ասաց՝ ես կարտասանեմ, իսկ Արարատը կերգի: Զրաշալի ասմունքում էր, Սայաթ-Նովայից ասմունքեց: Գյուղացիները հիացած էին, ջահել հարսները՝ առավել եւս:

Երբ 1946թ. Գորիսից տեղափոխվեցինք Երեւան, հորս նշանակեցին ժողատեղծագործության միության ռեֆերենտ՝ աշուղական, գուսանական արվեստի հարցերով: Աշուղ Աշոտը, Շահենը, Սմբատը, Սերոբը, Ռազմիկը մեր տան մշտական այցելուներն էին: Զայրս նրանց խորհրդատուն էր:

**– Ո՞ւմ եք հիշում նշանավոր մարդկանցից, որ լինում էին Ձեր տանը:**

– Ընկերական մի չքնաղ կուլեկտիվ կար, որի անդամներն



*Սերո Խանգաղյանը մոր՝ Վարդանուշի եւ եղբոր՝ Սուրենի հետ:*

իրենց կոլեկտիվին կոլխոզ էին անվանում, գրողների կոլխոզ: Համո Սահյանն էր, Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, գրականագետ Սուրեն Աղաբաբյանը, նկարիչ Էդուարդ Իսաբեկյանը...

Հայաստանի ղեկավարության մեջ այդ ժամանակ շատերը կային, որ ազգային մտածելակերպ ունեին, նրանք էլ պարբերաբար լինում էին մեր հարկի տակ՝ Ալեքսան Կիրակոսյան, Գեորգ Հայրյան...

**– Իսկ Սուրեն Այվազյանի հետ, կարծեք, այնքան էլ համերաշխ չէր:**

– Ճիշտն ասած Սուրեն Այվազյանը բողոք էր գրել հորս դեմ: Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը հորս սիրում եւ հարգում էր, բայց կանչեց կենտկոմի բյուրոյի նիստի: Սուրեն Այվազյանին էլ էին հրավիրել բյուրո: Այնտեղ հորս տեսավ, շփոթվեց, ներողություն խնդրեց: Դրանից հետո ոչ թե թշնամի դարձան, այլ ուղղակի հորս կյանքից դուրս մղվեց: Մինչ այդ հայրս նրան թե ու թիկունք էր: Խնձորեսկում Սուրեն Այվազյանի հուղարկավորության ժամանակ հայրս նույնպես ելույթ ունեցավ:

**– Ի՞նչ հետաքրքիր, ուշագրավ, զուտ ընտանեկան ավանդույթներ ունեիք: Առհասարակ ինչպիսի՞ն էր նա ընտանիքում:**

– Փառահեղ հայր էր եւ ընտանիքի, ամբողջ գերդաստանի հովանավոր, հովանի:

Համարյա ամիսը մեկ հավաքվում էինք տանը՝ հորեղբայրս էր, հորաքույրերս էին... Մի երեսուն հոգի: Քարահունձի արաղն անպակաս էր, Էջմիածնի քյուֆթան՝ նույնպես: Ամեն

անգամ մեկը թամադա էր լինում, տարիքը կարելուր չէր: Դա ծեսի նման մի բան էր: Նաիրին ակորդեոն էր նվագում, հայրս հրաշալի պարում էր...

**– Բայց ընտանիքում էլ, որքանով տեղյակ ենք, ինչ-ինչ խնդիրներ ծագեցին: Նաիրին եւ Ալլան բաժանվեցին...**

– Ալլան եւ Նաիրին ի սկզբանե շատ լավ զույգ էին, դա տեսնում էին բոլորը: Ինչ-որ մի պահ նրանց հարաբերություններում խնդիրներ առաջացան: Ես չէի խառնվում, չեմ սիրում նման դեպքերում խառնվել: Եվ բաժանվեցին, չգիտեմ նույնիսկ, թե ինչու: Իրենք երկուսով որոշեցին բաժանվել: Հայրս ծանր տարավ այդ բաժանումը: Նա հարսներին շատ էր սիրում եւ գնահատում: Ալլայի ճակատագրում էլ որոշակի դեր էր խաղացել. Քյոսայանի ֆիլմերում էր Ալլան նկարահանվել: Ճիշտ է, Ալլան գեղեցիկ աղջիկ էր, շնորհալի էր, բայց այն ժամանակ «Մոսֆիլմի» կինոֆիլմերում զլխավոր դերում հայտնվելն այնքան էլ դյուրին բան չէր: Հիմա ոչ մի կապ չկա նրա հետ, ինչպես եւ նրա ավագ որդու՝ Արմենի հետ, ով, ցավոք, Խանգաղյան ազգանունը փոխել եւ ինչ-որ հրեական ազգանուն է վերցրել: Իսկ մյուս որդու՝ Սերոբի հետ (պապի անունն է կրում) կապ կա, ժամանակ առ ժամանակ զանգահարում է:

**– 1946թ. Ձեր ընտանիքը տեղափոխվեց Երեւան: 1954-70թթ. ապրել եք Տերյան 59-ում: Որտե՞ղ եք բնակվել դրանից առաջ եւ հետո:**

– Գորիսից Երեւան տեղափոխվեցինք 1946թ. օգոստոսին: Կարապի լճի տեղն Ալեքսանդր Թամանյանի արվեստանոցն էր: Այնտեղ կար մեկ հարկանի տուն եւս՝ երկու սենյակով:

Մինչև 1954-ի վերջն այնտեղ ենք ապրել: Հետո տեղափոխվեցինք Տերյան 59 շենք: Նոր էր կառուցվել, 5-րդ հարկում էր մեր բնակարանը: Ներքեւում Սիլվա Կապուտիկյանն էր բնակվում, կողքը՝ Հրաչյա Հովհաննիսյանը, վերեւում՝ Գուրգեն Բորյանը, Գեղամ Սարյանն էր այդ շենքում: 1971-ից հետո ես բնակարան ստացա Արաբկիրում, իսկ հայրս կառուցեց Նորքի տունն ու 1971-ին տեղափոխվեց այնտեղ: Նորքի տունը սկսել էր կառուցել 1960-ականների երկրորդ կեսին: Սկզբից որոշել էր այնտեղ կառուցել՝ ինձ համար արվեստանոց, իր համար՝ աշխատանքի վայր: Հետո միտքը փոխեց: Շենքը նախագծել էր Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետի տեղակալը՝ Գարիկ անունով: Առաջին անգամ, որ գնացի այդ վայր, հարցրի՝ օձերի եւ կարիճների մեջ ի՞նչ ենք անելու: Հայրս ասաց՝ ես այստեղ դրախտ եմ դարձնելու: Եվ դարձրեց: Վարպետներից մեկը գորիսեցի էր՝ անունը՝ Վարդան: Բոլորն օգնում էին շենքի կառուցմանը: Ինքս էլ քանիցս միջամտել եմ նախագծին, շինարարությանը:

Լեւոնի ժամանակ այգու մի մասը մեզանից խլեցին. 600 քառակուսի մետր թողեցին, 1000-ից ավելի քառակուսի մետրը վերցրին: Շատ գեղեցիկ այգի էր հիմնել, Մեղրուց նռան տնկիներ էր բերել, Սիրիայից՝ Քեսաբից՝ վարդեր, իր ձեռքով տնկել...

– **Գորիսի Ձեր տան մասին կուզենայինք իմանալ, որտեղ նաեւ Դուք եք ծնվել: Նկատի ունենք Լեւոնի փողոցում գտնվող տունը:**

– Պապիս՝ Նիկոլայի տունը վերելի հիվանդանոցի մոտակայքում գտնվող երբեմնի պիոներ տունն էր: Ինքն էր կառուցել: Հետո վաճառեց ու գնեց Լեւոնի փողոցում գտնվող տունը, որ հիշատակեցիք: Նիկոլային Լեւոնի փողոցի այդ տնից են աքսորել: 1950-60-ականներին հայրս այդ տան մի մասը վերակառուցեց: Տան մի մասը մերն էր, մյուս մասը՝ հորեղբայր Սուրենինը: Հրաչյալի տուն էր՝ սքանչելի այգիով: Այդ տան հետ կապված լավ հիշողություններ ունեմ: Հետագայում երկու եղբայրներով որոշեցին վաճառել տունը, շատ էժան վաճառեցին: Վարդանուշ տատս ազդվել էր, չէր ուզում, որ այդ տունը վաճառվի...

– **Որտե՞ղ է թաղված Վարդանուշ տատը:**

– Գորիսի քաղաքային գերեզմանոցում. այնտեղ է թաղված նաեւ հորս հորեղբայր Սեդեյը, մի քար էլ հայրս դրել էր իր հոր հիշատակը հավերժացնելու համար:

– **Վերջերս «Կենտրոն» հեռուստատեսությամբ զրուցում էին հորաքույրդ, եղբայրներդ: Նորից խոսք եղավ Դադալունց Լեւոնի մասին, ով 1930-ականներին Գորիսի իշխանավորներից մեկն էր, ով, ըստ շրջանառվող կարծիքի, ժամանակին նախաձեռնել էր Նիկոլայ Խանգալյանի եւ նրա ընտանիքի աքսորը: Իրո՞ք այդ ծանր հուշը շարունակում է կենսունակ մնալ Ձեր գերդաստանում:**

– Տատս պատմել է այդ ձերբակալության մանրամասները:

Պապս Գորիսի փոստատարն էր, փոստը ծիով Գորիսից Դափան էր տանում: 30-ականներն էին, դաշաղություն կար...

Մի անգամ շրջկենտրոնի կոլխոզի ժողովում Լեւոնն ու պապս վիճում են: Լեւոնն ասում է՝ Նիկոլայ, Ձեր տոհմից 32

հոգու գնդակահարել են, բա դու բան չունե՞ս ասելու: Հետո Լեւոնն ավելացնում է՝ Գորիսում ուրիշ տղամարդ չկա՞, որ փոստը վստահեք նրան եւ ոչ թե Նիկոլային: Պապս էլ պատասխանում է՝ երեւի ուրիշ տղամարդ չկա, դրա համար էլ ինձ են վստահել: Երբ Նիկոլայ պապը տուն է վերադառնում՝ տատիս ասում է, որ հեսա գալու են իր հետեւից: Դա 1937թ. նոյեմբերի 28-ին էր: Գիշերվա 3-4-ի կողմերը դուռը ծեծում են ու... նրան տանում: Մինչև 1992թ. փետրվար բոլորս կարծում էինք, թե նրան աքսորել էին մի անհայտ ուղղությամբ: 1992թ. փետրվարի 18-ին հայրս ստացավ Հայաստանի ազգային անվտանգության ղեկավարի պատասխան նամակը: Գրված էր, որ Նիկոլայ Խանգալյանը կալանավորվել էր 1937թ. նոյեմբերի 28-ին եւ մի քանի օր անց՝ դեկտեմբերի 8-ին, գնդակահարվել էր Երեւանի բանտում:

– **Սերո Խանգալյանի եւ Գուսան Աշոտի ջերմ բարեկամության մասին տեղյակ ենք, բայց կարծիք կա նաեւ, որ Սերո Խանգալյանը չէր մոռանում Լեւոն Դադալյանի կատարածն իր հոր հանդեպ եւ, դրանից ելնելով, վերապահ վերաբերմունք ուներ Դադալյանների գերդաստանի, այդ թվում՝ Գուսան Աշոտի հանդեպ:**

– Մխալ կարծիք է դա, Գուսան Աշոտի եւ Սերո Խանգալյանի մտերմությունն իր անկեղծությամբ եւ ջերմությամբ անօրինակ էր:

– **Իսկ ճի՞շտ է, որ Սերո Խանգալյանը կտակել էր իրեն թաղել այն նույն բարձունքում (Ղազարի թունձը), որտեղ Գուսան Աշոտը թաղվեց:**

– Հորս ցանկությունն էր՝ իրեն թաղել Գորիսի առանձնատան մուտքի մոտ կառուցված մատուռի կողքին (այդ մատուռը ես եմ նախագծել): Սակայն, երբ մահացավ, իշխանությունները նպատակահարմար գտան, որ Սերո Խանգալյանին հողին հանձնեն մեր ազգային պանթեոնում: Ես էլ այդ կարծիքին էի, թեեւ սխալ չէր լինի, եթե հողին հանձնեինք Գորիսում:

Գուսան Աշոտի հետ կապված զրույցներն անհիմն են: Ծննդատեղումն այն է, որ հայ ժողովրդի նշանավոր այդ երկու զավակը շատ ջերմ հարաբերությունների մեջ էին: Ամեն լավ առիթով մեր տանն էր իր քամանչայով: Ինձ էլ շատ էր սիրում, նույնիսկ երգ էր մվիրել՝ «Այ համով աղջիկ»: Ասաց՝ երբ մեծանաս ու սիրած աղջիկ ունենաս, այդ երգը նրան կմվիրես:

– **Ունե՞ք ծրագրեր Սերո Խանգալյանի 100-ամյակի կապակցությամբ:**

– Հույս ունեմ, որ Սերո Խանգալյան ազգային գործչի, արձակագրի 100-ամյակն արժանավայել կնշվի ամբողջ հանրապետությունում եւ սփյուռքում:

Կուզենայի, որ Երեւանի Տերյան 59 շենքի պատին փակցվեր հուշատախտակ. 1954-70թթ., ինչպես նշեցի, հայրս բնակվել է այդ շենքում:

Նպատակ ունեմ, եթե առողջությունս թույլ տա, հորս հոբելյանի առիթով իմ գեղանկարների ցուցահանդեսը բացել Գորիսում, Սիսիանում, Կապանում եւ Մեղրիում, ինչպես եւ Ղարաբաղում:

**Հարցազրույցը՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**

# Տխուր պատմություն, որ կրկնվեց

Խանգաղյան գերդաստանի մասին ամենահավաստի տեղեկություններ կարող էր հայտնել **Վերժինե Խանգաղյանը**՝ արձակագիր Սերո Խանգաղյանի միակ կենդանի քույրը: Երեւանյան նրա բնակարանում կայացած զրույցն իր ծնողների, քույր-եղբայրների, հանիրավի բռնադատված հոր եւ մոր, բազմանդամ իրենց ընտանիքի մասին էր:

Ծնվել է 1932-ին Գորիս քաղաքում: «Չորս եւ մորս վերջին մոհիկանն եմ, ոչ ոք այլեւս չկա», - ասում է, ու աչքերի մեջ թանձրանում է թախծոր: Իսկ Խանգաղյանների ընտանիքում երեխաների պակաս բնավ չի եղել: Նախ պատնում է, որ հայրը եւ մայրը՝ Նիկոլայ եւ Վարդանուշ Խանգաղյաններն ամուսնացել են 1910թ.: Առաջնեկին՝ Սուրենին, մայրն ունեցել է 1913 թվականին, երբ 16 տարեկան էր: Չետո ծնվեց Սերոն (1915 թվականին), Սամվելը (1917 թվականին), այնուհետեւ քույրերից ավագը՝ Արաքսյան, ապա մյուս քույրերը: Վերժինեն ծնողների 13-րդ երեխան էր: «Ծնողներիս վերջին զավակն եմ եղել, այդ պատճառով անունս դրել են Վերջինե՝ վերջինն է», - փորձում է ստուգաբանել իր անունը: Երեխաներից Սամվելը մահացել է հինգ տարեկանում, իսկ Լեռնիկը (այդպիսի անուն էր կրում աղջիկներից մեկը) չորրորդ դասարանում էր սովորում: Նաեւ ասում է, որ մոր զավակներից չորսը մեռելածին են եղել...

Չորը՝ Նիկոլային, չի հիշում, հինգ տարեկան էր, երբ հանիրավի բռնադատել են: «Ինչո՞ւ են քսորել», - հարցին դժվարությամբ է պատասխանում: Նախ տեղեկացնում է, որ Նի-

կոլայ հայրը Գորիսում հիմնադրված կոլտնտեսություն առաջին մտնողներից է եղել: Շիտակ մարդ էր, անվախ, ճշմարտությունը երեսին ասող: 1937-ին կոլտնտեսության ընդհանուր ժողով է եղել, Երեւանից ներկայացուցիչ կար: Նա էլ ժողովականներին տեղեկացնում է, որ մայրաքաղաքում կայանալիք կարելու միջոցառմանը մասնակցելու համար պատվիրակ պիտի ընտրեն, ով խորհրդային կարգերին նվիրված լինի, վատ արարք կատարած չլինի, մի խոսքով արժանի լինի Գորիսի կոլտնտեսությունը ներկայացնելու համաժողովում: Վերելից եկածն էլ առաջարկում



է մի մարդու թեկնածությունը, որն էլ Նիկոլայի բուռն վրդովմունքն է առաջացնում: Չայն է խնդրում եւ հայտնում իր կարծիքը: Թեկնածությունը չի անցնում, բայց Նիկոլայը մի ոխերիմ թշնամի է «վաստակում»: Վարդանուշ մայրը, ով կյանք տեսած եւ կրթված կին է լինում, կանխագուշակում է. «Նիկոլայ, տունդ գլխիդ քանդեցիր: Այ տղա, չես տեսնում, որ «բռնի-բռնին» սկսվել է (37 թվականին բնորոշ ձեւակերպում է): Նույնիսկ Նիկոլային խորհուրդ էին տալիս առժամանակ հեռանալ Գորիսից, Երեւանում պաշտոնյա բարեկամ ունեին: Նա էլ թե՛ ի՞նչ է, աշխարհս մի կարպետով է ծածկված: Գնամ, որ ասես Խանգաղի Նիկոլայը վախեցավ, փախավ: Կանխագուշակությունն իրականություն է դառնում մի քանի օր հետո, երբ Նիկոլայ Խանգաղյանին նախ Գորիսի բանտ են նետում, հետո տանում անհայտ ուղղությամբ: Դրանից հետո ոչ մի տեղեկություն, ոչ մի լուր...

Այն ժամանակ որդիներից Սերոն ու սոււցություն էր անում Խանածախում,

իսկ Սուրենը զինվորական էր Լեռնիականում: Դա 1937-ի նոյեմբերին էր... Բռնադատված հոր ճակատագրի մասին որոշ տեղեկություններ ջրի երես դուրս եկան տասնամյակներ հետո: Ավելի ստույգ՝ պարզվեց, որ Նիկոլայ Խանգաղյանը խմբակային գնդակահարության զոհ է դարձել...

Չոր բռնադատված լինելու հետ առնչվող մի դեպք վերհիշեց Վերժինե Խանգաղյանը: 1946 թվականին սովորում է վեցերորդ դասարանում: Պիտի կոմերիտմիության շարքերն ընդունվել: Սանկավարժներից մեկը հարց է տալիս, թե որտեղ է հայրը, աշակերտուհին էլ պատասխանում է, թե քսորված է: Չի հանգստանում հարց տվողը՝ հետաքրքրվելով, թե հայրը նամակ չի՞ գրում: Պատասխանը լինում է բացասական: Սանկավարժն էլ թե՛ դրա հայրը դաշնակցական է, չի կարելի ընդունել կոմերիտմիության շարքերը: Բարեբախտաբար, Վերժինեին այդ նեղ վիճակից հանում է տասներորդ դասարանի աղջիկներից մեկը, ասելով, թե ինչու զավակը պիտի հոր փոխարեն պատասխան տա: Միջադեպն այդպիսով հարթվում է: Վերժինեն ասում է, որ ընդհանրապես հորը չի հիշում: Չայրական գուրգուրանք ստացել է ավագ եղբայրներից՝ Սերոյից եւ Սուրենից:

Այդպիսի մի ձեւակերպում կա: Պատմությունը կրկնվելու հակում ունի: Առաջին անգամ որպես ողբերգություն, երկրորդ անգամ՝ որպես ֆարս: 1937-ի դառը ճակատագիրը, որ բաժին ընկավ Խանգաղյանների ընտանիքին, կրկնվեց նաեւ 1949 թվականի հունիսի 14-ին: Բայց այս անգամ այն ամենը, ինչ տեղի ունեցավ, ավելի շատ զավեշտի էր նման, քանզի քսորի ճամփան բռնեցին միանգամայն աննեղ երեք հոգի՝ Նիկոլայ Խանգաղյանի կինը եւ երկու դուստրը՝ Վերժինեն եւ Ռոզան: Աքսորականների զնաքքն արդեն հասել էր Բաշկիրիա եւ շարունակում էր իր ընթացքը դեպի անհայտություն: Թվում է, թե այլեւս վերադարձ չկա դեպի հայրենի տուն, բայց... ժողովուրդն է ասում. «Աստված, երբ բոլոր դռները փակում է, էլի մի հույսի շող թողնում է...»:

Սոր եւ քույրերի քսորվելու բոթը լսելուց հետո Սերո Խանգաղյանը վերցնում է Սեժ հայրենականում ստա-

# Իսկ հիշապակը չի հարգվում պատշաճ

**Ն**աիրի Խանգադյանը՝ Սերո Խանգադյանի որդին, հոր բնավորության գծերից առանձնացնում է իր ձեւակերպմամբ՝ առասպելական աշխատասիրությունը: «Լուսածագին արդեն գրասեղանի առջեւ նստած էր լինում, ժամը իննին թեյում էր, նորից շարունակում գրելը: Այդքան գրքեր գրելը պահանջում էր զիջեր-ցերեկ աշխատել, այլապես ոչինչ չէր ստացվի: Երբեմն չէի համբերում, ասում էի՝ հայրիկ, այդքանը ո՞նց ես հասցնում: Ինքս տեսել եմ նրա գրչակից ընկերներին՝ Շիրազին, Սահյանին, մյուսներին, բայց նրա աշխատասիրությունն ահռելի էր: Ե՛վ գրում էր, ե՛ւ մեքենագրում: 1945-ին, երբ պատերազմն ավարտվեց, Քյոնիգսբերգից (այժմ՝ Կալինինգրադ) «Ձորինգեր» մակնիշի մի գրամեքենա էր բերել, որն այժմ պահվում է ավագ եղբորս՝ Արարատի արվեստանոցում»:

Բարձրագույն կրթություն չունեւ Սերո Խանգադյանը, ավարտել էր Գորիսի մանկավարժական ուսումնարանը, Բաքվում ընդունվել մանկավարժական ինստիտուտ, մեկ տարի հետո հետ եկել: Բայց ինքնակրթությամբ շատ բանի էր հասել: Տիրապետում էր գրաբարին, քաջատեղյակ էր համաշխարհային գրականությանը, հրաշալի գիտեր միջնադարյան հայ տաղերգությունը Նարեկացուց մինչեւ Սայաթ-Նովա, հատկապես վերջինիս քնարերգությունը շատ էր հավանում եւ հարմար պահին ասումնաբան էր: Իսկ իր ժամանակի պոետներից, Նաիրի Խանգադյանի հավաստմամբ՝ պաշտում էր Իսահակյանին: Ասումնաբան սիրում էր, բայց առավել նրա մոտ ստացվում էր պարելը, քեֆ-ուրա-

խություններից ցուցադրում էր այդ շնորհքը:

Նաիրի Խանգադյանը ակորդեոն էր նվագում: Սերո Նիկոլայիչը երբեմն որդուն ասում էր. «Նու՛նուշ» (որդուն այդպես էր դիմում) մի հատ «Ձախորդ օրերը» նվագիր: Հավանաբար, երբ տխուր էր լինում: Երբ տրամադրությունը



բարձր էր լինում, սկսում էր ինքնաբուխ երգել. «Ձանգեզուրի չոր չուլերը ծաղկալ ա...»: Նաիրին պատմում է, որ հայրիկի հետ շատ է ծանփորդել նրա սիրելի Ղարաբաղում, պաշտելի Ձանգեզուրում, այլուր: Տիրապետելով գրաբարին՝ մեծ ոգեւորությամբ էր վերծանում վիմական արձանագրությունները, դրանց բովանդակության մասին տեղյակ պահում կողքը կանգնածներին: Աշխատել էր պատմական հուշարձանների պահպանության վարչությունում: Դրանով է պայմանավորված հետաքրքրությունը վիճագիր հուշարձանների հանդեպ:

Նաիրի Խանգադյանը հոր ստեղծագործություններից առանձնացնում է «Ծարավել եմ, ջուր բերեք» վիպակը: Եվ հիմնավորում է. «Սյունյաց աշխարհը՝ հողը, ջուրը, մարդիկ, մանրամասն նկարագրված է այդ ստեղծագործության մեջ, այնպես անմիջական ու սրտաբուխ, որ քիչ է մնում մարդ վեր կենա, զնա այդ տեղերով շրջի»: Ասում է զրուցակիցս, նաեւ հավելում, որ հայ մարդու ոգին առավել ընդգրկում պատկերված է «Մեր գնդի մարդիկ», «Մխիթար Սպարապետ», «Խոսեք, Հայաս-

տանի լեռներ» վեպերում, որոնք տարբեր ժամանակաշրջաններ եւ տարբեր ճակատագրեր են ներկայացնում: Նաիրին վերհիշում է «Մխիթար Սպարապետի» վերջին նախադասությունները: Արտասանում է.

*«Նոր կտրիճներ էին աշխարհ գալիս Սյունիքում եւ նոր աղջիկներ: Նրանք նոր ծաղիկներ էին ցանում լեզենդ դարձած ռամիկ գորավարի շիրմին:*

*Նոր թշնամիներ էին գալիս Հայոց աշխարհի վրա եւ նոր քաջեր էին նրանց դուրս մղում իրենց հիմնավորց հողից:*

*Մի սերնդին փոխարինում էր մյուսը...*

*Այսպես ապրեցինք դարեր...»:*

Նաիրի Խանգադյանը Սերո Խանգադյանի միջնեկ որդին է, ծնվել է Երեւանում 1948թ.: Ավարտել է մայրաքաղաքի Ն.Կրուպսկայայի (այժմ՝ Նիկոլ Աղբալյանի) անվան դպրոցը, հետո Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական բաժինը՝ գերազանցությամբ: 1969-73թթ. Սունդուկյանի անվան թատրոնում էր, իր ասելով՝ բավականին դերեր է խաղացել: 1973-ին ճակատագրի կամոք, ինչպես ինքն է ձեւակերպում, դարձել է Հայաստանի խուլ ու համրերի մշակույթի տան տնօրեն, այնուհետեւ Հայաստանի պետկինոյի նախագահի օգնականն էր: 1980-ին ստանձնել է Հայաստանի արվեստի աշխատողների տան տնօրենի պաշտոնը: Երբ սկսվեց Արցախյան շարժումը, հրավիրեցին աշխատելու ՀՀ փախստականների հարցերով պետական վարչությունում, որտեղ համակարգում էր Գետաշենից եւ Մարտունաշենից բռնագաղթածների ընդունման եւ տեղավորման աշխատանքները:

Ունի չորս արու զավակ, երկուսը ճանաչված դերասանուհի Ալլա Թումանյանից, երկուսը՝ ներկայիս կնոջից՝ Գայանեից: Ցավոք, իր Առաքել պապի անունը կրող որդին երիտասարդ տարիքում հրաժեշտ է տվել երկրային կյանքին:

Մեր զրուցակիցը չզլացավ իր



կնամեծարության մասին խոսել՝ խոսքը համեմեղելով փիլիսոփայական մտքերով ու ձեռակերպումներով: Ասում է, որ պաշտում է Հայաստանը. «Երբ դողանքն զանգերը մարտակոչի, զանգեզուրցու պատասխանատվությանը գնալու եմ հողս ու ջուրս պաշտպանեմ»:

Նաիրիից խնդրեցինք մի հետաքրքրական դեպք պատմել հոր կյանքից, մանավանդ, հայտնի է, Սերո Նիկոլայիչը սրախոս, հումորով մարդ էր: «Գնացիք Սիսիան, - վերհիշեց Նաիրին, - 1979 թվականի դեղնակարմիր աշնան օրերից մեկն էր: Շչորս Դավթյանը ընտրվել էր Սիսիանի կուսըղկոմի առաջին քարտուղար: Բացօթյա հյուրասիրություն էր կազմակերպվել Շաքեի ջրվեժի մոտակայքում: Հայրիկս նկատեց, որ տանձենիների տակ հատուկացած տանձեր կան թափված: Շուռ եկավ հյուրընկալող կողմը՝ ասելով. «Շչորս, քե մատաղ նիմ, մի կարգադրություն արա, յեր ընգած տանձերը հվաքին, թոթի արաղ քաշին»: Տնական օղի սիրում էր գրողը, առավոտյան դեռ ոչինչ չճաշակած՝ սիրում էր մի բաժակ թոթի արաղով «բարի լույս» անել:

Հավուր պատշաճի հարգվում է ճանաչված արձակագրի հիշատակը: Այս հարցը միշտ կրկնվում էր նրա հարազատների հետ զրույցում: Նաիրի հանգադյանը զղջում է, որ ինքը տարիներ առաջ Սերո խանգադյանի անվան հիմնադրամ չի ստեղծել, որ այժմ գրողի հիշատակին նվիրված միջոցառումներն ավելի ոյուրին լիներ կազմակերպելը: Դա իր կողմից բացթողում է համարում: Իսկ իրականում Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն, որտեղ հանգչում է արձակագրի շիրիմը, այցելում են միայն մոտ հարազատները: Ոչ մի պետական մոտեցում: Դա գրողի որդին բացատրում է նրանով, որ ովքեր իրավամբ հարգում էին Սերո խանգադյանին (Կարեն Դեմիրճյան, Վազգեն Սարգսյան, շատ ուրիշներ) այլևս կենդանի չեն...

Ի՞նչ էր պատգամում շրջապատին, մարդկանց, բոլորին: «Բարի եղեք, սիրելիներս, - սիրում էր կրկնել հայրս, - հաշտ ու համերաշխ՝ ընկերը՝ ընկերոջ հետ, հարեանը՝ հարեանի հետ, պետությունը՝ պետության հետ: Սա էր նրա ամենամեծ հավատամքը»:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Տխուր պատմություն, որ կրկնվեց

եղ 121

ցած շքանշանները, գնում հանրապետության ներքին գործերի ժողկոմի-սարիատ, պարգևները դնում ժողկոմի սեղանին՝ ասելով. «Վիրավորվել եմ պատերազմում, մասնակցել Լենինգրադի բլոկադայի ճեղքմանը, հազարավոր մայրերի ու քույրերի ազատություն ենք պարգևել, որ այսօր իմ մայրն ու քույրն աքտորվե՞ն: Որտե՞ղ է արդարությունը: Չէ՞ որ Ստալինն էլ հրաման է տվել, թե այն ընտանիքներին, որոնց անդամներից որեւէ մեկը մասնակցել է պատերազմին, ձեռք չտալ»: Սերոյի խոսքը համոզիչ է լինում, հեռագիր է ձեռակերպվում աքտորի ճամփան բռնած մորն ու քույրերին հետ տալ: Դա հայրենի Գորիսից հեռանալու իններորդ օրն էր, 1949-ի թվականի հունիսի 22-ը: Գնացքից իրենց իջեցրին Բաշկիրիայի Աբդուլինո կայարանում, հաջորդ օրը գնացքը պիտի հասներ Ուֆա: Հետադարձի ճամփան նույնքան չարչարանքներով էր լեցուն: Այս ողիսականի մասին Վերժինե խանգադյանը մանրամասն շարադրել է «Դառը հուշեր...» հոդվածում, որ տպագրվել է 1989 թվականին «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում:

Վերժինե խանգադյանն ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի բանասիրության ֆակուլտետը: Ուստի նրանից, որպես բանասերի եւ ընդհանրապես ընթերցողի, հետաքրքրվեցինք, թե եղբոր ստեղծագործություններից որն է առավել հոգեհարազատ նրան, որ գործն է մնայուն մեր մշակույթի պատմության մեջ: Պարզվեց, որ նրան ավելի սրտամոտ են «Մատյան եղելությանց» վեպը եւ «Մխիթար Սպարապետ» պատմավեպը: Նաեւ հավելեց, որ արձակագրի ամեն ստեղծագործություն իր տեղն ու դերն ունի նրա գրական ժառանգության մեջ, ասվածին ավելացնելով «Հորս հետ եւ առանց

հորս», «Կարմիր շուշաններ» պատմվածաշարերը:

Սերո զրուցակիցը նաեւ մի հիշարժան դեպք պատմեց գրողի կյանքից, թե ինչպես նա Ղարաբաղին առնչվող նամակ է գրել ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնեվին: Նույնիսկ այն օրերին «Ամերիկայի ծայնն» է հաղորդել այդ նամակն: Հարազատները մտավախություն ունեին, որ պատիժը չի ուշանա, բայց, բարեբախտաբար, այդպես չեղավ:

«Սերոն դեռեւս 1965 թվականից պայքարում էր Ղարաբաղի համար, պիտի որ բողոքը շատ լավ իմանաք», - ներկաներիս է ուղղում իր խոսքը տիկին խանգադյանը, հավելելով, որ գրողի հիշատակը հավուր պատշաճի չի ոգեկոչվում: Ծննդյան կամ մահվան օրը միայն արյունակից հարազատներն են այցելում Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում հանգչող գրողի շիրմին, նրա ստեղծագործությունները, ինչպես հարկն է, չեն պրոպագանդվում, իսկ նրա գրական երկերի մոտիվներով («Մխիթար Սպարապետ», «Մատյան եղելությանց» եւ այլն) ֆիլմեր են նկարահանվել, «Այրված տունը» պատմվածքի հիման վրա «Հայֆիլմը» նկարահանել է «Լքված հեքիաթների կիրճը» կինոնկարը: Նույնիսկ Գորիսի՝ Լենինի փողոցի տան պատին, որտեղ գրողը ապրել է 1936 թվականից մինչեւ 1969 թվականը, հուշատախտակ չեն փակցրել: Գորիսում, որքանով ինքն է տեղյակ, միայն Սերո խանգադյանի անվամբ փողոց է անվանակոչվել:

«Հպարտանում եմ, որ Գորիսում ամեն տարի «Բակուրյան օրեր» են անցկացվում, միջոցառումներ կազմակերպվում տեղի համայնքում, դպրոցներում, 2014-ին կառավարության մակարդակով նշվեց Սերոյի գրչակից ընկերոջ՝ Համո Սահյանի 100-ամյակը, Սերոյին էլ, չէ՞, ինչ-որ ձեւով պիտի հիշեն, - նրա խոսքում արդեն վիրավորանքի շեշտեր են նշմարվում, - Սերոն գրական աշխատանքին զուգահեռ հասարակական, նաեւ ազգանպաստ գործունեությանը էր զբաղված»:

«Իսկ ինչո՞ւ պատշաճ ուշադրության չի արժանանում ճանաչված արձակագիրը» հարցին, մեր զրուցակիցը ժողովրդական խոսքն է հիշում՝ տերովին տերն է պահել, անտերին գելն է տարել:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Ինչ ուզում ես արա, հայրենիքդ չլքես

**Ս**երո Խանգաղյանի կրտսեր որդին՝ Արշակ Խանգաղյանը, ավելի հպարտությամբ խոսեց Սերո Խանգաղյան քաղաքական ու ազգային գործչի մասին: Արշակ անունը մեծ պայի՝ Վարդանուշ տատի հոր անունն է, ով ծագումով Քարահունջից էր եւ մեծ ունեցվածքի տեր:

*«Գովելի է Սերո Խանգաղյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական թերթ նվիրելու նախաձեռնությունը, քանի որ ամբողջ հայ ժողովուրդը հարգում է Սերո Խանգաղյան գրողին ու հասարակական գործչին, բայց պետական իշխանությունները, դժբախտաբար, ըստ արժանվույն չեն գնահատում նրան»*, - նշեց Արշակ Խանգաղյանը:

Վոլխովի ռազմաճակատից Սերոն ճանաչում էր ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ալեքսեյ Կոսիգինին, որի հետ շատ մտերիմ էր: Լավ հարաբերություններ ուներ խորհրդային նշանավոր շատ գործիչների, ինչպես ասենք՝ ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության մինիստր Լենինի Կոնստանդինովի հետ: *«Մի անգամ հայրս, Գովիանենս Բաբաջանյանի թոռը, որ ԿԳԲ-ի գեներալ էր, Գուրգեն Գորոյանը, ԴԽՍԳ ժողովրդական պատգամավոր Գեորգի Թաթարյանը զրուցում էին, հայրս ասաց. «Ժորա՛, պիտի Գորիս գագ քաշես», եւ մի քանի ամիս հետո Գորիսը գագ ունեցավ, ինչպես նաեւ երեւան-Իջեւան երկաթուղին կառուցվել է հորս մտահղացմամբ, Քոչինյանի հետ մասնակցել է Արփա-Սեւան թունելի բացմանը: Ստերիմ է եղել հռչակավոր կոմպոզիտոր Միշել Լեգրանի, նկարիչ Էդգար Շահինի, Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Թոքմեջյանի եւ շատ այլ նշանավոր մարդկանց հետ»*, - հպարտությամբ է հիշում Արշակ Խանգաղյանը:

Սերո Խանգաղյանն իր կյանքի ամենահիշարժան պահերից էր համարում 1965թ. Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին նվիրված ելույթը: Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի բակում բազմահազարանոց ցույց էր կազմակերպվել՝ պատմական հողերը վերադարձնելու պահանջով: Ժողովուրդը պատրաստ էր դիմել ծայրահեղ քայլերի, բայց Սերո Խանգաղյանի ելույթը հանդարտեցրեց ժողովրդին՝ կանխելով արյունահեղությունը: Մարդկային հոծ բազմությունը շարժվեց դեպի Կոմիտասի անվան ազգային պանթեոն: Դե-



տագայում Մոսկվայի բարձրագույն իշխանությունները շնորհակալություն հայտնեցին հորս՝ իրավիճակը փրկելու համար:

Սերոն այն գրողներից էր, ով մեծ գիսավոր ասուպի նման հետք թողեց մեր ժողովրդի պատմության մեջ: Ժողովուրդը նրան սիրում էր, որովհետեւ անշահախնդիր մարդ էր եւ իր հնարավորության սահմաններում աջակցում էր բոլորին: *«Մի ժամանակ Մոսկվայում որոշում են Դայաստանից վտարել քրդերին ու եզդիներին եւ այդ հարցով հորս են դիմում, որպես եզդիների ներկայացուցիչներ, Անդրանիկի զինակից Ջահանգիր աղայի թոռները: Այդ ժամանակ հայրս պառլամենտի անդամ էր. նա դիմում է ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ալեքսեյ Կոսիգինին, եւ այդ ծրագիրը կյանքի չի կոչվում»*, - պատմում է որդին:

Որդու համար հոր ամենաարժեքավոր գործերից են «Դորս հետ եւ առանց հորս» ինքնակենսագրական վիպակը, «Դովհան Որոտնեցի» պիեսը, «1971, ամառ» պատմվածաշարը,

իսկ ամենամայույունը, իհարկե, «Մխիթար Սպարապետ»-ն է, ինչպես նաեւ «3 տարի 291 օր» վեպը, որ «Սերո գնդի մարդիկ» գործի շարունակությունն է, որ թարգմանվել է ավելի քան 30 լեզվով: Որդու համոզմամբ՝ «Պորտաքար» պատմվածքի մոտիվներով կարելի է գեղարվեստական ֆիլմ նկարահանել, որ կարող է միջազգային ճանաչում ձեռք բերել:

Իր մահից հետո «Ղարաբաղը կրակների մեջ» գրքից բացի (ի դեպ, գիրքը վերահրատարակվել է երեք անգամ, որից մեկ անգամը հովանավորել է ԳԳ նախագահ Սերժ Սարգսյանը)՝ որեւիցե գրքի վերահրատարակություն գրեթե չի եղել: «Աբրահամ Կրետացի» անտիպ գեղարվեստական գործ ունի, որ Սերոն ասում էր «իմ դառը մայրամուտի ժամանակ եմ գրել»: «Հայրենապատում» գործի նախավերջին հատորը կիսատ է մնացել, իսկ վերջին հատորները չեն հրատարակվել, Ալեքսան Կիրակոսյանն ասում էր, որ «Հայրենապատումը» Սերոյի հայրենականն է, ոչ թե հայրենապատումը:

Սերո Խանգաղյանը զբաղվել է նաեւ ժողովրդական ստեղծագործությունների հավաքմամբ, որոնց մեջ առանձնակի հետաքրքրություն ունեն աշխարհով մեկ սփռված եւ մահմեդականացված համշենահայերի պատմությունները: Դետաքրքիր վերլուծություն է արել նաեւ «Սաշտոց» անվան հետ կապված. համշենի բարբառով մաշտ նշանակում է մարդ: Իսկ այն մտահոգությունը, որ Սերո Խանգաղյանը գրեթե դուրս է մղվում կրթական ծրագրերից, Արշակը փարատվում է այնքանով, որ կարող է լինի մի ժամանակ, որ ինչ-որ տեղ մոռացության մատնվեն նաեւ Դովհանեն Թունանյանի ստեղծագործությունները:

Մի կողմ թողնելով Սերոյի գրական եւ ազգային գործունեությունը՝ Արշակը նաեւ նշեց, որ հոր բնավորության ամենաթույլ կողմը նրա անսահման երեւակայությունն էր, նա կարող էր երեւույթը ներկայացնել խտացված երանգներով, որոնք հաճախ չէին համապատասխանում իրականությանը:

*«Ինչ ուզում ես արա, հայրենիքդ չլքես»*, - հոր խրատական խոսքով է եզրափակում զրույցն Արշակ Խանգաղյանը:

**ԱՐՄԻՆԵ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**


# ԱՐԱՐԱՏ ԽԱՆՁԱԴՅԱՆ.

## «Նկարչությունը խանդոպ կնոջ նման է, եթե դավաճանեցիր, էլ հեպ չի ընդունի»

Գեղանկարչության թեմաների, տիրապետող գույների, ազգային ոգու համադրմամբ արվեստի գործ ստեղծելու մասին է զրույցը գեղանկարիչ Արարատ Խանզադյանի հետ:

**Արարատ Խանզադյան, գեղանկարիչ առաջինը Ձեզ ո՞վ նկատեց:**

– Երեք տարեկանից սկսած՝ զբաղվում եմ նկարչությամբ: Հինգ տարեկանից պահած նկարչական ալբոմ ունեմ, որտեղ հայրս՝ Սերո Խանզադյանը, զնահատականներ էր դնում: Ճակատագրի բերումով այն շենքում, որտեղ ապրում էի, նկարիչներ ու գրողներ էին, եւ այդ շրջապատն իմ մեջ ավելի բորբոքեց սերը նկարչության հանդեպ: Ի սկզբանե հայրս տխրեց, որ պետք է նկարիչ դառնամ, բայց հետո ասաց, որ դա էլ լավ գործ է, մանավանդ երբ տեսավ իմ առաջին հաջողությունները: Մի որոշ ժամանակահատված, կարելի է ասել, չէի զբաղվում նկարչությամբ, եւ երեւի թե այդպես էլ վերջանար իմ նկարչական գործունեությունը, եթե երկու ամսով չմեկնեի վերապատրաստման Մոսկվայի «Սենեժ» նկարիչների ստեղծագործական տուն, որից հետո նոր ոգեւորությամբ սկսեցի զբաղվել նկարչությամբ, եւ այն դարձավ ոչ միայն մախասիրություն, այլեւ մասնագիտություն: 1970 թվականից Երեւանի մանկավարժական համալսարանի գեղարվեստի ամբիոնում եմ դասավանդում: 1976թ. ընդունվեցի նկարիչների միություն, 1987 թվականից գեղանկարչական սեկցիայի փոխ-



նախագահ եմ նշանակվել, այնուհետեւ նախագահ եմ եղել, քարտուղար, մի քանի վարչությունների անդամ: Մինչ օրս ակտիվ մասնակցում եմ նկարչական կյանքին, եւ այն համոզմանն եմ, որ նկարիչը չպիտի նայի, որ նկարը ցուցահանդեսում վաճառվում է, թե չէ. նա պիտի անշահախնդրորեն դառնա նկարչական կյանքի մասնիկը:

**– Ո՞րն է եղել Ձեր առաջին ցուցադրությունը:**

– Առաջին ցուցադրությունս «Ադրի» արվեստի աշխատողների տանը գծանկարների ու գեղանկարների փոքրիկ ցուցադրություն էր, որն էլ եղավ իմ նկարչական կյանքի սկիզբը:

**– Ո՞ր պետություններում եք ցուցադրել Ձեր գեղանկարները:**

– 1970-ական թվականներից մասնակցել եմ հանրապետական գրեթե բոլոր ցուցահանդեսներին, ինչպես նաեւ համամիութենական 6-7 ցուցահանդեսի: 1970-ական թվականների վերջին

խմբակային ցուցահանդես ունեցանք ժամանակակից արվեստի թանգարանում, 65-ամյակիս կապակցությամբ Հայաստանի նկարիչների միությունում անհատական ցուցահանդես ունեցա: Նկարչության մեջ չեմ կեղծում, այն, ինչ անում եմ, ինքնաբերական է, համոզված եմ՝ եթե նույնիսկ նկարիչը այդքան էլ մեծ շնորհքի տեր չէ, սակայն պահպանում է իր ինքնաբերականությունը, չի խաբում, այդ ժամանակ նրա գործը հնչել է լի-նում, տարողունակ ու հրաշալի: Պատկերացրեք ալպիական ծաղիկների մի հսկա ծաղկեփունջ, որ կազմված է փոքրիկ, գեղեցիկ տարբեր ծաղիկներից, այն տիեզերական հմայք ունի, ավելի գեղեցիկ, քան մեկ մետրանոց համաչափ կտրված վարդերը. նույնն էլ արվեստն է, եթե ինքնաբերական է, չես խաբում քեզ, անում ես այն, ինչ կարող ես, կարճ ասած՝ քո երգն ես երգում, դա շատ ավելի լավ է: Իմ կարծիքով՝ արվեստի գործ ստեղծելիս Բարձրյալի մատը խառն է, քանի որ արվեստն Աստուծո ստեղծագործության շարունակությունն է. Աստված մարդուն ստեղծել է, մարդն էլ մի բան է ստեղծում իր հերթին, դա նշանակում է, որ Աստուծո կողմից է գալիս: Լավ է, վատ է, ուրիշ հարց է, երբ մարդ գնում է դեպի ինչ-որ բան ստեղծելը, դա արդեն իսկ գովելի է:

**– Ձեր ոգեշնչման աղբյուրը:**

– Ստեղծագործական առաջին տարիներին նվիրվել էի նազովրական գաղափարախոսությանը: Ես ինձ նազովրեցի եմ համարում, ուսումնասիրել եմ Աստվածաշունչն ամենայն մանրամասնությամբ: Իմ ստեղծագործության մեծ մասը քրիստոնեական գաղափարներին է նվիրված: Վերջին տարիներին, սակայն, հետ եմ կանգնել: Եթե ընդհանրացնեմ, Հիսուսն է եղել իմ ոգեշնչման աղբյուրը, բնությունը, ամեն ծառ ու թուփ, մեր ազգի պատմությունը, իսկ ավելի նեղ իմաստով՝ իմ սիրտը զանգեզուրյան լեռներում է:

**– Ձեր ստեղծագործության թեման:**

– Այս տարիների ընթացքում լրջորեն ուսումնասիրել եմ հայոց պատմությունը, մշակույթը: Հայ ժողովուրդը հազարավոր տարիների պատմություն ունի, նա հանելուկային ժողովուրդ է, որի մշակույթը, սակայն, դարերի ընթացքում ավերվել, քանդվել ու ոչնչացվել է եւ շատ հաճախ՝ դիտավորյալ:

Մեր մշակույթին քրիստոնեությունն այդ առումով շատ մեծ վնաս է հասցրել: Գրիգոր Լուսավորիչը, գալով Չայաստան, լուսավորեց այն քրիստոնեական լույսով, միեւնույն ժամանակ նախաքրիստոնեական մշակույթը ոչնչացրեց: Նույնիսկ քարերը երկանքով աղում էին ու դեն նետում: Ասուպի նման փոքրիկ մասունքներ են մնացել այդ հսկայական մշակույթից, որոնք ես ուսումնասիրել եմ, փորձել կանգնել մեր մշակույթի ակունքներում: Ես համոզված եմ, որ մեր մշակույթի հետագա զարգացման ընթացքը պիտի պայմանավորել միայն անցյալն արժեւորելով: Մեր ազգն աշխարհի ամենահին ազգերից մեկն է, որ գոյատևել է ոչ թե 2000 տարի, այլ՝ 4 հազար: Իմ ստեղծագործական հավատամքն է եղել հավաքել այդ մասունքները եւ համադրել նորի հետ: Թե որքանով է դա ինձ հաջողվել, դա այլ հարց է, բայց ես համոզված եմ, որ հետագայում շարունակողներ կլինեն: Իմ արվեստում շատ են անդրադարձել կնոջը, սիրուն, տղամարդու եւ կնոջ հարաբերություններին, ովքեր միանալով փորձում են մահվան դեմն առնել՝ հաղթահարելով կյանքի դժվարությունները: Ներդաշնակ գույգը, որ ձեւավորվում է սիրո հողի վրա, իմ նկարչության գլխավոր թեման է:

**– Արվեստաբանության մեջ արվեստագետի գործը բնութագրելիս ընդունված է կիրառել «տաք» եւ «սառը» գույներ հասկացությունը:**

– Ընդհանրապես այդ հասկացությունն արվեստաբաններն են կիրառում, որ նեղ մասնագիտական կարելի է համարել: Իմ կարծիքով՝ արվեստի գործը ստեղծելիս նման սահմանափակումներ չի կարելի դնել: Նկարիչը նկարում է, եւ գույներն ինքնաբերաբար են ծնվում: Կան նկարիչներ, ովքեր մինչ նկարելը բավականին լուրջ նախապատրաստվում են, էքզիզ են անում, ճեպանկար, գունային համադրություններ են փորձում անել, բայց կան նկարիչներ, ովքեր առանց նախապատրաստվելու են նկարում: Ես ավելի շատ կողմնակից եմ երկրորդ տարբերակին:

**– Չայ գեղանկարիչ ասելիս առաջին հայացքից պատկերացնում ենք բնապատկերներ:**



*Արարատ Խանգադյանի արվեստանոցը*



– Դա հավանաբար պայմանավորված է նրանով, որ բնությունը մարդուն ավելի մոտ է: Այն, կոպիտ ասած, մեծ իմաստություն չի պահանջում, իսկ կոմպոզիցիա ստեղծելու համար պիտի լայն աշխարհայացք ունենաս, քանզի այնտեղ պիտի համադրել գրականությունը, երաժշտությունը, քո ազգի պատմությունը, համաշխարհային արվեստի պատմությունը: Օրինակ՝ որպեսզի ստեղծես Արտաշես Աշխարհակալի կտավը, պիտի ուսումնասիրես գրականություն, պատմություն: Մեզանում շատերն են փորձում ստեղծել մեր նախնյաց պատկերները, ոմանց մոտ ստացվում է, ոմանց մոտ՝ ոչ:

**– Ի՞նչ է նշանակում ազգային գեղանկարչություն: Ինչպե՞ս եք վերաբերվում գեղարվեստում ազգային ու համամարդկային արժեքների համադրմանը:**

– Ազգային գեղանկարչությունն ազգային ոգու դրսեւորումն է, ամեն ազգ իր նախնուն դեմքն ունի, եւ այն կարծես ալպիական ծաղիկների փունջ լինի: Պետք չէ ստեղծել միջազգային արվեստ, եթե դու հայ արվեստում ստեղծում ես գլուխգործոց, ապա այն դառնում է համաշխարհային արվեստի մասնիկը: Նկարիչները մի կաստա են՝ ազգային մշակույթի վրա հիմնված, ազգային մշակույթից դուրս արվեստ չի կարող լինել:

**– Այսինքն՝ հայ ազգային գեղանկարչությունը մեր վառ ու պայծառ գույներն են, բնապատկերները:**

– Մեր ազգը դժբախտ ազգ է, եւ վառ գույները չեն կարող գերակշռել մեր արվեստում: Մարտիրոս Սարյանն է հատկապես կիրառել վառ գույներ: Ծանր ճակատագիր ունեցող ազգը չի կարող արվեստում վառ գույներ պատկերել: Եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ մեր ճարտարապետությանը նույնպես զսպվածությունն ու համետությունն են բնորոշ:

**– Ո՞վ է եղել Ձեր ուսուցիչը:**

– Շատ սիրում ու պաշտում եմ Յուրի Կոնյալովին, բարձր եմ գնահատում Մարտիրոս Սարյանի, Վարդգես Սուրենյանցի, Յակոբ Կոչոյանի, քանդակագործ Երվանդ Քոչարի, իմ սերնդակիցներից Միսա Ավետիսյանի, Աշոտ Յուրյանի (Դեղձ Աշոտ), Էդմոն Զաքարյանի եւ մի շարք այլ նկարիչների արվեստը: Ցավով պիտի նշեմ, որ ներկայիս սերունդը շատերին չի ճանաչում, քանի որ շատ չի հաղորդակցվում մեր մշակույթին, չի հաճախում պատկերասրահներ, ցուցահանդեսներ: Նշեմ, որ ժամանակին ԽՍՀՄ-ում, Յուրյանի, Լեհաստանում, Արեւելյան Եվրոպայում հայկական արվեստը համարվում էր ամենաբարձրներից մեկը: Ժամանակին մեր ցուցահանդեսներին մասնակցում էին նույնիսկ եվրոպական երկրներից: Մենք պիտի կարողանանք պահպանել մեր արժեքները՝ առաջին հերթին ճանաչելով մեր նկարիչներին ու նրանց արվեստը:

**– Ինչպե՞ս եք վերաբերվում երիտասարդ գեղանկարիչներին:**

– Ես 1987թ.-ից Յայաստանի նկարիչների միության անդամ եմ, զբաղեցրել եմ տարբեր պաշտոններ, եւ այդ ընթացքում բոլոր ստեղծագործող երիտասարդներն այսպես ասած անցել են իմ ձեռքի տակով: Շատերի արվեստը հավանում եմ, թեկուզ կա սովոր մի խումբ, որ չի արժեւորում ազգային մշակույթը, մտածողությունը, որ հազվագյուտ լուրջ կատեգորիա է: Նորարարական փորձառնական արվեստի կենտրոն ստեղծվեց, որ կոսմոպոլիտացրեց նկարչությունը: Փոքր ժողովրդի համար մշակույթում շատ կարեւոր է պահպանել ազգային մտածողությունը:

**– Ինչպե՞ս եք գնահատում նկարիչների նկատմամբ ունեցած պետական քաղաքականությունը. ի՞նչ խնդիրներ ունի Յայաստանում նկարիչը:**

– Ասեմ, որ ես Խորհրդային Միությանը դեմ էի, ես ինձ համարում եմ հակախորհրդային մարդ: Պապս զնդակահարվել է որպէս դաշնակցական, 1992թ. ես էլ դարձա դաշնակցական: 1970-80-ական թվականներին Խորհրդային Յայաստանում, մասնա-

վանդ նկարիչների միությունում համեմատաբար ազատ մթնոլորտ էր տիրում: Յայաստանում կային կառավարության անդամներ, ովքեր ազգայնական մտածողություն ունեին՝ Գեորգ Յայրյան, Ալեքսան Կիրակոսյան, եւ նպաստում էին մշակույթի զարգացմանը՝ հատկապէս տեղ տալով ազգային ոգուն ու մտածողությանը: Խորհրդային շրջանում նկարիչները գնահատվում էին, ցուցահանդեսներում վաճառվում էին նրանց նկարները: Ներկայումս մշակույթի նախարարությունը, կոպիտ ասած, արվեստից «ձեռքերը լվացել» է, որ հակապետական քաղաքականություն կարելի է համարել. պետությունը պիտի հայացքն ուղղի դեպի արվեստագետները:

**– Ի՞նչն է մեր երկրում Ձեզ ամենաշատը մտահոգում:**

– Ես ինձ ազգայնական եմ համարում: Մինչեւ Արեւմտյան Յայաստանը կամ գոնե մի մասը, Ջավախքը, Նախիջեւանը հետ չվերադարձվեմ, մեր ժողովուրդը մտահոգվելու շատ առիթ ունի: Ես համոզված եմ, որ մի օր դա անպայման կլինի, մնացած խնդիրները հարբուխի նման են, կանցնեն: Ինձ համար մտահոգիչ են հատկապէս բանակում կատարվող սպանությունները՝ լինեն սահմանում, թե զորամասում:

**– Ո՞րն է Ձեր ամենասիրելի գործը, որ կարելի է նույնիսկ գլուխգործոց համարել:**

– Իմ լավագույն գործը ես համարում եմ «Յուրյանի համբույրը» կամ «Յուրյան եւ Յիսուսը», որ Ազգային պատկերասրահում մշտական ցուցադրության է դրված: 4-5 նկար էլ ֆոնդում է պահվում, որ երբեմն ցուցադրում են:

**– Տարիների փորձն ինչպիսի՞ ազդեցություն թողեց Ձեր արվեստի վրա:**

– Մոտեցումս արվեստի հանդեպ չի փոխվել, ինքնաբերականությունը, հարազատությունը, անկեղծությունը պահվել են: Կան նկարիչներ, ովքեր փորձում են ինչ-որ բան սարքել, եւ հենց այդտեղ էլ կորչում է արվեստի իմաստը: Նկարչությունը խանդուտ կնոջ նման է, եթե դավաճանեցիր, էլ հետ չի ընդունի: Այդ առումով իմ ճանապարհն ուղիղ է անցել, լավ թե վատ, դա է եղել: Տարիներ-

րի փորձն ավելի է մասնագիտացնում: Աշխարհը նկատումս, մտածելակերպս որոշակիորեն փոխվել են. երկրագունդը նոր առաջընթաց է ապրում, բնականաբար փոխվում է նաեւ մարդու աշխարհայացքը: Արվեստում ընդգրկվող թեմաները հավիտենական են, թեման առանձնապէս էական չէ նկարչության մեջ. կարող ես մարդ, ծառ նկարել, բայց ամեն անգամ մի նոր գեղեցկություն ու զաղափար տալ դրան եւ յուրովի ներկայացնել:

**– Եթե թվերի վերածննդ, մոտավոր քանի՞ կտավ եք ստեղծել:**

– Մոտ 500 կտավ, բայց շատերը նվիրել եմ, մի մասն էլ վաճառվել է:

**– Ձեր կտավները՝ որպէս ժառանգություն, ո՞ւմ եք թողնելու:**

– Միանշանակ հայ ժողովրդին, իսկ ավելի կոնկրետ՝ ով պահպանի, նրան էլ կթողնեմ. երբեմն արվեստագետի ժառանգությունը քամուն են տալիս, բայց կա, որ սրբությամբ են պահում: Կոմպոզիցիաներ ունեմ, որ կցանկանայի նվիրել Գորիսին, այնտեղ փոքրիկ տուն ունեմ, հորս մեծ տան մոտ: Կցանկանայի արվեստանոց բացել եւ կտավներիս մի մասը նվիրել զանգեզուրցուն: Մեծ գործեր ունեմ, որոնք պետք է պահվեն պատկերասրահներում ու թանգարաններում:

**– Եվ վերջում՝ ե՞րբ կարող ես մահվանից չվախենալ:**

– Երբ չես մտածում դրա մասին, երբ մահը ուղտի մման չի չքոլում դռանդ: Ես մինչեւ վերջերս մահվան մասին չեմ մտածել: Մինչդեռ 60 տարեկանից հետո բնությունն ինձ հանկարծակիի բերեց: Արվեստագետը մահվանից ավելի քիչ է վախենում. եթե չվախենաս մահվանից, ուրեմն մարդ չես. արվեստը մարդուն թեւեր է տալիս, որով նա ավելի է մոտենում Աստծուն: Արվեստագետը մահը չի ընդունում այնպես ծանր, ինչպէս հասարակ մահկանացուն: Ես հիմա պատրաստ եմ դիմավորելու մահը: Ես կարծում եմ, որ մարդ ոտքի վրա պիտի հրաժեշտ տա կյանքին, ոչ թե անկողնում, որ չտանջի ո՛չ իրեն, ո՛չ կողքին: Կարելու չէ՝ ինչպէս ես ծնվում, կարելու է՝ ինչպէս ես մահանում:

**ԱՐՄԻՆԵ ԶՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Մերո Խանգադյանը եւ Մեղրին

**1962** թ. եկել էր Մեղրի՝ հանդիպումների: Մարտի սկիզբն էր, բայց Մեղրիում արդեն լիիրավ գարունն էր: Ծաղկել էին ծիրանենիները: Շուտով իրենց ծաղիկների ալ բոցով կիրդեիվեին նաեւ դեղձենիները: Ցածր գոտում կիրակնօրյակ էր հայտարարված, բոլորն զբաղված էին ծառատունկով: Զյուրանոցի պատուհանից տեսնելով բակի աշխատանքային եռուզեռը՝ ինքն էլ է իջնում օգնելու հյուրանոցի եւ դեղատան աշխատողներին: Միտք է հղանում տնկել մի ծառ, իր՝ Խանգադյանի ծառը: Նրան օգնում են հյուրանոցի տիրուհի Սուսան մորաքույրը եւ դեղատան վարիչ Լյովա Մխիթարյանը (այն ժամանակ դեղատունը գտնվում էր հին հյուրանոցի շենքի առաջին հարկում: Այժմ այնտեղ քաղաքային գրադարանն է):

Տարիներ առաջ հայ գրականության եւ արվեստի շաբաթն էր Մեղրիում: Խանգադյանը ոչ առանց հպարտության բոլորին ցույց էր տալիս 31 տարի առաջ իր տնկած գանգրահեր տսսին, որն օգոստոսյան շոգին մեղմորեն տսսափում էր եւ իր հովանու տակ շոգից պատսպարում Մեղրիի հյուրերին:



Առաջարկում է գնալ Վահրավար: Գնում ենք: Ճանապարհին հարցնում է՝ Ախպերջանյանների տոհմից գյուղում կա՞ն: Լռում են: Գուշակում է, որ չկան:

- Այդպես էլ ենթադրում էի, - ասում է նա: -Ախպերջանյանները խելոք ու բանիմաց մարդիկ են եղել: Խորհրդային իշխանություններից հալածվել են, քշվել արտասահման, երկրի տարբեր կողմեր: Փարիզում հանդիպել են մի ազնվագարն, մոտ 80-ամյա տիկնոջ՝ Փառանձեմ Ախպերջանյանին: Երբ իմացավ, որ Ջանգեզուրից են, նա հուզմունքից լաց եղավ, կարոտով համբուրեց իր ծննդավայրը տեսած իմ աչքերը եւ խնդրեց վերադարձին նորից այցելել Վահրավար, ողջույններ տանել գյուղին, ձորին, սարերին ու բնությանը:

Գրողը գնում էր կատարելու տիկին Փառանձեմի պատվերը:



Գրականության եւ արվեստի շրջանային շաբաթի եզրափակիչ երեկոյին մի երկտող են տալիս գրողին: Շվանի-ձորից էր, իր հին ծանոթ Ղազար դայուց: Նա վատառողջ էր եւ ցանկանում էր Խանգադյանին տեսնել իր տանը:

- Ասացե՛ք իմ եղբայր Ղազարին, - ելույթի ժամանակ ասաց նա, - որ Շվանիձոր կգամ «Անդրանիկիս» հետ միասին: Թող ապաքինվի եւ սպասի: «Անդրանիկը» (գիրքը) եկավ, բայց Ղազար դայուն չգտավ. հրաժեշտ էր տվել կյանքին:

Երբ լսեց, հուզվեց, արցունքներ գլորվեցին աչքերից: «Ափսոս, լավ մարդ էր... Իզուր այն ժամանակ չգնացի տեսու-



թյան, գուցե բան ուներ ասելու... »:



Գրողի հանդիպումն էր Ազարակի աշխատավորների հետ: Զինականում խոսքը գնում էր նոր լույս տեսած «Քաջարան» վեպի մասին: Մեկը ցանկություն հայտնեց, որ գրվի նաեւ Ազարակի մասին:

- Դա այնքան էլ դժվար չէ. Քաջարանից մի աղջիկ կամուսնացնեն Ազարակի մի երիտասարդի հետ եւ նրանց շուրջ կհյուսեն վեպիս սյուժեն: Դա կլինի «Քաջարանի» երկրորդ հատորը:

Մինչեւ օրս էլ ազարակցիները սպասում են այդ վեպին: Զանոգված են, որ գրողը չի մոռացել իր խոստումը:



Կարճեւանում ենք՝ Երվանդ Մարությանի օջախում: Գրականագետ Սողոմոն Սողոմոնյանը, Զրանտ Թամրազյանը փորձում են «մշակել» գյուղի բարբառի հիմունքները, իհարկե, սեղանին ներկա Բաբկեն Մարությանի՝ բոխի մասին հորինած ոտանավորի հիման վրա: Խանգադյանը մտաբերում է Սայաթ-Նովային եւ արտասանում՝ «Թամամ աշխարհի պտուտ եկա... »: Բոլորը թողնում են իրենց խոսակցությունը, ունկնդրում: Երբ ավարտեց, մուտքի մոտ ծափեր հնչեցին: Երեխաներն էին անշուշտ ներս եկել, չէինք նկատել: Խանգադյանը դառնում է նրանց.

- Բա՛, երեխաներ, Սայաթ-Նովան շատ է մեծ: Զանաշխարհային երեւոյթ է. բարբառը մշակեց եւ հասցրեց գրական բարձր մակարդակի: Լավ սովորեք նրան, նրա տաղերը գանձեր են: Ձեր գյուղի բարբառն էլ մի մոռացեք:

Զանեստորեն խոյս տվեց եւ իր վրա չվերցրեց ներկաների հիացմունքը:

Իսկ նա իսկապես հոյակապ էր ասմունքում:



Փետրվար ամիսն էր: Պահածոների գործարանի պատի մեջ հրաշքով աճած վայրի խնձորենին մեզ էր ժպտում բացվող բողբոջներով:

- Աստծո զավակն է, օժտված է կենսունակությամբ: Ափսոս, ցրտերը դեռ չեն անցել, ծաղիկները կցրտահարվեն:

Տիրությունը շարժում է գլուխը, կարծես, մահամերձ գեղեցկուհու առջեւ է կանգնած:



Նրան ցույց տվին մեկ քառակուսի մետր զբաղեցնող վագ, որից ստացվել էր 1,5 տոննա խաղող:

«Գործարան-վագ». այսպես բնորոշեց նա:

- Սա հո իսկական հրաշք է, ում ասես, չի հավատա: Մեր գյուղատնտես-գիտնականները թող գան սովորելու Մեղրու հողագործներից:

Նրանք բերքի իսկական վարպետներ են:



Ցանկանում է ուղեկցեն Փոքր թաղի եկեղեցի:

Վերադարձին Արմեն թոռը, որ տասներորդ դասարանի աշակերտ էր, հարցնում է.

- Պապի, Աստուծո՞ւմ հավատո՞ւմ ես:

- Հա, բալաս, դու էլ հավատա: Անհավատները մեր հա-րեւաններն են, որ ավերում են Նախիջեւանի սրբությունները, մեր հանճարեղ ազգի ստեղծած արվեստի կոթողները:



Սերո Խանգադյանը վաղուց է հրապարակել Մեղրիով: Դա ներկայացրել է իր «Հայրենապատումի» առանձին գլուխ-ներում: «Ճանապարհի» առաջին գլխում, օրինակ, որը վեր-նագրված է «Այգիներին փրկել է պետք», մտահոգվում է ջրասակավ Շվանիձորի այգիները ոռոգելի ջուր հասցնելու խնդրով: Նաև անդրադառնում է բնակիչների կենցաղին, հյուրասիրությանը, գյուղի պատմության հարցերին, ներկա-յացնում ձորի բազմադարյան կյանքի «քարեղեն մատյաննե-րը»:

«1929, նոյեմբեր: Վեց ձիավորներ ենք՝ հայրս, ես, Ջանջալ Մանգին, Խաչուն Հաբան, Տանյելը եւ էլի երկու հոգի: Գնում ենք Շվանիձոր՝ գինի բերելու:

... Մեր Գորիսում հարգի է Շվանիձորի գինին: Հարսանիք-ները մոտենում են: Եվ երբ մտնում ենք գյուղ, եկեղեցու մոտ՝ պատերի տակ մատած մարդիկ վեր են կենում:

- Բարով եք եկել:

Այդ ժամանակ Սերո Խանգադյանը 14 տարեկան էր:

Հաջորդ անգամ գրողը Շվանիձոր է այցելում 1955-ի սեպ-տեմբերին: Այդ տարիներին դեռես կառուցված չէր ավտո-մայրուղին: Մեղրու կայարանից կես ժամում հասնում է Շվա-նիձորի կայարանը: Նա գիշերը հյուրընկալվում է շվանիձորից Դազարի տանը: «Ինչ անուշ ես, Շվանիձոր»:

Հայրս ասում է.

- Շվանիձորի տները ոնց որ Կնյազ Կուտուզովի տները լինեն... : Այնուհետև տեղեկություններ է հաղորդում գյուղի անցյալի մասին: «Հին, շատ հին գյուղ է Շվանիձորը: Դազար Բաբայանի մառանն ու հացատունն առնվազն երկու հազար տարեկան են... »: Դպրոցը կառուցվել է 1881թ. Բաֆֆու օգնու-թյամբ, Ազուլիսի դպրոցն ավարտած Սաթեւոս Շահյանի ձեռ-քով: Պատմում է Բերդաքարի հետ կապված ավանդությունը, Դավիթ բեկի զինակից Սարգիս զորավարի հերոսական գոր-ծերի մասին: Շվանիձորը հեծյալ ռազմաջոկատ է ունեցել, որը Հայաստանի ազատագրության ժամանակ միացել է ռու-սական բանակին:

Հաջորդ այցերին՝ 1962թ. մարտին եւ 1965թ. նոյեմբերին, Ս. Խանգադյանը մեծ մտահոգություն է ապրում գյուղի ջրա-սակավության պատճառով: Մեծ գրողը միայն դիտող ու նկա-րագրող չէ: Եվ եթե այժմ ջրի համ կայանների միջոցով Արաքսի ջրերը ոռոգում են մերձարաքսյան գոտու այգիները ու դաշտե-

րը, ապա դրանում իր բաժինն ունի Ս. Խանգադյանը: Նա համ-րապետական համապատասխան կազմակերպություններին ահազանգել է ջրի համ կայանների կառուցումն արագացնելու, անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու համար:

1979թ., մարտ: Տաք է: Երեւանի իր տնամերձ այգին էտում է, հիշում Մեղրին: «Մտածում եմ՝ հիմա Մեղրիում ծիրանենի-ները ծաղկել են»: Անհանգստանում է, զանգում Մեղրի: Ուրա-խանում է, որ պատասխանում են, թե ցրտերն անցել են, նոր ցրտեր չեն լինելու, լավ բերք է սպասվում: Շվանիձորում նոր կայարան են կառուցել, դպրոցի շենք, արտադրական մասնա-ծյուղ:



«1940թ., հոկտեմբեր... Արաքսի անկողինը քարեղեն է... Սեթեւեթ ու քմահաճ լեռները ծածկել են երկինքը, նույնիսկ արահետ չկա»:

Եվ այդ քարեղեն աշխարհում մարդիկ քարի վրա հող են լցնում, մերձարեւադարձային ծառեր տնկում, այգի հիմնում: 1965թ. երբ այցելում է Մեղրի, նրան ցույց են տալիս նույննու մի ծառ, որը 622 հատ նուռ էր վերցրել, ամենափոքրը՝ 500 գ., մեծը՝ մեկ կիլոգրամ: Դրանի վերածելով՝ պարզվում է, որ ծառը տնտեսությանը 311 ռուբլու եկամուտ է տվել: Ուրախու-թյամբ է պատմում, որ հմուտ այգեգործ Լեւոն Փեցյանը հեկ-տարից 250 ցենտներ խաղող է ստացել:

Վերջին տարիներին շատ է խոսվում Մեղրիում մերձա-րեւադարձային կուլտուրան աճեցնելու մասին: Այդ ուղղու-թյամբ որոշակի քայլեր արվել են: Բայց ահա ինչ է գրել Ս. Խանգադյանը դեռես 1958թ. մայիսին Կարճեւան այցելելիս: «Մտածում եմ՝ չի լինի՞, որ Մեղրու այս տաք հովիտը, ուր եր-բեք ձյուն չի լինում, դարձնել մերձարեւադարձային բույսերի աճեցման անկյուն: Ինձ հետ համաձայն են նաև կարճեւան-ցիները»:



Ս. Խանգադյանին շատ է մտահոգում մեղրեցիների սո-ցիալական հարցերի լուծումը, նրանց համար հանգստի եւ մշակութային կյանքի հարմարավետ պայմաններ ստեղծելը: Նրա առաջարկությամբ Հայաստանի գրողների միությունը ստանձնել է Մեղրու շեֆությունը: Գորիսից Մեղրի տեղա-փոխվեց գրողների միության «Սյունիք» գրական միավորման նստավայրը: Սակայն, ցավոք, այն չգործեց:

1967թ. մայիսին, երբ այցելում է մեր շրջան, նրան մտա-հոգում է, որ «Մեղրին նույնիսկ շատ թե քիչ տանելի խճուղի չունի: Փոստն այստեղ հասնում է երբեմն մեկ շաբաթ ուշա-ցումով, թեև երկաթգիծն անցնում է հենց գյուղի մոտով: Մեղ-րին պահելու համար օդանավակայան պետք է ստեղծել այս ժայռերի վրա, Քաջարանից խճուղի բերել»:


Հետագա տարիներին նա միշտ հետաքրքրվում էր այս հարցերի լուծմամբ: Նրան շատ ուրախացրեց հատկապես Մեղրի-Քաջարան մայրուղու շահագործումը: Նաև վստահ էր, որ շինարարները կավարտեն օդանավակայանի կառուցումը, եւ ինքը, որ մի ժամանակ կես ժամում Մեղրուց գնացքով հա-սել էր Շվանիձոր, այժմ նույնքան ժամանակում երեւանից կհասնի Մեղրի: Կհասնի եւ ուրախությամբ կկրկնի՝ «Ահա այսպիսին է մեր Մեղրին՝ Արաքսի կիրճի մարգարիտը... »:

Նրա այս ցանկությունը նույնպես կատարվել է:

**ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ**

«Սյունիք» թերթ, 7 հունիսի 1991թ.

# Ակսել Բակունց եւ Սերո Խանգադյան. ավանդներ եւ նորարարություն



## ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Էրգի պատկերը ոչնչացումից փրկելու եւ այն սերունդներին ավանդելու գրական շարժումը մի ուրիշ ընթացք ու կերպ առավ մեր արձակուրդ

նարասկզբին: Եթե Բակունցը գրականություն բերեց հայրենագուրկ հերոսին՝ իր արմատներով, հուշերով, գոյատեւման մղումով ու բարձր նկարագրով, ապա կորուսյալ հայրենիքը՝ իրական, նյութական, ողբերգական, գրականություն մտավ Ե. Չարենցով եւ ուրույն դրսեւորումներով շարունակվեց Հայաստանի եւ Սփյուռքի գրողների երկերում: Նկատի ունենք Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», Գ. Մահարու «Այրվող այգեստաններ», Լ.Ձ. Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկնայք եւ պարոնայք» վեպերը, Մնձուրու եւ Համաստեղի արձակը, գրողներ, որոնք տառապանքով ու կարոտով թղթին են հանձնել իրենց ծննդավայրի ըստ ամենայնի ամբողջական պատկերը՝ փորձելով այն փրկել մոռացումից: Այս գրողներից յուրաքանչյուրը, կտրվելով իր կեցության նախասկզբնական ակունքներից, ամենատարբեր հարցապնդումներով փորձում է պարզել, թե ինչու եւ ինչպես, որ չարի կամքով եւ բարու միամիտ անհետեւողականության պատճառով իրենք կորցրին իրենց հայրենիքը: Մահի եւ արյան դանթեական ուղիներով անցան Չարենցը, եղեմի դժոխքից փրկված Մահարին, Թոթովենցը, Սյուրմեյանը, Համաստեղը, Մնձուրին իրենց սրբազան պարտքն են համարում ազգի հիշողությանը պահ տալու իրենց դրախտաման հայրենիքն ու անթիվ, անգերեզման մեռելների հիշատակը: Հրաշալի է այդ կեղեքող ցավը նկարագրում Չարենցը: «Վաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: ... Ինչպես վաղուց տրված մի խոստում, կամ ինչպես ժամանակին չվճարված պարտամուրհակ ծանրանում է սրտիս, անողոք ուտում է սիրտս» (1):

Այսպես հայրենացավն է ելք փնտրում ճշմարիտ արվեստագետի, իսկական քաղաքացու հոգուց՝ սերունդներին զգուշացնելով, որ միամիտ ու սենտիմենտալ պահվածքով հայրենիք չեն փրկում: Այնուամենայնիվ, որքան էլ զարմանալի, բայց Չարենցի «Երկիր Նաիրիի» ավանդույթը առաջիններից

մեկը շարունակեց Ակսել Բակունցը: Ճիշտ է, որ յուրաքանչյուր գրող գրականություն է բերում իր բնաշխարհի գույներն ու պատկերը, մարդկանց, սովորույթներն ու բարքերը, եւ Բակունցը, թեւ Չարենցի եւ մյուսների պես, չէր գրում կորուսյալ հայրենիքի եւ նրա որբացած ու նահատակված բնակիչների մասին, այնուամենայնիվ գրականություն էր բերում մի այնպիսի էթնիկական-աշխարհագրական տարածքի պատմությունը, որ անպայմանորեն անհետանալու էր եւ արդեն անհետանում էր հենց իր՝ Բակունցի ժամանակներում: Բայց ի տարբերություն Չարենցի «Երկիր Նաիրիի», որը սրությամբ դնում էր ազգային քաղաքական ճակատագրի ողբերգական ընթացքի պատմությունը, Բակունցը առավելապես կանգ է առնում սոցիալ-բարոյական եւ ժամանակային խնդիրների վրա: Նրա «Կյորեսն» իր ազգային-պատմական գոյավիճակով առկա, գոյություն ունեցող տարածք էր, եւ «Կյորեսի» գաղափարագեղագիտական խնդիրները նկատելիորեն տարբեր են Չարենցի վեպի միտումներից: Եվ երկու երկերն էլ միավորվում են երգիծանքի ոճական-գեղագիտական հնարանքով, ապա պետք է նկատել, որ երգիծականը եւ ողբերգականը Չարենցի մոտ հասնում են առավելագույն արտահայտության, մերժման կիրքն է իշխում, մինչդեռ Բակունցի հումորը մեղմ է՝ ծնված ժողովրդական-կենցաղային բարքերից ու միջավայրից, դա ոչ թե հեղինակի երգիծանքն է, այլ առավելապես կյանքի եւ իրականության զավեշտի արտահայտություն: Այս առումով հետաքրքիր դիտարկում ունի գրականագետ Ս. Աղաբաբյանը. «Չարենցի եւ Բակունցի գրվածքների միջեւ եղած ամենացայտուն տարբերությունը այն է, որ եթե Չարենցը գերազանցորեն իր հեղինակային, սուբյեկտիվ խոսքի ուժով է հասնում նաիրյան քաղաքի հերոսների ահեղ խարազանմանը, առօրյան հասցնում է ֆանտաստիկայի աստիճանին, ապա Բակունցի ռեալիզմը հենվում է այն ճշմարտության վրա, որ իրոնիան ամենից շատ իրականության մեջն է գտնվում, որ իրականությունն արդեն ժխտում, բացատւմ է իրեն» (2):

Բակունցը, իրոք, իրականությունը պատկերում էր առանց ժխտող, ոչնչացնող շեշտերի, պարզապես այդ իրականությունն իր ներքին եւ արտաքին շերտերում հարուստ էր հումորով, երգիծանքով, որքանով որ կենսական միջավայրն էր ծնում նմանօրինակ տարրերը:

Տասնամյակներ հետո մերօրյա արձակագիրներից մեկը՝ Սերո Խանգադյանը, անմիջականորեն շարունակեց Բակունցի «Կյորեսի» ավանդույթները՝ գրելով «Մատյան եղելությանց» վեպը:

Վեպը գալիս էր շարունակելու հենց նույն աշխարհագրական տարածքի մարդկանց կյանքի պատմությունը, Խանգադյանի վեպը նույնպես սոցիալ-կենցաղային ուղղվածություն ունի:

«Կյորեսում» ակնհայտորեն դրված է քաղաքի հնի եւ նորի հակասությունը, անհետացող Կյորեսի եւ նրա բնակիչների վերջին օրհասական ճիգերի պատկերները: Այդպիսին էր ժամանակը, ժամանակի խնդիրը, եւ Բակունցը գրականություն էր բերում իր ժամանակը եւ այդ ժամանակին բնորոշ խնդիրներով:



Խանգադյանի վեպը, որը կառուցվածքային առումով փոքր-ինչ տարբեր է «Կյորենից», ըստ էության շարունակում է Բակունցի Կյորես-Գորիսի պատմությունը՝ շեշտը դնելով կյանքի սոցիալ-կենցաղային շերտերի վրա:

Նկատենք, որ երկու երկերն էլ ըստ էության չունեն սահուն ընթացող «միակենտրոն սյուժե», հեղինակները պատկերում են ոչ թե կոնկրետ այս կամ այն հերոսի, դեպքի պատմությունը, այլ այդ աշխարհագրական-էթնիկական տարածքի սոցիալ-բարոյական նկարագրի պատմությունը, եւ ինչպես Բակունցն է մի քանի նախադասությամբ կամ մի փոքրիկ դիպվածով տալիս այս կամ այն հերոսի արտաքին եւ ներքին հատկանիշների ամբողջական պատկերը, այնպես էլ Խանգադյանը իր հերոսներին ամբողջացնում է նրանց հետ կապված որեւէ բնորոշող դիպվածի նկարագրությամբ:

Յետաքրքիր ձեւ է ընտրել Խանգադյանը իր վեպի համար, գլխավոր հերոսը՝ Ճել Ավան բիծան, մաքրում է քաղաքի փողոցները, ու նրան «ուղեկցող» հեղինակը ներկայացնում է քաղաքը, նրա փողոցներն ու տները, մարդկանց, նրանց ճակատագրի պատմությունն ու հոգեւոր բարոյական նկարագիրը:

«Կյորեսում» իրար են հակադրվում Կյորեսի եւ Գորիսի բնակիչները եւ հեղինակն ըստ էության բեւեռացնում է նրանց բարոյական որակները, մի կողմում հողագործ-բնիկների՝ բարոյական բարձր նկարագրի պես անհետացող սերունդն է, մյուս կողմում՝ ազգային նկարագիրը կորցրած «քաղաքացիներն են»՝ բեյերն ու չինովնիկները:

Նույնպիսի սոցիալական բեւեռացում կա նաեւ «Մատյան եղելությանց» վեպում, դարձյալ հեղինակը հակադրում է հողագործ աշխատավորներին եւ անաշխատ միջոցներով շփացած, բարոյազուրկ հերոսներին:

Ահա Աթա ապոր հայի եւ հայության եւ Ավան բիծայի (երկուսն էլ հայ տոհմիկ մարդու ավանդական բարձր նկարագրի կրողն են եւ առանցքային կերպարներ) մարդու եւ մարդկայինի մասին խորհրդածությունները, որոնք իրենց ենթատեքստում խիստ հարազատ են.

«Շան ազգից են Խոջա Բաղիրի ճտերը... Նրանք են ազգից են, որ խիղճ ասած չունի:

- Որ նրանք հայ լինեն, ես հայությունից դուրս կգամ, - Աթա ապերը սկսում է զայրանալ, - հայը ես եմ, Յուրոյանց Իսոն է, որ ցամաք հացին աստված է կանչում, - չկա: Յայը վար կանի, ծառ կտնկի, շալակով փայտ կբերի, քերծ կքանդի, հայը խեղճ ու կրակ ռահաթ է՝ ես ձորերում բառաչող» (էջ 364):

Որդու կարդացած «Մարդն առաջացել է կապիկից» նախադասությունը այսպես է մեկնաբանում Ավանը.

«Բա... շճնեց հայրը: - Եղպես չի լինի, այ որդի: ...Յա, դե ասենք Յիմնարկ Ղեւոնը, էն Կաշի Ալեքսանը, Բուխալտեր Արտեմը կապիկից առաջացած կլինեն: Դեմ չեն: Ամա հալալ հայ քրիստոնյա ճաճառ Սմբատը, Գաղթական Սարգիսը, ես ու Սամվել դայիսն՝ չէ: Մենք կապիկի ցեղ չենք, չէ: Չհավատաս» (3):

Եվ Բակունցի հերոսը, եւ Խանգադյանի՝ յուրաքանչյուրն իր ձեւով եւ իր ժամանակի ըմբռնումով, վավերացնում են ազգային նկարագրի կարեւորագույն գծերը, ստեղծագործ

ելությունը եւ մերժում «մարդ պլոկող», «կաշի քերթող» տեսակը, որն աղարտում է այդ նկարագիրը:

Մեռնում է Կյորեսը, եւ Բակունցը, որպես քաղաքի գեղագետ տարեգիր, արձանագրում է այդ անխուսափելի մահը. «Կյորեսը մեռնում էր, ինչպես մեռնում է Խուռուփի ձորի վերջին կաղնին» (էջ 368): Եթե Բակունցի մոտ Կյորեսի մահը ժամանակային առումով դեռ ընթացող երեւոյթ էր, ապա Խանգադյանի երկում Կյորեսն արդեն ավարտված, վերջացած պատմություն է. «Յին թաղը մեռել է առանց ժամանակի միջամտության, բնական մահով: Դե, ծեր էր, ես՝ երկու, դու՝ երեք հազար տարեկան ասա» (էջ 498): Բակունցի արձանագրած Սալ կամուրջը, «որից մնացել էր մի կամար», Խանգադյանի մոտ «Սալ կամուրջի հինգ կամարներն էլ կտորված են... Մնում են միայն կամուրջի հաստակոճ լեւել-քար սյուները»: «Կյորեսում» հողի եւ հողագործի կապը խզվում էր, որովհետեւ կյորեսցին պարտքի դիմաց լքում էր հողը, իսկ մնացածների հին սերունդն արդեն մեռնում էր. «Յետգիտես ամայանում էր Կյորեսը: Անդունդն էր սուզվում հողագործների ազգը» (էջ 369):

Յողի եւ մարդու խզման, օտարացման պրոբլեմը առաջ է քաշում նաեւ Խանգադյանը, նոր ժամանակներին էլ բնորոշ է այդ երեւոյթը. «Օր օրի պակասում են հողի մշակողները: Ծերերը գնում են գերեզմանատանը հանգստանալու, ջահելները կամ պետ են դառնում այստեղ, կամ փախչում են լեռնաշխարհից՝ իրենց համար «գյանք» քաշելու չգիտես թե որտեղ» (էջ 536):

Այսինքն՝ երկու հեղինակներն էլ կարեւորում են այդ եզերքի բնական-մարդկային կեցությունը եւ դրան հակադրում անբնական-աղարտող գոյածեւերը: Երկու երկերում էլ կարեւորագույն դեր ունեն կենցաղային առօրյա պատկերները, որոնցով ամբողջանում է այս կամ այն հերոսը եւ զավառաբաղաբը: Յիշենք միս ծախել-ամենելու հատվածները երկու գործերում, փոքրիկ հատվածներ, որտեղ երեւում է բնակիչների սոցիալական վիճակն ու ընտանեկան հարաբերությունները: Առանձնապես հրաշալի են այդ կենցաղային պատկերները «Կյորեսում»: Տիկին Օլինկայի վրացքի արարողությունը եւ տիկին Վարսենիկի տղվայի արարողությունը կենցաղի գեղարվեստական պատկերման հազվագյուտ մոտիվներ են:

Եվ Բակունցը, եւ Խանգադյանը ժողովրդական խոսքի միջոցով անհատականացնում են իրենց հերոսներին, յուրաքանչյուր խավի հերոսին բնորոշ կենցաղային առօրյա եւ պաշտոնական-աշխատանքային խոսքի ոճավորման միջոցով տալիս հերոսի ներաշխարհի իրական նկարագիրը:

Չնայած Խանգադյանի վեպում հերոսներն ավելի շատ են խոսքային հաղորդակցության մեջ, բայց «Կյորեսի» մի քանի հատվածներում խոսքային սեղմությունն ու ժխտությունը, ինչը Բակունցի պոետիկային բնորոշ առանձնահատկություն է, փոխհատուցվում է բովանդակային եւ պատկերային հարստությամբ: Երկու հարեւանուհիների առօրյա-ինտիմ խոսակցության մեջ պատկերվում են եւ մարդկային փոխհարաբերություններ, եւ անհատական որակներ, եւ համընդհանուր տիպական արժեքներ: Ահա հատվածը.

«Վարսենիկ, էդ ինչո՞ւ ծեր լույսերը ամբողջ գիշեր վառ-

վում էին: Յյուրերդ ու զնացին, հա՞...

- Ինչ ուշ, սիսթի տասներկուսին չարեք էր պակաս, որ զնացին...

Աղջի տաք էր, տաք... Սիրտս ուզում էր ճաքի»:

Երկխոսության արտաքին շերտում դրսևորվում է հերոսուհիների ներքին կյանքն ու պրոբլեմները, մինչդեռ մեկուսի խոսքում նրանք արժեքավորում են մեկը մյուսին եւ իրենք իրենց:

« - Յողեն գլուխդ, թե քո մարդը քեզ Շուշի կուղարկի... Դու երեխան մահանա բռնի:

- Էդ դեղնած կերպարանքիդ Բահուբուրովն էր պակաս...» (էջ 390):

Խանգաղյանն էլ իր յուրաքանչյուր հերոսի սոցիալական-մարդկային նկարագրին հատուկ ոճավորում է ստեղծում:

Բակունցի «Կյորեսում» երգիծանքը ամբողջական զեղագիտական է, որով հեղինակը քննում է երեւույթները: Նույնը չենք կարող ասել «Մատյան եղելությանց» վեպի մասին, չնայած որ Խանգաղյանի երկն էլ լի է երգիծանքի պատկերներով, որոնցում ծաղրի, հումորի միջոցով հեղինակը պատկերում է իրական կյանքը, հենց կյանքում գտնում ծիծաղելի ու զավեշտականը:

Երկու հեղինակներն էլ անհատականացնում են ոչ միայն իրենց մարդ հերոսներին, այլև քաղաքի կենդանիներին: Բակունցը առավելապես կանգ է առնում շների նկարագրության վրա՝ շեշտելով տեր-շուն հոգեւոր-բարոյական միասնությունը: «Այսպիսի անվանի շներ կային Գորիսում, որոնք որդուց որդի ապրելով միեւնույն տանը, վարժվել էին, իրենց վարքն ու բնավորությունը նմանեցնում էին տերերին» (էջ 398):

Իր քաղաքի «հրաշք չորքոտանիների» վարքագիծն է արձանագրում նաեւ Խանգաղյանը, իհարկե, երեւույթը նրա մոտ ունի սոցիալական երանգավորում. «Սեւ թութու շունը միայն իր տիրոջ՝ Սեւ թութու վրա է հաչում: Ջոռտեխնիկ Մառլենի ձին կանգնում է ետեւի ոտքերի վրա եւ քայլում հիսուն կանգուն: Տրակտորիստ Խոփ Ահոմի էլը հենց որ հասնում է ճառ Սիմոնի դռանը՝ չորս ոտքը մեխում է գետնին: Ոչ մի քայլ ետ կամ առաջ: Ճառ Սիմոնը ջուր կրելու համար իգական սեռի էջ է պահում իր տանը» (էջ 487):

Թեւեւ գաղափարաթեմատիկ ոլորտում հարազատ մոտիվներ շատ ունեն այս երկերը, այնուամենայնիվ Բակունցին առավել հետաքրքրում է քաղաքը ոչ միայն որպես սոցիալ-կենցաղային, հոգեւոր-բարոյական միավոր, այլև որպես էթնիկական-աշխարհագրական տարածք՝ դրսի աշխարհի հետ ունեցած իր բազմապիսի կապերով, հնի եւ նորի սրված փոխառություններով: Ըստ էության, Բակունցը տալիս է զավառական քաղաքի ընդհանուր կեցությունը՝ կոնկրետանալով այս կամ այն երեւույթի զարգացման ու առաջացման պատճառների վրա, բայց քննության նյութ չի դարձնում բնակիչների ճակատագիրը, թեւեւ առանձին հերոսների դեպքում պատկերում է ամբողջական նկարագրեր եւ ավարտուն ճակատագրեր: Այնինչ Խանգաղյանը առավելապես ուշադրություն է դարձնում հերոսների բարոյահոգեբանական կերտվածքին եւ ճակատագրերի պատմությանը՝ հաճախ

ամբողջացնելով եւ ավարտին հասցնելով հերոսի կյանքի պատմությունը: Բակունցի մոտ չկան ողբերգական շեշտեր, անգամ Կյորեսի կործանումը հեղինակն ընդունում է որպես ցավալի, բայց պարտադիր եւ անխուսափելի երեւույթ:

Խանգաղյանի մոտ կան եւ ողբերգական ճակատագրեր, եւ դրամատիկ հերոսներ, որոնցից յուրաքանչյուրի կյանքի մի առավել վճռորոշ դրվագի նկարագրությամբ նա փակում է հերոսի կյանքի պատմությունը (այս առումով նրա վեպը հարազատության է գնում Թորոպենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակին):

Բայց գաղափարական հարազատությունից զատ առավել կարեւոր է Խանգաղյանի պատկերակառուցման եւ ոճական հնարանքների, պոետիկական առանձնահատկությունների հարազատությունը Բակունցի արձակին:

Փողոց առ փողոց մաքրելով քաղաքը՝ ճել Ավան բիժան կանգ է առնում Գետահայաց փողոցի տներից մեկի առաջ. «Այս տունը Բակունց Ստեփանինն է», - արձանագրում է հեղինակը: Յետագա հաղորդումները ավելի են մեծացնում այս տան արժեքը. «Այս մայթը ավելիս ճել Ավան բիժան հիշում է Ստեփանի որդուն՝ Ալեքսանին: Կապույտ աչք - ծիծաղով տղա էր» (էջ 517):

Նորոյա արձակագիրն իր վեպի հերոս է դարձնում այդ զավառաքաղաքում ծնված, մեծացած, այդ եզերքին իր բոլոր հոգեւոր տենչերով կապված տաղանդավոր արձակագրին՝ իր մեծ նախորդին: Յետագա մի քանի էջում գրողը տալիս է Բակունցի վաստակի արժեքն ու գնահատականը. «Մի ուրույն աշխարհի բերեց Բակունց Ալեքսանը: Մի աշխարհ, որ կար, հրեն, Դրնգանի ձորում եւ քու տանը: Բայց չգիտեր, թե կա: Այդպես լեռան լանջից գլորվող հեղեղն է բաց անում կորած աղբյուրի ակունքը» (էջ 518): Խանգաղյանը գրող-զեղագետի իր հայացքով եւ իր հերոսների մարդկային-անհատական ընկալումների միջոցով նորովի եւ ճշգրիտ ներկայացնում է Բակունցի եւ նրա ստեղծագործության ճակատագիրը, մի փոքրիկ պատկերի մեջ խտանում են ցավն ու ողբերգությունը. «Աքսելին բռնել են: Գրքերը վառում են» (էջ 520):

Ողբերգությունը շարունակվում է եւ ավարտվում, եւ Բակունցի պոետիկային հատուկ լռություն-համբերությունը իջնում է նրա ծննդավայրի եւ բնակիչների վրա, հոր եւ որդու մահվան բոթը քաղաքը կրում է լռությամբ. «Ծերունուն թաղեցին լուռ, սրտներում ահ ու լաց» (էջ 520): Ավանը ժողովրդական առողջ բնագրով ու գիտակցությամբ, մի սուրբ գործ անելու առաքելությամբ թաքցնում է Ալեքսանի գիրքը ցորենի մեջ. «Ցորենն աշխարհ է պահում, այս գիրքն էլ» (էջ 521): Եվ լռությունը, ցորենն ու գիրքը ժամանակի մի հատվածում ձուլվում են, ներդաշնակվում, լռությունը, որպես ցավի եւ բեկված ճակատագրի խորհրդանիշ, ցորենն ու գիրքը, որպես հոգեւոր եւ նյութական արժեքների կայացման սկիզբը:

Խանգաղյանը պատումին հյուսում է Բակունցյան պատկերները. «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամառ է նստում»: Նկատենք, որ «Ալպիական մանուշակում» այս պատկերի խոհական-խորհրդանշական ուժը մեծ էր, ամպի, որպես խտացած ցավի, աղետի, արցունքի խորհրդանիշը ձուլվում է այդ եզերքում ապրող զեղեցկությունների դրա-

մատիկ կեցությանը: Ահա ոճական-խորհրդանշական նույն հնարանքով Խանգաղյանը այս պատկերը տարածում է Բակունցի, 30-ական թվականների մյուս զոհերի, համազգային ցավի վրա:

Բակունցի եղերական ճակատագրի վերջին էջը Խանգաղյանը փակում է նույն անձրեւաբեր-արցունքաբեր ամպի բակունցյան պատկերով. «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում»: Բայց պատումի հետագա ծավալումներում պատկերը շրջվում է, Խանգաղյանը նոր բովանդակություն էլ է ձեռք է տալիս պատկերին. «Այդ օրը Կաքավաբերդի գլխին մի բերան զգելու ամպ չկար»:

Նոր ժամանակների ու գեղարվեստի օրենքներով վերակենդանանում են լռության մատնված, թաղված արժեքները. «Հին քաղաքի նոր փողոցը Բակունց է»: Արվեստի իսկական գործերն անմահ են, անմահ են այդ գործերն ստեղծողները, հերոսի բնութագրումը՝ «Էդ հո գրով գիրք չի, էդ ցորենիաց է, հաց», լավագույն արժեւորումն է գրողի վաստակի, գիրք, որ, իրոք, ցորենի արժեքն ունի եւ հատիկի կենսունակությունը:

Մեծ է Բակունցի ազդեցությունը նորօրյա արձակագրի վրա, բակունցյան պատկերները, ոճը, աշխարհընկալման կերպը նկատելիորեն ազդել են նրա գեղարվեստական իրականության վրա: Խանգաղյանի պատկերները, մակդիրները, համեմատությունները հարազատության են գնում բակունցյան պատկերակառուցման տարրերին, իրականության գեղագիտական ձեւակերպման միջոցները հաճախ նույնանում են, Խանգաղյանի արձակում որոշակի միջնորդավորումներով արտահայտվել են բակունցյան պատկերային միավորները, որոնցով գրողը ստեղծում է սիրո եւ կանացիության, նվիրումի եւ ներանձնական մտերմիկ պատկերների շղթա: «Միրհավի» հետեւյալ պատկերը. «Հնձանը շոգ էր: Ծնվում էր խաղողը: Ինքն իրեն դեղնում էր կայտառ մի երգ եւ քրտինքի կաթիլները գլորվում էին, ընկնում շիրայի մեջ: Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում արյունը եռում էր իբրեւ թունդ գինի» (էջ 73): Կրակված սրտով ջահել ամուսնուն սպանող հարսին սիրո երկրային վայելքին Խանգաղյանը նախապատրաստում է համանման մի պատկերով. «Իսկ այգին թաքնված է ձորի մեջ՝ իր համար գով ու խաղաղ: Քաղցր մրգեր կան այնտեղ, ջրերի ու մոշահավի քաղցր երգ եւ մի ուրիշ երգ էլ, որ «թունդ գինու պես արբեցնում է հարսի սիրտը» (էջ 523): Երկու դեպքում էլ «թունդ գինու պես եռացող արյան» եւ «թունդ գինու պես արբեցնող երգի» պատկերները իմաստային համարժեքություն ունեն, պատկերի ենթաշերտերում նույնանում են, իբր միեւնույն գեղագիտական միտումի արտահայտություն:

Խանգաղյանի հետեւյալ պատկերները՝ «Հարսի մեջքը ճոճվում էր աղբյուրից ետ դառնալիս» կամ՝ «Մի հարս պղնձե կուժն ուսին, օրորվելով իջնում էր գետափ», դարձյալ ակնհայտ ոճական-պատկերային հարազատություն ունեն Բակունցի տողերին՝ «Որպես եղեգ ճոճվեց նրա դալար մարմինը, ... Մի անգամ էլ շորորաց այգու շաղոտ խոտերի վրա»: Այսինքն՝ նորօրյա գրողն էլ, իր մեծ նախորդի պես, բառն օգտագործում է որպես իմաստային այնպիսի միավոր, որն առաջացնում է բանաստեղծական նրբին տրամադրություն-

ներ, շարժում եւ մեղեդայնություն: Համեմատությունների մեջ Խանգաղյանը նույնպես դիմում է բնապատկերների-բնություն-մարդ արտաքին, ներքին, գունային եւ մեղեդային զուգորդումների, ահա պատկերը. «Նրանց տների շուրջը խշշում էին բարձր բարդիները, ու նրանց հետ խշշում էր Մեղր Միմասի կրակված սիրտը: Նրա ամեն անկյունում մխում էր Աննամանի երեսի ցորեն-աղուն բույրը, զնգում Աննամանի սուրմաների ձայնը»:

Համեմատությունների այս որակը գեղագիտական ամբողջական համակարգ է դարձել Բակունցի արձակում. Սոնայի՝ «գառ մանդիլով» ջահել նորահարսի մուտքը ջահելությամբ եւ զինով լի հնձան, պատկերվում է համեմատությունների այնպիսի շարքով, որոնք բանաստեղծական տեքստից դուրս էլ ստեղծում են շարժման, գունային եւ ձայնային զգայություններ. «Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը, որպես եղեգ, եւ կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը», «իսկ զրնգան սուրմաները կայտառ կոհակների մման ծափ էին զարկում»: Սուրմաների ձայնը, ճոճվող մեջքը, ցորեն-աղուն կամ լաջվարդ շապիկի բույրը: Խանգաղյանի մոտ էլ կա լաջվարդ-կապույտ գունային զուգորդումը՝ «Կապույտ շապիկով հարսը ետ չնայեց: Թռավ, կապույտ բոցի մման մարեց ձորում»: Երկու հեղինակի մոտ էլ գույները ամբողջացնում են կնոջ, կանացիության եւ սիրո իրական-բանաստեղծական պատկերը, համեմատությունները գնում են բնական առնչություն-նմանությունների ուղիով՝

Միրհավի մարմինը՝ տաք բմբուլ,

Սոնայի մարմինը՝ լաջվարդ Աննամանը եկավ՝ կուտ տեսած շապիկի մեջ /էջ 79/: աղավմի /էջ 534/:

Ոչ միայն համեմատությունների, այլև մակդիրների, բառօգտագործման ուղորտում նկատելի է այս գրողների հարազատությունը: Գրականություն բերելով նույն աշխարհագրական տարածքի բնությունն ու մարդուն՝ երեւութներն ու բնաշխարհի պատկերները երկու հեղինակների մոտ անպայմանորեն հարազատանալու էին, նույնիսկ՝ նույնանալու:

Ձանգեզուրյան քարակոփ բնության պատկերներում քարը, որպես փոխաբերություն եւ մակդիր, ձեռք է բերում պատկերակառուցողական արժեք:

Հիշենք Բակունցի պատկերները. «...Ոռնում են հազար գամփռներ եւ կրծում քարե շղթաները» կամ՝ «Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը՝ կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները, որպես պողպատե զրահ» (էջ 135): Ակնհայտ է պատկերների մեջ քարի հատկանշային արժեքը, որպես ամրության, հզորության, նաեւ հարատեւության խորհրդանիշ: Նույնպիսի հարաբերություն կա քարի եւ այդ հատկանիշը կրող բառի միջեւ Խանգաղյանի մոտ: «Հին թաղն այլևոր ավերակ է՝ ժայռեղեն նախիրին ոտնատակ: Հին թաղի քարանձավներում քարի սուսկ է բուսում քարե ճրագթաթի վրա» (էջ 498):

Բակունցի եւ Խանգաղյանի բնապատկերներն են շոշափելի աղերսների գնում՝ նույնպիսի փոխաբերություն-համեմատություններով: Բակունցը պատկերը ստեղծում է՝ համեմատության տանելով բնության ամենատարբեր երեւութներ, նույնը բնութագրական է Խանգաղյանի պատկերներին: Հե-

տեսլալ հատվածների համեմատությունները վկայում են այդ:

*Կաթավաքերդի բարձունքի միակ  
ծաղիկը ապրիլիսկան մանուշակն է,  
ցողունը կաթավի ոտքի պես՝ կարմիր,  
ծաղիկը ծիրանի գույն (էջ 125):*

*Առվի քարերը նախշված են  
մամուռի ոսկեգույն ծուլերով:*

*Ուռենու արմարը ջրի տակ մուգ*

*կարմիր երակներ է հյուսել՝ կաթավի տոտիկներ:*

Նկատենք, որ «մամուռի ոսկեգույն ծուլեր» համեմատությունը, այսինքն՝ մամուռի գունային այդօրինակ ընկալումը արդեն կար Բակունցի մոտ. «Արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկի մամուռի նման մարմինն էլ» (էջ 80):

Խանգադյանի՝ Բակունցյան պատկերներին հարազատ պատկերները միշտ չէ, որ գեղագիտական առումով հաղթահարում են «հիմք» պատկերը, հաճախ այդ պատկերները ներքին իմաստային շերտերում նույնական են, մինչդեռ արտաքին, բառապատկերային շերտերում զիջում են «հիմք» պատկերին: Իրենց հեռաստաններից բռնի օտարված ձիերին այսպես է պատկերում Բակունցը. «Վրնջում էին ձիերը՝ մետաղածայն եւ երկարածոր, ինչպես տխուր երգը...: Մեկը թավ էր վրնջում, մյուսը արծաթահնչյուն էւ բարձրանում էր հետեւի ոտքերի վրա, ինչպես զազազած ցուլը ձգում էր սամձը եւ չէր ուզում իջնել անվերադարձ ուղիով» (էջ 222): Չարիքի մոտիկությունը եւ «անսահման ազատության» տենչը այսպիսի դրսեւորում է ստանում Խանգադյանի մոտ. «Մի հովատակ խրխնջում է զիլ: Թվում է՝ արծաթե թիթեղ է ընկնում քարերին: Հովատակը կրակ կտրած աչքերով չափում է հեռվում խմբված մատակ ձիերի երամակը» (էջ 453):

Խանգադյանը բակունցյան «մետաղածայն եւ երկարածոր» մակդիրների փոխարեն օգտագործել է «զիլը» եւ արծաթի թիթեղի ձայնի հետ համեմատություն է ստեղծել, ինչը նկատելիորեն թուլացրել է պատկերի զգայական բանաստեղծական արժեքը:

Խանգադյանի մոտ պատկերակառուցման հարազատությունը Բակունցի արձակի բխում է եւ «բնորդ երկրի» նույնությունից, եւ աշխարհընկալման հարազատությունից, եւ անպայմանորեն իր մեծ նախորդ ստեղծագործության ավանդույթների հզոր ներգործությունից: Պատահական չէր, որ Բակունցը իր գրողական եւ մարդկային նկարագրով դարձավ «Մատյան եղելությանց» վեպի հերոսներից, քանի որ աշխարհագրական-էթնիկական այդ տարածքը թերի կլիներ առանց իր տաղանդավոր զավակի ողբերգական կերպարի:

**Ծանոթագրություն**

1. Ե. Չարենց, «Երկերի ժողովածու», հ. 4-րդ, 1987թ., էջ 5
2. Ս. Աղաբաբյան, «Ակսել Բակունց», 1963թ., էջ 157
3. Սերո Խանգադյան, «Երկերի ժողովածու», հ. 6-րդ, էջ 538: Հետագա մեջբերումները կարվեն այս գրքից:

**«Երեւանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան», Գիտական հոդվածների ժողովածու, Երեւան, 2009**

**Պատմությունը  
դարավերջի վիպական  
գուլգահեռներում**



**ՍԵՎԱԿ  
ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ**  
«Արդի հայ վեպը»,  
հատոր 5, Երեւան,  
2004

**Ա**մենք չէ, որ անցյալի թեմ ա տ ի կ ա յ ի գեղարվեստական յուրացումներում կարող են հայտնաբերել պատմության այնպիսի իմացություն, ճանաչողության այնքան պաշարներ ու, ամենից էականը՝ ազգային ոգու եւ կերտվածքի ոգեկոչման այնպիսի մտահոգություն, բայց եւ պայծառատեսություն, որքան Սերո Խանգադյանը: Պատմության զննումները նրան ուղեկցել են առաջին գրչփորձերից՝ արձակ ու դրամատուրգիական վաղ մտահղացումներից: Արմատական էր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում եւ հայ պատմավիպասանությունը հարստացրեց բազում ինքնատիպ երկերով:

Կյանքի վերջին տասնամյակում զարմանալի գեղարվեստական բեղունություն հանդես բերեց Սերո Խանգադյանը: Բեղուն գրիչ է ունեցել նա ընդհանրապես: Չարմանալին այն է, որ 80-ամյակի նախաշեմին ու դրանից հետո արդեն վաստակած ու վաստակաշատ գրողը վերստին հաստատեց իր արգասավորությունը՝ հակառակ առաջացած տարիքին ու հենց այդ ժամանակահատվածում ծագած հասարակական ու պատմական մի շարք խոչընդոտների ու բարդությունների: 1988-ի Սպիտակի ահեղ երկրաշարժը, որն ավերեց Հայաստանի մեկ երրորդը՝ տնտեսական ծանրածանր հարված հասցնելով երկրին ու հայ ժողովրդին, արցախյան գոյապայքարը, որն ահեղ ու անհավասար կռիվներում ազատ ապրելու իրավունք արտոնեց Լեռնային Ղարաբաղի հայությանը, լուրջ փորձություններ եղան: Խորհրդային Միության փլուզումն ու տոտալիտար վարչակարգի անկումը խոր ճգնաժամ ստեղծեցին խորհուրդների իշխանության բոլոր հանրապետություններում, առավել եւս Հայաստանում, քանզի դաժան երկրաշարժը, արցախյան ազատամարտը, շրջափակումը միայն հայ ժողովրդին էր պարտադրված: Ցավալիորեն այս ամենին հավելվեց նաեւ անկախու-

թյունը դրոշ դարձրած, սակայն իրենց առաքելության մեջ ապաշնորհ եւ երկիրը սոցիալական, տնտեսական ու բարոյական փակուղի խցկած ՀՀ-ական վարչակարգի անօրեն քաղաքականությունը:

Ապշեցուցիչ է, որ այսպիսի պայմաններում, խելացնորության հասցնող մթն ու խավարի, պատերազմի ու կիսաքաղց վիճակի մեջ Սերո Խանգադյանը, ինչպես եւ հայ գրողներից շատերը, դրսևորելով աներեւակայելի համառություն, ուժ ու կամք, ստեղծեցին գեղարվեստական իսկատիպ արժեքներ: Առանց չափազանցության յոթնապատիկ մեծանում է այդ գործերի կարեւորությունը, եթե չնոռանանք, թե ինչպիսի հանգամանքներում եւ ազգային, քաղաքական, սոցիալական ու մարդկային ինչ նպատակամիտումով են ծնվել:

Բազում ակնարկների, պատմվածքների, գրական ու հրապարակախոսական հոդվածների, տարաբնույթ հանդիպումների ու ելույթների զուգորդությամբ այդ տասնամյակում Ս.Խանգադյանը հրապարակ հանեց «Անդրանիկ», «Շուշի», «Նժդեհ» վիպական կտավները՝ իր վիպասանական հարուստ ժառանգությանն ավելացնելով արդիական խիստ հնչեղություն ունեցող նոր երկեր:

Իհարկե, այս ստեղծագործությունները չեն հասնում հեղինակի՝ նախորդ տասնամյակներում գրված պատմավեպերին՝ «Մխիթար Սպարապետ», «Խոսեք, Հայաստանի լեռներ» եւ «Թագուհին հայոց»: Չեն հասնում ոչ միայն ընդգրկումների խորությամբ, այլեւ, առաջին հերթին կերպավորման արվեստով: Ծիշտ է, Անդրանիկ զորավարի, Նժդեհ սպարապետի, հայոց հինավուրց Շուշի քաղաքի մասին գրված երկերը նույնպես պատմական-իրական հենք ունեն, սակայն դրանց մեջ պատմության փիլիսոփայությունը իր բարդությամբ, բազմակողմանի առնչություններով, գործողությունների դրամատիզմով, համեմատաբար խորքային պակաս տարողությամբ եւ արվեստի ոչ այն մակարդակով է ներկայացված, ինչպես առաջին պատմավեպերում:

«Անդրանիկ» երկը Ս.Խանգադյանը գրել է 1977-1983 թվականներին: Անվանել է վեպ (ոչ պատմական) եւ պատկերել 1910-ական թվականների ծանրածանր տարիներին հայ ժողովրդի տառապանքն ու մաքառումները թուրք յաթաղանավորների դեմ: Ջորավար Անդրանիկի կերպարում խտացված է հայ մարդու ապրելու եւ պայքարելու ոգին, հերոսությունը, ամենաօրհասական պահերին փրկության ելք գտնելու կամքն ու հավատը: Առաջին աշխարհամարտը, հայոց ցեղասպանության սարսափները եւ զանգվածային ջարդերը, հայ քաջամարտիկների անձնագոհ ոգորումները վեպում արտացոլվել են եվրոպական դիվանագիտության նենգ խաղերի մերկացման եւ Ռուսաստանի հետ դաշնակցելու գաղափարի զուգահեռներով: Վիպասանը, այնուամենայնիվ, առավել էական է համարել սեփական ուժերին ապավինելու, հայրենիքի բոլոր ուժերն ու հնարավորությունները մեկտեղելու եւ միասնական պայքարի գործուն, որը ցայտուն կերպով մարմնավորվել է ոչ միայն գլխավոր հերոսի՝ Անդրանիկի կերպարում, այլեւ ժողովրդի մարդկանց բնավորություններում:

«Նահատակ ժողովրդի աղաղակը հնչում է իմ ծանրացած ականջներում, բախում իմ հոգու դռները: Վերստին ու կրկին արյունոտվում է իմ սիրտը, նորոգվում են իմ ցավերի վերքերը: -Առաջին մասի մուտքում գրել է հեղինակը, ապա շարունակել.- Մեծ ցավի ծնունդ է այս գիրքը: Կարդացեք ու

զգաստացեք, մարդիկ: Գուցե սա օգնի ձեզ, որ կանխեք ձեր գլխին եւս ծանրացող պատուհասները եւ ոչ թե «զալուց հետո դիմակայեք»: Կատարեցի «ոչ հեղափոխմամբ, եւ ոչ անգոյությունեմբ վրիպեալ, եւ ոչ կամավոր սխալանօք»:

Ունկնդրե ձայնիս»:

«Անդրանիկ» վիպասքի ստեղծումը Ս.Խանգադյանը սուրբ առաքելություն է համարել գրական իր կենսագրության մեջ՝ փորձելով ոչ միայն անմահացնել մեծ զորավարի անօրինակ սխրագործությունները, այլեւ թուրք ոճրագործների արյունոտ ճակատներին մեկ անգամ եւս շարտել այն ճշմարտությունը, որ ոչ մի դահճի կամ դահճապետի, ոչ մի յաթաղանավոր ոհմակի չի հաջողվի պատմության երթից հանել հայ ժողովրդի հավերժական ընթացքը, կոտրել նրա կամքն ու ոգին:

Գլխավոր հերոսի կենսապատումը, սկսած վաղ տարիներից, վեպում տրված է վերհուշի հնարանքով: Բազում փաստեր, դրվագներ եւ վավերական իրողություններ՝ հոր հյուսնությունը, 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարի առաջին տասնամյակի ֆիդայական կռիվները, մի շարք մշակավոր ֆիդայիների հետ Անդրանիկի մաքառումները, Աղբյուր Սերոբի եւ նրա հարազատների մահը դավադիրների ձեռքով, ինչպես նաեւ Ջեյթունցի Հովնանի, Գեորգ Չաուշի եւ ուրիշների նահատակության տեսարանները ներկայացնելով ու «հետադարձ հայացքի» գեղարվեստական այլեւայլ նկարագրությամբ, հեղինակը հետամտել է մի գերագույն մտասելեռում՝ «մահ իմացեալ անմահություն է»: Հայրենի հողի ու ժողովրդի զոհասեղանին իրենց կյանքը նվիրաբերած հերոս ֆիդայիների կերպարներում Ս.Խանգադյանը խտացրել է անսահման քաջություն, անձնագոհություն, հզոր կամք ու հավատ: Որքան էլ նրանք կատաղի ու անվեհեր մարտիկներ են թուրք ասկյարների դեմ մարտնչելիս, իրենց գործողություններում, մարդկային վարքով երբեք որեւէ սեւ բիծ չեն թողնում, որը կարող է ստվեր մետել նրանց բարության ու առաքինության վրա: Թուրքական գերի կամ վիրավոր զինվորների նկատմամբ հայ ֆիդայիները ցուցաբերում են կարեկցանք, որոշակի խնամք, հատկանիշներ, որոնք բնութագրական են հայ ժողովրդին: Գեորգ Չաուշի քույրը բուժում, խնամում է վիրավոր թուրքին, իսկ վերջինս, ոտքի կանգնելուց հետո, դաշույնը խրում է նրա կուրծքը ու փախչում: Ս.Խանգադյանը հայի բնավորության առանձնահատկությունը հաստատում է Ջորավար Անդրանիկի այս համոզմունքով. «Մենք թուրք ազգի դեմ չենք կռվում, այլ թուրք կառավարողների»:

Անդրանիկ զորավարի կերպարը մարմնավորված է բազմակողմանի ու բարդ զուգահեռներով: Մարմնավորման այն կառուցվածքը, որ մտահղացել է վիպասանը, ենթադրում էր գեղարվեստական ու գաղափարական այնպիսի համակցությունների ներդաշնակում, որը լայն կապերի մեջ ու մասշտաբային պլանով գլխավոր հերոսին պատկերեր եւ ժողովրդական մաքառումների գլխավոր հանգույցներում, եւ արտաքին դիվանագիտության նենգ խաղերը կռահողի դերում, եւ, ի վերջո, անհավասար ուժերի ու ծանր ճակատագրի անխուսափելի փորձությունները գիտակցողի ու դրանց դիմակայողի մարտիրոսությամբ: Այդ ամենը պայմանավորել է վիպական կերպարների մեծ քանակ, գործողությունների լայնածավալ դաշտ, ռազմական, քաղաքական, ազգային ամենատարբեր խնդիրների արժարձումներ: Դժվար էր այս ամենը գեղարվեստական պատշաճ մակարդակով արտացո-

լել, հայոց պատմության ամենաահեղ ու առավել օրհասական ժամանակի տարեգրությունը ստեղծել այդքան խորքային ու տարածքային շերտերով: Թերությունները նույնիսկ տեսանելի են անգն աչքով, բազմաթիվ կերպարների անգույն ու անդեմ ուրվագծերը, մարտերում գրեթե միշտ հայկական ջուրկատների հեշտ հաղթանակների նկարագրությունները, շատ էջերում վիպասքի պատումը արձանագրային ոճով փոխարինելը եւ փոքր ու մեծ ուրիշ ոչ քիչ անհարթություններ անպայման հարվածում են ստեղծագործության գեղարվեստական որակին: Մարտի տեսարանների պատկերման մանրություններն ու հանկարծակի «հաղթական» ավարտները, մի շարք դեպքերում հերոսների մահվան խիստ ճնշող նկարագրությունները, ծայրահեղ միտումնավորությամբ էպիտետների տեղին ու անտեղի շաղկունները, Անդրանիկի «տղա, լառ» կոչական-դիմումների չափից ավելի կրկնությունները հաճախ հնչում են ավելորդ ու ինքնանպատակ:

Սակայն, ամբողջության մեջ, դրանք, այնուամենայնիվ, հաջողված երկի թերություններ են: Ցեղասպանության գեղարվեստական անդրադարձները վեպում պատմական-քաղաքական ճշմարտացի հենք ունեն եւ հեղինակի կենսական աշխարհայեցողության դիտանկյուններից մերկացնում են պանթոլքիզմի գաղափարախոսության մոլագար իրականացնողների արյունալի արարքները արեւնտահայության բնաջնջման գործընթացում: Այս եւ մի շարք այլ չափումներով «Անդրանիկ» վեպն ընդարձակում է ընթերցողի գեղարվեստական պատկերացումները 1910-ական թվականների հայոց պատմության ամենադրամատիկ ու ողբերգական ժամանակահատվածի վերաբերյալ: Առաջին անգամ Ս.Խանգադյանը համակողմանի, ազգային ճակատագրի բարդ կապերի մեջ, կերտել է ժողովրդական հերոսի կերպարը պատմական ու արդիական սուր զգացողությամբ: Ոչ թե զուտ երեւակայության ուժով կամ հնարածին պատմությունների հորինումներով, այլ վավերական եւ ստույգ փաստերի լեզվով, տարբեր աղբյուրներից քաղած տվյալներով, ժամանակակիցների ու առասպելական գորավարի զինվորների հիշողության ծալքերում անջինջ պահված դրվագներով: Բնավորության անհատական գծերով եւ կերպավորված գեներալ Նազարբեկյանը, Արշավիր Մելիքյանը, Վահան Թոթովենցը, հայտնի Կլիշը՝ Սարդարապատի հերոսներից մեկը, որն իր հարյուրյակ կոզակներով որոշակի դեր է ունեցել Անդրանիկի զորախմբում, եւ ուրիշներ: Վիպական հետաքրքիր զարգացում է ստացել Աննա- Լեւոն-Ծիածան սյուժետային գիծը՝ ռոմանտիկ գունավորումներով, կռիվների ու մահվան սարսափների մեջ երիտասարդ մարդկանց կյանքի ու սիրո երազներով: Ֆիդա Մխոյի ու Երանի կերպարներում Ս.Խանգադյանը հաստատել է անգամ ցեղասպանության մղձավանջում հայ աշխատավոր մարդու կենսական անսպառ հավատն ու զգացողությունները, ներքին կարելիությունների ծլարծակումը անկասելի բռնկումներով: Այդ հատվածներում կամ տեսարաններում վիպասանը ստեղծել է հաջող դիալոգներ, հերոսների հոգեբանական ապրումներ, ներքին մենախոսական պատկերներ: Ու գործողությունների զուգահեռներում նա այնպիսի վարպետությամբ է «ստեղծվորում» հերոսներին, որ արհեստականություն չերեւա նրանց կերպարներում, բա-

ցահայտվեն իրենց տարերքով:

«Անդրանիկ» վեպի ազգային գաղափարախոսության հիմքում դնելով «պետք է հավատալ եվրոպական դիվանագիտության փուլ խոստումներին» սկզբունքը, Ս.Խանգադյանն իր գլխավոր հերոսին օժտել է հայ ժողովրդի շահերի ու նրա ճակատագրի հանդեպ ոչ միայն անմնացորդ նվիրյալի, այլեւ իմաստուն դատողի գծերով: Ժողովուրդը պետք է սեփական բախտի տերը կանգնի,- այս համոզումով Անդրանիկը պնդում է. «-Պայքարել, կռվել եւ ոչ թե ստրկանալ, աղերսել սրան- նրան: Տխմարություն է հուսալ, թե Եվրոպան մեզ համար մեր տեր Յիսուս Քրիստոսի հրաշքը պետք է գործի: Ապուշություն է սպասել, թե յոթ ծովից անդին եղած «փրկիչները» պիտի գան ու պատռեն հայ ժողովրդին հագցրած սեւ պատանքը: Մեր ազգը նախ իր վրա անասան հավատ պիտի ունենա, որ ապրի, ապա եւ իր հարեւանի՝ ռուսների»:

Այս գիծը վեպում, իբրեւ հավատք, իբրեւ գաղափարախոսություն, կարմիր թելի պես ձգվում է սկզբից մինչեւ վերջ, քննարկվում-վերլուծվում ռուս սպաների ու զինվորների հետ, երբեմն նույնիսկ վերածվում բախումների, երբ կողմերից մեկնումեկը սխալ տեսակետ է հայտնում կամ ռազմաճակատում առաջարկում վտանգավոր տակտիկական քայլեր: Այս իմաստով՝ Ս.Խանգադյանը դրամատիկ սրություն է հաղորդել Անդրանիկի եւ ռուս գեներալ Աբայցեի կոնֆլիկտին, գեներալ, որն օրհասական պահին մերժում է զորավարին տրամադրել կոզակների երկու հարյուրյակ Բիթլիսը գրավելու համար:

Անդրանիկը խորապես գիտակցում է, որ «ազատությունը միայն զենքով է ստեղծվում» եւ հայ ժողովրդի «գոյությունը իբրեւ ազգ ազատության մեջ պետք է որոնենք»: Թե գլխավոր հերոսի գեղարվեստական կերպարի բացահայտման ամբողջականությունը, թե կամավորների ու ֆիդայիների գործողությունները կամ նրանց բնավորությունների այս կամ այն կողմը, թե հայ ազգային բախտի խնդիրը ներքին ու արտաքին հարաբերությունների համատեքստում ներշնչում են պատմական համոզություն եւ ամենեւին չեն մեղանչում ճշմարտության դեմ: Պատմության մեկնաբանման իր սկզբունքներում Ս.Խանգադյանը կարեւորում է իրական փաստերի նշանակությունը եւ ձգտել է ոչ միայն պահպանել դրանց հավանականությունը, այլեւ հիմնականում հավատարիմ մնալ իսկությանը: Ընդհանրապես պատմավիպասանության մեջ, իր հսկայական փորձով, նա քանիցս ապացուցել է, որ, այո՛, ազգային հավատի ու համոզմունքի գրող է, որ միտումնավորությունը բոլորովին էլ օտար չէ իր գեղագիտական դավանանքին, սակայն երբեք չի առաջնորդվել մերկ կրքերով, պատմական իրադարձությունները շրջանցող կամ խաթարող պատեհապաշտ դեղատոմսերով: Պերճ Ձեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպի մասին իր աշխատանքում, առարկելով այն հողվածագիրներին, ովքեր մեղադրում են հեղինակին, թե, իբր, նա «աղավաղել» է պատմական իրողությունները, «համահարթել է դարերի հեռավորությունը», պատմական դեպքերին «հագցնելով արդիականության շապիկ», ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն իրավացիորեն պնդում է, որ «Պատմականության էությունը պատմության փիլիսոփայության ճիշտ ընկալման մեջ է եւ ոչ թե փաստե-

րի մերկ արձանագրություն» (1): Ս.Խանգադյանն անպայման իր յուրաքանչյուր պատմավեպի ստեղծագործական աշխատանքում չի անտեսել գրող-արվեստագետի համար այս առաջնային դրույթը, բայց եւ քամահրանքի չի մատնել պատմական փաստերը: Այս երկու կարեւոր գործոնները ուղեցույց ունենալով՝ նա հասել է երրորդ՝ պատմավիպասանի համար նույնչափ անհրաժեշտ, գործոնի կայացմանը՝ պատմության փիլիսոփայության ու պատմական փաստերի միջոցով արդիականության կենսական խնդիրների արծարծմանն ու լուծմանը: Անդրանիկի հերոսական կերպարը, նրա կյանքն ու ողջ գործունեությունը ժամանակակիցներիս համար պատգամ ու խորհուրդ պետք է լինի հայրենիքի սիրույն ամենացորդ տրվելու, հայրենական ուխտին կյանք, կայք, հոգի ու մարմին զոհաբերելու սրբազան նպատակով: Այս հույժ այժմեական դասն է ավանդում Ս.Խանգադյանը «Անդրանիկ» վեպով: Կարող է առասպել թվալ, բայց իրականում Անդրանիկ զորավարն ընդամենը 36 ֆիդայիներով դիմակայել է վեց հազարանոց թուրք ասկյարներին Առաքելոց վանքում: Չետո ավելացել, օգնության են եկել եւս երկու հազարը: Այդ պատմության մանրամասները պատկերելով ու ասես 1500 տարիների հեռվից արծագանքելով Քերթոզահայր Խորենացուն («Ձի թեպետ եւ ենք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ...»), տաղանդավոր հեղինակը մերօրյա արցախահայության գոյապայքարի փառահեղ հաղթանակը ոչ միայն ոգեւորիչ, այլեւ օրինաչափ է տեսնում՝ ի հեճուկս իրենց փուջ թվաքանակով հոխորտացող ուղիների:

Վեպի ավարտամասում հուզական երանգավորումով Ս.Խանգադյանը պատկերում է Անդրանիկի բաժանումն իր «զինվոր եղբայրներից», հայրենի երկրից («Կամքովս չէ այս բաժանումը, այլ՝ ստիպողական...»): Ջորավարը երանի է տալիս ընկածներին. «Նրանք խառնվեցին մայր հողին: Մենք չհասցրինք խնկով ու աղոթքով մեռնված շիրմաքարեր դնել նրանց վրա, աղոթք ու սաղմոս չասացինք նրանց հիշատակին, այլ միայն հայոց աշխարհի անտեր քամին սուլեց՝ փայփայելով նրանց սեւ ու սիրուն գանգուրները»:

Անդրանիկը հայրենիքից հեռացավ 1919-ի ապրիլի 27-ին, այն համոզումով, թե «փոքր ազգին մեծ սուր է պետք», եւ այն հավատով, որ մի օր «ետ ենք առնելու Սասունը, Վանը, ողջ Հայաստանը»:

Այս էր նրա փափագը, «եթե հայ ժողովուրդը երբեւիցե կուզե ինձ պատիվ անել իմ մահից ետքը, ապա ես իմ արձանս չեմ ուզեր, փառավոր թաղում չեմ ուզեր: Թող հայ ժողովուրդն իմ արձանիս փոխարեն կանգնեցնի ավերակ դարձած Մշո Առաքելոց վանքը եւ այնտեղ մի փոքրիկ ուսումնարան ստեղծի հայ մանուկների համար: Այս է իմ ամբողջ բաղձանքս եւ բարոյական պահանջս հայ ժողովրդից»:

Անշուշտ, «Անդրանիկ» վեպը չունի «Մխիթար Սպարապետի» մասշտաբայնությունը, կերպարների գեղարվեստական ռելիեֆությունը, մեծ չափով զիջում է «Թագուհին հայոց»-ի միֆական կերտվածքի գունախաղերին ու արվեստի որակին: Սակայն, հեղինակի նկարագրին հատուկ, հայրենասիրության բռնկումների նոր հորձանք էր՝ ծնված տեղին ու ժամանակին: Ազգային լեզուն-զորավարի կյանքի գեղարվեստական պատումն մի նոր փուլ է նշանավորում այն, որն անկասկած

կրեղմնավորվի վիպական ժանրի անակնկալ հայտնություններով:

3.

Սերո Խանգադյանն անցյալի թեմատիկայով լույս է ընծայել «Արաքսը պղտորվում է» վեպը (1985) եւ հասցեագրել դպրոցական բարձր տարիքի պատանիներին: Նյութը 17-րդ դարի իրադարձություններն են՝ Շահ Աբասի հայաստանյան արշավանքի տարիները՝ 17-րդ դարակզբի մեծ գաղթով ու կոտորածներով (Ս.Խանգադյանը պարսից տիրակալին անվանում է ուղղակի Շահաբաս):

Վեպի համար գրողը հիմք է ընդունել Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», եւ ժամանակի իրադարձություններն իր անունից ներկայացնում է հենց ակամատես պատմիչը, որ «երեւում է» կրտսեր Առաքելին ու իր դարի անցքերն ու եղելությունները բավականին մանրամասնորեն «կտակում» նրան՝ որպես պատգամ ու խորհուրդ սերունդներին: Ջուղայի գաղթն ու կոտորածները, Ագուլխի դեպքերն ու Անդրեաս երեցի հետ կապվող պատմությունները, որոնք վիպականացված են Սուրաբանի «Անդրեաս երեց» պատմավեպում եւ շատ ուրիշ իրողություններ, պատմական-իրական դեմքեր տեղ են գտել Ս.Խանգադյանի երկում տեսիլք դարձած հերոսի միջոցով: Պատմելու ձեւը պատանիներին հասու դարձնելու հայոց պատմության դաժան շրջաններից մեկի դրվագներին, ընտրված է հնտորեն, իսկ լեզուն պարզ է, անբռնազբուս, կենդանի: Ստեղծագործությունը բաժանված է երկու մասի, որոնք անվանված են «Մասունք առաջին» ու «Մասունք երկրորդ»: Եթե առաջինում պարսիկների շահատակությունների ու արշավանքների պատմություններն է «պապիկ Առաքելը» պատգամում «թռռնիկ Առաքելին», երկրորդում մեջտեղ են գալիս նաեւ թուրքերն ու Մախսուդ Սուլթանը՝ լրացնելով ժամանակի ու տարածաշրջանի համայնապատկերը:

«Արաքսը պղտորվում է» վեպը անհավակնոտ գործ է, սակայն իր տեսակի ու նպատակամիտումի մեջ՝ կայացած:

«Շուշի» վեպը Ս.Խանգադյանը գրել է 1986-1988 թվականներին եւ լույս է տեսել 1991-ին: Ծանուցման մեջ ասված է. «Վեպում պատկերված են 18-րդ դարի վերջին քառորդի Արցախ-Ղարաբաղյան իրադարձությունները: Թե ժամանակագրական, թե ազգային-ազատագրական պայքարի առումով «Շուշին» «Մխիթար Սպարապետի» շարունակությունն է»: Նախ, վեպում ընդգրկված ժամանակաշրջանը շուրջ հիսուն տարվա պատմություն է՝ սկսած 1740-ական թվականներից: Այնուհետեւ, «Մխիթար Սպարապետ» վեպից միայն Գոհար միանձնուհու կերպարն է, որ շարունակություն ունի «Շուշի» վեպում: Մյուս կողմից գործողությունների դաշտը երկու վեպերում էլ տարբեր են, այնպես որ ծանուցման մեջ ասվածը պայմանական է:

Վեպին Ս.Խանգադյանը բնաբան է դրել Մովսես Կաղանկատվացու «Ճշմարտությունը չի կարող ծածկված մնալ, եւ լույսը փակի տակ լինել» խոսքը՝ նկատի ունենալով ազերի պատմաբանների կեղծիքները Արցախ-Ղարաբաղի ազգային պատկանելիության վերաբերյալ: 1920-ական թվականների սկզբներին, Ստալինի ու նրա կամակատարների մեղքով, Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն այդ «վայ պատմաբանները» մին-

չել այսօր ամեն տեսակի խարդավանքներ ու պատմական փաստերի աղավաղումներ կատարելով, փորձում են իրենց տեր հռչակել հայոց տոհմիկ-ավանդական երկրամասին՝ Արցախական աշխարհին: Ս.Խանգադյանը մեկ անգամ չէ, որ հանդես է եկել թուրք մուլագար նացիոնալիստների ճշմարտության հետ կապ չունեցող եւ պանիսլամիզմի ռազմատենչ գաղափարախոսության ախտով տառապող տարբեր վայրահաչոցների դեմ: «Շուշի» վեպում, ավելի լայն տարրողությամբ եւ ընդգրկման խոր շերտերով, հայրենասեր գրողը վերստին բացահայտում է պատմական ճշմարտությունը, ցույց է տալիս, թե ինչպիսի քաջությամբ, հերոսական բացառիկ ջանքերով էին Ղարաբաղի մեկիքությունները պայքարում թուրքական ու պարսկական զավթիչների դեմ՝ հայրենի հողի յուրաքանչյուր թիզ ներկելով թանկ արյամբ:

Արցախը «առասպելներով պերճացած աշխարհ» է Ս.Խանգադյանի համար, իսկ նրա պատմությունը անձնուրաց մկիրյալների ու մարտիրոս-նահատակների կենդանի առասպել: Նա քաջ գիտի Գյուլիստանի, Խաչենի, Ջրաբերդի, Վարանդայի ու Դիզակի մեկիքությունները, դրանց պատմությունը, իշխանների ու մեկիքների տոհմածառերը: Նրա վեպը հերոսական ու ողբերգական իրադարձությունների երկարապատում մի հյուսվածք է՝ մեծավ մասամբ իրական-վավերական եղելությունների հավաստի ու համոզիչ մկարագրություններով: Մեր դեմ հառնում են 18-րդ հարյուրամյակի երկրորդ կեսի նշանավոր հայ արցախյան մեկիքները՝ գերագահ (Ս.Խանգադյանի տերմինն է) մելիք Ավան-եզանը՝ Արեւելից Հայոց կողմանց իշխանը, նրա որդի Եսայի բեկը, Գյուլիստանի մելիք Բեկլարը եւ նրա որդի Յովսեփ բեկը, Ջրաբերդի իշխան, սպարապետ, մելիք Աստվածապովը եւ նրա եղբայր Ադամ բեկը, Փանծակի մելիք Յովսեփի որդի Մեծլուս բեկը, Երնջակի տեր Յովհաննես Խանդամիրյանը, էլի ուրիշ հայրենասեր իշխաններ: Վիպասանն իր այս հերոսներին, տարբեր տարիների ռազմական գործողությունների հանգույցներում, լայն պլանով բախման մեջ է պատկերել Արիֆ-Ահմեդ փաշայի, Նահիր խան Աշրաֆի, սարը Մուստաֆայի, Շուշվա եւ ողջ Վարանդայի մելիք, դավաճան Շահնագար բեկի, Փանահ խանի ու նրա որդի Իբրահիմ խալիլի դեմ մղված մարտերում: Նա հայ պատմավիպասանության ավանդներով շարունակում էր գեղարվեստական արտացոլման այն սկզբունքները, որոնք թանձր գույներով խտացնում էին հայորդիների ահեղ կռիվները ոչ միայն նենգ թշնամիների, այլեւ դավադիր ու ազգուրաց մատնիչների դեմ: Հայոց ծանրածանր պատմության մռայլ էջերից են կենտրոնախույս ուժերի անմիաբան ու կործանարար հետեւանքներով հղի չար գործողությունները, որոնք գեղարվեստական գրականության մեջ արտացոլվել են պատշաճ արվեստով ու գաղափարական անվրեպ մեկնություններով: Ս.Խանգադյանը մելիք Շահնագարի, Խնձորեստանի տեր Միրզեխանի, արեղայի աստիճանից խարդախ միջոցներով սրբազանի ու կաթողիկոսի հոգեւոր կոչում ստացած Իսրայելի, Շահնագարի կնոջ՝ Յուրիզադի կերպարներում հանդիչ գծերով պատկերել է այն մեքենայություններն ու ազգադավ արարքները, որոնց հետեւանքով ոչ միայն հազարավոր հայ զինվորներ, այլեւ բազում անվանի իշխաններ ու մելիքներ դարձան ստոր մատնությունների ու զանազան որո-

գայթերի զոհեր: Նման փաստերը վեպում դրամատիկ սրությամբ ու ողբերգական հանգուցալուծումներով հանդերձ, ներկայանում են մարդկային հոգեբանության ինքնատիպ զիզգագներով, բարդ ու սուր անկյուններով: Սյուժետային բազմազան կոնֆլիկտների, մեծաքանակ կերպարների խաչածե կապերի միջոցով արձակագրին հաջողվել է ամբողջության մեջ ճշմարիտ գույներով տալ ժամանակի մթնոլորտը, ազգային-քաղաքական դրամատիկ հարաբերությունները: Սա հայ իրականության այն պատմաշրջաններից էր, որ, ինչպես գնահատում է վիպասանը, «Ցամաքել է սերը աշխարհի տերերի միջից, ուժգնացել է անգթությունը, որից եւ ազգեր են դառնամահ լինում»: Հայոց աշխարհը կրկին ամեն կողմից ենթակա էր հոշոտման վտանգի, իսկ ամենից դաժանը՝ «հոգեառ օսմանլուն», թուրք Արիֆ-Ահմեդ փաշայի բազմազունդ գործով, Կարին-Արզում քաղաքում, սպասում էր հարձակման: Հայաստան երկիրը ի սկզբանե, Նոյից սկսած, հայի բնօրրանն էր՝ Գուգարքից մինչեւ Արաքսի եղեգնուտները, Կուր եւ Արաքս գետերի խառնուրդից մինչեւ Գողթանի Երնջակի տափարակները: Հավաստելով պատմական այս ճշմարտությունը՝ Ս.Խանգադյանն իր ազատ գոյությունը քաջաբար պահող տեղաբնակների արիությամբ է մեկնում իրողությունը: Վերջիններիս ուխտն ու հավատամքը սուրբ է. «Գերադասելի է ընկնել սուրբ հռչակով, քան ապրել ստրուկ: Այսուհետ եւս մեր կրծքով պատնեջ կկանգնենք մեր հայրենիքին»: Մելիք - Ավան Եզանը՝ Հայոց Արեւելից կողմանց իշխանը, ջարդելով Քոփրլու Աբդուլլահ թուրք փաշայի բանակը, մեկնում է ռուսական կայսրերի մայրաքաղաքը՝ Պետերբուրգ՝ դաշինք կնքելու: Ս.Խանգադյանն այսպես է ներկայացնում հայ իշխանի եւ կայսրուհի Աննայի բանակցությունը.

«- Կուզեմայից, որ աստծու կամեցողությամբ, մեծ Ռուսիան եղբայրական դաշն կնքի Հայաստան աշխարհի հետ:

Կայսրուհին հենվեց արքայական գավազանին, խոսեց մեղմ.

- Մե՞ծ է Արմենիա աշխարհը:

- Մեծ է, բայց կիսված: Մեծ Հայքի արեւելյան կեսը Այրարատյան աշխարհ, Սյունիք, Նախիջեւան, Արցախ ու Գարդման աշխարհներն անկախ Հայաստան են: Արեւմուտքը՝ օսման սուլթանի կրնկի տակ է:

- Բարի, - ասաց կայսրուհին: - Ուժ ունի՞ ձեր իշխանապետությունը:

- Ունի:

- Ինչո՞վ:

- Իր երեք հազար տարվա պետական զորությամբ, իր դիմադրական կամքով, տոկունությամբ: Երեւի ձեր ազնիվ ականջին հասել է, թե քանի անգամ սուլթանը արշավեց մեր երկրի վրա: Արշավեց ու ջախջախվեցավ՝ փախավ: Աստվածապահ իմպերատրիցա, մենք շատ չենք, բայց հայ ենք: Հա՛յ ենք... »:

Ս.Խանգադյանի բուռն ու անվերապահ հայրենասիրությունը մեկ անգամ չէ, որ փայլել է պատմավիպասանության մեջ: «Մխիթար Սպարապետ», «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Թագուհին հայոց», «Անդրանիկ» վեպերը վառ հաստատումներ են վաստակաշատ հեղինակի հայրենամովիրումի, այն անխոց ջանքերի, թե ինչպիսի տքնանքով է նա հայ ժո-



ղովրդի հնադարյան ու նոր ժամանակների մաքառումներում, պատմական-վավերական, աղբյուրագիտական եւ փաստական այլ տվյալներով ցույց տվել նրա ոգու ուժը, անընկճելի կամքը: Մելիք - Ավան Եգանը ռուսական կայսրուհու մոտ պահում է իրեն արժանապատվորեն, առանց նվաստացումի: Ավելին՝ գերմանացի նախարարի հարցումներին, նախարար, որ խորհրդական պաշտոնյա էր կայսրուհու պալատում, հայ իշխանը պատասխանում է խիզախ ու համարձակ շեշտերով, փորձում քրիստոնյաների ու մահմեդականների հարաբերությունների վերաբերյալ ճշմարտությունը բացել ռուս պալատականների առջեւ: Բայց եւ հայ մելիքների համար գաղտնիք չէր, ինչպես գրում է Ս.Խանգաղյանը, որ կայսրուհին մի դժնով ճանապարհում է իրենց, մյուս դժնով ընդունում թշնամուն՝ թուրքին: Վիպասանը պատմական փորձի դիտանկյունից է կատարում իր եզրահանգումները: Չէ՞ որ բազմիցս արքունական վերին հրամաններով ու հրահանգներով, ռուսական զենքի ու զորքի հետ կապված մեր ազգային սպասումներն ու երազները ոչ միայն հօսք են ցնդել, այլեւ անարգ ոսոխի արյան խրախճանքի պատճառ են դարձել, թե, իբր, դաշնակցելով Ռուսիայի հետ՝ մենք դավում ենք իրենց՝ թուրքերին: Եվ Ս.Խանգաղյանը, իր գեղարվեստական համոզումներն հիմքում, մշտապես խարսխել է այն գաղափարը, որ ինչքան էլ դաշնակցի բազուկն ուժեղ լինի ու հովանավորի դեր ստանձնի, միեւնույն է՝ ազգը պետք է ինքը տնօրինի իր բախտը:

Պատմավեպի ոլորտում շուրջ քառասունամյա իր որոնումներով Ս.Խանգաղյանը փաստորեն հաստատել է մի իրողություն, որ հայոց պատմության տարբեր դարաշրջանների գեղարվեստական հետախուզումներն ինքնամաթաղ հետաքրքրությունների մղումով չեն արվել, այլ ամեն անգամ ծնվել են ժամանակի կենսական խնդիրների պահանջից, առանձնապես ազգային, քաղաքական ու պատմական որեւէ հրատապ հարցի լուծման անհրաժեշտությունից: Եվ իր գեղագիտական վերաբերմունքը նա արտահայտել է գաղափարական ճշմարիտ աշխարհայեցությամբ: Անկախ այն հանգամանքից, թե որ պատմավեպում է վիպագիրը գեղարվեստորեն ավելի հաջող, ավելի ավարտուն լուծումներ տվել տվյալ պրոբլեմներին, մի բան անառարկելի է. նրա դիրքորոշումներն ու ազգային գաղափարախոսությունը երբեք զիջումների կամ սակարկությունների տեղիք չեն տվել: «Վայ էն ազգին, որ չի հավատում իր վաղվա արեւին», – հերոսներից մեկի այս խոսքը միակ ու եզակի հավաստումը չէ «Շուշի» վիպական պատումի հյուսվածքում, որով Ս.Խանգաղյանը յուրովի կարգախոս է պատգամում սերունդներին՝ հույսով ու հավատով զինում նրանց: Չպետք է հուսահատ լինել, «Յուսքը կորցնելը կորստաբեր է, ինչպես ճակատամարտում կորցնես սուրդ: Վհատությունը փութացնում է անկումը: Ինացեք, հուսահատությունը տառապալյալների կործանման գավազանն է: Երբեք չընդունեք նման չարիք: Անուր եղեք հոգով ու, մանավանդ, ուժով»: Սա էլ մեկ այլ առիթով ասված պատգամ է՝ դարձյալ ժողովրդի ոգու ամրության երաշխիք, որ վիպասանը հնչեցնում է Գոհար իշխանուհու բերանով: Կարողում են Գրիգոր Տաթևացու «Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ» մատյանը, ուր հեղինակը թվում է բնության «չորս տարրերը» – հող, ջուր, օդ եւ հուր. «Ձի առանց հողոյն շոշափումն ոչ լինի, եւ ոչ առանց

ջրոյ կալումն ու մածումն, եւ ոչ առանց օդոյ շարժումն, եւ ոչ առանց հրոյ երեւումն... Երկիրը ծանր է, քան զջուր՝ ի ներքոյ է: Եվ ջուրն՝ քան զօդ եւ օդն ծանր է, քան զհուր, զի սակավ ինչ գիճոթյուն ունի...»: Իշխանուհի Գոհարը հավերժական ու անվախճան է համարում իմաստուն Տաթևացու թված այս տարրերը, ապա՝ շարունակում «Եվ քանի որ ազգն մեր եւս այդ չորս տարրերի գոյությունն է, նա նույնպես անվախճան է: Սակայն հիշեցեք, գրոց ուժը չէ միայն հենասյուն ազգի: Ամենից առաջ զորական կերտվածք եւ ուժ տվեք ձեր զավակներին»: Այս յուրովի դասը մեր ազգային պատմության տրամաբանությունից է քաղված, եւ Ս.Խանգաղյանի հերոսը ժառանգել է իր նախորդներից, քանզի վերջիններս նույնպես պարտադրված են եղել ապավինելու ուժի զորությանը՝ իրենց գոյությունը պահպանելու համար: Գլխավոր հերոսների մարդկային ու հոգեբանական նկարագիրը մարմնավորելիս վիպասանը որոնում է ոչ միայն պատմության կապերը, արտացոլվող ժամանակի եւ անցյալի միջեւ ձգվող ու իրար միացնող թելերը, այլեւ տարբեր փուլերում ապրած հայ ազգային գործիչների հայրենասիրական ավանդները: Սրանք այն բարոյական արժեքներն են, որոնք դարերի հոլովություն ամենեւին չեն կորցնում իրենց թարմությունը եւ իրենց գաղափարական նշանակությամբ շարունակ միտված են լինում դեպի գալիքը՝ ժառանգորդական լիցքերի հսկայական պաշարով: Գյուլիստանի թառինջ բերդավանի բարձունքներից Գանձակի դաշտ իջնող մելիք - Ավան Եգանը՝ իր ռազմաջոկատներով, Ջրաբերդի տեր Աստվածապով սպարապետը՝ յուրայիններով, որ Մռավ լեռան փեշերով էր կամենում միանալ Եգանին, իրենց հոգու խորքում մարսել են պապենական ավանդները եւ այդ ոգով են կռվում օսմանական օրդուների դեմ: Ս.Խանգաղյանն այդպիսի կերտվածքով է պատկերում արցախյան մելիքներին, որոնց նշանաբանն է.

- Յայրենիքի զինվոր եղեք, հայրենիքին մատաղ...

Ինչպես վիպասանի մյուս պատմագեղարվեստական երկերը, այնպես էլ «Շուշի» վեպը հարուստ է ազգագրական, պատմագիտական, արխիվային, փաստագրական եւ այլ նյութերով, որոնք երկար տարիների ընթացքում մանրախույզ հետազոտողի ջանասիրությամբ կուտակել է Ս.Խանգաղյանը եւ «տեղադրել» իր ստեղծագործություններում: Այս կամ այն երկի կառուցվածքային բաղադրիչը դարձնելով հիշյալ նյութերից որեւէ մեկը՝ նա կարկատանի տեսքով չի մատուցում, այլ որպես իր պատմությունները հաստատող, գաղափարական դրույթները հիմնավորող միջոցներ կամ «ժանուցումներ», այնպես է հյուսում պատումի ընթացքին, որ աներկբայորեն զգացվում է դրանց անհրաժեշտությունն ու ճանաչողական անփոխարինելի դերը:

Նշանավոր արձակագրի «Յայրենապատում» ուղեգրությունների ու ճամփորդական նոթերի մասին գրախոսության մեջ Սուրեն Աղաբաբյանը նշում է. «...1929 թվականից սկսած, դեռ տասնչորսամյա մի պատանի, Սերո Խանգաղյանը սկսել է իր թափառումները հայոց ոստաններում: Ինչ գյուղ ու շեն, գյուղակ ու ավան որ մտել է՝ իր օրագրում գրանցել է այդ բնակավայրի հետ կապված պատմության փաստերը, ժողովրդական-բանահյուսական ավանդույթները, աշխարհագրական-ժողովրդական տեղեկությունները: Ամմիջական

իր գրառումներն այնուհետև հարստացրել է մատենագիտության պատմությունների, ողբերգությունների, հիշատակարանների, դատաստանագրքերի, կալվածագրերի, կոնդակների մեջ «ավագահատիկների նման ցրված» գրավոր վկայություններով, դրանց ավելացնելով նաև այս կամ այն բնակավայրում հետագա տարիներին (1929 թվականից այս կողմ) կատարած օրագրային գրառումները» (1):

Ս.Խանգադյանը այդպես էլ վարվել նաև պատմական թեմատիկայի իր գեղարվեստական գործերը ստեղծելիս: Ավելին՝ այդպես է տեսել նա «Շուշի» վեպի պատումը իրենց անունից վարող գլխավոր հերոսներից մեկին՝ Աբրահամ Երեւանցուն, որը չի բաժանվում նոթագրությունից, անգամ կռիվների թե՛ միջոցներին իր օրագրերի հետ է: Ինքը՝ հեղինակը, նույնպես վեպի տարբեր հատվածներում նոթերի կամ օրագրային ճեպանշումների պես հայտնում է «տեղեկություններ», որոնք լրացուցիչ իմացական արժեք ունեն, թեկուզ եւ առանձին պարագաներում՝ ստուգաբանության կարիք: Այսպես խոսելով Աղվանից Ներսես կաթողիկոսի մասին, որը այցի է եկել Մելիք-Ավան իշխանին՝ մարտից առաջ, Ս.Խանգադյանը գրում է. «Վաղնջական է Աղվանից տան կաթողիկոսական թեմը: Ստեղծվել է 552 թվականին ու անխախտ ենթակա է էջմիածնին, այսինքն՝ Հայոց ծայրագույն պատրիարքարանին: Նա իր իրավասության տակ ունի մի ընդարձակ հայաշխարհ Արցախ-Ղարաբաղի հինգ մելիքությունները, ապա Գանձակը, Շամախին, Շիրվանը, Բաքուն, Ղարաբանդը, Նուխին, Պարտավ հին քաղաքը, ուր նստել է Հայոց Աղվանից տան առաջին կաթողիկոսը»: Թվում է՝ ասված է ի միջի այլոց, տողերի արանքում: Սակայն Ս.Խանգադյանը աշխարհագրական ու պատմագիտական այս ծանուցում-տեղեկատվությունը տալիս է խիստ նպատակային ձևով՝ Հայոց պատմությանը քիչ ծանոթ կամ անտեղյակ ընթերցողին հասու դարձնելու ոչ միայն Աղվանից կաթողիկոսության, այլև Հայաստան աշխարհի պատմական ու աշխարհաքաղաքական սահմանագծերին: Փաստական-վավերական տեղեկատվություններին նա հավելում է իր խոհերն ու խորհրդածությունները, հաճախ պատմագետ-գիտնականի խորաթափանցությամբ Հայաստանի տարբեր գավառների մասին, նրանց հնությունների, մշակութային օջախների, ճարտարապետական կոթող-շինությունների մասին հայտնում այնպիսի մանրամասներ, որոնք պետք է որ պեղած-հավաքած լիներ տքնանքով ու երկար տարիների ընթացքում: Տեղ-տեղ այն տպավորությունն է ստացվում, թե կարդում ես պատմական տարեգրություն կամ ժամանակագրություն՝ այնքան սեղմ ու քրոնիկային տվյալներ հիշեցնող հաջորդականությամբ են տրված դեպքերն ու դեմքերը: Քրոնիկոնի ժանրային ներթափանցումներին նպաստել է նաև հեղինակի ընտրած պատումաձևը: «Շուշի» վեպի ամբողջ ընթացքը «վարում» է ոչ թե հեղինակը, այլ իր հերոսները՝ մերթ Աբրահամ Երեւանցի պատմիչը, մերթ Սխիթար Սպարապետի սիրած կինը՝ Գոհար իշխանուհին, ավելի սակավ՝ Խնձորեստանի տեր դավաճան Սիրգեյանի կինը՝ Երնջիկը, պարսից շահի դեսպան Սաֆար-Ալի Աբդուլ Հասանը, որն ազգությամբ հայ էր, եւ ուրիշներ: Անհամեմատ մեծ տեղ է հատկացված Աբրահամ Երեւանցուն եւ Գոհար իշխանուհուն, որոնց «պատմությունները» ստեղ-

ծագործության գերակշիռ մասն են կազմում, իսկ առաջինի «վարկածներում» իշխանուհի Գոհարը գլխավոր գործող անձերից մեկն է: Նա հայրենասեր կնոջ հերոսական կերպար է, Սխիթար Սպարապետի դավադիր սպանությունից հետո վրեժխնդիր է լինում՝ սպանողին՝ իր հարազատ եղբորը զոհելով, միանում Արցախի հայ իշխաններին ու երկար ժամանակ նրանց հետ մաքառում թուրք ու պարսիկ արշավողների դեմ: Գոհարը սիրած տղամարդու մահից հետո վճռում է շարունակել նրա գործը, ինչպես Ս.Խանգադյանն է նրան անվանում՝ դառնում է միանձնուհի եւ տղամարդու արիությամբ հայտնվում ռազմական գործողությունների ամենաթեժ կետերում:

Հաջողված կերպարներ են Ծուռ Ավագը, Թուրի Արզումանը՝ իրենց աշխարհագրայիններով, Կամար Սուլթան աղջնակը՝ ոչ միայն իր քաջագործություններով, այլև Ադամ բեկի հետ սիրո պատմությամբ: Ս.Խանգադյանը վարպետորեն է կերտել Հայոց կաթողիկոսին՝ Աբրահամ Կրետացուն, նրա դիմունները Նադիր շահին, մեծարանքի ժեստերը, երեսանց շոյիչ էպիտետները, գերի շամախեցիներին գնելը եւ իրենց քաղաքը վերադարձնելու նկարագրությունները, ինչպես եւ թշնամու ձեռքն ընկած հայուհիներին ազատելու տեսարանները տպավորիչ համոզություն ունեն: Արցախյան ազատագրական երկարամյա պայքարում վիպասանը մեծ տեղ է հատկացրել ժողովրդի հավաքական կերպարին: Փանահ խանի ու նրա որդի Իբրահիմ խալիլի, պարսից շահերի ու նրանց զորավորների դեմ վարած կռիվներում ժողովրդի տարերքը, հայրենի հողի հանդեպ նրա պաշտամունքը երեւում է վիպական տարբեր տեսարանների դիմամիկայում եւ հերոսական, եւ ողբերգական շեշտադրումներով:

Այնուամենայնիվ «Շուշի» վեպի շաղախում գեղարվեստական վրիպումները քիչ չեն: Անընդհատ ավելանում են գործող անձերը, իսկ հեղինակը չի հասցնում նրանց կերպավորել հավասար ուժով: Ժամանակային լայն ընդգրկումը, բնականաբար, ենթադրում էր նաև հերոսների մեծ քանակ, սակայն Ս.Խանգադյանը շատերին ներկայացրել է տարեգրի գրչով, ոչ թե արվեստագետի վրձինով:

Սոցիալական պրոբլեմը՝ աղքատ-հարուստ որոշակի բեւեռացումով, շատ է շահարկվում վեպի մեջ: Հայրենասիրական երկուն, երբ գեղջուկներն ու մելիքներն ամեն ինչ մոռացած մաքառում են հող հայրենին ոսոխից փրկելու համար, պետք էր այդքան սրել սոցիալական հակամարտությունները:

Ս.Խանգադյանն ինչպես «Անդրանիկ» վեպում, այնպես էլ «Շուշի»-ում շատ հեշտ հաղթանակներ է «պարգևում» հայրերին: Գրեթե բոլոր ճակատամարտերում՝ թե թուրքերի դեմ, թե պարսիկների, հայ մելիքական գնդերն արագ ջախջախում են հակառակորդներին, որքան էլ թվաքանակով փոքր լինեն: Ծիշտ է, Ս.Խանգադյանն ամբողջ վեպում հաստատում է, որ «Ղարաբաղը կորյուններ ունի», յուրաքանչյուր սպանված ղարաբաղցի առյուծի փոխարեն մարտադաշտ է ելնում նրա կորյունը եւ շարունակում առյուծ - հոր հերոսական պայքարը, բայց չպետք է եւ առյուծների, եւ նրանց կորյունների հաղթանակները հեշտ ռազմախաղերի վերածել: Դրանք դաժան, ծանր ու արյունալի զոյամարտեր էին, որոնք պատմական-

րեն ավելի բնութագրական էին Ղարաբաղի մելիքների քաջազանական նկարագրին եւ դարերի հոլովություն պանծացրել են նրանց անունն ու գործը:

«Չայրենապատում» սքանչելի բազմահատոր մատյանում, որը հայ գյուղերի տարեգրություն-համայնապատկերն է, Ս.Խանգադյանը ներողություն է հայցում ընթերցողներից՝ եթե վրիպումներ գտնեն աշխատանքում. «Եվ այսպես, ես Սերո (Սերովբե)՝ որդի Նիկոլայի՝ որդվո Առաքելի, ի մեծ եւ լավահռչակ տոհմից խնծատին, ի գեղջից Գորիս՝ երկիրն Սյունաց, պատանի տարիներիցս սկսած, ուր որ գնացի՝ թե քաղաք, թե գյուղ, գրեցի դրանց մասին: Ուստի կամք արեք եւ ողորմի հիշելով՝ բարեխոս եղեք, ով ընթերցողներ, հորս, որի անունը տվի, եւ մորս՝ Վարդանուշ Զիլֆուղարյանց-Սելիք Օհանյանցին, եղբորս՝ Սամվելին, որ հանգավ ծաղիկ հասակում, մյուս եղբորս՝ Սուրենին, որ իմ բարեխնամ ոգետրիչն էր մինչեւ հեռանալը կյանքից... Եվ եթե ինչ-ինչ սխալմունք կամ թերացում գտնեք իմ այս գործի մեջ, մի ուղղեք թեկուզ ողջախոս կամքով, այլ ներող եղեք եւ ինձ ներումն շնորհեցեք, քանզի կար իմ այս էր...»: Ս.Խանգադյանի վերջին շրջանի ստեղծագործություններում որքան էլ թերացումներ կամ վրիպումներ նկատվեն՝ դրանք շատ չնչին են այն կենսականի ու արժեքավորի հանդեպ, որ վաստակաշատ հեղինակը ներդրել է հայոց գրականության՝ ի մասնավորի վիպասանության մեջ, եւ շնորհիվ դրա՝ սերունդներն իրենց երախտագիտությունն են հայտնելու թե մեր մեծ գրողին, թե Խանգադյանների ողջ տոհմածառին: «Շուշի» վեպն արդարեւ այդ երկերից մեկն է:

4.

Պատմությունը չի հանդուրժում կեղծիքներ: Որքան էլ մի կարճ ժամանակային տարածքում այդ կեղծիքները հասարակական-քաղաքական առանձին ֆորմացիաների շարքին կամ վարագուրեն զանազան գույներով, միեւնույն է, վաղ թե ուշ, ճշմարտությունը երեւան է գալիս անհրաժեշտ անբեկանելի սաստկությամբ:

Անհանդուրժելի է նաեւ պատմության «խմբագրումը»-գաղափարախոսական ինչ աստառով էլ այն սքողվի:

Պատմության «խմբագրումը» պետք է իմաստավորվի այնպես, որ չաղարտի պատմությունը, պատմական փաստերը: Ամենից էականը՝ ճշմարտացի ցուցադրի պատմության փիլիսոփայությունը, ոգին: Պատմավիպասանության մեջ ամենեւին էլ երկրորդական չէ ու չի կարելի նսեմացնել գրող-արվեստագետի ստեղծագործական երեւակայությունը: Վերջինս պատմության ստույգ, վավերական փաստերի կեղեւը բացելով՝ կարող է հայտնաբերել այնպիսի ճշմարտություններ, որոնց տակ թաքնված է տվյալ իրողության իսկությունը, բովանդակային հարստությունը: Երեւակայության ուժով կարող են ստեղծվել չափազանցումներ, հավելումներ, սակայն դրանք չպետք է խախտեն պատմության ստույգությունն ու հավանականությունը, կտրականապես անթույլատրելի է պատմության կեղծումը: Հետեւաբար, պատմության գեղարվեստական հետախուզումը մի հայտնի չափով անհրաժեշտ է զուգակցել գիտական զննումների հետ:

Տասնամյակներ շարունակ հայ հասարակական, ազգային ու քաղաքական կյանքի պատմությունից դուրս էր դրվել նրա ամենալուսեղ դեմքերից մեկը՝ Գարեգին Նժդեհը: Խորհրդա-

յին գաղափարախոսությունը կոպտորեն փորձում էր ոչ միայն մոռացության մատնել նրա անունը, այլեւ խեղաթյուրելով փաստերը՝ մեղադրում էր նրան բազում մեղքերի մեջ՝ հռչակելով անգամ ժողովրդի թշնամի:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո հետզհետե վերականգնվում է «կորսված ճշմարտությունը», պատմական արժեքները երեւում են իրենց իսկական փայլով ու նշանակությամբ:

Այդ արժեքներից է Գարեգին Տեր-Չարությունյանը՝ լեգենդ դարձած Գարեգին Նժդեհը, որի մասին արդեն հայ պատմաբանները հրապարակ են հանել մենագրական հետազոտություններ, հոդվածներ, արխիվային նյութեր եւ այլն: Գարեգին Նժդեհը հայ ժողովրդի ականավոր այն գործիչներից է, որի կյանքը շարունակաբար պետք է լինի եւ գիտական մտքի կենտրոնում, եւ գրողների ու արվեստագետների նախասիրությունների ու հետաքրքրությունների շրջանակներում: Մեծ զորականի, ազգային գործիչի, մտածողի ու գիտնականի կերպարը՝ տարբերաբնույթ խնդիրներով, աղերսներով ու առնչություններով կապվում է մեր ժողովրդի կյանքի չափազանց բարդ, ծանր ու ողբերգական ժամանակահատվածի՝ 20-րդ դարասկզբի պատմական խոշոր իրադարձությունների հետ եւ անչափ հարուստ նյութ կարող է տալ ուսումնասիրող գիտնականներին ու արվեստի աշխարհի մարդկանց:

Վիպասանության մեջ առաջին փորձը կատարել է Սերո Խանգադյանը: 1993 թվականին լույս է տեսել գրողի «Գարեգին Նժդեհ» վեպը՝ դուռ բացելով մի հետաքրքիր, իրական-պատմական, առեղծվածային ու առասպելական թեմայի գեղարվեստական մոր մարմնավորումների առաջ:

Վեպն ընդգրկում է 1918-21 թվականներին Լեռնահայաստանում՝ Սյունյաց աշխարհում, տեղի ունեցած ճակատագրական այն իրադարձությունները, որոնք սպառնում էին Արցախ-Ղարաբաղի ու Նախիջեւանի հայկական տարածքների հետ՝ նաեւ Ջանգեզուրը բռնակցել թուրք-ազերիների մոր գոյացած Ադրբեջանին: Օրհասական մի պատմափուլ, երբ դեպքերի կիզակետում հայտնվեց Գարեգին Նժդեհը եւ, ցուցաբերելով աննախադեպ քաջություն ու իմաստություն, դիմակայելով թուրք-ադրբեջանական դիվանագիտության սադրանքներին ու ռազմական գործողություններին, անզլիական գործակալների ու բուլշեիկյան Ռուսաստանի նեմո քաղաքականությանը, հայ օրթոդոքս հեղինականների հանցապարտ քայլերին, կարողացավ հասնել իր նպատակին, դառնալ ժողովրդյան իղծերի ու ձգտումների արտահայտիչն ու կենսագործողը: Անտարակուսելի է, չլինեք Գարեգին Նժդեհը, նրա հզոր կամքն ու ազգային անկտորում ոգին, Ջանգեզուր-Կապան-Մեղրի ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող միջանցքն ու հողատարածքները կամայականորեն հանձնվելու էին մուսաֆաթական Ադրբեջանին: Սա նշանավոր ռազմագետի ու քաղաքական գործիչի՝ մեր ազգային հերոս Գարեգին Նժդեհի առաջին ու ամենաարժանահիշատակ առաքելությունն էր, ժամանակին բզկտված, ծվեն-ծվեն դարձած Չայաստանի պատմական ճակատագրում բացառիկ ու աննախադեպ մի իրողություն, որի դասերը ներկա ու գալիք սերունդների համար ազգային պատվիրանների դերակատարության խորհուրդ ունեն:

Ս.Խանգադյանը փորձել է գեղարվեստորեն իմաստավորել այն ճշմարտությունը, որ պատմական բախտորոշ էտապում Գարեգին Նժդեհը անսխալ կռահեց հայ ազգային ճակատագրի ամենահանգուցային քաղաքական կացությունը եւ հայրենիքի ու ժողովրդի միակ ճիշտ պահանջի դրոշակակիրը դառնալով՝ կարողացավ անշեղորեն իրականացնել այն: Քաղաքական ու ռազմական ամենադժվարին հանգուցներում Լեռնահայաստանի ինքնորոշման ու ինքնահաստատման խնդրի առաջադրումն այդ սկզբունքով ու այդպիսի լուծումով՝ ստրատեգիական խորաթափանց մտքի ու, հեռանկարի իմաստով, նպատակաուղղված գործելակերպի արգասիք էր, որը միանշանակ հաստատում է քաղաքագետ սպարապետի հզոր տաղանդը: Ազգային գաղափարաբանության ու ժողովրդի հոգեբանության մեջ խոր նստվածքներ ունեցող հայրենասիրության զգացմունքները, Գարեգին Նժդեհը, մեր անցյալ հերոսամարտի ու Սարդարապատի ավանդներով, խորապես ներարկեց Սյունյաց աշխարհի գեղջուկ մարդկանց բնավորության մեջ, դարձրեց կենցաղ ու ապրելակերպ, դրանով իսկ ապահովեց նրանց հաղթանակը: Այսինքն՝ մեծ զորավարն ու քաղաքագետը Լեռնահայաստանի աշխատավորությանը տարավ դեպի նոր կեցություն, մղում տվեց այլ մտածողության ու ապրելածեւի, սովորեցրեց կույր հնազանդության ու անել հարմարվողականության վիճակը թոթափել եւ ընտրել ազատ ու անկախ գոյության կենսածեւը:

Իհարկե, վիպական հյուսվածքի բոլոր հատվածներում էջ, որ Նժդեհի կերպարը կերտված է հավասար հաջողությամբ, ժողովրդական-ազատագրական շարժումների համայնապատկերային դինամիկայում, մարդկային ու հերոսական գծերի գեղեցիկ համաձուլվածքով: Համեմայն դեպս՝ շտապողականության կնիքը երեւում է վեպում, եւ փոխանակ գործողությունները ռազմական անցքերի նկարագրությունները պատկերելու արվեստի միջոցներով, հանգամանալի «տեսցնելով» հերոսներին ու նրանց արարքները, հեղինակը արագորեն անցնում է դրանց վրայով, փաստում, որ հայոց զնդերը «կոտորեցին», «ջախջախեցին», «փախուստի մատնեցին» թուրքերին: Տասնյակ մարտերի մասին է խոսքը, եւ բոլոր դեպքերում հայերն առանց լուրջ դժվարությունների հաղթանակ են տանում թշնամու նկատմամբ: Այսպիսի հայացքը, անկասկած, թուլացնում է տպավորությունը: Հեշտ հաղթանակները, այն էլ միշտ ահռելի քանակով թշնամու դեմ, մի քանի անգամ պակաս ուժերով, համոզիչ չեն հնչում, մանավանդ, որ «ցույց չեն տրվում» դրանք, այլ ուղղակի վիպասանը «հավաստում» է դրանց իսկությունը:

Այնուհետեւ, վիպասանին շատ կօգներ, եթե ինչ-որ չափով հենվեր Նժդեհի հայացքների, ելույթների, հողվածների, աֆորիզմային մտածողության ու ասույթների վրա՝ նրա կերպարը գրավիչ կամ ավելի ամբողջական դարձնելու համար: Հրապարակի վրա եղած նյութերը վկայում են, թե ինչպիսի լայնախոհ ու մեծ էրուդիցիայի տեր անհատականություն էր Գարեգին Նժդեհը, ինչ սուր կռահումների եւ դիպուկ բնութագրումների վարպետ, գիտական ու քաղաքական վերլուծություններով օժտված գործիչ: Այդ նյութերի տեղին օգտագործումը հնարավորություն կտար վիպասանին՝ գլխավոր կերպարի բնավորության մեջ մուծելու կուռ աշխարհայացք

ունեցող փիլիսոփա գիտնականին, հմուտ քաղաքագետին, պետական ու ռազմական գործիչին: Ցավոք, Ս.Խանգադյանը շատ քիչ ուշադրություն է սեւեռել այդ նյութերին, հերոսի զարգացմանը չի տվել անհրաժեշտ բազմակողմանիություն ու դրամատիզմ, որի հետեւանքով Գարեգին Նժդեհի կերպարը մի հայտնի չափով կորցրել է բնորդի հմայքն ու ներազդեցության ուժը:

Այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ Արցախի ազատագրական գոյամարտի տարիներին ականավոր վիպասանը ձեռնարկել է արդիականությունը պահպանող եւ մաքառող ժողովրդի տենչանքներին արժանի շատ կարեւոր թեմատիկայի, ձգտել է կոտրել սառույցը եւ գեղարվեստորեն մարմնավորել մեծ Նժդեհի կերպարը, ինքնին գովելի փորձ է: Մյուս կողմից՝ որքան էլ առավելապես գրական քրոնիկոնի ժանրային հիմունքներով, 1918-1921 թվականների Հայաստան աշխարհի շատ իրադարձություններ, հատկապես Սյունիքի անկախության համար մղված մարտերը եւ այդ պայքարում փառաբանված հերոսների սխրագործությունը Ս.Խանգադյանի գրչի տակ ներկայացված են բավականին կենդանի գույներով, իրականի եւ անսովորի շաղախով: «Գարեգին Նժդեհ» վեպին չպետք է մոտենալ գրողի նախորդ պատմական երկերի պես՝ իբրեւ դասական ավանդներով ստեղծված, հոգեբանական ավարտուն բնավորությունների, սյուժետային ամուր կապերի եւ փիլիսոփայական խոհերի հյուսվածք: Այստեղ առաջին պլանում է տարեգիր-ժամանակագիրը, շատ դեպքեր ու երեւույթներ հրամցվում են գեղարվեստի ավանդական «կանոններից» անկախ, արագ՝ ճեպանկարային գծագրությամբ: Սրան նպաստել է նաեւ ժամանակի հրամայականը: Արցախյան ազատամարտի առաջին տարիներին պետք էր ճշմարտությունը հասցնել ժողովրդին, ցույց տալ, թե ինչպիսի խարդավանքների, քաղաքական սահարանների ու կամայականությունների ճանապարհներով են թուրք-ազերիների լիդերները, համագործակցելով բուլշեւիկների ու անգլիական մավթամուղ գործակալների հետ, 1918-1921 թվականներին, իրագործել իրենց ստոր խաղերը եւ տիրացել ոչ միայն հայոց Արցախին ու Նախիջեւանին, այլեւ ամեն կերպ ջանացել Հայաստանից պոկելու նաեւ Չանգեզուրը: Ինչպես ասում են՝ հապաղելու ժամանակ չկար, եւ վիպասանն ասել է իր արդար ու անկեղծ խոսքը՝ թող որ մի քիչ վնասելով գեղարվեստականության գործոնին:

Ս.Խանգադյանի հիմնական նպատակներից մեկը եղել է գլխավոր հերոսին պատկերել որպես ազգային գաղափարախոսության տեսաբան ու պրակտիկ անձնավորություն: Հստակորեն գիտակցելով, որ թշնամին մոլեգնորեն սրում է ժամիքները, «յաթաղան տնկում» հայի դեմ: Նժդեհը սթափության էր կոչում հայությանը: Նա համարձակորեն դատապարտում էր պարոնայք անգլիացիներին, որոնք սրբապղծորեն Ղարաբաղը եւ Չանգեզուրը համարում են թուրք-ադրբեջանական՝ հարբած Բաքվի նավթահորերին տիրանալու հեռանկարից: Դեմ լինելով կուսակցական մանր շահախնդրություններին ու գծություններին՝ հանում ազգայինի ու հայրենիքի պայքարելու ու հարկ եղած դեպքում մարտիրոսանալը դիտում էր իբրեւ հայ մարդու սրբազան գործ: Հավատ ու վստահություն սեփական ուժե-

րի նկատմամբ, «վերջ տալ խեղճությանն ու խղճահարությանն սնանկ գաղափարին: Ուժը գեների մեջ է: Պետք է հենվել ոչ թե անհատների վրա, թեկուզ նրանք ամենագոր լինեն, այլ՝ համախումբ բռունցքի վրա: Մեր նպատակն է ազգային ազատության հասնել...»: Այս տրամաբանությամբ Գարեգին Նժդեհը համոզված էր, որ «Մեր ապագան կախված է ներկայից: Վաղը ազգովի պիտի հնձենք այն, ինչ սերմանում ենք այսօր»: Սույն գաղափարին համահունչ է նաև ազգային գործի մի այլ համոզմունք՝ փրկություն հուսալը արտաքին ուժերից՝ դժբախտություն է, հավատը Եվրոպայի հանդեպ՝ կույր ծգտում, խոտոր ճանապարհ: «Եվրոպացու հոգին խորթ է մեզ: Մեր ժողովրդի առաջնորդները մոլորությամբ հաճախ են մեզ մղել քաղաքական մուրացկանության: Իմացքե, մուրացիկին օգնում են զզվանքից: Մուրացիկին ու հաշմանդամին անկելանոց են տալիս, ոչ թե հայրենիք»:

Հայրենիքի ու հայրենասիրության ըմբռնումները կազմում են «Գարեգին Նժդեհ» վեպի հիմքը, իսկ գլխավոր հերոսն այդ ըմբռնում-համոզմունքների մարմնացումն է: Նրա համար հայրենիքը տեղական-աշխարհագրական նեղ հասկացողություն է, ամբողջ Հայաստանն է՝ պատմական իր ողջ տարածքներով: Եվ երբ Լեռնային Ղարաբաղի գլխին կախվում է ահավոր վտանգը՝ բռնակցումը Ադրբեջանին, Նժդեհը, որքան էլ Ջանգեզուրի վիճակը նույնպես ծանր, հայտարարում է, թե «Ղարաբաղը եւս Հայաստանի անբաժան մասն է, եւ Սյունիքը ամեն ինչ կանի Ղարաբաղը փրկելու համար»:

Ս.Խանգաղյանի կերտած Նժդեհի առանձնահատկություններից մեկն էլ դիվանագիտական հմտությունն է: Հեշտ չէր թուրքիա-Ադրբեջան-Անգլիա-բուլղարիայից Ռուսաստան քառակողմ խարդավանքներից գլուխ հանելը եւ դրանց դիմակայելը: Իսկ այդ ստոր խարդավանքներն ուղղված էին ամեն կերպ Հայաստանը ծվատելուն: Նժդեհը չէր հավատում բուլղարիկների խոստումներին, հավատացած էր, որ նրանք կամենում են հայերին պարտադրել Ադրբեջանի գերիշխանությունը, եւ Ջանգեզուրի բնակչությանը նախապատրաստում էր դիմադրության: Ստանալով Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինի հեռագրի օրինակը Օրջոնիկիձեին՝ այն մասին, թե «Ղարաբաղի ու Ջանգեզուրի մարզերը ոչ մի դեպքում չպետք է միացնել Ադրբեջանին», Նժդեհը համոզված էր, որ չի կատարվի Չիչերինի ցանկությունը, քանզի «Կրեմլը Քեմալ փաշայի մեջիղն է: Քեմալը կթելադրի իր կամքը: Պետք է պատրաստ լինել»: Եվ իրականանում է նրա կանխատեսումը. Կրեմլում չեն լսում Չիչերինին: Ադրբեջանը, որ երեկ թուրքիայի դաշնակիցն էր, այսօր դառնում է նաև Ռուսաստանի դաշնակիցը, իր գորքերը միացնում բուլղարիկների կարմիր դիվիզիաներին, հարձակվում Ջանգեզուրի վրա: Վիպասանը փաստում է. «Նոր փոթորիկ պայթեց հայոց երկնակամարում: Խորհրդային Ռուսաստանի տասնմեկերորդ բանակը մտել է Բաքու... Գարնամային անձրեւը դարձավ կրակե կարկուտ: Ադրբեջանի կառավարությունը աղուհացով է դիմավորել խորհրդային զորքերին, իրեն հայտարարել խորհրդային: Բաքվում շտապ ստեղծվել է կառավարության նոր կազմ: Բոլոր նախկին մուսավաթ բեկերն ու խաները մի գիշերում իրենց հռչակել են բուլղարիկ: Հայոց երկնակամարը մշուշվեց կարմիր մառախու-

ղով»: Պատմական իրադարձությունների կտրուկ փոփոխությունը Անդրկովկասում, Ս.Խանգաղյանի դիտարկումներով, գլխավոր շրջում է քաղաքական կացությունը նաև Հայաստանում: Ղարաբաղում շարունակվում են հայերի հալածանքներն ու կոտորածները: Սարդարապատի հերոսական ճակատամարտի շնորհիվ անկախ հանրապետություն հռչակված Հայաստանը կորցրեց իր ինքնությունը: Նժդեհը հասկանալով քաղաքական իրադրության բարդությունը՝ վճռում է պահպանել Լեռնահայաստանի անկախությունը: Կապանի ռազմական խորհուրդը, նրա գլխավորությամբ, չի ընդունում կարմիր բանակի հրամանատարության առաջարկը՝ զենքը վայր դնել, ենթարկվել Ադրբեջանի գերիշխանությանը: Լեռնահայաստանը հռչակվում է ինքնավար, եւ գերագույն իշխանության վարչապետ ու զինվորական ուժերի գլխավոր հրամանատար է դառնում Գարեգին Նժդեհը: Նա ժողովրդին կոչ է անում հավատարիմ մնալ Ղալիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի ավանդ-պատվիրաններին, անբասիր ծառայել հայրենիքին, քանզի միայն ժողովուրդը «կարող է ապահովել մեր ցեղի փրկությունը, մեր գեների ուժով»:

Կերպարի բնավորության արմատականությունն ու հերոսականությունը Ս.Խանգաղյանը ցույց է տալիս թե ռազմական գործողությունների մեջ, թե դրանց տակտիկական ու ստրատեգիական պլանները մշակելիս, թե հակառակորդների նկատմամբ իր դիրքորոշումներում:

Կարմիր բանակի հրամանատարությանը դիմելով՝ Նժդեհը մեղադրում է նրանց «ըմբոստ ու ազատասեր հայոց Ղարաբաղը» խաբեությամբ, ավարի ու ավերածության մատնելու եւ Ադրբեջանին հանձնելու համար: Ժողովրդին ուղղած խոսքում նրա կոչը սուր է եւ արմատական: Անխառն հավատքի ու անընկճելի կամքի արտահայտություն է այդ կոչը. «Ջանգեզուրի ու Ղարաբաղի հայեր»:

Հայկական սեւ լեռների հերոսներ. Հայեր: Մենք միշտ հրաժարվել ենք մեր գլուխը խոնարհելուց եւ միշտ գործել ենք մեր ազգի իրավունքների օգտին, մեր նահատակված եղբայրների ու քույրերի հիշատակները սուրբ պահելու երդմամբ:

Այսօր մենք մնացել ենք առանց բարեկամների: Մինչեւ անգամ Ռուսաստանը, որի վրա երեք հարյուր տարի մեծ հույսերով նայում էր մեր տանջված ժողովուրդը, մեզ դավաճանեց եւ ձեռք-ձեռքի տված Քեմալ փաշայի, Խալիլ փաշայի, Նուրի բեյի, Քերբալա խանի ավազակային բանդաների հետ, քարուքանդ է անում մեր գյուղերը, ներս է խուժում մեր լեռները, որպեսզի արյան հեղեղների մեջ խորտակի մեր մանուկ ազատությունը...»: Այնուհետեւ Նժդեհը հույս է հայտնում, որ կբացվեն խաբված ռուս ժողովրդի աչքերը, եւ ռուս զինվորները չեն գնա փոքր հայ ժողովրդի ազատության դեմ: Նա կոչ է անում համախմբվել ու միասնական ուժերով կռվել հայրենիքի ազատության համար:

Գիշտ է, հոգեբանական-վերլուծական կողմը նկատելիորեն զիջում է հրապարակախոսական պաթոսին, հերոսի բնավորության մեջ քարոզչականը քիչ տեղ չի զբաղեցնում, սակայն վեպ-ժամանակագրության ժանրային հայտանշաններից է դա, որ մի տեսակ պարտադրաբար ստիպում է նյութը «զննել» նաև հրապարակախոսային-քարոզչական ձևերով:

Ոչ միայն Գարեգին Նժդեհն է հաճախ քարոզիչ-հրապարակախոսի թիկնոց առնում իր ուսերին, այլև ինքը՝ Ս.Խանգաղյանը նույնպես, բազում հատվածներում մի կողմ դնելով արվեստագետի գրիչը, ստանձնում է հրապարակախոսի դեր, կրքոտ ու շիկացած խոսք հղում հայ ժողովրդի թշնամիների դեմ՝ անկախ դավանանքից, կուսակցական պատկանելությունից ու ազգային նկարագրից: Դա երեւում է հատկապես Իոսիֆ Ջուղաշվիլի Ստալինի հայադավ քաղաքականությունը մերկացնող էջերում: Ստալինը Լենինին համոզում է, որ արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինի պահանջը թուրքերին՝ դատարկել Վանը, Մուշը, Բիթլիսը հոգուտ հայերի, «տխմար եւ սարդիչ պահանջ է», քանի որ այդ վայրերում, իբր, «խոշոր գերակշռությամբ թուրքեր են ապրում եւ դրանք թուրքական նահանգներ են»: Ապա Ստալինը շարունակում է. «Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է Չիչերինին արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով հուշագրեր ուղարկել թուրքերին»:

Այս հարցում, ինչպես գրում է Ս.Խանգաղյանը, իհարկե, «Լենինը հնազանդվում է Ստալինի կամքին» եւ հայկական հողերը վաճառում թուրքերին: Վիպասանը դա հայ ժողովրդի դեմ բռնաբարության առաջնորդների անենամենգ գործողություններից մեկը համարելով, ուղղակի ցույց է տալիս, թե ինչպիսի հանցավոր քաղաքականություն են դրսևորում նրանք ընդդեմ Հայաստանի ու հայ ժողովրդի: «Ռուսաստանը թուրքիայի հետ ոչ մի վիճելի հարց չունի», «Հայաստանը պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն Մեծ Հայաստանի վերաբերյալ դաշնակցականների իմպերիալիստական ծրագրերից, այլև հնարավոր է նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ցանկությունից... Հայաստանին ուրիշ բան չի մնում անել, քան հաշտվել դրա հետ եւ համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել եւ իր երբեմնի հողատարածքները, եւ իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները...» եւ այլն, եւ այլն: Նման մի շարք ուրիշ զառանցագին տեսակետներ էլ բերելով՝ վիպասանն ուղղակի ակի մեջ է դնում խորհրդային լիդերների հակապատմա-

կան ու հակահայկական, ինչու չէ, նաեւ հակամարդկային սկզբունքները, որոնք փաստորեն իրականացվեցին կյանքում՝ ոտնահարելով հինավուրց մի ժողովրդի ազգային շահերը:

Վեպում Գարեգին Նժդեհի կողքին հեղինակը փորձել է մարմնավորելու նաեւ Դրոյի, Թեւան Ստեփանյանի ու մի քանի այլ հայտնի գործիչների կերպարներ՝ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյան, Վահան Խորենի, Գեղեոն Տեր-Մինասյան, Արշակ Շիրինյան, Արտեմ Խանգաղյան, խմբապետ Սաքո Յապոն, Խաչատուր Մալինցյան եւ ուրիշներ: Դրոյի եւ Թեւանի կերպարներին համեմատաբար քիչ է անդրադարձել, եւ, բնականաբար, ամբողջական բնավորություններ չեն դարձել: Իսկ մյուսները, ովքեր գործել են Նժդեհի հետ ու նրա կողքին, մի տեսակ մնացել են սովորում:

Կանացի կերպարներից Ծիածանը, Աստղիկ Սաֆռազբեկյանը, Նժդեհի կինը՝ Գոհարը, ավելի կենդանի են ստացվել:

Վիպասանը մերթընդմերթ դիմել է վերհուշի հնարանքին, հաճախ բնության պատկերների միջոցով արտահայտել հերոսների տրամադրությունները, ներաշխարհի հուզապրումները: Սակայն երբեմն դրանք չեն հասնում իրենց նպատակին, դուրս են մնում բնագրից:

Վլադիմիր Մայակովսկու միտքը քիչ վերափոխելով՝ Ս.Խանգաղյանը կարող էր ասել. «Ես այնտեղ եմ, որտեղ ազգի ցավն է»: Գարեգին Նժդեհը հայ ժողովրդի հպարտություններից է, բայց եւ նրա այրող ցավը: Անվանի գրողը մեկ անգամ չէ, որ հայտնվել է ազգային ցավերի հանգուցակետերում, հիշենք նրա պատմավեպերը, հիշենք «Անդրանիկը», «Շուշին»: Գարեգին Նժդեհի հերոսական պայքարի ուղին Ս.Խանգաղյանը հասցրել է մինչեւ 1921 թվականի հուլիսի 10-ը, երբ ազգային-նշանավոր գործիչը ստիպված թողեց հայրենիքը: Թողեց հաղթած, բայց հեռանալու ցավը ծրարած սրտում: Ազգային հպարտության ու ցավի զեղարվեստական մարմնացումն է Ս.Խանգաղյանի Գարեգին Նժդեհը:

### Ծանոթագրություն

Սերգեյ Սարինյան, «Սերունդներ եւ ավանդներ», 1984թ., էջ 224:

## «ՈՒՆԿՆԴՐԵ ԶԱՅՆԻՍ»



Սերո Խանգաղյանի «Անդրանիկ» վեպը

### ԱՐԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ

Նա քայլում էր Երեւանի փողոցներով՝ իր ազգի պատմությունն աչքի առաջ: Կանգնում, նայում էր իր ժողովրդին, խոսք էր փոխանակում իր գրչա-

կից ընկերների հետ, նայում էր մեզ՝ նորերիս... ու շարունակ փնտրում էր մեկին: Մեզ ասում էր, թե հայոց պատմությունն ինչ-որ տեղ ընդհատվել է՝ շարունակող է պետք: Ասում էր՝ ձեր մեջ ապրում են ձեր նախնիների խորհրդավոր ձայները, կանգ առեք՝ չե՞ք լսում, մի՞թե... Մարդկանցով շրջապատված՝ գրեթե միշտ մենակ էր:

Ես իրեն տեսել եմ այդպես՝ մենակ, ու համոզված էի, դեռ այն ժամանակ՝ դժվար 90-ականներին, որ այս մեծ մարդը գտել է իր երազը: Ինքն էր ստեղծել, ինքն էլ հավատում էր: Հավատում էր, որ մեր մեծերն անմահ են, ապրում են մեր կողքին ու մեզ հետ են: Հավատում էր, որ իր ազգի մեծ կռիվն ավարտված չէ՝ դեռ որոտում էին հրանոթներն իր աշխարհում, ընկնում էին քաջերը, ծածանվում էին մեր իշխանաց դրոշմները, գրոհում էին հայոց հեծելազորն ու հետեսակը... Եվ այդ ամենն իր աչքի առաջ, ամեն օր, Գորիսում, Երեւանի ճանապարհին, Երեւանում, Բաղրամյան փողոցում՝ Գրողնե-

րի տան դեմ դիմաց...

Այդպես, այդ խոհերի մեջ մի օր նայեց իր ազգի նոր քաջերին ու հասկացավ, որ իր ցեղն անմահ է: Նման էր իմաստուն դերվիշի, որ այդ գաղտնիքը գիտի՝ մեծ գաղտնիքը: Եվ այդ գաղտնիքը մենք էինք, ու մեջ փնտրում էր վիպական իր հետոսներին:

Հայաստանը նմանեցրել էր անվերջ ու անծայր մի բուրաստանի, ուր ամեն տարի ծաղիկներ են ծաղկում, նոր ծաղիկներ: Դրանք իր երկրի տղաներն ու աղջիկներն են, որ Հայրենիքը լցնում են ծափ ու ծիծաղով: Ամեն գարնան ծաղիկների հետ նոր քաջեր են ծնվում ու նոր գեղեցկուհիներ: Ու երբ կանչում է Հայրենիքը, ու երբ գալիս է ժամը՝ տղերքը զենքն առած սահման են գնում՝ կռվելու անարգ թշնամիների դեմ: Ասում էր՝ կռվող տղերքը մեծ սիրահարներ են, որ զոհվել գիտեն հանուն Սիրո...

## ՎԵՊԻ ԲՆԱԲԱՆԸ

1989-ին լույս տեսած «Անդրանիկ» վեպը բնաբան ունի. «Ի սիրո հղացեալ ծնանին զամենայն բարիս հոգեւոր եւ մարմնական: - Սա դարձնելով նշանաբան, հանդգնեցի շարահյուսել այս գիրքը:

Նահատակ ժողովրդի աղաղակը հնչում է իմ ծանրացած ականջներում, բախում իմ հոգու դռները: Վերստին ու կրկին արյունոտվում է իմ սիրտը, նորոգվում են իմ ցավերի վերքերը:

Մեծ ցավի ծնունդ է այս գիրքը: Կարդացեք ու զգաստացեք, մարդիկ: Գուցե սա օգնի ձեզ, որ կանխեք ձեր զլխին եւս ծանրացող պատուհասները եւ ոչ թե «գալուց հետո դիմակայեք»:

Կատարեցի «ոչ հեղուկեամբ, եւ ոչ անզուշուրեամբ վրիպեալ, եւ ոչ կամավոր սխալանօք»:  
Ունկնդրե ծայնիս»:

Գրողի ճակատագրում կարելուրդ կենսափորձն է: Նախքան «Անդրանիկ» վեպի ծնունդը Սերո Խանգադյանն անցել էր մեծ ճանապարհի, կուտակել հարուստ կենսափորձ:

Եվ հպարտությամբ էր պատմում, որ ծնվել է Գորիսի հսկա մի ժայռի տակ՝ կիսավեր քարանձավում, տեսել մանկություն՝ գրկանքներով լի, դասերից հետո գիրքը ձեռքն առնելու փոխարեն անտառ էր գնում՝ ձմռան փայտ բերելու: Հետո ծննդավայրի մանկավարժական տեխնիկում, ապա ուսուցչի աշխատանք հայրենի գյուղերում, ապա մասնակցություն Հայրենական մեծ պատերազմին: Իր կյանքի տարիներն էին, որ հիմք տվեցին գրականագետ Սուրեն Աղաբաբյանին եզրահանգելու՝ «Խանգադյանը գրականություն մտավ հարուստ կենսափորձով»:

Ժողովրդի մարդ էր՝ ժողովրդի կյանքով ապրող, իսկ գրականության մեջ նախընտրեց իր նախնիների ճամփան: Եվ իր մասին պատմում էր այնպես, ինչպես հները հիշատակարան էին գրում. «Եվ այսպես, ես՝ Սերո (Սերովբե) որդի Նիկոլայի՝ որդվո Առաքելի, ի մեծ եւ լավահռչակ տոհմից Խնձատին, ի գեղջից Գորիս՝ Երկիրն Սյունյաց, պատանի տարիներիցս սկսած, ուր որ գնացի՝ թե քաղաք, թե գյուղ, գրեցի դրանց մասին: Ուստի կամք արեք եւ ողորմի հիշելով՝ բարեխոս եղեք, ով ընթերցողներ, հորս, որի անունը տվի, եւ մորս՝ Վարդանուշ

Ձիւֆուդարյանց-Մելիք-Օհանյանցին, եղբորս՝ Սամվելին, որ հանգավ ծաղիկ հասակում, մյուս եղբորս՝ Սուրենին, որ իմ բարեկամ ոգեւորիչն էր մինչեւ հեռանալը կյանքից...

...Եվ եթե ինչ-ինչ սխալմունք կամ թերացում գտնեք իմ այս գործի մեջ, մի ուղղեք թեկուզ ողջախոս կամքով, այլ ներող եղեք եւ ինձ ներումն շնորհեցեք, քանզի կար իմ այս էր... »:

«Մեր գնդի մարդիկ» (1949) վեպին հաջորդեցին «Հողը» ու «Քաջարանը», սակայն գրողի կյանքի գործը դարձավ նրա պատմական վեպերի շարքը՝ «Մխիթար Սպարապետ», «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Թագուհին հայոց» եւ այս շարքում վերջինը... «Անդրանիկ»: Իր վերջին վեպն արժանիորեն չզնահատվեց, չհասկացվեց... Մինչդեռ երբեք այսքան տագնապ ու հույս չէր եղել իր սրտի մեջ՝ գիտեր, որ մեծ Ջորավարի կյանքում հայտնաբերել է ժողովրդի գոյության առեղծվածը, ուզում էր, որ լսենք իրեն՝ ահա ինչու՝ ունկնդրե ծայնիս...

Վեպը պատմում է մեզ եղելություններ՝ հարյուրամյա վաղեմության: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներն են՝ սարսափի ու սոսկումի տարիներ: Մեծ տերություններ են ելել միմյանց դեմ՝ օր չի լինում, որ պատերազմ չհայտարարեն իրար: Փոխվեց աշխարհը՝ լցվեց ատելությամբ ու չարով: Եվ սոսկումի ու մահվան այդ հողմերի մեջ միայնակ կանգնած մաքառում էր հայը: Վեպում բազմաթիվ հերոսներ կան, սակայն միայն մեկին է վիճակված իր ժողովրդի հոգին ցուցանել ամբողջականորեն՝ ազգային հերոս Անդրանիկին: Միայն նրա մեջ է խտացված հայի ողջ ուժն ու իմաստությունը: Սա Անդրանիկի կենսագրությունը չէ, այլ մեր ազգի տառապանքի ու հերոսացման տարեգրությունը:

Դրվագ առ դրվագ ներկայացվում է ժամանակը, տեսնում ենք տեղահանություն ու սարսափ, մահ ու հերոսացում, տեսնում ենք Դիմանի հաղթանակն ու այդ հաղթանակը կերտող հերոսին՝ Անդրանիկին: Ոտքի է ելել առասպելական հերոսը՝ իր քաջազուն ընկերոջ հետ հայոց պատիվը փրկելու:

Սա մի էպիկական ասք է՝ հերոսական պատմություն մեծ Ջորավարի՝ Անդրանիկի ու նրա հերոս զինվորների մասին: Դիմանի հաղթանակից հետո, երբ պարզ եղավ, որ թշնամու պարտությունը կատարյալ է, Անդրանիկը գնաց նախ իր վիրավոր զինվորների մոտ: Ծունկի եկավ Ձեթունցի Հովհաննիս առաջ, Հաջի Գեւորգն արգելեց՝ ձեռք մի տուր, թող հանգիստ փչի շունչը: Գնդակը կտրել էր քաջի կոկորդը, արյունը ցայտում էր շնչի հետ: Ու մեկ էլ մեռնող ֆիդային ոտքի ելավ՝ Անդրանիկին իր վերջին հրաժեշտը տալու, վերջին խոսքը խոսելու համար: Խոսեց ու այդպես էլ կանգնած փչեց շունչը, մեռավ ոտքի վրա: Խանգադյանի առասպելական հերոսները, որ չգիտեն հանձնվել, մեռնում են այդպես՝ ոտքի վրա: Այդպես էր հոգին տվել Գեւորգ Չաուշը՝ մեջքն ուղիղ, ոտքերը լայն դրած:

## ՄԵՐ ԱԶԳԻ ԶՈՋԵՐԸ...

Կռվում, հաղթում, զոհվում են մեծերը, բայց նրանք չեն ուղղություն տալիս մեր նավի քաղաքական ընթացքին: Ահա այն օրերին ու այն ժամանակ, երբ այսպես զոհվում էին հայ ֆիդայիները, մեր քաղաքական առաջնորդները՝ ազգի ջոջերը, իրար հետ լեզու չէին գտնում, չկարողացան միասին ու միասնական լինել: Թուրքական լծի դեմ ապստամբող

ամեն ազգ իր առաջնորդն ուներ, մենք՝ մի քանիսը: Ահա ինչու ազատագրության մեր հույսը հույս էլ մնաց: «Մեր ազգի ջոջերը կամ անկարող անկյալներ են, կամ դավաճաններ»՝ Անդրանիկի այս խոսքերը ընթերցողի ունկերում հնչելու են հավերժ: Օղեսայի հայ ուսանողները վառել են իրենց գրքերը, կրակի մոտ ծունկի եկել, երդվել ինքնագոհ նվիրվել հայրենիքին: Դրիմի հայ պատանիները գենք են վերցրել ու ոտքով գալիս են Չայաստան՝ ազգի համար կռվելու: Նրանք երգում են. «մենք Անիում կստեղծենք մեր օջախները եւ տաք բարուրներ կկախենք մեր հարսների շլինքներից»: Աստաբա-նից աղջիկ կամավորներ են եկել՝ Քրիստոսի խաչելության պատկերներ ձեռքներին՝ Տիրոջ նման գնում են դեպի Գողգոթա: Բայց՝ «հույսե՛ր, հույսե՛ր...»: ասում է հեղինակը: Չույսեր, որ չեն արդարանալու:

Նրանք, ովքեր առաջնորդում էին ազգին, սխալվեցին: Հավատացած էին, որ փոխվել է թուրքը... Վեպում նրանց հետ էլ ընդհարվում է Անդրանիկը. «Դուք հաշտվեցիք թուրքերի հետ, բայց ինձ թույլ տվեք անհաշտ մնալու»: «Եվրոպայում իր ընկերներից շատերն ընկան դմենդում՝ մերթ Անգլիայի, մերթ Ֆրանսիայի օգնությանը դիմելու եռանդով: Ինքը փշաքաղվում էր. «Մի վստահեք, հույս մի կապեք օտարների խոստումներից: Նրանց սրտացավ երեւացող խոսքերից արյան հոտ է գալիս: Կխոստանան ամեն բան ու, երբ գա պահը, կլքեն մեզ: Փորձ ունեն: Մեր պայքարը պիտի հյուսել ժողովրդի ուժից»:

Նրանք, ովքեր առաջնորդում էին ազգին, դիվանագետ չեղան: Ու այդպես միամիտ, այդպես պարզուկ կանգնեցին թուրքի դիմաց, որ նենգ էր ու վախկոտ, բայց կարողանում էր ռազմի դաշտում կրած իր պարտությունը բանակցելիս հաղթանակ դարձնել: Անդրանիկը միշտ հաղթել է, բայց հենց իր գերի վերցրած թուրքից պիտի լսի՝ իմացիր, հայ, եթե թուրք պահակը քնած է, արթուն է թուրք դիվանագետը, թուրք զինվորը կարող է պարտվել, թուրք դիվանագետը՝ երբեք...հիշիր ասածներս:

Վեպում ազգային ջոջերի վարքին ու արկածախնդրությանը հակադրվում է ժողովրդական իմաստությունը, որի կրողն է Անդրանիկը: Մենք սխալներ ենք թույլ տվել, իր վեպով մեզ հետ խոսում էր գրողը, որովհետեւ առաջնորդել են մեզ քմահաճ ու կամակոր այրեր, որ չեն ճանաչել ոչ իրենց հայրենիքը, ոչ իրենց ժողովրդին: Ժողովուրդ հայոց, ԱՌԱՋՆՈՐԴ ընտրիր նրան, ով քո սրտից է ելել, ով քո հոգին գիտի, ով սիրում է քեզ, ով հարազատ զավակն է քո, ով կգա ոչ թե իշխելու, այլ ծառայելու...

Ունկնդրե՛ ծայրնիս...

## ՄԵՌՆՈՂ-ՀԱՌՆՈՂ...

Մերո խանգաղյանը վարպետ է պատմավեպի ողջ տառածքում՝ գործողությունն նկարագրելիս, կերպար կերտելիս,

գաղափար առաջադրելիս: Սակայն մի հանգամանք կամ դրվագ պետք է հավանաբար շեշտենք՝ դա վեպի վերջաբանն է:

Իր ողջ կյանքը հայրենիքին նվիրած հերոս Ջորավարն իր զոհողությամբ ու ջանքով կերտված անկախ պետության մեջ իր տեղն այդպես էլ չգտավ՝ ավելորդ էր ու նույնիսկ խանգարում էր երկրի նոր տերերին: Նա պիտի հեռանար, բայց հեռանալուց առաջ զրույցի բռնվեց Վաղարշապատի մի խումբ որբուկների հետ, որ հաց էին խնդրում ու փող: Ջորավարն ուզեց անուններն իմանալ, ու երբ լսեց՝ արցունքներ հոսեցին հերոսի աչքերից: Աղբյուր Սերոբ, Գեւորգ Չաուշ, Չրայր, Արաբո՝ այս անուններն առած որբուկ տղաները կանգնել, իրեն էին նայում: Լացում էր Ջորավարը՝ իր ընկերներն էին, կենդանացել, նայում էին մանուկ աչքերի աշխույժով:

Ոչ մի տեղ դուք սա չեք կարդալու, միայն այս վեպում Անդրանիկն իր սուրը կհանձնի ոչ թե Կաթողիկոսին, այլ այս տղաներից մեկին, ձին էլ կտա, կասի՝ քչիր դեպի Սասուն: Ու միայն այն պահին, երբ կայտառ երեխան, Ջորավարի սուրն առած, Ջորավարի ձիով արշավում էր դեպի Սասուն, Ջորավարը կհարցնի՝ անունդ չիմացա, անունդ...

ԱՆԴՐԱՆԻԿ՝ Կ՝ կտարածվի տղայի ծայրը Ջորավարի հարցին ի պատասխան...

ԱՆԴՐԱՆԻԿ՝ Կ՝ մինչ այսօր ու հավերժ արձագանքելու է մեր հոգում:

Ու իմ ցեղի բոլոր տղա-երեխաներն ինձ ու բոլորիս այսուհետ նայելու են Անդրանիկի աչքերով: Ու ամեն մի տղա-երեխայի մեջ պիտի ծնվի, պիտի ապրի ՆԱ՝ մեր ազգի ամենամեծ ՅԵՐՈՍԸ: Պիտի քայլի հայոց հողի վրա, իբրեւ արծիվ պիտի սավառնի հայոց երկնքում, պիտի մեր թշնամյաց ահ ու սարսափը դառնա, պիտի հսկի իր ժողովրդի անդորրը: Եվ Անդրանիկի մասին հյուսված երգերին ու լեգենդներին ավելանալու է նաեւ այս մեկը՝ վեպի վերջաբանը:

Ու հավատալու ենք, որ Անդրանիկը Չայաստանից հեռանալուց առաջ իրոք հանդիպել է Վաղարշապատի որբուկ տղաներին:

Հավատալու ենք, որ Անդրանիկն իր սուրը տվել է այդ որբուկներից մեկին: Հավատալու ենք, որ փոքրիկ տղայի անունը հենց Անդրանիկ է եղել:

Հավատալու ենք, որ Անդրանիկն ու իր ֆիդայի ընկերները Չայոց լեռների աստվածներն էին՝ Չայոց աստվածների նման մեռնող-հառնող:

Հավատալու ենք, քանի որ այս պատմությունն արդեն պատմված է, իսկ մեր ազգի մեծերը, երբ մեզ համար ուզում էին բացել ամենամեծ գաղտնիքն ու ճշմարիտն էին ուզում պատմել, խոսում էին մեզ հետ հայ վեպի էջերից...



# Շտապեցե՛ք լսել կյանքի ձայնը



## ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ս**երո խանգաղյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր պահվում են Հայաստանի ազգային արխիվում, որտեղ փաստաթղթերի գիտատեխնիկական մշակումից առաջացել է 1929, 1996 ծայ-

րային տարեթվերն ընդգրկող 1291 պահպանման միավոր, որ ընդգրկում է գրողի ստեղծագործությունները, տարբեր հեղինակների աշխատանքների գրախոսություններ, կարծիքներ, նամակներ, հուշեր, ելույթների տեքստեր, տարբեր գրառումներ, կենսագրական նյութեր, լուսանկարներ եւ այլն:

Մանկավարժական տեխնիկումի երկրորդ կուրսի ուսանող էր, երբ իրեն «դատում» էին Իսահակյանին պաշտպանելու համար, որին ի պատասխան խանգաղյանը գրել է, որ «Աբու Լալա Մահարի» պոեմը՝ իր ծեւով եւ փիլիսոփայական խոր ընդհանրացումներով, եզակի է հայ գրականության մեջ եւ դրա փառքերից մեկը, ինչու չէ, նաեւ համաշխարհային պոեզիայի գանձերից մեկն է: Պոեմի հերոսը մարդն է, որ թեւեւ կոնկրետ անուն ու միջավայր ունի, բայց ընդհանուր է, ինչպես արեւի ճառագայթների խտացումը ոսպնյակի մեջ: Այդ խտացումից հնարավոր է, որ հրդեհ առաջանա: Եթե ոմանք այս պոեմը համարում են անկումային, ապա սխալվում են, քանզի եթե այն անկումային լիներ, մարդը դեպի արեւ չէր գնա: Արեւը կյանքի միակ ու հզոր ակունքն է, կյանքի հարատևության խորհրդանիշը, մաքրության, ջերմության, կենդանացնող աղբյուրի հնարավորությունը, ինչպես նաեւ ազատության խորհրդանիշը: Գնալով դեպի նա՝ մարդը գնում է դեպի իր երազած կյանքը, որտեղ չեն լինի ո՛չ ճնշող, ո՛չ ճնշվող, ո՛չ կեղծիք եւ ո՛չ խաբեություն: Եվ փախչել մարդուց նշանակում է փախչել չարից՝ վատից, տմարդուց, կեղեքողից, խաբեբայից: Աբու Լալա Մահարին փախչում է կռվելու համար չարի դեմ, վերացնելու մարդկային արատները:

«Դեպի արեւը, այսինքն՝ մարդկության ազատ ապագան, դեպի մարդու փրկությունը: Այսպես են ես ընկալում Իսահակյանի այս հանճարեղ պոեմը եւ այսպես էլ, կարծում եմ, ընկալում են նրանք, ովքեր հասկանում են բանաստեղծության իմաստն առհասարակ եւ նրա նպատակը», - գրում է նա:

«Անելիքներ շատ ունենք» եւ «Մեր գրականության զարգացման մի քանի խոչընդոտների մասին» հոդվածներում (1960թ.) քննադատելով ստալինյան «ժառանգությունը»

եւ հատկապես անհատապաշտությունը՝ նա նշում է այն բոլոր արատավոր երեւույթները, որ անհատի պաշտամունքը բերեց: Նա նշում է, որ այդ շրջանում մոռացվել է կենդանի մարդը, որ եւ վիշտ ունի, եւ կարոտ: «Գրականությունը առանց ծխածակույթի պետք է ցույց տա անհատի պաշտամունքի տարիներին մեր ժողովրդի կրած զրկանքներն ու տառապանքները: Գրողները պետք է զբաղվեն ժողովրդի անցյալի արժեքների գնահատման հարցերով: Չարենց, Բակունց, Մահարի եւ շատ այլ նշանավոր գրողներ դուրս մղվեցին, եւ հիմա պետք է այդ նշխարներին հարություն տալ՝ Անդրանիկ Ջորավար, Մեծ եղեռն, Սարդարապատի հերոսամարտ եւ այլն: Մոռացվել են ազգային տոներ, ազգային լեզուն, ազգերի հոգեբանությունը, գրականության մեջ վարձկան անհատները զոչում էին, թե իրենք Սահարան անգամ կկենդանացնեն, երբ երկրում հաց չկար, եւ հողը շատ տեղերում անտեր մնալուց մեռնում էր: Եվ այդ զրջակները համարվում էին հանճարներ: Այժմ մեզ՝ գրողներիս մնում է լիովին շրջվել դեպի ժողովրդական մեծ կյանքը, մեր փեշերից թափ տալ գունազարդման փոշին ու գրել ժողովրդի հոգուն հարազատ, նրան օգնող գործեր»:

Նա անընդհատ նշում է, որ ժողովրդի կյանքից հեռացել են գրողները, եւ գրողների պարտքն է զգուշանալ ապագային, ապաժողովրդական կեղծ նորարարություններից եւ մեր գրական երիտասարդությանը դաստիարակել դասական եւ սովետական գրականության իսկական նվաճումների ոգով:

Լեզվի մաքրության եւ հարազատացման հետ կապված խանգաղյանը հաճախ է տարբեր հոդվածներում արտահայտել իր մտահոգությունը: Մեր լեզվի հարստացման համար նա առաջարկում է գրողներին իրենց ստեղծագործություններում օգտագործել մեր բարբառային բառերը, քանզի այնտեղ են թաքնված բնիկ հայերեն բառերը, որոնցից ամեն մեկը մի աշխարհի արժե. «Իսկական գրողը նա է, ով հմուտ երկրաբանի նման պեղում է մեր բարբառների հաստ շերտերի տակ թաղված գանձերը, մարգարիտները եւ նրա միջից հանելով ոսկե հատիկներ՝ դնում է այսօրվա պետական լեզվի մեջ եւ դրանով կենդանի շունչ տալիս իր գրվածքին»: Բազում օրինակներ է բերում բարբառային բառերի, որոնք զեղեցիկ են իրենց հնչեղությամբ եւ ավելի իմաստալից, ինչպես օրինակ՝ քնափ, կեռիք, թագնել, շնթռել, քաշաթուխա, մոխկած եւ այլն, որոնք բառի նրբիմաստներ են ստեղծում: Լեզվի հարստացման գործում կարեւոր են նաեւ գրաբարյան բառերի կիրառումը, ինչպես նաեւ թարգմանիչների գործունեությունը: «Մեր բարբառներում մնացած բառերը բուն հայկական այնպիսի ոսկե հատիկներ են, որոնք, օտարամուտ չլինելով, խոսուն են, ճկուն, մանավանդ անփոխարինելի: Չեմ պատրաստվում կիրառման դեղատոմս առաջարկել, բայց կարող եմ ասել, որ յուրաքանչյուր բառ միայն իր տեղում է զեղեցիկ ու իմաստավոր: Գրողն ինքը պիտի հմտորեն այն կիրառի, այն կհարստացնի մեր լեզուն»:

Մեծի իրավունքով խանգաղյանը հաճախ է գրախոսել երիտասարդ գրողների ստեղծագործությունները՝ մեծ մասամբ նրանց ցույց տալով գրականության զարգացման ճիշտ ուղիներ, սատարելով նրանց: Նա երիտասարդ գրողներին խորհուրդ է տալիս պատկերել կյանքը, ունկնդրել կյանքի

ծայրը: Կյանքը՝ իր բոլոր կողմերով, դառնում է այն աղբյուրը, որ սնում է գրողին, սակայն դա դեռ բավարար չէ: Ժողովրդական գրողի առաջ դրվում է մեկ պահանջ եւս, այն է՝ մասնակից լինել հասարակական կյանքին, ծանոթանալ կյանքի բոլոր դժվարություններին, լինել երկրի տարբեր անկյուններում: «Կուզենայի, որ երիտասարդ արվեստագետն անվարան ու համարձակ մտնի կյանքի թանձրության մեջ, որտեղ բուռն է կյանքը, որտեղ հակասություններն ու բախումները կենդանի ու գործնական են: Այդտեղ էլ, լսելով կյանքի ծայրը, միանա նրան, դառնա մեծ կյանքի գեղարվեստական շեփորը: Շտապեցեք լսել կյանքի ծայրը», - գրում է նա:

Մի շարք հոդվածներից երեւում է, որ ժամանակին Խանձադյանը բախումներ է ունեցել գրաքննադատների հետ: Երբեմն գրողը նրանց անվանել է սարի սեռի խոտի պես բան, որ քամին որ կողմից փչի, այդ կողմ էլ կթեքվի՝ նրանց մեղադրելով անհիմն եզրահանգումների մեջ: Նրա կարծիքով՝ շատ հաճախ քննադատների պատճառով է, որ մեր գրքերը շատ ընթերցողներ չեն ընդունում, քանի որ դադարում են ինքնուրույն կարծիք հայտնել, նրանք կարծում են, թե քննադատները երկնքից ընկած մարգարեներ են եւ հիմք են ընդունում նրանց ասածը: Ուստի կոչ է անում տպագրել նաեւ գրողների գրածները քննադատների մասին, որպեսզի պատկերն ավելի պարզ լինի:

Նա դժգոհում է՝ ասելով, որ գրաքննադատությունը չի հասել բարձր մակարդակի՝ նեղ խմբակայնության ու մակերեսայնության մեջ դեգերելով՝ գրական քննադատությունը չի կարողանում գործնականորեն մասնակցել գրականության զարգացման ընթացքին: Նրա կարծիքով՝ քննադատությունն ընդհանուր գրական պրոցեսի մի մասն է, ոչ թե նրա կցորդը: Մի հոդվածում էլ մեղադրում է նշանավոր գրականագետ Սերգեյ Սարինյանին, որ անկեղծ չէ իր վերլուծություններում եւ քննադատում է՝ առանց համապատասխան օրինակների, մեջբերումների ու փաստերի:

1972թ. մի հոդվածում գրել է, որ գրաքննադատությունը շարունակում է հետ մնալ ոչ միայն գրականության առաջընթացից, նաեւ ժողովրդական կյանքից՝ որպես սկզբունք ընդունելով գրոհայնությունը, քան սկզբունքային հոգսերը՝ գրականագետների տեսությունները համարելով մակերեսային, փիլիսոփայական եւ գեղագիտական խղճուկ մակարդակի հասցված: Նա մեղադրում է գրաքննադատներին ազգային կյանքից, համաշխարհային գրական մտածելակերպից հեռու լինելու մեջ: Հոդվածներից նկատում ենք, որ արձակագիրը ոչ միշտ է բարիդրացիական հարաբերություններ ունեցել վերջիններիս հետ եւ մշտապես պատասխանել է նրանց քննադատություններին:

«Քննադատել պետք է, բայց ջարդարարություն անել պետք չէ եւ առավել եւս վնասակար է: Նման քննադատությունը հեղինակագրվում է գրական քննադատության երկարամյա գոյության այն չնչին փշրանքները, որոնցով նա՝ այդ քննադատությունը, հազիվ զգալ է տալիս ինքն իրեն, որ շունչը վրան է», - գրում է նա:

Ամենավերջում Չեխովի խոսքերն է մեջբերում. «Քննադատները նման են ձիաբռների, որոնք ձիերին խանգարում են

հող վարել, նստում են նրանց վրա, տոգզում եւ խանգարում, ուղղակի նրա բնավորությունն անհանգիստ է եւ իր գոյության մասին հիշեցնել է ցանկանում՝ տեսեք, ես էլ եմ հողի վրա ապրում, եւ ահա տեսնում ես՝ կարող եմ նույնիսկ բզզալ-տոգզալ, տեսեք՝ ես էլ կարող եմ»:

Շատ է կարեւորել երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունները՝ նրանց ոգեւորելով: Բանաստեղծությունը մարդկային հոգիների մերձեցման ամենավստահելի կամուրջն է: Հատկապես առանձնացնում է Դավիթ Հովհաննեսին՝ ասելով. «Ինչ ծեւով, ինչ ճանապարհով էլ որ նա տանի բանաստեղծական խոսքը, մի բանի է հանգեցնում, մի բան է բխեցնում, քեզ մտերմացնում է մարդու հետ՝ կենդանի մարդու, անշուշտ, այն էլ այնպիսի, որ չէի լսել, չէի ճանաչել: Ես չեմ փոշմանում նոր բարեկամ ունենալու համար, բանաստեղծությունն էլ պետք է ընդգծված կերպարներ ունենա: Ընդգծված ու բոլորովին նոր կերպար է Դավիթ Հովհաննեսը»:

Ինչպես նաեւ մի շարք նոր բանաստեղծների է գովերգում՝ նշելով, որ ունեն պայծառ ապագա՝ գրելով. «Մեր երիտասարդ գրողները չեն ննջում, թթվում տասնամյակներ առաջ մեր գրական շուկան հեղեղած պարունակության եւ շինծու ժողովրդական թղթերի հոսանքում: Նրանք ձգտում են համընթաց քայլել մեր օրերի եւ համաշխարհային ճշմարիտ պոեզիայի հետ: Լավ բանաստեղծ դառնալու ձգտումը դեռ կատարելությունն է, բայց խրախուսելի է, այն շատ հաճախ է արդյունքի հասցնում: Մեր օտարները մի թեւով հեծված են հինի, մի թեւով՝ նոր հորիզոնների»:

Նոր գրողները՝ ներքին խառնվածքով, մտածելակերպով, երբեմն նմանվում են, որ անհանգստացնում է Խանձադյանին, եւ վկայակոչում է մեր դասական բանաստեղծներին, ովքեր բնավ նման չեն իրար եւ դրանով են հարուստ: «Ծիրանի, դեղձի եւ նշենու տունկերը մինչեւ պտուղ տալը նման են իրար, բայց երբ պտղավորվում են, արդեն երեւում է յուրաքանչյուրի անհատականությունը՝ գույնի, համի, չափի, ձեւի մեջ», - եզրափակում է իր խոսքը:

Ռազմիկ Դավոյանի «Ռեքվիեմ»-ը վերլուծելով՝ գրում է. «Այստեղ հանգիստ չկա, սա կյանքի բուռն բաբախն է: Այն քարանձավաբնակ մարդուց մինչեւ իրթին ստեղծող մարդուն է պատկերում. սա խորապես մարդկային է՝ առանց թաղման արարողության ու հոգեհանգստի. սա կյանքի լույսի հաստատումն է՝ պղնձածուխ երգով: Մարդկությունն ու մարդկայնությունն այստեղ հանդես են եկել միագումար՝ իրենց խոր հակասությունների անդունդները փակելու տենչով: Այն մի չար ձեռքով մարդու վզին փաթաթված անեծքից սրբվելու, ազատվելու, դեպի կատարյալ տանող ոգու ճանապարհն է, որ մեզ մղում է դեպի կենդանին, հողը, մարդկայինը»:

Վահագն Դավթյանի «Ծուխ ծխանի» ասք-պոեմների ժողովածուն գրախոսելիս նախեւառաջ սկսում է վերնագրի ընտրությունից՝ շեշտելով, որ ծուխը հավիտենականության խորհրդանիշն է, այնուհետեւ վերլուծելով գրում է. ««Ծուխ ծխանի»-ն կամուրջ է Արտավազդի ժամանակներից մինչեւ Արփա-Սեւան ներգետնյա թունելի առասպելը, որ, սակայն, իրականություն է: Այն կապ է Գողթան վիպերգերի, հայրենների ու մեր օրերի բանաստեղծական ընտրանու միջեւ: Գրքի ներքին շունչը հեղափոխական Չարենցն է, ներքին ծայրը՝

մեր վերածնված Հայաստան աշխարհի պղնձե ցնծությունը: Աշխարհիկ կյանքի կրքոտ սերն ենք տեսնում այս գրքում՝ հակառակ այն հեռու ժամանակների կրոնական մգլության ճնշման: Մեր հայրենի հողի եւ գինու բույրը, հացի եւ արեւի բույրը»: «Ծուխ ծխանի»-ն բանաստեղծական տաճար է, որի մեջ, սակայն, ամենից առաջ պետք է երկրպագել բանաստեղծելու լույսին՝ իրական, շոշափելի, հացի պես հարկավոր եւ վկայական՝ ինքնությանդ թղթի պես: Այդ տաճարը խոր հիմքեր ունի բանաստեղծությամբ պերճացած հայոց նորոգ լեռնաշխարհում:

Վարդգես Պետրոսյանի «Դեղատուն Անի» երկի մասին գրում է, որ հրաշալի գրական երկ է, որով գրողը նորություն է բերում մեր գրական կյանքի մեջ՝ իր զգացմունքային, վերլուծական-հոգեբանական բարդ, միեւնույն ժամանակ խոր մարդկային հատկություններով: Նա նաեւ կոչ է անում գրողներին հոգեբանություն եւ սոցիոլոգիա ուսումնասիրել:

Արամ Ղանալանյանի հայկական առածանի գրքի մասին գրում է. «Գիրքն ընթերցելուց հետո ինձ թվում է, թե այն բազմահատոր վեպ է՝ նախաքրիստոնեական ժամանակներից մինչեւ 20-րդ դարի սկիզբ ընկած ժամանակաշրջանին վերաբերող: Գիրքը ծալելուց հետո մտքումդ մնում են ժողովրդական մտածելակերպի համն ու հոտը, տասնյակ իմաստություններ, խրատներ, անառարկելի ճշմարտություններ: Մտքիդ միջով անցնում է հայ ժողովրդի՝ հազարամյակներ ապրած, բաբախած կյանքը, նրա դառը աշխատանքն ու սակավ վաստակը: Ձգում ես, թե դար դարի հետեւից ինչպես են ձեւավորվում հայ մարդու բնավորության գծերը, նրա հնադարյան կերպարն ու արտադրության խղճուկ միջոցները: Տեսնում ես հայկական գյուղը, հայ գյուղացու տունը, վար ու ցանքը, տխրություններն ու ուրախությունները»: Նա բարձր է գնահատում հեղինակի վաստակը ժողովրդական մտածողությամբ ստեղծված արժեքները պահպանելու գործում, այդ ուղղությամբ կատարած հետազոտությունները, ճիշտ առածների ընտրությունը, գրքում դրանց զետեղումը, գրքի կառուցվածքը, համապատասխան ծանոթագրությունները եւ այլն:

Պերճ Ձեյթունցյանի «Ուտքի, դատարանն է գալիս» պիեսի մասին գրում է. «Այն փայլուն դրամատիկական երկ է՝ հակիրճ, դիպուկ, գործողությունները՝ դիմամիկ, ասածը՝ զուտ ճշմարտություն: Արգելել այս դրամայի բեմադրությունը նշանակում է արդարացնել ցեղասպանությունը: Դրաման արդիական է. չէ՞ որ հիմն էլ իմպերիալիստական ուժերը փորձում են ժողովուրդներ կործանել: Ձեյթունցյանի գործը հզոր բողոք է նաեւ արդի ցեղասպանության դեմ»:

Հոդվածներից, ռադիոհաղորդումներից ու հարցազրույց-

ներից հստակ երեւում է, որ ԽանՁադյանն արձագանքել է հատկապես այն երեւոյթներին, որոնք եղել են ապագային, աղավաղել են հայոց պատմությունը, հայոց լեզուն: Նա համարակցություն է ունեցել այն օրերի համար անընդունելի ազգային հարցեր բարձրացնել:

ԽանՁադյանը հատկապես մտահոգվում էր այն բոլոր գրքերի հրատարակությունով, որոնցում հայոց պատմությունն էր աղավաղվում, օրինակ՝ Վալեսյանի հրատարակած ուսումնական քարտեզի մասին ասում է, որ այն կեղծիք է, քանի որ հայոց պատմությունն այնտեղ աղճատվում է, իսկ Սովետական հանրագիտարանի Ա հատորի մասին գրում է, որ այնտեղ պիտի տեղ գտնեն նաեւ այն գործիչները, ովքեր հայոց պատմության մեջ մեծ դերակատարում են ունեցել տարբեր ժամանակներում, ինչպես օրինակ՝ Աբգար թագավոր, Աբրահամ Երեւանցի պատմիչ,

Աբրահամ Երեւանցի Կրետացի, Աբուսահլ (եգիպտահայ գործիչ), Աբլղարիբ Պաիլավունի եւ այլք:

Նա նաեւ քննադատում է ժամանակի մանկագիրներին, ովքեր գրում էին անսիրտ ու անհույզ ոտանավորներ, որի պատճառով երեխաները հանդեսների ժամանակ դրանք չեն հիշում: Նա որպես օրինակ է բերում «Սանիր, մանիր, իմ ճախարակ» բանաստեղծությունը, որ երկու անգամ կարդալով կարելի է անգիր անել: Նա կոչ է անում «ոտանավորչիներին» վերջ տալ անհեթեթություններին եւ հանգավոր դատարկություններին:

Պատմվածքի մասին գրում է, որ այդ ժանրը հնագույն ժամանակներից է կիրառվում հայ գրականության մեջ, եւ այն երբեք նահանջ չի ապրել: Սովետահայ պատմվածքը զարգանում է կատարյալ մարդու նման՝ երկու ոտքի վրա. մի ոտքը դարերի խորքից եկող ավանդույթն է, որը հաղորդել է Եղիշե վիպասանը, իսկ մյուս ոտքը՝ հայ ազգային էության դասական ու ժամանակակից պատմվածքը: «Իմ կարծիքով՝ արվեստի բոլոր տեսակների մեջ պատմվածքն ավելի մոտ է մարդկային հոգեբանությանը՝ ժամանակակից աշխարհի բարդությունների ասպարեզում: Նա ավելի մարդկային, ավելի կենսական ու հարկավոր է: Ազգային պատմվածքը մեն-մենակ դժվար է ստեղծել. այն հզոր է իր հողով եւ հիմունքներով, բայց ծառի նման դա էլ սեփական ծովերի ու գետերի խոնավության կարիքն ունի: Պատմվածքի վրա չեն աշխատում, պատմվածքը ծնվում է միանգամից, ինչպես հասած նռան պայթել-ճեղքվելը: Պատմվածքը նման է մարդու, արեւի, լույսի ծննդին, երբ արդեն ավերիդ մեջ է այդ ծնունդը, նոր արդեն գալիս է նրա երկրորդ ծնունդը՝ աշխատել այս անգամ արդեն պատմվածքի վրա: Այն վեպի նախամայրն է, իսկ հայտնի է, որ առանց մոր ոչինչ չի ծնվում»:

# Սպիտակ գառը

Գյուղից բավական հեռու, խոր ծորի մեջ գտնվող այգիների պահապան Նավասարդ ապերը կռացել էր ընկուզենու տակից բխող աղբյուրի վրա ու միջօրեի տապից վառված երեսն էր լվանում, երբ լսեց բրիգադիրի ձայնը.

- Նավասարդ ապեր, այ՛ն Նավասարդ ապեր, ձեր Արշակը քաղաքից եկել է:

- Ի՞նչ, - մեջքը դժվարությամբ ուղղելով՝ գոչեց ծերունին եւ զարմանալի առույգ քայլերով վազեց դեպի ուրախալի լուր բերողը, - եկե՞լ ա, ասում ես, իմ Արշակը. ե՞րբ ա եկել, հիմա որտե՞ղ ա:


- Հրեն, գյուղում, աչքովս տեսա: Կապույտ «ԶԻՄ»-ով է եկել: Երանի՛ քեզ, Նավասարդ ապեր, որ այդպիսի հարազատ ունես:

Արեւը տասնապատիկ պայծառացավ ծերունու համար, ու ձորն էլ լցվեց մարդու երակների արյունը եռացնող երգով: Նավասարդ ապերը շփեց մորուքը, կարոտով նայեց գյուղի կողմը եւ պոկ գալով տեղից՝ վազեց դեպի հնձան:

Տասը տարի էր, ինչ չէր տեսել Արշակին: Ամեն տարի աչքը գյուղ բերող ճանապարհին հառած, ականջը ձենի՝ սպասել էր ու համբերել, համբերել էր ու սպասել: Հիմի վերջապես կտեսնի նրան: Լավ էլ ժամանակ է եկել Արշակը, ձորը լիքն է աշխարհի ամեն տեսակ մրգերով, ինքն էլ առողջ է ու դեռ կայտառ:

Գյուղում ոչ մի ազգական ու հարազատ չուներ Նավասարդ ապերը: Բախտի անողոք վճռով գավակ չէր ունեցել, իսկ կինը մահացել էր շատ վաղուց: Սովից մեռել էին նաեւ նրա եղբայրն ու կինը, իրենց միակ որդուն՝ Արշակին, թողնելով որբ:

Դեպի հնձան գնալիս նա առվի եզերքից վերցրեց բահն ու փորեց հնձանի խոնավ, զինեհոտ հողը, հանեց տասը տարի առաջ այդտեղ թաղած զինու կուլան, շոշափեց նրա սառը լանջը, հոտ քաշեց փակ բերանից ու ժպտաց: «Առյուծի կաթ է դառել», - գոհունակությամբ մտածեց նա ու հիշեց, որ գետափի թզենու մոտ է գտնվում բոստանի ամենամեծ ձմերուկը եւ արագ գնաց այնտեղ, կռացավ, պոկեց գրեթե փթանոց ձմերուկը, արխալուղի փեշով սրբեց նրա վրայի արծաթագույն փոշին ու հիացավ փայլուն գուլերով: «Արշակս ձմերուկ շատ է սիրում», - մտաբերեց նա, չոքեց գետնին, ականջի տակ սեղմեց ձմերուկն ու գոհ մնաց: Հետո մեջքն ուղղելով՝ գնաց դեպի թզենին: Ձեռքերն ու դեմքը ճանկռոտելով՝ բարձրացավ ծառը ու քաղեց թռչունների կտցած, շաքարահամ թուզը: Այդպես նա այգու բոլոր բարիքներից ջուկեց, քաղեց ամենալավներն ու



խնամքով դասավորեց նախշավոր խուրջինի աչքերում: Այդ անելուց հետո գնաց գետափ, որտեղ արածում էր վեց ամսական սպիտակ գառը, այն գառը, որ ինքն էր կերակրել, մեծացրել լավ օրվա համար: «Հիմի սրանից լավ օր չկա, Արշակս եկել է», - ինքն իրեն ասաց նա ու բաց թողեց կապած գառը: Գառը կամաց մայեց.

- Մա՛...  
- Ջանի՛, - արծազանքեց ապերը, - գնա՛նք, գա՛ն ջան, Արշակս եկել է:



Ձորից դեպի գյուղ ուղրվող կածանով բարձրանում էր Նավասարդ ապերը: Ծանր խուրջինը ճնշում էր նրա ուսը, մեջքը, կուլայի մեջ ճողփում էր տասը տարվա զինին, իսկ հեզ ու հնազանդ գառը մերթ առաջ էր ընկնում նրանից, մերթ՝ ետ:

- Էդ ինչի՞ ես գյուղ գնում, Նավասարդ ապեր, - հարցնում էին մարդիկ:

- Արշակս եկել ա, - հպարտ պատասխանում էր ծերունին:

Ճանապարհին գտնվող ամեն մի թուփ ու ծառ, ամեն քար ու աղբյուր նրան հիշեցնում էր Արշակի մանկությունը:

... Ամեն երեկո նա ձորից գյուղ էր բարձրանում, շալակի խուրջինի վրա նստեցրած՝ տանելով դեռ երեք-չորս տարեկան Արշակին:

Ահա նստում էին այս քարին, ապերը տանձ էր տալիս երեխային ու արխալուղի փեշով սրբում նրա քիթը: Այս այն կեռասենին է, որից յոթ տարեկան Արշակն ընկավ ու ոտքը դուրս եկավ: Նավասարդ ապերը հիշում է, թե ինչպես ինքը տղային շալակեց, տարավ հեռու մի գյուղ սնդչու մոտ ու շալակած էլ ետ բերեց՝ ոտքը տեղը զգած:

Այս այն աղբյուրն է, որից Արշակը սիրում էր ջուր խմել: Ապերը ձեռքերը ափ էր անում, ջրով լցնում ու դեմ անում տղային, մինչեւ սա կոտրում էր ծարավը:

Ծերունին երբեք չի մոռանում ահա այս փոքրիկ այգին, որի ծառերը հիմա էլ ամեն տարի բերք են տալիս, եւ նրանց տակի կանաչը դալար է մնում մինչեւ ուշ աշուն: Այդ այգին նա ժառանգել էր իր մորից, բայց շատ տարիներ առաջ ծախել էր՝ Արշակին քաղաք ուղարկելու, ուսումի տալու համար:

Քիչ բան չի ծախել նա, մինչեւ Արշակը ավարտել է համալսարանը, սովորել Մոսկվայում, մինչեւ դարձել է մեծ մարդ:

Հաճախ էր նա համապոլիտեխնիկայի մոտ պարծենում, որ իր Արշակը մեծ, շա՛տ մեծ պաշտոն ունի մայրաքաղաքում. ման է գալիս ամենալավ մեքենայով, ապրում է ամենաբարձր տանը, եւ որ մարդիկ նրա մոտ «պրոպուսկով» են գնում:

Մեկ-մեկ հիշելով անցյալում Արշակի հետ պատահած բոլոր դեպքերը, ծերունին ոտքերին գոռ էր տալիս՝ որքան կարելի է շուտ հասնել գյուղ: Խուրջինում ճողփում էր կուլայի

գինին, իսկ հետեւից գալիս էր հեգ ու հնազանդ գառը:

Հասավ գյուղ:



Նրա զարմանքը շատ եղավ, երբ Արշակի մեքենան չտեսավ իր դռանը: «Էս ինչի չի մաշինը էստեղ քշել, հը՞, - ինքն իրեն հարցրեց ծերունին, - է՛... խելքս տանուլ եմ տվել: Ախր մեր տան ճանապարհը քարքարոտ է, Արշակիս մաշինան կփչանար, լավ է արել, որ էստեղ չի բերել»:

Նրա տունը միհարկանի, տափակ կտուրով, հողահատակ պատշգամբով ու նեղ բակով քարաշեն տուն էր, որը, ո՞վ գիտե, ո՞ր դարից, արծվի բնի նման կպել էր լեռնալանջին, կորել ուրիշ տների մեջ:

Նավասարդ ապերը մտավ բակ, բեռը ցած դրեց, գառան առաջ խոտ գցեց եւ առաջին անգամ ցավով տեսավ, որ իր տունը խղճուկ է ու անշուք: «Դե, բան չկա, Արշակս հո չի քաշվի, իր տունն ա, էնտեղ ա ապրել, մեծացել», - մխիթարեց ինքն իրեն ու սկսեց բակը կարգի բերել:

Պատի վրայից երեւաց հարեւան պառավի գլուխը:

- Աչքդ լի՛ս, Նավասարդ, Արշակդ եկել ա:

Նավասարդ ապրո աչքերը շողացին:

- Շնորհակա՛լ եմ, քու ղարիբն էլ տուն գա:

- Բա ասիլ չես՝ Արշակիդ տեսա:

- Մեր տուն էր եկե՞լ:

- Չէ՛, գրասենյակի առաջ տեսա. գնացել էի կոպերատիվից ասեղ առնելու, Արշա՛կ, ի՛նչ Արշակ, մի սրբած թուր, թագա թագավոր, մի շահագրա: Վրան նայելուց մարդու աչքը կշտանում չի: Աստված քեզ արժանի՛ ա նի:

- Շնորհակա՛լ եմ, - ուրախությունից կերկերուն ծայրով ասաց ապերը ու նոր եռանդով սկսեց կարգի բերել բակը:

Հարեւանի հորթերը մտել էին բակ ու կեղտոտել: Ծերունին ցախավելով մաքրեց բակի աղտեղությունը: «Երեխիս ոտնամանները կկեղտոտվեն»: Հետո քարով ծեծեց, ծալեց պատշգամբի սյունի վրայի ցցված մեխը: «Արշակիս շորը կընկնի մեխովը, կճղվի», - մտածեց ու բաց արեց վաղուց փակ դուռը:

Մերկ պատի տակ նրիհում էր փայտե հնամենի մահճակալը: «Կասեմ՝ Արշակ, մի՞տղ ա, որ քնում էիր էս կառավաթին, էս էլ տափին, - տեղաշորերը թափ տալով՝ խորից ծերունին, - կասեմ՝ էս էլ քու էն ին գավաթն ա, է՛, որից ջուր էիր խմում: Բա՛... տես է՛, Արշա՛կ, էս էլ ախր քու փայտի գդալն ա, միտս ա, ուստա Մանասից առա, բերի: Դու տգտագիր, թե՛ ինչի՞ գդալի կոթին նախշեր չկան. տարա նախշել տվի»:

Մտքում Արշակի հետ զրուցելով՝ ծերունին գնաց աղբյուր, ջուր բերեց, ցանեց բակում, պատշգամբում, տանը եւ ավելը ձեռքն առավ...

Նորից պատի վրայից երեւաց հարեւան պառավի գլուխը:

- Արշակը գրասենյակից գնացել ա նախագահի տունը, Նավասարդ, իմացա՞ր:

- Չէ, ե՞րբ ա գնացել:

- Քու գալուց առաջ:

- Դե տեսել ա, որ էս տանը չեմ, գնացել ա դինջանա, հրես որտեղ որ ա կգա:

- Հա՛, կգա:

Ծերունին չոր փայտ կտրտեց, դարսեց օջախի մոտ՝ խո-

րովածի կրակի համար, հետո դանակը գոտուց հանեց ու մոտեցավ գառանը: Մոտեցավ, բայց փոշմանեց: «Չէ՛, թող Արշակս գա, ոտնատակին մորթեմ, - որոշեց նա ու նայեց նախագահի երկհարկանի տան կողմը, - էս ինչի՞ չի գալիս, օրը, հրես, կմթնի, բերած թուզս կփչանա, հոնն էլ համը կփոխի»: Եվ որպեսզի թուզը չփչանա ու հոնը համը չփոխի, հանեց խուրջինից ու շարեց պատուհանի գոգին՝ զով տեղ: Հետո հարեւանից խնդրեց նրանց նոր սփռոցը, բերեց, փռեց սեղանին, կարպետը թափ տվեց, գցեց թախտին ու բարձեր դրեց վրան:

Ամեն ինչ պատրաստ էր, բայց Արշակը չկար:

«Էս ինչի՞ չի գալիս, - անհանգստացավ ծերունին, - ինչի՞ է ինձ թողել, իրա տունը թողել, գնացել նախագահի տուն»: Այս հարցերից նրա աչքերը կկոցվեցին ու ձեռքը թեթևակի դողաց, բայց իսկույն հանգստացրեց ինքն իրեն, - է՛... մեծավոր մարդ ա, օրենքի մարդ, բա մի չգնա նախագահի տունը տեսնի՞, իմանա, թե գյուղի գործերը ոնց են: Կգա էլի՛, ինչի՞ եմ վազազում, կգա: Մի իրեք-չորս օր կպահեն մոտս, որ պատկերքից կշտանամ, չեմ թողնի, որ շուտ գնա:

Արեւն արդեն մայր էր մտնում, բայց Արշակը չկար: Ծերունու անհանգստությունը սաստկացավ: Եղավ մի պահ, որ նա ցանկացավ գնալ նախագահի տունը, բայց հիշեց, որ նրանից խռով է դեռ հերվանից, ու միտքը փոխեց: «Ո՛չ ահ ունի, ո՛չ ամոթ էս մեր նախագահը, էնքան խալիսի միջին երեսիս ավել-պակաս խոսքեր շարտեց գետինը մտածը»: Նա դուրս եկավ սենյակից ու կանչեց հարեւան պառավի թռռանը.

- Մի գնա, տես մեր Արշակն ի՞նչ ա անում էնտեղ, արեւիդ մատա՛ղ, ասա, որ էս ձորից եկել, իրան եմ սպասում:

Տասնչորս տարեկան տղան վազեց նախագահի տունն ու քիչ հետո վերադարձավ:

- Տեսա՞ր մեր Արշակին, - հարցրեց ծերունին:

- Հա՛:

- Վա՛յ, էս քո աչքերին մատա՛ղ... ի՞նչ էր անում:

- Գինի էր խմում:

- Ասացի՞ր, որ էս եկել եմ:

- Հա՛:

- Ի՞նչ ասաց:

- Ասաց՝ լավ:

«Ասաց լավ... - մտքում կրկնեց ծերունին, - ասել է՝ հրես ուր որ է կգամ, դե կգա, էլի՛... էս կրակ անեմ՝ խորովածի համար»:

Քիչ հետո օջախի մեջ ճրթճրթաց, բորբոքվեց կրակը: Նավասարդ ապերը չոքեց կրակի մոտ ու մաքրեց շամփուրները: Հետո մտավ տուն, աթոռ դրեց, բարձրացավ, մաքրեց էլեկտրական լամպն ու նստեց սեղանի մոտ:

Նստեց ու սպասեց:

Ժամերն անցնում էին ծանր ու դանդաղ: Գյուղում բռնկվեցին էլեկտրական լամպերը: Հնամենի տան պատերը ժպտացին: Դրսի ձայները հետզհետե մարեցին, միայն շների հաչոցն էր լսվում տխուր ու տաղտկալի:

Արշակը չկար:

Կրակը մարեց, ծածկվեց մոխրի քողով ու կուչ եկավ: Սպիտակ գառը նստել էր խոտին ու որոճում էր՝ անմեղ հայացքով

նայելով պատուհանի լուսին:

Ամբողջովին լսողություն դարձած Նավասարդ ապերը նայում էր բաց դռանը ու ականջ դնում: Նրա աչքերը հոգնեցին, ջրակալեցին ու գլուխը սկսեց ծանրանալ: Հանկարծ մա կանգնեց տեղը՝ բայց ոտքերը չշարժվեցին: «Ինչի՞ ես գնում նրա ոտքը, մեծը ես եմ, փոքրն՝ ինքը, թող ինքը գա: - Նա ուզեց մտքում բարկանալ Արշակի վրա, բայց իսկույն զղջաց, - է՛... վնաս չունի, մեծավոր մարդ ա, հալբաթ գործ ունի նախագահի հետ, հիմա չգա էլ, առավոտը հո կգա ու կգա»:

Եվ նորից սպասեց: Սպասեց երկար: Այնինչ աշնանային գիշերը հոսում էր ծորի մեջ եւ ուր որ էր, կսպառվեր: Ծերունու աչքերը մշուշվեցին բաց դռանը նայելուց, եւ քունը հետզհետե նվաճեց նրան: Նա քնեց հենց նստած տեղը՝ մորուքը կրծքին:



Զգիտեր, թե որքան էր քնել, երբ արթնացավ դրսից լսվող մեկի ձայնից: Նա աչքերը բացեց ու զարմանքով տեսավ, որ լուսը բացվել էր ու նույնիսկ պատուհանից ներս էին ընկել արեւի շողերը:

- Նավասարդ, այ՛ Նավասարդ, - կանչում էր հարեւան պառավը:

Ծերունին դուրս թռավ: Պառավի գլուխը երեւում էր պատի

վրայից՝

- Այ՛ մարդ, քնով ես անցե՞լ, ի՞նչ է:

- Հա՛, - աչքերը տրորեց ծերունին, - ի՞նչ ա, չլինի՞ Արշակը եկավ ա...

- Չէ՛... - գլուխը տարուբերեց պառավը, - Արշակդ, հրե՛ն, գնում ա...

Պատշգամբի ծածկն ասես փլվեց Նավասարդ ապրի գլխին: Նա վազեց դեպի ցածրիկ գոմը, բարձրացավ կտուրն ու նայեց գյուղից ելնող ճանապարհի կողմը:

Արեւի շողերից բոցավառված Արշակի մեքենան սլանում էր դեպի հեռունները... Ծերունին ձեռքերով խփեց գլխին ու փլվեց գոմի կտրին: Երկար ժամանակ ցնցվում էին նրա բարակ ուսերը: Նա հեկեկում էր:

Քիչ հետո ճոճվող, բոլորովին ծերունական քայլերով նա իջնում էր դեպի այգիների ձորը: Քայլում էր երերալով, գլուխը կախ: Մեջքն ավելի կուզ էր երեւում, իսկ աչքերը խոր էին ընկել:

Նրա հետեւից գնում էր սպիտակ գառը ու երբեմն մայրում սրտամորմոք ձայնով:

- Մա՛...

1954

## Մ.ԽԱՆԶԱԴՅԱՆԸ ՀԻՇՈՒՄ Է

# Անսպասելի հանդիպում

*Ինչպե՞ս ճանաչումը կարող է եզրի հասնել այնպե՞տ, որպե՞տ քնությունը չունի սահման:*

**ՂԱՎԻԹ ԱՆՅԱՐԹ**

**1946** թ. հունվարն է: Վերադարձել եմ բանակից, երեւանում եմ: Գնդապետ Կարապետյանի հետ եմ, նրա ծառայողական «Վիլիսի» մեջ: Խոսում ենք դեսից-դեմից, սակայն իմ միտքը մի կետի է՝ նա ինձ խոստացել է, որ պիտի հանդիպենք ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՀԻՆ:

«Վիլիսը» կանգնեց Երեւանի բերդ-բանտի դարպասներից մեկի առաջ: Չարմացա՛ ինչո՞ւ հենց այստեղ: Սակայն ամեն մի զարմանք իր վերջը, իր պատասխանն ունի: Լեւոն Կարապետյանն ասաց, թե Նժդեհի խնդրանքով եկել է նրան ման ածելու քաղաքում: Նա մտավ բանտի նեղ դռնակով, զնաց: Եկավ մի կես ժամ հետո, ասաց, թե բանտի պետերն ասացին՝

«Հիմա ցերեկ է, չի կարելի բանտարկյալին դուրս հանել, գիշերը եկեք»: Մենք պայմանավորվեցինք, թե որտեղ եւ որ ժամին հանդիպենք:

Ես ցնցված էի: Նժդեհն այստե՞ղ, Երեւանո՞ւմ: Հեքիա՞թ է: Երա՞զ է... Օրը օր չէր, այլ՝ տարի:

Վերջապես հասավ մեր պայմանավորված ժամը: Գիշերվա երեքն էր: Ես դուրս եկա մերոնց տնից ու մի քիչ քայլելով հասա որոշված տեղը՝ օպերայի շենքի աջ թեւին: Ահա եւ Կարապետյանն իր «Վիլիսով»: Գնացինք: Ես իմ արյունակից զնդապետին հարցրի՛ կարո՞ղ եմ խոսել Նժդեհի հետ, ես նրան առաջներում տեսել եմ: Լեւոն Գալուստովիչը բարձր ծիծաղեց:

- Իհարկե, կգրուցես հետը, կխոսես, եղբայր իմ: Միայն քո՛ նրա հետ հանդիպման մասին ուրիշի չասես: Ժամանակները խառն են...

«Վիլիսը» կանգնեց այս անգամ բանտի մեծ մուտքի առաջ, հենց դարպասին կպչելով: Ոչ մեծ, այլ նեղ դարպասը բացվեց: Այն կողմին այլ աշխարհ է, նորին մեծությունն Դժոխքը: Ով այդ Դժոխքը չի տեսել, նա երջանիկ է: Թե քանի սերունդ է քշվել այս դարպասից ներս, ոչ ոք չգիտե: Թե քանի-քանի հազար մարդ է գլխատվել այս դարպասից ներս, այդ էլ միայն աստված գիտե:

Ես երեսիս խաչ հանեցի: Տեր աստված, մի քիչ հեռու տար քո դժոխքն ինձնից՝ հավատացյալիցդ:

Դարպասից դուրս եկավ մի ռուս չեկիստ, առաջն արած ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԻՆՆ՝ Նժդեհին: Ես՝ պատերազմի սպաս, ես՝ Լենինգրադի ճակատամարտը

շահած մարտի հրամանատարս, ցնցվեցի՝ ա՞յս է իմ արյան գինը... Ո՞ւմ համար եմ արյուն թափել... Ռուս չեկիստ սպան Նժդեհին առաջ հրեց ինչպես շունը թուլացած գառնուկին: Նրան խոթեց «Վիլիսի» ետնամասը, իբր թե ողորմություն անելով: Ինքը նստեց Նժդեհի աջ կողմին: Պահակում է նրան: Ես շտապեցի տեղավորվել քաղաքնատարկյալ «ժողովրդի թշնամի» Նժդեհի ձախ կողմին: Մեր այս բռնապետությունն այդ չնչին զիջումն արեց ինձ: Գնդապետ Կարապետյանը, որ այս ժուս չեկիստի հարյուր արժեքն ուներ, նստեց վարորդի մոտ: Ասեմ նաեւ, որ Նժդեհն ավտոյին մոտեցավ առույգ, հպարտ քայլերով, համարձակ ու ինքնավստահ: Այդպես խաչասյուճին են մոտենում միայն հավատի ու ազնվության զոհերը, անմեղ դատապարտվածները: Նստեց երկաթյա աթոռակին՝ համարձակ ու վեհ: Ես նայում էի նրան, զարմանում՝ սա՞ է Նժդեհ

զորավարը: Համոզվեցի՝ սա՞ է: Հիշեցի, թե նա ինչպիսի վստահությամբ էր մեր տանը նստում աթոռակին: Այն աթոռակին, որի վրա նստել ու հաց են վայելել մեր տանը ինքը՝ Դավիթ Բեկ Սյունեցին եւ Մխիթար Սպարապետը: Նաեւ նրանցից հետո եղած մեծերը՝ մերոնք: Եվ ես, որ այդ մեծերի ժառանգն եմ, եւ գնդապետ Կարապետյանը, որ նույնպես այդ մեծերի հետեւորդն է, մեզ զգացինք չնչին գոյություն: Ես նստած եմ առասպելի՝ Գարեգին սպարապետ Նժդեհի կողքին: Ինչ երջանկություն... Սկսեցինք պտտվել



գիշերային Երեւանի փողոցներում: Չգիտեմ ինչ կզգա ուրիշ որեւէ մեկը նման պահին, սակայն ես զգում էի, որ ես չեմ այս աշխարհի՝ Հայոց այս քաղաքի տերը, ո՛չ, ինչ եմ ասում՝ այս քաղաքի զավակը, ոչ էլ դրա տերը պարոն Նժդեհն է, ոչ էլ քաջահամբավ գնդապետ Կարապետյանը, այլ, ո՛վ աստված, այս կապտերես տափակաքիթ չեկիստը:

Գնդապետ Լեւոն Կարապետյանը Նժդեհին ներկայացնում էր Երեւանը, հաճախ կրկնելով «պարոն Նժդեհ», երբեմն՝ «պարոն սպարապետ»: Սա, - ասում էր նա, - Ստեփան Շահումյանի արձանն է: Սա Լեւոնի հրապարակն է: Սա մեր կառավարության տունն է: Սա...

Նժդեհը սկսեց հուզվել: Նույնը, ինչ երբ նա մեր տանն էր ու մեծ Տատը նրա առաջ Քարահունջի արաղ էր դնում կամ իր ձեռքով թխած լավաջ հաց. Կե՛ր, քե՛ մա-

տա՛ր... Անձս, որի մեջ աստվածային «մեղք» էր ծնվել ու կամենում էի հորինել, որ ի՞նչ եմ ասում, կամենում էր գտնել «Մխիթար Սպարապետ» վեպիս երակն ու իմաստը, շատ երջանիկ էր: Ախր նստած եմ հենց Մխիթարիս կողքին: Ինչ տարբերություն, 250 տարի առաջ, թե հազար երկու հարյուր հիսուն, դու, Նժդեհ սպարապետ, ապրիր այնքան, որ հասու լինես իմ «Մխիթարին»: Ախր դա դո՛ւ ես: Դու ես:

Սպասածիս հակառակ Նժդեհը սկսեց հուզվել:  
- Փառքդ շա՛տ, Աստված, - ասում էր նա՝ երեսին խաչ անելով: - Հայր ահա պետություն ունի, որ հիմնվել է 1918-ի մայիսին, կառավարություն ու Կառավարական տուն ունի:

Մեքենան ցնցվում էր փողոցների անհամար խորդուբորդներում: Ես ականա հաճախ կպնում էի Նժդեհին: Ամեն անսպասելի կպնելուց ուզում էի երեսիս խաչ հանել՝ առնչվում եմ հայի հազար տարվա ռազմական հոգու հետ:

Դարձյալ հավատս չէր գալիս, թե նստած եմ հռչակավոր Նժդեհի՝ Գարեգին Տեր-Հարությունյանի կողքին, որին, ասել եմ, քսաներեք տարի առաջ եմ հանդիպել հուն կավիս էությամբ: Մեղք ունեմ, զուցե թե մի ուրիշ անձի մոտ եմ նստած, անունը Նժդեհ: Սիրտ արի, հարցրի՝ պարոն Նժդեհ, դուք Գարեգին Տեր-Հարությունյանն եք: Նժդեհ սպարապետը, այո՞:

- Ճիշտ այդպես, լեյտենանտ, - սեւեռուն նայելով ինձ, իմ ուսադիրներին ու շքանշաններին, պատասխանեց նա:

- Հորս հոգու ականջը կանչի, - ասացի: - Նա ձեզ պաշտում էր: Հարցրեց՝ ո՞ւմ տոհմից եմ: Պատասխանեցի՝ Խանգաղյան եմ, Գորիսից: Լեւոն Կարապետյանը ավելացրեց.

- Սերոն մորս գծով իմ ազգականն է, ռազմաճակատային քաջ օֆիցեր:

Նժդեհը կրկնակի հետաքրքրությամբ նայեց ինձ: Ես ասացի, թե դուք քսանմեկ թվականին հաճախ եք եղել մեր տանը: Հիշեց հորս, ազգականներիս:

- Հայրդ՝ Նիկոլայը կա՞:  
- Ոչ, - ասացի, - գնդակահարել են 1937-ի դեկտեմբերին, հենց այն բանտում, որտեղ դուք եք ձերբակալ նստած:

- Ինքը ինչպե՞ս ողջ մնացիր, - հարցրեց նա:  
- Հորս շնորհիվ, - ասացի: - Ինձ ուսուցչությունից

ու կոմերիտմիությունից հեռացրին իբրև «ժողովրդի թշնամի», իբրև «դաշնակցական»: Գիշերը գալիս են, որ ինձ ձերբակալեն, հայրս իմանում է ու մի կես ժամ ամառ ինձ փախցնում Ղափան, այնտեղից փախա Միջին Ասիա...

Մենք այսպես գրուցում էին «Վիլիսում», իրար կողքի նստած: Հարցրեց՝ Նիկոլայ Մելիք-Հովսեփյանը կա՞: - Ո՛չ, ասացի, նրան, Միրաքյան Կարապետին ու Արշակ Տոռոզյանին միասին մի գիշերում գնդակահարեցին Շորի ձորում. 1931-ին... Ասաց՝ հորեղբայրներդ՝ Արտեմ ու Վանո Խանգաղյանները, հիմա ապրում են Թեհրանում: Հետները գրավոր կապեր ունեի: Հարցրեց նրանց զավակների մասին: Ասացի՝ Արտեմ հորեղբորս չորս աղջիկները եւ երկու տղան, որոնց կուլակաթափ արին 1929-ին եւ աքսորեցին Միջին Ասիա, հիմա կան, այնտեղ են: Տղաները կրել են նաեւ աքսորի աղետները:

- Կապիտան Ջոնի մասին ի՞նչ կասես:

- Ողջ է, ասացի: - Քսանիննին նրան եւս աքսորեցին: Տասը տարի տառապել է Սիբիրում, ողջ է մնացել: Հիմա ապրում է Միջին Ասիայում, ամուսնացել է իմ հորեղբայր Արտեմի աղջկա՝ Լեռնիկի հետ:

- Արտեմ հորեղբայրդ հրաշալի երգում էր «Ձախորդ օրերը», - հիշեց Նժդեհը: - Վանո հորեղբայրդ շատ քաջ կռվող էր:

Էլի մարդկանց հիշեց՝ Ջանգեզուրը թշնամուց պաշտպանած-փրկած քաջազարմների: Ասացի՝ նրանցից ոչ մեկը չկա: Նրանց, ովքեր պաշտպանել են իրենց տունն ու տեղը, Ջանգեզուրը, իրենց երեխաներին ու մայրերին, բոլորին ոչնչացրին 1922-ին, 1929-31-ին, 1937-ին:

Նժդեհին հսկող ռուս չեկիստը ննջում էր: Դժբախտ մարդ, երեւի անքուն է մնացել իր «զգոնության պոստում»:

Անցանք օպերայի շենքի մոտով: Նժդեհն անվերջ կրկնում էր, - Փա՛ռքդ շատ, Աստված, մեր ազգն ապրում է: Խոսեց ոգետր:

- Երբ ստեղծեցինք Լեռնահայաստան՝ Ջանգեզուրի, Ղարաբաղի, Գողթանի ու Վայոց ձորի միավորումով, հենց այսպիսի մայրաքաղաք էինք երազում, ինչպիսին ասի մեր Երեւանն է:

Հարցրեց՝ իր հայրենի Կզմուտ գյուղը շե՞ն է: Ասացի՝ ոչ: Ռուս-թուրքական 1921 թվականի մարտի պայմանագրի համաձայն, Մոսկվան մեր Նախիջեւան նահանգը հանձնեց Ադրբեջանին: Սկսվեց Նախիջեւանի հայության ոչնչացումը: 1929-ին եղել են Կզմուտում, մի երեսուն տուն հայ դեռ մնում է այնտեղ: Հիմա ոչ մի հայ չկա: Այնտեղ հիմա զանազան տեղերից եկած թուրքեր են ապրում:

- Մենք մտադիր էինք նաեւ Նախիջեւանի գավառը ետ վերցնել, միավորել Լեռնահայաստանի հետ: Այս արդար գործին նախ խանգարեց Բաքուն զավթած անգլիական միսիայի պարագլուխ զեներալ Թոմ Թոմսոնը, հայի այդ նոր դահիճը: Ապա Կարսի ռուս-թուր-

քական պայմանագրի համաձայն Նախիջեւանը տվին Ադրբեջանին: Ղարաբաղը մեզնից խլեցին Բաքվին տեր դարձած բուլշեւիկները:

... Պատվում ենք փողոց փողոցի ետեւից: Գիշերվա քամին լռել է՝ չի ուզում խանգարել մեր զրույցը: Իսկ ռուս չեկիստը մեր լեզուն երեւի չգիտի ու շարունակում է մնջել: Միայն երբեմն-երբեմն նայում է թեւի ժամացույցին: Երեւի շտապում է: Վարորդի մոտ նստած գնդապետը չի խանգարում մեր զրույցը: Ինչ ազնիվ մարդ է... Իսկ ես կուզեմայի այս պահը երկարեր, երկարեր մինչեւ աշխարհի վերջը...

Վերեւից մտանք Աբովյանի փողոցը: Կարապետյանը Նժդեհին ցույց տվեց Ղուկաս Ղուկասյանի արձանը, ասաց Ղուկաս Ղուկասյանին դաշնակները սպանել են Արզիմայի ձորում: Նժդեհի ակնարկով ես խնդրեցի վարորդին, որ մեքենան պահի: Պահեց: Առանց մեքենայից դուրս գալու Նժդեհը երեւի մի երեք րոպե ուշադիր նայեց քարե պատվանդանին կանգնած քարեղեն Ղուկասյանին:

- Արձանը լավ է արված, - ասաց Նժդեհը: - Իրեն՝ Ղուկաս Ղուկասյանին, հանդիպել են: Ազնիվ տղա էր: Բայց դուք, ընկեր հայեր, հայաստանցիներ, իզուր եք գրում, թե Ղուկասյանին սպանել են հայ դաշնակցականները: Ո՛չ, այդպես, ո՛չ: Նրան սպանել են թուրքերը...

«Թուրք», «թուրքեր» բառը լսելով ռուս չեկիստը սթափվեց:

- Չտո՞: Չտո՞: Տուրկի՞...

Շտապեցի նրա բերանը փակել: Ասացի՝ թուրքի մասին չէ խոսքը, այլ՝ քարի, քարեղեն արձանի: Ինքը՝ Նժդեհը, որ ռուսերեն ավելի լավ գիտեր, քան հենց այս ռուս չեկիստը, հայերեն ասաց: - Դժբախտ ժողովուրդ, ե՞րբ պիտի ուշքի գաս: Ե՞րբ պիտի արթնանաս խաբեության թմբիկից:

Նրա ասածը հավիտյան մնաց մեջս:



Իջնում ենք Աբովյան փողոցով: Ներկայիս «Արմենիա» կոչվող հյուրանոցի մուտքի աջ կողմին, պատի վրա շրջանակով ազդ է փակցրած՝ «Կիճո Ջանգեզուր»: Նժդեհը նայեց այդ խոշորատառ ազդը, դառնացավ, թթվեց:

- Այդ «ՁԱՆԳԵՉՈՒՐ» կինոն տեսել եմ, - ասաց նա գլուխը շրջելով մի կողմ: - Ամոթ է: Նման կեղծիք, կնեռեք, նույնիսկ թուրքը չի անում: Կինոյում ցույց է տված, թե ես վիշապային էություն եմ ու Ջանգեզուրում կազմակերպել եմ բանդիտական խմբեր՝ Ռուսաստանի, խորհրդային զորքերի դեմ: Ցույց է տված, թե թուրքերը օգնել են Ջանգեզուրի հայ գյուղացիներին, որ, իբր թե Ջանգեզուրը ազատագրեն «դաշնակ գազանների» ձեռքից: Դրանցից մեկն էլ, իբր թե ես եմ: Ցույց է տրված իբր ես անգլիական զորք եմ բերել Ջանգեզուր՝ հեղկոմի դեմ կռվելու: Նման բան չի եղել, մարդիկ, ինչո՞ւ եք կորցրել ձեր խիղճը: Անգլիան միշտ թշնամի է եղել



հայ ժողովրդին, ե՛լ այն ժամանակ, ե՛լ հիմա: Բոլորովին հակառակն է կատարվել: Անգլիական զենեղալ թոն թոնսոնը Բաքվից զրահամեքենաներ, թնդանոթներ, զորք ուղարկեց Ջանգեզուրի վրա, պահանջելով, որ Ջանգեզուրը ենթարկվի Ադրբեջանի մուսավաթ կառավարությանը: Մենք մերժեցինք բրիտանական աղվեսի այդ պահանջը: Ջանգեզուրը քաջությամբ կռվելով իր հողից քշեց անգլիական զրահապատ զորքին: Սա է իրականությունը: Իսկ կինոյում ցույց է տրված, թե ես եմ այդ թշնամի զորքին հրավիրել բերել Ջանգեզուր եւ հենց այդ անգլիական զրահամեքենաների վրա էլ փախել...

Նժդեհը տեղում պարզապես այրվում էր:

- Ամոթ է ձեզ, - ավելացրեց նա: - Միջեւ ե՞րբ սուտը, կեղծիքը պետք է ուղեկցեն ձեզ, ձեր գաղափարին: Սթափվեք, Հայաստանի հայեր: Դուք պետք է հստակ անելիք ունենաք՝ ո՞ր եք գնում...

Ես ուղղակի ամոթից գետինն էի մտնում: Այո, այդ «Ջանգեզուր» նկարը, որ արվեց հիմնականում մեզ մոտ՝ Գորիսում, 1937-38 թվականներին, պարզապես ամոթալի կեղծիքի ու ստի կուտակում է:

Երկար ժամանակ լուռ էր Նժդեհը: Վերջապես, երբ արդեն արեւելքը շառագունում էր, նա Կարապետյանին խնդրեց իրեն տանել իր կնոջն ու աղջկանը թեկուզ հեռվից տեսնելու: Կարապետյանը մերժեց, ասաց կինը ու աղջիկը քաղաքում չեն: Տեսա՝ Նժդեհը չհավատաց նրան, ես՝ ես:

Ասեմ, որ Գարեգին Նժդեհի տիկնոջը՝ Գոհարին, լավ գիտեի: Նա մեր քաղաքի Մելիք-Դադայան հին, իշխանական տոհմից է, մորս բարեկամներից: Գրագետ, ազնվական կին էր, վաղուց ապրում էր Երեւանում, կարծես գրադարանի աշխատող էր: Գիտեի նրա աղջկան՝ Ջուլիկին: Պատերազմից առաջ եմ հանդիպել, ուսանողուհի էր պետհամալսարանում: Ինչո՞ւ սիրելի զնդապետը մերժեց Նժդեհի խնդրանքը: Գուցե թե զգուշանում էր չեկիստ ռուսից: Երեւի այդպես: Ահա չեկիստը նայեց ժամացույցին:

- Ժամանակն է: Վերադառնանք բանտ:

«Վիլիսը» սլացավ դեպի բերդը: Լույսն արդեն բացվում էր, փողոցներում վախվորած քաղաքացիներ երեւացին: Դարպասի մոտ մենք հրաժեշտ տվինք Նժդեհին: Ես ամուր սեղմեցի նրա ձեռքը՝ հուսով եմ, նորից կհանդիպենք, - ասացի:

- Հազիվ թե հանդիպենք, - ասաց Նժդեհը: - Է՛, տղաս... Շարունակիր ազնիվ ծառայել այս երկրին:



Գնդապետ Կարապետյանն ինձ ասաց.

- Նժդեհը ազգափրկիչ գործ է արել: Նժդեհը ազգային հերոս է: Նժդեհը Անդրանիկ է: Ոչ ըբի չասես, որ հանդիպել ես նրան: Բայց հիշիր, ամեն ինչ հիշիր: Օր կգա, որ մեր այս քաղաքում կդնենք Նժդեհի արձանը: Այդպես: Պախարակություն այն սերնդին, որ կմոռանա նրան:



Տարիներ հետո սիրելի Լեւոն Կարապետյանը հաճախ էր ինձ ասում: - Խիղճս տանջում է: Ախր ինչո՞ւ վախեցա այն չեկիստից ու Նժդեհին չտարա իր կնոջն ու աղջկան տեսնելու: Ստալինյան սուր էր մեր գլխին կախված: Վախեցա ոչ ինձ կամ քեզ համար, ո՛չ: Վախեցա, որ վնաս կտան Նժդեհի կնոջն ու աղջկանը: Է՛, շատ, շատ բաներում սխալ եմք ապրում:

1946-ին Նժդեհի աղջիկն ու ես միասին էինք աշխատում հանրապետական ժողտեղծագործության տանը: Լիլիկը այդ մեր հիմնարկի մեքենագրուհին էր: Պարծանքով էր ասում, թե ինքը Նժդեհի աղջիկն է: Իրավունք ուներ:

Զմուռանամ ասել՝ իմ գրառումների տետրակում հենց Նժդեհի հետ հանդիպման օրը գրել եմ. «Այսօր հանդիպեցի Պանդուխտին»: Հասկանանք՝ հանդիպեցի Նժդեհին: Զէ՞ որ Նժդեհ նշանակում է Պանդուխտ:

Ավելացնեմ՝ համազանգեզուրյան ժողովրդական համագումարը, որը ստեղծեց Լեռնահայաստան անկախ պետությունը, գումարվել է 1920 թվականի դեկտեմբերին, Տաթևի վանքում: Ահեղ բողոք բարձրացրի «Ջանգեզուր» կինոնկարի դեմ: Նամակ գրեցի Կենտկոմ՝ «Այդ նկարը պետք է վառել»: Հիմա էլ եմ ցնցվում, երբ հիշում եմ այդ նողկալի կինոյի մի դրվագը: Տաթևի վանքում, պառլամենտի շենքի մեջ իբր թե Նժդեհի հրամանով սպանում են մի խեղճ ռուս մարդու: Ի՛նչ ահավոր կեղծիք: Պառլամենտում ոչ մի ռուս չի եղել:

Լեռնահայաստանի ժողովրդական երկրորդ համագումարը կայացել է 1921-ի ապրիլի 26-ին: Այս համագումարն է Ջանգեզուրը-Լեռնահայաստանը հռչակել անկախ, որպեսզի Ջանգեզուրը փրկի Ադրբեջանի հայակուլ երախից: Լեռնահայաստանի պետական զինանշանը եռանկյունի վահան-գրահ էր, ուղղահայաց մեխված կարճ թուր, գլխին թեւատարած արծիվ:

Հին բուլշեփկ, հին զինվորական Խոյունց Արսեն հայրիկը մի անգամ ինձ ասաց. – Որ հիմա Ջանգեզուրը չկարողացան պոկել Հայաստանից, զորավար Նժդեհի շնորհիվ էր:


Իմացա, որ Նժդեհին Երեւանից քստորել են Վլադիմիր: Մահացել է կալանագաղութում: Փառք աստօ՛ն, որ գտնվեց նրա շիրիմը, բերվեց աճյունը Հայաստան:

1960-ականի սկզբներին սիրելի Լեւոն Կարապետյանը տարիքի բերումով անցավ կենսաթոշակի: Եկավ գրանցվեց գրողների միության մեր կուսկազմակերպության մեջ: Հաճախ էինք հիշում Նժդեհին: Հարցրեց, որ Պարսկաստանից անցել է Բուլղարիա, ի՛նչ է արել այնտեղ մեր ազգի համար: Ասացի՝ շատ բան: Նժդեհը եռանդուն գործել է, որպեսզի Սփյուռքում արթնացնի հայ ազգային ոգին, նրան փրկի ուժացումից:

Ես Կարապետյանին տվի Նժդեհի ծրագրային գործունեության սկզբունքային մի քանի դրույթները:

«Ջանգեզուր», 24 նոյեմբերի 1990թ.

Սերո  
Խանգադյանի  
լուսանկարների  
ալբոմից



## Վերջին հրաժեշտը Սերո Խանգադյանին

Սերո Խանգադյանը վախճանվեց  
1998թ. հունիսի 24-ին:

Կազմվեց հուղարկավորության կառավարական հանձնաժողով՝ Երեւանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանի գլխավորությամբ:

Մահվան առիթով մամուլում եղան բազմաթիվ հրապարակումներ: Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի եւ կառավարության կողմից հրապարակվեց մահախոսական:

Հայ գրականությունը, համայն հայ մշակույթը ծանր կորուստ կրեցին. կյանքի 84-րդ տարում վախճանվեց մեծանուն հայ գրող, հրապարակախոս եւ գործիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, կուլտուրայի վաստակավոր գործիչ Սերո Խանգադյանը:

Հունիսի 29-ին մայրաքաղաքի հասարակայնությունը, գրողի ծննդավայր Ջանգեզուր աշխարհից եկած պատվիրակները վերջին հրաժեշտը տվեցին Սերո Խանգադյանին:

Հանգուցյալի դագաղը դրված է «Արամ Խաչատրյան» մեծ դահլիճի ճեմասրահում: Այստեղ են գրականության եւ արվեստի գործիչներ, դպրոցների մանկավարժներ եւ աշակերտներ, բուհերի ուսանողներ, հանգուցյալի հարազատներն ու ազգականները, ՀՀ ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ կառավարության, թաղման կառավարական հանձնաժողովի անդամներ:


Պսակներ են դրված ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ կառավարության, Երեւանի քաղաքապետարանի, տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, ընտանիքների ու անհատների կողմից:

Սերո Խանգադյանին վերջին հրաժեշտը տալու համար այստեղ են ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը: Նրանք մեկ րոպե լռությամբ հարգում են գրողի հիշատակը, իրենց վշտակցությունը հայտնում հանգուցյալի հարազատներին... Սերո Խանգադյանի հուղարկավորումը հոգեհանգստյան պաշտոն չկատարվեց, եւ ոչ էլ ծնծղաներ զարկ-

վեցին: Ջիվան Գասպարյանի ղեկավարած ինը դու-դուկահարների նվագով նա հանգրվանեց Երեւանի հին պանթեոնում (Կոմիտասի անվան զբոսայգի), հարեւանութամբ իր գրչակից ընկերների՝ Վահագն Դավթյանի ու Յանո Սահյանի:

Բացելով թաղման արարողության սզո միտին-գը, թաղման կառավարական հանձնաժողովի նա-խագահ, Երեւանի քաղաքապետ Սուրեն Աբրահա-մյանը գրողի մերձավորներին ու հարազատներին, Չայաստանի մտավորականությանն ու ժողովրդին հղեց Չայաստանի Չանրապետության նախագահի, հանրապետության կառավարության վշտակցու-թյունը:

- Չանգվածների հրապարակներում այլեւս չի լսվելու նրա խռպոտ, հան-



դուզն ու տիրական ձայնը, հայոց երկ-րային ու ժամանակային տարածքներն այլեւս չեն դրոշմվելու այդ մարտիկի եւ գիտնականի, այդ հետախույզի ու վավերագրողի, այդ աշխարհագրի ու մատենագրի քայլերով, - ասաց Չա-յաստանի գրողների միության նա-խագահ Չրանտ Մաթեոսյանը: - Չայ գրականության, հայոց պատմության վաղվա առաջամարտիկն այլեւս չի ակնկալելու այն խրախուսիչ կանչը թիկունքից. վաստակած հոգնած նրա կյանքն իր ժողովրդի հավերժական երթից ետ ընկավ այսօր՝ 1998-ի հունի-սյան այս օրը:

«Սյունիք» թերթ, N 23-24 (100-101), հունիս, 1998թ.

## ՄԵՐՈՒ ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ՉԻՇԱՏԱԿԸ՝ ՉԱՎԵՐԺԱՑՎԱԾ

### Չայարտ ենք, որ կրում ենք խոսքի մեծ վարպետի անունը

#### Ռուզան Վիրաբյան

Երեւանի Ս. Խանգաղյանի անվան N184 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի



2002թ. Երեւանի N184 ավագ դպրոցն անվանակոչվեց մեծ հայրենագետի անունով: 2015 թվականը կրկնակի տոն է ոչ միայն հայության համար, այ-լեւ Սերո Խանգաղյանի անունը կրող դպրոցի համար, քանի որ լրանում է մեծ գրողի 100-ամյակը եւ դպրոցի հիմնադրման 25-ամյակը:

Ամեն տարի դպրոցում հայտարարվում է Խանգաղյանա-կան տասնօրյակ, որի ընթացքում իր ակտիվ մասնակցու-թյունն է ունենում դպրոցի աշակերտությունը: Այս տարի եւս, ինչպես մնացած տարիներին, անցկացվելու են բաց դա-սեր, գրական-երաժշտական ցերեկույթներ՝ նվիրված գրողին եւ նրա գեղարվեստական արձակին: Աշակերտներին ոգեւորելու եւ ստեղծագործական ունակությունները բացահայտելու նպատա-կով դպրոցում հայտարարվել է Խանգաղյանական մոտիվներով շարադրությունների մրցույթ, որոնք ունեն եւ ստեղծագործական, եւ վերլուծական բնույթ: Գրողի ծննդյան օրը՝ դեկտեմբերի 3-ին, դպրոցի կոլեկտիվը եւ աշակերտությունը կայցելեն Կոմիտասի անվան պանթեոն՝ եւս մեկ անգամ խոնարհվելու եւ վերհիշելու մեծ գրողի անմահ անունը, զնահատելու սերունդներին թողած պատմական իրադարձություններով հարուստ ժառանգությունը, որի փաստացի վկան արձակագրի ստեղծագործություններն են: Սերո Խանգաղյանի 100-ամյակը կամփոփվի համադպրոցական միջոցառմամբ:

Կարծում եմ՝ յուրաքանչյուր գրող հայտնի է այնքանով, որքա-նով արժեւորում եւ զնահատում են նրա գեղարվեստական ստեղ-ծագործությունը: Այսօր էլ Խանգաղյանն ընթերցողների մեծ լսա-րան ունի. գրողն աշակերտների սրտացավ, ջերմ բարեկամն է, սրտակից ընկերը եւ փորձառու խորհրդատուն:

Իսկապես, Խանգաղյանի ստեղծագործության ակունքները դեռ երկար տարիներ չեն ցամաքելու, նրանք պիտի խոխոջեն հայրենի լեռների աղբյուրների նման, իսկ ընթերցողը, հաճույ-քով կարդալով նրա գործերը, չհագեցած կարոտով պիտի կրկնի. «Ծարավել եմ, ջուր բերեք»:

Մենք հպարտ ենք, որ կրում ենք Խանգաղյանի՝ մեծանուն գրողի, արձակագրի, գեղարվեստական խոսքի մեծ վարպետի անմահ անունը:

## Հավատում եմք, որ փուն-թանգարանը կկայանա



### ԱՐՄԱՆՈՒՇ ԲԱԿՈՒՆՑ

Մերո խանգարանի տուն-թանգարանի վարիչ

Մերո խանգարանի գործիսյան տունը կառուցվել է անցյալ դարի 70-ական թվականներին: Տան բացումը եղել է 1981թ. ամռանը:

Իսկ հայրական տունը մեծ գրողի եղել է Գորիս քաղաքի Լենինի փողոցում՝ մեր մեծ հայրենակցի՝ Ալսել Բակունցի հայրական տան հարեւանությամբ, որի մասին Ս.Խանգարանը հիշատակում է հատկապես «Ինչպես հիշում եմ» հուշապատումների գրքում: Տունը կառուցելիս գրողին ժամանակի իշխանությունները, հիմնարկ-ձեռնարկությունները, շինարար-վարպետները սիրով օգնել, օժանդակել են՝ ինչով կարողացել են: Այդ թվականներին գրողը գտնվում էր իր փառքի եւ ճանաչողության գագաթնակետում: Նա հաճախակի է եղել գորիսյան իր տանը՝ ընտանիքով, հարազատներով: Ավելորդ է նշել, որ նա ժողովրդականություն էր վայելում իր ծննդավայրում եւ ամենուր, ուր լինում էր: Նրա կենսասիրությունը, ճանաչողությունը, սերը շրջապատի, ծննդավայրի, հարեւանների, ազգականների հանդեպ, բոլոր ազգատոհմերի ճանաչողությունը, իմաստությունը, իմաստախոսությունը, անմիջականությունը բոլոր խավերի մարդկանց իրեն էին ձգում: Դա են վկայում հարեւանները, ականատեսները, ժամանակակիցները:

1988-1994թթ. այս տանը շատերն են ապրել՝ սկսած Սումգայիթից գաղթած մեր հայրենակիցներից, Գորիսի սահմանամերձ գյուղերի (Տեղ, Կորնիծոր) բնակիչներից՝ մինչեւ սովորական գորիսեցիներ: Գլորվեցին տարիները,

գրողի առողջությունը 1990-ականներին վատացավ: 1998թ. հունիսին նա մահացավ: Հաջորդ տասը տարիներին, նույնպես տարբեր մարդիկ, ընտանիքներ են ապրել գրողի տանը: Վերջում տունը փաստացի հայտնվել է քաղաքացիներից մեկի իրավասության տակ:

Սակայն Գորիսի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանի գործուն միջնորդությամբ Ս.Խանգարանի կառուցած տունը հետ է վերադարձվել եւ հանձնվել Գորիսի քաղաքապետարանին՝ տուն-թանգարանի ձեռով պահպանելու միտումով:

Այստեղ եւ ընդունվել են աշխատանքի որպես տուն-թանգարանի վարիչ 2008թ. սեպտեմբերի 1-ից:

Ավելորդ է հիշատակել, հիշել կամ ականատեսների վկայություններով հաստատել այն վիճակը, որում հայտնվել էր շենքն այդ ժամանակ:

Անցած վեց տարում, գոնե, այժմյան վիճակին հասցնելու համար, հսկայական աշխատանք է կատարվել:

Շենքին հարող տարածքը՝ սկսած դարպասներից, բարեկարգվել է փոքր դրամաշնորհներով, մասնակի ջրամատակարարում է ապահովվել: Ամեն տեսակի փուշ-տատակից, ապակամությունից տեղանքը բազմիցս եւ շարունակաբար մաքրվում է: Քաղաքային իշխանությունների օգնությամբ տնամերձ այգին բարեկարգվել է, չոր ծառերից, ավելորդ տնկիներից, մշտապես մաքրվում է, նոր տնկիներ ենք ավելացրել այգում: Ծաղիկների թփեր, դեկորատիվ ծառեր, տարբեր ծաղկային կոմպոզիցիաներ են արվել: Արել ենք հնարավորը գրողի ստեղծած գեղեցկությունը գոնե մասամբ վերականգնելու համար:

Շենքի ներսում սենյակներից մեկը վերանորոգված է, այնտեղ մենք հավաքել ենք տանը մնացած մասունքները, գրասեղանը, բարեկամներին նվիրված իրեր, լուսանկարներ: Այցելություն ենք կատարել գրողի բարեկամների տները՝ հավաքելու համար նրանց մոտ եղած մասունքները: 2014-ի ամռանը հյուրընկալեցինք Ս.Խանգարանի քրոջը՝ տիկին Վերժինեին, ով, ցավոք, գրողի հինգ քույրերից միակն է, որ կենդանի է: Շատ հետաքրքիր պատմություններ, հիշողություններ մեզ պատմեց:

Մենք հավատում ենք, որ մեր սկսած գործը հաջողությամբ կպսակվի:

Համոզված ենք, որ Սյունիքի մարզպետը մեր մեծերին, նրանց անունը, արած գործերն արժեւորել գիտի:

Մերո խանգարանի տուն-թանգարանի հիմնանորոգման աշխատանքները սկսված են, եւ համոզված ենք, որ ավարտին կհասցվեն: ■

# Փառքի պատվանդան՝ Սերո Խանգադյանին



## ԱՐԱՄԱՅԻ ՓԱՐՍՅԱՆ

Գորիսի N6 հիմնական  
դպրոցի տնօրեն

**Գ**որիսը տվել է բազմաթիվ տաղանդավոր, հայրենասեր, աշխատասեր ու բանիմաց մարդիկ: Գորիսեցի մտաբանը ու պաշտել է իր մեծերին՝

Ալ.Բակունցին, Գ.Աշոտին, Ս.Խանգադյանին եւ այլոց:

Մենք՝ գորիսեցիներս, հպարտ ժողովուրդ ենք, մենք ոգեշնչվում ենք Բակունցի կերտած բնաշխարհով, Գուսան Աշոտի ելեւեջներով ու Սերոյի հայրենասիրական պատումներով:

Սերոն շատ տիպիկ է տվել գորիսեցու նկարագիրը, որ մենք մեր բնաշխարհի նման մեղմ ենք, խիստ, բարձր ու խոր:

Մենք ճիշտ մեծարել գիտենք մեր մեծերին. դրա վառ ապացույցն էր 1998թ. դեկտեմբերի 3-ին Գորիսի N6 միջնակարգ դպրոցը Սերո Խանգադյանի անվամբ կոչելը:

Հիշում են, երբ 1985թ. դպրոցում ստեղծում էինք Փառքի թանգարան՝ նվիրված Գորիսի շրջանից Հայրենական մեծ պատերազմի մասնակից ուսուցիչներին, նայելով արդեն պատրաստված ցուցափեղկերի նկարներին՝ ես՝ դպրոցի տնօրեն Արամայիս Փարսյանս, եւ այն ժամանակ դպրոցի կազմակերպիչ Ս.Խոջաբադյանը մտածեցինք՝ ո՞ւմ անունով կարելի էր անվանակոչել դպրոցը, եւ եկանք համոզման, որ միակ թեկնածուն Ս.Խանգադյանն է, բայց քանի որ Ս.Խանգադյանը կենդանի էր, ուստի անհնար էր նրա անունով կոչելը: Բոլորս էլ վստահ էինք, որ դպրոցը մեծ գրողի անվամբ կոչելը մեծ հպարտություն կլինի ցանկացած գորիսեցու համար, քանզի Սերոն դասվում է այն գրողների շարքին, ովքեր կապված են իրենց բնաշխարհի հողին ու ջրին՝ օժտված նրա խստաբարո քնքշությամբ: Սերոն կիսում էր իր ժողովրդի հոգսերն ու ուրախությունները, ապրում մարդկանց կյանքը թեթևացնելու, նրանց բարություն անելու համար:

1998թ. հունիսի 24-ին մահացավ Ս.Խանգադյանը:  
Նրա ծննդյան օրվա նախօրյակին ինձ զանգահա-

րեց այն ժամանակ Գորիս քաղաքի ղեկավարը՝ Սուրեն Խաչատրյանը, եւ հարցրեց, թե ինչ կարծիքի եմ դպրոցը Ս.Խանգադյանի անվամբ կոչելու մասին: Ես անմիջապես ողջունեցի եւ նախապատրաստեցի համապատասխան փաստաթղթերը: 1998թ. դեկտեմբերի 3-ին՝ Ս. Խանգադյանի ծննդյան 84-րդ տարեդարձի օրը, մեծ շուքով նշվեց դպրոցի անվանակոչումը: Դպրոցն այդ օրվանից կրեց անվանի գրողի, մեծ գորիսեցու՝ Ս.Խանգադյանի անունը:

Այնուհետեւ Ս.Խաչատրյանի անմիջական նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ դպրոցի բակում կանգնեցրին Ս.Խանգադյանի կիսանդրին, որի շուրջ մինչ այսօր կատարվում են մեր հիմնական միջոցառումները:

Ես հպարտ եմ, որ քսաներեք տարի տնօրեն աշխատած իմ տարիներից տասնյոթի ընթացքում դպրոցը կրում է մեծանուն գրող, հրապարակախոս, կուլտուրայի վաստակավոր գործիչ Սերո Խանգադյանի անունը: Կարգացել են նրա բոլոր գրվածքները, անձնական գրադարանում ունեն նրա բոլոր գրքերը:

Մեծերը երբեք պարտք չեն մնում ո՛չ ժողովրդին, ո՛չ ժամանակին: Մենք՝ հետնորդ կոչվածներս ենք պարտք մնում մեր մեծերին: Սերո Խանգադյանը մի հրաշալի քարտեզ ստեղծեց, խանգադյանական քարտեզը՝ հազարամյակների խորքով:

Անձամբ ծանոթ եմ մեծ գրողին, գրուցել եմ նրա հետ: Ափսոս, որ հետագա սերունդները, որոնք չեն հանդիպել Սերո Խանգադյանին, որոնք չեն զգացել մեր բարբառով նրա խոսքի համը, նրան կիմանան միայն իր գրքերից:

Սերո գրողի, պատմաբանի, գիտնականի մասին դեռ շատ կիսոսեն, կգրեն եւ այսօր, եւ ապագայում: Ջարմանալի կենսասեր գրողը զարմանալի աշխատասեր էր: Նա գրականության զինվոր էր, հենց սպարապետ: Սպարապետ ոչ նրա համար, որ վեպեր է նվիրել իր Մխիթարին, Անդրանիկին, Նժդեհին, պատերազմական օրագրությունները դարձրել գիրք, անկրկնելի պատումներով հարստացրել մեր գրականությունը, այլ նրա մեջ ի բնե, ի ծնե նստած էր արթուն զինվորը, այն զինվորը, ով քաջ գիտե՝ սա իր վերջին հողակտորն է: Ես վստահ եմ, որ նա իր աչքերը փակելուց առաջ իր Ջանգեզուրն է տեսել, տեսել է նրա մարդկանց, իր Մխիթար Սպարապետին է տեսել, տեսել է Անդրանիկին, Նժդեհին, Աշուղ Աշոտից երգի տող է հասել ականջին՝ Ջանգեզուրի չոլ չոլերը ծաղկել են...

Սերո Խանգադյանը մեր հիշողության մեջ մնալու է ոչ միայն իր ստեղծագործությունների գունագեղությամբ, այլև որպես մարդ ու ֆենոմեն: Գորիսի բարբառով թաթախված նրա խոսելածները, ծայրի հնչերանգները, արտաքին յուրաձեւությունը, անվերժանելի հումորը մշտապես մեր հիշողության մեջ են լինելու:

Արել եմ ամեն ինչ, որ մեր աշակերտները կարդան Սերո Խանգադյան, կարողանան վերլուծել նրա բազմաժանր գրվածքները: Դպրոցի աշխատակազմից պահանջել ու պահանջում են բարձր պահել անվանի գրողի անունը:

Դպրոցը նույնպես պատրաստվում է շուքով նշելու մեծ գրողի մեկ դարը:

# Սերո Խանճադյանի «Դրյակը» Երեւանում եւ Գորիսի բերդաշէն փունը



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նահապետը  
(Խմբագրական, Ս.Ալեքսանյան) ..... 10, 96-100

Լաստ լեռան լեզենդը (ըստ Բաֆֆու) ..... 2

Խոսք Գորիսի մասին (Տիգրան Գրիգորյան) ..... 2

Գորիսի պատմամշակութային հուշարձաններից  
մի քանիսը ..... 3

«Օրինյա՛լ եղիցի ժամ գալստյան քո»  
(Ս.Խաչատրյան, Սյունիքի մարզպետ) ..... 4

Խոսք հորեյանի առիթով  
(Վ.Արունց, Գորիսի քաղաքպետ) ..... 4

Ս.Խանգադյանը լուսանկարներում ..... 1,  
5, 6, 11, 13, 15, 24, 25, 55, 67, 101, 107, 117, 131, 147, 149,  
179, 186, 187

Ս.Խանգադյանն իր մասին ..... 6

Հայոց մեծերը Ս.Խանգադյանի մասին ..... 7, 8

Ս.Խանգադյան (ըստ Հայկական սովետական  
հանրագիտարանի) ..... 8

## Գնահատություն

Համո Սահյան ..... 11

Հրանտ Մաթեոսյան ..... 15

Գուրգեն Մահարու մի նամակը ..... 16

Պերճ Ջեյրունցյան ..... 17

Էդվարդ Իսաբեկյան ..... 17

Գեւորգ Հայրյան ..... 19

Սուրեն Աղաբաբյան ..... 20

Խիկար Բարսեղյան ..... 23

Էդվարդ Միլիտոնյան ..... 25

## Այլազգի գրողների կարծիքը

Միխայիլ Դուդին ..... 26

Ս.Վոստրիչե ..... 28

Խոսք հորեյանական համարի առիթով  
Ս.Խանգադյանը ժամանակի առջեւ  
(հարցազրույց Դավիթ Գասպարյանի հետ) ..... 31

Ս.Խանգադյանը մեծ անհատականություն է  
(Սերգեյ Սարինյան) ..... 44

«Մխիթար Սպարապետ» պատմավեպի  
վավերականությունը (Աելիտա Դոլուխանյան) ..... 45

Մեսրոպ Մաշտոցի կերպարը Ս.Խանգադյանի  
«Վարք հարանց» շարքում ..... 50

Հայոց լինելիության խորհուրդը Ս.Խանգադյանի  
«Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպում ..... 53

Ս.Խանգադյանի պատմվածքները  
(Սուրեն Աբրահամյան) ..... 57

Եղեռնապատումի հերոսական էջերը  
(Մարտին Գիլավյան) ..... 61

Ս.Խանգադյանի մանկապատանեկան արձակը  
(Մելինե Գիլավյան) ..... 63

Շարադրությունների մրցույթի արդյունքները  
Կարդալով Ս.Խանգադյանի ստեղծագործությունները  
(Սյուզան Մանուկյան, Վալյա Հարությունյան) ..... 66

## Մատենագիտություն

Հրատարակչական վիճակագրություն ..... 68

Լրացումներ գրողի մատենագիտությանը  
(Ս.Ալեքսանյան) ..... 68

Ս.Խանգադյան. մատենագիտություն (Թ.Պետրոսյան) ..... 70

## Բանաստեղծություններ Ս.Խանգադյանի

Վազգեն Սյունեցյան ..... 80

Գուսան Աշոտ ..... 81

Համո Սահյան ..... 82

## Գրողի ստեղծագործությունների լեզուն

Ս.Խանգադյանի ստեղծագործությունների լեզվի  
քերականական առանձնահատկությունները  
(Ն.Մինասյան) ..... 83

## Ս.Խանգադյանը եւ գուսանական արվեստը

Հայաստանի գուսանները ..... 87

## Ազգային արխիվ, տեսադարան ու ձայնադարան

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Ս.Ալեքսանյանին  
(Օֆելյա Ասատրյան) ..... 89

Տեսանյութեր Ս.Խանգադյանի մասին կամ նրա  
ստեղծագործություններին առնչվող  
(Նուբար Դավթյան) ..... 90

Ս.Խանգադյանը Հայաստանի ազգային արխիվի  
փաստաթղթերում (Մարինե Մարտիրոսյան) ..... 91

Նամականի (Ս.Խանգադյանի նամակները  
Լեոնիդ Բրեժնեվին, Գուստավ Հուսակին, Հնդկաստանի  
կոմկուսակցության Ազգային խորհրդի անդամին,  
«Проблемы мира и социализма» ամսագրի խմբագրությանը,  
Եվգենի Տյաժեվնիկովին, Միխայիլ Գորբաչովին,  
Անատոլի Լուկյանովին) ..... 102

Հայրենապատում. Ս.Խանգադյանը եւ Կապանը ..... 107

Ս.Խանգադյան. մանկավարժական աշխատանքի  
հասցեներ ..... 108

## Ս.Խանգադյանը եւ կինոարվեստն ու թատրոնը

Ս.Խանգադյանի «Մխիթար Սպարապետ» վեպի  
էկրանավորումը (կարծիքներ) ..... 109

Գրողը եւ կինոն (Գեւորգ Հայրյան) ..... 111

«Կյանքիս ամենագեղեցիկ տարիները»  
(հարցազրույց Էդմոնդ Քյոսայանի հետ) ..... 114

## Բանավեճ տարիների հեռվից

Ս.Խանգադյանը Հայ գրողների միության նախագահ  
(Աբգար Ափինյան) ..... 116

Հայ գրողների միության ստեղծումը պայմանավորված էր  
ժամանակի հովերով (Պետրոս Դեմիրճյան) ..... 117

Գրողների երկու կազմակերպություն՝ միեւնույն  
նպատակով (Պայծառ Ջանյան) ..... 118

Հայաստանի գրողների միությունը ստեղծումից մինչեւ  
վերստեղծման փորձերը (Դավիթ Գասպարյան) ..... 120

Վավերագրեր ..... 129

Այլազգի գրողները Ս.Խանգադյանի մասին ..... 129

## Հուշագրություն

Ճակատագրի հարվածները եւ Սերոն

Հասցե՝ Կապան,  
Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 45 90 47:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

**Գլխավոր խմբագիր՝  
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**Լրագրողներ՝  
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ  
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Օպերատորներ՝  
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ  
ԱՆՆԱ ԴԵՏՐՈՍՅԱՆ**

**Սրբագրիչ՝  
ՍԼԱՎԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

**Ձեռագրողներ՝  
ԳՐԻԳՈՐԻ ՍԱՅԱԿՅԱՆԻ**

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Ս 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Պետական աջակցություն՝ տարեկան 500,000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 24.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:

Ստորագրված է տպագրության 20.11.2015թ.:

(Հրանտ Թամրազյան)..... 130  
Թանկագին հիշատակներ (Ռազմիկ Դավոյան)..... 132  
1976-ի գարնանն էր... (Մետաքսե)..... 134

Վարպետը մի մարդ էր, որ ավելին արեց,  
քան Աստված իրեն տվել էր (Մերուժան Տեր-Գուլանյան)..... 136  
Դավիթ Հովհաննեսի հուշերը..... 137  
Նա իր երկրի ու ժողովրդի ճշմարիտ զավակն էր  
(Ս.Ալեքսանյան)..... 139  
Հուշի պատահիկներ (Ռեդիկ Հայրապետյան)..... 143

**Խնձատին տոհմը**  
Հարցազրույց Արարատ Խանգադյանի հետ ..... 145  
Տխուր պատմություն, որ կրկնվեց երկու անգամ  
(զրույց Վերժինե Խանգադյանի հետ)..... 151  
Իսկ հիշատակը չի հարզվում  
(զրույց Նաիրի Խանգադյանի հետ)..... 152  
Ինչ ուզում ես արա, հայրենիքդ չլքես  
(զրույց Արշակ Խանգադյանի հետ)..... 154  
«Նկարչությունը խանդոտ կնոջ նման է, եթե դավաճանեցիր,  
էլ հետ չի ընդունի» (հարցազրույց Արարատ  
Խանգադյան զեղանկարչի հետ)..... 155  
Հայրենապատում. Ս.Խանգադյանը եւ Մեղրին  
(Արամայիս Սարգսյան)..... 158  
Ակսել Բակունց եւ Սերո Խանգադյան. ավանդներ եւ  
նորարարություն (Սաթենիկ Ավետիսյան)..... 160

**Վերջին շրջանի ստեղծագործությունները**  
Պատմությունը դարավերջի վիպական զուգահեռներում  
(Սեւակ Արզումանյան)..... 164  
Ս.Խանգադյանի «Անդրանիկ» վեպը (Աբգար Ափիսյան)..... 174

**Ս.Խանգադյանը՝ գրաքննադատ**  
Շտապեցեք լսել կյանքի ծայնը (Արմինե Հարությունյան)..... 177


**Ս.Խանգադյանի գրական ժառանգությունից**  
Սպիտակ գառը..... 180

**Ս.Խանգադյանը հիշում է**  
Անսպասելի հանդիպում..... 182

**Հրաժեշտ երկրային կյանքին**  
Վերջին հրաժեշտը Սերո Խանգադյանին..... 186


**Ս.Խանգադյանի հիշատակը՝ հավերժացված**  
Հպարտ ենք, որ կրում ենք խոսքի մեծ վարպետի անունը  
(Ռուզան Վիրաբյան)..... 187  
Հավատում ենք, որ տուն-թանգարանը կկայանա  
(Արմանուշ Բակունց)..... 188  
Փառքի պատվանդան՝ Ս.Խանգադյանին  
(Արամայիս Փարսյան)..... 189  
Ս.Խանգադյանի շիրմարձանը  
Կոմիտասի անվան պանթեոնում..... 193  
Ս.Խանգադյանի կիսանդրին  
Գորիսի N6 դպրոցի բակում..... 194  
Ս.Խանգադյանի ծննդավայր Գորիսը՝ զեղանկարներում..... 195  
Հին եւ նոր Գորիսի սրբավայրերից մի քանիսը..... 196





**Մերո  
Խանզադյանի  
շիրնարձանը  
Կոմիտասի  
անվան  
պանթեոնում:**  
ԺՄՍ, շՂ շրջան  
ԵՂՍԻ օՒ  
ՕՂՂՂՂՂՂՂՂՂ  
1999ՂՂ

ՄԵՐՈ  
ԽԱՆՁԱԴՅԱՆԻ  
ՀԻՇԱՏԱԿԸ՝  
ՀԱՎԵՐԺԱՑՎԱԾ



Մերո  
Խանգաղյանի  
Կիսանդրին  
Գորիսի №6  
դպրոցի  
բակում:

ԺՄՍ, շՂ շրջան  
ՊՊՐ ԲԻ  
ՀՁ, ՀԵՉԾՄՍԻ  
2003Ա՞

**Ս. Խանգադյանի  
ձևադավար  
Գորիսը**

**Գեղանկարներում**



**ԳԱՐՐԻՆԸ ԳՅՈՒՂՅԱՆ**  
Առավոտը հին  
Գորիսում  
1954, կտավ,  
յուղաներկ, 83x105 սմ



**ՍԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ**  
Կյանքը Գորիսի  
վիճափոր ժայռերում  
1939, կտավ,  
յուղաներկ, 55x65 սմ



**ՍԵՂՐԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
Ջին Գորիսը, Երեկո  
1940, կտավ, յուղաներկ,  
68x83 սմ

**ՊԱՐՈՆՅԱՆ-  
ՅՈՎԱՅԵԾՅԱՆ  
ԳԱՐԵԳՈՆ**  
Բնանկար Գորիսից  
1954, կտավ,  
յուղաներկ, 50x60 սմ



**ՍԱՐՏԻՐՈՍ  
ՍԱՐՅԱՆ**  
Գորիս, 1935,  
թուղթ, գուճ.  
մատիտ,  
19x32.5 սմ





1. ճգնավորաց լեռան շարունակությունը, 2. Խաչին աղբյուրը, 3. Սուրբ Հովհաննես (որոշ մասնագետների կարծիքով՝ Սուրբ Աստվածածին) եկեղեցի, 4. Սուրբ Մարտիրոս վիմափոր եկեղեցի, 5. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի